

4(47925)

Ղ-46

հղ.

ԱՐ. ՂԱՐԻՔԱՆ  
Հայկական ՍՍՐ ԳԱ քղթակից-ամրամ

Հ Ա Յ  
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1953

4(47.925)  
7-46

ԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*Հարգելի զեքր Կորույր խմբագրչանքի  
ձեզ պիտի:*

*Խմբագրչի  
14/1255*

ԱՐ. ՂԱՐԻԲՅԱՆ

# ՀԱՅ ԲԱՐՐԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

579



## Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Ստալինյան լեզվաբանական ուսմունքի համաձայն՝ «Տեղական (տե-  
րիտորիալ)» բարբառները... սպասարկում են ժողովրդական մասսաներին  
և ունեն իրենց քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոն-  
դը»։ Լինելով ընդհանուր լեզվի ստորին ձևերը՝ նրանք ներկայացնում են  
ընդհանուր լեզվի բազմաթիվ տարբերակները, որոնք գիտական հիմք են  
տալիս պարզաբանելու ընդհանուր լեզվի ձևերը, հաճախ ստուգաբանելու և  
բացատրելու նրանք և խորացնելու լեզվի ուսումնասիրությունը։

Բարբառների ուսումնասիրություն միջոցով հնարավոր է լինում ճշտել  
ընդհանուր լեզվի պատմության, պատմական քերականություն, աեսու-  
թյան և այլ հարցեր, որովհետև նրանք մայրենի լեզվի փաստերի մի հսկա-  
յական գանձարան են։

Հնարավոր չէ լեզվի ուսումնասիրությունը առանց նրա բարբառների  
ուսումնասիրության։ Նրանք այլևի ևս օգնում են ժամանակակից, ազգա-  
յին լեզվի երևույթների և օրինաչափությունների ուսումնասիրությանը,  
որով էլ այլևի կարևոր է դառնում բարբառագիտությունը։

Հայերեն լեզուն բարբառներով հարուստ լեզուններից մեկն է, ուստի  
հայերենի բարբառները ոչ միայն հայերենի, այլև ընդհանուր լեզվաբանա-  
կան հարցերի պարզաբանման համար ունեն խոշոր նշանակություն։ Դրա-  
նով էլ այլևի է բարձրանում հայերենի բարբառների ուսումնասիրության  
նշանակությունը։ Չնայած որ հայ բարբառագիտությունը հարյուր տարուց  
այլևի կյանք ունի, բայց նա հեռու է լրիվ և կատարյալ լինելուց, Նախա-  
սովետական շրջանում հայ բարբառների ուսումնասիրության համար նա-  
խապայմաններ չկային, ուստի, եթե նկատի չունենանք Հ. Աճառյանի ու-  
սումնասիրությունները, որոնք հեղինակի գիտական նվիրվածության ար-  
դյունքն են, հայ բարբառագիտությունը պրիմիտիվ վիճակի մեջ էր։ Սովետա-  
կան շրջանում սկզբում մեծ թափ ստացած հայ բարբառագիտական ուսում-  
նասիրությունները ևս ուժեղ հարված ստացան մառականության կողմից,  
և, համարյա, դադարեցին։ Ինչպես ամբողջ լեզվաբանությունը, նույնպես  
և հայագիտությունը, մասնավորապես հայ բարբառագիտությունը փակու-  
ղուց դուրս բերվեց ստալինյան հանճարով և դրվեց զարգացման լայն ճա-  
նապարհի վրա։

Այժմ սովետական հայագիտության խնդիրն է ստալինյան լեզվաբա-  
նական ուսմունքի սկզբունքով ծավալել հայ բարբառների ուսումնասիրու-  
թյունը, որոնցից շատերը դեռ ուսումնասիրված չեն, կամ, նույնիսկ, դեռ

անհայտ են, և բոլորը կորչելու, ընդհանուր լեզվի մեջ աղացվելու վրա են: Այդ պրոցեսին նպաստում են սովետական ժողովրդի կուլտուրական և քաղաքական մտազարգացման անընդհատ բարձրացումը, գաղտնյական յոթնամյա և տասնամյա պարտագիր ուսուցումը, համատարած գրագիտութիւնը, լինին-յան-ստալինյան ազգային քաղաքականութեան հետեւնքով հայ ազգային գրական լեզվի մասսայական յուրացումը ժողովրդի կողմից և այլն, և այլն: Բարբառների հարատեւումը ժողովրդի դարավոր հետամոնացութեան հետեւնք է եղել, ուստի նրանք սովետական կարգերում, ոչ շատ հեռու ազգայնում, պիտի անհետանան: Սակայն նրանք իրենց հետ տանում են և տանելու են լեզվական, ազգագրական և պատմական վկայութիւնների անգնահատելի փաստեր, որ այլ միջոցով ձեռք բերել հնարավոր չէ, հետեւաբար նրանց կորուստը անդարձ է: Ուստի բարբառների ուսումնասիրութեան հարցը հույժ շատ պողտականութեան պահանջող հարց է: Այդ ուղղութեամբ օր առաջ կատարած ամեն մի քայլ օգուտ է սովետական կուլտուրայի և ազգային լեզվի ուսումնասիրութեան գործին: Յուրաքանչյուր օրվա հապաղումը վնաս է նույն այդ գործին: Աշխատելով այդ բնագավառում մեր համեստ ուժերով փորձում ենք զեթ մասամբ հատուցել այն վնասի փոխարեն, որ մեր ձեռքով մատականութեանը հասցրել է հայագիտութեանը: Սույն աշխատանքի մեջ մեր նկարագրած նախորդ բարբառների թվին ավելացրել ենք 6 նորահայտ բարբառներ, որոնք նկարագրված չեն եղել (Քեսաբի, Սվեդիայի, Բեյլանի, Ղարադաղի, Թավրիզ-Մոզգոկի և Բերդի), 4 բարբառներ, որոնք ենթաբարբառի տեղ ընդունելու պատճառով անուշադրութեան էին մատնվել (Հաճընի, Դիադինի, Ողմիի, Մարաշի) և մեկ միջնուղային բարբառ, որը նկարագրված էր, բայց վերանայեցինք նորից (Արեշ-Հավարիքի): Այս նոր բարբառների նկարագրութեանը և ներկայացված փաստերը թելադրեցին վերանայելու հայ բարբառների ձևաբանական գասակարգումը, այլև փորձ կատարել սահմանելու բարբառը որոշող հատկանիշները, հիմնովին վերամշակելու բարբառների համեմատական հնչյունաբանութեանը և ձևաբանութեանը: Դրանց վրա ավելանում են «Ընդհանուր ներածութեան» և «Ներածութեան» հայ բարբառագիտութեան» գլուխները: Աշխատանքը նվիրված է հայ բարբառների հնչյունաբանութեանը և ձևաբանութեանը, չեն շոշափված շարանյուսութեան և բառագիտութեան հարցերը: Հույս ունենք, որ մեզ կհաջողվի կազմել նաև բարբառների շարանյուսութեան և բարբառագիտութեան նվիրված մի այլ աշխատանք, որ նույնքան անհրաժեշտ է, որքան և այս: Դրա համար մենք ապավինում ենք սովետական հասարակութեան օրելիտիվ քննադատութեան օգնութեանը:

Ա. ՂԱՐԻՔՅԱՆ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

#### 1. ՄԵՑ ԲԵԿՈՒՄԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լեզվի հարցերը գիտական միտքն զբաղեցրել են դեռ անտիկ շրջանում. հունա-հռոմեական պրիմիտիվ գիտութեանը փորձել է լուծել լեզվի մի շարք պրոբլեմները: Բայց այդ եղել է նրա ուժերից վեր, որովհետև գիտութեանը գանձում էր դեռ իր մանկութեան շրջանում: Միջին դարերում աստվածաբանութեան ճնշող և ռեակցիոն ուղղութեանը չէր կարող լուծել լեզվի պրոբլեմները այլ կերպ, քան վերագրելով լեզվի երևույթները աստվածային կամքին, Դրա մեջ, իհարկե, գիտական օրէէ բան չի կարելի տեսնել: Նոր մտտեցում ցուցաբերվեց լեզվի նկատմամբ միայն նոր դարերում, հատկապես 18-րդ դարի վերջերից: Չնայած այն բանին, որ առաջացան մասնապես լեզվաբաններ, որոնք զբաղվեցին դանապան լեզուների նկարագրական բնույթ կրող ուսումնասիրութեամբ, բայց լեզվաբանական գիտութեան չստեղծվեց, երբ գիտնականների կողմից գտնվեց համեմատական մեթոդը, որի զարգացումը եղավ հետագայի պատմա-համեմատական մեթոդը, ստեղծվեց լեզվաբանական գիտութեանը: Պատմա-համեմատական մեթոդով առաջնորդվող լեզվաբանութեանը 19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբներին հսկայական աշխատանք գործադրեց և զգալի արդյունքների հասավ հատկապես փաստական նյութի հավաքման և նկարագրման միջոցով: Ուսումնասիրվեցին հարյուրավոր լեզուներ, կազմվեցին այդ լեզուների քերականութեանները, մշակվեցին առանձին լեզվախմբերի համեմատական քերականութեանները, և դրա հետեւնքով հայտնագործվեցին ազգակից լեզվախմբեր-լեզվաընտանիքները: Անհերքելի կերպով հաստատվեցին համեմատական քերականութեան մի շարք սկզբունքներ, որոշվեցին ազգակից լեզուների ընդհանուր նորմաները գտնելու մեթոդները, փորձեցին կառուցել լեզվաընտանիքների առաջացման պատմութեան սխեման, հայտնագործեցին հնչյունական մի շարք օրենքներ, առանձին լեզուների հետաքրքրական երևույթներ և այլն: Այդ ամենը կազմում են աշխատութեանները մի հսկայական քանակ, որ իրրև ժառանգութեան օգտագործվում է ժամանակակից լեզվաբանութեան կողմից:

Ժամանակակից բուրժուական լեզվաբանութեանը, բոտ երևույթին անձեռնտու համաբերով համեմատական քերականութեան և պատմա-համեմատական մեթոդի կիրառութեանը բուրժուազիայի իմպերիալիստական քաղաքականութեան համար, աստիճանաբար հրաժարվում է այդ մեթոդից,

ստաջ քաշում նոր տեսություններ, որոնք կարող լինեն հիմնավորելու անդ-  
լերեն լեզվի գերակշռությունը մյուսների նկատմամբ և այդ լեզվի «հա-  
մաշխարհային տիրապետություն» իրավունքը:

Չնայած լեզվաբանությունից հակոտական նվաճումներին, չնայած այն  
նյութին, որ կուտակված է մի հարյուրամյակից ավելի ժամանակի բն-  
թացքում քաղմաթիվ գիտնականների կողմից, բուրժուական ժամանակա-  
շրջանի լեզվաբանությունը չկարողացավ լուծել լեզվի և լեզվաբանության  
ամենահիմնական և կարևոր պրոբլեմները, որոնք են.

ա) լեզվի որպես հասարակական երևույթի պրոբլեմը:

բ) լեզվի զարգացման պրոբլեմը:

գ) լեզուների փոխազդեցություն և խաչավորման պրոբլեմը:

դ) լեզվի բնորոշ հատկանիշների հարցը:

Այդ բոլոր հարցերը լեզվի տեսության հարցերն են, որոնք կարող են  
լույս ափռել այն նյութի վրա, որ հավաքել էր լեզվաբանական գիտու-  
թյունը: Զլուծելով այդ պրոբլեմները՝ լեզվաբանությունը խեղդվում էր սո-  
ցիալական էմպիրիզմի ճիւղերում:

Բնական է, որ այդ հարցերի լուծումը նշանակում էր մարքսիզմի ար-  
մատավորումը լեզվաբանության մեջ:

Իհարկե, բուրժուական լեզվաբանությունն ուներ նաև իր տեսություն-  
ներ լեզվի զանազան հարցերի նկատմամբ, բայց որ կողմից էլ այդ տեսու-  
թյունը քննենք, կգտնենք նրա արմատները գեալիզմի մեջ թաղված: Թե  
լեզվի ծագման հարցը, թե լեզվի զարգացման հարցը, թե լեզուների փոխ-  
հարաբերության հարցը հին լեզվաբանության կողմից լուծված են մետա-  
ֆիզիկորեն, միակողմանի և հաճախ սխալ: Լեզվաբանական գիտությունը  
զարգանալու համար պետք էր նրա մեջ արմատավորվեր մարքսիզմը:

Ինչ XIX դարի կեսերից մարքսիզմի կյանքինները այս կամ այն տե-  
սական հարցի լուծման կապակցությամբ լեզվի այս կամ այն կարևոր պրոբ-  
լեմի վերաբերյալ արտահայտել են հիմնադրային կարծիքներ: Այսպես՝  
Մարքսն ու Էնգելսը և մեր ժամանակներում՝ Լենինը լեզվի՝ որպես հա-  
սարակական երևույթի մասին, ազգային լեզուների առաջացման, լեզվի և  
մատածողության փոխհարաբերության հարցերի մասին ունեն սուույթներ,  
որոնք, արմատապես տարբերվելով բուրժուական լեզվաբանության դրույթ-  
ներից՝ պարզաբանում են լեզվի պրոբլեմները մարքսիստական գիտելիտի-  
կայի տեսակետից: Բայց այդ սուույթները հասկանալու, պարզաբանելու,  
այդ սուույթներով ամբողջական տեսություններ ստեղծելու համար մեր  
ժամանակներում անհրաժեշտ էր կիրառել ստեղծագործական մարքսիզմը,  
այսինքն՝ արմատավորել մարքսիզմը լեզվաբանության մեջ:

Այդ պահանջը հրամայական գարձավ Ռուսաստանում սովետական  
կարգեր հաստատվելուց հետո, երբ բոլոր գիտությունները վերամշակվում  
և տեսականորեն փոխադրվում էին գիտելիտիկական մատերիալիզմի բազայի  
վրա: Ահա այդ ժամանակ հանդես եկավ Ն. Յա. Մառը՝ լեզվաբանության  
մեջ մարքսիզմը արմատավորելու հավանություններ: Շ. Յա. Մառը իրոք  
ցանկանում և աշխատում էր մարքսիստ լինել, բայց նա չկարողացավ

մարքսիստ դատնալ: Նա մարքսիզմի սոսկ միայն հասարակացնողն ու  
գոնհկացնողն էր, ինչպես պրոլետարիատականները կամ ռապպականները<sup>1</sup>:

Ցանկանալով որոշել լեզվի, որպես հասարակական երևույթի, կատեգո-  
րիան, Ն. Մառը լեզուն հայտարարեց վերնաշենք բազիսի վրա: Վատ գի-  
տեալով մարքսիզմը՝ Ն. Մառը կարծում էր, թե գոյություն ունեն երկու  
կարգի հասարակական երևույթներ՝ բազիսային և վերնաշենքային: Բազի-  
սային հասարակական երևույթների կարգին դասում էր հասարակական  
նյութական երևույթները, իսկ վերնաշենքային կատեգորիաների մեջ դա-  
սում էր հոգեկան երևույթները: Եվ լեզուն համարելով հոգեկան երևույթ,  
Ն. Մառը դասեց վերնաշենքի կարգը: Այսպես էր մտածում Ն. Մառը  
այդպես էր մտածում մեր տեսաբանների զգալի մասը, եթե ոչ բոլորը:  
Այդ մոլորության հետևանքով Շ. Յա. Մառը լեզվաբանության մեջ  
մայրեց սխալ, ոչ մարքսիստական ֆորմուլա լեզվի վերաբերյալ, որպես  
վերնաշենքի, և շփոթության մեջ գցեց իրեն, շփոթության մեջ գցեց լեզ-  
վաբանությունը<sup>2</sup>:

Համարելով լեզուն վերնաշենքային կատեգորիա՝ Ն. Մառը բնա-  
կանորեն պետք է նրան վերադրեր այն հատկությունները, որ  
ունեն վերնաշենքային կատեգորիաները, ուստի Ն. Մառը հայտարարեց  
լեզուն դասակարգային: Լեզվի «դասակարգայնություն» ֆորմուլան թե-  
լադրում էր Ն. Մառին ամենուրեք, բոլոր լեզուների մեջ որոնել  
իրար հակադրվող դասակարգային լեզուներ: Քանի որ դասակարգային  
հասարակության մեջ կան իրար հակադրվող շահագործող և շահագործվող  
դասակարգեր, Ն. Մառը մեխանիստորեն գտնում էր, որ ամեն մի հասա-  
րակության լեզու էլ տրոհված պետք է լինի դասակարգային լեզուների,  
նա պնդում էր նույնիսկ, որ լեզուն հենց առաջացել է իբրև դասակարգա-  
յին երևույթ, որ, իբր, հնչյունական լեզուն սկզբնապես եղել է մոզերի և  
տոնմական պետերի ու կրոնավորների դասակարգային լեզուն, մինչդեռ  
մնացած մասայի լեզուն եղել է «ձեռք լեզուն»: Հետագայում դասակար-  
գային հասարակության մեջ, իբրև թե, ամեն մի դասակարգ ունի իր լե-  
զուն: Այսպիսով՝ Շ. Յա. Մառը լեզվաբանության մեջ մայրեց մի այլ, նույն-  
պես սխալ և ոչ մարքսիստական ֆորմուլա՝ լեզվի «դասակարգայնություն»  
մասին և շփոթության մեջ գցեց իրեն, շփոթության մեջ գցեց լեզվաբա-  
նությունը<sup>3</sup>:

Նկատի ունենալով, որ վերնաշենքը փոփոխվում է ուսույցիտն կար-  
գով, այսինքն հնի ջնջումով և նորի ստեղծումով, Ն. Մառը լեզվին վերա-  
դրում էր պայթյուններով զարգանալու, փոփոխվելու հատկություն: Նրա  
կարծիքով լեզուների որակական փոփոխությունները ուսույցիտն տեղա-  
շարժեր են, որ կատարվում են միանգամայն թախքային ձևով, որակական  
արմատական փոփոխության ձևով կարճ ժամանակվա ընթացքում, և, իբր  
թե, այդ որակական փոփոխությունները պայմանավորվում են տնտեսական

<sup>1</sup> Ի. Ս տ ա լ ի ն, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 65, 1952 թ.:

<sup>2</sup> Նույն տեղը:

<sup>3</sup> Նույն տեղը:

և հասարակական կյանքում տեղի ունեցող պայթյուններով, ռևոլյուցիոն փոփոխություններով:

Մինչդեռ պատմություն մեջ ոչ մի տեղ չի արձանագրված այն փաստը, թե ռևոլյուցիոն վերափոխություն ժամանակ նույն ռևոլյուցիոն կարգով վերափոխվում է լեզուն, Այդ հասկացողությունը մտցնելով լեզվաբանություն մեջ՝ Ն. Մառը շփոթություն մեջ գցեց գիտությունը, նեանց նրան ապարդյուն որոնումները ուղին:

Ելնելով իր պայթյունների տեսությունից՝ Ն. Մառը լեզվի զարգացումը դիտում էր որպես ստադիալ զարգացում, թեև այդպիսի զարգացում որևէ կոնկրետ լեզվի պատմության մեջ նկատելի չէ:

Իր սկզբունքներն ընդունելով ճշմարտության տեղ՝ Ն. Մառը զարգացում է այն տեսակետը, թե նոր լեզուների առաջացումը պետք է բացառել սինթետիզացիայի ճանապարհով, այսինքն՝ մի քանի լեզուների խաչավորվելու պրոցեսում մի նոր որակի լեզու առաջանալու հետևանքով, որն իր որակով արմատապես տարբեր է նախորդ լեզուներից: Զարգացնելով իր այս տեսակետը՝ Ն. Մառը կարծում էր, թե կիրառում է մատերիալիստական գիտելիտիկայի սկզբունքները, մինչդեռ այդպիսի երևույթ պատմության ոչ մի ավյալով չի հաստատված ու արձանագրված: Այդ պատճառով էլ Ն. Մառի հիպոթեզը մնում էր օգից կախված և փաստորեն ոչ մի կապ չունեցող գիտելիտիկական մատերիալիզմի սկզբունքների հետ: Ն. Մառի տեսությամբ լեզուների խաչավորման պրոցեսը անցյալում ոչ թե տախիդիալի պրոցես էր, այլ սինթետիզիայի պրոցես էր: Ն. Մառը հնարավոր էր համարում լեզվի բազմազան մասերի գյուրին փոփոխությունները, ներթափանցումները և հատկապես քերականական ձևերի փոփոխումներն ու խաչավորումները: Գիտական ավյալները հակասում էին այդ դրույթին: Այսպես՝ միայն միևնույն ընտանիքին պատկանող լեզուների մեջ էր նկատվում քերականական կառուցվածքի ընդհանրություն, չնայած այդ լեզուների միմյանցից տերիտորիայով հեռու և անկախ գոյություն հազարավոր տարիների պատմությանը: մինչդեռ նման բան չկար անազգայից լեզուների մեջ, եթե նրանք հազարավոր տարիներ տերիտորիալ հարևան են եղել: Բայց Ն. Մառը այդ երևույթը ևս փորձում էր հաստատել իր ոչնչով չհիմնավորված ստադիալ զարգացման տեսությամբ:

Այսպիսի սխալ դրույթներով Ն. Մառը շեղեց լեզվաբանական հետազոտական աշխատանքը զարգացման ընթացիկ ճանապարհից, և գիտությունն առաջնորդեց գեղի փակուղի, որովհետև «Անհնար է սխալ ֆորմուլայի բացառել վրա զարգացնել սովետական լեզվաբանությունը»<sup>1</sup>:

Մարքսիստական համարելով Ն. Յա. Մառի «ուսմունքը», ևս ևս նրա հետևորդներից էի մինչև մեծ բեկումը սովետական լեզվաբանության մեջ: Լեզվաբանական գիտությունը փակուղուց դուրս բերելու համար մեր կենտրոնական օրգան «Պրավդա»-ի էջերում մայիսի 9-ից մինչև հուլիսի 4-ը բացվեց ազատ գիտություն, որի ընթացքում հանդես եկան և՛ Ն. Մառի հետևորդներն ու «աշակերտները», և՛ հակամտականները: Մակայն մասկաններին չհանդուրժեց ապացուցել Ն. Մառի տեսության ճշմարտացիու-

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 65, 1952 թ.:

թյունը, այսինքն՝ մարքսիստական լինելը: Իսկ հակամտականները չկարողացան հարկավոր խորությունը և մարքսիստորեն մերկացնել Ն. Մառի ուսմունքի արմատական սխալները և հակագիտական դրույթները: Սովետական լեզվաբաններին՝ ինչպես և ողջ գիտության համար մեծ երջանկություն և օգնություն հանդիսացավ Ի. Վ. Ստալինի մասնակցությունն այդ գիտության իր «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» հանձարեղ աշխատությամբ:

Այդ աշխատությունը և հետագայում տպագրված Ի. Վ. Ստալինի «Լեզվաբանության մի քանի հարցերի շուրջը» և «Պատասխան ընկերներին» հանձարեղ աշխատությունները, որոնք հետագայում միավորվեցին «Մարքսիզմը և լեզվաբանություն հարցերը» վերնագրի տակ, արմատապես լուծեցին լեզվաբանության սկզբունքային պրոբլեմները՝ մերկացնելով միաժամանակ Ն. Յա. Մառի հակապատմական, ոչ մարքսիստական «տեսությունը»:

Ի. Վ. Ստալինը իր հանձարեղ աշխատությունների մեջ լուծեց լեզվաբանության միայն արմատական հարցերը: Այդ հասկանալի է, որովհետև լեզվաբանական գիտությունը իր դարավոր պատմության ընթացքում չէր կարողացել լուծել հենց այդ արմատական հարցերը, իսկ Ն. Մառն էլ այդ հարցերը լուծելու փորձ կատարելիս վաղաբացման էր ենթարկել և՛ այդ հարցերը, և՛ մարքսիզմը: Մատերիալիստորեն լուծել լեզվաբանության արմատական հարցերը, նշանակում էր արմատավորել մարքսիզմը լեզվաբանության մեջ, Ի. Վ. Ստալինը իր «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձարեղ աշխատությամբ արմատավորեց մարքսիզմը լեզվաբանության մեջ, եվ այժմ լեզվաբաններին մնում է, առաջնորդվելով այդ հանձարեղ աշխատությամբ, լուծելու լեզվաբանության այլ, ոչ արմատական հարցերը:

Ի. Վ. Ստալինը իր հանձարի ողջ խորությամբ գրադից տոպին հերթին լեզվի, որպես հասարակական երևույթի, պրոբլեմը լուծելով: Բուրժուական գիտության մեջ այդ պրոբլեմը լուծելու լուրջ փորձեր չեն արված և չէին կարող արվել, որովհետև իդեալիստական լեզվաբանության համար լեզվի, որպես հասարակական երևույթի, պրոբլեմը կարող է միայն իդեալիստորեն քննվել: Իսկ գա նշանակում է, որ բուրժուական լեզվաբանությունը աղավաղում էր ճշմարտությունը լեզվի մասին, նրան վերադրում հատկանիշներ, որ նա ունենալ չէր կարող: Ինչպես էլ որ քննվեց այդ հարցը բուրժուական լեզվաբանության մեջ, ի վերջո հարցի լուծումը հանգեց այն բանին, որ իբր լեզուն մարդկային հոգեբանական երևույթ է: Դիտելով լեզուն իբրև հոգեբանության արտահայտություն, կամ անհատի, կամ ամբողջ ազգի, ժողովրդի և կամ նույնիսկ առանձին սոցիալական խմբերի, բուրժուական լեզվաբանությունը չէր տեսնում լեզվի հիմնական գիծը, նրա հասարակական երևույթ լինելու էությունը: Ն. Մառը փորձեց հակադրվել բուրժուական լեզվաբանությանը և, իբր, մարքսիզմի տեսակետից քննել լեզվի, որպես հասարակական երևույթի հարցը՝ հանգելով այն կարևորություն, թե լեզուն վերնաշենքային կատեգորիա է:

Ն. Մառը գրանով շփոթության մեջ էր գցել գիտությունը՝ հայտարար-

ընդ լեզուն վերնաշենքային երևույթ. նա մթապնել էր գրանով նաև վերնաշենքի, որպես հասարակական երևույթի, պրոբլեմը: Անա ինչու Բ. Վ. Ստալինը լեզվի, որպես հասարակական երևույթի, հարցը լուծելու համար ամենից առաջ զբաղվեց վերնաշենքի և բազիսի հարցերով, այդ հասարակական երևույթների նկատմամբ եղած շփոթը վերացնելու հարցով: Եվ իրոք, որպեսզի կարելի լինի որոշել, թե լեզուն որպես հասարակական երևույթ պատկանում է վերնաշենքային երևույթների կարգին, թե ոչ, անհրաժեշտ է իմանալ՝ որտե՞ր են վերնաշենքի և բազիսի բնորոշ հատկանիշները և ունի՞ լեզուն այդ հատկանիշները, թե ոչ: Բ. Վ. Ստալինը, զբաղվելով բազիսի և վերնաշենքի էական հատկանիշները որոշելու հարցով, ամենից առաջ մշակեց և գրանով լուծեց փիլիսոփայական կարևորագույն հարցեր, Ջարգացնելով մարքսիզմ-լենինիզմի տեսությունը բազիսի և վերնաշենքի մասին՝ Բ. Վ. Ստալինը որոշեց հասարակական այդ երևույթները էական հատկանիշները և գրանով զարգացրեց մարքսիզմ-լենինիզմն ու բարձրացրեց այն նոր աստիճանի:

Բ. Վ. Ստալինը ուսուցանում է. «Բազիսը հասարակություն անտեսակարգն է հասարակության զարգացման տվյալ էտապում»<sup>1</sup>: Նշանակում է՝ բազիսը, որպես հասարակական երևույթ, ընդգրկում է արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճանով պայմանավորված արտադրական հարաբերությունները և ոչ թե նյութական այն ամենը, ինչ որ ունի հասարակությունն իր տրամադրություն տակ, ինչպես մտածում էր ն. Մաոը, ինչպես կարծում էին մարքսիզմը չհասկացած շատ և շատ տեսաբաններ:

«Վերնաշենքը, — ուսուցանում է Բ. Վ. Ստալինը, — հասարակության քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական, փիլիսոփայական հայացքներն են և գրանց համապատասխանող քաղաքական, իրավական և այլ հաստատությունները»<sup>2</sup>:

Ավելի պարզ ու հստակ չի սովոր. վերնաշենքային կառուցվածքային պատկանում են հասարակության միայն քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական և փիլիսոփայական հայացքներն ու նրանց համապատասխանող հաստատությունները: Ինչ որ գրանցից դուրս է, վերնաշենքին չի վերաբերվում: «Ամեն մի բազիսունի իրեն համապատասխանող իր վերնաշենքը, ֆեոդալական հասարակարգի բազիսն ունի իր վերնաշենքը, իր քաղաքական, իրավական և այլ հայացքներն ու գրանց համապատասխանող հաստատությունները, կապիտալիստական բազիսն ունի իր վերնաշենքը, սոցիալիստականը՝ իրենը»<sup>3</sup>:

Այսպիսով, ամեն մի հասարակական ֆորմացիան ունի իր համապատասխան քաղիսը, որի վրա բարձրանում է նրա համապատասխան վերնաշենքը: Այժմ հարց է առաջ գալիս, թե ի՞նչ հատկանիշներ ունեն վերնաշենքն ու բազիսը, որոնք են նրանց էական գծերը:

Բ. Վ. Ստալինը նշում է հետևյալ չորս հիմնական հատկանիշները. ա) «Եթե փոխվում ու լիկվիդացվում է բազիսը, ապա գրանից

<sup>1</sup> Բ. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 10, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը:  
<sup>3</sup> Նույն տեղը:

անմիջապես հետո փոխվում և լիկվիդացվում է նրա վերնաշենքը, եթե ծնվում է նոր բազիս, ապա գրանից անմիջապես հետո ծնվում է նրան համապատասխանող վերնաշենքը»<sup>1</sup>:

բ) «Վերնաշենքն արդյունք է մեկ դարաշրջանի, որի ընթացքում ապրում և գործում է տվյալ անտեսական բազիսը: Այդ պատճառով էլ վերնաշենքը երկար չի ապրում, այն լիկվիդացվում և անհետանում է տվյալ բազիսի լիկվիդացման և անհետացման հետ մեկտեղ»<sup>2</sup>:

գ) «Վերնաշենքը ծնունդ է առնում բազիսից, բայց այդ ամենն ինչի նշանակում, որ այն սոսկ արտացոլում է բազիսը, որ այն պատկեր է, չեզոք, անտարբեր է վերաբերվում իր բազիսի ճակատագրին, դասակարգի ճակատագրին, հասարակարգի բնույթին: Ընդհակառակը, լույս աշխարհ գալով, այն գտնում է մեծագույն ակտիվ ուժ, ակտիվորեն օժանդակում է իր բազիսին՝ ձևավորվելու և ամրապնդվելու, ձեռք է առնում բոլոր միջոցները, որպեսզի օճի նոր հասարակարգին մինչև վերջը ջախջախելու և լիկվիդացնելու հին բազիսն ու հին դասակարգերը»<sup>3</sup>:

դ) «Վերնաշենքն անմիջականորեն կապված չէ արտադրություն հետ, մարդու արտադրական գործունեություն հետ: Այն արտադրություն հետ կապված է միայն անուղղակի կերպով, էկոնոմիկայի միջոցով, բազիսի միջոցով»<sup>4</sup>:

Այս դասական բնորոշումները բազիսի և վերնաշենքի մասին, զարգացնելով մարքս-լենինյան տեսությունը, հատկություններ և խորություն պարզում են հասարակական այս երկու երևույթների հարցը մեզ՝ բոլորիս համար, դրա հետ միասին բացահայտում են մեր սեփական սխալներն այդ երկու հասարակական երևույթների ըմբռնման մեջ: Ն. Մաոը և նրա հետևորդները, ինչպես և շատ ու շատ տեսաբաններ, գոհնվորեն մտցնում էին բազիսի մեջ ամեն ինչ, որ նյութական էր, և վերնաշենքի մեջ՝ ամեն ինչ, որ հոգեկան էր, մտավոր: Դա մի մոլորություն էր, արմատական սխալ, մարքսիզմի գոհնակցում, հասարակացում: Ունենալով այդպիսի գոհնիկ պատկերացում հասարակական այս երկու երևույթների մասին՝ տարբեր բնագավառների աշխատողներ, ինչպես նաև լեզվաբանություն բնագավառում աշխատողները, սխալ պատկերացում ունեին հասարակական երևույթների և գրա հետ առնչվող այլ հարցերի մասին, դրա հետևանքով էլ ստեղծվում էին տեսական սխալ ֆորմուլաներ, ինչպես անում էր ն. Մաոը: Իսկ սխալ ֆորմուլաների հիման վրա չի կարելի գիտություն զարգացնել, չի կարելի հասարակական և բնական երևույթները ճանաչել, ուրեմն՝ չի կարելի գիտություն զարգացման ճիշտ հեռանկար ստեղծել:

Բ. Վ. Ստալինի մշակած բազիսի և վերնաշենքի, որպես հասարակական երևույթների, մարքս-լենինյան տեսությունը մի հզոր կողմնացույց դարձավ գիտության զարգացման համար ՍՍՌՄ-ում և ամբողջ պրոպրետիվ աշխարհում: Հեռագոտական աշխատանքների ընթացքը, ինչպես և Սովետական

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 11, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 17:  
<sup>3</sup> Նույն տեղը, էջ 13:  
<sup>4</sup> Նույն տեղը, էջ 20:

Միութեան ժողովուրդների պրակտիկ գործունեությունը գրվեց ճիշտ ճանապարհի վրա:

Ի. Վ. Ստալինը, որոշելով բազիսի և վերնաշենքի, որպես հասարակական երևույթների, բնորոշ հատկանիշները, միաժամանակ ակնառու կերպով ցույց տվեց, որ լեզուն այդ հատկանիշները չունի և, ընդհակառակն՝ լեզուն ունի միանգամայն տարբեր հատկանիշներ: Դրանք հետևյալներն են.

ա) «Լեզուն ծնված է ոչ թե այս կամ այն բազիսից, ինչ կամ նորբազիսից, այլ յայ հասարակության ներսում, այլ գարեբի ընթացքում հասարակության պատմության և բազիսների պատմության ամբողջ ընթացքով, ...այն ստեղծված է որպես հասարակության համար միասնական և հասարակության բոլոր անդամների համար ընդհանուր համաձայնակցական լեզու: ...լեզուն կարող է հավասարապես սպասարկել ինչպես ինչ, մեռնող հասարակարգին, այնպես էլ նոր, բարձրացող հասարակարգին, ինչպես ինչ, այնպես էլ նոր բազիսին, ինչպես շահագործողներին, այնպես էլ շահագործվողներին»:<sup>1</sup>

բ) «...լեզուն... արդյունք է մի ամբողջ շարք դարաշրջանների, որոնց ընթացքում նա ձևավորվում է, հարստանում, զարգանում, հզղվում: Այդ պատճառով էլ լեզուն ապրում է անհամեմատ ավելի երկար, քան որևէ բազիս և որևէ վերնաշենք»:<sup>2</sup>

գ) Ոչ միայն մեկ, այլ մի քանի բազիսների փոփոխության հետևանքով լեզուն արժատական փոփոխություն չի կրում, նրա բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը, որ կազմում են նրա հիմքը, չեն լիկվիդացվում, չեն փոխարինվում նոր բառային հիմնական ֆոնդով և նոր քերականական կառուցվածքով, այլ պահպանվում են ամբողջապես, առանց որևէ լուրջ փոփոխության:

դ) «...լեզուն... մարդու արտադրական գործունեության հետ կապված է անմիջականորեն, և մարդու ոչ միայն արտադրական գործունեության, այլև՝ ամեն մի այլ գործունեության հետ, նրա աշխատանքի բոլոր սյուրաններում՝ արտագրությունից մինչև բազիսը, բազիսից մինչև վերնաշենքը»:<sup>3</sup>

Ինչպես տեսնում ենք, լեզվի, որպես հասարակական երևույթի, բնորոշ հատկությունները միանգամայն հակառակ են վերնաշենքի բնորոշ հատկություններին, միանգամայն տարբեր են: Ստալինյան այս պայծառ հիմնավորումից հետո որքան խորն է թվում մեր մոլորությունը լեզվի, որպես հասարակական երևույթի, բնորոշման հարցում:

Պարզ է բոլորիս, որ լեզուն, վերնաշենքը և բազիսը բոլորովին տարբեր երևույթներ են: Լեզուն չի կարելի ոչ մի կերպ նույնացնել ոչ բազիսի և ոչ էլ վերնաշենքի հետ: Այդ նույնացումը բխում է մարքսիզմը գուհիացնելուց, մարքսիզմը խոր չզրկանալուց, բազիսի, վերնաշենքի և լեզվի բնորոշող հատկությունները չըմբռնելուց:

Լեզուն չի կարելի նույնացնել նաև արտագրության միջոցների հետ:

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 14-15, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 17:  
<sup>3</sup> Նույն տեղը, էջ 21:

միշտ է, ինչպես արտագրության միջոցներն սպասարկում են հասարակությանը և հավասարապես կարող են սպասարկել տարբեր դասակարգերի, այնպես էլ լեզուն է սպասարկում հասարակությանը և հավասարապես կարող է սպասարկել տարբեր դասակարգերի: Դրանց նմանությունն այդքան է, Մնացած բոլոր կողմերով լեզվի և արտագրության միջոցի հատկանիշները իրար հետ որևէ նմանություն չունեն: Լեզուն ունի միայն իրեն հատուկ բնորոշ հատկանիշները, որոնք նրան դարձնում են առանձին գիտություն՝ լեզվաբանության ուսումնասիրության օբյեկտ:

Ի. Վ. Ստալինը մշակեց և պարզեց նաև լեզվի բնորոշ հատկանիշները, ուստի այն, ինչ որ վեր էր հայտնաբերվել տարիներ գոյություն ունեցող լեզվաբանական գիտության ուժերից, այն իրագործեց Ի. Վ. Ստալինի հանձարը:

Մասնազեղ լեզվաբանները պետք է խոստովանեն, որ, չնայած գրված են եղել հազարավոր հատորներ, չնայած որ հարյուրավոր տաղանդավոր լեզվաբաններ զբաղվել են լեզվի հարցերով, բայց մինչև Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույս ընծայումը լեզվաբանական գիտությունը չունեց հստակ պատկերացում լեզվի բնորոշ հատկանիշների մասին: Բուրժուական գիտությունը լեզվի բնորոշ հատկանիշները համարում էր լեզվի հնչյունները, եվ այդ պատճառով էլ լեզվաբանությունը խիստ տարված էր հնչյունաբանությամբ, Բուրբին հայտնի է, որ բուրժուական լեզվաբանության կողմից ամենամշակված բնագավառը հնչյունաբանությունն է: Կան լեզվաբանական ուղղություններ (կրտսեր քերականներ), որոնք լեզվի բոլոր հատկանիշները հանգեցնում են նրա հնչյունական երևույթներին:

Դրան հակառակ Ն. Յա. Մառը լեզվի էական հատկանիշը համարում էր իմաստաբանությունը, լեզվի բոլոր երևույթները, բոլոր հատկանիշները վերջին հաշվով նա հանգեցնում էր իմաստաբանության:

Իմաստաբանությամբ միակողմանի կերպով տարվելու ամենալայն սպացույցն այն էր, որ Ն. Մառը հնարեց հնչաբանական անալիզի մեթոդը, լեզվաբանական հետազոտությունները հանգեցնելով «ոուրճի մրուրով գուշակություններ» անելուն:

Ի. Վ. Ստալինը բոլորովին նոր ձևով մտեցավ լեզվի, որպես գիտության օբյեկտի, բնորոշ հատկանիշները որոշելու հարցին:

Լուծելով լեզվաբանության ամենահիմնական պրոբլեմը, լեզվի, որպես հասարակական երևույթի, հարցը, մշակելով ու զարգացնելով մարքսիզմ-լենինիզմի տեսությունը բազիսի և վերնաշենքի մասին՝ Ի. Վ. Ստալինը մարքսիզմ-լենինիզմի այս նոր բարձունքից քննության ենթարկեց լեզվի բնորոշ հատկանիշները:

Հընթացս այդ նոր պրոբլեմների լուծման, Ի. Վ. Ստալինը մերժեց մի շատ կարևոր մոլորություն, որով համակվել էր մտոիզմը և փորձում էր զրանով համակել մեր ամբողջ գիտությունը: Այդ լեզվի դասակարգայնությունը հարցն էր:

Ն. Յա. Մառը լեզուն համարում էր դասակարգային, բնական կերպով եզրակացնելով այդ իր այն սխալ դրույթից, թե լեզուն վերնաշենքա-



յին երևույթ է, որովհետև վերնաշենքային երևույթը չի կարող չլինել դասակարգային երևույթ:

Ի. Վ. Ստալինը, մերկայանելով Ն. Յա. Մառի սխալ Ֆորմուլան լեզվի վերնաշենքային երևույթ լինելու մասին, ցույց տալով լեզվի հատկանիշների միանգամայն հակադիր էությունը վերնաշենքային երևույթների համեմատությամբ, մերկացրեց նաև Ն. Մառի ոչ մարքսիստական, հակադիտական Ֆորմուլան «լեզվի դասակարգայնություն» մասին: Բացի դրանից, Ի. Վ. Ստալինը պայմանական և լեզվաբանական խոր և հանճարեղ փաստերով հիմնավորեց «լեզվի դասակարգայնություն» Ֆորմուլայի հակադիտական էությունը: Արդեն տասցինք, որ լեզուն ստեղծվել է ամբողջ պատմության ընթացքում, բոլոր դարերի դասակարգերի և հասարակությունների շանքերով, որովհետև լեզվի էական գիծն այն է, որ նա ընդհանուր է հասարակության բոլոր անդամների համար, համաժողովրդական իր էությունը, որովհետև այդ ընդհանրության մեջ շահագրգռված են և՛ շահագործվողները, և՛ շահագործողները, որպես միևնույն հասարակության անդամները: Եվ դա այն պատճառով, որ ամեն մի դասակարգային հասարակության մեջ դասակարգերը միմյանց հետ կապված են էկոնոմիկայի բոլոր թելերով: Այսպես՝ կապիտալիստական պայմաններում «Բուրժուաները չեն կարող ապրել և հարստանալ, իրենց արամադրության առկա չունենալով վարձու բանվորներ, պրոլետարները չեն կարող շարունակել իրենց գոյությունը, չվարձավելով կապիտալիստների կողմից»<sup>1</sup>: Իսկ այդ անհրաժեշտ կապերն իրականացնելու անհրաժեշտ միջոցը լեզուն է: Ուստի լեզուն պետք է լինի ընդհանուր և հասարակության բոլոր անդամների համար հասկանալի: Այլ կերպ, եթե մի հասարակության դասակարգերի միջև առաջանա խզում, դա կհանգեցնի արտագրությունից դադարեցմանը, իսկ արտագրության դադարեցումը կհասցնի «հասարակության կործանմանը, բուն դասակարգերի կործանմանը»:

Ի. Վ. Ստալինը ապացուցեց նաև, որ լեզուն չի կարելի նույնացնել կուլտուրայի հետ, լեզուն կուլտուրայի ձևն է, ...ազգային լեզուն, — ուսուցանում է Ի. Վ. Ստալինը, — ազգային կուլտուրայի ձևն է, ...ազգային լեզուն կարող է սպասարկել թե՛ բուրժուական և թե՛ սոցիալիստական կուլտուրային»<sup>2</sup>: Հետևաբար կուլտուրան, հանդիսանալով բովանդակությունը, կարող է փոխվել, իսկ լեզուն հավասար կերպով կարող է սպասարկել տարբեր կուլտուրաների՝ և՛ բուրժուական, և՛ սոցիալիստական: Այդ պատճառով էլ կուլտուրայի փոփոխությունը առաջ չի բերում լեզվի փոփոխություն, և երկու տարբեր կուլտուրաների առկայությունը չի հանգեցնում երկու տարբեր «դասակարգային լեզուների» գոյացմանը և միասնական լեզվի անհրաժեշտության ժխտմանը:

Լեզուն «...յուրատեսակ անտարբերություն է ցուցաբերում դասակարգերի նկատմամբ: Բայց մարգիկ, սոցիալական առանձին խմբերը, դասակարգերը ամենևին էլ անտարբեր չեն լեզվի նկատմամբ. նրանք աշխատում են լեզուն օգտագործել իրենց շահերի համար, նրան պարտադրել իրենց

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 37—38, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 42:

առանձնահատուկ լեքսիկոնը, իրենց առանձնահատուկ տերմինները, իրենց առանձնահատուկ արտահայտությունները»<sup>1</sup>:

Իրա հետևանքը լինում է այն, որ «Ստեղծվում են «դասակարգային» բարբառներ, ժարգոններ, սալոնային «լեզուներ»»<sup>2</sup>:

Բայց դրանք սխալ կերպով լեզու էին կոչվում, մինչդեռ դրանք համաժողովրդական լեզվից տարբերվում են շատ չնչին չափով. նրանց քերականությունը նույնն է համաժողովրդական լեզվի քերականության հետ, նրանց տարբերությունը միայն որոշ քանակությամբ բառերի և դարձվածքների մեջ է, որոնք չեն կարող դրանք դարձնել առանձին լեզուներ:

Ամենաշատը դրանք դառնում են դասակարգային ժարգոններ, որոնք չեն կարող ծառայել որպես լայն հաղորդակցության միջոց, չեն կարող պարզանալ և կորչում են այն դասակարգերի կամ վերնախավերի հետ, որոնք ստեղծել են այդ ժարգոնները: Ուստի Ի. Վ. Ստալինը ուսուցանում է.

«ա) լեզուն որպես հաղորդակցման միջոց միշտ եղել է և մնում է հասարակության համար միասնական և նրա անդամների համար ընդհանուր լեզու:

բ) բարբառների ու ժարգոնների առկայությունը չի ժխտում, այլ հաստատում է համաժողովրդական լեզվի առկայությունը, որի ճյուղավորումներն են հանդիսանում և որին ենթակա են դրանք:

գ) լեզվի «դասակարգայնություն» Ֆորմուլան սխալ, ոչ մարքսիստական Ֆորմուլա է»<sup>3</sup>:

Այսպիսով մերկայացվեց նաև լեզվի «դասակարգայնություն» հակադիտական մառյան Ֆորմուլան, որ հավակնություն ուներ մարքսիստական ֆորմուլա կոչվելու:

Ջբաղվելով լեզվի բնորոշ հատկանիշներով՝ Ի. Վ. Ստալինը լեզվաբանություն մեջ մտցրեց մի շարք նոր, մասնագիտական լեզվաբանական բանաբաններ, որոնք լեզվաբանական դիտությունը իդեալիստական, վուլգար մատերիալիստական հիմքերից փոխադրեցին դիալեկտիկական-մատերիալիստական հիմքերի վրա:

Իրանով արմատավորվեց մարքսիզմը լեզվաբանություն մեջ: Մշակելով լեզվի բնորոշ հատկանիշները՝ Ի. Վ. Ստալինը սանձանեց նրա, որպես հասարակական երևույթի, բնորոշումն ու տեղը:

«Լեզուն պատկանում է հասարակության գոյության ամբողջ ժամանակամիջոցում գործող հասարակական երևույթների թվին»<sup>4</sup>:

Իր նշանակում է, որ  
ա) լեզուն ոչ վերնաշենքային և ոչ բազիսային, այլ առանձին հասարակական կատեգորիա է:

բ) լեզուն, ինչպես և մյուս այլ հասարակական երևույթները, որոնք պատկանում են այդ կատեգորիային, ունեն այն հատկանիշը, որ նրանք գործում են հասարակության գոյության ամբողջ ժամանակամիջոցում:

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 36, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը:  
<sup>3</sup> Նույն տեղը, էջ 43:  
<sup>4</sup> Նույն տեղը, էջ 44:

դ) որ այս կարգի երևույթները շատ են և ոչ միայն լեզուն է:

Իրանով բոլորովին պարզվում է լեզվի, որպես հասարակական երևույթի, ամբողջ էությունը, և դոնքիշտություն է թվում մարդկանց այն առաջարկը, որ պահանջում էր հասարակության մեջ կատարվող սեռային-ցիայի ժամանակ սեռային կատարել նաև լեզվի մեջ: Ահա ինչու է. Վ. Ստալինը այս մարդկանց հավասարեցնում է «քարանձավի մարդիկ» մականուն ստացածներին:

Երբ հասկանալի է դառնում, որ լեզուն պատկանում է հասարակության գոյության ամբողջ ժամանակամիջոցում գործող հասարակական երևույթների թվին, հասկանալի է լինում նաև այն, որ լեզուն «...ծնվում և զարգանում է հասարակության ծննդի և զարգացման հետ միասին: Այն մասնանում է հասարակության մասիան հետ միասին: Հասարակությունից գուրս լեզու չկա»:<sup>1</sup>

Արևմտյան լեզուն և նրա զարգացման օրենքները հասկանալու համար պետք է այն ուսումնասիրել անխցելի կերպով կապված հասարակության պատմության հետ, այն ժողովրդի պատմության հետ, որին նա պատկանում է, որն ստեղծել է այն և զարգացրել:

Ստալինյան այս գրույթը լեզվաբանական դիտարկան աշխատանքներից տալիս է նոր ուղղություն. ուսումնասիրել լեզուն՝ կապելով այն հասարակության պատմության, ժողովրդի և ազգի պատմության հետ: Իսկ դա կազատի մեր գիտնականների հետազոտությունը այն միակողմանիությունից և սխալներից, որոնք անխուսափելի են ոչ մարքսիստական մեթոդով աշխատող գիտնականների գործերում:

Ստալինյան գրույթով լեզուն կապված է հասարակության կյանքի բոլոր բնագավառների հետ: Հին լեզվաբանները փորձում էին լեզվի կապը հասարակական կյանքի հետ գտնել նրա քերականության մեջ, եվ, ինարկի, այդ որոնումները ապարդյուն էին: Ավելին՝ լեզվաբանների մեջ իշխում էր նաև մի այլ կարծիք, որ իբր լեզուն անմիջական կապ չունի արտադրության հետ կամ հասարակության կյանքի այլ բնագավառների հետ: Հենց այդ նրանից էր, որ այդ կապը բոլորը փնտրում էին քերականության և արտադրության մեջ, քերականության և պատմության մեջ, քերականության և հասարակության կյանքի այլ բնագավառների մեջ:

Իսկ այդ մոլորությունը պատճառն այն էր, որ լեզվաբանները հասարակորեն չէին պատկերացնում լեզվի բաղադրիչ մասերը և նրանց փոխարարբերությունը, այսինքն՝ ճիշտ գաղափար չունեին լեզվի բնորոշ հատկանիշների, լեզվի սպեցիֆիկայի մասին:

Ի. Վ. Ստալինը նույն հանճարեղ խորությամբ և պարզությամբ լուծեց լեզվի բնորոշ հատկանիշների հարցը, ինչպես որ լուծեց լեզվի որպես հասարակական երևույթի, հարցը:

Ստալինյան ուսմունքի համաձայն՝ «Լեզուն միջոց, գործիք է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են իրար հետ, մտքեր փոխանակում և հասնում փոխադարձ ըմբռնման»:<sup>2</sup>

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 44, 1952 թ.:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 45:

Ստալինյան այս բնորոշումը բնագրկում է լեզուն իր ամբողջ խորությամբ: Ճիշտ է, որ բոլոր լեզվաբանները լեզուն դիտել էին իբրև հաղորդակցության միջոց, սակայն ստալինյան մոտեցումը արմատապես տարբերվում է բոլորից: Լեզվաբանները հասկանում էին, որ լեզուն միտք է արտահայտում, այդ պատճառով էլ դառնում է հաղորդակցության միջոց, իսկ մարդկային մտքերը կարող են հաղորդվել ոչ միայն լեզվով, այլ նաև ուրիշ միջոցներով՝ գույներով, լույսի միջոցով, շարժումներով և այլ գանազան պայմանական նշաններով: Ուստի այն բոլոր միջոցները, որոնցով հաղորդվում էր միտքը, հայտարարվում էին լեզուններ (սիմվոլներ, սիգնալներ, հիերոգլիֆներ և այլն):

Այդ հասկացությունից էլ առաջացել են սիմվոլներ, հիերոգլիֆներ, սիգնալներ և այլ նշանների տեսությունները լեզվի մասին, լեզուն էլ համարվել է սիգնալի կամ սիմվոլի նման պայմանական նշանների մի տեսակը: Լեզուն պայմանական նշան կամ պայմանական նշանի մի տեսակ բնույթնելու տեսությունը արմատապես սխալ տեսություն է: Այդ սխալ տեսությունից էլ բխում է ն. Մաոի դժային լեզվի տեսությունը: Նա գտնում էր, որ սկզբնապես մտքերն արտահայտվել են շարժումներով, ձեռքով, հետագայում միայն՝ մարդկային մտածողության և կուլտուրայի զարգացման հետևանքով, շարժումային լեզուն փոխարինվում է հնչյունային լեզվով: Իրանից էլ բնականորեն բխում է ն. Մաոի այն սխալ կարծիքը, թե ապագայի մարդը կհրաժարվի հնչյունային լեզվից, որովհետև նա կգանի մտքերը հաղորդելու ուղղակի միջոց:


Ի. Վ. Ստալինը մերկացրեց այդ տեսությունը, որպես իդեալիստական տեսություն, որի արմատները մտածողությունը և լեզուն միմյանցից անջատելու սխալի և մոլորության մեջ էր: Եվ իրօք, երբ մտքերը հաղորդելու միջոց համարում են սիմվոլը, սիգնալը, հիերոգլիֆը, պայմանական այս կամ այն նշանը, և դրանք հավասարեցվում են հնչյունական լեզվին, դրանով անջատում են լեզուն մտածողությունից: Մտածողությունը միայն այն ժամանակ կարող էր հաղորդվել լեզվից անխախտաբար այլ միջոցներով, երբ իսկապես նա անխախտաբար կերպով կապված չլիներ լեզվի հետ: Երբ մտքերը, բացի հնչյունային լեզվից, կարելի է հաղորդվել նաև այլ միջոցներով, ուրեմն մտածողությունը և լեզուն անջատելի են միմյանցից: Այսպես էլ անջատում էր ն. Մաոը մտածողությունը լեզվից: Այդպես անջատում են մտածողությունը լեզվից բոլոր նրանք, որոնք հնչյունային լեզուն համարում են պայմանական նշաններից մեկը, թերևս ամենակարելիքը, որոնք մտքի հաղորդակցության միջոց են համարում նաև սիմվոլները, սիգնալները, շարժումները և այլն:

Ի. Վ. Ստալինը ուսուցանում է.

«Հնչյունային լեզուն կամ բառերի լեզուն միշտ էլ եղել է մարդկային հասարակության միակ լեզուն: Նրան ընդունակ է ծառայելու որպես մարդկանց հաղորդակցման լիարժեք միջոց»:<sup>1</sup>

Պարզ է, որ ստալինյան ուսմունքով բառերի լեզուն է համարվում

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 32, 1952 թ.:



մաքերը հաղորդելու միակ լիարժեք միջոցը, մյուս բոլոր միջոցները հիմնը-  
վում են այդ հիմնական միջոցի վրա, «Թարգմանվում են» այդ միջոցից՝  
Այսպես, օրինակ, եթե քաղաքի երթևեկություն կարգավորման մեջ կարմիր  
գույնը նշանակում է արգելք, հասարակությունը կարող է այդ ըմբռնել  
որպես այդպիսին, եթե նա բառային լեզվով դիտե, որ փողոցի խաչմե-  
քուկներում կարմիրը արգելքի նշան է, եթե նրան ուղղակի ասել են՝ «Ան-  
ցուղիներում կարմիր գույնը անցնելու արգելքի նշան է»:

Եթե բաժակ բառը նշանակում է խրախճանք, ապա այդ հասկանալի  
է հասարակության բոլոր անդամների համար միայն այն ժամանակ, եթե  
բառային լեզվով նրանց ասել են՝ «Բաժակ նշանակում է խրախճանք»:

Եթե ձեռքի շարժումը դեպի իրեն մատենալու նշանակում է նշանակում,  
ապա այդ հասկանալի է հասարակության մեջ միայն այն ժամանակ, երբ  
բառային լեզվով նրանք են կարգացել և միաժամանակ ձեռքը շարժել  
են դեպի իրեն:

Այդպիսով՝ ինչ միջոց էլ ընտրենք հաղորդակցության համար, բոլոր  
միջոցները հանդիսանում են «Թարգմանություն» բառային լեզվից: Ուստի  
բառային լեզուն հանդիսացել է, և միշտ մնում է, որպես միակ լիարժեք  
միջոց մարդկային մաքերը հաղորդելու համար: Ավելին, Ի. Վ. Ստալինը  
ուսուցանում է՝ «Ինչպիսի մաքեր էլ ծագեն մարդու գլխում և երբ էլ  
ծագեն, զրանք կարող են ծագել ու գոյություն ունենալ միմիայն լեզվա-  
կան նյութի բազայի վրա, լեզվական տերմինների ու ֆրազների բազայի  
վրա. Լեզվական նյութից գերծ, լեզվական «բնական մատերիայից» գերծ  
մերկ մաքեր գոյություն չունեն»<sup>1</sup>:

Ահա այս մաքերի լույսի տակ հասկանալի է դառնում, թե ինչու  
ստալինյան բնորոշումը լեզվի հաղորդակցության միջոց լինելու մասին  
արժատապես ասարբերվում է մյուս բոլոր լեզվաբանների նման ֆորմու-  
լաներից:

Ուրեմն՝ բոլոր լեզվաբանները լեզվի, որպես հաղորդակցության միջոցի,  
բնորոշումը տալիս՝ անջատում են մտածողությունը լեզվից, բառային լե-  
զուն համարում են միայն հաղորդակցության միջոցներ լավագույն տեսակի,  
ենթացրելով, թե նրան զուգահեռ գոյություն է ունեցել հաղորդակցման այլ  
տեսակներ: Ի. Վ. Ստալինը իր լեզվաբանական հանճարեղ աշխատություն-  
ներով ցույց տվեց, որ լեզուն, մտածողության հետ չնույնանալով հանդերձ,  
հանգես է դալիս նրա հետ իրրե մի անխախտելի միասնություն, հետևա-  
բար միայն հնչյունային լեզուն է հաղորդակցման միակ լիարժեք միջոցը:  
Իրրե լեզվի երկրորդ բնորոշ հատկանիշ Ի. Վ. Ստալինը նշում է.  
«Անմիջականորեն կապված լինելով մտածողության հետ, լեզուն բա-  
սերի մեջ և բասերի միակցությամբ նախագասությունների մեջ գրանցում  
ու ամբայնդում է մտածողության աշխատանքի արդյունքները, մարդու  
իմացական աշխատանքի հաջողությունները և, այսպիսով, հնարավոր  
է դարձնում մաքերի փոխանակությունը մարդկային հասարակության մեջ»<sup>2</sup>:

Այս անդերձով Ի. Վ. Ստալինը բնագծում է լեզվի մի շատ կարևոր

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 78, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 45:

հատկանիշը. այդ հատկանիշով լեզուն խկապես դառնում է մարդկային  
փորձը, օրյակալի իրականության ճանաչման փորձը կուտակողը: Միայն  
դրա շնորհիվ մարդկային հասարակությունը ժառանգում է նախորդ հա-  
զարավոր սերունդների մտածողության աշխատանքի արդյունքները, իմա-  
ցական աշխատանքի հաջողությունները:

Յուրաքանչյուր պարաշրջանում, յուրաքանչյուր ժամանակ հասարա-  
կության գոյության՝ գործունեության, պայքարի և հաջողությունների  
արդյունքը գրանցվում է բառերի մեջ, տերմինների մեջ, կապակցություն-  
ների մեջ, և ոչ միայն գրանցվում է, այլև ամբայնդում է, այսինքն՝  
հասկացած երևույթը, ձեռք բերված հասկացությունը ձևավորվում է բառի  
և կապակցության մեջ, արտահայտվում է բառով և կապակցությամբ, շո-  
շափելի ձև է ստանում բառի և կապակցության միջոցով: Դա նշանակում  
է՝ գրանցվում է բառի և կապակցության մեջ, Այնուհետև այդ բառը կամ  
կապակցությունը իր իմաստով դառնում է ամբողջ հասարակության սեփա-  
կանություն ու մնում է հասարակության բժրունումների մեջ, հասարա-  
կության լեզվի մեջ շատ անհան կերպով: Այսինքն՝ բժրունումն ամբա-  
պրնդում է բառի կամ կապակցության մեջ: Դրա շնորհիվ նախորդ  
սերունդների փորձը, իմաստությունը, հասկացությունները, իմացական  
աշխատանքի հաջողությունները հաղորդվում են սերնդե-սերունդ:

Իսկ դա հենց հանդիսանում է հասարակության պրոպրետի հիմքերից  
մեկը: Յուրաքանչյուր սերունդ, ստանալով նախորդ սերնդի փորձը, գիտե-  
լիքները և այլն, ճշտում է, ստուգում է, ավելացնում է իրենը և հաղորդում  
հաջորդին:

Դրանով հնարավոր է դառնում մաքերի հաղորդումը ժամանակակից-  
ների միջև, իսկ գրելու գոյության հետ այդ հաղորդակցությունը հնարավոր  
է դառնում տարբեր, երբևեմ ժամանակով միմյանցից շատ հեռավոր սե-  
րունդների միջև:

Դա էլ ավելի է հարստացնում հասարակության պարզացման հնարա-  
վորությունները: Այդ բոլորը լեզվի միջոցով, լեզվի այն հիմնական  
հատկության միջոցով, որ նա գրանցում և ամբայնդում է բառերի մեջ և  
բառերի կապակցությամբ նախագասությունների մեջ մտածողության աշ-  
խատանքի արդյունքները, մարդու իմացական աշխատանքի հաջողու-  
թյունները:

Լեզվաբանական գիտության մեջ գոյություն է ունեցել պարավոր  
վեճ այն հարցի շուրջը, թե ի՞նչ կապ ունի բասը այն առարկայի կամ  
երևույթի հետ, որը նա արտահայտում է: Լեզվաբանների որոշ խումբն  
ասել է, որ այդ կապը գոյություն չունի, մի այլ խումբ պնդել է, թե այդ  
կապը գոյություն ունի. ուրեմն՝ այս կարևոր պրոպրեմը ևս լուծված չի  
եղել գիտության մեջ:

Ստալինյան հանճարը լուծեց նաև այդ պրոպրեմը. ամեն մի հասարա-  
կության մեջ բառը և բառակապակցությունն ունի բնորոշ հատկանիշ՝  
գրանցելու և ամբայնդելու մտածողության աշխատանքի արդյունքները,  
մարդու իմացական աշխատանքի հաջողությունները, այլ կերպ բառը,  
կապակցությունը կամ ամբողջ լեզուն կիրքցնելին իրենց գոյության իմաս-

տը, նշանակում է, որ լեզվաբանական դարավոր այդ վեճը անիմաստ  
և անառարկայական վեճ է եղել բառի մի էական հատկանիշը չգիտակցելու  
պատճառով:

Ի. Վ. Ստալինը ուսուցանում է.

«Մտքերի փոխանակությունը մշտական և կենսական անհրաժեշտու-  
թյուն է, որովհետև առանց դրան հնարավոր չէ կարգավորել մարդկանց-  
համասեղ գործողությունները բնությունից ուժերի դեմ մղվող պայքարում,  
նյութական անհրաժեշտ բարիքների արտադրության համար մղվող պայ-  
քարում...»: Այդ նշանակում է՝ հնարավոր չէ մարդկանց բուն արտադրու-  
թյունը, առանց որի հասարակությունը չի կարող գոյություն ունենալ:

Հետևաբար մտքերի փոխանակության մշտական և կենսական անհրա-  
ժեշտությունը բխում է արտադրությանը կազմակերպելու անհրաժեշտու-  
թյունից, եթե հասարակության անդամների համար հասկանալի և ընդ-  
հանուր լեզու գոյություն չունենա, հասարակությունը չի կազմակերպի  
արտադրություն, կկազմալուծվի և կզարգարի որպես հասարակություն գո-  
յություն ունենալուց:

Իսկ հասարակության արտադրության պրոցեսը խիստապես համատեղ  
մի պայքար է բնության ուժերի դեմ, որի ընթացքում մարդը ձեռք է  
բերում փորձ, զարգացնում է իր միտքը, զարգացնում է իրեն և իր ար-  
տադրությունը: Այդ բոլորի համար անհրաժեշտ նախապայման է լեզուն,  
ուստի «Այդ իմաստով լեզուն հաղորդակցության գործիք լինելով, դրա  
հետ միասին հասարակության պայքարի և զարգացման գործիք է»<sup>2</sup>, Դա  
նույնպես լեզվի մի բնորոշ հատկանիշն է:

Ինչպես տեսնում ենք, լեզվի բնորոշ հատկանիշները տարբերում են  
նրան մյուս բոլոր հասարակական երևույթներից, բնորոշում են նրան որ-  
պես մի առանձին տեսակի հասարակական երևույթ:

Բացի դրանից՝ տարբեր է նաև լեզվի էությունը, նրա կազմությունը  
և առանձնահատկությունները մյուս բոլոր հասարակական երևույթների  
համեմատությամբ: Լեզվի «Այդ առանձնահատկությունները հատուկ են  
միայն լեզվին, և հենց այն պատճառով, որ դրանք հատուկ են միայն լեզ-  
վին, լեզուն հանդիսանում է ինքնուրույն գիտություն՝ լեզվաբանության  
ուսումնասիրության օբյեկտ»<sup>3</sup>:

Ստալինյան ուսմունքի համաձայն լեզվին յուրահատուկ է փերակա-  
նություն և բառային կազմ: Այդ երկուսը լեզվի բաղադրիչ մասերն են և  
միասին վերցրած կազմում են լեզու: Բայց դրանցից յուրաքանչյուրն ունի  
իր յուրահատուկ գծերը:

Այդ բաղադրիչ մասերի յուրահատուկ գծերի քննության ընթացքում  
Ի. Վ. Ստալինը մացրեց լեզվաբանական մի շարք նոր հասկացություններ:

Բառային կազմի հարցը քննելիս Ի. Վ. Ստալինը լեզվաբանության  
մեջ մտցնում է բառային կազմի և բառային հիմնական ֆոնդի հասկա-

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 45, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 46:  
<sup>3</sup> Նույն տեղը, էջ 73:

յությունները, որոնք հեղաշրջում են լեզվաբանական բժրոնումները լեզվի  
և նրա բառերի մասին:

Ստալինյան ուսմունքի համաձայն, «...լեզվի մեջ գոյություն ունեցող  
բոլոր բառերը միասին կազմում են լեզվի այսպես կոչված բառային կազմը»:

Լեզվի բառային կազմն ունի որոշ գծեր, առանձնահատկություններ,  
որոնք նրան հնարավորություն են տալիս լեզվի մեջ կատարելու իր կարևոր  
գերը:

1. Բառային կազմի առաջին առանձնահատկությունն այն է, որ նա  
խիստ փոփոխական է:

«Սակայն լեզվի բառային կազմը փոխվում է ոչ որպես վերնաշինք, ոչ  
թե նրի վերացման և նորի կառուցման միջոցով, այլ գոյություն ունեցող  
բառարանը սոցիալական կարգերի փոփոխությունների, արտադրության զար-  
գացման, կուլտուրայի, գիտության և այլն զարգացման կապակցությամբ  
առաջացած նոր բառերով համալրելու միջոցով: Ըստ որում, չնայած այն  
բանին, որ լեզվի բառային կազմից սովորաբար դուրս են ընկնում որոշ քա-  
նակությամբ հնացած բառեր, նրան ավելանում են ավելի շատ նոր բառեր»:

Այդ պատճառով էլ բառային կազմը գտնվում է անընդհատ փոփո-  
խության մեջ:

2. Բառային կազմի միջոցով լեզուն անմիջապես կապված է մարդու  
արտադրության գործունեության բոլոր բնագավառների հետ, արտադրու-  
թյունից մինչև բազիսը և բազիսից մինչև վերնաշինքը: Այդ պատճառով  
էլ արտադրության փոփոխություններն արտացոլվում են լեզվի մեջ ան-  
միջականորեն և միանգամից, չսպասելով բազիսի փոփոխություններին:  
Դրա հետևանքով էլ լեզվի գործողության ոլորտը բազմակողմանի է, բն-  
զարձակ է և համարյա անսահման:

3. «Բառային կազմն արտացոլում է լեզվի վիճակի պատկերը, որքան  
ավելի հարուստ և ավելի բազմակողմանի է բառային կազմը, այնքան  
ավելի հարուստ ու ավելի զարգացած է լեզուն»:

Հին լեզվաբանությունը փորձում էր լուծել այն հարցը, թե ո՞ր  
լեզուններն են զարգացած և որո՞նք են հետամնաց: Ի՞նչ հատկանիշ պետք  
է վերցնել դրա համար: Իրրև հատկանիշ առնվում էր հնչյունների զար-  
գացած լինելը, շատ կամ քիչ լինելը, բարդ կամ պարզ լինելը և այլն:

Իսկ մատականությունը իրրև զարգացման ցուցանիշ առնում էր  
փերականական, հատկապես, ձևաբանական սխառմը: Ամենազարգացած լե-  
զուն մատականությունը համարում էր թեքական լեզուն, ավելի քիչ զար-  
գացած՝ կցական լեզուն, իսկ անջատականը՝ համեմատաբար պրիմիտիվ  
լեզու: Այս մտեցումները արմատապես սխալ էին, որովհետև այնպիսի  
մեծ կուլտուրայի լեզուն, ինչպիսին չինարեն լեզուն էր, անխրախցիորեն  
ընկնում էր անզարգացած լեզուների շարքը: Թե՛ն ինչ լեզվաբանների և թե՛ն  
և Մառի մոտ այս հարցը ընկած էր փակուղու մեջ:

Ստալինյան ուսմունքը բառային կազմի մասին հանեց այդ հարցը

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 46, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 49—50:  
<sup>3</sup> Նույն տեղը, էջ 46:

փակուցուց և լուծեց հանճարեղ կերպով: Լեզվի հնչյունները կարող են լինել այս կամ այն կարգի, քերականությունները կարող են լինել այս կամ այն սխառեմի, բայց զբանք չեն վճռում լեզվի զարգացման աստիճանի հարցը: Լեզվի զարգացման աստիճանի հարցը լուծվում է բառային կազմի միջոցով: Որքան հարուստ և բազմակողմանի է լեզվի բառային կազմը, այնքան հարուստ և ավելի զարգացած է լեզուն:

Այսպես է ստալինյան հանճարեղ ուսմունքը: Այդ պատճառով էլ ժամանակակից բոլոր լեզուները, ինչպիսի քերականություն էլ նրանք ունենան, ինչպիսի հնչյունական կազմ էլ ունենան, կարող են բարձրանալ բազմակողմանի և զարգացած լեզվի աստիճանը, եթե նրանք յուրացնեն և ստեղծեն հարուստ և բազմակողմանի բառային կազմ:

Այդ ուղիով են ընթանում գեղի հարուստ և բազմակողմանի զարգացման աստիճանը Սովետական Միության բոլոր այն լեզուները, որոնք նախատեսված են շրջանում եղել են հեռամենաց և անզարգացած այն պատճառով, որ այդ լեզուներով խոսող հասարակությունները եղել են հեռամենաց և անզարգացած վիճակում:

4. Բառային կազմն ունի մի հատկություն ևս. նա հեշտությամբ իր մեջ ընդունում է օտար բառեր, հեշտությամբ յուրացնում է փոխառություններ: Յուրացնելով օտար լեզուներից փոխառություններ, բառային կազմը չի վնասում լեզվին, չի հարվածում նրա սրակին, այլ դառնում է իր տեսակ պահեստարան, պատենցիալ վիճակում ընդունում է բառեր, մի տեսակ պահեստարան, պատենցիալ վիճակում ընդացրում, եթե այդ փոխառությունները պետք են լեզվի սրակին, նրանք կարող են անցնել բառային հիմնական ֆոնդի մեջ, ասիմիլացիայի ենթարկվելով լեզվի կազմից: Իսկ եթե նրանք պետք չեն լեզվին, բառային կազմի միջից դուրս են ընկնում, մահանում են և մոռացվում: Այս եղանակով բառային կազմը պահպանում է լեզվի սրակը վնասող ազդեցություններից: Ասանձնապես բռնի ասիմիլացիայի ժամանակ օտար բառերը թափանցում են բառային կազմի մեջ, բայց չեն մտնում հիմնական ֆոնդի մեջ, և դրա հետևանքով լեզուն չի վնասվում, այլ օգուտ է քաղում:

Բառային կազմի մեջ են թափանցում սկզբնապես նաև այն բառերը, որոնք լեզուն յուրացնում է հաղթված, ասիմիլացիայի ենթարկված լեզուներից, և բառային կազմի միջոցով ըստ անհրաժեշտության յուրացվում են, ասիմիլացվում են զբանք և այդ դեպքում անցնում են բառային հիմնական ֆոնդի մեջ:

5. Բառային կազմի մի հատկություն էլ այն է, որ նա «...ինքնին վերցրած, ղեկեա լեզու չի կազմում. այն ավելի շուտ շինանյութ է հանդիսանում լեզվի համար: Ճիշտ այնպես, ինչպես շինարարական գործում շինանյութերը չեն կազմում շենքը, թեև առանց դրանց անհնարին է շենք կառուցել, այնպես էլ լեզվի բառային կազմը չի կազմում բուն լեզուն, թեև առանց դրան աներևակայելի է սրել լեզու»<sup>1</sup>:

Միանգամայն նոր է նաև ստալինյան ուսմունքը բառային հիմնական ֆոնդի մասին: Ստալինյան ուսմունքի համաձայն «Լեզվի բառային

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 46—47, 1952 թ.:

կազմի մեջ գլխավորը բառային հիմնական ֆոնդն է, որի մեջ մտնում են նաև բոլոր արմատական բառերը, որպես նրա միջուկը»<sup>2</sup>:

Բառային հիմնական ֆոնդի ստալինյան ուսմունքը լեզվաբանության համար շատ կարևոր նշանակություն ունեցող ուսմունք է, այդ ուսմունքը նկատարան է դառնում մի շարք պրոբլեմներ լուծելու:

Ի. Վ. Ստալինը նշում է բառային հիմնական ֆոնդի մի շարք առանձնահատկություններ.

ա) բառային հիմնական ֆոնդը «շատ ավելի պակաս ծավալ ունի, քան լեզվի բառային կազմը».

բ) բառային հիմնական ֆոնդը ապրում է շատ երկար դարերի ընթացքում.

գ) բառային հիմնական ֆոնդը լեզվին հիմք է տալիս իր սեփական միջոցներով նոր բառեր կազմելու.

դ) բառային հիմնական ֆոնդի մեջ մտնում են կենսականորեն անհրաժեշտ բառեր.

ե) բառային հիմնական ֆոնդը կուտակվում է դարերի ընթացքում:

Բառային հիմնական ֆոնդը հաջողությամբ օգտագործվում է մի շարք պատմական ժամանակաշրջանների ընթացքում: Եվ որովհետև նա կուտակվում է դարերի ընթացքում, այդ պատճառով էլ հնարավոր չէ կարճ ժամանակամիջոցում ոչնչացնել բառային հիմնական ֆոնդը և նոր բառային հիմնական ֆոնդ ստեղծել: Բառային հիմնական ֆոնդի ոչնչացումը հանգեցնում է լեզվի կաթվածահարությանը, իրար միջև մարդկանց հաղորդակցության գործի լիակատար քայքայմանը:

Պարզ է, որ յուրաքանչյուր ժողովուրդ խնամքով պահպանում է իր բառային հիմնական ֆոնդը, չի թույլ տալիս այնտեղ թափանցելու ամեն տեսակի բառեր, չի դուրս մղում այնտեղ եղած բառերը: Բառային հիմնական ֆոնդի փոփոխությունը իրապես նշանակում է այդ ֆոնդի բառերի աստիճանական կուտակում: Բառային հիմնական ֆոնդից հազվագյուտ գեղքում միայն բառեր են դուրս ընկնում, այն էլ շատ դարերի ընթացքում, երբ հասարակության կյանքում տեղի ունեցած խոշոր տեղաշարժերը հասարակության կյանքից ու մտքից դուրս են գցում այդ բառերի արտահայտած երևույթը: Բառային հիմնական ֆոնդի պահպանումը լեզվի պահպանման միջոցներից է: Բառային հիմնական ֆոնդը հարստանում է, համարվում է ի հաշիվ բառային կազմի բառերի: Երբ բառային կազմի մեջ նոր բառեր են մտնում, նրանք երկարատև պրոցեսում ասիմիլացվում են, ենթարկվում են լեզվի կանոններին և բուրյովին կորցնում են իրենց օտար գծերը. միայն այն դեպքում, երբ նրանք կազմում են լեզվի համար կենսական անհրաժեշտություն, նրանք անցնում են բառային հիմնական ֆոնդի մեջ և դառնում բառային հիմնական ֆոնդի հարստացման միջոց: Այդպես է, օրինակ, հայերենի՝ փոխառյալ բառերի մի մասը ուրիշ լեզուներից:

Բառային հիմնական ֆոնդի անփոփոխ լինելու լավագույն ապացույցն այն է, որ հայերեն լեզվի մեջ եղած 700 հնգերոպական արմատներից, որոնք հանդիսանում են հայերենի բառային հիմնական ֆոնդի սկզբնա-

<sup>2</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 46, 1952 թ.:

պաշարը, ավելի քան երեք հազար տարվա բնթացքում դուրս է մնացել միայն 10 տոկոսը, ուրեմն պահպանվել է 90 տոկոսը, մինչդեռ հունարենից փոխառյալ 900 բառից 1500 տարվա բնթացքում պահպանվել են միայն 50-ը, այսինքն՝ ավելի քիչ, քան 8 տոկոսը:

դ) Բառային հիմնական ֆոնդի մեկ հատկությունն էլ այն է, որ նա քերականական կառուցվածքի հետ միասին կազմում է լեզվի սրակը, նրա սպեցիֆիկայի էությունը:

Ի. Վ. Ստալինը լեզվի բազադրիչ մասերից մեկն էլ համարում է քերականությունը: Չնայած որ քերականական գիտությունը գոյություն ունի ավելի քան երկու հազար տարի, լեզվաբանությունը չի կարողացել տալ նրա հիմնական բնորոշումը: Այդ պատճառով էլ լեզվաբանության մեջ միջազգային է կղեր, թե ի՞նչ նշանակություն ունի նա լեզվի համար: Մասականները քերականության, որպես գիտություն, արժեքը բոլորովին համասարեցնում էին ոչնչի:

Ի. Վ. Ստալինը արժեքավորում է նաև քերականությունն իբրև գիտություն, նաև քերականությունն իբրև լեզվի սպեցիֆիկայի մի բաղադրիչ մասը:

Ստալինյան ուսումնաբերական համաձայն «Քերականությունը (ձևաբանությունը, շարահյուսությունը) բառերի փոփոխության և նախադասության մեջ բառերի կապակցության կանոնների ժողովածուն է»:<sup>1</sup>

Ստալինյան այս հասակ բնորոշմամբ հասկանալի է դառնում քերականության, որպես գիտության, դերն ու նշանակությունը լեզվի համար:

Ինչպես սովորեցնում է Ի. Վ. Ստալինը, «...բառային կազմը մեծագույն նշանակություն է ստանում, երբ այն զբաղում է լեզվի քերականության տրամադրության տակ, որը որոշում է բառերի փոփոխության կանոնները, նախադասությունների կազմելու համար: Բառերի միացման կանոնները և, այդպիսով, լեզվին տալիս է կուռ, իմաստավորված բնույթը»:<sup>2</sup>

Ստալինյան այս հստակ մեկնությունը շնորհիվ պարզվում են քերականության շատ հարցեր:

Նախ՝ պարզվում է, որ քերականությունը բազմապես է երկու հիմնական բաժնից՝ ձևաբանությունից և շարահյուսությունից:

Հաճախ քերականության մեջ մտցնում էին ամեն ինչ, որ վերաբերվում էր լեզվին, լեզվի կանոններին: Քերականության մեջ մտցնում էին նաև՝ հնչյունաբանությունը, նաև՝ իմաստաբանությունը, նաև՝ ձևաբանությունը, նաև՝ բառագիտությունը, նաև՝ շարահյուսությունը, նաև՝ ուղղագրությունը, նաև՝ ուղղախոսությունը և այլն:

Ստալինյան բնորոշմամբ քերականությունը լեզվին տալիս է կուռ, իմաստավորված բնույթ, իսկ այդ նշանակությունը քերականությունն ստանում է իր ձևաբանության և շարահյուսության շնորհիվ, որովհետև բառերի փոփոխության կանոնները և բառերի միացման կանոնները որոշում են լեզվի կանոնավորությունը: Ուղղախոսության և ուղղագրության հարցերը առջև են գալիս այն ժամանակ, երբ լեզուն դառնում

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 47, 1952 թ.:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 47:

է գրավոր: Նշանակում է՝ դրանք նորամույժ երևույթներ են լեզվի գիտության մեջ և լեզվի հիմնական սրակին չեն վերաբերում. գրանք դառնում են լեզվաբանության բաժիններ, որչափով որ լեզվաբանությունը գրադրում է նաև՝ քերականության, նաև՝ հնչյունաբանության, նաև՝ իմաստաբանության հարցերով: Այստեղ միայն բարդ գրություն է ստեղծվում բառակազմության հարցում: Կասկածից վեր է, որ բառային կազմի ուսումնաբեր. լեզվական, քերականությունը չեն վերաբերում, որովհետև ստալինյան ուսումնաբեր. սրբազան տարրերում են բառային կազմը և քերականությունը միմյանցից: Բայց բառակազմության հարցերը երկակի բնույթ ունեն: Բառակազմությունը վերաբերում է քերականությանն այն չափով, որ չափով որ նրանով ձևավորվում են լեզվի շինանյութերը, խոսքի մասերը: Այսպիսով բառակազմության օրինակաբանությունները օգտագործում են քերականության (ձևաբանության կամ շարահյուսության) օրենքները: Այսպես բառակազմությունը վերաբերվում է նաև բառային կազմին, բառագիտության, որովհետև բառակազմությունը հարստացնում է բառային կազմը նոր բառերով, բնորոշում է նրա ծավալը, փոխում է առանձին բառերի բովանդակությունը, երբեմն իմաստը, ստեղծում է նոր իմաստով բառեր և այլն:

Այդ պատճառով բառակազմությունը, մեր կարծիքով, մտնում է բառագիտության մեջ: Ի. Վ. Ստալինը բառակազմության հարցերի մասին խոսում է բառային կազմի առնչությամբ, երբ բնորոշում է բառային հիմնական ֆոնդը: Ընկեր Ստալինը ուսուցանում է. «Լեզվի բառային կազմի մեջ գլխավորը բառային հիմնական ֆոնդն է, որի մեջ մտնում են նաև բոլոր արմատական բառերը, որպես նրա միջուկը: Դա շատ ավելի պակաս ծավալ ունի, քան լեզվի բառային կազմը, բայց դա սպրտում է շատ երկար, գարեբի բնթացքում և լեզվին հիմք է տալիս նոր բառերի կազմության համար»:<sup>1</sup>

Ինչպես տեսնում ենք, Ի. Վ. Ստալինը նոր բառեր կազմելու մասին խոսելիս տեսնում է, որ բառային հիմնական ֆոնդը լեզվին հնարավորություն է տալիս, հիմք է տալիս նոր բառեր կազմելու համար: Եթե բառակազմության հարցերը վերաբերվելին քերականությանը, հասկանալի կերպով կասկեր, որ բառային հիմնական ֆոնդը քերականությանն է հիմք տալիս նոր բառեր կազմելու համար: Ստալինյան գրությունը համաձայն քերականությունը գործ ունի լեզվական շինանյութի հետ, այսինքն՝ պատրաստի բառերի հետ, և որոշում է նրանց փոփոխության կանոնները և միացման կանոնները նախադասություն կազմելու նպատակով, բայց ոչ նրանց միացման կանոնները նոր բառեր կազմելու նպատակով:

Այսպիսով մենք գտնում ենք շատ մարդկանց փորձերն անտեղի, երբ այդ փորձերով ձգնում են ապացուցելու, որ բառակազմությունը ձևաբանության մի մասն է: Ստալինյան հստակ ուսումնաբեր. մեջ այդ հարցը զբաղվում է շատ պարզ և հավելումների սրեկ կարիք չունի:

Ստալինյան ուսումնաբերական համաձայն քերականությունը լեզվի կառուցող ինժեներն է, որովհետև «...քերականությունը շնորհիվ է լեզուն հնարա-

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 46, 1952 թ.:

վորութիւնն ստանում մարդկային մտքերը պարուրելու լեզվական նյութա-  
կան թագանթով»<sup>1</sup>

Ի. Վ. Ստալինը, հանճարեղ պարզութեամբ և խորութեամբ սահմանե-  
լով քերականութիւնը, որոշելով նրա դերն ու նշանակութիւնը լեզվի մեջ  
և լեզվի համար, նշում է նաև քերականութեան տարբերիչ գիծը. Ի. Վ. Ստալինը  
ուսուցանում է.

«Քերականութեան տարբերիչ գիծն այն է, որ նա տալիս է բառերի  
փոփոխութեան կանոնները, նկատի ունենալով ո՛չ թե կոնկրետ բառերը, այլ  
ընդհանրապես բառերը, առանց օրէէ կոնկրետութեան. նա կանոններ է տա-  
լիս նախագատութիւնների կազմելու համար, նկատի ունենալով ո՛չ թե ինչ-որ  
կոնկրետ նախագատութիւններ... այլ ընդհանրապես ամեն տեսակ նախա-  
գատութիւններ, անկախ այս կամ այն նախագատութեան կոնկրետ ձևից»<sup>2</sup>

Նշանակում է՝ քերականութիւնը արտարանվում է մասնավորից և  
կոնկրետից, վերցնում է նախագատութիւնների մեջ բառերի փոփոխու-  
թիւնների և բառերի կապակցութեան հիմքում ընկած ընդհանուր և  
կառուցում քերականական կանոններ և օրենքներ:

Այդպիսի գիտութիւնը պետք է օժտված լինի արտարանելու մեծ  
հմտութեամբ և փորձով, ուրեմն նա հանդիսանում է մարդկային գիտական  
մեծ նվաճումներից մեկը: Ուստի Ի. Վ. Ստալինն ուսուցանում է. «Քե-  
րականութիւնը մարդկային մտածողութեան երկարատև, արտարանող աշ-  
խատանքի արդյունք է, մտածողութեան վիթխարի հաջողութիւնների ցու-  
ցանիշը»<sup>3</sup>

Ոչ մի ժամանակ քերականութիւնն իրրև գիտութիւնն չէր բարձրաց-  
վել այդ ստախճանին, ինչպես բարձրացվեց ստալինյան հանճարով: Դրա-  
նով Ի. Վ. Ստալինը ընդգծում է նաև քերականութեան կրթիչ նշանակու-  
թիւնը և մեր մտածողութիւնը արտարանման մեծագույն հատկութեամբ  
օժտելու դերը:

Պարզ է, որ դրա հետևանքով միանգամայն փոխվում է վերաբերմուն-  
քը դեպի քերականական գիտութիւնը և դեպի լեզվի նշանակութիւնն  
ընդհանրապես:

Ի. Վ. Ստալինը առանձնապես կանգ է առնում լեզվի քերականական  
կառուցվածքի վրա և նշում այդ կառուցվածքի էական գծերը:

1. Լեզվի քերականական կառուցվածքի հիմնական գծերից մեկն այն  
է, որ նա փոփոխվում է է՛լ ավելի դանդաղ, քան նրա բառային հիմնական  
ֆոնդը:

2. Քերականական կառուցվածքի փոփոխութիւնները տեղի են ունե-  
նում երկար ժամանակի ընթացքում:

3. Քերականական կառուցվածքի փոփոխութիւնը արտահայտվում է  
նրանով, որ այդ կառուցվածքը «կատարելագործվում է, բարելավում և  
ճշգրտում է իր կանոնները, հարստանում է նոր կանոններով»:

4. Քերականական կառուցվածքը մշակվում է գարեբի ընթացքում՝ և

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանութեան հարցերը, էջ 47, 1952 թ.:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 47—48:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 48:

գտնում է լեզվի միս ու արյունը. քերականական կառուցվածքի հիմքերը  
պահպանվում են շատ երկար ժամանակի ընթացքում և դրանք «կարող  
են հասարակութեանը հաջողութեամբ սպասարկել մի շարք գորաշջաննե-  
րի ընթացքում»:

Ստալինյան այս ուսմունքից բխում է, որ սխալ է մտածանութեան  
այն գրույթը, ըստ որի լեզուների քերականութիւնները կարող են իրար  
հետ համադրվել և խաչափորվել, Սխալ է նաև մտածանութեան այն  
գրույթը, որ քերականութիւնների խաչափորման հետևանքով առաջանում  
է լեզուների խաչափորում, որի արդյունքը լինում է մի նոր, երրորդ ախ-  
պի լեզվի գոյացում, որն իր մեջ ունի երկու ախպի քերականութիւնից  
էլ տարբեր:

Ընդհակառակն՝ ամեն մի լեզվի քերականական կառուցվածքն այլ  
քերականութիւնների համար եղել է անթափանցելի բնագավառ:

Հետևաբար ապարդյուն և սխալ են եղել թե մտածանների և թե ոչ  
մտածանների այն հետազոտութիւնները, որնք փորձել են քերականու-  
թեամբ խառը ախպի լեզուներ գտնել կամ քերականութեան կառուցվածքի  
մեջ զանազան շերտեր սրտնել:

Քերականական նոր երևույթները լեզվի մեջ առաջանում են նույն  
լեզվի ներքին օրինաչափութեանների զարգացմամբ՝ կամ հին օրինաչա-  
փութիւնների հղկմամբ և ծավալմամբ, կամ նոր օրինաչափութիւննե-  
րի առաջացման ճանապարհով:

Ստալինյան ուսմունքը քերականական կառուցվածքի մասին մեծ չա-  
փով կողմնորոշում է լեզվաբանական գիտական հետազոտութիւնները,  
յսույց տալիս այդ հետազոտութիւնների ճիշտ և արդյունավետ ուղին:

Մեծագույն արգասավորութեամբ է օժտված Ի. Վ. Ստալինի տեսու-  
թիւնը լեզվի որակի, լեզվի սպեցիֆիկայի էութեան մասին: Լեզվի սպե-  
ցիֆիկայի էութեանը այն նոր և մեծագույն արժեք ներկայացնող բմբռո-  
նումներից է, որ Ի. Վ. Ստալինը մտցրեց լեզվաբանական գիտութեան մեջ:

Ի. Վ. Ստալինի ուսմունքի համաձայն «...լեզվի քերականական կառուց-  
վածքը և նրա բառային հիմնական ֆոնդը կազմում են լեզվի հիմքը, նրա  
սպեցիֆիկայի էութեանը»<sup>1</sup>

Քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը կազմում  
են լեզվի որակը, որի շնորհիվ լեզուն ձևոք է բերում մի շարք կարևոր  
հատկութիւններ:

1. Քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի շնոր-  
հիվ լեզուն ձևոք է բերում մեծ գիմացկունութիւն և վիթխարի գիմացրո-  
ղականութիւն բունի աօխմիլացիային:

Որքան էլ լեզուն ենթարկվում է բոնութիւնների, ճնշումների և հա-  
յածանքների, նա պահպանվում է շատ երկար ժամանակ. Լեզվաբանութեան  
մեջ այդ երևույթը նկատված էր, բայց չէր բացահայտված գրա հիմնական  
պատճառը: Մինչև Ի. Վ. Ստալինի հանճարեղ աշխատութիւնների լույս  
բնծայումը լեզվաբանութիւնը գիտեր, որ շատ լեզուներ ապրում են շատ  
երկար ժամանակ և ունեն գիմադրութեան մեծ կարողութիւն: Լեզվաբա-

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանութեան հարցերը, էջ 51, 1952 թ.:

նութիւնը գիտեր նաև, որ լեզուները ենթարկվում էին ասիմիլացիայի, կորչում էին, մահանում էին: Սակայն լեզվաբանութիւնը չգիտեր ոչ մեկի և ոչ մյուսի պատճառը: Լեզվաբանները կարծում էին, թե դրա պատճառը բնութիւնն էր, բնացոյցները մեծութիւնն ու ուժը, բնութիւնն ենթարկվող ժողովրդի հոգեկան կարողութիւնները թուլութիւնը և այլն, և այլն: Ինչպէս որ իմպերիալիզմի տեսարանները, բուրժուական նացիոնալիստները կարծում էին և ամժ էլ կարծում են, թե իմպերիալիստական տիրապետութիւնները, ազգային ճնշումներն ու բնութիւնները կարող են հանգեցնել տիրվող լեզուների ոչնչացման և կարճ ժամանակամիջոցում տիրող լեզվի համաշխարհային հաղթանակին:

Ի. Վ. Ստալինը լուծեց նաև լեզվաբանական այս պրոբլեմը: Ի. Վ. Ստալինը բացահայտեց այն գաղանիքը, որ լեզուների գիմադրութիւն և պահպանման պատճառը նրանց սպեցիֆիկայի էութեան, նրանց որակը կազմող բառային հիմնական ֆոնդի և քերականական կառուցվածքի պահպանումն է և գիմադրութիւն կարողութիւնը բուն ասիմիլացիային: Իբրև օրինակ առնվեցին բալկանյան լեզուները, սրոնք, թեև թյուրքական բնակալիները կողմից ենթարկվել են բուն ասիմիլացիայի քաղաքականութեանը, բայց պահպանվել են, որովհետև այդ ասիմիլացիայի համար անհաղթահարելի են եղել դրանց բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը:

Լափագոյն օրինակ է նաև հայոց լեզուն. հայ ժողովրդի զանազան հատվածները շատ դարերի ընթացքում գտնվել են թյուրքական, պարսկական ասիմիլատորների ճնշման տակ, կամ շատ այլ երկրներում՝ հեռու հայրենիքից: Հայերեն բարբառների մեջ շատ բան է փոխվել՝ և՛ արտասանութեան և բառային կազմի զգալի մասը, երբեմն այն չափով, որ շատ շատ հայերի համար անհասկանալի են դարձել: Այնուամենայնիվ հայերենի այդ բարբառները մնացել են հայերեն: Մեր ներկա ուսումնասիրութիւնը պարզում է, որ այդ բարբառները պահպանել են հայերենի քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը: Ուստի որքան էլ դժվար հասկանալի լինեն մյուս հայերի համար, մեր բոլոր բարբառները մնում են իրրև հայերենի տերիտորիալ ձևեր:

Պատմութիւնը շատ օրինակներ գիտե և՛ բուն ասիմիլացիայի, և՛ ճնշումների, նվաճումների և այլն, սակայն լեզուների գիմադրողականութիւնը և երկարատև պահպանումը պատմութիւնը նույնպես հայտնի փաստեր են:

Ի. Վ. Ստալինի հանճարը միայն բացահայտեց այդ երևույթի բուն պատճառը:

2. Ի. Վ. Ստալինի ուսմունքով լեզվի քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը կազմում են լեզվի սկզբնատարրերը:

3. Ի. Վ. Ստալինի ուսմունքով «Լեզուների խաչավորումը չի կարելի գիտել որպէս վճռական հարվածի եզակի ակտ, որ իր արդյունքներն է տալիս մի քանի տարվա ընթացքում»: Լեզուների խաչավորումը երկարատև պրոցես է, որի ընթացքում լեզուներից մեկը պահպանում է իր բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը, այսինքն՝ իր հիմնական որակը, իսկ մյուսը աստիճանաբար կորցնում է իր որակը՝ քե-

1 Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանութիւնը հարցերը, էջ 58, 1952 թ.:

րականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, և մահանում է:

Առաջինը դուրս է գալիս հաղթող լեզու, իսկ երկրորդը՝ հաղթվող լեզու: Հաղթող լեզուն, պահպանելով իր որակը, համալրում է իր բառային կազմը հաղթվողի բառերով և էլ ավելի է ուժեղանում ու շարունակում զարգանալ զարգացման իր ներքին օրենքներով:

Այդ ամենը, իհարկե, ինչպէս ասացինք, սեական պրոցես է, որ շարունակվում է հարյուրավոր տարիներ:

Ուստի ն. Մաուրի լեզուների խաչավորման տեսութիւնը, ըստ որի լեզուների խաչավորման ժամանակ տեղի են ունեցել պայթիւն և լեզուների ստագիալ փոփոխութիւն, սխալ և հակադիտական է:

Ստալինյան ուսմունքի համաձայն լեզուն գտնվում է անընդհատ զարգացման պրոցեսում, բայց լեզվի զարգացումը տեղի է ունենում ոչ թե գոյութիւն ունեցող լեզվի ոչնչացման և նորի կերտման միջոցով, այլ գոյութիւն ունեցող լեզվի հիմնական տարրերի ծավալման ու կատարելագործման միջոցով:

Հետևաբար «Մարքսիզմը գտնում է, որ լեզվի անցումը հին որակից նոր որակի տեղի է ունենում ոչ թե պայթիւնի միջոցով, ոչ թե գոյութիւն ունեցող լեզուն ոչնչացնելու և նորն ստեղծելու միջոցով, այլ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով, հետևաբար, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով»:

Ստալինյան այս հստակ դրույթները բխում է, որ՝

ա) լեզուների որակի փոփոխութիւնները պետք է որոնել ամենից առաջ լեզուների զարգացման ներքին օրենքափոխութիւնների մեջ:

բ) լեզուների նոր որակի առաջացման պրոցեսը աստիճանական փոփոխութեան, նոր որակի տարրերի ծավալման և հին որակի տարրերի աստիճանական մահացման պրոցես է:

Պարզ է, որ լեզուների պատմութիւնը գրելու, հետազոտելու համար պետք է հին որակի մեջ որոնել նորի տարրերի առկայութիւնն ու վիճակը, հետևել այդ տարրերի աստիճանական ծավալմանը, միաժամանակ նաև որոշել հին որակի էական գծերը ու այդ գծերի աստիճանական մահացման ընթացքը:

Այս նոր մտեցմամբ միայն հնարավոր է գրել որևէ լեզվի պատմութիւն: Իհարկե լեզվի մեջ կատարվող ներքին պրոցեսների հարցը պետք է կապել հասարակութեան պատմութեան հետ, որովհետև «...լեզուն ու նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրվում է անխզելի կապի մեջ հասարակութեան պատմութեան հետ, ժողովրդի պատմութեան հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը»:

Ի. Վ. Ստալինը լեզվի պատմութիւնը գրելու հիմնական ելակետը նույնպէս մատնացույց է արել իր հետևյալ ասույթում:

«Պետք է ենթադրել, որ ժամանակակից լեզվի տարրերը սաղմնավորվել են դեռևս խոր հնադարում, նախքան ստրկութեան դարաշրջանը: Դա ոչ բարձր լեզու էր, բառային շատ աղքատիկ ֆոնդով, բայց իր

1 Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանութիւնը հարցերը, էջ 58, 1952 թ.:

2 Նույն տեղը, էջ 44:



քերականական կառուցվածքով, ճիշտ է, պրիմիտիվ, բայց, այնուամենայնիվ, քերականական կառուցվածքով»<sup>1</sup>

Այսպես է ժամանակակից գիտություն լուսարձակը՝ ստալինյան ուսմունքը լեզվի մասին:

Ինչպես տեսնում ենք՝ լեզվաբանություն բոլոր հիմնական պրոբլեմները շոշափված են և լուծված հանճարեղ պարզություններով և հստակություններով, լուծված գիտելիքի կարգի մասին և ստատիկական մատերիալիզմի, ստեղծագործական մարքսիզմի պայծառ լույսի տակ:

Լեզվաբանական պրոբլեմները լուծելու համար Ի. Վ. Ստալինը նախ պարզաբանեց, մշակեց ու զարգացրեց մարքս-լենինյան մեթոդոլոգիայի մի շարք հարեցերը (բաղիսի և վերնաշենքի, զարգացման օրինաչափությունների, լեզվի և մտածողությունից և այլն):

Զարգացնելով ու նոր աստիճանի վրա բարձրացնելով մարքսիզմ-լենինիզմը, Ի. Վ. Ստալինը մարքսիզմ-լենինիզմի զարգացման այդ նոր աստիճանից քննություն ենթարկեց լեզվաբանության հիմնական տեսական հարցերը և արմատավորեց մարքսիզմը լեզվաբանության մեջ:

Ստեղծագործական մարքսիզմի այս պայծառ լույսի տակ հստակորեն մերկացան այն խոր մոլորություններն ու սխալները, որոնք տիրապետել են իշխել են լեզվաբանության մեջ:

Ստեղծագործական մարքսիզմի լույսի տակ հստակորեն բացահայտվեց նաև այն մոլոր ուղին, որով ընթանում էին շատ լեզվաբաններ իրեն կողմնորոշելու ունենալով մասնականության ոչ մարքսիստական, հակապատմական «տեսությունները»:

Յուրյա տալով մտականության արմատական սխալները, բացահայտելով ն. Յա. Մաոի ու նրա հետևորդների և «աշակերանների» մոլորությունները, Ի. Վ. Ստալինը սովետական գիտականներին ավելի նոր, մարքս-լենինյան օրինաչափ, դուրս հանեց գիտությունը փակուղուց, արմատավորեց մարքսիզմը լեզվաբանության մեջ և սովետական գիտության առաջ բաց արեց նոր հեռանկարներ:

Սովետական բոլոր գիտականների՝ մտականների և ոչ մտականների, համար ստալինյան ուսմունքը բաց արեց նոր գարշաշնչան: Յուրաքանչյուր խոշոր կամ շարքային գիտնական, յուրացնելով ստալինյան լեզվաբանական ուսմունքը, կթե, ինարկե, նա ունի կենդանի միտք, մարքսիզմը հասկանալու կարողություն, սովետական ժողովրդի և ամբողջ աշխարհի ապագայի համար աշխատելու ցանկություն, սովետական Հայրենիքը, կոմունիստական հասարակարգը, մարքսիզմ-լենինիզմը, որպես մեծագույն կոմունիստական հասարակարգը, մարքսիզմ-լենինիզմը, որպես մեծագույն կոմունիստական հասարակարգը, սիրող սիրտ և նվիրվածություն, յուրացնելով ստալինյան լեզվաբանական ուսմունքը, ընարելու է միայն մեկ ճանապարհ՝ իր յան լեզվաբանական ուսմունքը, ընարելու է միայն մեկ ճանապարհ՝ իր յան լեզվաբանական ուսմունքը վերանայելու, ստալինյան լեզվաբանագիտական անցյալ ուղին հիմնովին վերանայելու և գիտա-հետազոտական աշխատանքները ստատիկական վերագրվելու և գիտա-հետազոտական աշխատանքներն սիրող սիրտ և նվիրվածություն ճանապարհ՝ ձգտելով իդուր չվատնել ոչ մի բոլակ և ստեղծագործել ստալինյան լեզվաբանական ուսմունքի ոգով:

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 52—53, 1952 թ.:

### 2. ՄԵԾ ՇՐՋԱԳՈՒՐՉԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լեզվաբանական գիտությունների մեջ հայագիտությունը հնագույն գիտություններից է, պրիմիտիվ վիճակով նա գոյություն ունի V դարից սկսած: Բոլորին հայտնի են VI, VII, VIII և հաջորդ դարերի հայ քերականագետները, որոնք փորձել են հայերեն լեզուն գիտականորեն ընկալել, հարթահարել և ներկայացնել: Միջնագարում համարյա չզարգացավ հայագիտությունը, որովհետև նրա վրա իշխում էր և նրան կուրացնում բոլոր գիտությունները կուրացնող աստվածաբանությունը:

Նոր դարերում նկատվում է առանձին հետաքրքրություն դեպի հայերեն լեզուն և՛ հայերի, և՛ օտարների կողմից: Սակայն հայագիտությունը գիտական ոլորտի մեջ ընկավ այն ժամանակ, երբ նա որդեգրեց պատմա-համեմատական մեթոդը, դարձավ հնդեւրոպական լեզվաբանության ուսումնասիրության օբյեկտ:

Հայագիտության շուրջը քիչ թե շատ լուրջ աշխատություններ կրեան կան XIX դարի 30-ական թվականներին: Դրանից հետո տարբեր ուղղություններով, տարբեր հայացքներով, բայց բոլորն էլ իդեալիստական մտացմամբ, աշխատություններ ստեղծվեցին հայերենի շուրջը:

Հնդեւրոպական լեզվաբանության ներկայացուցիչները փորձում էին որոշել հայերենի տեղը հնդեւրոպական լեզուների ընտանիքում: Արդեն 30—40-ական թվականներին որոշված էր հայերենի պատկանելը հընդերոպական լեզվախմբին: Բայց նրա դիրքը այդ լեզվախմբի մեջ որոշվեց միայն 1875 թվին: Պարզվեց, որ հայերենը կազմում է հնդեւրոպական ընտանիքի լեզուների ինքնուրույն ճյուղ, որ իր քերականության և նշյունաբանության տվյալներով մոտ է սլավոնական, հունական և արիական ճյուղերին: Դրանից հետո կազմվեց հայերենի հնդեւրոպական արմատների ստուգաբանությունը, հայերեն փոխառյալ բառերի ստուգաբանությունը և, վերջապես, հայերենի համեմատական քերականությունը:

Այդ բոլոր աշխատանքները ամփոփվեցին խոշորագույն հայագետ Հ. Աճառյանի հոշակավոր «Արմատական բառարանում», որը կազմում է հայագիտության խոշորագույն կոթողը և որի նմանը առայժմ չի ստեղծվել այլ լեզուների համար:

Հ. Աճառյանը մեծ վաստակ ունի հայագիտության առաջ, որովհետև հայագիտության տարբեր բնագավառների ամենախոշոր և վաստակավոր աշխատանքները պատկանում են նրա գրչին: «Արմատական բառարանից» բացի, Հ. Աճառյանը կազմել է «Հայ բարբառագիտություն», «Հայոց լեզվի պատմություն» հատ. 1-ին և 2-րդ, «Հայ անձնանունների բառարան», «Հայ դավառական բառարան» և «Հայերենի լիակատար քերականություն» 562 լեզուների համեմատություններ (լույս է տեսել առաջին հատորը):

Հ. Աճառյանի ուսումնասիրություններն ընդգրկում են հայերենի հայ-

մեծատական քերականությունը և համեմատական բառագիտությունը մեր գարաշրջանից առաջ առաջին հազարամյակում և հետո:

Հայերեն լեզվի ավելի հին կապերի հարցով զբաղվեց պրոֆ. Գ. Ղափանցյանը, հրատարակելով մի շարք աշխատություններ հայ-խեթական, հայ-խուրրիտական, հայ-ասուրական լեզուների կապի և հարաբերության մասին:

20-րդ դարի սկզբներին հայ լեզվաբանությունը հարցերով զբաղվեց Ն. Յա. Մառը, որն ընտրեց հնդկարոպական լեզվաբանությունը «քննադատելու», և հայագիտության հարցերը «նոր» դրվածքով ուսումնասիրելու ուղին:

Սկզբից և եթ Ն. Մառը չչուցաբերեց «նոր», ավելի պրոգրեսիվ մեթոդաբանական, քան հնդկարոպական լեզվաբանությունը, թեև նրա դիրքերը քննադատողի դիրքեր էին:

Ն. Մառը առաջ մղեց խառնածին լեզուների կոնցեսյուրան և փորձում էր ապացուցել, որ հայերեն լեզուն արիական խառնածին լեզու է: Նրա այս հայացքը ընդունվեց նույնիսկ մի շարք հնդկարոպական լեզվաբանների կողմից, թեև հնդկարոպական լեզվաբանությունն ամբողջությամբ չընդունեց նրա տեսակետը: Առաջ նետելով խառնածին լեզուների տեսությունը, Ն. Մառը հայերեն լեզվի նկատմամբ առաջարկեց նաև «գասակարգային լեզուների» ֆորմուլան, պնդելով, որ հին Հայաստանում գրաբարն իշխողների լեզուն էր, իսկ բարբառները գյուղացիական և աշխատավորական խավերի լեզուներն էին:

Հետագա աշխատանքներում Ն. Մառը շարունակեց խորացնել հայերենի խառնածին լինելու տեսությունը, փորձելով ցույց տալ հարեթական, այսինքն՝ կովկասյան լեզուների էլեմենտները հայերենում:

Մասնավորապես լեզվի կամ լեզվի խառնածին լինելու տեսությունը Ն. Մառը ծավալեց նաև այլ լեզուների նկատմամբ (ուզբուրդերենի, բասկերենի, վերջինների և այլն): Հետագայում նա Միջերկրածովյան շրջանում «հայանագործեց» էթնիկական նոր էլեմենտ, որի հետ, իբրև թե, խառնվել էին հնդկարոպական, սեմական ցեղաբանականներ և ժառանգել նրա կուլտուրան ու լեզուն: Որոշելով լեզուների մեջ խառնածինության նրա կուլտուրան և դավանելով այն սկզբունքը, որ լեզուների բոլոր տարբեր հավասարապես ենթակա են խաչավորման, խառնվելուն և համադրվելուն, Ն. Մառը ի վերջո հանգեց այն կարծիքին, թե աշխարհի բոլոր լեզուները խառնածին են, անխառն լեզուներ անխառն քերականություններով գոյություն չունեն:

Մակայն լեզուների մեջ նմանություններ էր նա սրունում երբեմն այնպիսի հեռավորության վրա, որ խառնածին լինելու հանգամանք դառնում էր անհավասարի: Ծարունակելով իր մոլոր ուղին, Ն. Մառը հանգեց լեզուների ստադիալ զարգացման տեսությունը, որով փորձեց բացատրել լեզուների խառնածինության երևույթները աշխարհիս գանազան տեղերում: Այդ ժառանգական «Հարեթական թեորիայի» անվան առկա, որ հետո կոչվեց «Լեզվի նոր մանուկ «Հարեթական թեորիայի» անվան առկա, որ հետո կոչվեց «Լեզվի նոր մանուկ», Ն. Մառը առաջ մղեց լեզվաբանական հետազոտությունների ուսմունքը, Ն. Մառը առաջ մղեց լեզվաբանական հետազոտությունների համար հնչաբանական հատուկ «մեթոդ», որի հիմքն էր քառատարր անալիզի մեթոդը:

Ելնելով այդ ամենից, Ն. Մառը ժխտեց պատմա-համեմատական մեթոդը և իր հնչաբանական անալիզի «մեթոդով» համեմատության մեջ գրեց բոլոր լեզուները բոլոր լեզուների հետ իրենց բոլոր սարբերով՝ առաջնորդվելով չորս էլեմենտների իր «տեսությունով»:

Իրենից բացի այդ մեթոդը կիրառելու փորձեր փչ էին կատարվում, ուստի նրա մասին հետո նրա հետևորդներն ու աշակերտները կրկնում էին նրա «ուսմունքի» ընդհանուր սկզբունքները, փորձում էին ուսումնասիրություններ կատարել՝ հաշվի չառնելով լեզուների սրակը և դրանց սահմանները միանգամից վերացնելով: Դադարեցին լեզուների պատմությունը գրելու աշխատանքները, լեզուների սրակը երեսն բերելու, լեզուների առանձնահատկությունները գրանցելու բոլոր աշխատանքները:

Իր «տեսության» նոր շրջանում Ն. Մառը հայերեն լեզվի մասին առաջ մղեց այն կարծիքը, որ նա գտնվում է անցման վիճակում՝ հարեթական ստադիայից դեպի հնդկարոպական: Այս կարծիքը հարկավոր չափով կոնկրետացված չէր, ավելի շատ հայատարություն էր, քան գիտական եզրակացություն, և նույնիսկ՝ քան գիտական հիպոթեզ: Այդ պատճառով էլ մասնական հայագիտական աշխատանքները սրեւ նոր արդյունք չստացին:

Դժբախտաբար 1927 թ. որոշ գասախոսների ջանքերով Երևանի Պետական Համալսարանում հիմնադրվեց Ն. Մառի «ուսմունքի» ամբիոն, որն ունեցավ նույնիսկ այդ «ուսմունքի» ստադիան: Լեզվաբանական երիտասարդ կադրերի կողմից Ն. Մառի «ուսմունքը» խոր մոլորություն էր ընկալվեց որպես լրացրելով երևույթ, իսկ մի քանիսն, ավելի առաջ գնալով, հայտարարեցին այդ «ուսմունքը» նույնիսկ մարքսիստական:

Դիտական նոր կադրերը ստիճանաբար երես դարձրին համեմատական լեզվաբանությունից, իրենց ժամանակը նվիրեցին Ն. Մառի աշխատությունների ուսումնասիրությանը և նրա աշխատանքների ու տեսակետների պարզաբանմանը, ըստ որում այդ ամենը կատարվում էր «մարտապետական» ընդդեմ հնդկարոպական լեզվաբանական գիտություն: Ն. Մառի «ուսմունքը» հայերենի մասին համարվում էր նոր, «մարքսիստական» հայագիտություն: Ընդհանուր է, շատ քչերն էին փորձում Ն. Մառի սկզբունքները կիրառել լեզվաբանական ուսումնասիրությունների մեջ և հայոց լեզվի պատմության, հայոց լեզվի տեսության ու հայ բարբառագիտության հարցերը պարզաբանել: Մառի հայացքներով, բայց նրա «ուսմունքը» պրոպագանդում էին բոլորը, փչ բացառություններ:

Ինչպես տեսնում ենք, սովետական հայագիտությունը գնաց մոլոր հանապարհով: Ն. Մառը շեղեց հայագիտության հետազոտման ընթացքը՝ հանդեցնելով այն փակուղու:

Ընդունելով Ն. Մառի ուսմունքն իբրև մարքսիստական, ես նրա հետևորդը դարձա 1931 թվին: Այդ ժամանակվանից փորձեցի անքննադատաբար կիրառել Ն. Մառի «տեսակետները» լեզվաբանության և բարբառագիտության տեսության բնագավառում: Ելնելով լեզվի «գասակարգային» կարծիքը, թե զրաբարը ազնվական գասակարգի լեզուն էր, իսկ բարբառները գյուղացիական գասակարգի լեզուները, ես փորձում էի շարադրել (այ բարբառագիտություն—3

հայոց լեզվի պատմութունը որպես գասակարգային լեզուների պայքարի պատմութուն: Հայերեն լեզվի տարրեր ժամանակների որակական փոփոխութունները բացատրում էի որպես գասակարգային պայքարի արդյունք: Այսպես՝ գտնում էի, որ պարզաբար լեզուն անփոփոխ պահպանվեց մինչև XI դարը և մահացավ հին ֆեոդալական գասակարգի մահվան հետ միասին, միջին հայերենը կազմվեց նոր առաջացած միջնագարյան ֆեոդալական գասակարգի կողմից և մահացավ նրա հետ մեկտեղ, իսկ աշխարհաբար լեզուն կազմեց առևտրա-բուրժուական գասակարգը երևանի բարբառի հիման վրա: Սոցիալիստական ժամանակի հայերենը համարում էի պրոլետարիատի «գասակարգային լեզու»: Լեզվի պատմության այս ձևի մեխանիստական պատկերացումը մարքսիզմը հասկանալու արդյունք էր: Երբ անհրաժեշտ էր լինում փաստական նյութերի ուսումնասիրությունը կատարել, անհնարին էր գտնում այդ սխեման կիրառել, և նա մնում էր անհիմն մի հայտարարութուն:

Ելնելով մասյան ստաղիտականության սկզբունքից և լեզուների խաչավորման տեսությունից, ես արժարժում էի այն միտքը, թե հայերենն առաջացել է Հայաստանի բնիկների բազմաթիվ լեզուների համադրական խաչավորման հետևանքով, որը ավել է հաբեթականից գեղի հնդկերուականն անցնող ախլի մեկ հայերեն լեզու իր բոլոր բարբառներով:

Սակայն ուսումնասիրելով հայերեն լեզվի փաստական նյութը, երևում էր նրա որոշակի հնդկերուական լեզվախմբին պատկանելու հանգամանքը, ուստի իմ կարծիքը հայերենի առաջացման մասին նույնպես մնում էր փաստելով չհիմնավորված և այնպիսի անհիմն հայտարարություն, ինչպես Ն. Մատի լեզվաբանական տեսական բազմաթիվ «գրությունները»:

Առաջնորդվելով Ն. Մատի լեզվական խաչավորումների տեսությունով՝ մեր բարբառների առաջացումը ես բացատրում էի իբրև Հայաստանի բնիկների լեզուների ստաղիտ փոփոխության արդյունք, պնդելով, որ այդ լեզուների խաչավորման պրոցեսում նրանց փերականություններն ու բառապաշարը փոխադարձաբար ներթափանցում էին և աստիճանաբար նմանվում միմյանց՝ վերածվելով մի լեզվի բարբառների: Դիֆերենցիան պրոցես բարձրվին չէի բնորոշում: Բայց երբ ուսումնասիրում էի բարբառների փաստական մատերիալը, պարզվում էր, որ պրանք հայերեն լեզվի այլափոխություններն են, և չկան բարբառների մեջ հատկապես փերականական այնպիսի ձևեր, որոնք հաստատելին բարբառների՝ առաջներում ինքնուրույն լեզու լինելու հանգամանքը:

Տեսական սկզբունքի և նյութի այդ կարվածությունը առաջանում էր մարքսիզմի սկզբունքները չբժբունելուց և Ն. Մատի ազավազված «գրությունները» ճշմարտության տեղ բնորոշելուց:

Տեսականի և փաստական նյութի միջև եղած խզումը նկատվում էր իմ բոլոր աշխատանքներում, երբ անհրաժեշտ էր լինում պարզապես գաստգիրք կազմել, ես «մտապեման» էի ապիս Ն. Մատի «տեսությունը», առաջնորդվում էի փաստական նյութով, օգտագործում էի ավանդական լեզվաբանության նվաճումները: Իմ խոր համոզմունքով Ն. Մատի ուսմունքից պետք է հեռու մնար պարզաբար, որովհետև այն մարտիկ չէր ոչ միայն գրող-

րոցի աշակերտի համար, այլ նաև ուսուցչության համար. Ն. Մատը մերժում էր փերականությունը և նրա նշանակությունը, իսկ ես, գպրոցին մոտ կանգնած լինելով, կազմեցի փերականության ութ ախլի գասագիրք ու ձեռնարկ:

Նույնպիսի խզում կար բարբառագիտական իմ աշխատանքների տեսականի և գործնականի միջև:

Տեսականում բնորոշելով Ն. Մատի վուլգարիզատորական «գրությունները», գործնականում ուսումնասիրում էի բարբառների փաստական նյութը և հայանաբերում բարբառների նոր ճյուղավորումներ, երբ քառասնական թվականներին լեզվաբանական նոր աճած կազրերը նկատեցին այդ խզումը իմ աշխատանքների մեջ, իրավացիորեն բացահայտեցին և քննադատության ենթարկեցին: Դա ինձ ստիպեց գաղափարեցնել հայերեն լեզվի փաստների ուսումնասիրությունը և գրադվել միմիայն Ն. Մատի «տեսությունները» պրոպագանդայով, ցուցադրելով դրանք որպես մարքսիզմի նվաճումներ: Իմ հետազոտական աշխատանքների փակուղին էր գա, որ հանդեցրեց իմ հետազոտական աշխատանքների ամբլության: Ավելին՝ իբրև Հայկ. ՍՍԻ ԳԱ Ն. Մատի անվան լեզվի ինստիտուտի գերեկաոր, ես ուղղություն էի տալիս նաև երիտասարդ կազրերի գիտա-հետազոտական աշխատանքներին, վարելով նրանց դեպի այն փակուղին, որի մեջ էի ես ինքս: Մտականությունը Հայաստանում, չտալով որևէ արդյունք, խանգարում էր նաև այնպիսի արդյունավետ և մեծ նեղիմակի աշխատանքներին, ինչպիսին Հ. Աճառյանն էր:

Հայագիտության այդ փակուղին հիմնահատակ ջախջախեց Բ. Վ. Ստալինը իր «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձարեղ աշխատությունով, 1950 թվին ստալինյան հանձարով հիմնահատակ ջախջախվեցին հետազոտական մտքի վրա ախրապետող մտական կաշկանդումները, փրկվեցին մեր լեզվաբանական կազրերը այլասերող պրոպագանդայից, ազատագրվեց սովետական գիտական միտքը արակչեկյան բունությունից, և հայագիտությունը կանգնեց նոր, ստալինյան լայն պրոպագանդայի վրա իր գարգացման լայն հեռանկարներով, որոնք լուսավորվում են ստալինյան հանձարի պայծառ լույսով:

Այդպես է հայագիտության մեծ շրջադարձը: Բայց դա չի նշանակում բնավ դարձ գեղի հիեր, գեղի հնդկերուական լեզվաբանությունը, գեղի տասնիններորդ դարի լեզվաբանական հասկացությունները ու հետազոտական մեթոդները:

Ինարկի, ստալինյան հայագիտությունը չի կարող չօգտագործել հին հայագիտության խոշոր և արժեքավոր նվաճումները, չի կարող չօգտագործել պատմա-համեմատական մեթոդի ձեռքբերումները, բայց նա բազմաթիվ նույնացած բմբունումներից, նույնացած լեզվաբանական հասկացություններից պետք է հրամարվի: Նրա ելակետն է և պիտի լինի լեզվաբանական այն բոլոր բմբունումները, որ ստեղծել ու մուծել է լեզվաբանական գիտության մեջ ստեղծագործական մարքսիզմի հանձարեղ կրիթեկը՝ Բ. Վ. Ստալինը: Հայագիտությունը պետք է գտնա հայերեն լեզվի գարգացման ներքին օրինաչափություններն ուսումնասիրող գիտություն: Այդպես է մեծ շրջադարձի հիմնական ելակետը:

Ստալինյան հայազիտությունը պետք է զբաղվի ժամանակակից հայերենի որակի աւսումնասիրությունը, որպեսզի երևան բերի նրա զարգացման հիմնական օրենքները՝ օգտագործելու զբանք մեր սոցիալիստական կուլտուրայի ձևը հանդիսացող հայերեն լեզվի է՛լ ավելի մեծ զարգացման ու փարթամացման համար:

Ստալինյան հայազիտությունը պետք է քրանաջան կերպով զբաղվի նաև մեր անհետացող բարբառներով, մեր ժողովրդի աերիտորիալ խոսվածքներով, որոնք, ընդհանուր լեզվի ճյուղավորումները լինելով, շատ ու շատ փաստեր ու օրենքներ ունեն, որոնք կօգնեն բացատրելու մեր ընդհանուր լեզվի զարգացման օրինաչափությունները:

Այս է սովետական հայազիտության ուղին, որ հարթել է նրա համար գիտության մեծ կորիֆեյը՝ Ի. Վ. Ստալինը:

3. ԸՆԳՀԱՆՈՒՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԲԱՐԲԱՆՆԵՐ

Ընկեր Ստալինի ուսմունքը լեզվի և բարբառների մասին հասակորեն լուծում ու պարզում է այս երկու բմբունումը:

Ընկեր Ստալինն ուսուցանում է՝

ա) «...լեզուն որպես հաղորդակցման միջոց միշտ եղել է և մնում է հասարակության համար միասնական և նրա անդամների համար ընդհանուր լեզու:

բ) բարբառների ու ժարգոնների անկառնությունը չի ժխտում, այլ հաստատում է համաժողովրդական լեզվի անկառնությունը, որի ճյուղավորումներն են հանդիսանում նրանք և որին ենթակա են նրանք»:

Նշանակում է՝ բարբառի բմբունումը հասկանալի է միայն այն զեպում, եթե դրա հետ միասին նկատի ունենանք ընդհանուր լեզվի գոյությունը:

Եվ ընդհակառակն՝ երբ խոսում ենք ընդհանուր լեզվի մասին, միշտ պիտի նկատի ունենանք, որ ընդհանուր լեզվի կողքին եղել են բարբառներ:

Առանձնապես անվիճելի է տեղական բարբառների գոյությունը ընդհանուր լեզվի գոյության բոլոր փուլերում, բացի տոնմական (սկզբնական) փուլից:

Այդ առթիվ ընկեր Ստալինը ուսուցանում է, որ ընդհանուր լեզուն միշտ էլ գոյություն ունեցել է և՛ տոնմերի մեջ, և՛ ցեղերի մեջ, և՛ ժողովրդի մեջ, և՛ ազգի մեջ:

Ե՛րժվար չէ հասկանալ, որ այն հասարակության մեջ, որտեղ չկան գասակարգեր, չի կարող խոսք անգամ լինել գասակարգային լեզվի մասին, նախնադարյան-համայնական տոնմային հասարակարգը չգիտեր գասակարգեր, հետևաբար, այնտեղ չէր կարող լինել նաև գասակարգային լեզու, — լեզուն այնտեղ ընդհանուր, միասնական էր ամբողջ կոլեկտիվի համար...

Ինչ վերաբերում է հետագա զարգացմանը՝ տոնմային լեզուներից դեպի ցեղային լեզուները, ցեղային լեզուներից դեպի ժողովուրդների (народностей) լեզուները և ժողովուրդների լեզուներից դեպի ազգային լեզուները, — ապա ամենուրեք, զարգացման բոլոր էտապներում, լեզուն, որպես հասարակության մեջ մարդկանց հաղորդակցման միջոց, ընդհանուր ու միասնական է եղել հասարակության համար՝ հավասարապես ծառայելով հասարակության անդամներին, անկախ նրանց սոցիալական դրությունից...

Իհարկե դրա հետ միասին եղել են գիտելիներ, տեղական խոսվածք-

1 Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 43, 1952 թ.:

ներ, բայց գրանց վրա գերիշխել և իրեն է ենթարկել ցեղի կամ ժողովրդի (народность) միասնական ու ընդհանուր լեզուն»<sup>1</sup>

Այսպիսով, ընկեր Ստալինի ուսմունքի համաձայն՝ ցեղական գոյավիճակից սկսած, երբ էլ եղել է ընդհանուր լեզու, գրա նեա միասին եղել են նաև տեղական բարբառներ, որոնք ենթարկված են եղել ընդհանուր լեզվին, որպես նրա ստորին ձևերը:

Ընկեր Ստալինը, բացատրելով Մարքսի ասույթը բարբառների և ազգային լեզվի մասին, ասույցանում է.

«Մարքսն ընդունում էր ազգային միասնական լեզվի անհրաժեշտությունը, որպես բարձրագույն ձևի, որին ենթարկված են բարբառները, որպես ստորին ձևեր»<sup>2</sup>

Քանի որ այդ այդպես է, ապա պարզ է, որ պետք է ընդունել, ինչպես բխում է ընկեր Ստալինի ուսմունքից, որ ընդհանուր լեզվի առաջացման պրոցեսը միամասնակ նաև բարբառների առաջացման պրոցես է: Սուտի բարբառների ծագման հարցը և ընդհանուր լեզվի առաջացման հարցը պետք է լուծել իրար նեա կազմված՝ չմոտանալով, որ ընդհանուր լեզուն, նախքան այդպիսին դառնալը, եղել է մի տոնմի, հատկապես ուժեղագույն կամ մայրասոնմի լեզու:

Ընկեր Ստալինի ուսմունքի մեջ ոչ մի տեղ անգամ չի ակնարկված այն մասին, որ բարբառները առաջանան որպես նեաեանք ընդհանուր լեզվի քայքայման: Բայց սոված է, որ ընդհանուր լեզվի անկումից նեաու եզած բարբառները կարող են միմյանցից նեաանալով առանձին լեզուների սկիզբ տալ, եթե նրանք գեա չեն ազատվել ընդհանուր լեզվի մեջ<sup>3</sup>:

Այս ասույթից, ինչպես և ընկեր Ստալինի մյուս բոլոր ասույթներին, պետք է եզրակացնել, որ բարբառներն ու ընդհանուր լեզուն միասին առաջացած, միմյանց ժամանակակից և միմյանցով պայմանավորված երևույթներ են: Եթե ցեղական միավիճակ է առաջացել և կա, կամ ժողովուրդ (народность) է առաջացել և կա, կամ ազգ է առաջացել և կա, ապա նա պետք է ունենա ընդհանուր լեզու և տերիտորիալ խոսվածքներ կամ բարբառներ: Գոյալով թե լինեն այժմ իսկ ժողովուրդներ, որոնք ունենան մի ընդհանուր լեզու՝ չունենալով բարբառներ: Առայժմ աշխարհն այդպիսի օրինակ համարյա ցույց չի տվել: Լինի էլ, դա արտակարգ բացառություն կհազմի: Բայց կարող է պատահել, որ բարբառներ լինեն, իսկ ընդհանուր լեզու չլինի: Այդ նշանակում է, թե այդ ժողովրդի ընդհանուր լեզուն պետական կառասարսփայի նեաեանքով կրակի է մասնվել, մոտացվել է, և բարբառները շարունակել են իրենց անկախ գոյությունը: Այ թե այդ ընդհանուր լեզվի անկումն է պատճառ գարձել բարբառների առաջացման, այլ բարբառներ եղել են նույց ընդհանուր լեզվի նեա միասին, բայց չեն ձուլվել նրա մեջ, չեն կարողացել ազատվել, մերվել նրա մեջ և ընդհանուր լեզվի կարսից նեաու իրենք շարունակել են իրենց անկախ գոյությունը պահպանել:

<sup>1</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 23, 24, 25, 1952 թ.:  
<sup>2</sup> Նույն տեղը, էջ 29:  
<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 88—89:

Եթե գրանք միմյանցից նեաանան, աստիճանաբար կարող են նոր օրինակավորվումներ ձեռք բերել, ներքին զարգացման սեփական ճանապարհ ունենալ և վերածվել անկախ լեզուների:

Կարծում եմ, որ լեզվական ընտանիքների գոյությունը նենց այդպես էլ պետք է բացատրել:

Բարբառների առաջացման հարցը լուծվում է ստալինյան այն գրույթով, որ բարբառներն ընդհանուր լեզվի ճյուղավորումներն են: Այդ ճյուղավորումները կարող են տեղի ունենալ երկու ճանապարհով:

Բարբառների ճյուղավորման առաջին ճանապարհը գիֆերենցման ճանապարհն է: Տոնմական կարգերի ժամանակ անջատվելով մայր տոնմից և նեաանալով նրանից՝ տոնմի առանձին հատվածները տանում էին իրենց նեա նաև իրենց լեզուն, որն այդ հատվածների զարսվոր անկախ գոյություն նեաեանքով կորցնում էր՝ հին հատկանիշներից մի քանիսը և ձեռք բերում նոր հատկանիշներ: Գա առաջացնում էր բարբառ նույնիսկ այն ժամանակ, երբ կապը մայր տոնմի նեա կարված չէր լինում: Այդ ասովիվ Կ. Մարքսն ասում է. «...Բաժանվելու մշտական տեղեկեցը արժատավորված էր տոնմային կազմակերպություն տարբերի մեջ. նա ուժեղանում էր լեզվի մեջ տարբերություններ առաջացնելու տեղեկեցով, որ անխուսափելի էր նրանց... հասարակական վիճակի և նրանց կողմից զրադեցրած տերիտորիայի լայնածավալության անկայությանը: Թեև բանավոր խոսքը գորժմանալիս են կայուն է իր բառային կազմով և էլ ավելի կայուն է իր քերականական ձևերով, բայց նա չի կարող մնալ անփոփոխ: Տեղադրական անջատումը—տարածություն մեջ—ժամանակի ընթացքում հանդեցնում էր լեզվի մեջ տարբերություններ առաջանալուն...»<sup>1</sup>

Բարբառների ճյուղավորման երկրորդ ճանապարհը լեզուների և հատկապես ցեղակից լեզուների միացումն է, նրանց խաչավորումը՝ ստալինյան լեզվաբանության ասումով: Ի. Վ. Ստալինի ուսմունքի համաձայն լեզուների խաչավորումը իրեն նեաեանք տվել է մեկի հաղթանակը, այսինքն՝ մեկի հիմնական բառային ֆոնդի և քերականական կառուցվածքի պահպանումը, իսկ մյուսների մահացումը (պարտությունը):

Մահացող լեզուները փոխարինվել են հաղթող լեզվի ստորին ձևերով՝ բարբառներով, որ առաջացել են մահացած լեզուներով խոսողների կողմից հաղթող լեզուն սովորելու ընթացքում: Հաղթող լեզուն սովորելու ընթացքում առնվում է նրա բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքի հիմքերը: Բառային կազմի գլալի մասը կարող է մնալ հին լեզվինը, որովհետեւ ընկեր Ստալինը ասույցանում է, թե հաղթող լեզուն անգամ յուրացնում է պարսվածի բառային կազմի որոշ մասը: Ինչպես ասում է ընկեր Ստալինը, «...տեղի է ունենում հաղթանակած լեզվի բառային կազմի որոշ հարստացում ի հաջիվ պարսված լեզվի...»<sup>2</sup>: Եթե պարսված լեզվի բառերը մտնում են հաղթող լեզվի բառային կազմի մեջ, ուրեմն ավելի ևս նրանք կպահպանվեն պարսված լեզվով խոսողների նոր յուրացրած լեզվի մեջ, որով և նրանք կտարբերվեն հաղթանակած լեզվից՝ գառ-

<sup>1</sup> Архив Маркса и Энгельса, т. IX, стр. 79. Госполитиздат, 1941 г. (курсив Маркса)  
<sup>2</sup> Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 59, 1952 թ.:

նայով նրա բարբառը: Պարտւած լեզվից պահպանւում են նաև հնչյունա-  
կան որոշ օրենքներ, քերականական կառուցվածքի աննշան երևույթներ,  
որոնք կառաջացնեն հաղթանակած լեզվի երկրորդական երևույթների վա-  
րկացիան: Այդ ամենով բարբառը, այսինքն՝ պարտւած լեզվով խոսողի  
կողմից յուրացւած հաղթանակած լեզուն նրա բերանում կտարբերվի հիմ-  
նական լեզվից: Կառաջանան հաղթանակած լեզվի բարբառները, Հաղթա-  
նակած լեզուն կզատնա ընդհանուր լեզու, է՛լ ավելի զարգանալով և է՛լ  
ավելի ուժեղանալով, որով նա կզերիչի այլ տեղական բարբառների վրա,  
զրանք ենթարկելով իրեն որպես իր ստորագաս ձևերը:

Բայց պատմական կյանքի ընթացքում «ցեղերը և ժողովուրդները  
մասնատուում էին ու բաժանվում, խտնւում էին և խաչավորւում»: Այն  
զեպքում, երբ նրանք միացած են մնում, երկու ճանապարհով էլ առաջա-  
ցած բարբառները շարունակում են մտանալ ընդհանուր լեզվին, իսկ երբ  
նրանք մասնատուում են և բաժանվում միմյանցից, այդ զեպքում այդ  
բարբառները, ձևոք բերելով ինքնուրույնութուն, զարգանում են իրենց  
ներքին օրինաչափություններով և նախորդ լեզվի ազդեցությունից հեռա-  
նալով, երկաբ գարերի ընթացքում փոփոխելով կառուցվածքի հիմնական  
աարբերը, վերածվում են անկախ լեզուների խիստ փոփոխված ձևով պահ-  
պանելով հեռավոր նմանությունը նախորդ ընդհանուր լեզվի կամ իր հա-  
սակակից, իր հետ առաջացած նոր լեզուների (նախորդ բարբառների) հետ:  
Այդ զեպքում անա կարելի է մտաւորապես ընդունել այն «մայր»  
լեզուն կամ հաղթանակած լեզուն իրրև «հիմք լեզու», իսկ մյուսները  
նրանից առաջացած:

Այդպես են կազմվել, ըստ երևույթին, զանազան լեզվախմբերը:

**Բ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

**1. ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Հայերենի բարբառների մասին առաջին անգամ հիշատակել են մեր  
պատմիչները (Մ. Սորենացի, Կորյուն) և քերականները:

Այնուհետև հայերեն բարբառների մասին ակնարկել է հոլան-  
դացի հայագետ Երոպերը իր Thesaurus linguae armeniacae (Արամեան  
լեզուի գանձ) գրքում, որ յույս է տեսել Ամստերդամում 1711 թվին, Ակ-  
նարկից երևում է, որ Երոպերին հայանի են եղել Ազուլիսի, Ջուզայի,  
Թբիլիսիի, Ղարաբաղի, Փոքր Հայքի և Ղանի բարբառները:

Երկրորդ աշխատությունը, որ հայերենի բարբառների մասին տեղե-  
կություն է տալիս, դա Ծահան Ջրպետ Եվզոկիացու ֆրանսերեն լեզվով  
գրած հայերեն քերականությունն է (Grammaire de la langue ar-  
menienne, Paris, 1823), որի մի մասը նվիրված է հայերեն բարբառներին:

Երրորդ աշխատությունը, որ նվիրված է բարբառներին, դա Գևորգ  
Ախվերդյանի «Սայեաթ-Նովայ»-ն է, որով սկսվում է հայ բարբառագի-  
տությունը:

Այդ աշխատությունը իսկապես առաջին լուրջ գիտական ուսումնա-  
սիրությունն է հայ բարբառագիտության մեջ: Գրքի բովանդակությունը  
Սայեթ-Նովայի բանաստեղծություններն են, որոնց իրրև նախարան Ախ-  
վերդյանը տվել է Թբիլիսիի բարբառի համառոտ նկարագրությունը  
(1—41 էջ): Նկարագրությունը վերաբերում է գլխավորապես ձևաբանու-  
թյանը, Քանի որ ինքը Ախվերդյանը Թբիլիսեցի էր, լավ գիտեր իր մայրենի  
լեզուն, ուստի նրա տեղեկությունները Թբիլիսիի բարբառի մասին անսխալ  
են և վերաբերում են այն շրջանին, երբ ինքն էր ապրում: Ուսումնասի-  
րությունից երևում է, որ Թբիլիսիի բարբառը արգեն ենթարկվում է  
երևանի բարբառի խիստ ազդեցությանը, որովհետև Ախվերդյանը Թբիլիսիի  
բարբառի ձևերի կողքին հիշատակում է նաև այնպիսի ձևեր, որոնք երե-  
վանինն են: Այնուհանդերձ նրա աշխատությունը իր արժեքը չի կորցնում:

Հայ բարբառագիտության խնդիրներով զբաղվել է նաև Այտընյանը,  
Իր «Քննական քերականութիւն արգի հայերէն լեզուի» աշխատու-  
թյան «Նախաշաւիղում» Այտընյանը բավական ընդարձակ կերպով խոսում  
է հայ բարբառների մասին և տալիս է նրանց առաջին գասակարգումը:  
Այտընյանի տված տեղեկություններից երևում է, որ նա մեր մի շարք  
հիմնական բարբառներին ծանոթ է, գիտե յուրաքանչյուրի առանձնահատ-  
կությունը որոշել, այդ պատճառով էլ փորձում է գասակարգումը կատարել:  
Բարբառագիտության հաջորդ աշխատողը Բ. Պատկանյանն է, որ  
նախ՝ հրատարակել է իր ուսումնասիրությունը Ազուլիսի բարբառի մասին  
գերմաներեն լեզվով (1866 թ.), ապա՝ ութը հայ բարբառների նկարագիրը

ամոզ իր „Исследование о диалектах армянского языка“ աշխատությունը, որը հիմնված է մի շարք գրավոր աշխատությունների և իր անձնական տեղեկությունների վրա: 1875 թվին նույն հեղինակը հրատարակեց „Материалы для изучения армянских наречий“ երկու պրակ աշխատությունը, որոնցից մեկը Նոր Նախիջևանի բարբառի տեքստեր էր ամփոփում, մյուսը՝ Մշո բարբառի: 1867 թվին հայագետ Պետերմանը հրատարակել է Թբիլիսիի բարբառի քննությունը:

1883 թվին Ս. Սարգսյանցը հրատարակեց Ազուխի բարբառի մանրամասն ուսումնասիրությունը, որը մինչև հիմա էլ իր գիտական արժեքը պահպանում է և օգտավետ է բարբառագիտական ուսումնասիրությունների համար:

1886 թվին լեհացի հայագետ Հանուշը ուսումնասիրեց լեհահայոց բարբառը և հրատարակեց իր ուսումնասիրությունը առաջին աշխատությունում՝ „Sur la langue des Armeniens polonais, 1. Mots recueillis à Kutli, Crocovie“ և ապա „Beitrag zur armenischen Dialectologie“ գործը:

Այս աշխատությունները լավագույն վիճակում են լեհահայոց բարբառի մասին, բայց, ցավոք սրտի, ուսումնասիրությունը կիսատ է թողնված:

1887 թվին հայագետ Տամանը հրատարակեց իր ուսումնասիրությունը Ախալցխայի բարբառի մասին, իսկ 1890 թվին՝ Թբիլիսիի բարբառի մասին: Այդ երկու աշխատությունները հնգերկուսական լեզվաբանության շկոլայի սկզբունքներով են կատարված:

Հայ բարբառագիտության մեջ մի շարք աշխատանքներ ունի Մելիք Ս. Կավիթ Բեկ հեղինակը: 1896 թվին նա լույս է բնծայել Մարաշի բարբառի համառոտ քննությունը: 1900-ական թվերին Արարկիի բարբառի քննությունը:

1897 և 1901 թվերին լույս է բնծայվել Լ. Մսերյանցի Մշո բարբառի քննությունը:

1899 թվին հրատարակված է Գաղանձեանի «Եւզսիիայ հայոց գաւառաբարբառը» փոքրիկ աշխատությունը:

1898 թվից հայ բարբառագիտության տարերեզ մասով իր աշխատություններով Հ. Աճառյանը, Նրա առաջին աշխատությունները լույս տեսան 1898—99 և 1901 թվերին և նվիրված էին Ասյանբեկի, Սուչավայի ու Դարարազի բարբառների քննությունը: Այդ աշխատությունները համեմատաբար փոքր ծավալ ունեն և դրանցից մեկը, Սուչավայի բարբառի քննությունը, մնացել էր կիսատ և լրացվեց 1953 թ.<sup>1</sup>:

Պրոֆ. Հ. Աճառյանի գրչին է պատկանում գերմաներենով գրված „Lautlehre des Van Dialekts“ աշխատությունը, որն ամփոփում է Վանի բարբառի մանրամասն հնչյունաբանությունը:

1909 թվին Հ. Աճառյանը հրատարակեց հայ բարբառագիտության մեջ դարապլուս կազմող իր „Classification des dialectes armeniens“<sup>2</sup> աշխատությունը ֆրանսերեն լեզվով:

<sup>1</sup> Հ. Աճառյան, Քննություն Առախյի բարբառի, 1953, Երևան:

<sup>2</sup> «Հայ բարբառների դասակարգումը»:

1911 թվին «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի հրատարակությունում (հատոր Ը.) լույս բնծայվեց Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատությունը:

Այս աշխատությունը նրա նախորդ աշխատության ընդարձակությունն է: Այս երկու աշխատությունը պրոֆ. Հ. Աճառյանը ստեղծեց հայ բարբառագիտությունը: Իրեն հատուկ բարեխղճությամբ և ջանասիրությամբ պրոֆ. Հ. Աճառյանը հավաքել է նմուշներ բոլոր բարբառներից, ստուգել է բանավոր կերպով այդ բարբառները լավ խոսողների միջոցով և գիտական տառադարձությամբ գեղեղել «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ: Այդ աշխատության մեջ պրոֆ. Հ. Աճառյանը տվել է 31 բարբառներից մեծ մասի համառոտ նկարագրությունը, երբեմն այնպիսի համալրումներ, որ ընթերցողն այդ փոքրիկ տեղեկություններով մի ամբողջական դադափար է կազմում նկարագրած բարբառների մասին:

Հայ բարբառագիտության հետազոյի ուսումնասիրությունը, բնական է, մի շարք փոփոխություններ կմտցնի պրոֆ. Հ. Աճառյանի ուսումնասիրությունների մեջ, այդ անում էր նաև ինքը Աճառյանը, բայց աշխատանքն իր արժեքը երբեք չի կորցնի:

Նույն հեղինակը իր կյանքի սովետական շրջանում հրատարակել է մի շարք մանոգրաֆիկ աշխատություններ առանձին բարբառների մասին, Կրանք են.

1. Քննություն Նոր Նախիջևանի բարբառի, Երևան, 1925 թ.
2. Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926 թ.
3. Քննություն Ազուխի բարբառի, Երևան 1935 թ.
4. Քննություն Պոլսի բարբառի, Երևան 1941 թ.
5. Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1939 թ.
6. Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947 թ.
7. Քննություն Առախյի բարբառի, Երևան, 1953 թ.:

Իր բարբառագիտական աշխատանքներով պրոֆ. Հ. Աճառյանը ստեղծեց իր առանձին շկոլան, Հեռեկյով պրոֆ. Հ. Աճառյանի մեթոդին՝ Մեղրու բարբառի քննությունը կատարեց պրոֆ. Էյ. Ազոյանը (Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր XIX):

Ն. Մառը հրատարակել է «Материалы по хемшинскому наречию армянского языка» մի փոքրիկ նոգված:

1922 թվին «Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի» ժողովածուի մեջ Գ. Տ. Պողոսյանը հրատարակեց Արեշ-Հավարիքի բարբառի համառոտ ուսումնասիրությունը: Այդ աշխատությունը հետաքրքրական նորություններ տվեց հայ բարբառագիտությանը: 1912 թվին հրատարակվել է Մաքսուգյանցի «Ակնա հայ բարբառը» ֆրանսերեն լեզվով:

1939 թվին լույս տեսավ նաև իմ աշխատանքը «Հայ բարբառների մի նոր ճյուղ» վերնագրով, Պետական համալսարանի «Գիտական աշխատությունների» հատոր 11-ում (նկարագրված են հինգ նորահայտ բարբառներ և մեկ, արդեն հայտնի, բարբառի նկարագրությունն ընդարձակված է):

1941 թվին լույս տեսավ իմ «Համառոտութուն հայ բարբառագիտության» աշխատությունը նույն Համալսարանի հրատարակությամբ:

1952 թվին ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսավ Ֆիլ. գիտ. թեկնածու Հ. Մկրտչյանի «Կարնս բարբառը» աշխատությունը:

Ինչպես տեսանք այդ համառոտ շարադրանքից, հայ բարբառագիտության շուրջը կան բավական աշխատություններ, սակայն հայ բարբառագիտության բնագավառում աշխատանքը դեռ հեռու է վերջացած լինելուց: Անհրաժեշտ է, որ լեզվաբանները, հայագետները մտնողաֆիկ աշխատանքներ գրեն հայերեն բոլոր բարբառների մասին, ինչպես այդ անում էր պրոֆ. Հ. Աճառյանը, անհրաժեշտ է, որ բոլոր բարբառներով գիտական ճշտությամբ հրատարակվեն բնագրածակ տեքստեր, որպեսզի այդ բոլորից հետո հնարավոր լինի ստալինյան լեզվաբանական ուսմունքի հիման վրա տեսական ընդհանուր ամփոփումներ կատարել հայ բարբառների մասին:

## 2. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐՐԱՌԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՓԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հայերեն բարբառներն ունեն այն բոլոր հնչյունները, որոնք գանրփում են գրական լեզվի մեջ: Դրանցից դուրս հայերեն բարբառներն ունեն բավական քանակությամբ տարբեր հնչյուններ, որոնք նշանակում ենք նույն հայերեն տառերով, ավելացնելով այս կամ այն պայմանական նշանը: Երկրաբարբառները նշանակում ենք կրկնակի կամ եռակի գրերով, այնպես որ նրանց հնչումը մտաալորապես համապատասխանի երկրաբարբառի:

Ըստ այսմ ընդունել ենք հետևյալ գրերն ու պայմանական նշանները:

ն̄—վերին բարձրացման կամ փափուկ «ա»:

ա̇—ստորին բարձրացման կամ կոշտ «ա»:

հ—յստացիայի ենթարկված «է», մտաալորապես «իէ» հնչմամբ:

է̇—սովորական մաքուր «է»:

ը—ստորին բարձրացման կամ կոշտ «ը»:

օ̇—վերին բարձրացման կամ փափուկ «օ»:

օ̄—վերին բարձրացման կամ փափուկ «ու»:

օ—հայերեն գրական լեզվի սովորական օ ձայնավորը:

ս—թեթև շրթնայնացած «օ»:

բ̄—երկրաբարբառային կոշտ «է»:

բ̄—կոշտ «ի», որ համապատասխան է սուսերեն Ի հնչյունին:

աւ—երկրաբարբառային հնչյուն իբրև «ա» և «ու» հնչյունների միացություն:

ու̄—երկրաբարբառային հնչյուն իբրև «ու» և «է» հնչյունների միացություն:

օ̄—երկրաբարբառային հնչյուն իբրև փափուկ «օ» և «է» հնչյունների միացություն:

ու̄—երկրաբարբառային հնչյուն իբրև «ու» և «ի» հնչյունների միացություն:

ու—երկրաբարբառային հնչյուն իբրև «օ» և «ու» հնչյունների միացություն:

բ', գ', ձ', ջ', դ'—իբրև շնչեղ ձայնեղ հնչյունների գրեր:

գ', կ', ը'—իբրև քմային կամ փափուկ «գ», «կ», «ք» հնչյունների գրեր:



հ'—իբրև «հ» և «յ» հնչյունների միացություն.

հ'—իբրև ձայնեղ «հ» հնչյունի նշան.

ո—իբրև պայթական «ղ».

լ'—իբրև փափուկ «լ».

ր'—իբրև հնչեղ «ր».

### Յ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՍԱԿԱՐԿՈՒՄԸ

Լեզվի ստալինյան ուսմունքի լույսի տակ բարբառների դասակարգումը գիտական հիմնավորում է տալիս այն սկզբունքին, որ հայերենի բարբառները ընդհանուր հայերենի ճյուղավորումներն են: Գրականության մեջ հայ բարբառների դասակարգման հարցը առաջացել է համարյա հայ բարբառագիտության առաջացման հետ միասին: Հայ բարբառագիտության սկիզբը պետք է համարել 1852 թիվը՝ Գ. Ախվերդյանի «Սայեթ-Նովայ»՝ աշխատության լույս ընծայումը՝ Մոսկվայում: Այս աշխատության մեջ առաջին անգամ համեմատաբար ընդարձակ ծավալով նկարագրված է մեկ հայ բարբառ՝ Թբիլիսիի բարբառը:

1866 թ. Ա. Այաթնյանը աշխարհաբար լեզվի իր հետազոտությունների մեջ որոշ անց ավելց նաև հայ բարբառներին, բայց քանի որ իր ժամանակ Թբիլիսիի բարբառից բացի ուրիշ որևէ բարբառ ուսումնասիրված չէր, ուստի բարբառների մասին գաղափար կազմելու համար անհրաժեշտություն զգաց դրանք խմբավորել ընդհանուր կարգով: Նա չկարողացավ բարբառների խմբերի ընդհանուր գծերը գտնել կամ այդ ընդհանուր գծերի հարցը գնել, ուստի բարբառները դասակարգեց ըստ անցի, այսինքն՝ աշխարհագրական սկզբունքով: Նրա դասակարգումը հետևյալն է.

«ա) միջ. գու. Հայաստան (Վան, Միջագետք և այլն.)

բ) Կասանդնուպոլիս—Փոքր Ասիա.

գ) Արևմտեան Լեհաստան—Սոսիալ.

դ) Արևելեան Հաշտարխան—Պարսկաստան, որ կձգուի Ռուսաստանէն մինչև Հնդկաստան»:

Հաջորդ դասակարգողը Բ. Պատկանյանն է, որն ասում է հետևյալը.

«Несколько выше мы говорили, что все разнообразные наречия и говоры армянского языка можно разделить главным образом на две группы: восточную и западную. Отличительным признаком первой служит местный падеж (locativus), на *ում, րմ, ամ*, во второй группе сходный с именительным падежом или образуемый посредством предлога *մէջ*, *վ*. Далее настоящее и прошедшее время изъявительного склонения в восточной группе сложны, и составляют из окончания местного падежа, приставленного к корню глагола, с присоединением существительного глагола, а в западной—посредством частичек *կու, կր, կի, կ'*, приставляемых к этим же временам гайкан-

<sup>1</sup> Սայեթ-Նովայ, Լուս զցած աշխատութեամբ Գևորգեայ Ախվերդյան, Մոսկվա, ի սպարանի Վրացիներա, Գոտիէ, 1852 թ.:

<sup>2</sup> Ա. Այաթնյան, Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Նախաշաւիղ՝ Էջ 166, Վիեննա, 1866 թ.:

ского языка, без посредства вспомогательного глагола. Эти частички *կու, կը, կի, կ',* в восточных диалектах образуют будущее время<sup>1</sup>

Ինչպես տեսնում ենք, Ք. Պատկանյանի գասակարգման սկզբունքը աշխարհագրական է (արևելյան, արևմտյան). Եթե նա չիշատակում է այդ բարբառների տարբերիչ գծերը, ապա այդ կատարում է իբրև բացատրություն աշխարհագրական գասակարգման: Աշխարհագրական գասակարգումից վերջնականապես հրամարվեց պրոֆ. Հ. Աճառյանը, որը 1909 թ. բարբառները գասակարգեց ըստ նրանց ձևաբանական հատկանիշի<sup>2</sup>, Պրոֆ. Հ. Աճառյանը իր վերջին աշխատությունից մեջ ևս<sup>3</sup> պաշտպանել է իր նախկին տեսակետը, որ մեր բարբառները բաժանվում են երեք ճյուղի՝ «Աւ», «Կը», և «էլ»:

«Աւ» ճյուղի մեջ գասավորում են այն բարբառները, որոնք իրենց ներկան կազմում են «ու» վերջավորություն ունեցող անկատար գերբառով գրանք են յոթ բարբառ՝ Երևանի, Թրիլիսի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի կամ Թավրիզի, Ջուղայի և Աղուլիսի:

«Կը» ճյուղի մեջ գասավորում է 24 բարբառ, որոնք իրենց ներկան կազմում են «կը» մասնիկով՝ Կարնո, Մշո, Սասնաբլուրի, Վանի, Տիգրանակերտի, Սարբերդի-Երզնկայի, Շապին-Գարահատրի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիայի, Կիլիկիայի, Արարիկի, Ակոս, Աերաստիայի, Եփրատիայի, Ամասիայի, Օրատի, Ջմյուռնիայի, Նիկոմիդիայի, Պոսի, Ռազոսթայի, Ղրիմի, Առախլի և Սյուրբիայի:

«էլ» ճյուղի մեջ գասավորում է 5 բարբառ՝ Մարաղայի, Արզվիների, Հավարիքի, Սոյի և Մեղրու:

Եթե մասնիկից ծանոթանանք բարբառների ձևաբանական հատկանիշներին, անհրաժեշտություն կզգայ՞վի վերանայել ճյուղերի քանակը և մի շարք բարբառների գասավորությունն ըստ ճյուղերի:

Ինչպես տեսնենք, պրոֆ. Հ. Աճառյանն «էլ» ճյուղի մեջ գեանցել է Մարաղայի, Արզվիների, Հավարիքի, Սոյի և Մեղրու բարբառները, Մակայն լեզվական փաստերը ցույց են տալիս, որ գրանք պատկանում են երկու տարբեր ճյուղերի: Վերցնենք Հ. Աճառյանի բերած օրինակները.

Մեղրի	Մարաղա	Արզվից	Հավարիք	Սոյ
սիրիս իմ	ուզել իմ	խօսելիս իմ	զրելիս ըմ	թալէս եմ
սիրիս իս	ուզել իս	խօսելիս իս	զրէլըմ ըս	թալէս ես
սիրիս ի	ուզել ի	խօսելիս է	զրէլըմ ի	թալել ի

Ինչպես տեսնում ենք, այդ բարբառների ներկայի կազմությունները տարբեր են միմյանցից: Նախքան համեմատելը, մենք մացնենք մի ուղղում. Սոյի բարբառ տասը պետք է հասկանալ Մալմաստ-Ուրմիայի բարբառ, որտեղ ասվում է՝ աւես եմ, ըսնէս եմ, քալես եմ, Բուն Սոյում ասվում է՝ աւել եմ, ըսնել եմ, քալել եմ:

<sup>1</sup> К. Патканов, Исследование о диалектах армянского языка, 1869, стр. 17.  
<sup>2</sup> Classification des dialectes arméniens par H. Adjarian, Paris, 1909.  
<sup>3</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի գասավորում, հրատ. II, 1951:

Մեղրու բարբառում ներկան կազմում է «ս» վերջավորություն ունեցող մասնիկով և այդ բարբառում չկա սրեկ ձև, սրի մեջ «լ»-ն լինի ոչ միայն բառավերջում, այլ նաև գերբայի միջում, ինչպես Արզվիների բարբառում է:

Պարզ է, որ այդ բարբառը չի կարելի դասել Մարաղայի հետ միևնույն ճյուղի մեջ, որովհետև Մարաղայի անկատար գերբայի վերջավորությունը «լ» է:

Մեղրուն նման են Կարնեանի, Հաղրուրի, Շաղախի-Քեյվանի բարբառները, որե՞նք գրանք սրեկ ձևով «էլ» ճյուղի հետ կապել ննարավոր չէ. «էլ» ճյուղի հետ այդ բարբառները կապվում են միայն մի ենթադրությունով, որ գրանք առաջացած են «ալիս—էլիս» ձևերի սղոմից: Այդ «ալիս—էլիս» ձևերը առկա են Արզվիների բարբառում և Հավարիքի բարբառի առաջին գեմքում (մնալիս, գրբելիս), այլև Մալմաստ-Ուրմիայի բարբառի ժխտական ձևերի մեջ, բայց այդ ձևերի մեջ սղոված է «ս»-ն (չեմ կ'իրելի, չեմ էթալի): Որովհետև Արզվիների բարբառի գրական ձևերի (գրբելիս, կարթիլիս) մեջ «ս»-ն առկա է, իսկ ժխտական ձևերի մեջ «ս»-ն բնկնում է (չիմ գրբելի, չիմ կարթիլի), ուստի հետագարձ ենթադրությունով Մալմաստ-Ուրմիայի «կ'իրելի» ձևը պետք է որ առաջացած լինի «կիրելիս» ձևից:

Գրանից էլ եզրակացվում է, որ Մարաղայի և Սոյի բարբառի «կիրելի իմ» ձևը առաջացած պետք է լինի «կիրելիս իմ» ձևից. եզրակացնում են, թե անկատար գերբայում «լ» վերջավորություն ունեցող բարբառները պատկանում են «էլ» ճյուղին, որե՞նք «ալիս—էլիս» վերջավորություն ունեցող բարբառներն էլ պետք է որ պատկանեն «էլ» ճյուղին: Մի ուրիշ խումբ ենթադրողներ գանում են, թե քանի որ ըստ պրոֆ. Հ. Աճառյանի այդ կլիս, ալիս ձևերից առաջացել են թե «Ս» ճյուղը և թե «Ա» ճյուղը, ուստի հարկ չկա բաժանելու գրանք, և պետք է կոչել «Աիս» ճյուղ:<sup>2</sup>

Պրոֆ. Հ. Աճառյանն ասում է. «Մինչդեռ Մարաղայի բարբառը ներկայի բունը կազմելու համար առնում է անորոշի բունը (այսինքն կ'իրիլ իմ, կ'իրիլ իս, կ'իրիլի—Ա. Ղարիբջան), Արզվիների բարբառը այդ անորոշի վրա ավելացնում է նաև «իս» մասնիկը և խոնարհում է էական բայի հետ, ինչպես խօսելիս իմ, փնարելիս իմ»):<sup>3</sup>

Եվ իրոք, սկզբնական Հ. Աճառյանի սկզբունքով յուրաքանչյուր բարբառի ճյուղը որոշվում է նրա ներկայի կազմությամբ: Այդ սկզբունքի մեջ չի ասվում, թե ճյուղը որոշելիս պետք է ծագումն էլ նկատի առնել, որովհետև այդ դեպքում բարբառների գասակարգումն ըստ ճյուղերի անմիակիցներ, քանի որ ըստ ծագման բոլոր բարբառները ընդհանուր նայերենից

<sup>1</sup> Տես՝ Հ. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926 թ., էջ 268—270:

<sup>2</sup> Գրանց իբրև պատասխան կարելի է ասել, թե ստալինյան ուսմունքի համաձայն բարբառները լեզվի ճյուղավորումների հետևանք են, իսկ այստեղ ունենք այդ ճուղավորումները, ուստի և ունենք բարբառների երկու ճյուղ: Ինչպե՞ս, ճյուղավորման սկզբունքին հակառակ մարդիկ չեն ընդունի մեր առաջարկը:

<sup>3</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի գասավորում, հատ. II, էջ 357—358, Երևան, 1951 թ.: Հայ բարբառագիտություն—4

են: Պարզ է, որ ճյուղերի բաժանման ժամանակ պետք է նկատի առնել նրանց այսօրվա կազմությունն: Այդ գեղարվեստի շ. Աճառյանի առաջարկած «էլ» ճյուղի մեջ մենք կունենանք երկու ճյուղ՝ «Ա», որին պատկանում են Մարադան և Սոյք, և «Ս», որին պատկանում են Մեղրու, Կարճահանի, Հաղբութի, Շաղախի, Արզվիների և Սարմատ-Ուրմիայի բարբառները (գրանց ավելանում են վերջերս հայանաբերած Ղարաղաղի և Դզմարի բարբառները):

Բարբառները ճյուղերի բաժանելու հարցը համեմատաբար հեշտ հարց է, սրովհետև այդ հարցը լուծելու համար պետք է շ. Աճառյանը առաջարկել է նկատի առնել սահմանական ներկայի կազմությունը, որ գիտական և խելացի սկզբունք է: Իհարկե այս սկզբունքը ևս սրտը պայմանականություն ունի և բացարձակ չէ, բայց մինչև այժմ բոլոր առաջարկներից ամենաաճիշտն ու գիտականն է:

Պետք է շ. Աճառյանի ձևաբանական սկզբունքով բարբառների դասակարգումը ըստ ճյուղերի կատարելը արդարացի է իրեն գիտահետազոտական աշխատանքների պրակտիկայում: Այդ սկզբունքի կիրառությունը զարգացնում է հայ բարբառագիտությունը, առաջ է մղում այն, և դա նենց գրաճիշտ լինելու ամենալավ ապացույցն է: Այդ սկզբունքի կիրառումը հայանագործվում են հայերենի նոր բարբառներ և նոր ու նոր ճյուղեր: Առաջի հայերեն բարբառները երեք ճյուղի մեջ («Ում», «Կր», «Էլ») դասավորելը չի բավարարում փաստերին և գրա հետևանքով մի շարք բարբառներ դուրս են մնում: Շ. Աճառյանի ձևաբանական սկզբունքով դասակարգելով՝ սրտակիրորեն դատվում են միմյանցից հայերենի բարբառային առնվազն յոթ ճյուղեր՝ «Ում», «Ս», «Է», «Կա», «Կր», «Հա» և գրաբարակերպ: Այդ գեղարվեստի են առնվում ոչ թե նշյունական, այլ ձևաբանական տարբերակները: Այդ նշանակում է, թե «Ում» ճյուղին պատկանող բարբառների մեջ անկատար գերբայի կազմության ձևաբանական տարբերությունը չպետք է լինի, բայց նշյունական տարբերություններ կարող են լինել:

Այսպես, երևանի բարբառում անկատար գերբայն ունի «գրբում» ձևը, Ղարաբաղի բարբառում՝ «կիրբում» ձևը, Ազուլիսի բարբառում՝ «գիրբում» ձևը, Մեղրու շրջանի Ազարակ գյուղի խոսվածքում՝ «կիրբում» ձևը, Կապանի շրջանի Սրաշեն գյուղի խոսվածքում՝ «կիրբում» ձևը, միայն թերթիսի բարբառում՝ «գրբում» ձևը և այլն: Այդ բոլորը, սակայն, «գրբում» լրիվ ձևի նշյունափոխված տարբերակներն են, որոնք առաջացել են յուրաքանչյուր բարբառի կամ խոսվածքի նշյունական օրենքներից: Այս է, օրինակ, Նոր Զուղայի անկատար գերբայի երկրորդական ձևը, որը կազմվում է «ման» վերջավորությունից՝ «ապրման», «մեռման», «նեղման» և այլն: Այստեղ մենք ունենք սկզբունքային տարբերություն, Նոր Զուղայի բարբառի այս ձևը կազմված է «ումն» ամանց ունեցող բառի արական հոլովից՝ ապրումն — ապրման, մեռումն — մեռման, մրկումն — մրկման, նեղումն — նեղման և այլն: Ընդհանուր է, այստեղ ևս գերբայը ներդոյականի իմաստով է առնված, բայց ձևաբանորեն տարբեր երևույթ է, քան սովորական անկատար գերբայը (ապրում, մեռում, մրկում, նեղում և այլն):

ձևաբանական այս սկզբունքային երևույթը կթելագրեր Նոր Զուղայի բարբառը հանել «Ում» ճյուղից և դիտել իբրև առանձին ճյուղ: Այդ չի արվում, սրովհետև Նոր Զուղայի բարբառի բայերի մեծամասնությունը խոնարհվում է «ում» վերջավորությունն ունեցող անկատար գերբայով (սիրում, խաբնում, խաղում, պրբում, կարթում և այլն):

«Ում» և «Ս» ճյուղերի հիմնական տարբերությունն այն է, որ «Ում» ճյուղն օգտագործում է իբրև անկատար գերբայ ժամանակակից ընդհանուր լիզվի անկատար գերբայի գլխավոր ձևը «ում» վերջավորությամբ (գրում, կարդում, մնում, լսում և այլն), իսկ «Ս» ճյուղն օգտագործում է անկատար գերբայի նույն նշանակությունն ունեցող գուգանև և երկրորդական ձևը (գրելիս, կարդալիս, մնալիս, լսելիս և այլն): Թեև նշանակությամբ այս գերբայները նույնն են,՝ ցույց են տալիս գործողությունն քննադատի մեջ, բայց ծագումով տարբեր են, ըստ սրում «գրում» ձևը «Ում» ճյուղի ներկա և անցյալի անկատար ժամանակները կազմող ձև է, և այդ ճյուղի համար «գրելիս» ձևը չունի այդպիսի նշանակություն, բայց երեք բայերից՝ լալիս, գալիս, տալիս,՝ միջդեռ «գրելիս» ձևը «Ս» ճյուղի համար ունի նույն նշանակությունը, ինչ որ «գրում» ձևը «Ում» ճյուղի համար: Այդ պատճառով գրանք որոշում են ճյուղերի հիմնական տարբերությունը: Ինչ վերաբերում է «Ս» ճյուղի տարբեր բարբառներին, ապա այստեղ մենք պարզ ունենք տարբեր երևույթի հետ: «Ս» ճյուղի մեջ մասնում են Ղարաղաղի, Դզմարի, Արզվիների, Մեղրու, Կարճահանի, Հաղբութի, Քեյվան-Շաղախի և Ուրմիայի բարբառները: «Ս» ճյուղի Ղարաղաղի և Արզվիների բարբառներում անկատար գերբայն ունի գրելիս, կարդալիս ձևը, Դզմարի բարբառում՝ գիրբիս, կարդալիս ձևը, Քեյվան-Շաղախի բարբառում՝

կրբիս, կարբալիս ձևը, Կարճահանի բարբառում՝ գիրբիս, կրբալիս ձևը, Մեղրու բարբառում՝ գիրբիս, կրբիս ձևը, Հաղբութի բարբառում, կրբիս, կրբիս ձևը, Ուրմիայի բարբառում՝ կրբիս, կրբալիս ձևը:

Ինչպես տեսնում ենք, այստեղ սոսի նշյունափոխություն չէ, որ կատարվում է: Այստեղ անգի է ունենում ամբողջ վանկի անկում, և բոլոր բարբառներում անկատարի գաղափարի արտահայտելը մնում է միայն «ս»-ն: Այդ պատճառով էլ ամբողջ ճյուղը պետք է կոչել այդ հատկանիշով, սրով արտահայտվում է սկզբունքային տարբերակումը՝ նկատի ունենալով բոլոր բարբառները:

Որոշ բարբառներում, ինչպես օրինակ՝ Ուրմիայի բարբառում «ս»-ից առաջ պահպանվում են նույնիսկ խոնարհիչները (կիրբես, կրբես), իսկ բարբառների մեծ մասում թեև դրական և թեև միտական խոնարհման ժամանակ «ի» վանկը բացակայում է (Մեղրու բարբառ՝ գիրբիս իմ, գիրբիս չիմ, Կարճահանի բարբառ՝ մնալ ըմ, մնալ չըմ, Հաղբութի բարբառ՝ մնա

Վ գրանց նույնություն լավագույն ապացույցն են երևանի ներքաբարբառներում գործածվող լալում, գալում, տալում, փոխանակ բարբառի լալիս, գալիս, տալիս ձևեր: Այդ երկու ձևերի նշանակությունների նույնությունն է հաստատում Արեշ-Հավարի բարբառը, որն առաջին դեմքը կազմում է «Ս» ճյուղի նման (գիրբիս ըմ), իսկ մյուս դեմքերն «Ում» ճյուղի նման (գիրբիս ըմ, գիրբիս չի և այլն): սրով և դասում է միջճյուղային բարբառ:

բմ, մնաս չբմ, կ'ըրէս բմ, կ'ըրէս չբմ): Պարզ է, որ այդ բարբառների մեջ միակ ընդհանուր հատկանիշը մնում է «ա»-ն, որով և որոշվում է սույն բարբառների ճյուղային պատկանելիությունը:

Բարբառների «Լ» ճյուղը անկատար զերբայը կազմում է «ալ» (կարթալ եմ), «էլ» (կըրէլ եմ) և «իլ» (կ'իրիլ իմ) վերջավորություններից, որոնց մեջ «ա», «է», «ի» ձայնավորները ոչ թե հնչյունափոխությունների են, ինչպես «Ում» ճյուղի զերբայում (բմ, իմ, ում), այլ խոնարհման նշաններ են, խոնարհիչներ են, այսինքն՝ ձևույթներ են: Պարզ է, որ այստեղ ճյուղային պատկանելիությունը որոշողը պետք է լինի ընդհանուր նշանը, որ է «լ»-ն: «Լ» ճյուղին պատկանում են Մարաղայի և Սոյի բարբառները:

«Լ» ճյուղի բարբառների միտական խոնարհման մասնակ միայն Մարաղայի բարբառը զերբայի վրա ավելացնում է «ի» (չիմ կ'իրիլի, չիմ էլիսի), որ Ուրմիայի և Արզվիների բարբառին նման է, ուստի այդ ճյուղինը չէ, այլ «Ս» ճյուղից է ստնված: Սոյի բարբառը և ոչ մի ակզ այդ չի անում, այլ կարրալ, կըրէլ ձևերը պահպանում է անփոփոխ (չեմ կարթալ, չեմ կըրէլ): Ուրիշ սրեկ հատկանիշով «Լ» ճյուղի բարբառները «Ս» ճյուղին նման չեն, ուստի նրանց ճյուղավորումը կատարյալ է: «Լ» ճյուղի բարբառները շատ ավելի նման են «Կը» ճյուղի բարբառներին:

«Ում», «Ս» և «Լ» ճյուղերը միմյանցից տարբեր են ոչ միայն անկատար զերբայի կազմությամբ, այլև ուրիշ շատ հատկանիշներով (ներգոյական հարվով, բացասականի կազմության ձևով, բայի բաղադրյալ անցյալ ձևերի կազմությամբ, բաղաձայնական սիտակեմով, անցյալ կատարյալի կազմությամբ, զերանունների կազմության հիմունքով և այլն):

Ուստի անկատար զերբայի միջոցով կատարվող գառակարգումը խրմբավորում է այնպիսի բարբառներ, որոնք բաց ճյուղի նման լինելով միմյանց, տարբերվում են այլ ճյուղերի բարբառներից բազմաթիվ այլ կարևոր քերականական և հնչյունական հատկություններով: Իսկ դա հենց ապացուցում է, որ գառակարգման սկզբունքը ճիշտ է:

Այլ վիճակ գոյություն ունի «Կը» ճյուղի բարբառների մեջ: Այստեղ առաջին հայացքից թվում է, թե բոլոր բարբառները միմյանց նման են և մի ճյուղի են պատկանում: Բայց այդ ճիշտ չէ: Դրա պատճառն այն է, որ այդ բարբառները ավելի քիչ են ուսումնասիրված, մյուսն էլ այն է, որ այդտեղ դեռ շատ բարբառներ երևան չեն բերված և չեն ճանաչված: Այսպես, օրինակ, մինչև Հ. Աճառյանի «Հայաց լեզվի պատմություն» Ուստորի լույս տեսնելը (1951 թ.) մեզ հայտնի չէր ոչ մի բարբառ, որն իր ներկան կազմեր գրաբարի նման և միայն այդ գիրքը վկայում է, որ կա խոտրջուրի առանձին բարբառ, որն իր ներկան կազմում է գրաբարի նման: Պարզ է, որ խոտրջուրի բարբառի երևույթն ապացույց է, թե որքան քիչ գիտենք մեր բարբառները, Բայց դա էլ հենց ապացույց է, որ բարբառների ճյուղերի քանակը չի կարող քարացած մնալ, որ նա պիտի փոխվի նոր ու նոր նյութերի ու բարբառների հայտնագործումով, որ հայ բարբառագիտությունը պետք է զարգանա՝ կանգնելով ստալինյան լեզվաբանության սկզբի վրա: Բոլոր փորձերը կատարելագործելու են թարակելու:

բարբառագիտությունը դատարարված են մերկացման ու մոտացման, որովհետև գրանք հակասում են ստեղծագործական մարքսիզմին, հակասում են ստալինյան լեզվաբանության սկզբունքներին, որոնցից մեկ հիմնականը ուսուցանում է, թե բարբառներն ընդհանուր լեզվի ճյուղավորումներն են, ուրեմն՝ չեն կարող սրեկ կանխորոշված թվով սահմանափակվել: Ուստի բարբառների այնքան ճյուղ կա, որքան փաստական ճյուղավորում:

«Կը» ճյուղի բարբառների հարցը քննելիս՝ պարտավոր ենք նախ և առաջ գննել փաստերը:

«Կը» ճյուղի մեջ մինչև հիմա գետեղված բարբառները ներկան կազմում են հետևյալ տարբերակներով.

ա) նախագաս «կը» մասնիկով, որ դրվում է գրաբարի ներկա և անցյալի անկատար ձևերի վրա. այդպես են հետևյալ բարբառները՝ Վան, Մուշ, Դիազին, Ողմի, Մոկս:

բ) հետագաս «կը» մասնիկով. Կարնո բարբառը:

գ) նախագաս «գը» մասնիկով. այդպես են հետևյալ բարբառները՝ Տիգրանակերտ, Սարբերդ-Երզնկա, Շապին-Փարահիսար, Մալաթիա, Հաճըն, Եվգոկիա, Օրտու, Սերաստիա, Նիկոմիդիա, Պոլիս, Ռոդոսթո, Նոր-Նախիջևան:

դ) հետագաս «գու» մասնիկով. Տրապիզոն, Համշեն:

ե) նախագաս «գու» մասնիկով. Սվեդիա, Ալն:

զ) նախագաս «գո» (գու՝ երկրաբանային արտասանությամբ) մասնիկով. Զեյթունի բարբառը:

է) նախագաս «գօ» մասնիկով. միայն Մարաշի բարբառը:

ը) նախագաս «հա» կամ «հայ» մասնիկով. միայն Քեսարի բարբառը:

թ) հետագաս «ը» մասնիկով, որ «ա» ձևով եղած պիտի լինի. միայն Արարկիբի բարբառը:

ժ) առանց սրեկ մասնիկի, գրաբարի նման, միայն Սոտրջուրի բարբառը:

ժա) հետագաս «կա» մասնիկով. միայն Ամասիայի բարբառը:

ժբ) նախագաս «գն» մասնիկով. միայն Բեյլյանի բարբառը:

ժգ) նախագաս «գի» մասնիկով. միայն Առախալի բարբառը:

Այսպիսով, ներկայի և անցյալի անկատարի մասնիկներն են՝ «կը», «գը», «գու», «գն», «գի», «գո», «գօ», «կա», «գա», «գն», «հա» և «ը»: Միանգամայն պարզ է, որ «հա» և «ը» մասնիկները ոչ մի կապ չունեն «կը» կամ «գը» ունեցող մասնիկների հետ, ուստի գրանք կազմում են առանձին ճյուղ. Արզեն ասված է, որ գրանք «անա» բառի կրճատ ձևն են: Երկու բարբառ՝ Քեսարի և Արարկիբի, որ իրենց սկզբունքային ձևերը կազմում են այդ մասնիկներով, պատկանում են միևնույն «Ահա» կամ «Հա» ճյուղին:

Մնացած բարբառներից «գու» ունեցողները նույնն են «կը» կամ «գը» ունեցողների հետ, որովհետև հայերենի «ու»-ն շատ հեշտությամբ վերածվում է «ը» հնչյունի (լուս—լուել, մուլ—մթնել), նշանակում է, «գու» ձևը այդ բոլորի լրիվ ձևն է: Իսկ «գու» ձևը «գոյ» ձևի աշխարհաբարն է: Պարզ է, որ «Կը» ճյուղի մեջ համարված այդ բոլոր բարբառներն օգտագործել են «գոյ» բառն իբրև մասնիկ:

«Գո» և «գո» մասնիկները հեշտությամբ կարելի է կապել «գու» ձևի հետ, սրովհետև «ու» հնչյունը առանց դժվարությամբ վերածվում է «օ» հնչյունի՝ (տուն > տօն, գօն, շուն > շօն և այլն), եթե մի հանգամանք նկատի չունենալինք, որ հետևյալն է.

Զեյթունի բարբառը, որն ունի «գո», միայն բաց վանկում շեշտյալ «ա» ձայնավորն է վերածում «ո»-ի. օրինակ՝ շօ գո—ինչ կա: Մինչդեռ «ու» ձայնավորն այդպիսի փոփոխություն չի ենթարկում: Միաժամանակ և բնականոր լեզվի խուն արտասանում է ձայնեղ, հետևաբար «գո» ձևը կարող է ստացվել միայն «կա» ձևից: Ուրեմն Զեյթունի բարբառը ոչ թե «Կը—գու—գոյ» ճյուղին է պատկանում, այլ «Կա» ճյուղին:

Մարաշի բարբառը, որը գործածում է «գո» մասնիկը, «ու» ձայնավորը բաց վանկում շեշտի տակ չի վերածում «օ» ձայնավորի, այլ միայն շեշտյալ «ա» ձայնավորն է վերածում «օ» ձայնավորի, այն էլ բառավերջի բաց վանկում: Օրինակ՝ Գօ հասգրնօ քի աւուր քօլու փարօ զօ՛ (Հասկանում է, որ սրա մաս փող կա): Որովհետև Մարաշի բարբառում խուլերը գտնում են ձայնեղ, ուստի «գո» ձևը ստացված պիտի լինի «կա» բառից: Պարզ է, որ Մարաշի բարբառն էլ պատկանում է «Կա» ճյուղին:

Ամասիայի բարբառը ներկան կազմում է «կա» բառով, և չկա ապացույց, որ «ու» ձայնավորն է վերածում «ա»-ի, ուստի այդ բարբառն էլ պատկանում է «Կա» ճյուղին:

Սվեդիայի բարբառն էլ «ա»-ն վերածում է «ու» ձայնավորի, ուստի «կա» եղանակիչը դարձրել է «գու»: Պայմանական համար գործածում է սովորական «կը» եղանակիչը, որ տարբեր բառից է:

Այսպիսով, «Կը» (գոյ) ճյուղին պատկանում են Կարնո, Մշո, Տիգրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Օրտուի, Նիկոմիդիայի, Նվզդկիայի, Շապին-Գարանիսարի, Մալաթիայի, Հանրնի, Զմյուռնիայի, Պոլսի, Ռոզդուքոյի, Նոր-Նախիջևանի, Վանի, Գիսարի, Ողմի, Մոկսի, Տրապիզոնի, Համշենի, Այուրիայի, Ակնա, Առտիալի և Սերասիայի բարբառները—24 բարբառ:

«Կա» ճյուղին պատկանում են Ամասիայի, Զեյթունի, Բեյլանի, Սվեդիայի և Մարաշի բարբառները—5 բարբառ:

«Հա» ճյուղին պատկանում են Քեաբի և Արաբկիրի բարբառները—2 բարբառ:

Գրաբարատիկ ճյուղին պատկանում է Խոտրջուրի բարբառը:

Դրանցից ամենաուժեղ ճյուղը «Կը» ճյուղն է, Այդ «Կը» ճյուղին ենթարկվել են մյուսները և, բացի ներկայի ձևերի կազմությունից, մյուս բոլոր ճյուղային հատկանիշները համարյա կորցրել են: Միայն «Հա» ճյուղը, ներկայի կազմությունից բացի, երևան է բերում մի ուժեղ հատկանիշ. դա անցյալի ձևերի կազմությունն է. «Ս» և «Լ» ճյուղերի նման «Հա» ճյուղն էլ կորցրել է օժանդակ բայի անցյալի ձևերը: Այդ ճյուղն իր անցյալի ձևերը կազմում է «Լ» ճյուղի նման «Էր» բառ-մասնիկով, բայց մի կարևոր տարբերությունով. «Լ» ճյուղն «Էր» բառ-մասնիկն ավելացնում է ներկայի ձևերի վրա, այսինքն՝ գերբայ+օժանդակ բայի ներկայի ձև+

1 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 209, 1911 թ.:

«Էր» բառ-մասնիկը (կիրիլի էմ էր—գրում էի), մինչդեռ «Հա» ճյուղն այդ բառ-մասնիկն ավելացնում է դերբային կամ բայահիմքին, ապա դնում օժանդակ բայի ձևը (կրու՛ն էր իմ—գրած էի, հայ կըրէր իմ—գրում էի): «Կա» ճյուղին պատկանող Սվեդիայի բարբառն իր բոլոր հատկություններով պատկանում է «Հա» ճյուղին, միայն ներկան կազմելու համար օգտագործում է ոչ թե «հա», այլ «գու», «կա» մասնիկը, որն ապացույց է, թե «Կա» ճյուղն ունեցել է ազդեցություն «Հա» ճյուղի վրա: Ուստի Սվեդիայի բարբառը «Հա» ճյուղի բարբառ է եղել և «Կա» ճյուղի ազդեցությամբ վերածվել է այդ ճյուղի բարբառի:

Բայց նկատվում է, որ կան դեպքեր, երբ մի բարբառում համասեղված են տարբեր ճյուղերի բարբառների սկզբունքային հատկանիշները: Այդպիսի բարբառները կամ հանդիսանում են անցման օղակներ ճյուղերի միջև, այսինքն հետևանք են ճյուղավորման պրոցեսի, դիֆերենցիալ պրոցեսի, կամ էլ հետևանք են նույն ճյուղավորման ինտեգրալ պրոցեսի, այսինքն՝ դրանք ճյուղավորման պրոցեսում բնականոր լեզվից վերցրել են սկզբունքային հատկանիշի երկու ձև և պահպանել են մինչև հիմա, և կամ տարբեր բարբառների համաձուլման հետևանքով պահպանել են իրենց մեջ տարբեր ճյուղերի սկզբունքային հատկանիշները միաժամանակ: Այդպիսին են Արեշ-Հավարիքի և Թրբիսիի բարբառները:

Այդպիսիներձ բարբառների ճյուղային պատկանելիությունը որոշելու լավագույն սկզբունքն է, և մնում է, Հ. Աճառյանի ձևաբանական սկզբունքը: Առաջնորդվելով այդ սկզբունքով, մենք գտնում ենք, որ բնականոր հայերենից ճյուղավորվելու հետևանքով պատմական երկարատև պրոցեսում և զանազան ժամանակամիջոցում առաջացել են հայերեն բարբառների յոթ ճյուղերը՝

1. «Ում» ճյուղ—7 բարբառ.
2. «Ս» ճյուղ —8 բարբառ.
3. «Լ» ճյուղ —2 բարբառ.
4. «Կը» ճյուղ —24 բարբառ.
5. «Կա» ճյուղ —5 բարբառ.
6. «Հա» ճյուղ —2 բարբառ.
7. Գրաբարատիկ ճյուղ—1 բարբառ.
8. Միջճյուղային—2 բարբառ:

Այդ բոլորն ընդամենը կազմում են 51 բարբառ, որոնք առայժմ հայանի են գիտությունը: Հետազոտությունը կարող է երևան հանել դեռ նոր բարբառներ:

Այս յոթ ճյուղերն իրենց ներքին պատկանում են երեք մեծ խմբերի: Առաջին խմբի մեջ մտնում են այն ճյուղերի բարբառները, որոնք ներ-Առաջին խմբի մեջ մտնում են այն ճյուղերի բարբառները, որոնք ներկայի և անցյալի անկատար ձևերը կազմում են վերլուծական եղանակով, գերբայով արտահայտելով ներգոյականի իմաստ և նշանակելով՝ այսինչ գործողության մեջ եմ: Այս խումբը կոչւմ ենք գերբայավոր: Այս խմբի մեջ են մտնում «Ում», «Լ» և «Ս» ճյուղերը:

Երկրորդ խմբի մեջ մտնում են այն ճյուղերը, որոնք իրենց սկզբունքային ձևերը (ներկան և անցյալի անկատարը) կազմում են գրաբարի նույն

ձևերի վրա ավելացնելով որևէ մասնիկ, որ նշանակում է՝ կա, ահա, որով  
ըղձական ձևերը գառնում են սահմանական ձևերը:

Այս խմբի մեջ մտնում են «Կա», «Կը» և «Հա» ճյուղերը: Այս խումբը  
կոչում ենք մասնիկավոր:

Երրորդ խմբի մեջ մտնում է գրաբարակերպ ճյուղը, որի ուսումնա-  
սիրութունը գեո չի խորացված:

Այսպիսով, հայերեն 51 բարբառները բաժանվում են երեք մեծ խմբերի  
և յոթ նյութերի:

4. ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ՀՆՁՑՈՒՆԱԲԱՆԵԿԱՆ ԳՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգումը մեզ տալիս է  
3 խմբի յոթ ճյուղ՝ «Աւմ», «Կը», «Լ», «Ս», «Հա», «Կա» և գրաբարակերպ:  
Սրանով, սակայն, բարբառների դասակարգման հարցը չի սպառվում, որով-  
հետև նկատելի է, որ հարևան բարբառները, շատ հաճախ միմյանց նման-  
վելով ձևաբանորեն, մտնում են միևնույն ճյուղի մեջ, բայց միմյանցից  
տարբերվում են հնչյունական սիստեմով: Այդ երևույթը նկատելի է  
հատկապես այնպիսի բարբառների մեջ, որոնք գտնվում են ճյուղերի աշ-  
խարհագրական դասավորութան սահմանների վրա, ինչպես, օրինակ, Վանի  
և Ուրմիայի բարբառները, Կարնո և Արարատյան բարբառները, Մեղրու և  
Ազուլիսի բարբառները և այլն: Ձևաբանորեն տարբեր լինելով, ուրեմն և  
տարբեր ճյուղերի պատկանելով, հիշյալ բարբառները միմյանց նման են  
հնչյունական կազմութամբ, հատկապես բաղաձայնական սիստեմով: Հե-  
տևաբար ձևաբանական դասակարգումը չի սպառում այդ բարբառները  
ճանաչելու հնարավորութունները, միաժամանակ նաև չի բացատրում  
այն նմանութունները, որ կան այդ բարբառների հնչյունական սիստեմի  
մեջ: Բացի այս, միևնույն ճյուղին պատկանող բարբառների հնչյունական  
սիստեմների մեջ զգալի տարբերություններ կան. այդ տարբերութուն-  
ներով հաճախ բարբառները կարելի է դասակարգել առանձին խմբերով,  
որով ավելի կճշտվի այդ բարբառների առանձնահատկութունները: Օրի-  
նակ, տեսանք, որ Կարնո բարբառը և Ակնա բարբառը պատկանում են  
միևնույն «Կը» ճյուղին. այդ դեռ չի տալիս այն գաղափարը, թե այդ  
բարբառներից յուրաքանչյուրն իրենից ինչ է ներկայացնում: Պետք է  
ցույց տալ նաև նրանց մեջ եղած տարբերութունը, իսկ այդ տար-  
բերութունը երևան է գալիս բնորոշ կերպով միայն հնչյունական  
կազմության մեջ, ըստ որում Կարնո բարբառն ունի քառաստիճան բա-  
ղաձայնական սիստեմ, իսկ Ակնա բարբառը՝ եռաստիճան խաղաղ բաղա-  
ձայնական սիստեմ: Այդ վերջին բնորոշումն էլ ավելի ճշտում է բարբառը  
ու որոշում նրա տեղը բնականոր դասակարգման մեջ: Նույնը կարելի է  
ասել նաև Պոլսի և Վանի բարբառների, Կիլիկիայի և Տրապիզոնի բարբառ-  
ների մասին և այլն: Այդ ամենից պարզ է գառնում, որ բարբառների  
ձևաբանական դասակարգումը բավական չէ, անհրաժեշտ է նաև նրանց  
հնչյունական դասակարգումը:

Բարբառների հնչյունական դասակարգումը կարելի է կատարել դա-  
նազան եղանակներով: Վերևում արդեն ասացինք, որ հնչյունական դա-  
սակարգման համար իբրև հիմք կարելի է վերցնել «ն» և «խ» հնչյունների  
փոխադարձ փոխարինումը, բայց այդ բնագրիում է չափազանց քիչ բառեր  
ու լեզվական երևույթներ և, ուրեմն, բնորոշ լինել չի կարող: Հարմար կլի-  
ներ ձայնավորները վերցնել իբրև հիմք բարբառների դասակարգման հա-

մար, սակայն հայերենի բարբառների մեջ մեծ մասի ձայնալորների օրինաչափ փոփոխություններ չեն նկատվում, հետևաբար դասակարգում կատարելն էլ ձեռնառու չէ: Կարելի է նույնպես հիմք բնարել «փ» և «Ֆ» հնչյունների փոխարինումները, այսինքն՝ «Ֆ»-ի բացակայությունը որոշ բարբառներում և նրա փոխարինումը «փ»-ով, ինչպես օրինակ Դարբաղի, Թբիլիսի, Ուրմիայի և Պոլի բարբառներում: Բայց այդ նման կլիներ վերևի գեղափերին և չէր բնագրի բարբառների լեզվական առատ երևույթները: Ամենից լավը և ամենից հաջողը կլինի բարբառների դասակարգումը ըստ պայթական բաղաձայնների համակարգի:

Հայերեն լեզվի մեջ, հատկապես գրաբարում, բաղաձայնների այդ համակարգն ունի հետևյալ պատկերը:

Ձայնեղ	խուլ	Շնչեղ խուլ
բ	պ	փ
դ	տ	թ
ձ	ծ	ց
ջ	ճ	չ
գ	կ	ք

Բաղաձայնների այս համակարգն բնագրից է հնչյունական երևույթների մի զգալի մասը, միաժամանակ և օրինաչափ կերպով ներկայացնում է տարրերակներ պանագան բարբառներում: Այդ համակարգի մեջ փոփոխվում են միայն ուղղահայաց շարքերը: Այդ փոփոխությունը բնականորեն լեզվաբանությունից վերցված և Ֆ. Էնգելսի կողմից բնագրից «տեղաշարժ» (передвижение) անբաժնով ենք կոչում:

Բարբառների այդ ձևի դասակարգումը կատարելիս, գրաբարի սխառնումը բնագրում ենք իբրև անփոփոխ և կայուն սխառնում, ուստի և «տեղաշարժերը» առնվելու են այդ սխառնմի համապատասխան, սրովհետև գրաբարի պայթական բաղաձայնական համակարգի հետ նույնն է արդի համազգային հայերեն լեզվի համակարգը:

Բարբառների բաղաձայնական համակարգի տեղաշարժերի բոլոր գեղափերի մասին մենք խոսելու ենք մի ուրիշ տեղ: Այստեղ դա ուզում ենք գարծնել հիմք բարբառների դասակարգման համար:

Նկատի ունենալով բոլոր փոփոխությունները բոլոր բարբառների մեջ, կարելի է ասել, որ մեր բաղաձայնական սխառնումը բոլոր բարբառներում փոփոխություն է կրում հիմնականում երկու տիպի տեղաշարժերի և մեկ տեղաշարժ-տեղափոխման միջոցով:

Առաջին տեղաշարժ կոչում ենք ձայնեղների խլացման երևույթները:

բ > պ	բ > փ
դ > տ	դ > թ
ձ > ծ	ձ > ց
ջ > ճ	ջ > չ
գ > կ	գ > ք

Երկրորդ տեղաշարժ ենք կոչում գրա հակառակ երևույթը՝ ձայնեղացումը և շնչեղ ձայնեղացումը:

պ > բ	բ > բ'
տ > դ	դ > դ'
ծ > ձ	ձ > ձ'
ճ > ղ	ջ > ղ'
կ > գ	գ > գ'

Տեղաշարժ-տեղափոխություն ենք կոչում այդ երկու երևույթի միաժամանակյա առկայությունը միևնույն բարբառում, այսինքն՝ ձայնեղների խլացում կամ շնչեղ խլացում և խուլների ձայնեղացում միաժամանակ

բ > պ	կամ՝	բ > փ	պ > բ
դ > տ	կամ՝	դ > թ	տ > դ
ձ > ծ	կամ՝	ձ > ց	ծ > ձ
ջ > ճ	կամ՝	ջ > չ	ճ > ղ
գ > կ	կամ՝	գ > ք	կ > գ

Նկատի ունենալով այդ ամենը, բարբառները դասակարգում ենք հետևյալ կերպ:

I. Բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժ:<sup>1</sup> Ըստ այդ տեղաշարժի ձայնեղ հնչյունները վերածվում են խուլ հնչյունների բոլոր այն բառերում, որտեղ գործածված են գրաբարում կամ հին հայերեն բառերում, Օրինակ.

բ > պ	Բերան > պերան
դ > տ	Դուռն > տուռ, տուն, տունք
ձ > ծ	Ձու > ծու
ջ > ղ	Ջուր > ղուր
գ > կ	Գինի > կինի, կինի:

Այդ տեղաշարժը կրում են հետևյալ բարբառների բաղաձայնական սխառնումը. Աստրախանի, Շամախու, Դարբաղի, Հաղբութի, Քեյվան-Շաղախի, Մարաղայի, Ուրմիայի, Պոլի, Վանի:

Այդ բոլոր բարբառների բաղաձայնական սխառնումը երկաստիճան ձայնեղագուրկ սխառնում է: Այդ տեղաշարժին չեն ենթարկվում բոլոր օտար բառերը, որտեղ թյուրքական կամ նոր պարսկական, կամ նոր արաբական փոխառություններ են: Նոր տեսլով մենք նկատի ունենք 10-րդ դարից հետո կատարված փոխառությունները: Օրինակ՝ բէպ, բէպ', բանգ', բախա, գանգ'ան, գ'անգ'ան և այլն:

II. Բաղաձայնական համակարգի երկրորդ տեղաշարժ: Ըստ երկրորդ տեղաշարժի խուլ հնչյունները ձայնեղանում են, իսկ ձայնեղները կարող են դառնալ շնչեղ խուլ բոլոր այն բառերում, որտեղ

<sup>1</sup> Հին հայերենի (գրաբարի) և բարբառների շնչեղ խուլ հնչյունների մեջ տարբերություն չկա: ուստի այդ շարքը չենք հիշատակում: Բացառություն (որոշ իմաստով) կարող են կազմել միայն Մշո և Սվեդիայի բարբառները:

հին հայերենում ևս կան: Այդ տեղաշարժի հետևանքով ստացվում են բարբառների հետևյալ ենթախմբերը.

ա. երկաստիեան խլազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ, այսինքն՝

պ > ք	պապ > բաբ	բերան > բէրան
տ > դ	տատ > դադ	դուռն > դուռ
ծ > ձ	ծուխ > ձուխ	ձու > ձու
ճ > ջ	ճակատ > ջագագ	ջուր > ջուր
կ > գ	կերակուր > գերագուր	գինի > գինի

Այս ենթախմբին են պատկանում «Կբ» ճյուղի հետևյալ բարբառները՝ Պոլսի, Եվդոկիայի, Նոր-Նախիջևանի, Տրապիզոնի և Մարաշի.

բ. եռաստիեան խլազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ, այսինքն՝

պ > բ	բ > բ'	պապ > բաբ	բերան > բէրան
տ > դ	դ > դ'	տատ > դադ	դուռն > դուռ
ծ > ձ	ձ > ձ'	ծուխ > ձուխ	ձու > ձու
ճ > ջ	ջ > ջ'	ճակատ > ջագագ	ջուր > ջուր
կ > գ	գ > գ'	կերակուր — գերագուր	գինի > գինի

Այս խմբին են պատկանում «Կբ» ճյուղի հետևյալ բարբառները՝ Համշենի, Սյուրիայի, Ակնա, Շապին-Գարահարի, Պարբերդ-Երզնկայի, Սուչավայի (Ատախլի) և Սերաստիայի բարբառները, «Հա» ճյուղի Արարկի բարբառը և գրաբարակերպ Պարջուրի բարբառը.

գ. քառաստիեան բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ, այսինքն՝

բերան > բ'երան	Փարպի > Փարբի	պապ > պաբ
դուռն > դ'ուռ	մանր > մ'անգր	տատ > տադ
ձու > ձ'ու	մեծ > մ'էնծ	ծուխ > ձուխ
ջուր > ջ'ուր	ճանճ > ճանջ	ճակատ > ճագագ
գինի > գ'ինի	աշակերտ > աշագերդ	կերակուր > կերագուր

Այդ խմբին են պատկանում «Կբ» ճյուղից Կարնո, Մշո և Ոգմիի բարբառները, «Ում» ճյուղից Արարատյան և Նոր-Ջուղայի բարբառները.

11. Բաղաձայնական համակարգի տեղաշարժ-տեղափոխություն:

Հստ տեղաշարժ-տեղափոխության ձայնեղ հնչյունները վերածվում են խուլ կամ շնչեղ խուլ հնչյունների, իսկ խուլ հնչյունները ձայնեղանում են, այսինքն՝

բ > պ	բ > փ	պ > բ	բերան > պերան
դ > տ	դ > փ	տ > դ	դուռն > տուռ
ջ > ճ	ջ > չ	ճ > ջ	ջուր > ձուր
ձ > ձ	ձ > ց	ձ > ձ	ձու > ձու
գ > կ	գ > ք	կ > գ	գինի > կինի

բերան > փերան	պապ > բաբ
դուռն > փուռ	տատ > դադ
ջուր > չուր	ճակատ > ջագագ
ձու > ցու	ծուխ > ձուխ
գինի > քինի	կերակուր > կերագուր

Այդ տեղաշարժ տեղափոխության հետևանքով ստացվում են երկու ենթախմբի բարբառներ.

ա. երկաստիեան խլազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ, այսինքն՝

բ > փ	պ > բ	բերան > փերան	պապ > բաբ
դ > փ	տ > դ	դուռն > փուռ	տատ > դադ
ձ > ց	ծ > ձ	ջուր > չուր	ճակատ > ջագագ
ջ > չ	ճ > ջ	ձու > ցու	ծուխ > ձուխ
գ > ք	կ > գ	գինի > քինի	կերակուր > կերագուր

Այս խմբին են պատկանում «Կբ» ճյուղի հետևյալ բարբառները՝ Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոզսթոյի, Նիկոմիդիայի և Օրատի.

Այս խմբից է վերցրել իր բաղաձայնական սիստեմը ուղղախոսության (արաստանության) մեջ գրական լեզվի արևմտահայ բարբառը.

բ. Միջին հայերենի սիստեմին համապատասխանող բաղաձայններ ունեցող բարբառներ, այսինքն՝

բ > պ	պ > բ	բերան > պերան	պապ > բաբ
դ > տ	տ > դ	դուռն > տուռ	տատ > դադ
ձ > ձ	ծ > ձ	ձու > ձու	ծուխ > ձուխ
ջ > ճ	ճ > ջ	ջուր > ձուր	ճակատ > ջագագ
գ > կ	կ > գ	գինի > կինի	կերակուր > կերագուր

Այս սեստեմին պատկանում են Ջեյթունի, Հաճրնի, Սվեդիայի և Բեյլանի բարբառները՝ «Կա» ճյուղից և Քեսաբի բարբառը՝ «Հա» ճյուղից.

Կա բարբառների մի շարքով խումբ, որի բաղաձայնական սիստեմը բառակազմին փոփոխություն չի կրում, այսինքն անտեղաշարժ է. Բարբառների շարքով խմբին են պատկանում Ղարազաղի, Դզմարի, Մեղրու, Կարճևանի և Արզվինի բարբառները՝ «Մ» ճյուղից, Դիաղինի և Մոկսի բարբառները՝ «Կբ» ճյուղից, Ամասիայի բարբառը՝ «Կա» ճյուղից, Ագուլիսի և Քրիլիսի բարբառները՝ «Ում» ճյուղից և Արեշ-Հավարիքի միջ-ճյուղային բարբառը. Այդ բարբառների բառակազմի բաղաձայնական սիստեմը գրաբարի նման է, այսինքն՝

բ > բ	պ > պ	բերան > բերան	պապ > պապ
դ > դ	տ > տ	դուռն > դուռ	տատ > տատ
ձ > ձ	ծ > ձ	ձու > ձու	ծուխ > ձուխ
ջ > ջ	ճ > ճ	ջուր > ջուր	ճակատ > ճակատ
գ > գ	կ > կ	գինի > գինի	կերակուր > կերակուր



Բարբառների բաղաձայնական այդ սխառմիւն պատկանում է նաև ժամանակակից հայ գրական լեզուն:

Իբրև ընդհանուր դիտողություն պետք է ասել, որ բարբառների բաղաձայնական սխառմիւն այս տարբերակները ցայտուն կերպով երևան են գալիս հիմնականում բառակազմի և հատկապես բառային հիմնական ֆոնդի բառերի հին շերտի մեջ (գրաբարի հետ ընդհանուր), Հաճախ կարելի է պնդել, որ այդ երևույթները բացառություններ չունեն, հետևաբար հնում, գրաբարի ժամանակ գոյություն ունեցող բարբառային բաղաձայնական կուռ սխառմների անհերքելի վիճակություններն են:

Երկրորդ դիտողությունն այն է, որ ձայնեղները բառամիջում համարյա բոլոր բարբառներում (բացառություն է կազմում Ազուլիսի բարբառը և մասնակի բացառություն՝ Մեղրու և Կարճեանի բարբառները) վերածվում են շնչեղ խուլերի, իսկ խուլերը ոնդայիններից հետո վերածվում են ձայնեղների, այսինքն՝

- |             |               |
|-------------|---------------|
| վարդ > վարթ | կարգ > կարք   |
| սրբ > սրփ   | ընկեր > ընկէր |
| փորձ > փորց | ճանճ > ճանջ   |
| վերջ > վերչ |               |

Բարբառների այս գոտակարգումը վկայում է որ յարաբանչյուրը դրանցից մի սխառմ էր ներկայացնում մեր լեզվի դարգացման գրաբար փուլում և փոփոխության է ենթարկվել գրաբարի հիմնական վերափոխությունից՝ «մահից» հետո, այսինքն 10—11-րդ դարերից սկսած:

5. ԷՍՅ ԲԱՐՔԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԷՄՔԵՐԸ

Հայերեն լեզվի առաջացման ժամանակաշրջանը չի կարելի ավելի մտա դնել, քան XV դարը նախքան մեր դարաշրջանը:

Այդ լեզուն եղել է հայ տոհմի լեզուն: Արդյոք այդ տոհմական լեզուն որքան ժամանակ առաջվանից գոյություն ուներ, դա որոշելը դժվար է, սակայն կարելի է մոտավոր ենթադրություն անել, որ մեր դարաշրջանից առաջ XV—XIV դարերի հայերեն լեզուն արդեն արմենների կամ հայաստանների հայ ցեղական լեզուն էր: Ինչպես հայտնի է բևեռագիր պատմագրությունից, հայասները և գրանց հետ նաև արմենները (հավանական է, թե երկուսն էլ լինեն միևնույն ցեղի անունները, որ մինչև այժմ էլ պահպանվում են որպես հայ ժողովրդի անուններ) XV դարից արդեն երևան են գալիս որպես ուժեղ ցեղական միություն, այն չափի ուժեղ, որ նրանք խեթական հզոր պետության հետ երբեմն պատերազմում են և մրցում (XIV, XIII, XII դարեր): Եթե այդ ժամանակ նրանք արդեն ցեղական միություն են կազմում, ուրեմն հայերեն լեզուն էլ պետք է որ այդ ցեղական միության ընդհանուր լեզուն լիներ: Ստալինյան ուսմունքի համաձայն մարդկային հասարակական այս միավորումները միշտ էլ ունեցել են իրենց ընդհանուր լեզուն, որի կողքին եղել են բարբառները, տերիտորիալ խոսվածքները: Հայերեն լեզուն այդ ժամանակ գտնվելիս է եղել Հայաստանի արևմուտքում, խեթական պետության սահմաններից դեպի արևելք և հյուսիս-արևելք, արմենական պատմական ավայանները հայասների և արմեններին այդտեղ են տեղադրում: Հայերեն լեզվի այդ ժամանակվա բարբառները, հավանական է, աստիճանաբար համաձուլվել են ընդհանուր լեզվի հետ, որովհետև հայ ցեղական միությունը, ինչպես երևում է նրա ազոտ պատմությունից, չի քայքայվել, այլ գնալով ավելի միասնացել և կուռ միություն է կազմել: Հենց դրա շնորհիվ էլ այդ միությունը դարձել է Հայաստանի բնիկների նկատմամբ ամենահզոր և ուժեղ ցեղական միություն, որի քաղաքական, կուլտուրական և լեզվական ազդեցությունն են ենթարկվել նախահայաստանի բնիկ շատ ցեղեր:

Իհարկե, այդ ժամանակ հայերեն լեզուն եղել է համեմատաբար պրիմիտիվ վիճակում, ունեցել է իր համեմատաբար պրիմիտիվ, բայց կազմավորված քերականությունը և իր համեմատաբար ավելի աղքատիկ բառային հիմնական ֆոնդը: Այդ բառային հիմնական ֆոնդի էական և գերակշիռ մասը պետք է որ լիներ հնդեվրոպական լեզուների հետ ընդհանուր, ինչպես այդ երևում է հայերեն արմատների ստուգաբանությունից, ժամանակակից բառային հիմնական ֆոնդի միջուկը կազմող արմատական բառերի մեջ հնդեվրոպական բառերը մի առանձին տեղ են գրավում: Ըստ պրոֆ. ճ. Աճառյանի «Արմատական բառարանի» գրանց թիվը 713 է. այդ թվից

՝ Գ. Կապանյան, Хайаса—колыбель армян, Ереван, 1948.

այժմ կենդանի են զգալի քանակությամբ արմատներ (80<sup>0</sup>/<sub>10</sub>-ից ավելի), որոնք այժմ էլ մնում են մեր հիմնական բառային ֆոնդի մեջ, Գա իրափոփունք է առլիս մեզ ստելու, որ հայերեն լեզվի նախնական բառային ֆոնդը հնդեւրոպական արմատներն են եղել:

Կասկած չկա, որ պրոֆ. Հ. Աճառյանի երեւան հանած թիֆլիս ավելի քիչ է, քան այն, որ հայերենն ունեցել է շատ ավելի հին ժամանակներում՝ իր ծնունդի ժամանակներում: Չի կարելի չընդունել, որ իր պատմութեան հազարամյակների ընթացքում հայ տոհմը, ապա ցեղը և հետագայում՝ ժողովուրդը իր լեզվի նախնական բառային հիմնական ֆոնդից մի մասը կորցրած կլիներ: Հայերեն լեզվի հիմնական բառային ֆոնդը հետագայում համալրվել է նոր բառերով, կամ իր սեփական կազմութեամբ բառերով, կամ փոխառութեաններով: Բայց այդ ֆոնդի միջուկը, երևում է, որ հնդեւրոպական է:

Կասկած չկա նաև այն մասին, որ հայերեն լեզվի փերականական կառուցվածքի հիմքերը նույնպես հնդեւրոպական են, բայց այնքան փոփոխված, որ բավական դժվար է լինում ճանաչել: Պահպանելով փերականական կառուցվածքի հնդեւրոպական հիմքերը, հայերեն լեզուն մշակել է նոր օրինաչափություններ, հարստացել է նոր օրենքներով այնքան շատ, որ փերականական հիմքերի պտակերը մթաղանել է, և հայերեն լեզվի փերականությունը նոր սրակ է ստացել:

Չուտ հայերեն լեզվի օրինաչափություններ հայերենի փերականությունը շատ ունի: Հայերեն լեզվի մեջ հնդեւրոպական փերականական հին օրինաչափություններից պահպանված են միայն հոլովման և խոնարհման ընդհանուր սկզբունքները, որոնք հայերեն լեզվի մեջ սպեցիֆիկ բնույթ են ստացել, դարձել են միայն հայերենի հատկությունները (ներքին և արտաքին թեքում, հոլովիչներ և խոնարհիչներ): Միայն բայական դեմքերի մի քանի վերջավորություններով և մեկ երկու հոլովիչներով հայերեն լեզուն հիշեցնում է հնդեւրոպական լեզուներին<sup>1</sup>:

Հայերեն լեզուն պատմական զարգացման նոր փուլ է սուրբ այն ժամանակ, երբ նա դարձել է Հայաստանի տերիտորիայի լեզուն, երբ նա մրցութեան մեջ է մտել Հայաստանի բնիկների լեզվի հետ: Իսկ այդ տեղի է ունեցել Ուրարտական պետության անկման վերջերին:

Ուստի VII դարից մինչև II դարը հայերեն լեզուն աստիճանաբար դարձել է Հայաստանի տերիտորիայի ցեղական միութիւնների համար ընդհանուր լեզու: Տեղի է ունեցել հայերեն լեզվի և տեղական բնիկների լեզվի խաչավորման ինտենսիվ պրոցես, որը, մեր կարծիքով, սկսվել էր դեռ X դարից (մ. թ. ա.): Այդ խաչավորման երկարատև պրոցեսում, ինչպես ցույց է առլիս պատմությունը, հայերեն լեզուն հաղթող է դուրս եկել, այսինքն՝ պահպանել է իր փերականական կառուցվածքը, իր բառային հիմնական ֆոնդը և զարգացել իր զարգացման ներքին օրենքներով: Իսկ մյուս ցեղական լեզուները հաղթվել են հայերենից, այսինքն՝ կորցրել են իրենց փերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, որ

<sup>1</sup> Հնդեւրոպական լեզուների հետ նույնն են հայերենի դերանունները և թվականները, որ նրա հնդեւրոպական լեզու լինելու անմիջական կոզմաններն են:

նշանակում է միաժամանակ՝ յուրացրել են հայերեն լեզվի փերականական կառուցվածքը և հիմնական բառային ֆոնդը, պահպանելով իրենց սեփական բառային կազմի զգալի մասը և իրենց արտասանության օրինաչափությունները: Դրա հետևանքով մահացել են այդ լեզուները՝ տեղի տալով հայերենին: Այդ ամբողջ պրոցեսում առաջացել են հայերեն բարբառները երկու ճանապարհով՝ հայերենի ներքին բաժանման և օտար ցեղերի կողմից հայերենը յուրացնելու ճանապարհով: Այդ պատճառով էլ հայերեն տեղական, տերիտորիալ բարբառները բնում են այն տերիտորիաները, որտեղ ապրում էին հայերեն բարբառներով կամ օտար լեզվով խոսող ցեղեր, ուստի ամեն մի բարբառի սահմանը բուն հայ ցեղերի կամ հայ դարձած նախկին բնիկ ցեղերի բնակության սահմանն է, դրա հետևանքով հայ կամ հայացած նախկին ցեղն ու այժմյան բարբառը տերիտորիայով գուցադիպում են միմյանց:

Ինչպես ասացինք, հայերեն բարբառները առաջացել են երկու ճանապարհով, որոնցից առաջինը հայերեն լեզվից բաժանվելու ճանապարհն է: Հայերեն լեզվից բաժանվելու ճանապարհով առաջացել են մեր մի շարք հիմնական բարբառները, Գա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ հայաստանում էին իրենց բնակության տերիտորիան, մյուս կողմից առանձին գաղութներ տալով իրենցից, գրավում էին պատմական Հայաստանի ավելի հեռավոր սահմանները: Այդ հեռացած տոհմերը կամ տոհմախմբերը, Հայաստանի այս կամ այն մասում բնակություն հաստատելով, հարմարվում էին տեղական պայմաններին, կապվում էին տեղական տոհմերի կամ ցեղերի հետ և աստիճանաբար նրանց ձուլում իրենց մեջ: Ցեղական շահերը հայերի և բնիկների մեջ աստիճանաբար ընդհանրանում էին, և հակադրությունները նվազում, աստիճանաբար առաջանում էր շահերի ընդհանրությունում էր: Ցեղական ցեղերը, ձուլվելով հայ ցեղերի մեջ, կարող էին որևէ հետք թողնել, բայց կարող էին նաև որոշ հետքեր չթողնել: Թե մեկ և թե մյուս դեպքում կարող էր առաջ գալ հայերենի բարբառ: Ցեղակիցներից հեռացած և քիչ առիթներով նրանց հետ կապված այս կամ այն հայ ցեղն աստիճանաբար իր լեզվի մեջ կմտցներ զանազան փոփոխություններ, որոնք հայերեն լեզվին կտային այս կամ այն տարբերիչ գիծը, այս կամ այն տարբերիչ երանգը: Այսպիսի բարբառները շատ ավելի մաս կլինեին հայերենին, ավելի շատ ժառանգություն կպահանջեին ընդհանուր լեզվից, քան թե այն բարբառները, որոնք առաջացել են օտարների կողմից հայերենը սովորելու պրոցեսում:

Բարբառների ճյուղավորման այս ճանապարհը առանձնապես քիչ փոփոխություն կմտցնի արտասանության մեջ, ուստի այս ճանապարհով առաջացած բարբառները հին հայերենի հնչյունական առանձնահատկություններից շատ բան կարող են ավելի հավատարմությամբ պահպանած լինել, քան այն բարբառները, որոնք առաջացրել են օտարները:

Դրանից ելնելով մտածում եմ, որ հին հայերենի հնչյունական կազմից, հատկապես նրա հին վիճակի հնչյունական սխեմայից ավելի շատ կայ բարբառալիություն—

հարազատ ձևեր և սխառմ պահպանած բարբառները պետք է որ լինեն այն բարբառները, որոնք առաջացել են առաջին ճանապարհով:

Հայանի է, որ հնդերոպական վիճակում հայերենն ունեցել է բազա-  
ձայնական սխառմի եռաստիճան՝ համակարգը հետևյալ շարքով՝

Հնչեղ ձայնեղ	ձայնեղ	խույ
bh բ'	b բ	p պ
dh դ'	p ք	t ա
gh գ'	g գ	k կ

Այս վիճակը համեմատաբար հարազատություններ պահպանել է սահա-  
կըրիա լեզուն:

Գրաբար լեզուն այս կարգը ենթարկել է ամբողջական տեղաշարժի  
զեպի աջ, այսինքն՝ շնչեղ ձայնեղները վերածել է ձայնեղների, ձայնեղ-  
ները վերածել է խույների, իսկ խույները՝ շնչեղ խույների:

bh բ' → b բ սնակր. bbarami—հյր. բերեմ. b բ → p պ սնակր. bandh—  
—հյր. պինդ  
dh դ' → d դ սնակր. dha (dadhami)—հյր. դնեմ. d դ → t ա սնակր. daçan—  
—հյր. սասն  
gh գ' → g գ սնակր. ghana—հյր. գան (ծեծ). g գ → k կ սնակր. gada—  
—հյր. կասակ

t ա → th թ սնակր. tavas—հյր. թաս  
k կ → kh ք սնակր. karkara—հյր. բար  
p պ → ph փ<sup>2</sup> սնակր. plihan—հյր. փայծաղ

Այսպիսով գրաբար լեզուն հայերենի բազաձայնական սխառմի հնդեկ-  
րոպական վիճակից ոչինչ չի պահել (բացառություններ հիպոթեզային շնչեղ  
խույների), բայց շարքերը տեղափոխել է ձախից զեպի աջ՝ կատարելով  
առաջին լրիվ տեղաշարժ:

Երբ քննում ենք մեր բարբառների բազաձայնական սխառմը, նկա-  
տում ենք, որ մեր շատ բարբառներ այդ տեղաշարժը չեն կատարել  
մինչև վերջ. մի մասը տեղաշարժը կատարել է բարբառներում համարյա  
բոլորովին նման գրաբար-  
րին. այսպես են «Ս» ճյուղի հիմնական բարբառները (Մեղրի, Կարճեան,  
Ղարպաղ, Դղմար և Արզվին), «Ու» ճյուղից միայն Ազգալիսի բարբառը,  
որ երբեմնի «Ս» ճյուղի բարբառն է, և թրիլիսի բարբառը, որ ուշ ստա-  
ջացած բարբառ է:

Այդ նշանակում է, թե այդ բարբառները առաջացել են ընդհանուր  
լեզվից այն ժամանակ, երբ մեր ընդհանուր լեզվի բազաձայնական սխ-  
առմը հնդերոպական վիճակից անցել էր գրաբարյան վիճակի:

<sup>1</sup> Հնդերոպական հնչյունական վիճակն ունեցել է նաև շրթնային աստիճանը, շնչեղ  
խույները՝ ph, th, kh, որոնք հայերենում ավել են համապատասխան շնչեղ խույնի՝ փ (փոքր,  
լափել, սփռել), ք (որթ) և ետալեզվային շփական՝ խ (ցախ). Տես՝ A. Meillet. Esquisse  
d'une gramm. comp. de l'armen. classiq., էջ 16:  
<sup>2</sup> Հնդեկեր, p պ սովորաբար հայերեն բառակցքին դասնում է հ' peter—հայր:

Բարբառների մի մասը բազաձայնների տեղաշարժը կատարել է մաս-  
նակի կերպով, այսինքն՝ հնդերոպական բազաձայնական սխառմի շնչեղ  
ձայնեղները պահպանել է անվթար, հնդերոպական ձայնեղները բառա-  
միջում նույնպես պահպանել է, փոխել է, տեղաշարժել է միայն հնդերո-  
պական բազաձայնական սխառմի ձայնեղները, որոնք բառակցքին վի-  
րածել է խույների:

Հնդերոպ.	Հայ. բարբառ.	Հնդերոպ.	Հայերենի. բարբառներ
			բառամիջում բառակցքում
bh բ' →	bh բ' բ'երեմ	b բ →	b բ → p պ պար
dh դ' →	dh դ' դ'նեմ	d դ →	d դ → t ա ապ
gh գ' →	gh գ' գ'ամ	g գ →	g գ → k կ կրզու

Այդ ախտն պատկանում են Արարատյան, Մշո, Կարնո, Ջուղայի և  
Սյունիքի բարբառները, այսինքն՝ հայերենի կենտրոնական բարբառները. եթե  
նկատի ունենանք, որ համարյա բոլոր բարբառները հնդերոպական խույները  
վերածել են շնչեղ խույների, ինչպես որ է գրաբարում, ապա այս խմբի  
բարբառները հնդերոպական բազաձայնական սխառմի մեջ կատարել են  
միայն մի փոքրիկ փոփոխություն, ձայնեղները միայն բառակցքին վի-  
րածել են խույների, ուստի և մյուս բոլոր բարբառների համեմատա-  
բարձր են այս սխառմին:

Բարբառների մի զգալի խումբ հնդերոպական շնչեղ ձայնեղները  
պահպանել է, սփռված է նաև հնդերոպական ձայնեղները, միայն հըն-  
դերոպական խույն հնչյունները վերածել է շնչեղ խույների, ուստի դարձել է  
խոյնային:

Հնդերոպ.	Հայ. բարբառ.	Հնդերոպ.	հայեր. բարբառ.
bh բ' →	bh բ' բ'երեմ	b բ → b	բ բինդ (պինդ)
dh դ' →	dh դ' դ'նեմ	d դ → d	դ դաս (սասն)
gh գ' →	gh գ' գ'ամ	g գ → g	գ գազու (կասու)

Բարբառների այս խմբին պատկանում են Պարբերդ-Երզնկայի, Սե-  
րասիայի, Համշենի, Շապին-Գարահիտարի, Սուչափայի, Ակնա, Արար-  
կիքի բարբառները, այսինքն՝ այն բարբառները, որոնք հայաստանի և ար-  
մենների նապույն բնակություն վայրերում են գտնվում:

Մի քանիսը գրանցից գաղթել են ուրիշ տեղեր, բայց դա ընդհանուր  
կրակացություններ չի վնասում. Հենց այդ բարբառները մնացել են ամե-  
նատարածները հնդերոպական սխառմին. Այսպիսով՝ բազաձայնական  
սխառմով հնդերոպական բազաձայնական սխառմին համաարիմ են եփ-  
րատի հյուսիսային ափերի մոտերքում և Փոքր Հայքում գտնվող, ինչպես  
և կենտրոնական Հայաստանում գտնվող հայ բարբառները, որ կարելի է  
ենթադրել, թե առաջացել են հնագույն ժամանակներում ընդհանուր հայե-  
րենից ճյուղավորվելու ճանապարհով:

Բայց այդ բարբառների բազաձայնական սխառմի մասին այս կերպ  
պատկերով՝ կարելի է մի շարք եզրակացությունների հանգել:

1. Հայերենի հնդեւրոպական վիճակի բաղաձայնական սիստեմի մեջ ամենից վաղ տեղաշարժ է կատարվել խուլ հնչյունների նկատմամբ, որոնք վերածվել են շնչեղ խուլերի. Դա հայերեն ընդհանուր լեզվի հատկութունն էր այն ժամանակ, երբ դեռ մեր արդի հիմնական բարբառները չէին դուրս եկել, երբ, երևի, հայերեն լեզուն խոսակցական լեզու էր Փոքր Հայքի և Կիլիկիայի փոքրամասն բնակիչ արմեն-հայաստանցիների համար. Այդ ժամանակ, երբ արդեն հնդեւրոպական բաղաձայնական սիստեմի շնչեղ ձայնավորները և ձայնեղները հայերեն լեզվի մեջ դեռ պահպանված էին անհնչեղները և ձայնեղները հայերեն լեզվի է ենթադրել 15-րդ դարից մինչև 7-րդ դարը՝ նախքան մեր գաղափարները:

2. Հայերենի տարածումը դեպի պատմական Հայաստանի կենտրոնական նահանգները առաջացրին հայերեն լեզվի նոր ճյուղավորումներ, որոնք տեղաշարժեցին հայերենի հնդեւրոպական բաղաձայնական սիստեմի ձայնեղները բառակազմի վերածելով խուլերի. Դրանից ստացվեցին մեր քառասունհինգ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառները (Արարատյան, Մշո և Կարնո բարբառները):

3. Այդ պրոցեսը, երևի, տեղի ունեցավ մինչև 2-րդ դարը մեր գաղափարներից առաջ. Այդ ժամանակ հայերեն ընդհանուր լեզուն արդեն կատարել էր հնդեւրոպական բաղաձայնական սիստեմի առաջին տեղաշարժը: Դրանից հետո հայերենից կատարված ճյուղավորումները, հավանական է, մեծ մասամբ 2-րդ ճանապարհով առաջացրել են մեր մյուս բարբառները, որոնք հայերենի բաղաձայնական սիստեմի տեղաշարժերը հասցրել են շատ ավելի հեռու, քան զբաղաբեր. Այսպես, բարբառների մի խումբ ոչ միայն ձայնեղներ են դարձրել խուլ, այլ շնչեղ ձայնեղները վերածել են միայն ձայնեղների և ապա դրանք էլ վերածել են խուլերի, առաջացնելով երկատիճան ձայնեղադուրի բաղաձայնական սիստեմ (dh դ' → d դ → t տ կատարված ձայնեղադուրի բաղաձայնական սիստեմ (dh դ' → d դ → t տ րում գտնվող բոլոր բարբառները, որ, ամենայն հավանականությամբ, ամենաուշ հայացած հասարակութունների բարբառներն են դարձել):

4. Բարբառների մի ուրիշ խումբ այդ տեղաշարժը էլ ավելի է խորացրել՝ շնչեղ ձայնեղները վերածելով ձայնեղների, ապա այդ ձայնեղները վերածելով խուլերի և այդ խուլերն էլ վերածելով շնչեղ խուլերի (dh դ' → d դ → t տ → th թ դ'ուռն → դուռն → տուռն → թուռն), անփոփոխ պահպանելով միայն հնդեւրոպական ձայնեղները. Այդ խմբի բարբառները ամենաուշ ձայնեղները և ապա խուլերն են ենթարկել հնդեւրոպական սիստեմի բաղաձայնները: Դրանք Աղձնիքի և Չորրորդ Հայքի բարբառներն են:

Այսպիսով՝ բաղաձայնական սիստեմը հայերենի տարածմանը, տեղի է, որ հայերեն լեզվի ճյուղավորումները, բարբառների առաջանալը, տեղի են ունեցել տեղական կերպով և աստիճանաբար, հնագույն շրջանից սկսած, և՛ ընդհանուր հայերենի զբաղաբար վիճակից առաջ, և՛ դրա զբաղաբար վիճակում, և՛ զբաղաբար վիճակից հետո:

Հայերեն լեզվից առաջացած բարբառային ճյուղավորումների 2-րդ ճանապարհը տեղի է ունեցել տեղական ցեղերի հայացման երկարատև

պրոցեսում. Այդ պրոցեսն սկսվել է շատ հին ժամանակներից, այն ժամանակվանից, երբ հայաստ-արմեն հայկական ցեղախումբը սկսեց թափանցել Հայաստանի տերիտորիան. Էինելով ուժեղ ցեղախումբ՝ հայաստ-արմենական ցեղախումբը կուլտուրայես, քաղաքականապես և անտեսապես կարողացավ նվաճել Հայաստանի բնիկ ոչ հայ ցեղերին. Այդ բնթացքում հայերեն լեզուն, իրրե հեղինակավոր և նախաձեռնող մեծ ցեղի լեզու, մյուս բնիկ ցեղերի համար զարձակ նախ միջցեղային լեզու, որի կողքին ցեղերն ունեին իրենց սեփական տեղական լեզուները. Աստիճանաբար երբ միջցեղային լեզվի փերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը յուրացվեց մյուս բնիկ ցեղերի կողմից, դրանք միաժամանակ մասնացան և կորցրին իրենց սեփական լեզվի փերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, այս ճանապարհով առաջացնելով հայերեն լեզվի ճյուղավորումները. Բայց հենց այդ այն մոմենտն էր, երբ հայերենը միջցեղային լեզվից վերածվում էր Հայաստանի բնիկ ցեղական միաբնակների համար ընդհանուր լեզվի:

Այսպիսով՝ հայերենի և բնիկ լեզուների խաչավորման ճանապարհը, մեր կարծիքով, հետևյալն է. նախ հայերեն լեզուն զարձակ է Հայաստանի տերիտորիայի բնիկ ցեղերի համար միջցեղային հարաբերութունների լեզու, երբ հասարակական-անտեսական հարաբերութունների զարգացումը այդպիսի լեզվի պահանջ է առաջադրել. Հայերենը, լինելով ուժեղ լեզու մյուսների համեմատությամբ, առաջ է մղվել որպես ցեղերի կամ միջցեղային հարաբերութունների լեզու. այդ շրջանում բնիկ ցեղերը եղել են երկկեզվյալ, մեկ՝ իրենց սեփական տեղական լեզվով են խոսել, երկրորդ՝ միջցեղային հարաբերութունների համար խոսել են հայերեն լեզվով: Միայն հայ ցեղական միութունը՝ եղել է միակեզու. Եվ այդ պատճառով էլ հայերեն լեզուն պահպանել է իր հիմնական բառային ֆոնդը և փերականական կառուցվածքը ու դուրս է եկել հաղթող. Մյուս լեզուները աստիճանաբար միջցեղային լեզվի համեմատությամբ գիտակցվել են որպես երկրորդական կարգի լեզուներ, իսկ հայերեն լեզուն գիտակցվել է որպես մեծ առավելութուններ ունեցող լեզու այդ երկրորդական կարգի լեզուներն սկսել են մահանալ, այսինքն՝ սկսել են մահանալ նրանց բառային հիմնական ֆոնդը և փերականական կառուցվածքը, որ նշանակում է՝ դրանք փոխարինվել են հայերենի հիմնական բառային ֆոնդով և փերականական կառուցվածքով. Բայց հայերեն լեզուն յուրացրել է հաղթված և մեռնող լեզուների բառային կազմի մի մասը և դրանով համայնել իր բառային կազմը, դրա հետևանքով նա ուժեղացել է, հեղինակությամբ էլ ավելի բարձրացել, էլ ավելի հարազատացել մյուս ցեղերին և շարունակել զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով, հանդիսով աստիճանաբար մի նոր սիստեմի, որ մենք անվանում ենք զբաղաբար սիստեմ: Տեղական լեզուների մահացմամբ և հայերենը յուրացնելու

<sup>1</sup> Հայերեն բառային հիմնական ֆոնդի մեջ մանուկ շատուգաբանվող բառերը ամբողջությամբ ենթարկվում են նույն օրինաչափության: Ինչ որ հնդեւրոպական բառերը, մինչդեռ փոխառյալ բառերը հաճախ շեղվում են այդ օրինաչափություններից (տե՛ս նույն աշխատության շեղվածքում հնչյունաբանութունը՝ գլուխը):

հետևանքով առաջացած հայերեն հիմնական բարբառները շարունակել են իրենց մտակցումը հայերեն ընդհանուր լեզվին, շարունակել են նրա մեջ ձուլվելու պրոցեսը: Գուցե այդ պրոցեսը գանդաղել է սկսել հայկական ֆեոդալիզմի դարգացման շրջանում, բայց մինչև այդ՝ բարբառների մտակցման պրոցեսը ընթացել է բնական ճանապարհով:

Հաղթանակող դուրս գալով և տեղական լեզուները մահացնելով, իր ճյուղավորումները՝ բարբառները, առաջ բերելով՝ հայերեն լեզուն գառնում է Հայաստանի տերիտորիայի բնակչության ընդհանուր լեզուն, որ և իրավունք է տվել Ստարոսինն ասելու, թե Հայաստանի բնակչությանը միացել է մի պետություն մեջ, «այնպես որ այժմ բոլորը միալեզու եղան»: Այդ մտեմտը՝ զուգադիպել է հայ ժողովրդի (народность) գոյացման մասնակաշրջանին: Չի բացառվում այն, որ հայերեն լեզվի վերածվելը տեղական ցեղերի համար ընդհանուր լեզվի այդ ցեղերի և հայ ցեղի միաձուլման և մի ժողովուրդ կազմելու հիմունքներից մեկն է եղել, եթե նկատի առնենք, որ մյուս հիմունքները՝ քաղաքականը, տերիտորիայը և տնտեսականն էին:

Այսպիսով՝ հայ ժողովրդի (народность) և նրա ընդհանուր լեզվի առաջացումը միաժամանակ նաև հայ մի քանի հիմնական բարբառների առաջացման պրոցեսն է, որ տեղի է ունեցել 10-րդ դարից մինչև 2-րդ դարը (նախքան մեր դարաշրջանը):

Սակայն, մեզ թվում է, թե մեր բոլոր բարբառները միաժամանակ չեն կազմվել և բոլոր լեզուները միաժամանակ տեղի չեն տվել հայերեն լեզվին: Ցեղական լեզուների մահացման պրոցեսը, հաղթվելու պրոցեսը, իրենց բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը կորցնելու պրոցեսը և հայերեն հիմնական բարբառների առաջացման պրոցեսը երկարատև պրոցես է եղել: Չի կարող պատահել, որ նույն ինտենսիվությամբ ընթանար այդ Հայաստանի բոլոր մասերում, Հայաստանում բրնակվող բոլոր ցեղերի լեզուների մեջ: Մենք հավանական ենք համարում, որ սկզբում հայերեն լեզուն հաղթանակով է դուրս եկել հայ ցեղական միությունը կամ նրա հատվածներին աշխարհադրոներն ավելի մտազանվող ցեղերի լեզուների նկատմամբ, ուրեմն և դրանք էլ դարձել են հայերենի առաջին բարբառները: Դա անպայման եղած պետք է լիներ Հայաստանի այնպիսի տեղերում, որոնք ամենից շուտ են դարձել տնտեսական կենտրոններ: Ստարոսինն վկայությամբ Հայաստանում երկու կենտրոններ կային՝ Ծոփքը և Այրարատը. ուրեմն՝ պետք է հավանական համարել, որ մեր առաջին բարբառներն էլ կազմավորվել են Ծոփքի շրջանում և շրջակայքում և Այրարատում, ուստի հավանական պետք է համարել, որ նախ կազմվել են «Կր» ճյուղի հիմնական բարբառները՝ Մերձեփրատյան, Փոքր Հայքի, Կարնո, Մուշի և «Ու» ճյուղի Արարատյան բարբառը, հետո միայն մյուս բարբառները: Նկատելի է, որ մեր բարբառներից կենտրոնականները միմյանց նման են: Մյուս կողմից տարբերակ չպետք է թվա մեզ մեր բարբառների յոթ ճյուղերը: Ամենայն հավանականությամբ մեր հիշած երկու ճանապարհներով կազմվել են հայերեն լեզվի յոթ գլխավոր բարբառներ՝ ինչպես, օրինակ, Այրարատի («Ու» ճյուղի), Աղուլիսի («Ս» ճյուղի), Տարոնի

(«Կր» ճյուղի) և Հերի («Լ» ճյուղի): Այստեղ բնակվող ցեղերի լեզուները շուտ են զիջել՝ հայերեն լեզվի հետ խաչավորվելու պրոցեսում, որից նույն երկու ճանապարհով առաջացել են հայերեն լեզվի հիմնական ճյուղավորումները: Հետագայում մնացած ցեղերը հայերեն լեզվի քերականությունը և բառային հիմնական ֆոնդը յուրացրել են այս առաջին բարբառների օգնությամբ, հիմնականում երկրորդ ճանապարհով: Այսպես՝ Լարարաղը Արարատյան բարբառի օգնությամբ, դրա համար էլ պատկանել է նրա ճյուղին, իսկ մյուսները Այրարատի և Լարարաղի բարբառների օգնությամբ (Չուղան, Ասարախան՝ Արարատյան բարբառից, Շամախին՝ Լարարաղի բարբառից): Աղուլիսի բարբառի օգնությամբ հայերեն լեզվի հիմնական բառային կազմը և քերականությունը յուրացրել են Մեղրիի, Կարձևանի, Հաղբուլի, Լարաղաղի (Փայտակարանի) ցեղերը, առաջացնելով «Ս» ճյուղը: Հետագայում Աղուլիսը Արարատյան բարբառի ազդեցությամբ միայն «ե» խոնարհման բայերի ներկան գարձնում է «Ու» ճյուղի նման և մտնում է «Ու» ճյուղի մեջ, թեև մնացած բոլոր հատկանիշներով նա այժմ էլ պատկանում է «Ս» ճյուղին: Հերի (Սոյ) բարբառի օգնությամբ Մարաղան յուրացնում է հայերեն լեզվի հիմնական բառային ֆոնդը և քերականական կառուցվածքը, որով առաջանում է «Լ» ճյուղը, որը, հավանական է, ունեցել է ընկերակիցներ, որոնք այժմ չկան: Կարնո, Տարոնի և Ծոփքի բարբառների օգնությամբ հայերեն լեզուն յուրացնում են Վանի շրջանի ցեղերը, նախկին բիայնացիք կամ ուրարտները՝ կազմելով Վանի, Մոկաց և Ուրմիայի բարբառները և արևմտյան բազմաթիվ բարբառներ (Կիլիկիայի և Անտիոքի շրջանների, Մալաթիայի բարբառները և այլն): Կարելի է ենթադրել, որ Հայաստանի ծայրամասերի ընկիները շատ ուշ են յուրացրել հայերեն լեզուն, այն էլ՝ բարբառներից, և դեռ 8-րդ դարում մյուս բարբառների համեմատությամբ այնքան տարբեր էին, որ աչքի էին ընկնում իրրե եզերական և մթին բարբառներ (Ստ. Սյունեցի): Հայաստանում բարբառների գոյացման պրոցեսը շարունակվել է երկար ժամանակ, և դեռ X դարում մեր հեղինակների մոտ խուլիցոց լեզուն համարվում էր մթին լեզու, և դրանց հետ թարգմանիչներով էին խոսում:

Մտավորապես այսպես է ընթացել հայերեն բարբառների գոյացման պրոցեսը: Այժմ փորձենք լեզվական նյութով ցույց տալ այդ պրոցեսը:

Հայերեն բարբառների թիվը շուրջ 51 է: Այդ բարբառները միմյանց նման են և միմյանցից տարբեր: Այս մասին այսպես ընդհանուր խոսվել է միշտ, սակայն ստալինյան լեզվաբանական ուսմունքի ստեղծումից հետո կարելի է կոնկրետացնել այդ միտքը և որոշել, թե ինչն է բարբառների ընդհանուրը, ինչն է տարբերությունը:

Բարբառների մեջ ընդհանուրը հիմնական բառային ֆոնդն է և քերականական կառուցվածքի հիմքերը: Հիմնական բառային ֆոնդի մեջ մանող բառերը և տրմառները ընդհանուր են ոչ միայն բոլոր բարբառների համար, այլև դարբարի, միջին հայերենի և աշխարհաբարի համար: Այդ բառային ֆոնդի թեթև ուսուսմասիրությունը հետաքրքրական օրինակափություն է պարզում: Ամեն մի բարբառում գոյություն ունեցող հնչյու-

նական օրինաչափությունը հետևողական և անխախտ կերպով երևում է հիմնական բառային ֆոնդի մեջ մանող բառերի վրա: Այսպես՝ եթե բարբառի բաղաձայնական սխառեմը երկաստիճան ձայնեղազուրկ է, այսինքն՝ ձայնեղը վերածում է խուլի, այդ այդ օրինաչափությունը տարածվում է բառային հիմնական ֆոնդի մեջ մանող բոլոր բառերի վրա: Նույնն էլ վերաբերում է այն բարբառներին, որոնք ունեն երկաստիճան խաղաղուրկ սխառեմ, կամ քառաստիճան, կամ երկաստիճան խաղաղուրկ սխառեմ, կամ տեղաշարժ-տեղափոխություն սխառեմ և կամ անտեղաշարժ սխառեմ: Այսպես, օրինակ, Ղարբաղի բարբառը պատկանում է առաջին տեղաշարժին, Պոլի բարբառը երկրորդ տեղաշարժի առաջին ենթախմբին, Համշենի բարբառը նույն տեղաշարժի երկրորդ ենթախմբին, Կարնա բարբառը նույն տեղաշարժի երրորդ ենթախմբին, Մայաթիայի բարբառը տեղաշարժ-տեղափոխության առաջին ենթախմբին, Զեյթունի բարբառը նույն տեղաշարժի երկրորդ ենթախմբին, իսկ Թբիլիսիի բարբառը՝ անտեղաշարժ խմբին:

Եթե վերցնենք բերան բառը, բոլոր բարբառներում կատանանք հետևյալ պատկերը. Ղարբաղ՝ պերան, Պոլիս՝ բերան, Համշեն՝ բ'էրան, Կարին՝ բ'էրան, Մայաթիա՝ փերան, Զեյթուն՝ պերան, Թբիլիսի՝ բ'էրան: Նույն պատկերը կատանանք, եթե վերցնենք ձայնեղ ք-ով սկսվող բոլոր այն բառերը, որոնք մտնում են հիմնական բառային ֆոնդի մեջ:

Այսպես է նաև խուլ հնչյունների հետ կառարվող օրինաչափությունը. այսպես, օրինակ՝ պապ բառը կունենա հետևյալ պատկերը. Ղարբաղ՝ պապ, Պոլիս՝ բար, Համշեն՝ բար, Կարին՝ պար, Մայաթիա՝ բար, Զեյթուն՝ բուրբ, Թբիլիսի՝ պապ, Քեսաբ՝ բուբ, Սվեդիա՝ բուր, Մարաշ՝ բոր: Այս նույն օրինաչափությունները կնկատենք խուլ պայթական բաղաձայնով սկսվող բոլոր այն բառերի վրա, որոնք մտնում են հայերենի հիմնական բառային ֆոնդի մեջ, ուրեմն՝ յուրաքանչյուր բարբառ միայն հայերենի հիմնական բառային ֆոնդի մեջ մանող բառերի արտասանության իր սեփական օրինաչափություններն ունի, որ պահպանվել է մինչև այսօր: Այս օրինաչափություններից շատ քիչ խախտում կա: Այդ օրինաչափությունները շատ հին օրինաչափություններ են, դրանց մասին վկայություն կա դեռ 7-րդ դարում Անանուն մեկնիչի մոտ, որը մի օրինակ բերելով հայանում է, թե հայերեն բարբառների մեջ միևնույն բառն արտասանում են տարբեր ձևով, ինչպես՝ բազուկ, պազուկ, փազուկ: Կրկնենք, որ այս օրինաչափությունները նկատելի են գլխավորաբար հիմնական բառային ֆոնդի մեջ մանող բառերի նկատմամբ, այսինքն՝ այն բառերի նկատմամբ, որոնք ստախնյան ուսմունքի համաձայն ամեն մի լեզվի ամենահին բառերը պետք է լինեն: Նշանակում է, թե այդ օրինաչափությունները ամեն մի բարբառի հնագույն օրինաչափություններն են, այն օրինաչափությունները, որոնք եղել են հայերենի մեջ բարբառի ծնունդի ժամանակ: Այս եղանակով պարզվում են մեր բարբառների հնչյունական ամենահին օրինաչափությունները, որ նրանց մեջ եղել են նրանց ծնունդի ժամանակ: Բայց այս օրինաչափությունները այլ բան չէին կարող լինել, քան այն օրինաչափությունները, որոնք կային կամ հնդեւրոպական հնչյունական սխառեմը տեղաշարժած հայ

<sup>1</sup> Н. Адонц, Дионисий фракийский и армянские толкователи, стр. 149.

բարբառում, կամ էլ այն ցեղային անկախ լեզվի մեջ, որը հաղթվելով հայերենից, կորցնելով իր բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը, ընդունել է հայերենի հիմնական բառային ֆոնդը և քերականական կառուցվածքը: Բայց մենք գիտենք, որ այսօր էլ, եթե որեւէ լեզու մեկ ուրիշից բառեր է վերցնում, այդ բառը ենթարկում է իր արտասանական կանոններին: Օրինակ, սուսերենը չի ասում «թութ», այլ ասում է ԿՄԿ, այսինքն՝ շնչեղազրկում է, որովհետեւ զա նրա լեզվի օրինաչափությունն է, նույնպես էլ ազրբեջաներենը չի ասում «Պյոսր», այլ արտասանում է «Փյոսր», որովհետեւ իր լեզվի օրինաչափությունն է խուլերը շնչեղացնելը: Այսպես էլ նաև այն լեզուները, որոնք յուրացնում էին հայերենի հիմնական բառային ֆոնդը և քերականական կառուցվածքը և դառնում էին հայերեն որոշ բարբառների առաջացման հիմքը: Իրանք իրենց արտասանության օրենքները պահպանելով՝ հայերեն ընդհանուր լեզվի բառերի բաղաձայնական պայթական սխառեմը փոխում էին իրենց մայրենի սխառեմին. եվ գա, ինարկե, չէր խանդարում նրանց հայերենի բարբառ դառնալուն: Այդպես է գրությունը բոլոր այն բարբառներում, որոնք հնդեւրոպական հնչյունական վիճակից շատ տարբեր բաղաձայնական սխառեմ ունեն:

Իրա հետևանքով հայերենի բարբառների մի մասի մեջ փոխանցվել են նախկին ցեղական հաղթված լեզուների օրինաչափությունները, որոնք և կենդանի վկաներն են մեր որոշ բարբառների գոյացման: Այս մասին մի հետաքրքրական վկայություն ունի Ստեփանոս Սյունեցին, որը բերել է պրոֆ. Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում (էջ 136), բայց չի մեկնաբանել ըստ էության:

Ստ. Սյունեցին քերականության մեկնության մեջ՝ բացատրում է, որ անունների բացահայտության մեջ 6 կատեգորիա են նշվում, որոնցից 4-րդը անվանում է ստուգաբանություն, բացատրելով, թե զա նշանակում է անունների և բայերի ուղղում և ճշտում, «վասն զի յանձնաթեմէ խաւսից թիւրեալ են անունք եւ բայք ամենից ազգաց, բայց ի սակաւուց» («որովհետեւ խոսքի անձնությունից ծափել՝ աղավաղվել են անունները և բայերը բոլոր ազգերի, բայց մի քանիսից»):

Հայերեն լեզվի մեջ եղած աղավաղումները Քերականը բացատրում է հետևյալ կերպ.

«Եւ եղիւ թիւրութիւն խաւսիցն այսպէս. գնչուք եւ թոթովաք եղեալ յազգէն, որ յառաջ քան զմեզ, որք ոչ կարեն զընտրութիւն առնել չծարգացն ի խաւս իւրեանց յազգս մերձաւորութեան լծորդացն առ միմեանս, որպէս բնն՝ մենի, պէի եւ փիւրի եւ որք մի ըստ միոջէքն<sup>2</sup>. աւանդեցաւ թիւրութիւն խաւսից նոցա որդոց իւրեանց որպէս զուղղութիւն յազգս միայն բնակելոյն եւ ոչ ումեք գորոյ մերձաւոր առ նոսա: Եւ էին նոքա նահապետք իւրաքանչիւր գաւառոց յորժամ էրն տակաւին նուագութիւն մարդկան: Իսկ ստորութիւն վարժեալ պահեցաւ իրրեւ զաւրէնս յիւրաքանչիւր գաւառի եւ եղեալ անուանակոչութիւն անմարմնոց եւ մարմնոց, անականացն և անաճից»:

<sup>1</sup> Н. Адонц, Дионисий фракийский и армянские толкователи, стр. 185—191.

<sup>2</sup> Այսինքն՝ «գրանց նման իբար հաջորդողները՝ գ, կ, ք, զ, ա, թ, և այլն»:

«Բարբառների թյուրությունը (ծնումը, աղափարումը) եղավ այսպես. թյուրութիւնը և թոթովութիւնը կային մեզնից առաջ (Հայաստանում.— Ա. Ղ.) եղած ազգից (ցեղերից), որոնք իրենց խոսքի մեջ չէին կարողանում լծորդների տարբերութիւն գնել լծորդների միմյանց մերձավոր լինելու պատճառով, ինչպես բեն՝ (բ) մենին (մ. օրինակ՝ բակ—մակ.—Ա. Ղ.), պէին (պ. օրինակ, բան>պան.—Ա. Ղ.) և փյուրին (փ. օրինակ՝ բան—փան.—Ա. Ղ.), այդպես նաև այն հնչյունների վերաբերյալ, որոնք միմյանց հետևից էին (այսինքն՝ գ, կ, ք, դ, տ, թ.—Ա. Ղ.): Նրանց խոսքն ավանդվեց նրանց օրդիններին որպես ճշտութիւն այն պատճառով, որ նրանք մենակ էին բնակվում և նրանց մոտ մարդ չկար (այսինքն՝ հայ չկար.—Ա. Ղ.): Եվ դրանք յուրաքանչյուրը մի գավառի նահապետներ էին, երբ դեռ մարդկանց քչութիւն կար (այսինքն՝ տոհմական կարգերի ժամանակ, երբ մարդկային հասարակութիւնները փոքրաթիվ էին.—Ա. Ղ.): Իսկ այս սովորութիւնը վարժութիւնը գործավ և պահեց որպես յուրաքանչյուր գավառի օրենք (կանոն.—Ա. Ղ.) և եղավ (այդպես) անվանադրութիւն անմարմինների և մարմնավորների, ածականների և անաճների»:

Ինչպես տեսնում ենք, Քերականը հայերենի բաղաձանական սխառմի տեղաշարժը բ — պ — փ (բան — պան — փան) բացատրում է նրանով, որ հայերենից առաջ եղած բնիկները լեզվի անվարժութիւն պատճառով լծորդակից հնչյունները չեն տարբերել միմյանցից, արատանել են միանման և այնուհետև ամբողջական սխառմ գործնելով հազորդել սերնդի սերունդ. Եվ այնուհետև այդ վարժեալ սովորութիւնը պահել է իրեն յուրաքանչյուր գավառի օրենք:

Այլ կերպ ասած՝ ամեն մի գավառի բարբառային արտասանութիւնը հետևանք է բնիկների կողմից հայերենը սովորելու պրոցեսում հայերենի բաղաձայնական սխառմը իրենց լեզվի հնչյունական օրենքներին ենթարկելու սովորութիւն, որ այժմ էլ լեզվաբանական օրենք է բոլոր նրանց համար, ովքեր ոչ գպրոցական ճանապարհով սովորում են որևէ օտար լեզու:

Եթե VIII դարի հեղինակը այդ է վկայում, հեղինակ, որ ավելի մոտ է մեր բարբառների աղբյուրներին ժամանակի տեսակետից և որի ժամանակ, հավանական է, դեռ կազմվում էին հայ բարբառները, հասկանալի է, որ մենք այլ վկայի կարիք չունենք:

Ուրեմն Սյունեցու այս խոսքը մեր բարբառների գոյացման երկրորդ ճանապարհի պրոցեսի հեղինակավոր վկայութիւնն է:

Սյունեցուց երկու գար հետո Գրիգոր Մագիստրոսը նույնպես մի վկայութիւն է կատարում. նա ասում է.—

«Որպես և արդ բազումք ի մէնջ, ոչ գիտելով զգիր և զվանդ կամ զչափաորութիւն և զկշիռ, ուղիղ խաւսին պարզաբար և ամանք ի մէնջ ամեննին թիւր անյարմար գաւանութեամբ իբրու գաւրէնս ստացեալ ունին և ոչ երբեք զձայնակցիս կամ զլծորդ փոխանակն իբր զմանկաց կամ զպատանեաց, որպէս զթէ փոխանակ հայի գիտեալք, կամ զձա՝ ծայր և զայս ամանս բազումս, զոր հանդերձյալ եմք տակ»<sup>1</sup>:

Այստեղ ևս Գրիգոր Մագիստրոսը նույն միտքն է հայտնում, ինչ որ Ստեփանոս Քերականը, ասելով, «ամանքի ի մէնջ ամեննին թիւր և անյարմար գաւանութեամբ իբրու գաւրէնս ստացեալ ունին»... մինչդեռ «բազում ի մէնջ ոչ գիտելով զգիր և զվանդ... ուղիղ խաւսին պարզաբար»: Այսպիսով, բարբառների առաջացման երկրորդ ճանապարհը վկայված է նաև մեր հին հեղինակներից մի երկրորդի կողմից. Այսօր գա ինքնին կարակացվում է ստալինյան լեզվաբանական ուսմունքից:

Ստալինյան լեզվաբանական ուսմունքի համաձայն հաղթող լեզուն, որ պահպանում է իր քերականական հիմնական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը ու շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրինաչափութիւններով, յուրացնում է հաղթված լեզուների բառերը, համալրում իր բառային կազմը այդ լեզուների բառերով. Այդ նկատում ենք մենք նաև հայերեն լեզվի մեջ: Հայերեն բառային կազմի մեջ մասնող բառերի մի հսկայական թիվ անստուգաբանելի են, չեն կապվում ոչ հնդեւրոպական լեզուների հետ և ոչ էլ հարևան ժողովուրդների լեզուների հետ. պարզ է, որ դրանց մեծ մասը բնիկների բառերն են, որոնք համալրել են հայերեն լեզվի բառային կազմը:

Ինչ վերաբերում է քերականութիւնը, ապա այստեղ ևս նկատում ենք մեր կարծիքը հաստատող բազմաթիվ երևույթներ. Ստալինյան ուսմունքի համաձայն պարզված լեզուն չի պահպանում իր քերականական հիմնական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, այլ վերցնում է հաղթողին. Հենց այդպես են արել մեր բարբառները, ուստի նրանց քերականական կառուցվածքը, ավելի լավ կլինի ասել՝ քերականական կառուցվածքի հիմքերը բնիկների լեզվի հիմքերն են:

Այդ հիմքերից պետք է նշել հետևյալները.

1. Բարբառներում պահպանված են՝ հայերենի հոլովման հիմնական նշանները, որոնցից են սեռական «ի» վերջավորութիւնը, արականի «ի» վերջավորութիւնը և «ն» հոգ ստանալը, բացասականի «ից» կամ «է» վերջավորութիւնը և գործիականի «վ» վերջավորութիւնը. Այդ վերջավորութիւնները օգտագործվում են նաև գոյականների հոգնակի հոլովման մեջ, Գոյականների հոլովական նշաններից մնացածները կարելի է գտնել հեշտութեամբ այս կամ այն բարբառում, ինչպես, օրինակ, հոգնակի սեռական «ց»-ն վանի բարբառում (խոտերաց), հոգնակի ուղղականի և գործիականի «ք»-ն (աղերք, աղջիկերք), հայցականի «ս»-ն (մորուս, բաղնիս), գործիականի «օք» Աքարկիլի բարբառի մեջ (հացօք) և այլն. Այս մասնակի տարբերութիւններն են գտնում միմյանցից բարբառների քերականութիւնը, իսկ հիմնականում բոլոր բարբառների քերականութիւնը հիմքերը նույնն են. Այսպես նաև գերանունների հիմքերը, որոնցից պահպանված են բոլոր բարբառներում ա, դ, ն (էս, էդ, էն, տս, տդ, ան, իսա, իդա, ինա, իսի, իդի, ինի և այլն), ինչպես և գերանունների հոլովման մի հիմնական ցուցանիշը՝ «բ» (բտտուր, բտտրա, իտր, էտր, սփո, ստուր և այլն):

Իսկերի խոնարհումից հայերենի քերականութիւն կառուցվածքի հիմքերը կազմում են ամենից առաջ գեմքի վերջավորութիւնները, որ լինում

<sup>1</sup> Н. Адонц, Дионесий фракийский и армянские толкователи, стр. 224.

են կամ օժանդակ բայերի վրա, կամ բայափերջավորությունների մեջ: Դրանք են՝ մ, ս, մք, ք և ն (էմ, էս, է, էնք, էք, էն, իմ, իս, ի, ինք, իք, ին, ամ, սս, ա, անք, աք, ան, ամ, սս, ս, սնք, սք, սն):

Բայերի կառուցվածքի հիմքերից են նաև անցյալ կատարյալի գեմքի վերջավորությունները՝ ի, իր, ինք, իք, ին, որ բոլոր բարբառներում կան. մեր բայական կառուցվածքի հիմքերից են նաև մեր գերբայները (ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական), որոնք համարյա բոլոր բարբառներում կան կամ ամբողջությամբ և կամ մեկով պակաս:

Մեր բայերի քերականական կառուցվածքի կարևոր հիմքերից է նաև խոնարհման բաղադրյալ կառուցվածքը, անալիտիկ կառուցվածքը, այսինքն՝ գերբայով և օժանդակ բայով ժամանակ կազմելու հատկությունը: Այդ հատկությունն ուներ գրաբարը, թեև նկատվում է, որ այնտեղ այս հատկությունը գործուն օրինաչափություն չէր: Ամեն ինչից երևում է, որ այդ հատկությունը գրաբարի անցյալի գործուն օրինաչափություն էր ավելի վաղ ժամանակներում, քան 5-րդ դարի մեզ ծանոթ գրաբարում: Այդ հատկությունը ուժեղ և շեղումը կերպով առկա է մեր բոլոր բարբառներում և նկատելի է, որ դա գործուն օրինաչափություն է, որը և հիմք է տալիս ընդունելու, որ բարբառներից գլխավորները հայերեն ընդհանուր լեզվից ճշուղավորվել են այն ժամանակ, երբ անալիտիկ սխառմը ընդհանուր լեզվի մեջ գործուն օրինաչափություն էր, այսինքն՝ հայերեն լեզվի նախագրաբարյան վիճակի ժամանակ:

Այսպիսով՝ մեր ընդհանուր լեզվի քերականության բոլոր հիմքերը մեր բարբառները պահպանել են, և դրանք թեպազրում են այն միտքը, թե այդ հիմքերը գալիս են հայերենի նախագրաբարյան փուլից:

Ուրեմն՝ հայերենի լեզվական մասերիսին էլ մեզ ասում է, որ մեր մի քանի հիմնական բարբառները ճշուղավորվել են ընդհանուր լեզվից, նախքան գրաբարյան վիճակը:

Բարբառների զարգացման ամբողջ պրոցեսը եղել է ընդհանուր լեզվին մոտենալու պրոցես. որոշ դարաշրջաններում այդ պրոցեսը կատարվել է ավելի դանդաղ, իսկ միջին դարերի վերջերին այդ պրոցեսն այնքան է արագացել, որ թվում է, թե ընդհանուր լեզուն է մոտենում բարբառներին և ոչ ընդհակառակը: Մոտեցման պրոցեսի պատկերը հայերեն լեզվի համար եղել է խիստ յուրահատուկ. ընդհանուր լեզվի մեջ աղտոտված են այնպիսի տարրեր, որոնք գործուն օրինաչափություն էին բարբառների մեջ, բայց ինքնուր ընդհանուր լեզվի մեջ, գրաբարի մեջ, Դրա լավագույն օրինակը հայերեն լեզվի հարակատար գերբայն է և բայերի կրավորական ձևը: Հայանի է, որ գրաբարը չունի հարակատար գերբայը, ոչ ոք էլ նրա մեջ այդ գերբայը չի ենթադրում, թեև Բուզանդի մոտ այդ գերբայի երկու օրինակը կա: Այդուամենայնիվ հայ լեզվաբանությունը հարակատար գերբայը չի համարել գրաբարի բայական կառուցվածքի կազմակերպման մեջ, Բայց տարօրինակ կերպով ուշադրություն չի նվիրվել այն բանին, որ գրաբար լեզվի մեջ այս գերբայը բավական շատ գործածված է իբրև անկանխելի և հաճախ իբրև գոյական: Օրինակ, գրաբար լեզվի մեջ հանդիպում ենք՝ արարած, կարգած, կազմած, խախտած, բախած, ցաւած, կոտորած ևն. ինչպես ևնք նաև՝ կալուածք, շինուածք, խնդրուածք, կոտորուած, սասցուած, հարուածք, ստեղծուած, հատուած, հարցուած ևն. ինչպես ևն, մինչդեռ գրաբարը հարակատար գերբայ չունի: Որտեղից կարող էր գրաբարը, հարակատար գերբայ չունենալով, այդ գերբայից կազմել գոյականներ, անկանխելի և անկանխելի, որոնք գրաբարի բառային հիմնական ֆունդի մեջ են մտնում: Այդ բառերի բնույթից երևում է, որ դրանք պետք է հին լինեն, ինչպես օրինակ կալուածք ու շինուածք բառերը, որ կազմված են ֆեոդալական հողատիրութայն և շինարարութայն հետ: Պարզ է, որ հարակատար ձևերը հայերենին հասուկ ձևեր են եղել նրա զարգացման նախագրաբարյան փուլում, որոնք անցել են մեր բարբառներին և նրանց մեջ պահպանվել: Գրաբարը այդ հարակատար ձևերը փոխարինել է անցյալ գերբայով, բայց նույն պահպանել է այդ ձևերի նմուշները իր բառային կազմի մեջ: Բարբառների ազդեցությամբ ինքնա վիճակում գտնվող այս բայաձևերը աղտոտված են աստիճանաբար, դառնում են օրինաչափություն ընդհանուր լեզվի մեջ և մնում են իբրև ընդհանուր լեզվի հատկանիշ, իսկ այդպիսի երևույթները, ինչպես կարելի է նկատել, աստիճանական կուտակումով փոխում են լեզվի որակը, որը և կատարվել է մեր ընդհանուր լեզվի հետ: Վերջինս երկրորդ օրինակը:

հանդիպում ենք նաև՝ կալուածք, շինուածք, խնդրուածք, կոտորուած, սասցուած, հարուածք, ստեղծուած, հատուած, հարցուած ևն. ինչպես ևն, մինչդեռ գրաբարը հարակատար գերբայ չունի: Որտեղից կարող էր գրաբարը, հարակատար գերբայ չունենալով, այդ գերբայից կազմել գոյականներ, անկանխելի և անկանխելի, որոնք գրաբարի բառային հիմնական ֆունդի մեջ են մտնում: Այդ բառերի բնույթից երևում է, որ դրանք պետք է հին լինեն, ինչպես օրինակ կալուածք ու շինուածք բառերը, որ կազմված են ֆեոդալական հողատիրութայն և շինարարութայն հետ: Պարզ է, որ հարակատար ձևերը հայերենին հասուկ ձևեր են եղել նրա զարգացման նախագրաբարյան փուլում, որոնք անցել են մեր բարբառներին և նրանց մեջ պահպանվել: Գրաբարը այդ հարակատար ձևերը փոխարինել է անցյալ գերբայով, բայց նույն պահպանել է այդ ձևերի նմուշները իր բառային կազմի մեջ: Բարբառների ազդեցությամբ ինքնա վիճակում գտնվող այս բայաձևերը աղտոտված են աստիճանաբար, դառնում են օրինաչափություն ընդհանուր լեզվի մեջ և մնում են իբրև ընդհանուր լեզվի հատկանիշ, իսկ այդպիսի երևույթները, ինչպես կարելի է նկատել, աստիճանական կուտակումով փոխում են լեզվի որակը, որը և կատարվել է մեր ընդհանուր լեզվի հետ: Վերջինս երկրորդ օրինակը:

Կալուածք, շինուածք, խնդրուածք, հարուածք և նման բառերի մեջ, որոնք գոյական են, նկատվում է գրաբարին օտար և գրաբարի մեջ ինքնուրուր կառուցվածք. դա նախ հարակատար գերբայական կառուցվածքն է, ապա նաև հարակատար գերբայի կրավորական կառուցվածքը, որ արտահայտվում է ու—վ անցումով: Այսպիսով, կալուածք և շինուածք և նման գրաբար բառերի մեջ առկա է մեր աշխարհաբարի կրավորական մասնիկը (ու—վ). Գրաբարի կառուցվածքն ասում է, որ այդ բառերի անանցումը ք—ի, որպես գոյականակերտ անանցի, միջոցով ավելի նոր երևույթ է, քան նրա գերբայական կալուած, շինուած և նման ձևերը, որոնք լեզվի մեջ պետք է ավելի վաղ լինեին, որպեսզի անանցվելով դառնային գոյականներ: Ուրեմն կալուած, շինուած և նման ձևերը ավելի հին կառուցվածքի ձևեր են, քան կալուածք, շինուածք և նման ձևերը, ուրեմն՝ հայերեն լեզվի մեջ հարակատար գերբայի կրավորական կառուցվածքը գոյություն է ունեցել շատ հին ժամանակներից, որոնց գերբայական ֆունդիցիան ընդհանուր լեզվի մեջ մասնացել է, բայց այդ բառերը օգտագործվել են լեզվի կողմից ք անանցի միջոցով գոյականներ կազմելու համար: Բայց կալուած և շինուած ձևերի մեջ առկա է կրավորական մասնիկը, որին գրաբարի քերականությունը ծանոթ չէ և որը գրաբարի քերականության կատարողի չէ, նշանակում է՝ դա ևս հայերեն լեզվի այն հատկանիշներից է, որոնք եղել են նրա մեջ գրաբարից առաջ, և ընդհանուր լեզվի զարգացումը՝ գրաբարի վերածվելու պրոցեսը, այս մասնիկը ոչնչացրել է, իսկ այս մասնիկով կազմած ձևերը պահպանել է իր մեջ ինքնուր վիճակում, անգործուն վիճակում: Սակայն դրանք մեր բարբառների մեջ եղել են շատ հին ժամանակից, ուրեմն՝ բարբառներն այդ ձևը ընդհանուր լեզվից յուրացրել են նախագրաբարյան շրջանում, որը մի նոր ապացույց է, թե մեր հիմնական բարբառները առաջացել են հարակատար գերբայից, ինչպես ևնք նաև՝ կալուածք, շինուածք, խնդրուածք, կոտորուած, սասցուած, հարուածք, ստեղծուած, հատուած, հարցուած ևն. ինչպես ևն, մինչդեռ գրաբարը հարակատար գերբայ չունի: Որտեղից կարող էր գրաբարը, հարակատար գերբայ չունենալով, այդ գերբայից կազմել գոյականներ, անկանխելի և անկանխելի, որոնք գրաբարի բառային հիմնական ֆունդի մեջ են մտնում: Այդ բառերի բնույթից երևում է, որ դրանք պետք է հին լինեն, ինչպես օրինակ կալուածք ու շինուածք բառերը, որ կազմված են ֆեոդալական հողատիրութայն և շինարարութայն հետ: Պարզ է, որ հարակատար ձևերը հայերենին հասուկ ձևեր են եղել նրա զարգացման նախագրաբարյան փուլում, որոնք անցել են մեր բարբառներին և նրանց մեջ պահպանվել: Գրաբարը այդ հարակատար ձևերը փոխարինել է անցյալ գերբայով, բայց նույն պահպանել է այդ ձևերի նմուշները իր բառային կազմի մեջ: Բարբառների ազդեցությամբ ինքնա վիճակում գտնվող այս բայաձևերը աղտոտված են աստիճանաբար, դառնում են օրինաչափություն ընդհանուր լեզվի մեջ և մնում են իբրև ընդհանուր լեզվի հատկանիշ, իսկ այդպիսի երևույթները, ինչպես կարելի է նկատել, աստիճանական կուտակումով փոխում են լեզվի որակը, որը և կատարվել է մեր ընդհանուր լեզվի հետ: Վերջինս երկրորդ օրինակը:



յերեն ընդհանուր լեզվից, նախքան նրա վերածվելը դրաբարի. Հետագայում ընդհանուր լեզվի մեջ նույն բարբառների ազդեցությունը դրաբար լեզվի կրավորական խոնարհումը մահացել է և նախկին կրավորական ու—վ անցյալը դրաբար լեզվի մեջ եղած ինքնա վիճակից վերածվել է գործուն վիճակի, ծավալվել է լեզվի մեջ և դարձել ընդհանուր լեզվի հատկություն, որ մյուս նման հատկանիշների հետ միասին ընդհանուր լեզվին տվել է մի նոր սրակ. Այսպիսով, քերականական ավյալներն էլ ասում են այն մասին, որ հայերեն հիմնական բարբառների կազմավորումը, ընդհանուր լեզվից նրանց ճյուղավորվելը, տեղի է ունեցել նախքան դրաբարի շրջանը:

Այսպիսով, լեզվական փաստերը ևս փայլուն կերպով հիմնավորում են ստալինյան լեզվաբանության այն դրույթը, որ բարբառները համազայակից են եղել ընդհանուր լեզվին դեռ այն ժամանակ, երբ դա ցեղական ընդհանուր լեզու էր:

Գրաբար լեզուն, եղել է (որ վեր է ամեն տեսակ կասկածից) հայ ողջ ժողովրդի համար ընդհանուր և նրա համար հասկանալի. Ստալինյան ուսմունքի համաձայն ընդհանուր լեզվի հետ միասին գոյություն ունեն նաև բարբառները. Այդ բարբառները զրի առնված չեն և դրանց մասին ուղղակի վկայություն չկա. Այն վկայությունները, որ հաճախ վկայակոչում են լեզվաբանները և որ գտնվում են Մ. Մորենացու մաս իսկապես բարբառների մասին չեն խոսում, այլ առանձին լեզուների (Սյունյաց ցեղի, մարերի, գարգարացիների և այլն): Բարբառների գոյություն վկայություն պետք է համարել Մորենացու մեկ ուրիշ արտահայտություն:

Ստեյով Արամի քաջագործությունների մասին, Մորենացին ասում է. «Ես այն հրաման առ ընտանիքս աշխարհին՝ ուսանել զխոսս և զկեզուս հայկական»<sup>1</sup>. «Ս» հոգնակին «խոսս և լեզուս» բառերում Մորենացու վկայություն է բարբառների մասին. Բացի այս, 5-րդ գրքի բոլոր հեղինակների մոտ լեզվական շատ այլ փաստեր կան, որոնք ինքնին վկայում են հայերեն բարբառների գոյություն մասին:

Դրանցից ամենահետաքրքրականը Փավստոս Բուզանդն է.

Վերևում մենք խոսեցինք գերբայական կառուցվածքով գոյականներին առկայություն մասին զբարբառում. Դրանցից մենք Բուզանդի մոտ գտնում ենք իբրև գոյական գործածված հետևյալ բառերը՝ կալուածք (ի կալուածս Դրիգորի հօրն իւրոյ. Բ., 6). խնդրուածք (ազօթիւք և ուժդին խնդրուածովք. Բ. 12), ստացուածք (ցանկութիւն այոց ստացուածոց. Բ., 13) և այլն:

Հարակառար ձևը գտնում ենք նաև գործածված իբրև անական: Օրինակ՝ «Ազիս մի կարգած ի մեջ որմոյն շինուածոյ» (Բ. 5):

«Շինուածոյ» ձևը անական է, որը համաձայնում է նորվով որմոյն ձևի հետ: Նույնն էլ «կարգած» ձևը, որ համաձայնում է ազիս բառին, եթե դա չհամարենք գերբայական լրացում, որ ստացվել է կրճատված ստորագրական նախադասությունից (որ կարգած էր):

Բուզանդի մոտ հարակառար գերբայի իբրև բայական եղանակային ձև

կազմելու բարբառային երևույթի կամ հատկանիշի նշան են երկու հետևյալ օրինակները:

1. «Ազա թագաւորն Արշակ և զիւր զօրոն բաժանելը ընդ երիս և առյր զմի գունդն Վասակայ սպարապետին, և երկրորդ գունդն ի ձեռն Բաղասի եղբօր նորին, որ ի գործ իմաստութեան բախած էր». Բ. 117:

2. «Մինչ դեռ գային ի ճանապարհի, ոչ կարէր Մանուէլն գալ, զի սախիքն ցաւած էր». Բ. 202:

Այս ձևերի առկայությունն, ինչպես արդեն ասել ենք, լավագույն ապացույց է, որ բարբառները գոյություն են ունեցել և նրանց սրտ օրինաչափություններն ընդհանուր լեզվի մեջ գործածական են եղել՝ դուրս էլ գլխոգլի կերպով, բայց հատկանալի և անհրաժեշտ: Այս ձևերի մեջ երևում են այն հիմնական երկու օրինաչափությունները, որոնցով գրաբարը բարբառներից և աշխարհաբարից տարբերվում է. դրանցից մեկը, ինչպես ասացինք, հարակառար գերբայի կառուցության է, իսկ մյուսը, որ շատ ավելի կարևոր է, քան առաջինը, բայց աշխարհաբար և բարբառային կրավորական կառուցության է:

Բարբառների գոյություն ապացույցն է նաև բարբառների, որ և աշխարհաբարի, «ևր» հոգնակի գործածությունը (ի բաներոյն... գամենայն շէնս վաներաւ. Բ. 228): Նույն էր հոգնակին գտնում ենք ավելի հաճախ Ղազար Փարպեցու մոտ (հարկեր, հայեր և այլն):

Աշխարհաբարի կամ բարբառների ազդեցություն նշան է նաև հոգնակի հայցական և ուղղական նորմալներ շփոթը. «Յի շատ ցաւեցոյց՝ զմէջք փափոկ օրիւրդին». փոխ. զմէջս և այլն:

Սրտը կապեր կամ՝ աշխարհաբար լեզվի ու բարբառների հետադրություններ գործածված են նույնպես իբրև հետադրություններ. Օրինակ՝ «Ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ», Բ., 59.

«Նիսս ի խրճան խոտոյ ի վերայ», Բ., 106.

«Ի մեծի վաստակոց իմոց ի վերայ», Բ., 114.

«Ոչ րողին բնավ բար ի բարի վերայ», Բ., 156. աշխ.՝ «չթողին բնավ բարը քարի վրա»:

Նաև բոսր գործածված է իբրև միասին, որ բարբառային կամ աշխարհաբարի հատկությունն է: «Փութանակի դնաց զնեա կոչելեացն թղթին». Բ., 63... «Կեսարեաւ հեռ՝ և տասն քաղաք մեր լեալ է». Բ., 190. գործածվել է նաև «ու» շարկապը. այլուծի և այլն:

Ինչպես Բուզանդի մոտ, այնպես էլ Աստվածաշնչի մեջ, գրաբարի ներկայի և անցյալ անկառարի ձևերը գործածված են պայմանականի կամ բղձականի իմաստով. օրինակ՝ «Իրատաջիր, զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ամէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ». Բ. 145 և այլն:

Մենք դիտավորյալ կերպով մանրամասնություններ վերլուծեցինք Բուզանդի երկը, որովհետև Բուզանդի լեզուն համարվում է լավագույն լեզուներից մեկը և, ինչպես ասեանք, այդ լեզվի կառուցվածքը լի է աշխարհաբարով, այսինքն բարբառային այն տարրերով, որոնք հետագայում դարձան աշխարհաբարի օրինաչափ հատկությունները. նկատելի է մի բան, որ երբ

<sup>1</sup> Մ. Մորենացի, Պատմութիւն հայոց, Գրքը Ա., Գլ. ԺԳ:

բարբառները ազդել են ընդհանուր լեզվի վրա, սովորաբար ընդհանուր լեզվի մեջ ընկալվել են այնպիսի տարրեր, որոնք մասնակի բարբառային չեն, այլ ընդհանուր բարբառային, և որոնք կապվել են ընդհանուր լեզվի՝ գրաբարի քերականություն հիմքերի հետ:

Բարբառային լեզվի զգալի քանակություն մաստեր ունի նաև Ղազար Փարպեցին, որի լեզվի մեջ Փարբիի բարբառը երևում է համարյա իր ողջ արվագծով: Ահա մի շարք կապակցություններ, որոնք համարյա ոչնչով չեն տարբերվում այսօրվա փարպեցու բարբառից. «Այնքան կոյր չեմ» (Փ., 117. «...դու էիր իշխան և գլուխ»... Փ. 84. «...Չմտացաւ և սաստածային տեսութիւն», 41 «...գրով և կնքով խոստացար տալ մեզ», 170. «...օտար մարզպանն որ երթայ», 177 «...զլաւ և զվատութիւն չլիակ ընարել...» և այլն:

Այսպես նաև այլ հեղինակների մոտ մինչև Հովհան Մամիկոնյանը: Բայց Հովհան Մամիկոնյանի ժամանակակից Ստեփանոս Սյունեցին (8-րդ դար) արդեն բացարձակ կերպով վկայում է բարբառների գոյություն մասին: Նա ասում է հետևյալը:

«Իսկ երբորդ մասն ասէ զեզուն և զհնազէտ պատմութիւնն. արդ լեզուս ասէ որ շուրջ զքե սահմանակից աշխարհք իցեն. գիտութիւն լեզուաց նոցա, վասնզի կարի ազտակարք են առ ստուգաբանութիւն»:

Եվ դարձյալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառս զեզերականս որպես զԿորնայն և զՏայեցիկն և զԽուրայիկն և զՉորրորդ Հայեցիկն և զՍպերացիկն և զՍյունիկն և զԱրցախայիկն. այլ մի միայն գմիջերկրեայն և զսոսանիկան վասն զի պիտանիք այսոքիք են ի տաղաչափութեան, այլև ազտակարք ի պատմութիւննս, զի մի վրիպեսցի անընդել զօլով լեզուացն»:

Այս հատվածում Քերականը «բառք եզերականք» ասելով հասկանում է երկրի ծայրամասերում ընկած բարբառները, որոնք համեմատաբար հասկանալի են: Այդ բարբառների անունները մեզ թելադրում են, թե որոնք են դրանք: Այսպես՝ Կորնայք կարելի է կապել Մոկաց բարբառի հետ, Տայոց բարբառը այժմյան Արգվինի բարբառի նախնին է կղել, Խուրայի բարբառը սասունցիների խոսվածքն է, Սպերի բարբառն այժմ Կարնոյ բարբառ ենք կոչում, Չորրորդ Հայքի բարբառը Մալաթիայի բարբառն է, իսկ Սյունիքի և Արցախի բարբառները այժմյան Ղարաբաղի բարբառն են: Այս բարբառները թվելիս հեղինակը գիտավորյալ կերպով իրար կողքի դասում է աշխարհագրորեն հակադիր և իրարից հեռու գտնվող բարբառները (Կորնայք—Տայք, Սպեր—Մուլթ, Չորրորդ Հայք—Սյունիք և Արցախ): Հեղինակը բարբառների երկու տեսակ է նշում՝ կերական բարբառներ և միջերկրյա բարբառներ, առաջիններն իբրև խիստ անհասկանալի, իսկ երկրորդները ավելի միմյանց հասկանալի: Բացի այս, նշում է նաև կենարանների խոսակցության լեզուն, որ, հասկանալի է, պետք է լինի այդ ժամանակվա ընդհանուր լեզուն:

Ստեփանոս Սյունեցու այս վկայությունը ոչ մի կասկած չի թողնում, որ այդ դարում բարբառներ կային, իսկ նրա այդ բաժանումը երկու ասիպի՝ 8-րդ դարի համար հասկանալի է, որովհետև բարբառները, որոնք

անընդհատ ձգտում էին ազայվելու ընդհանուր լեզվի մեջ, դեռ բավականաչափ մեծ տարբերություններ ունեին ընդհանուր լեզվից, հատկապես երկրի ծայրամասերում գտնված բարբառները: Փորձում են կասկածի առի դնել Ստեփանոս Սյունեցու վկայությունը կերական բարբառների մասին, ենթադրելով, թե դրանք ոչ թե բարբառներ են, այլ անկախ լեզուներ: Բայց Սյունեցին ուղղակի ասում է, որ դրանք հայերենի բարբառներ են իր հետևյալ կապակցությամբ. «Դքոյ լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեզերականս»:

Այս կապակցության մեջ «զբովանդակ զբառսն զեզերականս» կապակցությունը դրված է հայցական հարված. «Զբովանդակ» և «զեզերականս» բառերը «զբառսն» բառի սրռչիչներն են և այդ դ-ն ստանում են իրենց սրռչյալի (զբառսն) հետ համաձայնելու պատճառով, ինչպես գրաբարի օրենքն է: «Զբովանդակ» սրռչիչը նախադաս է և գրաբարի օրենքով չի համաձայնում իր սրռչյալին հարված և թվով, իսկ «զեզերականս» սրռչիչը կտադաս է, ուստի և համաձայնում է թվով և հարված: Այս հայցական կապակցությունն ունի «զքոյ լեզուիդ» հատկացյալը, որի զ նախդիրը նույնպես համաձայնեցնում է հայցականը իր հատկացյալի հետ: Նշանակում է՝ «գիտելն» բայը, որի ուղիղ խնդիրն է հայցական կապակցությունը, ընկել է հատկացուցչի և հատկացյալի միջև, ուստի պետք է հանել և գնել «զքո լեզուիդ» կապակցությունից առաջ: Այն ժամանակ կատանանք ավելի հասկանալի ոճ. «Եւ զարձայլ գիտելն զքոյ լեզուիդ զբովանդակ զբառսն՝ զեզերականս», որ կնշանակի՝ «և զարձայլ քո լեզվի այդ ամբողջ կերական բարբառները գիտենայլ...»: Ստացվում է, որ Սյունեցին ուղղակի դրանք կոչում է հայերեն լեզվի կերական բարբառներ (քո լեզուիդ...): Պարզ է, որ կասկած չի մնում, թե Սյունեցին դրանք գիտակցել է որպես հայերեն լեզվի բարբառներ, ճիշտ է, մթին և դժվար հասկանալի, բայց հայերեն լեզվի բարբառներ: Այսօր էլ «եզերական» բարբառներից շատերը մթին ու անհասկանալի են. օրինակ հայերենի նվագ հասկանալի բարբառներ կարելի է համարել Համշենի, Զեյթունի, Քեսարի, Բեյլանի, Սյուրիայի, Սվիդիայի, Մալաթիայի, Ազուլիսի Մեղրու, Կարնեանի և Սյունիքի բարբառները:

Մինչդեռ ավելի հասկանալի են Արարատյան, Կարնո, Մշո և այլ բարբառները, որոնք կղել են միջերկրյա բարբառներ, նշանակում է, թե բարբառների աշխարհագրական դասավորությունը որոշում է նրանց հասկանալի լինելու չափը, որովհետև որքան երկրի կենտրոններին ավելի մոտ են բարբառները, այնքան նրանք ավելի արագ և մեծ չափով են «ազայվում» ընդհանուր լեզվի մեջ, նմանվում են ընդհանուր լեզվին, բայց միաժամանակ դրանք էլ ավելի շատ են ազդում ընդհանուր լեզվի վրա, նրան հաճախ հաղորդում իրենց օրինաչափությունները:

Սյունեցու ժամանակակից Տարնացին իր լեզվի մեջ արտացոլել է աշխարհաբարի տարրերը զգալի չափով և երևում է, որ Տարնացու բանավոր լեզուն, որը կղել է ընդհանուր լեզու, բավական հեռացած է գրաբարից, այսինքն՝ գրաբար լեզվի մի շարք կարևոր օրինաչափություններ փոխորինված են բարբառների համար ընդհանուր հանդիսացող օրինաչա-

1 Բառք բարբառս կայ բարբառագիտութիւնն—Յ

փություններով: Այսպես, Տարնացու մտ գանում ենք հարակառար և վաղակառար դերբայների տարբերակումը, վաղակառար դերբայի աշխարհաբար գործածությունը, բայերի ներկա և անցյալ անկառար ժամանակների գործածությունն իբրև ըզձականի և պայմանականի ձևեր, հայցակառար գործածությունն իբրև ուղղական և ուղղականի գործածությունն իբրև հայցական հոգնակիում, նախադասության աշխարհաբար շարքասություն և այլն, և այլն: Այդ բոլորը վկայում են, որ բանավոր ընդհանուր լեզուն հակառական քայլերով առաջ էր գնացել դեպի աշխարհաբարացում: Այդ պրոցեսը անդի էր ունեցել բարբառների ուժեղ ազդեցությունը (հատկապես կենարոնական բարբառները՝ Արարատյան և այլն), բարբառների անընդհատ աննշով՝ համաձուլվելու ընդհանուր լեզվին, այսինքն՝ հասարակական պահանջով միասնական դարձնելու անային և հասարակական խոսվածքը, տեղական և ընդհանուր խոսվածքը:

Ինչպես վերը նշեցինք, արդեն 7-րդ դարի Անանուս մեկնիչը, իբրև լեզվական փաստ մեր բարբառների գոյություն, վկայում է, թե հայերեն բարբառները երեք տեսակ են՝ փոխում պայթեական բաղաձայնները՝ բ, պ, փ: «Այլ էր իսկ ճշմարտագույն և ի տեսակի խոսքիցն, սրգէս բազուկ, պազուկ, փազուկ»:<sup>1</sup>

Բարբառագիրությունն այդ ժամանակ գոյություն չունի, ուստի նեղինակը չէր կարող գիտական տերմիններով որևէ բան հազորել մեզ հայ բարբառների մասին, այդ պատճառով էլ ընտրում է բնորոշ հատկանիշները մեկը՝ պայթեական բաղաձայնների խոսքումն ու շնչեղ խոսքումը: Այժմ էլ մեր բարբառները պայթեական բաղաձայնների երեք տեսակ արտասանություն ունեն: Միևնույն բ, պ, ձ, ջ, գ գանազան բարբառներում արտասանվում են՝ կամ այնպես, ինչպես ընդհանուր լեզվի մեջ (բերան, դուռ, ձուր, դամ՝ Արզվին, Թբիլիսի, Ազուլիս, Մեղրի, նաև երևան, կարին, Մուշ, Համշեն, Տրապիզոն, Պոլիս և այլն: երևանի, Մշո, Կարնո և Զուղայի ձայնեղների շնչեղացումը 7-րդ դարի նեղինակը չէր կարող նկատել և կնույնացնել ձայնեղների նեա), կամ արտասանում են խուլ՝ պ, ա, ձ, ք, կ (պերան, տուռ, ձուր, ձուր, կ'ամ, կամ՝ Ղարբաղ, վան, Մոկ, Ուրմիա, Շամախի, Աստրախան, Հազրութ, Սոյ, Մարաղա, այսինքն՝ բոլոր արևելյան բարբառները), կամ արտասանվում են բոլորը շնչեղ խուլ՝ պ, փ, բ, ց, Ն ք (փերան, թուռ, ցուր, չուր, քարուն՝ Տիգրանակերտ, Մաթի, Սոգոթո, Նիկոմիդիա): Ինչպես տեսնում ենք, 7-րդ դարի նեղինակ Քերականի վկայությունը տառացի գուրագրիցում է մեր բարբառների սխառմին և չի կարող լինել պատահական:

Այսպիսով, հայերենի բարբառների գոյությունը գրաբարի՝ որպես ընդհանուր լեզվի, գոյությունն ամբողջ ժամանակաշրջանում միանգամայն պետք է համարել ապացուցված և կասկածից վեր:

Ստալինյան ուսմունքի այն դրույթը, թե բարբառները համագոյակից են ընդհանուր լեզվին, վերաբերում են բոլոր լեզուներին, նույնպես և հայերենին, և հայերենի բարբառները գոյությունը մի գարմանակի իլյուստրացիա է այս դրույթի համար: Ստալինյան լեզվաբանական ուսմունքն ասում է, «Բարբառները ու ժարգոնների առկայությունը չի մխտամ, այլ հաստատում է համաձուլվողական լեզվի առկայությունը, որի ճյուղավորումներն են հանդիսանում և որին ենթակա են դրանք»:<sup>2</sup>

Ստալինյան լեզվաբանական ուսմունքի համաձայն, երբ ընդհանուր լեզուն և բարբառներն իրար համագոյակից են, ապա բարբառներն անընդհատ ձգտում են միանալու ընդհանուր լեզվին, ազդեցվելու նրա հետ, Հասկանալի է, որ բարբառների մի զգալի մասը ընդհանուր լեզվից անցյալներում ավելի մեծ տարբերություն է ունեցել, ուրեմն նրանք հնում ավելի միջին ու ավելի անհասկանալի են եղել, Իբրև բարբառ նրանք անցյալում ավելի շեշտված գծերով են հանդես եկել, քան ընդհանուր լեզուն, հետևաբար, եթե մեր բարբառները V—X դարերում շեշտված կերպով գոյություն են ունեցել, նրանք ավելի շեշտված եղած պիտի լինեին V դարից էլ ավելի առաջ, հասկանալի է մնում այլևս, որ մեր հիմնական բարբառների մի մասի գոյությունը վիճելի չէ ոչ միայն գրաբարի հայերեն ընդհանուր լեզու լինելու ժամանակամիջոցում, այլ հենց այն ժամանակ, երբ դեռ գրաբար լեզվի վիճակը չէր ձևավորվել, այսինքն՝ հայերեն ընդհանուր լեզուն գրաբարին նախորդող մի վիճակ էր ներկայացնում: Իրա ապացույցն հենց այն է, որ մեր բարբառները գրաբարի հետ ընդհանուր գծեր ունեն ոչ միայն նրա սպեցիֆիկ որոշ առանձնահատկություններն ունենալով, այլ նաև այն, ինչ որ հայերեն լեզվի սպեցիֆիկան է ընդհանրապես:

Իրաբարի լեզվի որոշ սպեցիֆիկ գծերն էլ կամ չկան բարբառներում (ներքին և արտաքին թեքում) և կամ եթե կան, ապա դրանք էպիզոդիկ բնույթ ունեն (ինչպես՝ «զ» նախդիրի գործածությունը հայցականի հետ, բայական գանազան ձևեր, խոնարհման գանազան ձևեր և այլն): Նշանակում է, թե բարբառների մի զգալի մասը հայերեն ընդհանուր լեզվից ճյուղավորվել են այն ժամանակ, երբ նա վերջնականապես ձևավորված գրաբարի լրիվ պատկերը չունի, հետագայում գրաբար լեզվից բարբառները յուրացրել են քերականական գանազան կատեգորիաների իրողություններ՝ մերելով իրենց քերականական կառուցվածքի մեջ: Ընդունելով ընդհանուր հայերեն լեզվի բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքի հիմքերը, բարբառները մշակել են իրենց սեփական քերականությունը, հայերեն լեզվի քերականության ընդհանուր հիմունքներով, բայց որոշ տարբերիչ գծերով: Նկատելի է, որ բարբառների մի շարք հատկանիշներ, որ առաջացած են ընդհանուր լեզվի քերականական հիմունքի վրա, ընդհանուր են բոլոր բարբառներին: Այդ հատկանիշները ամենակայուն հատկանիշներն են և գրանք անցնում են ընդհանուր լեզվին, մինչդեռ բարբառների մասնակի հատկանիշները, ինչպես և գրաբարի սպեցիֆիկ հատկանիշները, մահացել են և գրաբարից հետո առաջացած ընդհանուր լեզվի մեջ առնվել են իբրև մեռյալ, անակախիվ ձևեր, հաճախ միայն լեքսիկական արժեքով:

X դարից հետո բարբառների գոյությունն այլևս կասկածի ենթարկված չէ: Առաջին Մարտիգը և լեզվաբանության հարցերը էջ 43, 1952 թ.

<sup>1</sup> Н. Адонц, Дионисий фракийский и армянские толкователи, стр. 149.

<sup>2</sup> Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 43, 1952 թ.

Թակա չէ, ուստի և ազացույցի հարկ չկա: Հարկ կա սակայն մշակելու բարբառների և ընդհանուր լեզվի փոխարարերութեան պատմութիւնը: X դարից հետո մինչև մեր օրերը: Սակայն սա ավելի շատ պատմական քերականութեան հետ կապված թեմա է, ուստի մենք դուրս ենք թողնում այս աշխատութիւնից:

6. ՀԱՅ ԲԱՐՐԱՌՆԵՐԻ ՔՈՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Պրոֆ. Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտութիւն» աշխատութիւնը երևան քերէց հայերենի 31 բարբառ: Մինչև այդ գրքի երևան գալը (1911 թ.) այդքան բարբառներ ոչ ոքի հայտնի չէին:

Դրանից հետո մի շարք հեղինակներ, և առաջին հերթին Հ. Աճառյանը, հայտնաբերեցին մի քանի նոր բարբառներ, և մենք 30-ական թվականների վերջին արդէն ծանոթ էինք հայերենի շուրջ քառասուն բարբառներին:

Բարբառագիտական աշխատանքները կանգ չեն առել, շարունակվել և շարունակվում են: Այժմ արդեն հայտնի է, որ հայերեն բարբառների քանակը որոշելու համար անհրաժեշտ է որոնումներն ու ուսումնասիրութիւնները շարունակել:

Որքան մեզ է թվում, անձանթ բարբառներ դեռ շատ ունենք: Նույնիսկ այն բարբառները, որոնք ճանաչվում են իբրև բարբառ, շատ հատկութիւններով մեզ հայտնի չեն: օրինակ՝ դեռ մեզ համար պարզ չէ, թե ինչ պատկեր ունի Ամասիայի, Սոտրջուրի, Զմյուռնիայի և այլ շատ բարբառներ:

Այս տարի երևան եկան մի շարք նոր բարբառներ: Այսպես, պարզվեց, որ գոյութիւն է ունեցել Ղարաղաղի բարբառ իր գարմանայի և հետաքրքրական հատկութիւններով, ապա նաև՝ Դգմարի բարբառը նույն Ղարաղաղում, Քեյվանի բարբառը նույն Ղարաղաղում, Քեւարի բարբառը Անտիոքի շրջանում և այլն:

Այդ դեռ բոլորը չէ: Պրոֆ. Հ. Աճառյանի «Բարբառագիտութիւն» աշխատութեան մեջ ծանոթութեան կարգով նշված են մի շարք ենթաբարբառներ և կամ՝ բերված են նմուշներ գանազան ճյուղերի խոսվածքներից և զետեղված առանձին բարբառների տակ իբրև խոսվածքներ: Կասկած չկա, որ եթե ուշիուշով ուսումնասիրենք այդ խոսվածքները, կամ ավելի նշույթ ունենանք այդ խոսվածքներից, կարող կլինենք վրանցից մի քանիսն անջատել որպես անկախ բարբառներ:

Մինչև այժմ բարբառագիտութեան մեջ սահմանված չեն որոշակի նորմաներ հայերեն բարբառն ու ենթաբարբառը միմյանցից տարբերելու համար: Բարբառի որոշակի հասկացութիւն շատերի մոտ գեռ չկա: Պրոֆ. Հ. Աճառյանի գրքում զետեղված շուրջ 120 ենթաբարբառների նմուշները անգնահատելի պնձ են, առաջնորդող մի թել, որով կարելի կլինի այդ ենթաբարբառների ուսումնասիրութիւնը ընդարձակել և նրանց էութիւնը պարզել:

Հ. Աճառյանի մոտ ենթաբարբառ կոչված շատ խոսվածքներ կարելի է, առանց գիտութեան գեմ մեղանչելու, առանձնացնել որպես անկախ բարբառներ:

Սակայն բարբառ որոշելու հիմունքները չեն կարող միատեսակ լինել բոլոր լեզուների համար: Որոշ լեզուների բարբառներ միմյանցից տարբերվում են արտասանական առանձնահատկություններով: Կան լեզուներ, որոնց բարբառները միմյանցից տարբերվում են քերականական կառուցվածքի տարբերով: Ուստի բարբառների նորմաները որոշելու հարցը ամեն գեղարվեստ պետք է առնվի կոնկրետ կերպով:

Յուրաքանչյուր բարբառ, ինչպես սովորեցնում է ընկեր Ստալինը, պետք է գիտել որպես ընդհանուր լեզվի ճյուղավորում, որի հետևանքով, բնական է, նա ունի իր քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը: Ուստի ամեն մի բարբառի այս կամ այն ձևական կամ հնչյունական երևույթը պետք է կապել ընդհանուր լեզվի համապատասխան երևույթների հետ: Հատկապես բարբառների սահմանումը տալու ժամանակ բարբառների լեզվական երևույթների հարցը քննելու համար պետք է առնել միայն օրինակաբան երևույթները, մի կողմ թողնելով էպիգրոֆիկ երևույթները, եթե այդ էպիգրոֆիկ երևույթները միասին վերցրած բարբառին չեն տալիս մի առանձին երանգ:

Հայերեն լեզվի բարբառները շատ են, սակայն բարբառների մեջ եղած տարբերությունները հաճախ նվազում են բարբառից բարբառ, հաճախ էլ ավելանում: Ամեն մի բարբառին պատկանող տեղական խոսվածքները նույնպես խոշոր տարբերություններ ունեն միմյանցից, այնպես որ կարելի է ասել՝ որքան գյուղ, այնքան խոսվածք: Այսպես օրինակ, Ղարաբաղի բարբառ ընդհանուր առաջում մենք կոչում ենք անդական այն բոլոր խոսվածքները, որոնք կան Լեռնային Ղարաբաղի մեծ մասում, Զանգեզուրում, Կապանում, Աղբրեջանի տերիտորիայի վրա գտնվող հայկական բազմաթիվ գյուղերում: Սակայն եթե մոտիկից ծանոթանանք գրանց, կնկատենք, որ ամեն մի գյուղ ունի մի օրեւէ տարբերություն մյուսից, երբեմն այդ տարբերությունն ավելի է լինում, երբեմն պակաս: Գժվար թե գրունդեն տարբեր շրջաններից իրար հանդիպած երկու զարաբաղցիներ, որոնք լեզվի բոլոր հարցերում իրար հետ համաձայն լինեն: Իհարկե, յուրաքանչյուրն իր բարբառն է համարում Ղարաբաղի բարբառ, իսկ մյուսինը համարում սխալ, աղավաղյալ: Այսպես՝ արտասանության, երբեմն նույնիսկ ձևաբանական և բառային կազմի մեջ տարբերություններ կան Ստեփանակերտի, Մարտունու, Մարզակերտի և Շուշիա շրջանների գյուղերի խոսվածքների միջև: Այդպես է նաև Զանգեզուրում: Տարբեր են նաև Աղբրեջանական Ռեսպուբլիկայում գտնվող Ղարաբաղի բարբառի այն օայնաների խոսվածքները, որտեղ Ղարաբաղից գաղթած հայկական գյուղեր կան: Նույնանման տարբերություններ կարելի է գտնել Արարատյան բարբառում: Միևնույն Արարատյան բարբառին պատկանող Աշտարակի և Փարպու խոսվածքների միջև տարբերություններ կան: Ավելի ևս տարբեր են Աշտարակի և Էջմիածնի խոսվածքները, Էջմիածնի և Քանաքեռի խոսվածքները, այդ բոլորի և Լոռվա խոսվածքը և այլն:

Այդ տարբերությունները կարող են լինել ճյուղավորման պրոցեսի հետևանքով, բայց կարող են լինել հետևանք միաձուլման պրոցեսի, երբ բարբառների հին և մեծ տարբերություններն այնքան են վերացել, որ

մնացել են միայն հազիվ նկատելիները: Այսպես է դրուժույնը նույնիսկ միևնույն ենթաբարբառին պատկանող գանազան գյուղերի խոսվածքների մեջ: Այսպես, օրինակ, Շամշաղինի շրջանի գյուղերի խոսվածքներն ունեն միմյանց նման մի շարք գծեր, որ նրանց դարձնում են Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ, բայց նրանք իրենց մեջ ունեն նաև նկատելի տարբերություններ, այնպես որ համարյա ամեն գյուղ օրեւէ բանավ տարբերվում է իր հարևաններից: Մյուս կողմից խոսվածքները երբեմն անցումնային բնույթ ունեն մի բարբառից մյուս բարբառը: Գիլիջանի, Շամշաղինի խոսվածքները կազմում են անցումնային օղակ Արարատյան բարբառից գեղի Ղարաբաղի բարբառը, Ախտալի շրջանի խոսվածքները կազմում են նույնպես անցումնային օղակ Արարատյան բարբառից գեղի Բայազետի ենթաբարբառը, իսկ ինքը Բայազետի ենթաբարբառը հանդիսանում է անցումնային օղակ Արարատյան բարբառից գեղի Մշո բարբառը: Այսպիսով, գժվար է լինում կատեգորիկ կերպով սահմանադեղ օրեւէ բարբառ մեկ ուրիշից: Հատկապես թյուրիմացություն մեջ են գցում այնպիսի խոսվածքներ, որոնք հանդիսանում են միջին օղակներ: Կարող է պատահել, որ երկու բարբառների անցման օղակ հանդիսացող մի խոսվածք հավասար չափով համատեղի երկու տարբեր բարբառների որոշող հատկանիշները և ինքը գրանավ կազմի մի առանձնահատուկ և անկախ բարբառ, ինչպիսին է Թավրիզ-մոզղոնյան խոսվածքը, որը համատեղում է իր մեջ և՛ Երևանի բարբառի հատկությունները, և՛ «Լ» ճյուղի բարբառների մի շարք հատկությունները:

Եղել են առաջարկներ այդպիսի բարբառը կոչել միջբարբառ, որ, իմ կարծիքով, հաջող առաջարկ է, արժանի ուշադրության և ուսումնասիրության: Սակայն կարևոր հարց է նաև այն, թե ինչպես որոշել բարբառի նորման, այսինքն՝ ինչպես որոշել, թե տվյալ խոսվածքը բարբառ է, թե ենթաբարբառ:

Մինչև հիմա ոչ ոք փորձ չի կատարել այդ անելու:

Որպես բարբառի տարբերիչ հատկանիշ կարելի է վերցնել խոսվածքի և՛ ձևաբանական, և՛ հնչյունաբանական երևույթները: Եթե այդ երևույթները երկրորդական բնույթ ունեն, խոսվածքին մի առանձին երանգ չեն տալիս, այդ գեղարվեստ խոսվածքն անկախ բարբառ չի կարելի համարել: օրինակ՝ Քանաքեռի խոսվածքը, որ պատկանում է Արարատյան բարբառին, ձայնեղները խոչընդոտում է, մյուս բոլոր հնչյուններով մնում է հարազատ Արարատյան բարբառին: Այդ ուղղությամբ Քանաքեռի խոսվածքը չի կարող դիմել որպես անկախ բարբառ: Որեւէ խոսվածք անկախ բարբառ համարվելու համար պետք է ավելի յուրջ տարբերություններ ունենա, ավելի ճիշտ՝ պետք է տարբերությունների մի ամբողջ կոմպլեքս ունենա: Միայն մի գեղարվեստ կարելի է բացառություն անել, երբ բարբառի ճյուղային հատկանիշը տարբեր է և՛ տարբերում է նրան իր նման ուրիշ խոսվածքներից: Օրինակ՝ Սայմաստի և Սոչի խոսվածքները բոլոր գեղարվեստ համարյա միմյանց նման են, բայց մի էական հատկությամբ նրանք միմյանցից տարբեր են՝ Սայմաստի անկատար գերբայ կազմում է «ս» վերջավորությամբ, իսկ Սոչը անկատար գերբայ է կազմում «լ»

վերջավորությամբ (Սալմաստ՝ կիրեն եմ, Սոյ՝ կիրել եմ)<sup>1</sup>։ Այդ էական հատկությունը բավական է, որպեսզի դրանք համարվեն տարբեր բարբառներ, որովհետև դրանք ոչ միայն տարբեր բարբառներ են, այլ նաև պատկանում են տարբեր ճյուղերի։ Այդպես է նաև Հաղբութի և Ղարաբաղի բարբառները։ Իրանց միջև եղած էական տարբերությունն այն է, որ Հաղբութի բարբառը ներկան կազմում է «ա» վերջավորություն ունեցող դերբայով, իսկ Ղարաբաղի բարբառը ներկան կազմում է «ու» վերջավորություն ունեցող դերբայով (Հաղբութ՝ մնաս ըմ, Ղարաբաղ՝ մընըմ ըմ)։ Մյուս բոլոր հատկանիշներով այդ երկու բարբառները նման են, եթե նկատի չառնենք մի քանի երկրորդական տարբերություններ, որոնք խոսվածքային տարբերություն են հանդիսանում։ Պարզ է, որ դրանցից յուրաքանչյուրը, տարբեր ճյուղի պատկանելով, պետք է տարբեր բարբառ համարվի։

Սակայն միևնույն ճյուղին պատկանող խոսվածքներն իրրև առանձին բարբառներ դիտելու համար պետք է առնել միանգամայն այլ հատկանիշներ, պետք է գտնել տարբերիչ գծերի կոմպլեքս։ Մեկ տարբերիչ գիծը չի կարող խոսվածքն առանձին բարբառ համարելու հիմք առնել։ Որպեսզի կարողանանք որոշել, թե ինչ հատկանիշներ կարող են հիմք դառնալ խոսվածքը բարբառ համարելու, որոշենք, թե մեզ հայանի բարբառները ինչ հիմնական գծերով են միմյանցից տարբեր։

Միևնույն ճյուղին պատկանող բարբառները միմյանցից տարբեր են լինում հետևյալ հատկանիշներով.

1. Հոգնակի հոլովումներով, օրինակ՝ Թրիլիսիի և Արարատյան բարբառները, որոնցից առաջինը պատկանում է «ու» հոլովման, երկրորդը «ի» հոլովման (Արարատյան՝ սարէրի, Թրիլիսի՝ սարէրու)։
2. Բացառական հոլովաձևով, օրինակ՝ Ղարաբաղի բարբառը, որը բացառականում ունենում է «ան» վերջավորություն, և Արարատյան բարբառը, որ բացառականում ունենում է «ից» վերջավորություն (Ղարաբաղ՝ անդաան, Արարատյան՝ դաշտից)։
3. Արևի հոլովի բացակայությամբ կամ ավելի ունենալով, ինչպես, օրինակ, Աւրմիայի բարբառը, որը ներգոյական հոլով չունի, և Հաղբութի բարբառը, որ ներգոյական հոլով ունի, թեև երկուսն էլ պատկանում են միևնույն ճյուղին։
4. Բազմաձայնական ամբողջ սխառմի տարբերությամբ (տես՝ «Հնչյունական դասակարգումը»), ինչպես, օրինակ, Պոլսի բարբառը, որ պատկանում է երկրորդ տեղադարձի առաջին ենթախմբին, այսինքն՝ ունի ձայնեղ և շնչեղ խուլ բաղաձայններ, Մոզսի բարբառը, որը պատկանում է տեղադարձ տեղափոխության, թեև նույնպես ունի ձայնեղ և շնչեղ խուլ հնչյուններ։ Իրանք պատկանում են միևնույն ճյուղին։
5. Ձայնավորների սխառմի տարբերությամբ, այսինքն վերին բարձրություն ձայնավորների ունենալով կամ չունենալով, ինչպես, օրինակ,

<sup>1</sup> Սալմաստի և Սոյի բարբառների տարբեր ճյուղերի պատկանելն ապացույց է, որ «Ս» ճյուղը տարածված է եղել ամբողջ Առաջատականում մինչև Հեր գագաթը, որտեղ ենթարկվելով «է» ճյուղի բարբառներին՝ ավել է Սալմաստի խոսվածքը։

Արարատյան բարբառը, որը փափուկ ձայնավորներ չունի, և Ղարաբաղի բարբառը, որ հարուստ է այդպիսի ձայնավորներով։ Երկուսն էլ պատկանում են «Ու» ճյուղին։

6. Օժանդակ բայի ներկայի ձևերի տարբերությամբ, ինչպես, օրինակ, Արարատյան բարբառը, որի օժանդակ բայի արմատն ունի «է» ձևը, իսկ երրորդ դեմքում՝ «ա» ձևը և Նոր-Ջուղայի բարբառը, որի օժանդակ բայն ունի ամեն դեպքում «ա» (Արարատյան՝ եմ, ես, ա, եմք, եք, եմ. Նոր-Ջուղա՝ ամ, աւ, ա, ամք, ար, ամ)։ Երկուսն էլ պատկանում են միևնույն ճյուղին։

7. Օժանդակ բայի անցյալի ձևերով, ըստ որում մեկ բարբառ այդ ձևն ունի, մեկ ուրիշ բարբառ այդ ձևը չունի, ինչպես, օրինակ, Արարատյան բարբառը, որն ունի օժանդակ բայի անցյալի ձևերը, և Ագուլիսի բարբառը, որն օժանդակ բայի անցյալի ձևերը չունի և անցյալի ձևերը կազմում է «նէլ» ամփոփոխ բառ-մասնիկով, որ ավելանում է օժանդակ բայի ներկայով կազմված ձևերի վրա (Արարատյան՝ թակըմ եմ, թակըմ ի. Ագուլիս՝ թակամ ըմ, թակամ ըմ նէլ)։ Երկուսն էլ պատկանում են «Ու» ճյուղին։

8. Ապառնի կազմությամբ, ինչպես, օրինակ, Շամախու և Ղարաբաղի բարբառները, որոնցից առաջինը ապառնին կազմում է «ալու», «էլու» վերջավորություն ունեցող դերբայով (կիրէլու յամ), իսկ մյուսն «ական» վերջավորություն ունեցող դերբայով (կիրիլական ըմ), Իրանք միևնույն ճյուղին են պատկանում։

9. Վաղակատար և հարակատար ձևերով, ըստ որում մի բարբառն ունենում է այս երկու ձևը, մեկ ուրիշ բարբառ ունենում է միայն հարակատար ձևը այդ երկուսի փոխարեն։ Օրինակ կարող են ծառայել Հաղբութի և Քեյվան-Շաղախի բարբառները, որոնցից Հաղբութի բարբառն ունի և՛ վաղակատար, և՛ հարակատար ձևերը՝ կիրալ ըմ, կիրած ըմ, մինչդեռ Քեյվան-Շաղախի բարբառն ունի միայն հարակատար ձևը, որը գործածում է երկուսի փոխարեն (կիրած ըմ—գրած եմ, գրել եմ)։ Երկուսն էլ պատկանում են «Ս» ճյուղին։

10. Անցյալ կատարյալի բացակայությամբ և կամ կազմության տարբեր ձևերով, օրինակ՝ Քեյվան-Շաղախի և Արզվինի բարբառները, որոնցից Քեյվան-Շաղախի բարբառում անցյալ կատարյալի ձևերը չկան և վաղակատարի ձևերը գործածվում են իրրև անցյալ կատարյալ ձևեր (կիրալ ըմ—գրեցի), իսկ Արզվինի բարբառն անցյալ կատարյալի ձևերն ունի (գրէցի, գրէցիր և այլն)։ Երկուսն էլ պատկանում են «Ս» ճյուղին։

Իբրև օրինակ կարող ենք առնել նաև միևնույն ճյուղին պատկանող Թավրիզ-Մոզսի բարբառը և Արարատյան բարբառը, որոնցից Թավրիզ-Մոզսի բարբառը անցյալ կատարյալի ձևը «ե» խոնարհման բայերից կազմում է անցյալական հիմքով և կրավորական տիպի վերջավորությամբ, առաջին դեմքում ավելացնելով ընդհանուր լեզվին ոչ հասուկ «մ» դեմքի վերջավորությունը (կրամ, կրար, կրավ, կրանք, կրաք, կրան), մինչդեռ Արարատյան բարբառն անցյալ կատարյալի ձևը կազմում է ընդհանուր լեզվի նման (գրեցի, գրեցիր, գրեց և այլն)։

11. Դերանուանների հոլովման գլխի տարբերություններով, ինչպես օրինակ, Քեսաբի բարբառը և Հաճընի բարբառը, կամ Թրիխիսի բարբառը և Ղարաբաղի բարբառը և այլն:

12. Կարևոր հատկանիշ պետք է համարել նաև շարունակականի գոյությունը կամ հազմություն ձևը, ինչպես, օրինակ, Պոլսի բարբառի և Նոր Նախիջևանի բարբառի միջև, բայց որում առաջինն ունի շարունակական ձևեր, որ կազմում է «գոր» մասնիկով (կըզրիմ—կըզրիմ գոր), իսկ երկրորդն այդպիսի ձևեր չունի:

Այս սկզբունքային տարբերություններին իհարկե միանում են նաև երկրորդական տարբերություններ, որոնք կարող են վերաբերվել բառերի որոշ խմբի, հիմնական բառային ֆոնդի փոքր քանակի բառերի, բաղաձայնական սիստեմի մասնակի տարբերությունների կամ ձևաբանական մասնակի երևույթների: Այս 12 հատկանիշներից մի խումբը հատկանիշներով (հնչյունական և ձևաբանական) միմյանցից տարբերվող խոսվածքները ազատ կերպով կարելի է դիտել իրեն առանձին բարբառներ:

Օրինակ՝ Մեղրու բարբառը Կարծևանի բարբառից տարբերվում է գոյականների հոգնակի ձևի հոլովմամբ, բացառականի ձևով, օժանդակ բայի ձևերով, անցյալի ձև կազմելու մասնիկով, դերանուանների հոլովման որոշ ձևերով և բազմաթիվ մասնակի ձևաբանական և հնչյունական հատկանիշներով: Այդ պատճառով էլ այդ երկուսը անկախ բարբառներ են:

Հազրութի և Քեյվան-Շաղախի բարբառները միմյանցից տարբերվում են անկատար դերբայի կառուցվածքով (մնառ, մնայիս), բացառական հոլովի կազմությամբ (սարէն նըէստա—սարէն անա), անցյալ ձևերի կազմությամբ (Հազրութի բարբառն ունի օժանդակ բայի անցյալի ձևեր, Շաղախի բարբառը չունի), անցյալ կատարյալ ժամանակի ձևով (Հազրութի բարբառն ունի, Շաղախի բարբառը չունի) և մի շարք այլ երկրորդական հատկանիշներով, որ վերաբերվում են առանձին բառերի արտասանության, առանձին բառախմբերի գործածության և ձևաբանական մասնակի երևույթների:

Եթե մենք վերցնենք այժմ մեզ հայտնի բոլոր բարբառները, կնկատենք, որ նրանց միջև եղած տարբերությունները կազմում են մեր ցույց տված հատկանիշների մի ամբողջ կամպլեքս պլյուս մասնակի երևույթների որոշ քանակ: Այդ պատճառով այդ բարբառների մասին խոսում ենք զատահորեն, իրեն անկախ բարբառների մասին:

Մեր բարբառներից շատերը, որոնք մոտիկից ծանոթ չեն, որոնց շուրջը չկան ուսումնասիրություններ և որոնց լեզվական, փաստական մատերիալները բացակայում են, պետք է ենթարկվեն այս տեսակետից քննության և ստուգվեն, թե որքան իրավացիորեն են նրանք համարվում անկախ բարբառներ: Այսպես, օրինակ, Շաղին-Փարահոսարի, Մերաստիայի, Ռոզոսթոյի, Նիկոմիդիայի, Ամասիայի բարբառները, հարկ է, որ այդ տեսակետից ստուգվեն: Ես կատարեմ չունեմ, որ դրանք բարբառներ են, սակայն, զատահորեն դրանք բարբառ կոչելու համար պետք է ձեռքի տակ ունենանք փաստական տվյալներ և ստուգենք, թե ինչ կամպլեքս

հատկանիշներով նրանք տարբերվում են մյուս բարբառներից, առանձնա՛նում իրեն անկախ բարբառներ:

Եվ, ընդհակառակը, գիտությունն հայտնի մի շարք ենթաբարբառներ կարող են ցուցաբերել սկզբունքային հատկությունների այնպիսի մի կամպլեքս, որոնք դրանք առանձնացնեն, անջատեն իրեն անկախ բարբառներ: Ստուգենք այս մտեցմամբ մեր մի քանի խոսվածքները:

ԳԻԱԳԻՆԻ ԲԱՐՐԱՌ

Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ այդ խոսվածքն անվանված է Վանի բարբառի ենթաբարբառ, սակայն հենց իր՝ Հ. Աճառյանի տված փաստերից երևում է, որ այդ խոսվածքն իսկական բարբառ է և ոչ ենթաբարբառ. Դիադինի (Բասարգեչարի) խոսվածքն ունի հետևյալ հիմնական հատկանիշները.

Ի տարբերություն Վանի բարբառի, Դիադինի (Բասարգեչարի) խոսվածքում՝

1. Բաղաձայնական սիստեմը եռաստիճան է, այսինքն՝ խոսվածքը պատկանում է բաղաձայնական դասակարգման 4-րդ (անտեղաշարժ) խմբին, մինչդեռ Վանի բարբառում երկաստիճան ձայնեղազուրկ է.

Բասարգեչար	Վան
Բնւյոր	պնւյոր
բան	պան
գաննայ	տաննայ
գէտին	կէտին
ջուր	ճուր
ձու	ձու

2. Օժանդակ բայի 3-րդ դեմքը լինում է «ա», օրինակ՝ «օղորթ ա», «ամոթ ա. Ուր անունն լէ Սօֆյան ա», Վանի բարբառ՝ «ամօթ ի, ուղորթ ի»):

3. Շրջուն շարադասությունը գեղարված օժանդակ բայը կրկնվում է. օրինակ՝ շեն գիտցե, վոր սրտանց էր ասեր էր: Վանում այդպես չէ:

4. Հարակատար դերբայը կազմում է «ուկ» վերջավորությամբ. օրինակ՝ մերժուկ ա. շորեր կապուկ մնաց:

Կա նաև «ած» վերջավորությամբ հարակատար դերբայ. օրինակ՝ խաբած, կապած: Վանի բարբառում լինում է միայն «ած» վերջավորությամբ: Օրինակ՝ Զանն հրմէն խոսված ես եմ տրորված, իրիցած ու մրրկած:

5. Գոյականների հոգնակին ենթարկվում է «ու» հոլովման (Ախբըրներու անուն), մինչդեռ Վանի բարբառում հոգնակին ենթարկվում է «աց» հոլովման («ճամխրներաց, տղէյներաց, յաճերաց» և այլն):

6. Բացառականը (եզակի և հոգնակի) կազմվում է թե «էն» վերջավորությամբ և թե «ից» վերջավորությամբ. օրինակ՝ խարօրնրտէն մէ ամիս յետօ մախացաւ: Շորերն էլ վրեվէն խանեց: Բանից պրծանք՝):

<sup>1</sup> Օրինակները վերցված են Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ բերված տեքստից:

7. Տա բերբույթյուններ կան նաև դերանունների հորովման մեջ (օրինակ՝ Վանա բարբառ՝ քե, Դիադինի (Բասարգեչարի) բարբառ՝ քեդ, քեդի:

8. «Ե» խոնարհման բայերը երբորդ գեմքում ունենում են «ա» վերջավորություն, մինչդեռ Վանա բարբառն ունենում է «ի» վերջավորություն (Դիադինի բարբառ՝ կըխանա, կըբբցա, կըպախա, կըտանա, Վանա բարբառ. կըխանի, կըբբի, կըպախի, կըտանի և այլն):

9. Դիադինի բարբառում ավելի պակաս են վերին բարձրություն ձայնավորները, քմայնացումները և այլն:

«Ու» ձայնավորը չի քմայնանում՝ հակառակ Վանի բարբառի. օրինակ՝ լու, դու, դուռ, ձու և այլն. Վանի բարբառում՝ լու, ձու, տու, տու և այլն:

10. Ձայնավորով սկսվող մի շարք բառերը սկզբից ստանում են ձայնեղ «ն». օրինակ՝ հառէջ:

11. «Հե» կապակցությունը արտասանվում է յե. օրինակ՝ յեռոտ: Կան բազմաթիվ մանր և մասնակի տարբերություններ. որոնք միասին դառնում են բավական զգալի:

Այդ բոլորից բացի, Դիադինի բարբառն ունի նաև հետևյալ հատկանիշները, որոնք նրան նմանեցնում են Վանի, Ուրմիայի, Մարաղայի բարբառներին:

1. «Հ» հնչյունը այս բարբառում արտասանվում է «խ», օրինակ՝ հայր > խէր, հեռ > խեռ, հարս > խարս, հինգ > խինգ և այլն:

2. Բարբառն ունի ք, կ', ք' քմային հնչյունները: Օրինակ՝ քմամի, քժո, խինգ', կընկման:

3. «Ո» և «ե» ունեն երկբարբառային արտասանություն. օրինակ՝ տվեց, քցեց, գեաին, խանեց, տփեմ, խեռ, դնես, չենք, բնուէր—բուր, շուէր=չոր, վուէր=որ, ծամավուէր=ծամաւոր:

4. Օժանդակ բայի անցյալի ձևերի «է»-ն սղմվում է. օրինակ՝ կանիծի > անիծում էի, կասի > կասէի, ես ի. > ես էի, դու իր > դու էիր:

Ինչպես տեսնում ենք, ենթաբարբառ համարված այս խոսվածքն սկզբունքային հատկությունների մի ամբողջ կոմպլեքսով տարբերվում է և՛ Վանի բարբառից, և՛ մյուս բարբառներից այն չափով, որ երևան է բերում շատ ավելի մեծ ինքնուրույնություն, քան շատ բարբառներ, որոնց բարբառ լինելու մասին կասկած չկա: Պարզ է, որ պետք է այդ ենթաբարբառ կոչվածը համարենք միանգամայն անկախ բարբառ, անվանելով այն Դիադինի բարբառ:

Նույնից Դիադինի բարբառից

Գ Յ Ի Բ Ք Ո Ր Է

Գուեղացի խոմբոյի տունը կըռիվ էր չընդել: Խոմբոն գուզէր հ'իք տըսվէրկու տարէկան Գիբբորին տանա քաղաք գործիմ տա, վուէր մտնթ տանա, գործ անա:

Կընիկը համաձայն չէր:

— Չընուզեմ, իմ ք'օրփա էրեխին էն փիս աշխարհ մի թնալ չընուզեմ,— գուէր կընիկը:

Հրմը Խոմբոն չըլլուց:

Մէ հանդարտ առափօս էր. արնեցիք ու հարկանէր էկան մինչի գ'եղի ձերը, Գիբբորի թըշեր պաք'ին, ջաղղի դըրին:

Քուրը՝ Չանին լաց կէղնէր, պըստիկ Գալուտը մօր դըրկեն ձեն կըտեր.— Գիբբօր, էգ զօր ա կէրթտօ, է՛յ Գիբբօր:

Գիբբօրը շուշուտ յետ կը՛իշկէր, կրտեսներ հոլո գ'եղի ձերին կայնուկ են էնգօր: Մերը փեշով կըսրբփէր հ'անշկերը:

Գիբբօրը խօր կըշտով կըվնդէր, յա հ'անուէ կընդնէր. Մեկ էլ յետ իշկեց, գ'եղը մըտեր էր գարի յետ:

Էտեն էնյան Գիբբօրը յետ կընդնէր:

— Արբ հա, Գիբբօր ջան, խասանք հո, — արդին կանչելով կէրթէր Խոմբոն, շըլկին մէ խուրջին, մեշը մէ քանի խաց ու պանիք ու մէ երկու գոստա թութուն:

Հիբկվա դեմ կը՛ընցնին գորբերը, մեկ էլ էրէվաց գ'եղը յետուն մըմի մեջ:

Գրի առավ Միկասյան Խաչան (Բասարգեչարի Թուսկուլու գյուղից):

Ի Ն Զ Ա Մ Ո Ի Ղ Ա Մ

Էնա Ամերիկա էղէլսօն կասեն, ինչ կասեն, էնի կօ բերե մէ խաս գոթի, սատանէն բըռնե դըրե մէջ՝, էն գութին կըբանան, սատանէն մուղամի պէտս կասա, կասա, ձէն կէթա խասնի ձէրուսպեմ. Մուղամ կօ գութի ա, էղէլսօնի գութին ք'եղ օրինակ:

Գրեց՝ Ա. Համբարձումյան (Բասարգեչարցի)

ՈՋՄԻԻ ԲԱՐԲԱՌ

Ոգմիի խոսվածքը նույնպես գիտված է սրպես Վանի բարբառի ենթաբարբառ<sup>3</sup>, սակայն նրա մեջ երևացող բազմաթիվ ինքնուրույն հատկանիշները դրսևորում են նրան սրպես ինքնուրույն բարբառ: Ոգմիի բարբառի հիմնական հատկանիշները հետևյալն են:

Ի տարբերություն Վանի բարբառի, Ոգմիի բարբառն ունի «էյ» և «օւ» (օու), օւ (օու) երկբարբառները:

Օրինակ՝ անուուն > անուն, ձու > ձու, մուիթ > մուի, ձուկ > ձուկ, խէյգար > խիգար, կուէյ > կուի, խնամէյ > խնամի, վէյգ > վիգ:

3. «օ» և «ո» վերածվում է «ու»-ի. օրինակ՝ Պուղուս > Պողոս, չուրս > չուրէյն > Չարին, փուրին > փուրէն և այլն:

4. Եսյն «ո»-ն վերածվում է «օւ» հնչյունի. օրինակ՝ ք'ու > քս ջնէրան > ջորուն, ջնէ > ջոջ:

5. «Ու» ձայնավորը հաճախ վերածվում է օու երկբարբառի, որ չկա Վանի բարբառում: շմուզի > շեմ ուզի, ձու > ձու, մուիթ > մուի և այլն:

<sup>1</sup> Խոսքը պատեֆոնի մասին է:

<sup>2</sup> Հ. Անառյան. Հայ բարբառագիտություն:



6. Բառավերջին և բառամիջին «ի»-ն արտասանվում է «էյ», օրինակ՝ ջուրէյն > ջորին, թէյզ > թիզ, չքմէյաա > չեմ իաա, խէյնք՝ > հինդ, վէյզ > վիզ:

7. «Իւ» երկբարբառը վերածվում է օ օու, է հնչյունների. խէյրօն > հերիւն, խօուս > հիւսն, խարէր > հարիւր, օղէս > աղիւս:

8. «Այ» երկբարբառը վերածվում է «ե» և «է» հնչյունների. օրինակ՝ հայր > խեր, մայր > մեր, լայն > լեն, այր > հէր, այծ > յէծ:

9. Զայնավորով սկսվող բառերի սկզբին ավելանում է «հ». ապրանք > հարբանք, ափ > հափ, երգում > հէրտում և այլն:

Ողմի բարբառի բաղաձայնական սխառմը քառաստիճան է՝ միայն թե խալիբը բառամիջում քիչ զեղքերում են վերածվում ձայնեղներին, մինչդեռ բոլոր ձայնեղները վերածվում են շնչեղ ձայնեղներին՝ վանի բարբառում ձայնեղներ և շնչեղ ձայնեղներ չկան:

Ողմի	Վան
բ'ան	պան
գ'ան	տան
ձ'ար	ձուէր
ջ'ուր	ճուր
զ'ախ	զեախ

Այսպիսով, Ողմի բարբառի հնչյունական ամբողջ սխառմն արժանապես տարբերվում է վանի բարբառից:

Ողմի բարբառի հոլովական սխառմը, ինչպես և խոնարհումը, զգալի տարբերություն ունի վանի բարբառից:

Ի տարբերություն վանի բարբառի, Ողմի բարբառում՝

1. Սեռական հոլովն ունենում է «բ'» (շեշտված) կամ «էյն» վերջավորություն, որ «ի» և «ին» վերջավորությունների արտասանական ձևափոխություններն են. ուրեմն՝ Ողմի բարբառի սեռականն ստանում է հոլովություններն են. ուրեմն՝ Ողմի բարբառում է «էն» վերջավորություն (վանի բարբառում «ից»):

2. Բացառական հոլովն ունենում է «էն» վերջավորություն (վանի բարբառում «ից»):

3. Հոգնակին ենթարկվում է «ու» հոլովման. վանի բարբառում տարբեր է.

Ողմի բարբառ		Վանի բարբառ	
եզակի	Հոգնակի	եզակի	Հոգնակի
Ուղղ. խաց	խացիր	խաց	խացեր
Սեռ. խացը՝, խացէյն	խացիրու	խացի	խացերաց
Տր. » »	»	»	»
Հայց. խաց	խացիր	խաց	խացեր
Բաց. խացէն	խացիրէն	խացից	խացերաց
Գործ. խացով	խացիրով	խացով	խացերով

4. «ե» խոնարհման բայերը Ողմի բարբառում ենթարկվում են «ի» խոնարհման. օրինակ՝ կրսիմ, կրսիս, կրսի, կրսինք՝, կրսիք՝, կրսին, վանի

բարբառում բոլոր զեմքերում, բացի երբորզ զեմքից, պահպանվում է «ե» խոնարհիչը (կասեմ, կասես, կասի, կասենք՝, կասէք՝, կասեն):

5. «Ի» խոնարհման բայերի խոնարհիչը Ողմի բարբառում ունի երկբարբառային արտասանություն. օրինակ՝ կրտանէյմ, կրտանէյս, կտանէյ (կրտանիմ և այլն):

6. Ողմի բարբառի խոնարհման բոլոր ձևերի մեջ գրական «ի» ձայնավորի դիմաց գանում ենք «էյ», օրինակ՝ կապրցէյնք, պ'անցէյնք, կանչըցէյ (կապցիւնք, պ'անցիւնք, կանչիցի):

7. Անցյալի ձևերի մեջ Ողմի բարբառը սցում է «ի»-ն, մինչդեռ վանի բարբառը սցում է «է»-ն. օրինակ՝ կրտանէ, կրտանէր, կրտանէր, կրտանէնք՝, կրտանէք՝, կրտանէն (վանի բարբառում՝ կրտանի, կրտանիր, կրտանէր, կրտանինք՝, կրտանիք՝, կրտանին). Եւրոպայի օրինակը գործում է նաև օժանդակ բայերի մեջ (Ողմի իմ, իս, ի, ինք՝, իք՝, ին, անցյալ՝ է՝ էր, էք, էնք՝, էք՝, էն, վան՝ եմ, ես, ի, եմք՝, էք՝, են, անցյալ՝ ի, իր, էր, ինք՝, իք՝, ին):

Հարկադրական եղանակը, նաև ապանին, Ողմի բարբառը կազմում է «կրսոյն» կամ «ար» մասնիկով, մինչդեռ վանի բարբառը կազմում է «պիտի» մասնիկով:

Օրինակ՝

Ողմի՝ աբսիմ, աբսիս, աբսի, աբսինք՝, աբսիք՝, աբսին. վան՝ պիտի ասեմ, պիտի ասես, պիտի ասի, պիտի ասենք՝, պիտի ասէք՝, պիտի ասեն:

Այսպիսով, այս երկու բարբառի խոնարհումներն ազնվի հետո են միմյանցից, քան «կր» ճյուղի այլ շատ բարբառներինը:

Զգալի տարբերություն ունեն նաև գերանունները, Ողմի բարբառի հայցականը հաճախ ստանում է «գ» նախդիրը. գործիականը կազմում է լիսա=հեռ բառով. խամի>մեզ հեռ=մեզնով, խաք՝>քեզ հեռ=քեզնով. խածի>ձեզ հեռ=ձեզնով, խածէյ>ինձ հեռ=ինձնով:

Պ ե բ ա ն ի ս լ ն ն ե թ ի ն ո լ ո վ ու ո մ ը  
Ո Ջ Մ Ի Ի  
Ե Ղ Ա Կ Ի

Ուղղ.	խ	Գ'ու	ան
Սեռ.	իմ	ք'ու	անուր
Տրակ.	ձէյ, ընձէյ, ձի	ք'ի	»
Հայց.	ձր, ըզձր	ք'ի, ըզք'ի	զանէկ
Բաց.	ընձնէ	ք'ինէ, ք'իզնէ	անօփնէ
Գործ.	խածէյ	խաք՝ի	անօխէտ,
		ք'ինով, ք'իզնով	անոթ

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	մինք	դ'օք	անօունք, նարօունք
Սեռ.	մի	ձ'ի, ձ'ր	անօունց, նանօունց
Տրակ.	մի	ձ'ի	»
Հայց.	մի, զմի	ձ'ի, ըզձ'ի	զանօունք

Բաց.	մ'իզնէ, մ'իւնէ	ձ'իզնէ, ձ'իւնէ,	անօունցմ'ընէ
Գործ.	խամի	խամ'ի	անօունց խէյտ
	մ'իւնով, մ'իզնով	ձ'իւնով, ձ'իզնով	
		Վ Ա Ն Ի	
		Ե Ղ Ա Կ Ի	
Ուղղ.	յես	տո՛ւ	էն, էնա, էնիկ
Սեռ.	իմ	ք'ս	ի'սոր
Տր.	ձի, ձիկ	ք'ե	ի'սոր
Հայց.	»	»	»
Բաց.	ձիզնից	ք'իզնից	ի'սորից
Գործ.	ձիզնով,	ք'իզնով,	ի'սորմով

		Հ Ո Ղ Ա Կ Ի	
Ուղղ.	մենք'	տո՛ւք'	ի'սոնք'
Սեռ.	մեր	ձեր	ի'սոնց
Տրակ.	մե	ձե	»
Հայց.	»	»	»
Բաց.	մեզնից	ձեզնից	ի'սոցից
Գործ.	մեզնով	ձեզնով	ի'սոնցմով

Այսպիսով՝ Ողմիի և Վանի բարբառների գերանունների հոլովման մեջ ավելի մեծ տարբերություններ կան, քան, «Կը» ճյուղի որևէ այլ երկու բարբառների միջև:

Այդ ամենն անժխանիորեն ցույց են ապիս, որ Ողմիի խոսվածքն անկախ բարբառ է, շատ որոշ առանձնահատկություններով:

Նմուշ Ողմիի բարբառից

Կարապետ աղան (պաշտոնյա) գորով Պօզօի միակ ջորին խոււմ է բինբաշու համար. Պօզօն ետ է բերում, ապա զինված գնում է Կարապետ աղայի դռանը կանգնում ու կանչում:

— Կարապետ աղա, ք'ո՛ւ գ'րլօխ ներարւէն բ'ի գ'օս. Կարապետ աղա, ջ'ուրէյն աը տանէյս. մօու աօացէյ, թը գ'ո՛ւ չըտանէյս, ք'ո՛ւ մէր անըծիմ, ք'ո՛ւ յօթ պօրտ անըծիմ, թը գ'ո՛ւ չըտանէյս. Դի յէրի տար. Իս իմ ջ'ո՛ւրօն հաֆօար (սանձ) բ'ըռնըցէյ ու տարա կապըցէյ վըր մըսրէյն: Կարապետ աղա, մըկա կըտրէյճ իս, յէրի տար, ջ'ուրէյնս տարա ք'ո՛ւ բինբաշէյն վօրն ի, ասի անօուր, թըրս գ'ո՛ւ ան տանէ. Դ'օ չէ, ք'ո՛ւ բինբաշէյն չէ, ձ'ի յօթ խէր գ'ո՛ւ չկանէ տանէ: Վալլա՛, իս մըկա փսուուն (փորտախք) ք'ո՛ւ փուրէն տըրխանի՞մ: Դ'ո՛ւ գ'րախ իս վօրն իմ. մօու իս չզմա Պօզօ տըրէյն իմ՝ գ'րախս՞՛:

\* \* \*

Բարբառների մի երկրորդ օջախը գտնվում է Կիլիկիայում: Կիլիկիայի բարբառի բուն պատկերն ունի Անթուրի խոսվածքը, Բացի դրանից, Կիլիկիայի բարբառի ենթաբարբառներ են համարված Հաճընի ու Մարաշի

՝ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 148, 187:

խոսվածքները՝ եթե առաջնորդվենք մեր նորմաներով, կնկատենք, որ այստեղ մենք ունենք ոչ թե մեկ բարբառ իր ենթաբարբառների, այլ 3 տարբեր ինքնուրույն բարբառներ:

Դրանցից վերջնենք առաջինը՝ Հաճընի խոսվածքը:

ՀԱՃՐՆԻ ԲԱՐՔԱՌ

Հաճընի խոսվածքի ձայնավորները ենթարկվում են մեծ փոփոխություն. նկատելի են հետևյալ օրինաչափությունները:

Ա > օ. շեշտի տակ. օրինակ՝ աղատ > աղօղ, աղբատ > ախօղ, աղա > աղօ, արտար > ալօյ, բան > աօն, բարեկամ > պայեկօմ, բաց > պօց, բարակ > պայօպ, բարձ > պօյց, ազկ > օզզ, ալ > օլ, ամպ > օմբ, առ > օռ, հարս > հօյս, բերան > պիյօն, գերան > կիյօն, դալ > կօլ, ձագ > ձօկ (թռչուն) և այլն:

> ա. նախաշեշտ վանկերում. օրինակ՝ աղալ > աղօլ, արծաթ > ալծօթ, բամբակ > պամբօկ, գաղան > կաղօն, կարգալ > կալթօլ, աղա > աղօ և այլն:

> է. նախաշեշտ վանկում. ալիք > էլիք, անել > էնիլ, աճուկ > էջուկ, արին > էլին, աշակերտ > էշպիէյդ, աչք > էշք, ականջ > էնպէճ, հարիւր > հէլիւ և այլն:

Ո > ու՛. շեշտի տակ. օրինակ՝ աթոռ > աթուէռ, աղսլա > աղուէս, ախոռ > ախուէռ, աղուոր > աղվուէյ, բողկ > պուէխ, դժոխք > դժուէխք, դող > աուէղ, որդ > վուէլթ, սոպ > վուէսբ, սոս > վուէսպ, սօք > վու՛կք, չոր > չուէյ, չոք > չուէյս և այլն:

Շեշտը վրայից անցնելու դեպքում այս «ուէ» վերածվում է «ու»-ի, օրինակ՝ խուէա > խուտիւյ, գուէթ > գութիւյ:

> օ. նախաշեշտ վանկերում. օրինակ, չորան > չօպօն, շողանալ > շօղնօլ (աքանալ), շողացված (աքացած) > շօղցրմօն և այլն:

> է. «վ» բաղաձայնից առաջ. օրինակ՝ հով > հէվ, ծով > ձէվ, կով > զէվ և այլն: Բնականորեն գործիական հոլովի «ով» վերջավորությունը պետք է ստանա «էվ» ձևը. օրինակ՝ ծառով > ձառէվ, հացով > հացէվ, կաթով > գաթէվ և այլն: Ուն վերածվում է «է»-ի նաև հոս > հէս, հոգ > հէդ, հոս > հէն և որ > էյ բառերում:

> իէ. «ղ» հնչյունից առաջ ենթակայական դերբայում. օրինակ՝ գրող > կըլիեղ, եկող գնացող > գիեղ իշաիեղ, գործող > կիլձիեղ և այլն:

> ի նախաշեշտ վանկում՝ գործել > կիլձիել, փորել > փիլիել, ջորի > ճիլի, հողի > հիլի և այլն:

Ե > իե. շեշտի տակ. օրինակ՝ ասեղ > ասիեղ, գեղձ > աիեղց, ձգել > ձըկիել, ուտել > ուգիել, ձեղքել > ջըխիել, մանել > մանիել և այլն:

> ի. նախաշեշտ վանկում. բառասկզբին. օրինակ՝ երազ > իյօզ, եզերք > իզիէյ, եկա > իզի, եկար > իզիյ (ան իզէպ), երկաթ > իյգօթ, երևալ > իյվընօլ, երես > իյիես, երկայն > իյզիեն, երեկոյ > իյգըվօն, երկինք > իյզիք, երթալ > իշտօլ, եփել > իփիել, լեզու > լիզու և այլն:

> յիե. բառասկզբին միավանկ բառերի մեջ. օրինակ, յես > յիես, երբ > յիեփ. երբ բառը լինում է ժիէք, ձեռք բառը լինում է ձառ:

՝ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, 1911 թ.:  
Հայ բարբառագիտություն—7

ի > ի. միշտ առանց փոփոխության. «գիշեր» բառը լինում է շինյ.  
 Ը > Ը. խիստ կոշտ «ը», որ մոտենում է ուսուսական և հնչյունին. Բառավերջի  
 երկու բաղաձայնի արանքում լինելու դեպքում «ը» հնչյունը տեղա-  
 փոխվում է վերջը. օրինակ՝ սանր > սորը, ծանր > ձորը, մանր > մո-  
 րը, բարձր > պորցը, աստղ > օսղը. Այդ միակ դեպքում բառերում  
 եղած «ը» հնչյունը չի վերածվում յ-ի, բայց դուրս է բնկնում  
 առաջին բաղաձայնը.

Ու > ու. անփոփոխ բոլորտեղերում. օրինակ՝ դու > տուն, ասն > դուն,  
 ամուր > ամույ, բուրդ > պույթ, գարուն > կայուն, սերագ > սույօղ, ու-  
 բախ > սույօխ և այլն.

Օ > է. օրինակ՝ օձ > էձ, օղ > էղ, օր > էր, նօսր > նէյսր և այլն.  
 > ու. նախաշեշտ վանկի մեջ. օրինակ, անօթի > անութի, անօրէն > անուէն,  
 գոտի > հուդի և այլն.

Ս, յ > է. այգի > էկի, ծայր > ծէյ, այրել > էյիլ, լայն > էն, հայ > հէյ, հայերեն >  
 հէյիէն, հայելի > հէլի և այլն.

> ւ. խայթել > խէթել, հայիլ > հէյիլ, քայլել > քէլիլել...  
 > ա. շեշտի տակ. օրինակ՝ այն > ան, այծ > աձ, մայր > մար, գայլ > կալ,  
 փայտ > փագ, ձայն > ձան...  
 > օ (բառավերջում) աղայ > աղօ, քահանայ > քահանօ.

Ոյ > ի. լոյս > լիս, բնկոյղ > բնկիղ, զրոյց > զրբից և այլն.

Բաղաձայններ

Բաղաձայն հնչյունական սիտեմով Հաճրնի բարբառը պատկանում է  
 սեղաշարձ տեղափոխության խմբին, ուր խուլերն արտասանվում են  
 ձայնեղ, իսկ ձայնեղները՝ խուլ:

Հօ (հօ) կապակցությունն արտասանվում է ֆուէ. օրինակ՝ հող > ֆուէղ  
 հոա > ֆուէղ.

«ը» հնչյունը վերածված է յ հնչյունի համարյա ամենուրեք. սուր > սույ,  
 բերել > պեյել (պիեյիել), քերել > քեյել (քիեյիել).  
 ար > ս. կարիձ > կրսիձ, բնտրել > քրտիել, սանտրել > սասիել.  
 րօ > շ. հարսանիք > հաշնիք, հարսուկ > հաշուկ և այլն.

Ձևարանություն

Հաճրնի խոսվածքում հոգնակին կազմվում է հետևյալ մասնիկներով.

- նի. օրինակ՝ տկալնի (պղպղներ), ծիլաննի (ծիլեր).
- սղաննի. օրինակ՝ էկիսղաննի (այգիներ).
- իեյ. կուղիեյ (պղղեր), խուտիեյ (խտեր), գութիեյ (կոթեր).
- նիէյ. ծառնիէյ.
- Գեք. ախպիյեք (եղբայրներ), աչղընգեք (աղջիկներ), կընգեք (կիներ)
- Իք (վիք). աղվիք (աղափններ), գընվիք (աներ), էկիք (այգիներ),  
 ամըննիք (ամաններ), մօյաիք (մարդիկ).
- Վընի. ձեռվընի (ձեռքեր), քըթվընի (քիթեր), մեյվընի (մայրեր), մէտվը-  
 նի (մտաբեր), մագվընի (մատներ).
- վուէնք. գեղվուէնք, ձեռվուէնք.

Հոլովում

Գոյականների հոլովումը մի տարբերիչ երևույթ ունի, դա դործիա-  
 կանի «էվ» վերջավորությունն է. օրինակ՝ խուսեվ (խոսով), դութէվ (կո-  
 թով) և այլն.

Ուղղ.	էն	քօյ (քար)	ախպայ	քիյ (քոյր)
Սեռ.	լեռօնը	քային	ախպէյէ	քիյէ
Տր.	»	»	»	»
Հայց.	լեռ	քօյ	ախպայ	քիյ
Բաց.	լեռնէն	քայէն	ախպէյինմէ	քիյինմէ
Գործ.	լեռնէվ	քայէվ	ախպէյէվ	քիյէվ

Յուցական դերանունների հոլովումը

Ուղղ.	աս, իսօ	ատ, իատօ	ան—ինօ
Ս. Տ.	էսուէյ-իսուէյ	էտուէյ-իատէյ,	էնուէյ-ինուէյ.
Հայց.	գաս-զըսօ	գադ-զլօ	գան-զնօ
Բաց.	էսուէյնէ իսուէյնէ,	էտուէյնէ, իատէյնէ	էնուէյնէ, ինուէյնէ
Գործ.	էսէվէք-իսէվէք,	էտէվէք-իատէվէք,	էնէվէք, ինէվէք.

Հոգնակի

Ուղղ.	էսուէնք-իսուէնք	էտուէնք, իտուէնք,	էնուէնք, ինուէնք
Սեռ.	էսուէնց-իսուէնց	էտուէնց-իտուէնց,	էնուէնց, ինուէնց
Տր.	»	»	»
Հայց.	զէսուէնք, զիսուէնք,	զէտուէնք, զիտուէնք,	զէնուէնք,
			զինուէնք
Բաց.	էսուէնցնէ, իսուէնցնէ,	էտուէնցնէ, իտուէնցնէ,	էնուէնցնէ,
			ինուէնցնէ
Գործ.	էսուէնցմէվ, իտուէնցմէվ	էտուէնցմէվ, իտուէնցմէվ	էնուէնցմէվ, ինուէնցմէվ

Խոնարհում

Հաճրնի խոսվածքում խոնարհումը կազմվում է «գը» մասնիկով, որ  
 նշանակում է, թե պատկանում է «կը» ճյուղին. Չայնավորով սկսվող բայե-  
 րի մամանակ «գը» մասնիկը կրկնվում է. օրինակ՝ կարձակեմ—զըզածգիեմ,  
 կառնեմ—զըզառնում, կըսեմ—զըզըսիեմ. Կերբամ, կուտեմ, կուզեմ բայերը չեն  
 կրկնում «գը» մասնիկը, բայց ձայնավորը վերածում են «ա»-ի կամ «ալ»-ի.  
 օրինակ՝ գաշտօմ > գնում եմ (կերթամ), գավաթեմ > սուտում եմ (կուտեմ),  
 գավգիեմ > ուղում եմ (կուղեմ).

Սահմանական եղանակ

Ն ե ր կ ա

ն	ի	ա	ու
զընայեմ	զընաքնիմ	զըզայտօմ—կարգում եմ...	զըզառնում—առնում եմ...
զըսիես	զընաքնիս	զըզայտօս	զըզառնուդ

զըսիյէ	զըհաքնի	զըզայտօ	զըզառնու
զըսիյենք	զըհաքնինք	զըզայտօնք	զըզառնունք
զըսիյէք	զըհաքնիք	զըզայտէք	զըզառնէք
զըսիյին	զըհաքնին	զըզայտօն	զըզառնուն

զուզօմ—տալիս հմ...	զըննօմ լինում հմ...
զուզօս	զըննօս
զուզօ	զըննօ
զուզօնք	զըննօնք
զուզէք	զըննէք
զուզօն	զըննօն

Անցյալի անկատար

զըսիյի	զըհաքնի	զըզայտի	զըզառնի—առնում էի...
զըսիյիյ	զըհաքնիյ	զըզայտիյ	զըզառնիյ
զըսիյիէյ	զըհաքնիէյ	զըզայտիէյ	զըզառնիէյ
զըսիյիօնք	զըհաքնիօնք	զըզայտիօնք	զըզառնիօնք
զը սիյիք	զըհաքնիք	զըզայտիք	զըզառնիք
զը սիյին	զըհաքնին	զըզայտին	զըզառնին

զուզի—տալիս էի...	զըննի—լինում էի...
զուզիյ	զըննիյ
զուզիէյ	զըննիէյ
զուզիօնք	զըննիօնք
զուզիք	զըննիք
զուզին	զըննին

Հարակատար

Սիյօձ	հմ	հաքօձ	հմ	զայտացօձ	հմ	առօձ	հմ	զըվօձ	հմ	էզօձ	հմ
»	հս	»	հս	»	հս	»	հս	»	հս	»	հս
»	է	»	է	»	է	»	է	»	է	»	է
»	հնք	»	հնք	»	հնք	»	հնք	»	հնք	»	հնք
»	էք	»	էք	»	էք	»	էք	»	էք	»	էք
»	հն	»	հն	»	հն	»	հն	»	հն	»	հն

Անցյալի հարակատար

Սիյօձ ի, իյ, էյ, օնք, իք, ին.  
 Հաքօձ, զայտացօձ, առօձ, զըվօձ, էզօձ, ի, իյ, էյ, օնք, իք ին.

Անցյալ կատարյալ

Սիյիցի	հաքօ	զայտացի	առի	զըվի	էզօ
Սիյիցիյ	հաքօյ	զայտացիյ	առիյ	զըվիյ	էզօյ
սիյեց	հաքօվ	զայտաց	առօվ	զըվօվ	էզօվ

սիյիցօնք	հաքօնք	զայտացօնք	առօնք	զըվօնք	էզօնք
սիյիցիք	հաքէք	զայտացիք	առիք	զըվիք	էզէք
սիյիցին	հաքօն	զայտացին	առին	զըվին	էզօն

Ըղծական

սիյեմ	հաքնիմ	զայտօմ	առնում	զօմ	նօմ
սիյես	հաքնիս	զայտօս	առնուս	զօս	նօս
սիյէ	հաքնի	զայտօ	առնու	զօ	նօ
սիյենք	հաքնինք	զայտօնք	առնունք	զօնք	նօնք
սիյէք	հաքնէք	զայտէք	առնէք	զէք	նէք
սիյին	հաքնին	զայթօն	առնուն	զօն	նօն

Անցյալի ապառնի

սիյի	հաքնի	զայթի	առնի	զի	նի
սիյիյ	հաքնիյ	զայթիյ	առնիյ	զիյ	նիյ
սիյիէյ	հաքնիէյ	զայթիէյ	առնիէյ	զիէյ	նիէյ
սիյիօնք	հաքնիօնք	զայթիօնք	առնիօնք	զիօնք	նիօնք
սիյիք	հաքնիք	զայթիք	առնէք	զիք	նիք
սիյին	հաքնին	զայթին	առնին	զին	նին

Հարկադրական եղանակը կազմվում է «բի» մասնիկով, որ պիտի բառի առաջին կեսն է. Այդ մասնիկն ափելանում է ըղծականի ձևի վրա. Օրինակ՝ բի սիյեմ, բի հաքնիմ, բի զայտօմ, բի առնում, բի զօմ, բի նօմ և այլն.  
 Հարկադրականի այս ձևը գործածվում է որպես սահմանական ապառնի,

Հրամայական

սիյէ, մի սիյէ, սիյէցէք, մի սիյէք, հաքիյ, մի հաքնի, հաքէք, մի հաքնիք, զայթօ, զայթացէք, մի զայթօ, մի զայթէք, օն, մի առնու, անէք, մառնուք, դնւյ, մի զօ, զըվէք, մի զէք.

Համեմատելով Հաճընի խոսվածքը Ջեյթունի բարբառի հետ, տեսնում ենք հետևյալ հիմնական տարբերությունները.

1. Շեշտի տակ ա հնչյունը մեծ մասամբ վերածվում է օ հնչյունի, մինչդեռ Ջեյթունի բարբառում լինում է ո (ոէ). օրինակ՝ աղա—աղօ, աղա—աըղօ, և այլն.
2. Ե հնչյունը համարյա ամենուրեք շեշտի տակ արտասանվում է երկբարբառային իէ (ե), իսկ շեշտից առաջ վերածվում է ի-ի. օրինակ՝ սահղ—սաիեղ, արև—արիեվ, երես—իյես և այլն. Ջեյթունի բարբառն այս հարցում հետևողական չէ.
3. րս, րա (րբ) հնչակապակցություններն արտասանվում են շ և շբ, օրինակ՝ հարսանիք—հաշնիք, կերթամ—գաշթօմ, երթաս—եշթօս, պիտի երթամ—բիշթօմ.
4. Ըն կապակցությունն արտասանվում է ֆուէ. հող>ֆուէղ, հոտ>ֆուէդ և այլն.

- 5. ար հնչակապակցութեանն արտասանվում է ա. օրինակ՝ սանարել—սառել, կարիճ—կռիճ և այլն.
- 6. ո հնչյունը վ-ից առաջ, հաճախ նաև այլ տեղերում, վերածվում է է հնչյունի, օրինակ՝ հով > հէվ, կով, > կէվ, ծով > ձէվ և այլն: Այդպես է լինում նաև գործիական հոլովում (կաթով > գաթէվ, հացով > հացէվ): Այդպես չէ Ջեյթունի բարբառում:
- 7. ենթակայական գերբայն ունենում է ին հնչյունը վերջավորութեանն ո ձայնավորի փոխարեն. օրինակ՝ գրող > կրիիեղ, գործող > կրիծիեղ և այլն: Այդպես չէ Ջեյթունի բարբառում:
- 8. «ո»-ն նախաշեղջտ վանկում հաճախ լինում է ի. օրինակ՝ ջարի > ճրի, հոգի > հիկիկի, փորել > փրիիել և այլն:
- 9. ու ձայնավորը միշտ մնում է անփոփոխ. օրինակ՝ դու > տուն, տուն > դուն, բարդ > պույթ և այլն, մինչդեռ Ջեյթունի բարբառում վերածված է օ-ի:
- 10. օ ձայնավորը բառակազմի, երբեմն բառավերջում շեշտի տակ արտասանվում է է. օրինակ՝ օձ > էձ, օր > էր, օղ > էղ և այլն: Կան նաև զգալի տարբերություններ գերանունների հոլովման մեջ:

Հ ա ն ր ն

եզակի

Ուղղ.	յիէս	տուն	առ խօ
Սեռ.	իմ, իմիս	քիէ	էսուէյ խուէյ
Տրակ.	բնծի	քիէ	» »
Հայց.	զիս	զքիէ	զաս, զբս
Բաց.	իսնէ	քիսնէ	էսուէյնէ, խուէյնէ
Գործ.	իսնէվ	քիսնէվ	էսէվէք, խէվէք
Ուղղ.	միենք	տուք	էսուէնք, խուէնք
Սեռ.	միէ, միէնք	ծիէ	էսուէնց խուէնց
Տր.	միէ	ծիէ	» »
Հայց.	զմիէ	զծիէ	զէսուէնք, զխուէնք
Բաց.	միսնէ	ծիսնէ	էսուէնցնէ խուէնցնէ
Գործ.	միսնէվ	ծիսնէվ	էսուէնցմէվ խուէնցմէվ

Ջ Ե Յ Ր Ո Ւ Ն

Ուղղ.	խ	տօն	ան
Սեռ.	իմ	քու	Օսսյ
Տրակ.	ինձնէ	քիզ	»
Հայց.	զբս	զքիզ	զան
Բաց.	ինձէ, իմնէց, ինձիկէց	քիզնէ, քիզնէց	էսիզէց
Գործ.	ինմնծվ, ինձմծվ	քիզմծվ	Օսսէքծք

Ուղղ.	միւք	տօք	էսիք
Սեռ.	միյ	ծիք	Օսսնց
Տր.	միզ	ծիզ	»
Հայց.	բզմիզ	բզծիզ	զէսիք
Բաց.	միզնից	ծիզնից	Օսսնցնէ
Գործ.	միզնծվ	ծիզնծվ	Օսսնցմծվ

Ջ Ե Յ Ր Ո Ւ Ն

Հ ա ն ր ն

Ուղղ.	նիվ	չիյք	վուէվ	լիւնչք
Սեռ.	նիմ	չիյքու	վույում	ինչլիւն
Տր.	նիմ	չիյքու	վույում	ինչլիւն
Հայց.	զնիվ, զլիվ	չիյք	զուէվ	զլիւնչք
Բաց.	ումնէց, օմնէց	չիյքէն	վույէն	ինչլէն
Գործ.		չիյքօվ	վույէվ	ինչիվէք

Ինչպես ասացինք, խոնարման մեջ Հաճրնի խոսվածքը գործածում է «զք» մասնիկը, որ «զոյ» բառից է, մինչդեռ Ջեյթունի բարբառը՝ «զո» մասնիկը, որ «կո» բառից է: Ուրեմն Հաճրնի խոսվածքը պատկանում է «կք» ճյուղին, մինչդեռ Ջեյթունիներ՝ «կո» ճյուղին:

Կրավորական հարակառար գերբայը կազմվում է «մօն» վերջավորութամբ: Օրինակ՝ իմօն > եփված, սըյմօն > սըված, սիյմօն > սիրված, վառմօն > վառված և այլն: Ենթակայական գերբայն ունենում է եղ (իեղ) վերջավորութեան. օրինակ՝ կըյեղ > գրող, կիյծեղ > գործող և այլն:

Հարկադրական եղանակը կազմվում է «բի» մասնիկով, մինչդեռ Ջեյթունի բարբառը օգտագործում է «բիզի» մասնիկը:

Մեծ տարբերություններ կան նաև խոնարման վերջավորութեանների մեջ:

Վերցնենք, օրինակ, ներկայի և անցյալի անկատարի կազմութեանը:

Հ ա ն ր ն

Ջ Ե Յ Ր Ո Ւ Ն

Ներկա		անցյալ. անկատ.	
զք կը'յիմ	զք կը'յի	զո կը'յիմ	զո կըյայա
զք կը'յես	զք կը'յիյ	զո կը'յիս	զո կըյայայ
զք կը'յէ	զք կը'յէյ	զո կը'յէ	զո կըյէյ
զք կը'յենք	զք կը'յօնք	զո կը'յիւք	զո կըյայօնք
զք կը'յէք	զք կը'յիք	զո կը'յէք	զո կըյայօք
զք կը'յեն	զք կը'յին	զո կը'յին	զո կըյայըն

Այս հատկանիշների կոմպլեքսը վկայում է, որ Հաճրնի խոսվածքն անկախ բարբառ է:

ՆՄՈՒՇՆԵՐ ՀԱՃՐՆԻ ԲԱՐՔԱՌՈՎ

I

էյ մը փատիշօֆը իյ գըղի հիեզ արէ կացցե էյք շուէզ գաննօ:  
Փատիշօֆը իյ ու իյ գըղային լատտիեյք գըհանէ գագօ իյ մասխայօ նեղին, իզև ձըձաղիլօվ գըզանէ:

—էշու ծարուատին մը գօ:  
Ազ մասխայօ էնեղը գըզասէ.  
—Չէ, թակավուէ՛յ, մէկ չէ, էյգու էշու պինո գօ գընօզիս:  
Գրի առա՛գ՝ Մարգարայան Պետրոս՝

II.

ՄԼ.գ գանիդ մը ջամպօ իլիէէ գաշթօ:  
Մօյթ մը գընգօնէ իղին գըզանգնէ:  
Ան գանիզը գըզասէ.  
—էյին հանօյ գուկիօս ընձի իղեէս:  
Մօյթը թէ՛  
—Ես գըիե գըսիլլեմ նէ, էնօյ հանօյ իղեէդ գուկիօմ:  
Գանիզը թէ՛  
—Ընձի քիլոս ընձիղինէ գա գնիզալ է, կընօ էնուէյ իղէն ընգիլ:  
Մօյթը գըծըկիէ գաշասօ, գըզիսնօ, էյ ան գանիզը մագալէն չիլքին է, գըվագի, յեգ գուկիօ գը գասէ.  
—էյի՛ն գիս խապպիցիլ, ասիլ, թէ ինձի քիլոս ընձիղինէ էվէլ գնիզալ է:  
Գանիզը գըզասէ.  
—Յես չի խապպիցիլ. տուն ընձի խապպիցիլ.  
—էյի՛ն գըիե խապպիցե.  
—Տուն ընձի ասիլ, թէ յես քիե վիլոգ սեվգալանմըշ էղիլ յեմ, թէ էյ սեվգալանմըշ էղիլես նէ, էյին գիս ծըկիկիցիլ կացիլ մագալին վիլան.  
Գրի առա՛գ՝ Մարգարայան Պետրոս

էյ մը—մի օր	էյի՛ն—ինչի՛
շուէղ—տաք, արև, շոգ	էյ—որ
լատախեյը—լաթերը, շորերը	չիլքին—վաս, տղեղ
գաղօ—կտա	սեվգալանմըշ—սիրահարված
գաշթօ—գնամ էր	գնիզալ—գեղեցիկ
գըզանգնէ—ընկնում է	

ՄԱՐԱՇԻ ԲԱՐՐԱՌ

Մարաշի բարբառը գիտված է որպես Ջեյթուների կամ Կիլիկիայի ենթաբարբառ՝ Սակայն խիստ զգալի են Մարաշի խոսվածքի տարբերությունները Ջեյթուների բարբառից:

Մարաշի խոսվածքում՝

1. Շեշտի տակ «ա» վերածվում է «օ» հնչյունի. օր՝ քաղաք > քաղօք, հասկընա > հասկընօ, կա > գօ, իսկ Ջեյթուների բարբառում այդ նույն «ա»-ն վերածվում է «ո» (ուէ) երկհնչյունի:
2. «յ» ձայնավորը, նույնպես շեշտի տակ, վերածվում է «ա» ձայնավորի. օրինակ՝ գյուղացի > գեղցա, տեսիլ > գէսնա, քեռի > քեռա. Ջեյթուների բարբառը այդ հարցում հեռուգրական չէ:
3. Երկբարբառները բացակայում են. «ե» հնչյունը ևս երկբարբառ-

1 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, 1911 թ.:

առային հնչում չունի, ինչպես Ջեյթուների բարբառում, այլ շեշտից առաջ վերածվում է «ի» ձայնավորի. օրինակ՝ բարիվ > բարև, իգիլ է > եկեի է, իվիլի > իվեր և այլն:

4. Ջեյթուների բարբառին հատուկ կոշտ «ը» հնչյունը չկա:
5. Վերին բարձրության ձայնավորները քիչ են:
6. Խիստ նկատելի է ձայնավորների ներդաշնակության օրենքը. օրինակ՝ գօրթօն > կերթան, խանութ մու > խանութ մի, խանութու > խանութը:
7. «ր» հնչյունը արտասանվում է սովորական «ր», մինչդեռ Ջեյթուների բարբառում՝ «յ». Ջեյթուներն՝ աօյս. Մարաշ՝ դօրս. Ջեյթուներն՝ օյ. Մարաշ՝ օր:
8. Բարբառի բաղաձայնական սիստեմը պատկանում է երկաստիճան խաղրուկ խմբին, այսինքն՝ խուլերը գառնում են ձայնեղ, իսկ ձայնեղները մնում են անսիփոփո, մինչդեռ Ջեյթուները պատկանում է տեղաշարժ տեղափոխության 2-րդ ենթախմբին:

Մարաշ

բ > բ	բարև > բարիվ	պ > բ	պապ > բօբ
դ > դ	դուրս > դօրս	ա > դ	տանեմ > դանամ
ձ > ձ	ձու > ձու	ծ > ձ	ծիծաղած > ձրձաղօձ
ջ > ջ	ջուր > ջուր	ճ > ջ	ճանճ > ջօնջ
գ > գ	գիւղացի > գէղցա	կ > կ	կա > գօ

Ջեյթուն

բ > պ	բարև > պայեվ
դ > ա	դուրս > աօյս
ձ > ծ	ձու > ծու
ջ > ճ	ջուր > ճույ
կ > կ	կնաց > կօնոց

Խիստ զգալի են գերանունների հոլովման տարբերությունները.

Ե գ ա կ ի

Ուղղ.	իս	դօն	էն, ընօ	նիրնի (օրը)
Սեռ.	իմ	քին	ըննիր	ուրուման
Տր.	իէս	քէզ	ըննիր	ուրուման
Հայց.	յաս	ըսքի	էն, ընօ	նիրնի
Բաց.	իմնէ	քիննէն	ընիգէն	ուրումէն
Գործ.	իմն	քինննի	ընիգնի	ուրումնի

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	մինք	դէք	ննննք	նիրիրի
Սեռ.	միր	ձիր	ննննց (ընննց)	նիրուրան
Տր.	միգ	ձիգ	»	»

Հայց.	միզնի	ձիզնի	մնանք	նըրրի
Բաց.	միբնէ	ձիբնէ	ննանցմէ (ընանցմէ)	նրուբունէ
Փարձ.	միբննի	ձիբննի	ննանցմնի (ըննանցմնի)	նրուբումնի

Սոնարձման մեջ ևս զգալի տարբերություն կա.

ա) Մարաշի բարբառը ներկան կազմում է «գո» մասնիկով, մինչդեռ Զեյթունի բարբառը նույն մասնիկը արտասանում է երկբարբառային հնչյունով՝ գո (գուէ), երկուսն էլ «կա» բառն են: Ուրեմն՝ Մարաշի բարբառը պատկանում է «Կա» ճյուղին:

բ) «Ա» ձայնավորով սկզբող բայերի այս ձայնավորը միաձուլվում է «գո» մասնիկի ձայնավորին. օրինակ՝ գուէ, գոննո:

գ) Ապառնին կազմում է «բիդէ» մասնիկով, նաև իզիլ (ուզիլ) բայով.

Օրինակ՝	Բիդէ բիրիմ	զիզիմ բիրի
	» բիրիս	զիզիս բիրի
	» բիրի	զիզի բիրի
	և այլն	և այլն

Երկրորդ գեղքում խոնարհվող բայը վերածվում է գերբայի և խոնարհվում է «իզիլ» բայը.

Այդ ամենը ցույց են տալիս, որ Մարաշի խոսվածքը մի իսկական բարբառ է: Այսպիսով, մեր բարբառների ցանկում պիտի ավելացնել Գիտգինի, Ուզիլի, Հաճընի և Մարաշի բարբառները:

### Գ. ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲԱՐՐԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### 1. ՀԱՅ ԲԱՐՐԱՌՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառների հնչյունաբանությունը լիակատար համեմատությունը կարելի է կատարել այն ժամանակ, երբ գիտական հիմունքով կուսումնասիրվեն բոլոր բարբառները. Մակայն մինչև այժմ եղած նյութերի հիման վրա կարելի է կազմել մոտավոր համեմատություն: Հայ բարբառների հնչյունական կազմությունն ավելի հարուստ է, քան արգի գրական լեզվինը և գրաբարինը: Այդ հարստությունը, սակայն, չի տալիս մեզ այնպիսի նոր երևույթներ, որ հնչյունական մեծ տարբերություններ ցուցահանեն գրաբարի և ժամանակակից գրական լեզվի հնչյունների համեմատությամբ, այսինքն՝ բարբառների հնչյունական հարստությունը տեղի է ունենում ի հաշիվ գրաբարի և գրական լեզվի միևնույն հնչյունի տարբերակների. օրինակ՝ «ա» ձայնավորի գիմաց բարբառներում գտնում ենք քմային «ան» և շրթնային «ա» ձայնավոր՝ գրական սովորական «ա» ձայնավորի հետ միասին. Բացառություն կարելի է համարել միայն Տիգրանակերտի բարբառի կոհորդային շփական բաղաձայն «ղ» և Թրիլիսի բարբառի «ղ» հնչյունը, գուցե և մի այդպիսի երևույթ կարելի է հաշվել նաև Սերաստիայի բարբառի «ո»-ն:

Հայերենի բարբառներում կան ձայնավորներ, բաղաձայններ և երկբարբառներ: Հսկասակ գրական լեզվին, բարբառներում ձայնավորներն առատ են. Կենարոնական բարբառները (Արարտայան, Մեղրու և Կարնո) միայն ունեն գրական լեզվի չափ ձայնավորներ:

#### ՁԱՅՆԱՎՈՐ ՀՆԶՅՈՒՆՆԵՐ

##### Ա.

«Ա» ձայնավորը գրաբարի մեջ, ինչպես և աշխարհաբար գրական լեզվի մեջ, պատկանում է ետին շարքի միջին բարձրության, օրինակ՝ Արարտա, Արաղած:

Բարբառներում հանդիպում են այդ ձայնավորի երկու տարբերակի՝ քմային (վերին բարձրության) և շրթնային (միջին բարձրության):

Քմային ձայնավոր «ան» ունեն հիմնականում մեր արևելյան բարբառները, համարյա բոլոր այն բարբառները, որոնք ունեն ձայնեղների խլացում, այսինքն կրում են առաջին կարգի տեղաշարժը, օրինակ՝

Ղարաբաղի բարբառ՝	կանմ, լանվ.
Շամախի	» պան, պանցրանըմ ամ, քինանցան ևս.
Մարաղայի	» խնրիբ, Հնրթնն, նանն, նանմէն.

Ուրմիայի բարբառ՝ պան, տանջա, ծնված, վաներ  
 Հաղորտի » ճանջ, ճնջ, ճրբած  
 Սվեդիայի » տանուկ, անուն, ախշնիբ (դանակ, մաման, աշխարհ):

Այդ նույն քմային «ան» ձայնավորը գտնում ենք նաև Մեղրու, Կարճևանի, Ագուլիսի, Նիկոմիդիայի, Սերաստիայի, Արարկիլի, Զեյթունի, Քեսաբի, Համշենի, Շապին-Գարահիսարի և Սարբերդ-Նրզնկայի բարբառներում: Այդ ձայնավորով առանձնապես առատ են Տիգրանակերտի և Վանի բարբառները:

«Ա» ձայնավորի քմայնացումից համեմատաբար ազատ են Արարատյան, Կարնս, Արդվինի, Ջուղայի, Պոլսի, Սուչավայի, Նոր-Նախիջևանի, Ռոգոսթոյի, Եվդեկիայի, Ակնա, Տրապիզոնի, Թբիլիսիի, Մշո և Ասարախանի բարբառները:

Շրթնային «ա» ձայնավոր ունեն Երևանի ևնթարբառին պատկանող Բայազեդի, Ինչպես և Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքները, օրինակ՝ Արամ, արեղ > արաղ, մարթ > մարդ և այլն:

Այս շրթնայնացած «ա» ձայնավորը անցման այն աստիճանն է, որից այն կողմը «ա» ձայնավորը վերածվում է պարզ «օ» ձայնավորի: Այդ տեղի է ունենում ամենից առաջ ընդային հնչյուններին նախորդող վիճակում. օրինակ՝

Ակնա բարբառ՝ ջօնջ > ճանճ, օրզև > անձրև:

Որոշ բարբառներում դա գտնում է օրենք. օրինակ՝

Մարաշի բարբառ՝ Իճօն > Իջան, դօն > տան, էդօն > ևղան, քօօն > քան:

Հանրնի բարբառ՝ մամն > ամօն, բան > պօն, տան > դօն:

Համշենի բարբառ՝ գաշթօմ > կարդամ, էզօնը > ևզանը, օնցընինք > անցնենք, հօմար > համար:

Բեյլանի, Մարաշի և Հանրնի բարբառներում շեշտի տակ օրինաչափ կերպով «ա» ձայնավորը վերածվում է «օ» ձայնավորի ամեն գեղարվում. օրինակ՝ քաղաք > քաղօք, կարաս > գարօս:

Մի շարք բարբառներում «ա» ձայնավորի վերածվելը «օ» ձայնավորի այլևս չի ենթարկվում վերևում հիշատակված օրինաչափության, և հաճախ հաճախ մեղ համար անակնկալ տեղերում հանդիպում ենք այդ երևույթին: Օրինակ՝

Ագուլիսի՝ հօց > հաց, մօրդ > մարդ, ճրբօզ > ճրպ:

Թբիլիսի՝ կօխիմ > կասեմ, կօնիմ > կանեմ:

Արդվին՝ կօնիմ > կառնեմ, կօին > կասեմ:

Սվեդիայի բարբառում «ա» ձայնավորը շեշտի տակ վերածվում է «ու» կամ «ու» ձայնավորի. օրինակ՝ բան > պուն, հաց > հուց, ծառ > ծուռ, մարդ > մուրթ, քար > քուր, կարաս > պարաս և այլն:

Ագուլիսի բարբառում նույն երևույթը տեղի է ունենում «ն» և «մ»

ընդայիններից առաջ՝ օրինակ՝ թան > թուն, թանկ > թունդ, համ > հում, ծամ > ծում և այլն: Ագուլիսի բարբառում «ա» ձայնավորի դիմաց գտնում ենք նաև՝ «է», «ի» (բամբակ > բիմբակ), «օյ» (ծալ > ծօլ):

Քեսաբի բարբառում այդ նույն «ա» ձայնավորը վերածվում է «ու» երկբարբառի. օրինակ՝ հաց > հուց, թաց > թուց, բան > պուն, մարդ > մուրթ և այլն:

Հալանական է, որ «ա» ձայնավորը վերածվել է «օ» կամ «ու» ձայնավորի այնպիսի տեղերում, որտեղ նա արտասանվել է շրթնայնացած, Ավելի ճիշտ կլիներ կարծել, որ այդ բարբառներին նախորդող լեզուները, այսինքն՝ այն տոնմական լեզուները, որոնք, սահմիլացվելով հայերենի կողմից՝ տեղի են տվել հայերենի բարբառների, ունեցել են շրթնայնացած «ա» ձայնավոր արտասանելու հատկություն, յուրացնելով հայերենը՝ «ա» ձայնավոր են շրթնային էլեմենտը, ու այն բոլոր տեղերում, որտեղ «ա»-ն արտասանվում է շրթնայնացած, ուղղակի արտասանում են պարզ «օ» կամ «ու» ձայնավոր:

«Ա» ձայնավորը որոշ բառերի մեջ տարբեր բարբառներում տարբեր փոփոխություն է կրում, այսինքն՝ վերածվում է «է», «ն», «օ», «այ», «ի» հնչյունների:

Օրինակ.

պէն > բան (Ղրբ.), բանակ > բարակ (Ագլս.), պանակ (Ուրմիա), բօրձ > բարձ (Ագլս.), այսող > ասեղ (Ագլս.), իվիլ — ավել (Ղրբ.), աման > էմուն, ամիս > էմիս (Քեսաբ):

Այդ փոփոխություններից հետաքրքրական է «ա» ձայնավորի «է»-ի վերածելու ճանապարհը: Մենք արդեն ասացինք, որ որոշ բարբառներ «ա» ձայնավորը արտասանում են քմային ան, այսինքն՝ արտասանության ժամանակ լեզվի ետին մասը բարձրանում է դեպի քիմքը: Այդ բարձրացման հետ միասին մի փոքրիկ տեղաշարժ կենսիս գեղի առաջ՝ արդեն քմային «ան» ձայնավորը վերածվում է առաջին շարքի միջին բարձրության ձայնավորի, որից և ստացվում է մաքուր «է» ձայնավորի արտասանությունը: Օրինակ՝ բան բառը Ուրմիայի բարբառում արտասանվում է «պան», իսկ Ղարաբաղի բարբառում՝ «պէն», այսինքն՝ բան > պան > պէն: «Ա» ձայնավորը զբաղարի մեջ հնչյունափոխության չի ենթարկվում, համարվում է ուժեղ, կայուն ձայնավոր: Հաշվի չենք առնում մի երկու դեպք, ինչպես, օրինակ, աստուած—աստուծոյ բառը:

Աշխարհաբար գրական հայերենում «ա» ձայնավորը նույնպես դիմաց-կուն ձայնավորներից է և փոքրիկ բացառություններ անփոփոխ է մնում ամեն դեպքում: Բայց միջին հայերենում արդեն նկատում ենք «ա» ձայնավորի անկումը միջին վանկում և կամ նրա վերափոխվելը «ը» ձայնավորի, օրինակ՝ առաջեալ—առջև, աղաչեմ—աղչեմ:

Եթե աշխարհաբար գրական լեզվի մեջ «ա» ձայնավորի անկում կամ փոփոխություն կա, ապա այդ կատարվել է ոչ ընդհանուր օրենքով, այսինքն՝ ոչ շեշտի տեղափոխության հետևանքով, այնպես, ինչպես մյուս ձայնավորները՝ ի, ու: Այդ փոփոխությունը կատարվել է գրաբարից աշխար-



հարար միջին հայերենի միջոցով, այսինքն՝ աշխարհաբար գրական լեզուն «ա» ձայնավորի փոփոխություն է կատարում այնպիսի բառերի մեջ, որոնք միջին հայերենից են վերցրված և գրաբարում այդպիսի փոփոխություն չունեն. օրինակ՝

առաջեալ > առջև, ագանիմ > հագնեմ, իջանեմ > իջնեմ, ելանեմ > ելնեմ և այլն:

Իր սեփական ձայնավոր «ա»-ն աշխարհաբար գրական լեզուն հնչյունափոխության չի ենթարկում, օրինակ՝ ագատ, ագատի, մարագ, մարագի, մարագով և այլն:

Բարբառներում «ա» ձայնավորը ենթարկվում է հնչյունափոխության շատ հաճախ և այնպիսի դեպքերում, երբ շեշտն ընկած է «ա» ձայնավորից հետո: Այդպիսի դեպքում կամ «ա» ձայնավորը վերածվում է «ը» ձայնավորի և կամ ուղղակի դուրս է ընկնում: Օրինակ՝ Ղըբ.՝ քվրաւրան—ավետարան, ըխըրկան—աղջկան, տըվարավ—տավարով, նըղըցնէն—ջաղացները: Ուրմիա՝ մարաք—մարքի—մարքէն, վարժըպու՛տ—վարժապետ:

Ղարաղաղի բարբառում «ա» ձայնավորի վերածումը «ը» ձայնավորի կատարվում է խիստ օրինաչափ կերպով, շեշտից առաջ ընկած բոլոր վանկերում. օրինակ՝ աման > ըմբօտէնք՝ (ամաններ), բոավօտ > ըրբօտէն անէ:

Այսպես է նաև Աղուլիսի բարբառում՝ օրինակ՝ տանաէր > տընտայր, արտասուք > ըտասուներ, քաղահանել > քըղըհանել և այլն:

է

Գրաբար լեզվի մեջ, մեր կարծիքով, չի եղել մաքուր «է» ձայնավոր, այլ յստացիայի ենթարկված կամ քմայնացած «է», որի արտասանությունը մոտ է երկբարբառայինին, համարյա այնպիսին «է», որպիսին ունի ուսուսաց լեզուն շեշտի տակ փափուկ բաղաձայնից հետո և կոշտից առաջ (e), օրինակ՝ HET, CBET, COBET և նման բառերի մեջ: Այսպիսի «է»-ն բարբառագիտության մեջ, ինչպես և գրաբարում՝ զբվում է «ե» տառով:

Այդպիսի «ե» ունեն մեր բարբառներից մի քանիսը միայն, հատկապես Հաճընի, Ջեյթունի, Վանի, Ուրմիայի, Սոյի բարբառները, Մշո բարբառի արևելյան հատվածը, Արարատյան բարբառի նոր Բայազետի ենթաբարբառը. օրինակ՝

Վանի բարբառ՝ մե (միե), ք՛ե, խուլեմ (խալիեմ)...

Ուրմիայի բարբ.՝ աես (աիե), տանեմ (տանիեմ), պեոթ (պիեոթ)...

Սոյի բարբ. պըրժե (պըրժիե), տըրե (տըրիե)...

Ն. Բայազետի ենթաբարբ.՝ մեր (միեր), ձ՛եր (ձիեր)...

Հանընի բարբառ՝ ստեղ (ասիեղ), երես > իյես (իյիես), զրել > կիյել (կիյիել)...

Գրական լեզուն ունի պարզ «է» ձայնավորը, որը փոխարինում է գրաբարյան «ե» ձայնավորին և «է» երկբարբառին. վերջինս գրաբարում արտասանվում էր «էյ», Գրաբարի «է»-ն գրական լեզվի մեջ ձանաչվում է նրանով, որ կրում է հնչյունափոխություն. օրինակ՝ պարտեզ > պարտիզի, կես > կիսատ, սեր > սիրո և այլն, Այդ բոլոր բառերը գրաբարում ունե-

ցել են «է», այսինքն «ե» ձայնավորի կողքին նաև կիսաձայն «ի»=«յ», Շեշտի տակ ձայնավոր «է»-ն գերակշռություն է ունեցել, մինչդեռ շեշտը հաջորդ վանկին անցնելիս «յ» կիսաձայնը «ե» ձայնավորից վերցնում է ձայնավորական հատկանիշը և վերածվում է «ի» ձայնավորի: Այդ տեղի է ունենում հենց արտասանական հարմարություն պատճառով, որովհետև այս երկու հնչյուններն էլ վերին բարձրության հնչյուններ են, և լեզվի փոքրիկ տեղաշարժը միաձուլում է դրանց. «ե» ձայնավորը կորցնում է իր տեղը, երբ լեզվի միջին մասը մի քիչ առաջ է շարժվում, իսկ «յ» կիսաձայնը արտասանվում է ափելի մեծ բացվածքով և կորցնում է իր բաղաձայնական տարրը, որից և ստացվում է «ի» ձայնավոր, իսկ ընդհանուր հետևանքը լինում է հնչյունափոխությունը (կեսյ > կեյխատ > կիսատ):

Երկրորդ «է»-ն գրական լեզվի մեջ ստացվում է գրաբարյան քմային «ե»-ից, որտեղ քմայնացումը կորչում է և ստացվում է մաքուր «է», օրինակ՝ մեր, ձեր, բերել և այլն (արտասանվում են այժմ՝ մէր, ձէր, բէրել և այլն):

Բարբառներում «է» ձայնավորը ևս ունի տարբերակներ և փոխափոխներ:

Նկատելի է, որ գրաբարյան «է» երկհնչյունի զիմաց բարբառներում միշտ «է» հնչյունն է, իսկ գրաբարյան «ե»-ի զիմաց մի շարք բարբառներում, որոնց մասին հիշեցինք վերևը, գտնում ենք երկբարբառային «ե»: Օրինակ՝ զրբ. մէջ, Վան՝ մէչ, զրբ.՝ տեղ, Վան՝ տեղ, (արտասանվում է աիեղ):

«Ե»-ն ուժեղ երկբարբառային արտասանություն ունի Հաճընի բարբառում:

Այդ «ե»-ի զիմաց բարբառներում կան նաև միջին բարձրության «է» և «ե», որ նույնպես երկբարբառային արտասանություն ունեն. օրինակ Մշո բարբառում՝ արեղ > տեղ, Ղարաբաղի բարբառում՝ մըր > մեր, ծըր > ձեր:

«Ե» ձայնավորը գրաբարում հնչյունափոխության երբեք չէր ենթարկվում: Հնչյունափոխության չի ենթարկվում նաև գրական լեզվի մեջ, սակայն բարբառներում թե՛ հնչյունափոխության է ենթարկվում և թե՛ ուղղակի վերածվում է այլ ձայնավորի (է, օ, ի, օ և յե, վերջինս բառակերպին):

է > է Պոլիս՝ էս > ես, Նիկոմիդիա՝ էրէզ, > երեկ, Երևան՝ էրազ > երազ:

ե > ա կամ օ Ագուլիսի, Ղրբ. Մեղրի, կրն. արազ > երազ, արկաթ > երկաթ:

Ագուլ. օրկու > երկու, բնրան > բերան. Հաղբուր՝ օրնոզ > երազ:

ե > օ Ագուլիս՝ օրգում > երգում, Ուրմիա՝ օրթում > երգում:

ե > ը կամ ը Քեսաբ՝ ըրգուք > երկու: Ղարաբաղ՝ մըր > մեր, փըսէ > փեսա:

Գրաբարի «ե» բառակցորին «լ» դառնալը հանրահայտ է. օրինակ, երևան՝ յէս > ես, յէզ > եզն և այլն.

ե > յի

եւ > յիւ, երբ > յիբ (Թբիլիսի), եզն > յիզ (Համշեն), եղան > յիղուն, երազ > յիրուզ (Սվեդիա).

ե > ի

երևան՝ երեք > իրէք, Ուրմիա՝ երեք > իրէք, Զեյթուն՝ երես > իյես, տեղ > աիղ (Թբիլ.), գուգիմ > կուգեմ (Տրապիզոն), տտեղ > տտիղ (Սվեդիա), բերան > պիրուէն (Քեսաբ.), երեկ > իյէղ (Համշեն).

Ը

«Ը» ձայնավորը հայերեն լեզվի սպեյրիֆիկ ձայնավորն է. երբ հանդիպում են բաղաձայնների կուտակումներ, ապա «ը» ձայնավորը միշտ գրվում է գրանց արանքում և հնարավոր դարձնում բաղաձայնների փոխարեն վանկեր արտասանել. օրինակ՝ Մկրտիչ բառը չորս բաղաձայն ունի, սակայն գրանց ներքում արտասանվում է երկու «ը» ձայնավոր, որով գրաֆիկայի մեջ մեկ վանկ ունեցող բառն արտասանության մեջ դառնում է եռավանկ՝ Մրկրրտիչ. մրկրրալ (գրվում է՝ մղկալ) և այլն.

Բառակցի երկու բաղաձայնի արտասանությունը հայերենում անհնարին է. անպայման կամ գրանց միջև պետք է լինի մի «ը» ձայնավոր, կամ գրանցից առաջ. Դրա հետևանքով է, որ սկ, սպ և նման կապակցությունները արտասանության մեջ սկզբից ունենում են մի «ը» ձայնավոր. եթե նույնիսկ մի օտար բառ, ունենալով բառակցի երկու բաղաձայն, մանում է հայերեն լեզվի մեջ, հայերեն լեզուն ավելացնում է գրանց միջև կամ գրանց վրա մի ձայնավոր, հաճախ «ը» ձայնավորը. Օրինակ бригада > բրիգազ (գրվում է բրիգազ), проспект > պրոսպեկա (գրվում է պրոսպեկա):

«Ը» ձայնավորի առկայությունը երկու բաղաձայնի միջև անքան է սովորական, որ հայերեն գրական լեզուն ավանդական կերպով սրտում ունի չգրելու այդ ձայնավորը. Մի ուրիշ լեզվի մեջ նման երևույթ նրկատված չէ.

Հայերեն լեզուն այնքան է սիրում «ը» ձայնավորը, որ ուրիշ հրնչյուններ ենթարկելով հնչյունափոխության՝ վերածում է «ը» ձայնավորի. Օրինակ՝ ջուր—ջրբի, գիր—գրբի և այլն:

Բարբառներն էլ ավելի շատ են սիրում «ը» ձայնավորը. Կարելի է ասել, որ այդ «ը» ձայնավորի առատությունը մեր ժողովրդական բարբառների ընդհանուր հատկությունն է. Բարբառները հնչյունափոխության հետևանքով «ը» ձայնավորի են վերածում համարյա բոլոր մյուս ձայնավորները. Օրինակ՝ ի > ր, գիր—գրբի, ու—ը, ջուր—ջրբի (երևան). ա > ք, ապուլեցի—քզըլացի, հավաքված—հըվաքված (Ազլս.). ե—ը, տեսա > տրսամ (Ուրմ.), հեռանամ—հըռնաս րմ (Հաղբութ.). ո—ը, սողում եմ, ըզըղիյ յիմ (Կարճ.) և այլն.

«Ը» ձայնավորի մի երկու տարբերակ կա բարբառներում: «Ը» ձայնավորը արտասանվում է ավելի ցածր դիրքով «ը», Օրինակ՝ մըս > միս, սըրտ > սիրտ (Շամալի), դընազ > կնիկ (Զեյթուն), տըվըմ > տվեցի (Ուրմիա), քըթ > քիթ, մըս > միս (Ղարաղաղ):

«Ը» ձայնավորը արտասանվում է երբեմն միջին շարքի վերին բարձրություն «ը», առասկան «ել» (կոշա «ի» ձայնավորին է փոխարինում): Օրինակ՝ կընըրմ > կընիկ (Ուրմիա), խըմըր > խմոր, անձըր > անձր (Մարաղա):

«Ը» ձայնավորը որոշ բարբառներում բառակցից դժվարությամբ է արտասանվում, օրինակ՝ Վանի բարբառում և Ուրմիայի բարբառում որնգայինից առաջ արտասանվում է «ի», օրինակ՝ Վան, Ուրմիա՝ ինգիյեր > ընկեր, Ուրմիա՝ ինգիոզ > ընկուզ, ինել > ընկնել.

Որոշ դեպքերում ներդաշնակության օրենքով կարող է վերածվել ուրիշ ձայնավորի՝ օրինակ, Ուրմիա՝ ունթննէլ > ընդունել, իստիպել > ստիպել.

Թբիլիսիի բարբառում «ըն» կապակցության փոխարեն լինում է «ըն», այսինքն «ը» ձայնավորը սկզբից մի բաղաձայն է ստանում արտասանվելու համար, օրինակ՝ նընգիլ—ընկնել, նընգիլ—ընկեր.

Մի շարք բարբառներում ստանում է բառակցի «ն» բաղաձայնը, օրինակ՝ նընգիլ—ընկեր, նըմէն—ըմեն (ամեն):

Սովորաբար հայերեն լեզվի մեջ բառակցի «ը» ձայնավորով սկսվում են «ընդ» և «ըստ» նախդիրները և բոլոր այն բառերը, որոնք բարդված են «ընդ» բառով: Բացառություն են կազմում ըղձալ, ըղձական, ըմպել և նման բառերը, որտեղ «ը» ձայնավորը հնչյունափոխված «ի» կամ «ու» ձայնավորն է. «Ը» ձայնավորով սկսվում են խիստ քիչ թվով բառեր:

Այդուհանդերձ բանավոր խոսքի մեջ «ը» ձայնավորը գրվում է երկու բաղաձայն ունեցող բառի սկզբում, օրինակ՝ ըստանալ, ըսպասել, ըսկըսել...

Վանի բարբառում «ըն» կապակցությունը դուրս է ընկնում ընկուզ բառի (մեջ դոզ—ընկուզ), ապա և ձիկ (ընձիկ) բառում:

Վանի բարբառը և Մշո բարբառի արևելյան ճյուղը բառակցի «ը» ձայնավորը չի արտասանում (իմ ինդեր կուրմ): Ուրմիայի բարբառի բառակցի «ը»-ն (հոզը) արտասանվում է «ա» կամ «օ» (տուռա—գուռը, պնկմ—բակը):

Հայերեն բառերի վերջին երկու բաղաձայնը հեշտ է արտասանել սովորաբար այն դեպքում, եթե առաջինը շփական է, կամ ձայնորդ, օրինակ՝ խոսք, վազք, երթ, հարկ, կարգ, գունդ և այլն. եթե առաջինը պայթական բաղաձայն է, ապա որևէ հաջորդի մեջ պետք է գրվի «ը» ձայնավորը, որը և վանկ կկազմի. Ավելի ևս դրա անհրաժեշտությունն զգացվում է, եթե բառակցում երեք բաղաձայն է, օրինակ՝ բարձր (բարբր):

Հայերեն լեզվի այդ հատկությունից առաջացել է մեր «ը» հոզը. Այսպես՝ բառակցի բաղաձայնի վրա ընդհանուր հայերենի «ն» հոզն էլ բարբառափոխություն—8

Գրաբարի «ե» բառակցքին «յէ» դառնալը հանրահայտ է. օրինակ, երևան՝ յէս > ես, յէզ > եզն և այլն:

ե > յի

եւ > յիս, երբ > յիփ (Թբիլիսի), եզն > յիզ (Համշեն), եղան > յիղուն, երազ > յիրուզ (Սվեդիա):

ե > ի

երևան՝ երեք > իրէք, Ուրմիա՝ երեք > իրէք՝, Ջեյթուն՝ երես > իյիս, տեղ > աիղ (Թբիլիսի), գուզիմ > կուզեմ (Տրապիզոն), ասեղ > ասիղ (Սվեդիա), բերան > պիրանն (Քեսաբ.), երեկ > իյեկ (Համշեն):

Ը

«Ը» ձայնավորը հայերեն լեզվի սպեցիֆիկ ձայնավորն է. երբ հանդիպում են բաղաձայնների կուտակումներ, ապա «ը» ձայնավորը միշտ գրվում է դրանց արանքում և նախադիր դարձնում բաղաձայնների փոխարեն վանկեր արտասանելու օրինակ՝ Մկրտիչ բառը չորս բաղաձայն ունի, սակայն դրանց ներքում արտասանվում է երկու «ը» ձայնավոր, որով գրաֆիկայի մեջ մեկ վանկ ունեցող բառն արտասանության մեջ դառնում է երեք վանկ՝ Մրկրտիչ. մրկրտալ (գրվում է՝ մրկտալ) և այլն:

Բառակցքի երկու բաղաձայնի արտասանությունը հայերենում անհնարին է. անպայման կամ դրանց միջև պետք է լինի մի «ը» ձայնավոր, կամ դրանցից առաջ, Դրա հետևանքով է, որ սկի, սպ և նման կապակցությունները արտասանության մեջ սկզբից ունենում են մի «ը» ձայնավոր. եթե նույնիսկ մի օտար բառ, ունենալով բառակցքին երկու բաղաձայն, մտնում է հայերեն լեզվի մեջ, հայերեն լեզուն ավելացնում է դրանց միջև կամ դրանց վրա մի ձայնավոր, հաճախ «ը» ձայնավորը. Օրինակ бригада > բրբիգադ (գրվում է բրիգադ), проспект > պրոսպեկա (գրվում է պրոսպեկա):

«Ը» ձայնավորի առկայությունը երկու բաղաձայնի միջև անբան է սովորական, որ հայերեն գրական լեզուն ավանդական կերպով որոշում ունի չգրելու այդ ձայնավորը: Մի ուրիշ լեզվի մեջ նման երևույթ նրկատված չէ:

Հայերեն լեզուն այնքան է սիրում «ը» ձայնավորը, որ ուրիշ հրնչյուններ ենթարկելով հնչյունափոխության՝ վերածում է «ը» ձայնավորի. Օրինակ՝ ջուր—ջրբի, գիր—գրբի և այլն:

Բարբառներն էլ ավելի շատ են սիրում «ը» ձայնավորը: Կարելի է տեսլ, որ այդ «ը» ձայնավորի առատությունը մեր ժողովրդական բարբառների ընդհանուր հատկությունն է. Բարբառները հնչյունափոխության հետևանքով «ը» ձայնավորի են վերածում համարյա բոլոր մյուս ձայնավորները. Օրինակ՝ ի > ր, գիր—գրբի. ու—ը, ջուր—ջրբի (երևան). ա > ք ազուլեցի—բզբլացի, հավաքված—հըվաքված (Ազու.). ե—ը, տեսա > աքսամ (Ուրմ.), հեռանամ—հըռնամ (Հագրութ.). ո—ը, սողում եմ, բզբլեյ յիմ (Կարճ.) և այլն:

«Ը» ձայնավորի մի երկու տարբերակ կա բարբառներում: «Ը» ձայնավորը արտասանվում է ավելի ցածր գիրքով «ը»: Օրինակ՝ մըս > միս, սըրա > սիրա (Շամալի), զընագ > կնիկ (Ջեյթուն), աըվըմ > ավեցի (Ուրմիա), քըթ > քիթ, մըս > միս (Ղարաղաղ):

«Ը» ձայնավորը արտասանվում է երբեմն միջին շարքի վերին բարձրության «ը», ուստիս «ն» (կոշա թի) ձայնավորին է փոխարինում: Օրինակ՝ կընըկ > կընիկ (Ուրմիա), խըմըր > խմոր, անձըբ > անձրե (Մարաղա):

«Ը» ձայնավորը որոշ բարբառներում բառակցքին դժվարություն է արտասանվում, օրինակ՝ Վանի բարբառում և Ուրմիայի բարբառում որնպայինից առաջ արտասանվում է «ի», օրինակ՝ Վան, Ուրմիա՝ ինդյեր > ընկեր, Ուրմիա՝ ինդոզ > ընկուզ, ինել > ընկնել:

Որոշ դեպքերում ներդաշնակության օրենքով կարող է վերածվել ուրիշ ձայնավորի՝ օրինակ, Ուրմիա՝ ունթունել > ընդունել, խախել > սախել:

Թբիլիսիի բարբառում «ըն» կապակցության փոխարեն լինում է «նըն», այսինքն «ը» ձայնավորը սկզբից մի բաղաձայն է ստանում արտասանվելու համար, օրինակ՝ նընգնիլ—ընկնել, նընգիր—ընկեր:

Մի շարք բարբառներում ստանում է բառակցքին «ն» բաղաձայնը, օրինակ՝ նընգեր—ընկեր, նըմն—ըմեն (ամեն):

Սովորաբար հայերեն լեզվի մեջ բառակցքին «ը» ձայնավորով սկսվում են «ընդ» և «ըստ» նախդիրները և բոլոր այն բառերը, որոնք բարդված են «ընդ» բառով: Բացառություն են կազմում ըղձալ, ըղձական, ըմպել և նման բառերը, որտեղ «ը» ձայնավորը հնչյունափոխված «ի» կամ «ու» ձայնավորն է: «Ը» ձայնավորով սկսվում են խիստ քիչ թվով բառեր:

Այդուհանդերձ բանավոր խոսքի մեջ «ը» ձայնավորը գրվում է երկու բաղաձայն ունեցող բառի սկզբում, օրինակ՝ ըստանալ, ըսպասել, ըսկըսել...

Վանի բարբառում «ըն» կապակցությունը դուրս է ընկնում ընկուզ բառի (մեջ դոզ—ընկուզ), ապա և ձիկ (ընձիկ) բառում:

Վանի բարբառը և Մշո բարբառի արևելյան ճյուղը բառավերջի «ը» ձայնավորը չի արտասանում (իմ ինդեր կուլմ): Ուրմիայի բարբառի բառավերջի «ը»-ն (հոգը) արտասանվում է «ա» կամ «ն» (տուռա—դուռը, պնիմ—բակը):

Հայերեն բառերի վերջին երկու բաղաձայնը հեշտ է արտասանել սովորաբար այն գեպում, եթե առաջինը շփական է, կամ ձայնորդ, օրինակ՝ խոսք, վազք, երթ, հարկ, կարգ, գունդ և այլն. եթե առաջինը պայթական բաղաձայն է, ապա սրա և հաջորդի մեջ պետք է գրվի «ը» ձայնավորը, որը և վանկ կհագմի. Ավելի ևս դրա անհրաժեշտությունն զգացվում է, եթե բառավերջում երեք բաղաձայն է, օրինակ՝ բարձր (բարցըր):

Հայերեն լեզվի այդ հատկությունից առաջացել է մեր «ը» հոգը. Այսպես՝ բառավերջի բաղաձայնի վրա ընդհանուր հայերենի «ն» հոգն հայ բարբառափոխություն—8

ավերանալով պահանջ է առաջացրել երկու բաղաձայնի մեջ «ը» ձայնավորն ավելացնելու: Օրինակ՝ հոտն—հոտը, փակն—փակը, պատն—պատը և այլն:

Այսպիսով «ն» հոդի ավելացումով ստացվել է բառավերջում երկու հնչյուն՝ «ը» և «ն», որոնք երկուսն էլ գիտակցվել են իբրև որոշող հոդ:

Աշխարհաբարը և բարբառները բառավերջի բաղաձայնից հետո արմատական «ն»-ն դուրս են գցել՝ արտասանության հեշտության համար: օրինակ՝ մուկն—մուկ, ձուկն—ձուկ, հարսն—հարս, նուռն—նուռ: Այն բարբառները, որոնք դուրս չեն գցել, ավելացրել են մեկ «ը» նույնպես արտասանության հեշտության համար: օրինակ՝ Ղարաբաղ՝ ձուկնը—ձուկն, առնը—գուռն և այլն:

Այն դեպքում, երբ այդ «ն»-ն որոշող հոդն է եղել, նրան դուրս գցելով՝ նշանակությունը փոխադրել են նախորդ «ը» ձայնավորի վրա, որից ստացվել է ժամանակակից հայերենի «ը» հոդը: օրինակ՝ գիրն—գիրը, հացն—հացը, հացը—հացը և այլն: Որ այդպիսի երևույթ կարող է լինել, վկայում են Շամշադինի և Ղաղախի խոսվածքները, որոնք ձուկն, մուկն բառերի մեջ պահում են արմատական «ն»-ի տեղ «ը» (քննարկ ձուկը պահում—գնացի ձուկ բռնելու):

Ձայնավորով վերջացող բառերում որոշող հոդն է միշտ «ն», այսինքն՝ առօրյա դրաբարյանը:

Երբ որոշող «ը» հոդ ունեցող բառից հետո հաջորդում է ձայնավորով սկզբից բառ՝ այդ դեպքում հայերեն բուն «ն» հոդը վերականգնվում է, որովհետև վերանում է քառավերջում երկու բաղաձայն (ք+ն) արտասանելու դժվարությունը: օրինակ՝ գիրքն առավ, մարդն ասաց, հոտն կկալ:

«Ը» ձայնավորով հարուստ է առանձնապես Շամախու բարբառը: Հայտնի է, որ «ը» ձայնավորը հայերեն լեզվի մեջ անշեշտ ձայնավոր է, այսինքն՝ երբևէ շեշտն այս ձայնավորով կազմվող վանկի վրա չի լինում, մինչդեռ Շամախու բարբառում շատ հաճախ այս ձայնավորը շեշտվում է: Գիտենք, որ ուրիշ ձայնավորներ վերածվում են «ը» ձայնավորի անշեշտ գիրքում, իսկ Շամախու բարբառում շեշտի տակ, որի հետևանքով «ը» ձայնավորը շեշտվում է: Օրինակ՝ մըտի—միտք, սըրտ—սիրտ և այլն:

Նույն երևույթն ավելի թեթև կերպով նկատվում է Ուրմիայի և Տիգրանակերտի բարբառներում: օրինակ՝ մրո > ցեց, սրո > գողանիք:

Ի

«Ի» ձայնավորը զանազան տարբերակներ կարող է ունենալ: Լեզվաբանությունը հայտնի են կարճ ի, երկար ի և այլն: Գրաբարի և աշխարհաբարի ի-ն սովորական միջին երկարություն ձայնավոր է: Այդ ձայնավորը առաջին շարքի վերին բարձրության ձայնավոր է: Լինելով խիստ թույլ ձայնավոր, ենթարկվում է հնչյունափոխության թե՛ դրաբարում և թե՛ աշխարհաբարում՝ կամ դուրս է բնկնում, ինչպես, օրինակ, ամիս—ամսական, պատիվ—պատվական, և կամ վերածվում է ձայնավորի, ինչպես, օրինակ, ջիղ—ջրղեր, գիրք—գրքեր և այլն:

Կարելի է ասել, որ այդ ձայնավորը հայերենի բոլոր ձայնավորներից ավելի շատ և շուտ հնչյունափոխության ենթարկվող ձայնավորն է, մինչդեռ

շատ լեզուներում, օրինակ, ուսերեն, ֆրանսերեն, լատիներեն և այլն դա հնչյունափոխության չի ենթարկվում:

Այդ ձայնավորը բարբառներում ունի երեք տարբերակ:

1. Միջին շարքի վերին բարձրության ի, ուսերեն Է-ի նման, Օրինակ՝ Ուրմիա—խըռձը կ—խըռձիկ (աիկնիկ), կընը կ—կնիկ:

2. Երկբարբառային երկար ի, որ մտանում է էյ երկբարբառի արտասանության, օրինակ՝ խնամէլ—խնամի, խէյզար—խիզար, վէյզ—վիզ (Ողմի բարբառ), հէյն > հին, մէյաք > միաք (Քեսաբ):

Ի ձայնավորը երկբարբառային արտասանություն ունի Ղարաբաղ և Ղարադաղի բարբառներում: օրինակ՝ մըտ—միտ, կըռըվ—կուրվ:

Բարբառներում «ի» ձայնավորի դիմաց մենք գտնում ենք նաև «է» ձայնավոր: օրինակ՝ քէթ—քիթ, տարէ—տարի, կ'օրէ—գարի (Ղարաբաղի), գ'օրէ—գարի, ջօրէ—ջորի (Ղարադաղ), մէս > միս, հէն > հին (Սվեդիա), քէթ > քիթ, դէզ > տիկ (Քեսաբ):

Մեր կարծիքով այս փոփոխությունը տեղի է ունեցել այն պատճառով, որ մեր այս բարբառների նախորդները, հայերենից հաղթված և մահացած տոմական լեզուները, ունեցել են երկար «ի» ձայնավոր արտասանելու հատկություն, նրանց մահացման և հայերեն բարբառներ առաջանալու պրոցեսում խոսողները հայերենի «ի» ձայնավորը երկար արտասանելիս վերածել են պարզ «է» ձայնավորի, որի հետևանքով ստացվել է այս փոփոխությունը: «Ի» ձայնավորն Ուրմիայի, Սոյի և Մարաղայի բարբառներում սեռականում արտասանվում է ը՛: օրինակ՝ խացը՛—հացի, ճըրը՛—ջրի և այլն:

Ի ձայնավորը ուրիշ բարբառներում ունի հետևյալ փոփոխությունները:

- ը՛. ամըտ > ամիտ (Ղերդ):
- ը՛. սըրտ > սիրտ (Շամախի), մըս—միս, քըթ—քիթ (Ղարադաղ):
- էյ. լէյզիլ > լիզել (Աղուլիս), մարթեյկ > մարդիկ (Ողմի):
- ույ. մույն > մին (Աղուլ):
- ու. ունչ > ինչ (Աղուլ):
- այ. մայս > միս (Աղուլ):
- ա. սարսն > սիրուն (Աղուլ):
- ա. սարտ > սիրտ (Աղուլ): բառավերջում ա. կինա > գինի (Սվեդիա):
- գ'օրա՛ > տարի, կրիա > գրելի (Քեսաբ): քեռա > քեռի (Մարաշ):
- ե. կըռըք՛ > կըրտ (Վան), քըռըք՛ > կըրտ (Ուրմիա):

Ո

Այդ ձայնավորը, մեր կարծիքով, գրաբարում եղել է երկբարբառային արտասանությամբ՝ որ ձևով, ինչպես այդ լավում է Ջեյթունի և Քեսաբի բարբառներում, օրինակ՝ ախոզը > աղքատ (Ջեյթուն), գուրվ > կով (Քեսաբ):

Վանի բարբառն այդ արտասանությունը է՛լ ավելի երկբարբառաց- նում է և վերածվում ու՛ է արտասանության, նույնն է նաև Ուրմիայի, Սոյի, Մարաղայի և Հաճընի բարբառներում, Օրինակ՝

Վան՝ խոա (խու՛ա), խոզ (խու՛զ)

Ուրմիա՝ խոա (խու՛ա), խոզ (խու՛զ)

Մարաղա՝ խոա (խու՛ա), խոզ (խու՛զ)

Հաճըն՝ տոզ (դու՛զ), սոխ (սու՛խ)

Այսպես է նաև Աշտարակի, Օշականի և Լոռու խոսվածքներում. օր-

Աշտարակ, Օշական՝ փոզ (փու՛զ)

Լոռի՝ գոզ (գու՛զ) փոզ (փու՛զ)

Այդ նույն արտասանությունը գտնում ենք նոր-Բայազեդի ենթա- բարբառի մեջ. օրինակ՝

Ն. Բայազեդ՝ դ՛որ (դու՛ր)

«Վ» հնչյունից առջև Հաճընի բարբառում «ո»-ն արտասանվում է «է».

«Ո» ձայնավորի արտասանությունը բառամիջում իբրև «օ» գտնում ենք բարբառների մեծ մասում՝ Պոլիս, Նոր-Նախիջևան, Ռոզոսթո, Կարին, Մուշ, Համշեն և այլն:

Բառակազմի կազմի մեջ գրաբարյան այս «ո» ձայնավորը արտասանվում է «օ», որ ամենալավ ապացույցն է, թե այդ ձայնավորը երկբարբառային արտասանության շրթնային ձայնավոր է եղել, որի մեջ երկբարբառային էլեմենտը ու՛ էր անհամարժեք վերածվել է շրթնա-ատամնային «օ» բաղաձայնի: Այդ երևույթը նկատվում է Երևանի և մի շարք այլ բարբառներում, մինչդեռ Ղարաբաղի բարբառում վերածվել է վրէ հնչյու- նախմբի, Օրինակ՝ Երևան. վօա > ոտն, Ջուղա՝ վօր > օր, Ն. Նախիջևան՝ վօրն է > օրն է և այլն:

Ուրմիայի, Եվդոկիայի և Հաճընի բարբառներում ո-ն ընդունել է բառակազմի «վու՛» (վուե) կերպարանքը և արտասանվում է երեք հնչյու- նով միասին, իսկ բառամիջում «ու՛» ձևը. օրինակ՝ Ուրմիա՝ վու՛ա > ոտն, վու՛րի > օրը, Եվդոկիա՝ սու՛խ > սոխ, հու՛գ > հոտ, Հաճըն՝ աթու՛ն > աթոս, պու՛խ > բոզի:

Նույնը և Վանի բարբառում, Բայազեդի ենթաբարբառում և այլն. օրինակ՝

Վան. վու՛ր > օր, վու՛նպօղլերի > օրեկայրի

Ն. Բայազեդ. վու՛սկի > սոսկի

Մի շարք բարբառներում այդ ձայնավորը բառակազմի, գրկվելով իր երկբարբառային էլեմենտից, արտասանվում է պարզ օ. օրինակ՝ Կարին՝ օր, օսկրոնկ > օր, սոկրներ, Մուշ՝ օր, օգք > օր, սաք, Տիգրանակերտ՝ օսկի > սոսկի, Սարբերդ՝ օգք > սաք, Տրապիզոն՝ օսգօն > սոկր, Համշեն՝ օգք > սաք:

Այդ հնչյունի գիմաց մենք մի շարք բարբառներում գտնում ենք տարբեր հնչյուններ, Թբիլիսի և Ագուլիսի բարբառներում «ո»-ն վերած-

վում է «ու» ձայնավորի միավանկ բառերում և շեշտի տակ. օրինակ՝ փուր > փոր, փուղ < փող (Թբիլիսի), փուր > փոր, հուտ > հոտ (Ագուլիս):

Բառակազմի այդ նույն ձայնավորը արտասանվում է վու. օրինակ՝ վուա > ոտն, վուրթի > օրդի (Թբիլիսի):

Սվեդիայի և Քեսաբի բարբառներում «ո»-ն վերածվում է «ու» կամ «օ» հնչյունի. օրինակ խօզ > խոզ, ձուվ > ձով (Սվեդիա), խօզ > խոտ, կուզ > գոզ (Քեսաբ):

Բառամիջում «ու» է արտասանվում նաև Ղարաբաղի բարբառում, օրինակ՝ տուրուն > տորոն, կուտեմնը > կոտեմն, յէխաուտ > ապոտ և այլն:

«Ո» ձայնավորի համապատասխան շատ տարբեր հնչյուններ մենք գտնում ենք դանազան բարբառներում. օրինակ՝

ո > ղրէ. ոտն > ղրէնը, սոկոր > ղրէսկէրո (Ղրբզ)

ո > ու. գոզ > գ՛նզ, գոզ > գ՛նզ, խնձոր > խնձուր (Ագլս)

ո > է. ջօրի > ջէրի, հոզի > հէզի, ոչխար > էխար (Ագլս)

ո > ա. գովել > գ՛նվել, կոտեմն > կ՛տեմն (Ագլս)

ո > ա. փոխել > փահել, մոխիր > մախիր, սոկի > սոկի (Ագլս). գո- մէշ > գ՛նվմէշ (Սեբաստիա)

ո > ը. ոտն > ղրնը, օրս > ղրս, սովորիր > սըվըրէ (Դգմար)

ո > ի. ցորեն > ցիրին, ջորի > ճիրա, սոկի > իսկա (Սվեդիա), սոկր > իսկուր, հոզի > հիզի (Քեսաբ)

ո > ղր. ոտն > ղրա, օր > ղրը (Սվեդիա). սոպ > ղրս, օր > ղրի (Քեսաբ)

ո > ղր. ոտն > ղրնը, օրս > ղրս, սովորիր > սըվըրէ (Ղարաբաղ)

ո > ո (ուէօ). գօրա > գօրդ, հորթ > ֆորթ (Սեբաստիա)

Այս «ո» ձայնավորը թե՛ գրաբարի և թե՛ գրական լեզվի մեջ հնչյու- նափոխության չի ենթարկվում, սակայն միջին հայերենում այդպիսի փոփոխությունների ենթակա է. օրինակ՝ ժողովեմ > ժողվեմ, բուրեմ > բու- րիմ, ժամանակակից գրական լեզվի մեջ «ո»-ն ընկել է սորա, դորա և նման ձևերում, Բարբառներում որոշ դեպքերում նույնպես հնչյունափոխ- վում է:

Այս ձայնավորի քմային արտասանությունը գտնում ենք (Ղարաբաղի, Վանի, Ուրմիայի, Համշենի և Շամախու բարբառներում. օրինակ՝

ձօր > ձօր, գօզ > կ՛օզ (Ղրբ), ձօր > ձօր (Ղարաբաղի)

գօրա > կ՛օնա, գօր > կ՛օն (Վան)

ցօրեն > ցօրօն, բուր > օրօր (Ուրմիա)

ուր > ուրօր (Շամախի), չօրս > չօրս (Համշ)

Իբրև ու՛ արտասանվում է Ուրմիայի և Մարաղայի բարբառներում. օրինակ՝

ուր > ու՛ր, ձօր > ձօ՛ր (Ուրմիա)

գօր > կ՛օ՛ր, խոտ < խօ՛տ (Մարաղա)

ԵՐԿԲԱՐՐԱԹՎԵՐ

Գրաբարը հարուստ է եղել իր երկբարբառներով: Այս երևում է հենց գրաբարյան գրութունը պարզ վերլուծման ենթարկելու միջոցով. Գրաբարի ձայնավորները միանալով կիսաձայնների հետ՝ արտահայտում են երկբարբառ հնչյուն: Այս կիսաձայններն են «ւ» և «յ»-ն, եթե մենք կազմենք մի պարզ աղյուսակ գրաբարի երկբարբառների գրության, ապա մենք կնկատենք հետևյալը:

ա+ւ=աւ	ա+յ=այ
ի+ւ=իւ	
ե+ւ=եւ	ե+յ=եյ=է
ո+ւ=ու	ո+յ=ոյ

Երկբարբառ են կազմում նաև ե և ա ձայնավորները.

ե+ա=եա, նաև՝ ե+ա+յ=եայ (եռաբարբառ)

Այս երկբարբառներից ու-ն Ողմիի և Քեսաբի բարբառներում պահպանվել է իր երկբարբառային արտասանությամբ. օրինակ.

ծօու > ձու, ջօուր > ջուր (Ողմի), տօու > դու, խօուփ > խուփ (Քեսաբ), օնիլ > ուլ, օնիթ > ութ, օնիս > ուս (Քեսաբ).

Ու-ն գրական լեզվի մեջ, ինչպես բարբառների մեծ մասի մեջ, փակ վանկում արտասանվում է ձայնավոր ու, իսկ ձայնավորից առաջ վ. օրինակ՝ առու—առվի—առվակ, կատու—կատվի և այլն:

Այս երկբարբառը քմային արտասանություն ունի շատ բարբառներում, հատկապես արևելյան բարբառներում: Օրինակ՝ ճօր, ճօլ (Ղարաբաղ, Ուրմիա, Վան). Այդ նույն արտասանությունը կարելի է գտնել ուրիշ շատ բարբառներում:

Այս ձայնավորի զիմաց գտնում ենք «օ» կամ «օ» արտասանություն Ղարաղաղի, Ղարաբաղի, Հաղբութի, Մեղրու, Կարճեանի, Սվեդիայի բարբառներում. օրինակ՝ տօն (տուն—Ղրբղ., Ղարաղաղ), օրախ (ուրախ—Հաղբութ), պրտօղ (պտուղ—Մեղրի), կրտօց (կտուց—Կարճեան), տօն (տուն—Սվեդիա, Զեյթուն), օրփնիթ > ուրբաթ (Ղարաբաղ), լօձ > լուծ, մօխ > մուխ, օս > ուս, օթ > ութ (Սվեդիա).

Այս ձայնավորը գրական լեզվի մեջ ենթարկվում է հնչյունափոխության, հաճախ դուրս է բնկնում կամ վերածվում «ը» ձայնավորի, սովորաբար բոլոր վանկերում, բացի վերջին վանկից: Օրինակ՝ ջուր > ջրի, անասուն—անասնական և այլն:

Բարբառների մեջ ու ձայնավորի հնչյունափոխությունը շատ ավելի առատ է և հաճախակի նույնիսկ վերջին վանկում, որտեղ նա շեշտայլ չէ՝ օրինակ՝ դաշարմը > դաշտում, փօրբմը > փորում և այլն:

Այս երկբարբառը գրական լեզվի մեջ փակ վանկում վերածվել է «օ» ձայնավորի, իսկ բաց վանկում երկհնչյունների: Օրինակ, աւր > օր, խաւսել > խօսել, լաւ > լավ և այլն:

«Աւ» երկբարբառային արտասանությունը գտնում ենք Սուշավայի բարբառում օրինակ՝ անասն > անուն, ցառ > ցավ (Սուշ):

Սվեդիայի բարբառում «աւ» երկբարբառի զիմաց գտնում ենք «ու» կամ «նւ», արաւր > արուր, ախաւ > անգնու, Քեսաբի բարբառում «աւ»-ի զիմաց գտնում ենք ուր երկբարբառը. օրինակ՝ այտաւր > խուրը, աւր (օր) > ուրը:

Բարբառներում մեծ մասամբ նույն երևույթն ենք նկատում, ինչ որ գրական լեզվի մեջ, այսինքն փակ վանկում արտասանվում է «օ», իսկ բաց վանկում՝ «ավ»: օրինակ՝ լնվ (Ղրբղ.), մըտավ (Երևան), էգավ (Պոլիս), օր > ար, հօր > հաւր և այլն:

ՈՅ

Այս երկբարբառը գրական լեզվի մեջ վերածված է «ույ» երկհնչյունի, օրինակ՝ քոյր > բույր, յոյս > հույս և այլն: Բարբառների մեջ «ոյ» երկբարբառի զիմաց գտնում ենք մեծ մասամբ «ի» կամ «ու» կամ «նւ». օրինակ՝ լիս (Երևան, Բեյլան), լուս (Թբիլիսի), քիւր (Երևան), քուր (Թբիլիսի), քիւր (Ուրմիա) և այլն:

Որոշ բարբառներում «ոյ» երկբարբառի զիմաց գտնում ենք ուրիշ նոր երկբարբառներ՝ ուէ, ուէ, ալ, ուէյ. օրինակ՝ պուէն > բոյն, լնէս > լոյս (Ուրմիա), պուէն > բոյն, լուէյս > լոյս, մուրքոյր > մօրքոյր (Քեսաբ). Սվեդիայի բարբառում օրինակապես կերպով «ոյ» երկբարբառը վերածվում է «այ» երկբարբառի. օրինակ՝ քայր > քոյր, լայս > լոյս, գաբայլ > կապոյտ:

«Իւ»

Գրական լեզվի մեջ փակ վանկում արտասանվում է «յու», իսկ բաց վանկում «իվ» օրինակ՝ իւրաքանչիւր—յուրաքանչյուր, պատիւ—պատիվ և այլն:

«Իւ» երկբարբառի հարազատ արտասանությունը գտնում ենք Սուշավայի (Սրտիալի) բարբառում. օրինակ՝ բաղիւ—պատիվ:

Երևանի, Ղարաբաղի և մի շարք այլ բարբառներում «իւ» երկբարբառը արտասանվում է «ի». օրինակ՝ հարիւր > հարիւր (Երևանի), թըղթիւ > թողութիւն (Ազուլիս), խայիւր > հարիւր (Ուրմիա), հէրիւր > հարիւր (Բեյլան):

Թբիլիսիի բարբառում, ինչպես և բարբառների մեծ մասում այդ երկբարբառի զիմաց գտնում ենք հաճախ «ու», օրինակ՝ հարիւր > հարուր (Թբիլիսի, Աստրախան, Պոլիս և այլն). Ղարաբաղի և մի շարք այլ բարբառներում լինում է՝ ու. օրինակ՝ ձիւն > ձուն (Ղարաբաղ, Ուրմիա, Մարաղա), արիւն > արուն (Ազուլիսի), աղբիւր > անպոյն (Վան) և այլն:

Ձայնավորների և երկբարբառների այսպիսի մեծ տարբերությունները մեր բարբառների մեջ հանդիսանում են այն պատճառները, որոնց հետևանքով որոշ բարբառներով խոսողներ միմյանց չեն հասկանում. և իրոք, եթե ձայնակների փոխարեն գործածվի խուլ բաղաձայններ, բայց բառի ուրիշ

հնչյունները, հիմնական ձայնավորներն, անփոփոխ լինեն, բայց չի դառնա անհասկանալի և բարբառներում փոխադարձաբար կհասկացվի. օրինակ՝ պուս > սուս, բերան > պերան, կատու > գագու և այլն: Բայց մի կարող է ենթադրել, թե «ծանրան» բառը (Ազուլիս) նշանակում է ծիրան և կամ պուէն > բան (Քեսար), կրնի > գալլ (Ղրրղ.) և այլն:

Ձայնավորների փոփոխությունն հետևանքով բարբառի անհասկանալի դառնալու պատճառն այն է, որ ձայնավորները քիչ լինելով, շատ բառերի մեջ և հաճախ են գործածվում և դրա հետևանքով անհասկանալի դարձնում խոսքը լսողի համար:

Բացի Սուշավայի (Արտալի) և մասամբ էլ Քեսարի և Ողմի բարբառներից, հայերենի բոլոր բարբառներում գրաբարի երկրաբառները պարզ հնչյունների են վերածվում: Հակառակ դրան, բարբառներում կան գրաբարում բացակայող երկրաբառներ, ինչպես ու<sup>է</sup>, ու<sup>հ</sup> և այլն, որ առաջացել են հաճախ պարզ ձայնավորների փոխարեն:

ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐ

Բաղաձայնների փոփոխությունն մասին մենք խոսել ենք բարբառների դասակարգման հարցի կապակցությամբ: Բարբառների բաղաձայնների փոփոխությունը շատ հասկանալի է, երբ նկատի ունենք, որ այդ փոփոխությունը սխառմատիկ փոփոխություն է. Այդ փոփոխությունն այնպիսի օրինաչափություններ ունի, որ հաճախ կարելի է գուշակել բոլոր նման երևույթները, եթե պիտես մեկ երևույթը: Բարբառների պայթական բաղաձայնների սխառմատիկն տարբերությունը նկատվել է շատ հին մամուլականներից սկսած:

Անանուն Մեկնիչի քերականության մեջ կա մի ուշադրով վկայություն.

«Այլ էր իսկ ճշմարտացես և ի աեսակի խաւսիցն, որպես բազուկ, պագուկ, փագուկ» (ընդգծումը մերն է:—Ղ.):

Այդ վկայությունը պարզապես ասում է այն մասին, թե ժողովրդական լեզուն ունի տարբեր վարիանտներ՝ «աեսակ խաւսից», այսինքն՝ բարբառներ, որոնք տարբեր սխառմեմ են ներկայացնում, գոնե իրենց բաղաձայնական հնչյունական կազմության մեջ: Փաղափար չունենալով հնչյունաբանության մասին, Անանունը, այնուամենայնիվ, հնարավորություն է գտնել արտահայտելու այդ սխառմաների տարբերությունը, և, որպեսզի օրինակով պարզ դարձնի իր ասածը, նա ընտրել է «բագուկ» բառը, այսինքն՝ սկզբին շրթնային ձայնեղ ունեցող մի բառ, և տվել է այդ ձայնեղի տեղաշարժը դեպի աջ՝ բ, պ, փ:

Այդ վկայությունը խիստ ուշադրավ է այն պատճառով, որ բարբառների ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ երևույթի լիակատար առկայությունը հայերենի մեջ նաև ներկայումս, որ վերևում մենք կոչել ենք «տեղաշարժ» տերմինով (տես՝ «Հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը»):

«Տեղաշարժ» տերմինը մենք վերցնում ենք իբրև պայմանական տերմին: Յուրաքանչյուր նոր ձև, նոր լեզվական երևույթ «հայական»,

այսինքն, ընդհանուր հայկական բնույթ ընդունելով՝ յուրաքանչյուր բարբառում ենթարկվել է որոշ սխառմի փոփոխություն, եթե դա ճյուղավորվել է հայերենից, և կամ այն հնչյունական սխառմին, որն ունեցել է հայերենից հաղթված և մահացած լեզուն, որի տեղ ճյուղավորվել է հայերենի բարբառ: Այդ հասկանալի դարձնելու համար պետք է հիշենք այն պարզ երևույթը, որը նկատելի է ազրբեջանական լեզվի մեջ, երբ նա, ընդունելով պ, կ, ա խուլ հնչյուն ունեցող օտար բառեր, վեր է ածում իր արտասանության՝ փ, ք, բ, օրինակ փարքիա > պարտիա, բումուխա > կոմունիստ, բելագրաֆ > տելեգրաֆ, նույնպես և ուսերենը և կամ մի այլ լեզու, երբ ընդունում է իր մեջ մի բառ, որն ունի իրեն անհարազատ օրեկ հնչյուն, այդ հնչյունը վերափոխում է այնպիսի մի հնչյունի, որն իր լեզվի մեջ կա և ի մոտո համապատասխանում է օտար հնչյունին (օրինակ՝ փափախ > папача):

Այս եզանակով հայերենի յուրաքանչյուր բարբառ պահպանել է իր հնչյունական սխառմը, և, երբ համեմատում ենք բոլոր բարբառները գրաբարի հնչյունական սխառմի հետ, արտաքին կողմից՝ դրսից, առաջին հայացքից երևում է, որ ընդհանուր հայերենի բառերն են վերափոխված, հարմարեցված տեղական բարբառային արտասանության, որովհետև հնչյունական օրինաչափությունները սովորաբար տեղի են ունենում միայն հայերենի բառային ֆոնդի մեջ մտնող բառերի մեջ:

Տարբեր լեզուների հնչյունական սխառմաները տարբեր են միմյանցից. գուցադիպությունը հազվագյուտ է: Զուգադիպությունը վկայում է, որ լեզուները հարևան են եղել, երկարատև փոխազդեցություն են ունեցել և փոխադարձաբար միասնություն ձևաք բերել, ինչպես, օրինակ, հին հայերենը և հին վրացերենը: Որպեսզի պարզ լինի մեր ասածը, վերցնենք հայերեն, ուսերեն և ազրբեջանական լեզուների բաղաձայնական սխառմը և համեմատենք միմյանց հետ:

Հայերեն	Ռուսերեն	Ազրբեջաներեն
բ պ փ	б п —	б — п (ph)
դ տ թ	д т —	д — т (th)
ձ ծ ջ	— — ц	— — —
ջ ճ շ	— — ч	ջ — ч
գ կ ք	г к —	г — к (kh)

Համեմատությունը ցույց է տալիս, որ հայերենի բաղաձայնական սխառմը համեմատաբար լրիվ է, բոլոր հնչյունները ըստ արտասանության որակի՝ ներկայացված են երեք աստիճանով՝ ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ: Ռուսերենի մեջ բացակայում են շնչեղ խուլները (փ, ք, բ), բայց շնչեղ խուլի սկզբունքը ուսերենին օտար չէ, որովհետև այդ շարքը ներկայացված է «ց» և «չ» շնչեղ խուլ աֆրիկատներով: Որովհետև աֆրիկատներից երկու շարք ուսերենը չունի, բայց նայն ց և շ հնչյուններով ներկայացնում է աֆրիկատների ֆոնեմատիկ առկայությունը ուսաց լեզվի մեջ, հետևաբար կարելի է ենթադրել, որ ուսերենին օտար չէ աֆրիկատներ ունենալու սկզբունքը:

Ազրբեջանական լեզվի մեջ ընդհակառակն է: Չկա խուլերի շարքը՝ պ, օ, կ, կան շնչեղ խուլերը: Աֆրիկատներից ազրբեջաներենն ունի ջ-ն և չ-ն, որ նույնպես վիայում է, թե այդ լեզվին օտար չէ աֆրիկատների սկզբունքը: Այդ համեմատությունները, սակայն, ասում են միուրիշ բան ևս, որ այդ լեզուների՝ հայերենի, ազրբեջանականի և ուսուերենի հնչյունական սխառմի մեջ արմատական տարբերություններ կան:

Բայց երբ վերցնում ենք հայերենի բարբառները և համեմատում գրաբարի հետ, հատկապես հնչյունական սխառմի տեսակետից, նկատում ենք զարմանալի օրինաչափություն: Եթե ձայնեղ հնչյունների օրե է դեպք խլացման է ենթարկված, ապա ձայնեղների ամբողջ սխառմն է խլացման ենթարկվել և ընդհակառակն: Օրինակ՝ գրաբարն ունի բաղաձայնական եռաստիճան սխառմ, իսկ Վանի բարբառը՝ երկաստիճան սխառմ:

Գրաբար	Վանի բառ
բ պ փ	պ փ
դ տ թ	տ թ
ձ ծ ց	ծ ց
ջ ճ չ	ճ չ
գ կ ք	կ ք

Լեզվական համեմատությունը ցույց է առաջի, որ եթե «բ» հնչյունով սկսվող բառերը Վանի բարբառում արտահայտվում են «պ»-ով, օրինակ՝ գրբ. «բերան», Վն. բրբ. «պերան», ապա առանց սխալվելու կարելի է ասել, որ «դ» հնչյունով սկսվողները կլինեն «տ»-ով, օրինակ՝ գրբ. «դուռ», Վն. բրբ. «տուն», «ձ» հնչյունով սկսվողները կլինեն «ծ»-ով, օրինակ՝ գրբ. «ձու», Վն. բրբ. «ծնի», «ջ» հնչյունով սկսվողները՝ «ճ»-ով, օրինակ՝ գրբ. ջուր, Վն. բրբ. ճուր, «գ» հնչյունով սկսվողները՝ «կ»-ով կամ «կ»-ով, օրինակ՝ գրբ. «գարուն», Վն. բրբ. «կարուն» և այլն:

Այդ նույն ձևով կարելի է համեմատել մյուս բոլոր բարբառները: Բավական է իմանալ մեկ ձայնեղի փոփոխությունը, որպեսզի կարելի լինի առանց սխալվելու ասել մյուս ձայնեղների հետ կատարվող փոփոխությունը և կամ, ընդհակառակն, մեկ խուլի փոփոխությունը հիմք է առաջի գիտենալու մյուս բոլոր խուլերի փոփոխությունը: Այսպիսի արամբանական ու օրինաչափական է բարբառների և գրաբարի արտասանական-հնչյունական սխառմները փոխարարելությունը: Այս է այն միասնականը, որը հայական, ընդհանուր հայկական է: Քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի հետ միասին այդ սխառմավորությունն է, որ Վանի բարբառը պահպանում է հայերեն լեզվի սահմաններում ի տարբերություն ոչ հայերեն լեզուների: Վերևում տեսանք, որ հայերեն, ուսուերեն և ազրբեջաներեն լեզուները նման տիպի համեմատությունների ենթակա լինել չեն կարող, ուրեմն և տարբեր լեզուներ են, մինչդեռ հայերենի բարբառների վերևում ցուցադրված սխառմավորությունը այդ բարբառները պահպանում են հայերեն լեզվի սահմաններում: Այդ է պատճառը, որ մենք որոշում ենք բաղաձայնների «տեղաշարժ» տերմինն ընդունել իբրև պայմանական տերմին:

Հայերենի բարբառների տեղաշարժերը շարունակում և խորացնում են այն տեղաշարժը, որ մեր ընդհանուր լեզուն կատարել է հնդկերոպական հնչյունական վիճակի մեջ:

Գրաբար լեզուն ունի բաղաձայնական սխառմի երեք տիպ՝

եռաշարք,	երկշարք	միաշարք
բ պ փ	դ տ	մ
դ տ թ	ձ ծ	լ
ձ ծ ց	դ խ	ն
ջ ճ չ	վ —	ո
գ կ ք	հ —	բ

Երկշարք և միաշարք սխառմի մեջ նկատելի տարբերություններ հայերենում չկան և դրանք չեն բնորոշում բարբառի հնչյունական սխառմը, մինչդեռ եռաշարք (պայթական բաղաձայնների) սխառմը այնքան տարբերություններ է ներկայացնում բարբառներում և կամ օտար լեզուներում, որ միայն այդ շարքով բնորոշ է լինում լեզվի բաղաձայնական սխառմը: Ուստի, երբ խոսքը տեղաշարժի մասին է, այդ վերաբերում է միայն եռաշարք բաղաձայնական սխառմին:

Հնդկերոպական հնչյունական վիճակը, ասում ենք որոշ վերապահությամբ, ներկայացնում էր չորս աստիճան՝ շնչեղ ձայնեղ, ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ՝

bh բ'	b բ	p պ'	ph փ
dh դ'	d դ	t տ	th թ
gh գ'	g գ	k կ	kh ք'

Այս վիճակը գրաբարը տեղաշարժել է մի աստիճան դեպի աջ և ստեղծել է եռաստիճան սխառմ առանց շնչեղ ձայնեղների: Հնդկեր. խուլերի և շնչեղ խուլերի դիմաց գրաբարը և մեր բոլոր բարբառներն ունեն շրջնչեղ խուլ, ուրեմն միաստեակ տեղաշարժ են կատարել: Տեղաշարժերը միաստեակ չեն շնչեղ ձայնեղների և ձայնեղների հարցում:

Հնդկերոպական հնչյունական վիճակի համեմատությամբ մեր բարբառներն ունեն.

1. Երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սխառմ, որն ստացվել է երեք տեղաշարժից. հնդկեր. շնչեղ ձայնեղները վեղավել են ձայնեղների և ապա դրանք հ. եվ. ձայնեղների հետ միասին վերածվել են խուլերի՝ բ' → բ + բ → պ բ'երեմ → բերեմ + բինդ → պերեմ + պինդ): խուլերն ըստ ընդհանուր կանոնի վերածվել են շնչեղ խուլերի:

<sup>1</sup> Հնդ-եվր. p-ի դիմաց հայերենը սովորաբար ունենում է «հ»:  
<sup>2</sup> Հնդ-եվր. kh-ի դիմաց հայերենը սովորաբար ունենում է «խ»:



Հնդկվր.	հայ. բարբ.
→	
bh b → p ph	պ փ
dh d t th	տ թ
gh g k kh	կ ք

Այդ բարբառների շարքին են պատկանում Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հաղարի, Շաղախի (Քելվանի), Մարաղայի, Խոյի, Ուրմիայի և Վանի բարբառները: Օրինակ՝ Աստրախան՝ պէրան, Վան, Մարաղա, Ուրմիա, Խոյ, Ղրբ., Հաղարի, Շաղախ՝ պէրան:

Բարբառների այս խմբի հնչյունական վիճակն ամենաշատ չափով հետաքստ է հնդկերոպականից:

2. Երկաստիեան խլազուրկ բաղաձայնական սիսեմ, խուլ շնչեղներով հարուստ, որ ստացվել է հ. եվ. շնչեղ ձայնեղները վերածելով ձայնեղների, ապա դրանք խուլների և ապա դրանք հնդկեր. խուլների հետ միասին շնչեղ խուլների՝ բ' → ք > պ → փ. բ'երեմ → բերեմ → պերեմ → փերեմ: Չայնեղները պահպանվում են, արեմն չկան շնչեղ ձայնեղներ, որ վերածվել են շնչեղ խուլների, և խուլեր, որ վերածվել են նույնպես շնչեղ խուլների:

Հնդկվր.	Հայ. բարբ.
→	
bh b p → ph	բ փ
dh d t th	դ թ
gh g k kh	գ ք

Այդ շարքին են պատկանում Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոսքոյի, Եփեսոսի և Օրտուի բարբառները և արեմտահայ գրական բարբառը: Գրբ.՝ դուռն, Տիգրան.՝ թուռ, Մալաթ.՝ թուռ, Ռոդ.՝ թուռ, արեմտահայ գր. բարբ.՝ թուռ:

Այս շարքը ևս խիստ հետաքստ է հ. եվ. հնչյունական վիճակից:

3. Եռաստիեան խլազուրկ բաղաձայնական սիսեմ, որ ստացվել է միայն մեկ տեղաշարժից, որը կատարել է նաև ամբողջ հայերեն լեզուն իր բարբառներով, այն է՝ հնդկեր. խուլները վերածել է շնչեղ խուլների՝ պ → փ: Անփոփոխ պահպանել է հ. եվ. շնչեղ ձայնեղները և ձայնեղները:

Հնդկվր.	Հայ. բարբ.
→	
bh b p ph	բ' բ փ
dh d t th	դ' դ թ
gh g k kh	գ' գ ք

Այդ խմբին են պատկանում Ակնա, Շապին-Գարանիսարի, Համշենի (մի մասը), Սուշավայի, Սյուրիայի, Խաբբերդ-Երզնկայի, Սեբաստիայի, Արարկի-րի և Խոտրջուրի բարբառները: Օրինակ՝ գրարբ.՝ դուռն, Ակն.՝ դ'ուռ, Սուշ.՝ դ'ուռ, Սրատ.՝ դ'ուռ, Ղրարբ.՝ տուռն, Ակն.՝ դուռն, Սչվ.՝ դուռն, Սրատ.՝ դուռն:

Այս խումբն ամենահավատարիմն է հ. եվ. հնչյունական վիճակին:

4. Երկաստիեան խլազուրկ բաղաձայնական սիսեմ՝ ձայնեղներով հարուստ, որ առաջացել է երկու տեղաշարժից, մեկը՝ շնչեղ ձայնեղները վերածել է ձայնեղների, մյուսը՝ խուլները շնչեղ խուլների՝ բ → ք, պ → փ (բ'երեմ → բերեմ). ձայնեղները մնացել են անփոփոխ և հարստացել են ի հաշիվ շնչեղ ձայնեղների:

Հնդկեր.	Հայ. բարբ.
→ →	
bh b p ph	բ փ
dh d t th	դ թ
gh g k kh	գ ք

Այս խմբին են պատկանում Պոլսի, Տրապիզոնի, Ղրիմի, Եվրոպիայի և Մարաշի բարբառները, օրինակ՝ գրարբ. տուռ, Պոլսի դուռն, Տրապ. դուռն, Ղրմ.՝ դուռն, Մարաշ՝ դոն, Գրարբ.՝ դուռն, Պոլսի՝ դուռ, Տրապ.՝ դուռ, Ղրմ.՝ դուռ. Մարաշ՝ դոն:

Բարբառների այս խումբը հ. եվ. վիճակի և զբաղաբարի համեմատությամբ բռնում է միջին տեղը:

5. Քառաստիեան բաղաձայնական սիսեմ, որն ստացվել է մեկ մասնակի և մեկ էլ լրիվ տեղաշարժից. լրիվ տեղաշարժն այն է, ինչ որ բոլորն են կատարել, այսինքն՝ հնդկեր. խուլները վերածել են շնչեղ խուլների, մասնակին էլ այն է, որ հ. եվ. ձայնեղները բառասկզբին վերածվել են խուլների, իսկ բառամիջում պահպանվել են, պահպանվել են և շնչեղ ձայնեղները՝ բ' → բ', բ → պ, պ → փ (բ'երեմ → բ'երեմ, բինդ → պինդ):

Հնդկեր.	Հայ. բարբ.
bh b → p → ph	բ' բ պ փ
↓	
ph d t th	դ' դ տ թ
gh g k kh	գ' գ կ ք

Այս խմբին են պատկանում Արարատյան, Կարնո, Մշո, Ջուղայի և Ողմիի բարբառները. օրինակ՝ գրարբ. դուռն, Արարատ.՝ դ'ուռ, Կրն.՝ դ'ուռ, Ջուղ.՝ դ'ուռ, Ողմի՝ դ'ուռ: Գրարբ. կատու, Արարատյան՝ կադու, Կարնո՝ կադու, Ջուղ.՝ կադու:

Այս շարքի մեջ Մշո բարբառում (և Անախոքի շրջանի բարբառներում) երբեմն պահպանվում են հ. եվ. խուլները: Այս բարբառին հատուկ եզակի երևույթ է այդ:

Այդ խմբի բարբառները նույնպես հարազատ են հնդկերոպական վիճակին, զբաղեցրելով ամենահարազատը Մշո բարբառն է:

6. Միջին հայերենի բաղաձայնական սիսեմ, որ ստացվել է երկու հաջորդական տեղաշարժով, որ կատարել են հ. եվ. շնչեղ ձայնեղները և մեկ տեղաշարժով, որ կատարել են խուլները՝ բ' → բ → պ || պ → փ (բ'երան → բերան → պերան): Չայնեղներն անշարժ են:

Հնդեր.	Հայ. բարբ.
bh b p → ph	բ պ փ
dh d t th	դ տ թ
gh g k kh	գ կ ղ

Այս շարքին են պատկանում Զեյրուցի, Հանրնի, Ավեղիայի, Քեսաբի և Բեյլանի բարբառները. օրինակ՝ գրաբ.՝ ջուր, Զեյթուն՝ ճույ, Քեսաբ՝ ճույ, Ավեղիա՝ ճօր, Հանրն ճույ, Գրաբ. պատ, Հանրն՝ բօղ, Զեյթուն՝ բուրղ: Ավեղիա՝ բուղ, Քեսաբ՝ բուղ:

7. Գրաբարին նման բաղաձայնական սխառն ունեցող միայն բառակազմերն, որ ստացվել է բոլոր շարքերի տեղաշարժով գեպի աջ՝ բ՛ → բ, պ → փ, բ՛երեմ → բերեմ, բինդ → պինդ, təw → թավ), ինչպես որ է գրաբարը:

Հնդեր.	Հայ. բարբ.
bh → b → p → ph	բ պ փ
dh d t th	դ տ թ
gh g k kh	գ կ ղ

Այս խմբին են պատկանում Քրիլիսիի, Ագուլիսի, Արզվիցի, Մեղրու, Կարնեանի, Դարաղաղի, Գզմարի բարբառները և մեր ազգային գրական լեզուն, օրինակ՝ գրաբ.՝ դուռն, Քրիլի՝ դուռն, Ագուլի՝ դուրք, Մեղրի՝ դուրք, Գրաբ.՝ տուն, Քրիլի՝ տուն, Ագուլի՝ տօն, Մեղրի՝ տօն:

Այս բոլոր տեղաշարժերը սովորական յուզի համար կունենան երեք աստիճան միայն.

1. Զայնեղ արտասանություն. օրինակ՝ բագուկ, դանակ, գիր, ջուր, ձու:
2. Սուլ արտասանություն. օրինակ՝ պագուկ, տանակ, կիր, հուր, ծու:
3. Շնչեղ խուլ արտասանություն, օրինակ՝ փագուկ, բանագ, բիր, շուր, ցու:

Միայն ձախից գեպի աջ տեղաշարժ ունեն մեր բարբառների մեծագույն մասը, ուստի լեզվաբանությունից անտեղյակ մարդու համար նրանք կլինեն նկատելի: Այժմ էլ այս փոփոխություններն աչքի են զարնում ամեն մի քայլափոխում, քանի որ Սովետական Հայաստանում կան այդ բոլոր բարբառների ներկայացուցիչները. Հիշյալ տեղաշարժերն ըստ մեր գասակարգման առաջին աստիճանի տեղաշարժեր են և ընդգրկում են մեր բարբառների մեծագույն մասը թե՛ ըստ բարբառների թվի և թե՛ ըստ խոսողների թվի. Տեղաշարժերի մյուս երևույթները ներկայացված են խոսողների համեմատաբար ավելի քիչ թվով:

Այսպիսով, Անանուն Մեկնիչի վկայությունը հայերեն բարբառների բաղաձայնական սխառնների մասին արձանագրում է մեր բարբառների բաղաձայնական սխառնի առաջին տեղաշարժը, այսինքն՝ մեր հիմնական բարբառների գոյությունը դեռ VII դարում բաղաձայնական նույն սխա-

տեմով, որ մենք գտնում ենք այժմ մեր կենդանի բարբառների մեջ, բառային հիմնական ֆոնդի բառերի ամենահին շերտում:

Անանունի այդ սրամիտ վկայությունը հաստատում է այն կարծիքը, թե՛ գրաբար լեզվի ամենազարգացած շրջանում անգամ մեր բարբառները գոյություն ունեին, ավելին՝ նրանք մեծ մասամբ գոյություն ունեին համարյա նույն սխառնում, նույն տարբերությամբ, ինչ որ այժմ: Բարբառների մեջ եղած հետագա փոփոխությունները բաղաձայնների սխառնմին չեն դիպել նույց գոյություն ունեցող բառերում, բայց նոր փոխարինված բառերում այդ սխառնները խախտվում են հօգուտ ընդհանուր լեզվի: 7-րդ դարում (Անանուն Մեկնիչը համարվում է 7-րդ դարի հեղինակ) գոյություն ունեցող այդ բարբառների սխառնը պետք է որ գոյություն ունենար նաև շատ դարեր գրանից առաջ, ամեն մի բարբառի առաջացման հենց սկզբից:

Դասակարգելով մեր բարբառների հնչյունական սխառնը հնդերոպական հնչյունական վիճակի համեմատությամբ՝ կտանանք հետևյալը:

Բարբառների բոլոր խմբերը, բացի 5-րդ խմբի մասամբ Մշո բարբառից, ապա Անտիոքի և Զեյթունի շրջանի բարբառներից, հ.-եվ. խուլերը տեղաշարժել են շնչեղ խուլերի, որով նման են ընդհանուր լեզվին: Մյուս երկու շարքի տեղաշարժերով բարբառները տարբեր են: Բացառելով խուլերի տեղաշարժը գեպի շնչեղ խուլերի շարքը, մենք կտանանք հետևյալ պատկերը:

Առաջին խմբի բարբառները կատարել են երկու տեղաշարժ՝ հ.-եվ. շնչեղ ձայնեղները վերածել են ձայնեղների, ապա գրանք հ.-եվ. ձայնեղների հետ միասին տեղաշարժել են խուլերի. բ՛ → բ → պ (բ՛երեմ → բերեմ → պերեմ):

Դրա հետևանքով ստացվել է երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական սխառն: Այդ խմբի բարբառները հ.-եվ. վիճակից ավելի են հեռացել, քան գրաբարը:

Երկրորդ խմբի բարբառները կատարել են միայն մեկ տեղաշարժ՝ հ.-եվ. շնչեղ ձայնեղները վերածել են ձայնեղների (բ՛երեմ → բերեմ), պահպանել են հ.-եվ. ձայնեղները. գրանից ստացվել է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սխառն:

Այդ խմբի բարբառներն իրենց հնչյունական կազմով ավելի քիչ են հեռացել հ.-եվ. վիճակից, քան գրաբարը:

Երրորդ խմբի բարբառները հ.-եվ. բաղաձայնական սխառնի առաջին երկու աստիճանը ոչ մի փոփոխության չեն ենթարկվել, շնչեղ ձայնեղները և ձայնեղները պահել են նույնությամբ (հ. եվ. բ՛եր → հայեր. բ՛եր, հ.-եվ. բինդ → հայ. բինդ): Այդ խմբի բարբառները ամենահավասարիմ կերպով են պահել հ.-եվ. հնչյունական վիճակը և գրանից ստացվել է եռաստիճան խլազուրկ բաղաձայնական սխառն:

Չորրորդ խմբի բարբառները հ.-եվ. սխառնի շնչեղ ձայնեղները ենթարկել են երեք տեղաշարժի [բ՛ → բ → պ → փ, հնդեր. բ՛եր → հայ. բարբ. (բեր → պեր) → փեր]:

Այս խումբը գրաբարի համեմատութեամբ ավելի է հեռացել և. եվ. հնչյունական վիճակից. Ստացվել է երկատարածան խաղաղ սխառեմ:

Հինգերորդ խմբի բարբառները և. եվ. սխառեմի ձայնեղ բաղաձայնները միայն բառակազմի տեղաշարժել են խուլի, պահպանելով գրանք ձայնեղ վիճակում բառամիջում, չեն տեղաշարժել շնչեղ ձայնեղները (բ'եր > բ'եր, բայց հնգ. - եվ. g²ag³rōdo > և. բարբ. կարգուղ). Այդ խումբը ևս համեմատաբար հարազատ է և. եվ. բաղաձայնական սխառեմին, ուստի ստացվել է քառատարածան բաղաձայնական սխառեմ:

Վեցերորդ խմբի բարբառները և. - եվ. բաղաձայնական սխառեմի շնչեղ ձայնեղները ենթարկել են երկու տեղաշարժի՝ ձայնեղի, ապա խուլի (բ'եր → բեր → պեր), պահպանելով ձայնեղները: Այդ պատճառով այս խումբը ևս բավական հեռացած է և. եվ. բաղաձայնական վիճակից: Դրա հետևանքով ստացվել է գրաբարին հակառակ եռատարածան բաղաձայնական սխառեմ:

Այսպիսով և. - եվ. բաղաձայնական սխառեմին ավելի հավասարիմ են Արարատյան, Զուղայի, Մշո, Կարնո, Ակնա, Սերաստիայի, Արալկիրի Համշենի, Շապին-Գարանիսարի, Խոտրչուրի բարբառները, այսինքն Կենտրոնական Հայաստանի, Փոքր Հայքի և Եփրատի ափերի մոտերքի բարբառները, այն տերիտորիայի բարբառները, որոնք եղել են հայաստանի մեծերի Հայաստան մանելու ելման կետը և տարածման ամենագլխավոր և ամենամոտիկ տերիտորիաները:

Նշանակում է՝ բարբառների բաղաձայնական սխառեմը նրանց հնագույն հատկությունն է, նրանց գոյացման, ճյուղավորման ամենահին ժամանակների հատկությունը:

Դրա լավագույն ասպարույցը նաև այն է, որ ձայնեղ բաղաձայնների տեղաշարժերը լինում են միայն հայերեն բառային հիմնական ֆոնդի մեջ մտնող այն բառերում, որոնք առկա են գրաբարում: Այդ բառերից առանց բացառության գրաբարի համեմատութեամբ առաջին տեղաշարժին են ենթարկվում բոլոր այն արմատները, որոնք կամ հնդեւրոպական ծագում ունեն, կամ որոնց ծագումն անհայտ է, մինչդեռ փոխառյալ բառերից ոչ բոլորն են ենթարկվում տեղաշարժի:

Հնդեւրոպական արմատները, որոնք ենթարկվում են առաջին տեղաշարժի, հետևյալն են. բամբասել, բան, բաշ, բառնալ, բարձ, բեռն, բարձր, բերել, բերան, բուր, բոկ, բողիկ, բողկ, բուշ, բոց, բուրգ, բրդել, գալ, գաղտ, բերել, բերան, բուր, բոկ, բողիկ, բողկ, բուշ, բոց, բուրգ, բրդել, գալ, գաղտ, գալլ, գանն, գարուն, գետ, գերան, գերի, գէտ, գին, գինգ, գիշեր, գիր, գունել, գող, գոմ, գործ, գորտ, դա, դաղար, դալար, դաղձն, դաբբին, դարձ, դեղ, դեղին, գէգ, գնել, դու, դուռն, ձագ, ձեռն, ձև, ձի, ձիւր, ձյուն, ձմեռ, ձուկն, ջիլ, ջնջել, ջուր, ընդամենը 58 արմատ:

Անհայտ ծագում ունեցող բառերը համարյա նույն քանակի են, որ նույնպես ենթարկվում են առաջին տեղաշարժի առանց բացառության:

Պետք է ենթադրել, որ գրանք այն բնիկների լեզուների բառերն են, որոնք հաղթող հայերենը յուրացրել են նրա ընդհանուր լեզու դառնալու ու տեղական լեզուների մահանալու պրոցեսում և դարձրել բառային հիմնական ֆոնդի բաղադրիչ մասը:

Այդ բառերն են՝ բաղաբը, բաղեղ, բանալ, բանալի, բանջար, բարի, բարկ, բեվեռ, բլիթ, բողոք, բույն, բորբոսնել, բխել, բոնել, բրուտ, գագ (փուջ), գագան, գաբա, գանգատ, գարի, գետին, գերանդի, գերմակ, գգել, գեշ, գիմի, գյուղ, գլուխ, գնել, գոլ, դագագ, դանին, դանակ, դառն, դատարկ, դզում, դող, դուր, ձագար, ձոր, ձու, ձայն, ձախ, ջարդ, ջոջ, ջորի, ընդամենը 46 բառ:

Վերջերջայլ բոլոր բառերը (հնդեւրոպական և անհայտ ծագումով), որոնք մտնում են հայերենի բառային հիմնական ֆոնդի մեջ, ենթարկվում են տեղաշարժի առանց բացառության: Պարզ է, որ գրանք ամենահին բառեր են, որովհետև հայերեն լեզուն հնդեւրոպական լինելով՝ սկզբնապես, իբրև հիմնական բառային ֆոնդ, ունեցել է հնդեւրոպական արմատներ: Հետագայում, երբ հայերեն լեզուն խաչավորման երկարատև պրոցեսում դարձել է ընդհանուր լեզու Հայաստանի բոլոր բնիկների համար, բնիկների լեզուները մահացել են, տեղի տալով հայերենին, իսկ հայերեն լեզուն պահպանել է իր հիմնական բառային ֆոնդը և քերականական կառուցվածքը, միաժամանակ նաև համարել է իր բառային կազմը բնիկների բառերով, որով էլ ավելի է ուժեղացել: Այդ բառերից մի մասը հետագայում անցել է հայերեն բառային հիմնական ֆոնդի մեջ և հարստացրել այն:

Հասկանալի է, որ հայերենը յուրացնող բնիկները, յուրացնելով հայերենի բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը, որոշ փոփոխություն մտցնելով բառերի արտասանության մեջ ըստ իրենց բնիկ լեզվի հատկությունների, առաջացրել են հայերենի բառերի տեղական արտասանությունը:

Այդ տեղաշարժերը, ինչպես երևում է, այդ տեղական արտասանություն ամենահին հատկանիշներն են, որովհետև օրինաչափ կերպով դործում են հայերենի ամենահին բառերի մեջ:

Պարսկերենից և այլ լեզուներից փոխառնված բառերի նկատմամբ տեղաշարժերի այդ հետևողականությունը չենք նկատում: Այսպես, օրինակ, պարսկերենից փոխառնված հետևյալ բառերը ենթարկվում են տեղաշարժի՝ բագուկ, բաժին, բաժակ, բամբակ, բարակ, բժիշկ, բորոտ, բրինձ, բուն, գանձ, (երգ), գավազան, գերեզման, գույն, գովել, գունդ, դաշտ, դատ, դատաստան, դարման, դեղ, դեմ, դժոխք, գծվար, դմակ, դրախտ, ջոկ, ընդամենը—26 բառ:

Տեղաշարժի չեն ենթարկվում նույն պարսկերենից փոխառնված հետևյալ բառերը՝ բախտ, բաշխել, բիժ, բլբուլ, գագ, գագար, գաջ, գիժ, գոմեշ, գուրգ, գրավ, գուման, դամ, դարդ, դեն, դինգ, ջուխտ, ջաղու, ընդամենը 18 բառ:

Դա կարելի է բացատրել նրանով, որ տեղաշարժի ենթարկվող բառերը շատ հին փոխառություն են, այն ժամանակի, երբ բարբառներում այդ օրենքը գործում էր առանց բացառության, երբ դեռ ընդհանուր հայերենի բաղաձայնական սխառեմին մեր բարբառները ամբողջովին չէին ընտելացել, մինչդեռ տեղաշարժի ենթարկվող բառերը փոխառնված են ամենաուշ ժամանակ, երբ բարբառախոսները սովորել էին ձայնեղներ արտասանել, ուրեմն ձայնեղ ունեցող բառերում ձայնեղը կպահպանեին:

Հետագոտությունը պարզում է, որ երկրորդ դարի սկզբին (մեր Հայ բարբառագիտություն—9

դարաշրջանից առաջ) հայերեն լեզվի մեջ արդեն կային պարսկերենի փոխառություններ. նշանակում է՝ այդ տեղաշարժ ունեցող փոխառությունները տեղի են ունեցել ավելի վաղ շրջանում, առնվազն 6—5—4-րդ դարերում մեր դարաշրջանից առաջ, մինչդեռ մեր ժողովրդի կազմավորումից հետո և պետականության ժամանակաշրջանում փոխառված բառերը, ըստ երևույթին, այդ տեղաշարժերին չեն ենթարկվել:

Հենց մի օրինակը կհաստատի այդ կարծիքը. Թուրքերենից փոխ ենք առել «բեղ», «բուխարիկ» և «բուղա» բառերը, որոնք բարբառներում տեղաշարժի չեն ենթարկվում. տեղաշարժի չի ենթարկվում նաև միջին հայերենի «բուկ» բառը, նշանակում է, թե բարբառները ավելի ուշ ժամանակներում աստիճանաբար տեղաշարժ կատարելու հատկությունը կորցրել են, որովհետև վարժվել են հայերենին հատուկ բոլոր բաղաձայններն արտասանել և միայն ավանդական կարգով պահպանել են այն բառերի բաղաձայնական սխեմայի տեղաշարժերը, որոնք շատ հին ժամանակներում այդ տեղաշարժերին ենթարկված են եղել, ուրեմն՝ ժառանգաբար զրանք արտասանել և արտասանում են համապատասխան խուլ հնչյունով:

Մեր բառային հիմնական Ֆոնդի մեջ մտնող ասուրական «բերդ» բառը, ասորական «ձեթ» ու «գուրպա» բառերը նույնպես ենթարկվում են տեղաշարժի, իսկ դրանք կարող են լինել միայն նազույն փոխառություններ, առնվազն նախքան երկրորդ դարի փոխառություններ:

Այդ ամենն ասում են հետևյալը՝

1. Հայերեն բարբառների բաղաձայնական սխեմայի տեղաշարժերը հնագույն հատկություն են, շատ ավելի վաղ ժամանակի հատկություն, քան 5-րդ դարը (մ. դ.):

2. Հայերեն բարբառների բաղաձայնական սխեմայի տեղաշարժի հատկությունը հայերեն բարբառներին անցել են մասամբ իբրև հնդեվրոպական հնչյունական վիճակի ժառանգություն և մասամբ հայերենից հաղթված և մահացած լեզուներից, որոնք եղել են բնիկների լեզուները:

3. Տեղաշարժի երևույթները նկատվում են հայերեն բառային հիմնական Ֆոնդի բառերի մեջ, հատկապես այն մասի մեջ, որ բաղկացած է հնդեվրոպական արժաններից և անհայտ ծագում ունեցող բառերից, հավանական է՝ բնիկների լեզվի բառերից: Տեղաշարժերն այդ բառերում բացառություններ չունեն:

4. Տեղաշարժ կատարելու հատկությունը մեր բարբառներում գործուն է եղել մեր բարբառները ճյուղավորվելու ժամանակ, և տեղ է մինչև մեր դարերի սկիզբը, ինչպես այդ ցույց են տալիս պարսկերեն փոխառությունները: Պարսկական-պանդևական փոխառությունների մեջ արդեն երևում են շեղումներ այդ տեղաշարժերից, ավելի ուշ՝ 5-րդ դարից հետո մեր բարբառների մեջ մտած նոր փոխառությունները (արաբական, թուրքական և այլն) մեծ մասամբ տեղաշարժի չեն ենթարկվում, որ նշանակում է, թե տեղաշարժի հատկությունը բարբառների մեջ որպես հին օրինակափոխություն աստիճանաբար մահացել է:

Բարբառներն աստիճանաբար սկսել են ընտելանալ բնդհանուր լեզվի բաղաձայնական սխեմային, որ ընդհանուր լեզվի մեջ նրանց աղացվելու

պրոցեսի երևույթներից մեկն է: Ընտելանալով բնդհանուր հայերենի բաղաձայնական սխեմային՝ բարբառները առիթ չունեն փոխելու հին բառերի արտասանությունը, որոնց վաղուց ընտելացել էին, այլ նոր սովորած բառերը (մեծ մասամբ փոխառված) արտասանում էին լսածի պես, այսինքն խուլը՝ խուլ, ձայնեղը՝ ձայնեղ, Այդ հատկությունն այժմ շարունակվում է, և մեր գրական բառերը բարբառներում մտնում են անփոփոխ արտասանությամբ: Պայթական բաղաձայնների տարբերությունները պարզեցինք, այժմ մեզ մնում է խոսել բաղաձայնների այնպիսի տարբերակների մասին, որ կրում են մասնակի բնույթ:

Բաղաձայնական սխեմայից դուրս մեր բարբառներում նկատում ենք բաղաձայնների տարբերակներ բաղաձայնների մեծ մասի համեմատությամբ:

Հ

«Հ» բաղաձայնը գրաբարում և գրական լեզվի մեջ խուլ կոկորդային հնչյուն է, բնական է, շփական: Այդ «հ» բաղաձայնը կա համարյա բոլոր բարբառներում, քացի Վանի բարբառից, որտեղ, եթե կա էլ, ապա այն սովորական «հ» ունեցող բառերում չէ, այլ ստացված է ուրիշ բաղաձայնների փոփոխությունից (ք):

Վանի, Ուրմիայի, Խոսի, Մարաղայի, Դիադինի բարբառներում, Մշո բարբառի հյուսիս-արևելյան հատվածում, Բայազետի ենթաբարբառում և Նոր Զուղայի բարբառի քաղաքի խոսվածքում «հ» բաղաձայնի դիմաց արտասանվում է ետնալեզվային շփական «խ» բաղաձայնը: Օրինակ՝ հաց > խաց, հէր > խէր, հող > խուղ, հարս > խարս և այլն:

«Հ» բաղաձայնը խ-ի վերածելու մեջ հետևողական է միայն Վանի բարբառը: Մյուս բարբառները որոշ դեպքերում շեղումներ են կատարում:

Մենք արդեն հայտնել ենք այն կարծիքը, որ հնչյունական այդ երևույթը Վանի բարբառը ժառանգություն է ստացել խաղական լեզվից, որն ըստ երևույթին չի ունեցել «հ» բաղաձայնը, ինչպես այժմ Վանի բարբառը: Պատահական չէ, որ հնչյունական այդ երևույթը գոյություն ունի բոլոր այն բարբառներում, որոնք շրջապատում են Վանի բարբառը, այսինքն՝ այդ հատկությունը ունեցել են բոլոր այն տոհմական լեզուները, որոնք շրջապատած են եղել Բիայնայի լեզուն և գտնվել են նրա խիստ ազդեցության տակ: Մենակ այդ հատկությամբ չէ, որ այդ բարբառները նման են Վանի բարբառին և նրա միջոցով նաև Բիայնայի լեզվին: Մեր կարծիքով խաղերեն լեզվի «իե» ձայնավորը ոչ թե երկու ձայնավոր է, այլ պարզապես Վանի երկբարբառային «ե»-ն է, ուստի ենթադրում ենք, որ խաղերեն լեզվի մեջ եղել է երկբարբառային «ե», որից և ժառանգել են Վանի, Ուրմիայի, Խոսի և Մարաղայի բարբառները, օրինակ՝ մեր, ձեր (արտասանվում են՝ միեր, ծիեր):

«Հ» բաղաձայնի ձայնեղ տարբերակը գտնում ենք մի շարք բարբառներում, ինչպես Կարնո և Մշո բարբառներում, Նոր-Բայազետի և Մարտունու ենթաբարբառներում: Օրինակ՝ հ'ակոփ, հ'ովանէս, հ'արա=ղեկի արա (Մուշ) և այլն:

«Հ» հնչյուն է ստացվում նաև «խ» բաղաձայնի թուլացումից: Այդ երևույթը նկատելի է Երևանի բարբառում, հատկապես այն բառերի մեջ, որտեղ կա եանալիզված յ: Օրինակ՝ խաղող > հալող, խաղալ > հաղալ, խեղդել > հեխալել, խեղճ > հեղճ և այլն:

«Ս» բաղաձայնի վերածվելը հ-ի նկատելի է նաև Ազուլիսի բարբառի մեջ. օրինակ՝ ահնա > ախոս, ծօհ > ծուխ, գըլմհ > գլուխ, հօրգնը > խուրճն և այլն:

Հ է արտասանվում գրաբար բառերի բառակցքի «յ»-ն. օրինակ յոյս > հույս:

«Հ» բաղաձայնը վերածվում է «ֆ» հնչյունի «ս» ձայնավորից առաջ Արարատյան (Երևանի), Կարնո, Հաճընի և Մերաստիայի բարբառներում. օրինակ՝ հող > ֆող, հար > ֆոր, հողի > ֆոքի (Երևան, Կարնո), ֆուէղ > հող, ֆուէղ > հոս (Հաճըն), ֆորթ > հորթ, ֆող > հող (Մերաստիա):

Ղարաբաղի բարբառում նույն «ս» ձայնավորից առաջ «հ» բաղաձայնը վերածվում է ատամնաշրթնային «վ» ձայնից բաղաձայնի, այսինքն Երևանից սարբերվում է միայն ձայնեղացմամբ, օրինակ՝ հող > վըղ, հոր — վըր և այլն:

Ղարաբաղի բարբառում «հո» կապակցությունն արտասանվում է «վը» օրինակ՝ հող > վըղ, հոս > վըս, հոր > վըր:

Բ

Այս բաղաձայնը հայերենի բարբառներում ենթարկվում է բազմաթիվ փոփոխությունների: Այս փոփոխությունները կարելի է պատկերացնել հետևյալ ձևով. բ > բ' > մ > շ > ք:

«Բ» բաղաձայնը արտասանվում է «յ» Ստարջուրի, Զեյթունի, Հաճընի բարբառներում, Հաղբութի բարբառի Տուժմի գյուղի խոսվածքում և Ղափանի Սրաշեն գյուղում: Այդ բարբառներով զբղած տեքստերի մեջ կնկատենք, որ ամեն տեղ «բ» հնչյունը վերածվում է յ հնչյունի: Այդ կատարվել է այն պատճառով, որ արտասանության ժամանակ լեզվի ծայրը դեպի փեղ է այն պատճառով, որ արտասանության ժամանակ լեզվի ծայրը դեպի փեղ է այն պատճառով, որ արտասանության ժամանակ լեզվի ծայրը դեպի փեղ է և վերածվել է յ հնչյունի. ֆոփոխացման այդ միջին ճանապարհը կարելի է գտնել Երևանի արվարձան հանդիսացող Կարթի խոսվածքի մեջ:

Մերաստիայի բարբառում «ար» կապակցությունը դարձել է յյ. օրինակ՝ գըլլուզ — կարուկ, Բէլլու — Պետրոս և այլն:

Լենինականի սրտ գյուղերի, ինչպես և Արթիկի մեջ կնկատենք այդ հնչյունի շփական արտասանությունը, այնպես որ ստացվում է այդ հընչյունի սրտ շնչեղացումը «բհ». օրինակ՝ կէր՝քամ կը Ար՝քիկ:

Համշենի և Հաճընի բարբառներում ատամնային պայթականներից առաջ բ-ն արտասանվում է «շ»:

Օրինակ՝ մաշղիզ գէշգօն գուքօն > մարդիկ գնում (էրթում) գալիս են (Համշեն), գաշղի, գաշղի, գաշղէյ > գնում էի (էրթում), գնում էիր, գնում էր (Հաճըն): Այդ նույն երևույթը նկատելի է նաև Նոր-Նախիջևանի բարբառում, օրինակ՝ մաշթ > մարդ, մօշթի > մօրթի, էշթալ > էրթալ և այլն:

Այդ տեղի է ունեցել այն պատճառով, որ հնչյունի արտասանության ժամանակ լեզուն շատ ավելի է մտանում վերին լիզին, քան պետք է, և դրա հետևանքով «բ» հնչյունը շփական հատկություն է ստանում: Երբ «բ» հնչյունի ձայնեղ հատկությունը պահպանվում է, այդ դեպքում ստացվում է «մ», ինչպես նոր Նախիջևանի բարբառում. օրինակ, մէք > էրեք, մէնք > էրենք և Հաճընի բարբառում՝ միեք > էրեք:

Պ, Կ, Ք

Պ, կ, ք բաղաձայնները մի շարք բարբառներում քմայնանում են, օրինակ՝ կրնմ (Ղրբ.), իկնմ (Ուրմիա), մենք՝ գըրնենք՝ (Ուրմիա), գըժմ (Ղրգղ.), կրն > գա (Վան), կաղլէգ՝ > կաղլիկ, քրն > գալիս (Հաղբութ) և այլն:

Պ, կ, ք հնչյունները սրտ բարբառներում վերածվում են «յ» կամ «հ» հնչյունի, բաղաձայնից առաջ կամ բառավերջում, եթե հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով, վանի, Ուրմիայի և Մերաստիայի բարբառներում ք-ն վերածվում է «հ»-ի, օրինակ՝ կինիհտեր > գինիքտեր > գինիներ, մառանհտեր > մառանքտեր > մառաններ (Վան), անլօր > աքլոր (Ուրմիա), Ուրմիայի բարբառում «կ»-ն հաջորդող բաղաձայնից առաջ լինում է յ. օրինակ՝ տախտակ ունեմ, բայց՝ տախտայ չկա, պայսել > պակսել:

Նույն բարբառում «նք»-ի դիմաց գտնում են «հ», օրինակ՝ էթնհ տուն > գնանք (երթանք) տուն:

Նիկոմիդիայի բարբառում «գ»-ն վերածվում է յ-ի. օրինակ՝ մնէյ մը > մուզ մը, մի մուկ:

Քեսաբի և Սվեդիայի բարբառներում «կ»-ն բաղաձայնից և նույնիսկ «բ»-ից առաջ վերածվում է յ-ի. օրինակ՝ բուկ > բակ, բօյք > բակք. տայ-մուզ > ասկմազ (արմատ):

Սրտ խոսվածքներում գ, կ, ք հնչյունները «է» կամ «ի» ձայնավորներին նախորդելիս վերածվում են ջ, ճ, չ հնչյունների. այսպես է Աշտարակի, Գեոտափի և մասամբ Տաթևի խոսվածքներում. օրինակ՝ ջէլ > գայլ, ճէրավ > կերավ, չիր > (քիր) քույր, ջինի > գինի, ջեղ > գյուղ և այլն:

Ղ

Այս հնչյունը բարբառներում խուլ պայթականներից առաջ վերածվում է խուլ «խ» հնչյունի. օրինակ՝ կեղա > կեխա, մեղք > մէխ > մեխե՛ և այլն:

Արևմտահայ մի շարք բարբառներում (Պոլիս, Ռոզսթո, Տրապիզոն) բառակցքին «ղ» հնչյունը նույնպես խլանում է. օրինակ՝ դարիք > խարիք, Ղևոնդ > Սևոնդ և այլն:

Դրա մի տարբերակն է պայթական «ղ» հնչյունը, որին հանդիպում ենք «Լ» ճյուղի բարբառներում, Ուրմիայում և Թբիլիսիում. օրինակ՝ դարիք, Ղվանդ (Ուրմ.), վարդանց (Թբիլ.):

Ջ, Ճ, Չ

Այս աֆրիկանները մի շարք բարբառներում հետաքրքրական փոփո-

խություններ են կրում: Ուրմիայի և Պոլսի բարբառներում ջ, ն, շ հնչյունները բաղաձայնից առաջ կարգնում են իրենց պայթական բաղադրիչ հնչյունը, պահպանելով ջ և ծ շշականները, օրինակ՝ մըշնէկ > միջնակ, կըշպել > կճպել, ճաշնալ > ճանաշել (ճանչնալ ձեկց), գօժգէլ > կօճկել և այլն: Այդ տեղիէ ունենում նաև բառափերջում, երբ հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով:

Դերսիմի ենթարարում (Պարբերգ-երգնկայի բարբառ) ջ, ն, շ հնչյունները փոխարինվել են ձ՝, ձ, ց հնչյուններով, այսինքն շշական ափրիկատները փոխարինվել են սուլական ափրիկատներով, գրան համապատասխան շշական «ջ»-ն փոխարինվել է սուլական «ս» հնչյունով, օրինակ՝ ձ՛ուր > ջուր, ձէրմակ > ճերմակ, ցամից > չամիչ, ցամից ցիգա > չամիչ չկա, ցը բասիմ > կը բաշեմ, քաշում եմ՝ և այլն:

Եվզակիայի բարբառում ջ, ն, շ-ն, Ուրմիայի բարբառի նման, բաղաձայնին նախորդելիս կարգնում են իրենց բաղադրիչ պայթականը և պահպանում միայն բաղադրիչ շփականները՝ ծ և ջ հնչյունները. օրինակ՝ ջամ մը > ճանձ մը, գարշ քիթ > կարձ քիթ՝ և այլն:

Չ, Ծ, Յ

Այս ափրիկատները ևս նույնպիսի փոփոխություն են կրում, ինչպես որ ջ, ն, շ-ն: Ուրմիայի բարբառում բաղաձայնին նախորդելիս (նաև բառափերջում, երբ հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով) ձ, ձ, ց հնչյունները կարգնում են բաղադրիչ պայթականը, պահպանելով զ և ս շփական հնչյունները. օրինակ՝ խիզ չկա > խինձ չկա, տասկեմ > ծածկեմ, խեզնել > հեձնել, խասկան > հացկան (տաշտաքեր) և այլն:

Ուրմիայի բարբառին բուլբուլին նման են նիկոմիդայի և Պոլսի բարբառները ձ, ձ, ց հնչյունների փոփոխությամբ: Այդ բարբառներում ևս բաղաձայնին նախորդելիս ձ, ձ, ց հնչյունների տեղ գտնում ենք շփական զ-ն և ս-ն. օրինակ՝ մէզ մարք > մեձ մարգ, վէս զըզա > վեց տղա և այլն:

Ի վերջո հիշատակելի է նաև մի տարօրինակ երևույթ նիկոմիդիայի բարբառի մեջ (Սալանքնիկ ենթարարում), որ վիայում է պրոֆ. Հ. Աճառյանը, ֆ, բ, բ, դ, բ հնչյունները բաղաձայնին նախորդելիս դուրս են բնկնում և խոսակցության ժամանակ փոխարինվում են «՝» հանկարծական բնդհատումով և կոկորդի սեղմումով. օրինակ՝ փա՛ դա՛ > փայա կա, օ՛ քը > սաքը և այլն:

Անկասկած հայերեն բարբառները բաղաձայնների շատ ավելի տարբերակներ են ներկայացնում, քան մենք հիշեցինք, բայց աշխատանքի մեր բնույթը հնարավորություն չի ապրիս մեզ բնդարձակվելու: Մյուս կողմից քիչ թվով բարբառների մասին կան մոնոգրաֆիկ աշխատություններ, որոնք կատարված լինեին գիտական գոհացուցիչ ճշտությամբ, որից կարելի լինի վստահորեն օգտվել:

2. ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ՀԱՄԵՄՍԱԿԱՆ ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի բարբառների ձևաբանությունը զգալի տարբերություններ է ներկայացնում: Այդ բոլոր տարբերությունները, սակայն, հատուկ են միայն հայերենի բարբառներին, որ նշանակում է, թե հայկական ամբողջ լայն կողմից կամ ամբողջ հայ հասարակության կողմից այս կամ այն ձևերը գիտակցված են իբրև լեզվական երևույթներ որոշ բովանդակությամբ, սրտ իմաստով: Ձևաբանական տարբերությունները երբեմն այնքան մեծ են, որ տեսնույթ թվում է, թե դործ ունենք տարբեր լեզուների հետ, սակայն այսուհանդերձ այդ տարբերությունները չեն հիշեցնում որևէ օտար լեզու, կան ու մնում են հայերենի սահմաններում և նույնն են համաժողովրդական հայերեն լեզվի քերականական հիմքերի հետ:

Հնչյունական տարբերակները հեշտ է բացատրել նրանով, որ արտասանության ինչ որ շեղում պատճառ է զարձել այդ հնչյունական փոփոխություններին, «աղավաղումներին» և այդ պատճառարանությունը խելքի մտա, հասկանալի, նույնիսկ, հավատալի է լեզվաբանությունն անձանոթ մարդու համար, թեև այդ մասին տրգեն սակ ենք, որ «աղավաղում» ըմբռնումը հարաբերական է: Յուրաքանչյուր լեզու ունի իր արտասանական որոշ բաղան, որ հասարակականորեն գիտակցված է և վերարտադրվում է հասարակության յուրաքանչյուր անդամի բերանում, այդ պատճառով էլ մի հասարակության (մեր խոսքը վերաբերում է միևնույն տեղում ազրոզ և ամեն օր աննշվող մարդկանց) «աղավաղումները» ոչնչով չեն պատճառարանվում, որովհետև նեղ հասարակության մեջ, անդամներով ամեն օր աննշվող հասարակության մեջ, ամեն մի լեզվական շեղում ենթարկվում է հասարակական կոնտրոլի և անողոք կերպով ուղղվում: Երբ, սակայն, հնչական տեսակետից ավյալ լեզվին անհարազատ մի բառ ընկնում է այդ լեզվով խոսողների բերանը և նրանք անհրաժեշտություն են զգում արտասանելու այդ բառը, գիտակցելով այն իր իմաստի հետ, այդ դեպքում օտարտաբար արտասանություն ունեցող բառը հնչական տեսակետից հարմարեցվում է ավյալ լեզվին և արտասանվում մոտավոր ճշտությամբ, ոչ այնպես, ինչպես օտար լեզվի մեջ: Օրինակ՝ «արակտոր» բառը անգլիերեն լեզվի մեջ կունենար բրօքքեր արտասանությունը, բայց սուսերեն լեզվի մեջ չկան «թ» և «օ» հնչյունները, ուստի այդ հնչյունների համար ընարբվում են սուսաց լեզվի մեջ եղած ամենամոտիկ հնչյունները, որոնք են «Տ» և «Ձ» հնչյունները: Վերջինիս արտասանությունը բխում է նաև «տրակտոր» բառի գրապատկերից: Այդ դեպքում անգլիերեն բառի արտասանությունը կատարվում է սուսական լեզվի հնչյունական բաղադրի վրա և ստացվում ԻՐԱԿՏՈՐ բառը:

Այդ նույն եղանակով էլ ամեն մի բարբառի մեջ կազմավորվել են

1 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն:

Հայերենի բարբառների խոնարհումը կատարվում է ժամանակակից ընդհանուր լեզվի փերականություն մեջ ընդունված բոլոր եղանակներով՝ սահմանական, ըզնական, պայմանական, հարկադրական, հրամայական։ Բարբառների մեծ մասն ունեն համարյա բոլոր ժամանակները, միայն որոշ բարբառներում բացակայում են անցյալ կատարյալի ձևերը, որոնք փոխարինվում են վաղակատարի ձևերով։ Սահմանական եղանակի ներկա ժամանակն ունեն բոլոր բարբառները, այդ ժամանակի կազմության տարբերությունը որոշվում է այն ճյուղով, որին պատկանում է ավյալ բարբառը։ «Ում», «Է» և «Ս» ճյուղերի բարբառները ներկան կազմում են դերբայով և օժանդակ բայի ձևերով, իսկ «Կը», «Կա» և «Հա» ճյուղի բարբառները ներկան կազմում են գրաբարի ձևերով կամ աշխարհաբարի ըզնական եղանակ ապառնի ժամանակի ձևերով, ավելացնելով գրան «կը», «կա», «հա» մասնիկներից մեկնումեկը։ Օրինակ՝ Գրում եմ, գրելիս իմ, կըրել եմ, կըգրեմ, գա գրեմ, հա կրիմ, գրեմ կը։

Միևնույն ճյուղի բարբառները, ներկա ժամանակը կազմելով միևնույն եղանակով, միմյանցից տարբերվում են կամ օժանդակ բայերի արմատի տարբերակով և կամ դերբայի կամ խոնարհվող բայի վերջավորության փոփոխությամբ, կամ էլ հնչյունական սիստեմի ընդհանուր տարբերությամբ առաջացած զանազանություններով։

Անորոշ դերբայը բարբառներում ունենում է «էլ», «ալ», «իլ» քիչ թվով նաև «ուլ» վերջավորություններ, որ մի առանձին նորություն չեն ներկայացնում։ Միայն Համշենի բարբառում այդ դերբայն ունենում է «ուշ» վերջավորություն. օրինակ՝ էշթուշ>երթալ, գաշթուշ>կարգալ, խօտուշ>խօտել, Հավանական է, որ «ուշ» վերջավորությունն առաջացել է «ուլ» վերջավորությունից «ուր» ձևի վրայով (թողուլ>թողուր>թողուշ)։

Մոնարհումը բարբառներում բազմաթիվ տարբերակներ ունի, այդ տարբերակներն այնքան շատ են, որ միանգամից ընդգրկելը հնարավոր չէ։ Երբեմն տարբերություններն այնպիսին են, որ թվում է, թե բարբառով չէ, այլ բոլորովին մի ուրիշ լեզվով է։ Օրինակ՝ Թնչ պիտի հասկանան հայերը հետևյալ նախադասություններից։

Մօրդիկ՝ նէլիս ըն նէլ (Ագուլիսի բարբառ)—մարդիկ գնում էին։

Իս մանն ցում լէ (Կարճևանի բարբառ)—ես պիտի տեսնեի։

Եթե թարգմանություն չլինի, այդ նախադասությունները չեն հասկանա հայերիցս և ոչ մեկը, բացի նրանցից, որոնք խոսում են այդ բար-

բառներով։ Մակայն այդ տարբերությունները բխում են բառերի հնչյունական փոփոխությունից (սղում, անկում, ասիմիլացիա և այլն) և ոչ այլ բանից։

Ձևաբանության մեջ ոչ մի կատեգորիա այնքան նշանակություն չունի, որքան բայը, քանի որ բայով է ձևավորվում նախադասությունը, ուրեմն բայի միջոցով է ձևավորվում արտահայտած միտքը կամ հասկացվում այդ միտքը, ուստի շատ հաճախ ամբողջ նախադասությունը դառնում է անհասկանալի, երբ չի հասկացվում բայը։

Ասացինք, որ հիմնական տարբերությունները բայերի խոնարհման մեջ երևան են գալիս ներկա ժամանակում։ Դրա հետևանքով էլ բարբառները այդ ներկա ժամանակով խմբավորվում են ըստ ճյուղերի։

Ներկա ժամանակը սովորաբար ցույց է տալիս, որ խոսողը կամ նախադասությունն ասողը կամ ինքն է գործողությունը ընթացքի մեջ և կամ նա, ում մասին, որ խոսվում է. ուրիշ կերպ ասած՝ ներկա ժամանակը ցույց է տալիս, որ երկակն գործողությունը կատարում է խոսելու վայրկյանին, կամ նրա գործողությունը ընթացքի մեջ է։

Այդ հմաստն արտահայտելու համար սովորաբար զանազան լեզուներ զանազան միջոցների են գիժում։

Թեքական լեզուները ներկան արտահայտելու համար մշակած ունեն հատուկ վերջավորություններ։ Նույնպիսի վերջավորություններ մշակել են նաև այլ ժամանակներ արտահայտելու համար (անցյալ, ապառնի և այլն)։ Լեզվաբանությունն ասում է, որ այդ վերջավորություններն առաջացել են առանձին բառերից, ուրեմն ամբողջ բայի կազմությունը եղել է բառերից կազմված նախադասությունը, որի մեջ եղել է բայը արմատական իմաստով, էական բայը և դերանունը։ Որոշ լեզուներ արտահայտել են ուղղակի բայարմատով և դերանվան միջոցով։ Օրինակ՝ ուզեկերեն լեզուն իր ներկան կազմել է բայի արմատից, այսպես, КЕТ և МЭН, СЭН, МИЗ, СІЗ դերանուններից. КЕТЭМЭН, КЕТЭМИЗ—գնում եմ, գնում ենք։

Ազրբեջաներեն լեզուն վարվել է նույնպես։

Հայերեն լեզուն «ե» խոնարհման բայերի ներկայի և անցյալի անկատարի խոնարհումը կազմել է էյական բային զուգահեռ ձևով։

Այսպիսով ներկան կազմելու համար լեզվի զարգացման սկզբնական շրջանում ասվել է ամբողջ նախադասություն, հետագայում այդ նախադասության էական մասը, բայարմատը մնացել է իբրև բայահիմք, իսկ էական բայերն ու դերանունները դարձել են նրա համար վերջավորություններ։ Հայերենի բարբառները ներկան կազմել են ընդհանուր հայերենի մասերիցով, բայց բարբառների յուրաքանչյուր ճյուղ տարբեր կառուցվածք է բնութիւն և տարբեր մասերից, առանց փոփոխելու փերականության կառուցվածքի հիմքերը (դեմքի վերջավորությունները)։ Դրա հետևանքով էլ ստացվել են ներկա ժամանակի կազմության տարբեր ձևեր։

«Ում» ճյուղի բարբառները ներկան կազմում են «ոււմ» ունեցող անկատար դերբայով և օժանդակ բայով։

«Ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայը իսկապես բայ-

Հայտնի է, որ ժամանակակից գրական լեզուն, ինչպես մեր բարբառները, «ի» նախադիրը չունի: Այն բոլոր բարբառները, որոնք ներգոյական հոլով կազմելու վերջավորությունն չունեն, այդ ներգոյական հոլովը արտահայտում են կամ սեռականով և «մեջ» նետագրությունը (դաշդին մէջ, տանջար մէջ), և կամ էլ ուղղակի հայցական հոլովով, որ նման է ուղղականին, օրինակ՝

— Բարան տունն ի (հայրիկը տանն է)— Ուրմիայի բարբառ:

— Չէ, էք՛ին ի (ոչ, այգումն է):

Ինչպես տեսնում ենք, հայցականը գործածվում է իբրև ներգոյական: Հետևաբար կարգալ եմ, կրել եմ նշանակում են՝ կարգալու մեջ եմ և գրելու մեջ եմ: Միջին հայերենում հանդիպում ենք՝ «Ես եմ ի կարգալ, ես եմ ի գրել» — ես կարգում եմ, ես գրում եմ, ձեռքին, որ միանգամայն նման են «Լ» ճյուղի բարբառների կազմության: Վերջապես մեզ հայտնի է, որ գրաբար լեզվին ևս օտար չէր անորոշ գերբայի հայցական հոլովի գործածությունը ներգոյականի իմաստով, օրինակ՝

«... Բազումք ի բձէնջ ի խորշակէ յերթալն սատակիցին (եղիշէ), «Շատերը ձեզանից գնալու մեջ (գնալու ժամանակ) խորշակից կատակեն»:

Անա այս եղանակով է կազմվել «Լ» ճյուղի բարբառների ներկան. Եթե «ե» խոնարհման փոխարեն տեսնում ենք «ի» խոնարհում (կրբի, սաիլ), ապա այդ բխում է բարբառի հնչյունական ընդհանուր սխտեմից և կամ թե բարբառում գերակշռում է «ի» խոնարհումը, իսկ դա որևէ փոփոխություն չի մտցնում վերևի ընդհանուր դիտողության մեջ:

Ավելի բարձր է դրությունը «Ս» ճյուղի բարբառների ներկայի կազմության մեջ:

«Ս» ճյուղի բարբառների ներկան բազմատեսակ է և բազմօրինակ, այսպես.

Գրելիս, կարբիս (Արդվինի բարբառ). Գրելիս, կրբիլիս (Ղարադաղի բարբառ). Գրելիս, կրբիլիս (Գրմարի բարբառ).

Կրբիլիս, կարթայիս (Քեյվանի բարբառ).

Գրբիլիս, կարգիս (Մեղրու բարբառ):

Կրբիլիս, կրթայիս (Ուրմիայի բարբառ):

Նկատելի է, որ այս բոլոր բարբառների գերբայական լրիվ ձևը ներկայացնում են Ղարադաղի և Արթվինի բարբառները, որտեղ գերբայական վերջավորությունն է «լիս» (էլիս, ալիս): Մյուս բարբառները այս կամ այն կերպ սղում են այդ վերջավորությունը: Այդ սղման պրոցեսը շատ պարզ երևում է, երբ մենք հաջորդաբար կարգում ենք վերևի բերած բոլոր օրի-

1 Անորոշ գերբայով ներկան կազմելու փաստեր կան միջին հայերենից առաջ նույնիսկ VII—VIII դարերում. Հովհան Մամիկոնյանի մոտ, «զուր ինձ վնաս էք ի տայ յառնել, որ զառճարս այրել էք ի տալ» — զուր ինձ վնաս էք անել տալիս, որ այս տառաբար այրել էք տալիս» (էջ 194):

Շապուհ Բաղրատունու մոտ, որի գրույցների մի մասը վերաբերում են Հերի (Խոջի) գավառին, ունենք այսպիսի արտահայտություններ. «Երգմացուցանեմ գրեղ ի խաչ որ ի Վարագ է, չե՞ս դիս ճանաչել (ինձ չե՞ս ճանաչում—Ղ.): Եւ ասէ Գրբինն. «Գրիտէ տոտուած իմ սուրբ նշանն» որ չեմ ճանաչել: Թէ զու ով ես» (չեմ ճանաչում, թե զու ով ես—Ղ.):

նակները: Նկատվում է, որ ալիս, էլիս ձևերի լրիվ վերջավորությունները թուլանում են, թուլանում է ամենից առաջ «լ» հնչյունը, վերածվելով յ հնչյունի (կրբիլիս, կարթայիս — Գրմարի և Քեյվանի բարբառներ), որն իր ներթիվն ձուլվում է հաջորդող «ի» ձայնավորին և վերածվում պարզ «յ» բաղաձայնի Կարճեանի բարբառում (գրբիլիս, կրբիլիս), այնուհետև դուրս է ընկնում նաև այդ «յ»-ն, մնում է Մեղրու բարբառի ձևը — Գրբիս, կարգիս: Այդ նույն պրոցեսն է կատարվել նաև Հաղբութի և Ուրմիայի բարբառների մեջ: Հատկապես Ուրմիայի բարբառի մեջ ունենք շատ լավ տվյալ այդ մասին: Այդ բարբառի ներկայի ժամանակի ձևը կլինի.

Չեմ կրբիլիս, չեմ կրթայիլի, որից երևում է, թե լրիվ գրական ձևը պետք է որ լիներ կրբիլի (ս) եմ, կրթայի (ս) եմ: Այդպես է նաև Արթվինի բարբառում (չեմ գրբիլի, չեմ կրթայի):

Այսպիսով տեսնում ենք, որ «Ս» ճյուղի բոլոր բարբառները անցյալում ունեցել են ալիս, էլիս վերջավորություն ունեցող գերբայի լրիվ ձևերը և հետագայում հնչյունափոխության և կամ շեշտափոխության հետևանքով սղում են այդ ձևերը, կենտրոնացնելով այդ ամբողջ վերջավորության իմաստը վերջին «ս» հնչյունի մեջ, դարձնելով այն ներկայի գաղափարն արտահայտելու միջոց:

Գրելիս, կարգալիս գերբայական ձևերը գտնվում են գրական լեզվի մեջ իբրև անկատար գերբայի երկրորդական ձևեր:

Այդ գերբայը ցույց է տալիս գլխավոր գործողության հետ կատարվող մի երկրորդական գործողություն, որը դառնում է գլխավոր գործողության ժամանակ ցույց տվող, այսինքն՝ համապատասխանում է միանգամայն ուսուսական деепричастие-ին: Օրինակ՝ փողոցով անցնելիս տեսա բարեկամիս, այսինքն՝ այն ժամանակ, երբ ես անցնում էի փողոցով, հանդիպեցի բարեկամիս: Ինչպես տեսնում ենք, անցնելիս գերբայական ձևը ցույց է տալիս գլխավոր գործողության կատարման ժամանակ, ինչպես գրաբարի անորոշ գերբայի հայցական հոլովը. օրինակ՝ «ի բառնալ ազգին Արշակունեաց»:

Անկատար գերբայի այս ձևերը՝ գրելիս, կարգալիս, հայցականի ձևեր են՝ հավասար ի գրելիս, ի կարգալիս ձևերին, սակայն, ինչպիսի՞նք հայցական են դրանք: Մեր կարծիքով «Ս» ճյուղի բարբառներում սրանց կազմությունը մի քիչ տարբեր է. ոչ մի կասկած, որ գրելիս, կարգալիս ձևերը հայցական լինելով ուղղականում պետք է ունենան գրելիք, կարգալիք ձևերը: Ժամանակակից հայերենով գրելիք նշանակում է՝ այն, որ պիտի գրվի. «կարգալիք» նշանակում է՝ այն, որ պիտի կարգացվի: «Ս» ճյուղի բարբառների գրելիս, կարգալիս ձևերը, մեր կարծիքով, այդ իմաստից չեն կազմվել, նրանք կազմվել են ճիշտ նույն ձևի մի տարբեր իմաստից:

Գրաբարի լեզվի մեջ «ելիս» վերջավորություն ունեցող գերբայական ձևը նշանակում է կատարող, անող. օրինակ՝

«Եթե ասածս կամօք գործէին այնպիսի չարիք, ընդէք ի գործելաց չարեացն վրէժս պահանջէ»<sup>1</sup> (Եզնիկ Կողբացի):

«Ձի եթե խոփ և գերանդի և մանգաղ սք գործիցէ, ի բարւոք իրս

<sup>1</sup> Եթե ասածս կամօքով էին գործվում այդ չարիքները, ինչու չարիք գործողներից է վրեժ պահանջում:

պաշտեցա՛վ. ապա եթէ սուսեր և գեղարդ և սլաք, և այլ ինչ զէն՝ որ վնասակար մարդկան է, գործ չարութեան գործէ. և պատճառ չարութեան գործելիքն, և ոչ երկաթն»<sup>1</sup> (Եզն. Կողբ.) (ընդգծումները մերն են—Գ.):

Այժմ «ելիք» վերջավորութուն ունեցող գոյականները նշանակում են «կատարելիք բաներ». օրինակ՝ խմելիք—խմելու բաներ, խոսելիք—խոսելու բաներ, ուտելիք—ուտելու բաներ:

Ժամանակակից հայերեն լեզվի մեջ «ելի», «ելիք» վերջավորութուն ունեցող մի քանի գոյականներ նշանակում են գործող, կատարող, անող. օրինակ՝ ունելի կամ անելիք—բռնող, լսելիք—լսող (լսող օրգանը)—ականջ, հոտառելիք—հոտառող (հոտառող օրգան)—քիթ, շոշափելիք—շոշափող (շոշափող օրգան) և այլն:

Այսպես է և գրաբարի մեջ. «Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենուցուն...» (Փ. Բ.—էջ 103):

«Ապա երբ այդ մեծ բաները բացարձակ կերպով բոլորի ականջներն ընկան»...

Ի լսելիս=ականջները, ականջների մեջ, ուրեմն լսելիք=ականջներ, այսինքն՝ լսող օրգանները:

Այս ձևի հոգնակին, օրինակ, գործելիք, գրելիք, կարգալիք, նշանակում են գործողներ, գրողներ, կարգացողներ: Սրանց հայցականը կլինի գրելիս, կամ ի գրելիս,—որ նշանակում է գրողների մեջ, ի կարգալիս—նշանակում է կարգացողների մեջ, հետևաբար «Ս» ճյուղի բարբառների գրելիս եմ, կարգալիս եմ ձևերը նշանակում են՝ գրողների մեջ եմ, շարքին եմ, կարգացողների մեջ եմ, շարքին եմ, որ արտահայտում է ներկա ժամանակի գաղափարը, որովհետև, եթե «ես գրողների շարքումն եմ», ուրեմն «գրում եմ», կամ՝ «կարգացողների շարքումն եմ», ուրեմն՝ «կարգում եմ»<sup>2</sup>:

Այսպիսով, «Ս» ճյուղի բարբառների ներկայի կազմութայնը ևս մի ամբողջ նախադասություն է, որ նշանակում է պատկանել կամ լինել գործողություն կատարողների շարքին:

Ի հարկէ, բառացի այդ իմաստն այլևս չկա, դրա փոխարեն ուժեղացել է ներկայի իմաստը, գործողությունը կատարման ընթացքի մեջ լինելու իմաստը:

Այս երեք ճյուղի բարբառների ներկայի կազմության գաղանփքը բացում է մի շատ հետաքրքրական բարբառ՝ Հավարիքի բարբառը: Այդ բարբառը ներկայի կազմության մեջ համագրում է բոլոր երեք ճյուղերի ներ-

<sup>1</sup> Եթե մեկը շինում է խոփ, դերանդի և մանգաղ, ուրեմն լավ գործ է բռնում, իսկ եթե սուր, գեղարդ, սլաք և որևէ այլ զենք, որ մարդկանց համար վնասակար է, ապա չարութայն գործ է կատարում: Եւ չարութայն պատճառը գործողն է (գործելին) և ոչ երկաթը:

<sup>2</sup> Մեր այս ենթադրությունը հետազոտում հաստատվեց գոցեմտ Ա. Արրահամյանի կողմից մասնաճյուղից արված մի փաստով: Փ. Բուզանդի մոտ ասվում է. «Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն», (ընդգծումն իմն է—Գ.) տեսանէր զկին սպանելոյն... իսկ Արշակ թագավորր այն լացողների մեջ տեսավ սպանվածի կնոջը... (Փ. Բ. էջ 103): Ուրեմն ի լալիսն = լացողների մեջ: Այդ սույն ձևը, ինչպես մենք նկատեցինք, գործածված է նաև քիչ վերև. «Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն» (ընդգծ.—Գ.), նստեալ լայր զեզրորդին իւր, զօր ինքն եսպան...: Իսկ թագավորն ինքը գնալով լացողների մեջ, նստեց և ողբաց (լացեց) իր եզրորդուն, որին ինքն սպանեց...:

կայի կազմութայնը, դրանով ցույց տալով, որ գրանք բոլորը իմաստով միմյանց հավասար են: Հավարիքի բարբառը ներկան կազմում է հետևյալ կերպ.

Գ՛իրէլիս ըմ, գիրէլըմ ըս, գիրէլըմ ի, գիրելըմ անք, գիրէլըմ ար, գիրէլում ան:

Առաջին դեմքը կազմված է անկատար գերբայի երկրորդական ձևից կամ «Ս» ճյուղի բարբառները կազմող անկատար գերբայից, որի «խ» վերջավորությունն ավելացել է անորոշ դերբայի վրա, և օժանդակ բայից երկրորդ և մյուս դեմքերը կազմված են «ու» վերջավորություն ստացած անորոշ գերբայից, ըստ որում անորոշ գերբայը դա «Է» ճյուղի անկատար գերբայն է, իսկ «Ու» վերջավորությունն էլ «Ու» ճյուղի անկատար գերբայի վերջավորությունն է և կամ այդ ճյուղի ներգոյական հոլովի ձևը: Ի դեպ, պետք է նշել, որ գրելըմ (գրելում) ձևը ուղղակի մատնացույց է անում, որ նրան համապատասխանող «գրում» ձևը ներգոյական հոլովի կազմութայնն է. միայն առաջին դեպքում «գրում» ձևը ներգոյական է հոլովվում, որ հատուկ է հայերենին, իսկ երկրորդ դեպքում հոլովվում է բայարմատը:

Այսպիսով, մեր բարբառների ներկան կազմող անկատար գերբայի տարբերակները ընդհանուր հայերեն լեզվի մեջ մասնակի գործածություն ունեցող ձևեր են, որ բարբառներում ստացել են այս կամ այն ընդհանուր գործածությունը:

Ասացինք, որ «Ու» ճյուղի բարբառների ներկան կազմվում է «ու» վերջավորություն ունեցող անկատար գերբայով և օժանդակ բայով:

Օժանդակ բայն այս բարբառներում ունենում է տարբեր ձևեր՝

- Երևանի բարբառ՝ էմ, էս, ա, էնք, էք, էն:
- Թբիլիսի բարբառ՝ իմ, իս, է, ինք, իք, ին:
- Շամախու բարբառ՝ ամ, էս, ա, անք, էք, ան:
- Ագուլիսի բարբառ՝ ըմ, ըս, ս, ըք, ըք, ըն:
- Աստրախանի բարբառ՝ էմ, էս, ա, էնք, էք, էն:
- Ղարաբաղի բարբառ՝ ըմ, ըս, ս, ընք, ըք, ըն:
- Զուգայի բարբառ՝ ամ, սս, ա, անք, ար, ան:

Այսպիսով, կազմութայնը լինելով միատեսակ, մանրամասնություններում տարբեր բարբառներ որոշ զանազանություն են ներկայացնում: Այդ զանազանությունն առաջանում է հասկապես օժանդակ բայերի մեջ և նրանով, որ տարբեր բարբառներ օժանդակ բայերի տարբեր արմատներ են օգտագործում. օրինակ՝ Երևանը օգտագործում է ներկայի բոլոր դեմքերում «է» արմատը (գ՛րրըմ ա), Թբիլիսի բարբառը բոլոր դեմքերում օգտագործում է «ի» արմատը, միայն իսի բարբառը բոլոր դեմքերում օգտագործում է «ա» արմատը (գ՛րրըմ ա), Զուգայի բարբառը հետևողաբար գերբայի «է» արմատը (գրրում է), Զուգայի բարբառը հետևողաբար գերբայի «է» արմատը (գրրում է), Զուգայի բարբառը հետևողաբար գերբայի «ա» արմատը, իսկ Շամախու բարբառը «է» և «ա» արմատները, Կապանի և Մեղրու շրջանի խոսվածքները օժանդակ բայի արմատը հնչյունափոխում են «ի»-ի և «ն»-ի:

Ծիշտ է, որ այս արմատներից մեկ-երկուսը կարող են զուգադիպած

պաշտեցա՛վ. ապա եթէ սուսեր և գեղարգ և սլաք, և այլ ինչ զէն՝ որ վնասակար մարդկան է, գործ չարութեան գործէ. և պատճառ չարութեան գործելից, և ոչ երկաթն»<sup>1</sup> (Եզն. Կողբ.) (ընդգծումները մերն են—Ղ.):

Այժմ «ելիք» վերջավորութուն ունեցող գոյականները նշանակում են «կատարելիք բաներ». օրինակ՝ խմելիք—խմելու բաներ, խոսելիք—խոսելու բաներ, ուտելիք—ուտելու բաներ:

Փամանակակից հայերեն լեզվի մեջ «ելի», «ելիք» վերջավորութուն ունեցող մի քանի գոյականներ նշանակում են գործող, կատարող, անող. օրինակ՝ ունելի կամ անելիք—բռնող, լսելիք—լսող (լսող օրգանք)—տկանջ, հոտոտելիք—հոտոտող (հոտոտող օրգանք)—քիթ, շոշափելիք—շոշափող (շոշափող օրգանք) և այլն:

Այսպես է և զրաբարի մեջ. «Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենուցուն...» (Փ. Բ.—էջ 103):

«Ապա երբ այդ մեծ բաները բացարձակ կերպով բոլորի տկանջներն ընկան»...

Ի լսելիս=տկանջները, տկանջների մեջ, ուրեմն լսելիք=տկանջներ, այսինքն՝ լսող օրգանները:

Այս ձևի հոգնակին, օրինակ, գործելիք, գրելիք, կարգալիք, նշանակում են գործողներ, գրողներ, կարդացողներ: Սրանց հայցականը կլինի գրելիս, կամ ի գրելիս,—որ նշանակում է գրողների մեջ, ի կարգալիս—նշանակում է կարդացողների մեջ, նեակաբար «Ս» ճյուղի բարբառների գրելիս եմ, կարդալիս եմ ձևերը նշանակում են՝ գրողների մեջ եմ, շարքին եմ, կարդացողների մեջ եմ, շարքին եմ, որ արտահայտում է ներկա ժամանակի գաղափարը, որովհետև, եթե «ես գրողների շարքումն եմ», ուրեմն «գրում եմ», կամ «կարդացողների շարքումն եմ», ուրեմն՝ «կարդում եմ»<sup>2</sup>:

Այսպիսով, «Ս» ճյուղի բարբառների ներկայի կազմութունը ես մի ամբողջ նախադասություն է, որ նշանակում է պատկանել կամ լինել գործողություն կատարողների շարքին:

Ի հարկէ, բառացի այդ իմաստն այլևս չկա, զբա փոխարեն ուժեղացել է ներկայի իմաստը, գործողությունը կատարման ընթացքի մեջ լինելու իմաստը:

Այս երեք ճյուղի բարբառների ներկայի կազմության գաղափարը բացում է մի շատ հետաքրքրական բարբառ՝ Հավարիքի բարբառը. Այդ բարբառը ներկայի կազմության մեջ համադրում է բոլոր երեք ճյուղերի ներ-

<sup>1</sup> Եթե մեկը շինում է խոփ, զերանդի և մանգաղ, ուրեմն լավ գործ է բանում, իսկ եթե սուր, գեղարգ, սլաք և որևէ այլ զենք, որ մարդկանց համար վնասակար է, ապա չարության գործ է կատարում: Եւ չարության պատճառը գործողն է (գործելին) և ոչ երկաթը:

<sup>2</sup> Մեր այս ենթադրությունը հետազոտում հաստատվեց զոցենա Ա. Աբրահամյանի կողմից մատնացույց արված մի փաստով: Փ. Բուզանդի մոտ ասվում է. «Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն, (ընդգծումն իմն է—Ղ.) տեսանէր զկին սպանելոյն»... իսկ Արշակ թագավորը այն լացողների մեջ տեսավ սպանվածի կնոջը... (Փ. Բ. էջ 102): Ուրեմն ի լալիսն = լացողների մեջ: Այդ նույն ձևը, ինչպես մենք նկատեցինք, գործածված է նաև Բիշ վերև. «Իսկ ինքն թագաւորն գնացել ի լալիսն (ընդգծ.—Ղ.)», նստեալ լայր զեղբորորդին իւր, զօր ինքն հսպան...: Իսկ թագաւորն ինքը գնալով լացողների մեջ, նստեց և ողբաց (լացեց) իր եղբորորդուն, որին ինքն սպանեց...:

կայի կազմութունը, դրանով ցույց տալով, որ դրանք բոլորը իմաստով միմյանց հավասար են: Հավարիքի բարբառը ներկան կազմում է նեակայ կերպ.

Գիրելիս ըմ, գիրելում ըս, գիրելում ի, գիրելում անք, գիրելում ար, գիրելում ան:

Առաջին դեմքը կազմված է անկատար գերբայի երկրորդական ձևից կամ «Ս» ճյուղի բարբառները կազմող անկատար գերբայից, որի «խ» վերջավորությունն ափելացել է անորոշ գերբայի վրա, և օժանդակ բայից երկրորդ և մյուս դեմքերը կազմված են «ու» վերջավորություն ստացած անորոշ գերբայից, ըստ որում անորոշ գերբայը դա «է» ճյուղի անկատար գերբայն է, իսկ «Ու» վերջավորությունն էլ «Ու» ճյուղի անկատար գերբայի վերջավորությունն է և կամ այդ ճյուղի ներգոյական հսլովի ձևը: Ի դեպ, պե՛տք է հիշել, որ զբրելում (զբլում) ձևը ուղղակի մատնացույց է անում, որ նրան համապատասխանող «գրում» ձևը ներգոյական հսլովի կազմութունն է. միայն առաջին դեպքում անորոշ գերբայն է հսլովվում, որ հատուկ է հայերենին, իսկ երկրորդ դեպքում հսլովվում է բայարմատը:

Այսպիսով, մեր բարբառների ներկան կազմող անկատար գերբայի տարբերակները ընդհանուր հայերեն լեզվի մեջ մասնակի գործածություն ունեցող ձևեր են, որ բարբառներում ստացել են այս կամ այն ընդհանուր գործածությունը:

Առաջինք, որ «Ու» ճյուղի բարբառների ներկան կազմվում է «ու» վերջավորություն ունեցող անկատար գերբայով և օժանդակ բայով:

Օժանդակ բայն այս բարբառներում անհնում է տարբեր ձևեր՝

- Երևանի բարբառ՝ էմ, էս, ա, էնք, էք, էն:
- Թբիլիսի բարբառ՝ իմ, իս, է, ինք, իք, ին:
- Շամախու բարբառ՝ ամ, էս, ա, անք, էք, ան:
- Աղուլիսի բարբառ՝ ըմ, ըս, տ, ըք, ըք, ըն:
- Ատրախանի բարբառ՝ էմ, էս, ա, էնք, էք, էն:
- Ղարաբաղի բարբառ՝ ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն:
- Ջուղայի բարբառ՝ ամ, աս, ա, անք, աք, ան:

Այսպիսով, կազմությամբ լինելով միատեսակ, մանրամասնություններում տարբեր բարբառներ որոշ զանազանություն են ներկայացնում: Այդ զանազանությունն առաջանում է հակապես օժանդակ բայերի մեջ և նրանով, որ տարբեր բարբառներ օժանդակ բայերի տարբեր արմատներ են ունենում, որ տարբեր բարբառներ օգտագործում է ներկայի բոլոր դեմքերում «է» արմատը, իսկ երրորդ դեմքում «ա» արմատը (գ'բբմ ա), Թբիլիսիի բարբառը բոլոր դեմքերում օգտագործում է «ի» արմատը, միայն երրորդ դեմքում «է» արմատը (զբբում է), Ջուղայի բարբառը նեակոդականորեն օգտագործում է «ա» արմատը, իսկ Շամախու բարբառը «է» և «ա» արմատները, Կապանի և Մեղրու շրջանի խոսվածքները օժանդակ բայի արմատը հնչյունափոխում են «ի»-ի և «սի»-ի:

Ճիշտ է, որ այս արմատներից մեկ-երկուսը կարող են զուգադիպած

լինել հնչյունափոխության կամ ներդաշնակության հետևանքով առաջացած հնչյունների/ զանազանությունը, բայց հիմնականում օժանդակ բայի արմատների հնչյունական տարբերություններն առաջանում են նրանից, որ հայերեն լեզվի մեջ էական բայի իմաստով գիտակցվել են ա, ե, ի, ու ու ձայնավորները, որոնք զուգահեռ են հնդեվրոպական բառերի թեմատիկ ձայնավորներին: Մեր գրական լեզուն հետևողականորեն օգտագործում է միայն «է» ձայնավորը, գրաբարն էլ նույն «է»-ն, սակայն գրաբարի անորոշ դերբայի լծորդի մեջ (խոնարհիչի մեջ) երևում են էական բայի բոլոր այն տարբերակները, որոնք գիտակցվել են իբրև էական բայեր (ա, է, ի, ու, ու): Ընդհանուր լեզվի մեջ գրանք շատ վաղուց մահացած են, բացի «է» արմատից:

Ընդհանուր պատկերը տալու համար բերում ենք բոլոր բարբառների ներկա ժամանակի կազմության բնութագրող աղյուսակը:

**Սահմանական ներկա**

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Արարատյան	Թբիլիսի	Ղարաբաղի	Ասորխանի
գ'ըրբմէմ	գըրբումիմ	կ'իրբմբմ	կըրբմ էմ
» էս	» իս	» ըս	» էս
» ա	» է	» ա	» ա
» էնք	» ինք	» ընք	» էնք
» էք	» իք	» ըք	» էք
» էն	» ին	» ըն	» էն

**Շամախու**

**Ագուլիսի**

**Ջուղայի**

կ'իրբմ ամ	կըրբում րմ	գ'ըրբում ամ	փախման ամ
» էս	» ըս	» սս	» սս
» ա	» ա	» ա	» ա
» անք	» ըք	» անք	» անք
» էք	» ըք	» աք	» աք
» ան	» ըն	» ան	» ան

«Է» ճյուղի բարբառների ներկան, գիտենք, որ կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի ձևերով: Այս դեպքում տարբերություն լինում է կամ դերբայական ձևի մեջ և կամ օժանդակ բայի արմատի մեջ: Այսպես, օրինակ, Պոլի բարբառի անորոշ դերբայն ունի «կըրբել» ձևը, իսկ Մարագայի բարբառի անորոշ դերբայն ունի «կ'իրբել» ձևը: Նույն եղանակով Պոլի բարբառի օժանդակ բայի բոլոր գեմքերի համար օգտագործվում է «է» արմատը, բացի երրորդ գեմքից, որտեղ օգտագործվում է «ի» արմատը (կըրբելի), իսկ Մարագայի բարբառի մեջ օժանդակ բայի «ի» արմատը օգտագործվում է բոլոր գեմքերի համար, բացի հոգնակի երկրորդ գեմքից, որ ունենում է «է» արմատը:

«Է» ճյուղի բարբառների երկրորդ գեմքի էական բայը արատասանության մեջ միանում է դերբային և բառի ամբողջ կապակցության շեշտը

իր վրա առնելով դառնում է համարյա վերջավորություն (կըրբելի — գրում է): Մարագայի բարբառում խոնարհման ժամանակ շեշտը վերցնում է «ի» կամ «ք» ձայնավորը, հաճախ «ի»-ն միաձուլվում է օժանդակ բայի արմատին և կազմում խիսական վերջավորություն:

**Ընդհանուր աղյուսակը կլինի հետևյալը**

Խոյի բարբառ			Մարագայի բարբառ <sup>1</sup>		
կըրբել	էմ	էթնկ եմ	կիրբելի	իմ	կիրբելիմ
»	էս	էթնկ ես	»	իս	կիրբելիս
կըրբելի		էթնկի	կիրբելի	ի	կիրբելի
կըրբել	ենք	էթնկ ենք	կիրբելի	ինք	կիրբելինք
»	էք	էթնկ էք	»	իք (էք)	կիրբելիք (էք)
»	են	էթնկ են	»	ին	կիրբելին

«ս» ճյուղի բարբառների ներկան, ինչպես ասացինք, կազմվում է «ս» վերջավորություն ունեցող դերբայով և օժանդակ բայի ձևերով: Մեզ արդեն հայտնի է, որ «Ս» ճյուղի բարբառների դերբայները կազմված են նույն եղանակով, ինչ որ գրական լեզվի անկատար դերբայի երկրորդական ձևի կազմությունը (գրելիս, կարդալիս): Միայն լրիվ ձևը պահպանված է Արթ-կազմությունը (գրելիս, կարդալիս): Միայն լրիվ ձևը պահպանված է Արթ-վինի և Ղարազայի բարբառներում, իսկ մյուս բարբառներում սղումների հետևանքով, որ տեղի է ունեցել շեշտադրության փոփոխության պատճառով, դերբայը ստացել է զանազան կազմություն, բայց հիմնականում պահպանել է ս-ն ու նրա միջոցով գիտակցել ներկայի գաղափարը:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Ղարազայ	Արրվինի	Քեյվան (Շաղախ)	Կարնևան
գ'իրբիս րմ	գիրբելիս իմ	կ'ըրբյս րմ	գ'իրբյ յիմ
» ըս	» իս	» ըս	» յիս
» ա	» է	» ան	գ'իրբյս ան
» ընք	» ինք	» ըք	գ'իրբյ յիք
» ըք	» իք	» էք	» յիք
» ըն	» ին	» ըն	» յին

**Մեղրի**

**Հաղրուրի**

**Ուրմիայի**

գ'իրբիս իմ	կ'ըրբէս րմ	կ'իրբես եմ
» իս	» ըս	» ես
» ի	» ա	կ'իրբելի
» իք	» ընք	կ'իրբես ենք
» իք	» ըք	» էք
» ին	» ըն	» են

<sup>1</sup> Մարագայի բարբառի կըրբելի ձևն ստացված է հայերենի «գրելիս» ձևից, որն իր հիմնական անկատար դերբայն է զարձրել «Ս» ճյուղը: «Է» ճյուղի մեջ այդ դերբայի առկայությունն այնպես է հիմնավորվում, ինչպես որ «Ու» ճյուղի մեջ (լավիս, գալիս, տալիս):



Աղյուսակից երևում է, որ սկզբից թույլանում է լ-ն և վերածվում յ ննչյունի (կիրէլիս—կիրէյիս), ապա յ և ի ննչյունները միմյանց ձուլվելով տալիս են պարզ յ (կիրէյս, տայս—գրելիս, տալիս): Այնուհետև այդ յ-ն ևս ընկնում է, որովհետև բարբառների մեջ այդպիսի երկբարբառ սովորաբար չի պահպանվում և ստացվում է՝ կիրէս, տաս:

«Կիրէյիս» ձևը պահպանված է Ղարաբաղի մարզի Մարտունու շրջանի մի շարք գյուղերի խոսվածքների անցյալ անկատարի կազմության մեջ, օրինակ՝ Ճարտար և Շեսեր գյուղերում՝ կիրէյիս ըմ լամ, կիրէյիս ըս լամ, կիրէյիս ան լամ—գրում էի, գրում էիր, գրում էր:

Մնայիս ըմ լամ, մնայիս ըս լամ, մնայիս ան լամ—մնում էի, մնում էիր, մնում էր:

Նույն ձևի կազմությունն ունի նաև Ղափանի շրջանի Սրաշեն գյուղի խոսվածքի անցյալ անկատարը:

Միայն մի բարբառում «ս» վերջավորությունը կորած է բոլոր դեպքերում, բացի եզակի երրորդ դեմքից, դա է Կարճեանի բարբառը, որտեղ լինում է գիրիյ իմ, գիրիյ իս, գիրիյս ան—գրում եմ, գրում ես, գրում է:

Մնայ իմ, մնայ իս, մնայս ան—մնում եմ, մնում ես, մնում է:

Այս բարբառի գերբայի կազմության պրոցեսը, ընթանալով նույն ճանապարհով, ինչ որ մյուս բարբառներում, վերջում որոշ շեղում է կատարում, այն է գիրիյս, մնայս ձևերի մեջ ոչ թե կորցնում է յ-ն, այլ կորցնում է ա-ն՝ և յ-ն պահպանում ու գիտակցում նրա մեջ ներկայի կազմությունը, սակայն միտակերպ ձևի մեջ ընթանում է նույն ձևով, ինչ որ իր եղբայրակից մյուս բարբառները, այսինքն կորցնում է յ-ն և պահպանում ա-ն, օրինակ՝ գիրիս շիմ, գիրիս շիս, գիրիս շի: Դրա պատճառը, հավանական է, այն է, որ գերբային հաջորդող բայն սկսվում է բաղաձայնով:

Օժանդակ բայի կազմությունն այդ բարբառներում նույնպես տարբեր է:

Այս բարբառներում ևս օգտագործվում է օժանդակ բայի մերթ «է» արմատը, մերթ «ի» և մերթ «ա» արմատը, այսպես՝ Արթիինի, Մեղրու և Կարճեանի բարբառներն օգտագործում են «ի» արմատը, իսկ Շաղախի (Քեյվանի) և Հաղբութի բարբառները բոլոր դեմքերում «ե» (ը) արմատը, իսկ երրորդ դեմքում «ա» արմատը, մինչդեռ Ուրմիայի բարբառն օգտագործում է բոլոր դեմքերի համար «ե» արմատը, իսկ երրորդ դեմքի համար «ի» արմատը, բոլորովին նմանվելով Սոյի բարբառին:

Արթիինի բարբառի օժանդակ բայի կազմությունը նման է Թրիլիսի բարբառին. նույնպիսի նմանությունն ունեն Մեղրու և Կարճեանի բարբառները միմյանց և Թրիլիսի բարբառի հետ, բացի երրորդ դեմքից, որտեղ գտնում ենք ա՝ Թրիլիսի բարբառի է-ի դիմաց: Հաղբութի, Ղարապաղի և Շաղախի (Քեյվան) բարբառների օժանդակ բայերի կազմությունը նման է Ղարապաղի բարբառին, իսկ Ուրմիայինը՝ Սոյի բարբառին: Այդ նմանությունները բացատրվում են նրանով (Կարճեանը և Մեղրին բացառվում են), որ այդ բարբառները միմյանց կողքի լինելով դարերի ընթացքում փոխադարձաբար ներհյուսվել են, և մեզ համար այժմ շատ դժվար է պարզել, թե իսկապես որին է պատկանում սկզբնաձևը: Մի բան պարզ է սա-

կայն, որ Ուրմիայի բարբառի գերբայական ձևը, որ օգտագործվում է միտակերպ խոսնարանում գեպքում (կիրէլի, կընթալի), նման լինելով Մարաղայի բարբառին՝ պատկանում է իրեն և առաջացած է կիրէլիս, կարալիս ձևերից ա-ի կորուստով: Հետևաբար այդ դեպքում Մարաղայի բարբառն է փոխ առել Ուրմիայից, որն ասիմիլացվելով «Ս» ճյուղից՝ ստացել է այդ ձևը նրանից, Սոյի բարբառում հետևողականորեն գործածվում է անորոշ գերբայի ձևն իբրև անկատար գերբայ (չեմ կըրել, չեմ էրալ):

Հայ բարբառների չորրորդ և հինգերորդ ճյուղերի ներկա ժամանակի կազմությունը բոլորովին տարբեր է: Այդ ճյուղերի բարբառներում խոսնարանները գերբայական չէ, այլ գրաբարին նման, միայն առաջից դրվում է «կը» կամ «կա» մասնիկը—կըզրեմ, կըտեսնեմ, կըխօսեմ, խօսեմ գա, կասեմ և այլն: Այդ «կը» և «կա» մասնիկները բարբառներում երևան են գայիս զանազան ձևերով՝ կը, կնի, գու, գա, գի, գո, գու, գնի, բը:

Օրինակներ

սիրէմ կը (Կարնո բարբ.)	գուս սիրիմ (Ջեյթունի բարբ.)
կը սիրիմ (Մշո բարբ.)	գո սիրիմ (Մարաշի բարբառ)
կու կընմ (Վանի բարբ.)	սիրիմ գա (Տարբնախի խոսվածք)
գը սիրիմ (Սարբ.-Երզնկայի բարբ.)	գնի խըրգիմ (Ակնա բարբ.)
սիրիմ գու (Տրապիզ. բարբ.)	բը սիրիմ (Ն. Նախիջևանի բարբ.)
կա սիրեմ (Ամասիայի բարբ.)	գի սիրիմ (Արդիալի բարբ.)
գն սիրիմ (Բեյլանի բարբ.)	գը գտանում (Հաճընի բարբ.)
գու սիրիմ (Մվեդիայի բարբ.)	հաբցնէ գը (Սեբաստիայի բարբ.)
գը սիրեմ (Պոլսի արբ.)	բերիմ գու (Համշենի բարբ.)

«Կ»-ն սովորաբար գրվում է սկզբից, որոշ բարբառներում միայն, օրինակ Կարնո բարբառում, գրվում է բայից հետո. օրինակ՝ գըրեմ կը, խօսեմ կը: Սեբաստիայի բարբառում գը մասնիկը գրվում է բայի թե առաջից և թե հետևից: Այն դեպքում, երբ բայն սկսվում է ձայնավորով, «գը» մասնիկը գրվում է բայից հետո, իսկ բայն սկզբից ստանում է մի «գ» ևս. օրինակ՝ հաբցընէ գը, գերբա գը: Վերջին ձևն ունի նաև Տրապիզոնի բարբառի խոսնարանում: Այդպես է նաև Հաճընի բարբառը, միայն երկու «կը» մասնիկն էլ գնում է սկզբից, օրինակ՝ գը գտնում>կտեսնեմ>տեսնում եմ:

Կարնո բարբառում ևս միայնակ կամ ձայնավորով սկսվող բառերի մոտ «կը» մասնիկը գրվում է երկու կողմից էլ՝ և՛ սկզբից, և՛ վերջից, օրինակ՝ գուբամ կը=գալիս եմ, կէնեմ կը,=անում եմ, կուսամ կը=առալիս եմ, կուզեմ կը=ուզում եմ:

Համշենի բարբառում ձայնավորով սկսվող բայերից առաջ գրվում է «գ», իսկ բաղաձայնով սկսվող բայերից միայն հետո է գրվում «գը», «գու» մասնիկը. օրինակ՝ գուդիմ=ուտում եմ, բերիմ գու=բերում եմ:

Այդ «կը» մասնիկի ծագումը շատ որոշ չէր, իշխում էր այն կարծիքը, թե այդ մասնիկն առաջացել է կա ու բառերից, որ սղվելով տվել է

կու, իսկ վերջինից ստացվել է կը, Բարբառներ կան, որոնք իրենց ներկան կազմում են «կա» բառով: Ուրեմն որոշ չափով դա ճիշտ է:

Կը, գը, կու ձևերի համար ավելի հավանական պետք է համարել այն կարծիքը, թե կը, կու մասնիկն առաջացել է հայերեն գոյ բառից, ուստի կը կարգում նշանակում է «գոյ կարգում», այսինքն անկախ կամ «իմ կարգավը կա»: Երբ ընդհանուր լեզվի ներկայի «կարգում» ձևը բարբառներում առնվել է իբրև ըզձական, այսինքն՝ ցանկալի կամ ստորագասական գործողություն ձև, ներկայի գաղափարն արտահայտելու համար այդ ձևին ավելացվել է «գոյ» բառը «գոյություն», «կա», «հա» իմաստով, որով առաջացել է գոյ—կոյ—կու—կը<sup>1</sup>: Դրա ամենալավ ապացույցն այն է, որ «Հա» ճյուղը (Քեսարի բարբառ) ներկան (ոչ շարունակականը) կազմում է «հա» մասնիկով, որ «հա» բառն է. օրինակ՝ հա կրիմ, հա կրիս, հա կրի—գրում եմ, գրում ես, գրում է, նույն անա բառն է, որ գործածվում է Մալաթիայի բարբառում ներկայի շարունակականը կազմելու համար. օրինակ՝ քրէմ ա, քրէս ա, քրէ ա=գրեմ ահա, գրես ահա, գրէ ահա=գրում եմ, գրում ես, գրում է:

Որոշ բարբառներ «գոյ» բառի փոխարեն գործ են ածել կա—գա, օրինակ՝ գրիմ գա, գրիս գա, որով կազմում են մեր բարբառների «Կա» ճյուղը: «Կը», «Կա» և «Հա» ճյուղերի բարբառների ներկայի բայական ամբողջ խոնարհումը առանց մասնիկի լիակատար չափով գրաբարյան է<sup>2</sup>, որ մեր բոլոր բարբառներում գոյություն ունի, սակայն, ոչ ներկա ժամանակն արտահայտելու համար, այլ ըզձական եղանակի ապառնին, օրինակ՝ գրաբար՝ գրեմ, գրես, գրէ և այլն նշանակում են՝ գրում եմ, գրում ես, գրում է. մինչդեռ աշխարհարարում այդ նույն՝ գրեմ, գրես, գրէ և այլն նշանակում են՝ ցանկանում եմ գրել, ցանկանում ես գրել, ցանկանում է գրել: Այդ ձևը իր իմաստով մոտենում է գրաբարի ստորագասական եղանակին, որովհետև որևէ ենթադրական կամ պայմանական բառ ավելացնելով վրան՝ տալիս է պայմանականի կամ ստորագասականի և կամ նույնիսկ հրամայականի իմաստ, օրինակ՝ երե գրեմ, բե գրեմ, բե որ գրեմ, կգրեմ, պետք է գրեմ, բո՛ղ գրեմ և այլն:

Կը մասնիկը, այդ ըզձական ձևերի վրա ավելանալով, բարբառներում առաջացնում է պայմանական կամ ենթադրական եղանակի ձևեր, օրինակ՝

- Յէս կըզրէմ, թէ դու ցանգանաս (Երևան),
- Յես կըկ'իրեմ, անք առ անք (Սարգիսյի),
- Յիս կու գըրիմ, թէ վուր ուզիս (Թբիլիսի),
- Յես կըկ'իրեմ, ան վուեր անքես (Մաբաղա),

<sup>1</sup> Տես «Հայ բարբառների գասակարգումը» գլուխը:  
<sup>2</sup> Մի հետաքրքրական բայց անբացատրելի փաստ է նշում Հ. Աճառյանը (Հայոց լեզվի պատմություն, հատ. II, էջ 357), Ամասիայի բարբառը ներկան կազմում է «կա» մասնիկով, բայց կրթորդ գեղքում «կա» մասնիկն բնկնում է, և «ե» խոնարհման բայերը վերջավորվում են «եմ», իսկ «ա» խոնարհման բայերը «ամ»:  
 ն ս ս ի մ կ ա, ն ս ս ի ս կ ա, ն ս ս ե վ,  
 կ ա թ թ մ մ կ ա, կ ա թ թ ս ս կ ա, կ ա թ թ մ վ:

Վըէր օղբւմ ըս, յէս կըկ'իրեմ (Ղարաբաղ) և այլն:

Այդ նույն իմաստն է ստանում նաև «Կը» ճյուղի բոլոր բարբառներում, օրինակ՝

Կըկ'իրեմ > կըզրեմ (Վան):

Բայց միաժամանակ այս պայմանականի ձևը «Կը» ճյուղի բարբառներում գիտակցվում է իբրև ներկայի ձև, ուրեմն՝ կըզրեմ, կը կարգում ձևերը «Կը» ճյուղի շատ բարբառներում նշանակում են և ներկա (գրում եմ) և պայմանական ապառնի (կըզրեմ):

Վանի բարբառում այդ ձևը միաժամանակ նշանակում է և՛ ներկա, և՛ սահմանական ապառնի, և՛ պայմանական ապառնի:

Յես կըկ'իրեմ—նշանակում է՝ ես գրում եմ, ես գրելու եմ, ես կգրեմ, օրինակ՝

- գ՛օ նըսաեր եմ, կըկ'իրեմ—ահա նստած գրում եմ:
- Վձոց իմ լաճուն նամայ կըկ'իրեմ—վաղը որդուս նամակ կգրեմ:
- Թե վուեր կուզես կըկ'իրեմ—եթե ուզես կգրեմ:

Հայերեն բոլոր բարբառների մեջ առայժմ հայտնաբերվել է մեկ բարբառ, որ իր ներկան կազմում է գրաբարի նման. դա խոտրուրի բարբառն է, օրինակ՝ տանիմ=տանում եմ, տանիս=տանում է, տանիս=տանում է, տանինք=տանում ենք, տանիք=տանում են, տանին=տանում են: Չայնավորով սկսվող և միավանկ բայերն ստանում են «կը» մասնիկը, որ նշան է, թե բարբառը ենթարկվել է «Կը» ճյուղի ազդեցություն: Մշտ բարբառի մեջ էլ երբեմն պատահում է գրաբարյան ձևերի գործածություն, առանց որևէ մասնիկի. օրինակ՝ «Ուտեն, խմեն, քէյֆ էրէցին ուրանց»<sup>3</sup>:

Այսպիսով մենք տեսանք, որ հայերենի բարբառները ձևաբանական սկզբունքով գասակարգելը ճշտիվ կերպով արտահայտում է բարբառախմբերի հիմնական տարբերությունները և առանձնահատկությունները: Ըստ այդ գասակարգման արևմտյան, հարավային և կենտրոնական Հայաստանի (պատմական Հայաստանի) բարբառները կազմում են հայ բարբառների մասնիկավոր խումբը և պատկանում են Կը, Կա և Հա ճյուղերին, կազմում են իրենց ներկա ժամանակը միևնույն եղանակով թվում է, թե այդ երևույթը չի կարող չարժանանալ մի առանձին ուշագրություն, հատկապես երբ նկատի ենք առնում նաև մյուս ճյուղերի գասակարգությունը: Մի քիչ ուշագիր գիտելով, նկատում ենք, որ «Ում» ճյուղի բարբառները պատմականորեն գասակարգված են Հայաստանի հյուսիսային նահանգներում, որ բռնում է Արարատյան դաշտը, նրա արևելքը մինչև Զուղա, նրա հյուսիսը մինչև Թբիլիսի, հյուսիս-արևելքը մինչև Արցախ և Շամախի:

Բացառություն կազմում են միայն Արթվիկի բարբառը և Լենինականի, Ախալքալախի ու Ախալցխայի խոսվածքները: Վե՛հ առարկա չէ բուրբուրին, որ Ախալքալախին և Ախալցխայի անջամ բնակված են 19-րդ դարում գաղթած Կարսի շրջանի բնակիչներով: Այսպես պետք է ընդունել նաև Կարսի և Լենինականի բնակչությունը: Մի քիչ դժվար է լուծել Արթվիկի բարբառի գոյությունը «Ում» ճյուղի բարբառների միջավայրում,

<sup>3</sup> Հ. Աճառյան, հայ բարբառագիտություն, էջ 131:

բայց նկատի ունենալով նրա նմանութիւնը թրխիսի բարբառին և միա-  
ժամանակ նրա ճյուղակիցների աշխարհագրական դիրքը, որ է Ղարապար  
(Փայտակարան) և Սյունիքի հարավն ու հարավ-արևելքը (Արևիք, Գող-  
թան), իրավունք կա ենթադրելու, որ այդ բարբառը հարյուրավոր տարի-  
ներ առաջ գաղթել է Արևելքից, հենց այդ հիշված աշխարհագրական մի-  
ջավայրից:

«Լ» ճյուղի բարբառները գտնվում են Մակվի շրջանից արևելք և  
Ատրապատականի արևմուտքում, հավանական է այն երկրում, որ երբեմն  
կոչվել է Մաննա (բեկոագիր արձանագրութիւնների մեջ): Այս բարբառի  
միջավայրը մաննացիների և արևմտյան մարերի միջավայրն է: Մենք  
կարծում ենք, որ գրանց մոտ գտնվող Մարանդ տեղանունը կազմված է  
Մար և անդ՝ «Մարի տեղ», «Մարի վայր» նշանակող բառերից:

«Ս» ճյուղի բարբառները գտնվում են Մարաստանի հյուսիսում,  
Սյունյաց և Արցախի հարավում և արևելքում, Մեղրիի շրջանում և Գող-  
թանում: Մենք Գողթանն էլ մտցնում ենք այդ միջավայրի մեջ, որովհե-  
տե Ազուլիսի բարբառը կիսով չափ պատկանում է «Ս» ճյուղին: Այսպես՝  
տեքստերից հայտնի է դառնում, որ Ազուլիսի բարբառի ենթաբարբառ  
համարվող Յղնա և Ռամիս գյուղերի խոսվածքները պատկանում են «Ս»  
ճյուղին (օրինակ՝ փրխնալիս ա, տըսնալիս ա, ըստըկէլիս ա և այլն—Ռա-  
միս, փրխնաս ա, տըսնաս ա, ստըկէս ա և այլն—Յղնա): Ազուլիսի բար-  
բառի «Ա» խոնարհման բայերը պատկանում են «Ս» ճյուղին: Եվ վերջա-  
պես Ազուլիսի բարբառի բաղադրյալ անցյալ ժամանակների կազմութիւնը  
միանգամայն զուգահեռվում է «Ս» ճյուղի բարբառներին: Կարելի է կար-  
ծել, որ Ազուլիսի բարբառը երբեմնի պատկանել է «Ս» ճյուղին և «Ում»  
ճյուղի ազդեցութեամբ զգալի չափով վերափոխվել է «Ում» ճյուղի Աշ-  
խարհագրորեն էլ նա դասավորված է այնպես, որ գտնվում է «Ում» և «Ս»  
ճյուղերի սահմանի վրա: Այս ամբողջ շրջանը բռնված է եղել մարական և  
սակական ցեղերով, որոնց և հայերի խառնուրդից կազմված է այդտեղի  
հայ բնակչութիւնը, որը և յուրացրել է հայերենը, կորցնելով իր մայրե-  
նի լեզուն: Հենց «զոկ» բառը նույն «սակ» բառն է, միայն Ազուլիսի  
բարբառի արտասանութեամբ: Այսպես, Ազուլիսի բարբառում «սա» բառը  
արտասանվում է «սօ», բայց անձ նշանակելիս արտասանվում է «զօ», օրի-  
նակ՝

«Իս ալ ամհամ օր գօն բըձրաննամ ըս, ինքս ամ մաջիս անամ, թօ  
զօ չիա չի դաննի, կ'աննամ հօյր» (ես էլ տեսա, որ դու բարձրանում ես,  
ինքս իմ մեջ սասցի, թե սա ես չի դառնա, հօյր կերա):

Հետևաբար «սակ» բառն էլ կարող էր արտասանվել «զօկ», ուրեմն  
իրենք ազուլեցիք պանել են իրենց ցեղական անունը այդ «զօկ» բառով:  
Կարծում ենք, որ բացի «մար» և «սակ» ցեղերի խառնուրդից, այդտեղ,  
այդ բնակչութիւնն մեջ կան նաև տեղացի ուրիշ տոհմերի խառնուրդ,  
որոնց անունները մեզ հասած չեն, օրինակ, մենք չգիտենք, թե ինչ է  
նշանակում «Մեղրի», «Փառակա» և նման անունները, որոնք կարող են  
լինել ցեղերի անուններ:

«Ս» ճյուղի մի ներկայացուցիչ էլ գտնվում է Ուրմիայի լճի արև-

մըտյան ափերին, դա Ուրմիայի բարբառն է: Այդ մեզ իրավունք է տալիս  
ասելու, թե այդ «Ս» ճյուղը բռնած է եղել երբեմնի ամբողջ Ատրպա-  
տականը մինչև Վասպուրականի սահմանները: Ուրմիայի բարբառը բռնում  
է «Լ» ճյուղի, Վանի բարբառի («Կը» ճյուղի) և «Ս» ճյուղի հարավ-արև-  
մտյան սահմանները. դրանով էլ պետք է բացատրել «Ս» ճյուղի բարբառ-  
ներից մեկի առկայութիւնը այդ վայրում: Այսպիսով, կարելի է անել են-  
թադրութիւն, թե «Կը» ճյուղն իր առանձնահատկութիւններով պարտական  
է հայ և օտար ցեղերի մի խմբավորման, որի մեջ ընդգրկվել են նաև  
բիսյանցիք արևելքում և արմենները Արևմուտքում (արմենա-բիսյանական  
խումբ): վերջիններս լեզվի հաղթանակի հետևանքով առաջացել է տեղացի-  
ների լեզվի միաձուլումը հայերենին և «Կը», «Կա» և «Հա» ճյուղերի բար-  
բառների առաջացումը: «Ում» ճյուղն առաջացել է հայ և նախահայկական  
ցեղերի միաձուլումից և հատկապես հյուսիսային-ալաբուղյան ցեղախմբերի  
միութեան լեզվի մահացման և այդ ցեղերի կողմից հայերենի յուրացման  
հետևանքով: «Ս» ճյուղի բարբառները առաջացել են Ատրպատականի հյու-  
սիսի, Սյունիքի հարավ-արևելքի և Գողթանի բնակչութիւնն լեզուների մա-  
հացման և հայերենը յուրացնելու հետևանքով, իսկ «Լ» ճյուղի բարբառներն  
առաջացել են մաննա-մարական ցեղախմբերի միութեան լեզուների մա-  
հացման և հայերենը այդ ցեղերի միութեան կողմից յուրացնելու հետևան-  
քով:

**ԱՆՅՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ**

Համարյա բոլոր բարբառներում անցյալի անկատար ժամանակը կազմ-  
վում է միևնույն եղանակով, ինչպես որ ներկան, կամ էլ ներկայի ձևերից,  
սակայն տարբեր բաղադրութեամբ:

«Ում» ճյուղի բարբառների անցյալի անկատարը, բացի Ազուլիսի  
բարբառից, կազմվում է միևնույն անկատար դերբայով և օժանդակ բայի  
անցյալի ձևերով: Այդ անցյալի ձևերը տարբեր են: Այսպես, օրինակ, թրխ-  
իսի բարբառում գրաբար լեզվի օժանդակ բայերի ձևերը պահպանվում  
են լրիվ կերպով. գրում էի, գրում էիր, գրում էր և այլն: Թրխիսի բարբառի  
այդ ձևերը միանգամայն նման են արդի գրական լեզվին:

Արարատյան բարբառը օժանդակ բայի անցյալում կորցնում է արմա-  
տը, բացի երրորդ դեմքից, որից ստացվում է՝ ի, իր, էր, ինք, իք, ին  
(գ'ըրբմ ի, գ'ըրբմ իր, գ'ըրբմ էր, գ'ըրբմ ինք, գ'ըրբմ իք, գ'ըրբմ ին):

Նույն բանը կատարվում է Ղարաբաղի բարբառում երրորդ դեմքի  
տարբերութեամբ, որտեղ լինում է «ար» (էր), օրինակ՝ կիրբմ ար, խօսբմ  
ար և այլն:

Ատրախանի բարբառում օժանդակ բայի «ե» արմատի փոխարեն  
գործածվում է «ի», բացի եզակի երրորդ դեմքից, օրինակ, կրբում իիմ,  
իիք, էր, իիք, իիք, իիք:

Թե այս բարբառում և թե Երևանի բարբառի մի շարք խոսվածքնե-  
րում, ինչպես և Թավրիզ-Մոզղոկի բարբառում, գործ է ածվում ներկայի  
առաջին դեմքում «մ» վերջավորութիւնը օժանդակ բայի համար, օրինակ՝  
չայ բարբառագիտութիւն—12

գրքում իմ կամ կրքում իմ: Այդ «մ»-ն հայերենի առաջին դեմքի սովորական վերջավորութունն է:

Առաջին դեմքում վերջավորության մեջ «մ» գործածելը հատուկ է նաև «Ս» ճյուղից Ուրմիայի բարբառին, «Լ» ճյուղից Պոյի և Մարաղայի բարբառներին:

«Կը» ճյուղի բարբառներում անցյալի անկատարը կազմվում է ներկայի նման «կը» մասնիկով, միայն բայի վերջավորութունները լինում են էյի, էյիբ, էբ, էյիմբ էյիբ, էյիմ, օրինակ՝ գբ գրէյի, գբ գրէյիբ, գբգրէյի, գբ գրէյիմբ, գբգրէյիբ, գբգրէյիմ:

Մշո բարբառում անցյալի անկատար եղակի առաջին դեմքը գործ է ածում հոգնակի առաջին դեմքի ձևը. օրինակ՝

Յես կրգիմբ > ես կգայի՝  
Մեմբ կրգիմբ > մենք կգայինք:

Արտիայի բարբառում անցյալի անկատարի եղակի երկրորդ դեմքում սովորական «բ» վերջավորության փոխարեն լինում է «ս» ներկայի նման, օրինակ՝ էի, էիս, էբ... հազայի, հազայիս, հազար...<sup>1</sup>:

Անցյալի անկատարի կազմութունը մի շարք բարբառներում հիմնովին տարբեր է: Տեսանք, որ անցյալի անկատար ժամանակը կազմվում է դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով (գրում էի, գրում էիր, գրում էր, գրում էինք, գրում էիր, գրում էիր, գրում էին — Թբիխիի բարբառ): Մի շարք բարբառներ օժանդակ բայի անցյալի արմատը կորցնում են և պահպանում միայն դեմքի վերջավորութունները, որոնց մեջ գիտակցվում է օժանդակ բայի և դեմքի նշանակությունը. օրինակ՝ կիրքմ ի, կիրքմ իր, կիրքմ ար, կիրքմ իմք, կիրքմ իք, կիրքմ ին:

Էական բայի արմատը պահպանվում է միայն երրորդ դեմքում (ար, էր): Լոռու և Ալավերդու մի շարք գյուղերում անցյալի անկատարը կազմվում է գրաբարի նման. օրինակ՝ գնէյին, գէյին թարս թարս խօսէյին = գնում գալիս էին, թարս թարս խոսում էին:

Որոշ բարբառներ օժանդակ բայի անցյալի անկատարի ձևերը չունեն. Հևտաբրքրականն այն է, որ այդ բարբառները բղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակի վերջավորութուններ էլ չունեն, և այդ ժամանակը կազմում են անալիտիկ սիստեմով, այսինքն բղձական ապառնի ձևով և անցյալ ժամանակ արտահայտող բառ-մասնիկով. Այդ մի ուժեղ ապացույց է այն բանի, որ հայերեն գիմալոր բայերի վերջավորութունները օժանդակ բայի ձևերն են:

Անցյալ անկատարի օժանդակ բայի ձևերը չունեն Ղարաղաղի, Ագուլիսի, Դգմարի, Կարճևանի, Մեղրու, Քեյվանի, Ուրմիայի, Պոյի և Մարաղայի բարբառները. Հաղրութի բարբառը գործ է ածում երկու ձև՝ և՛ օժանդակ բայի անցյալի ձևերը, և՛ առանց այդ ձևերի:

Ագուլիսի բարբառը, ինչպես և մյուս բոլոր բարբառները անցյալի անկատար կազմելու համար վերցնում են անփոփոխ կերպով ներկայի ձևերը և դրանց վրա ավելացնում են որևէ բառ-մասնիկ, որի հիմնական

1 Հ. Աճառյան, Բնություն Արտիայի բարբառի, էջ 160—161, Երևան, 1953 թ.,

ֆունկցիան է ցույց տալ միայն անցյալի գաղափարը: Մենք գիտենք, որ գրական լեզվի մեջ և մյուս բարբառներում օժանդակ բայի անցյալի ձևերը ցույց են տալիս և անցյալ ժամանակի գաղափար, և միաժամանակ նաև դեմք, իսկ մեր հիշած բարբառներում անցյալ անկատար ժամանակի բայական դեմքը ցույց է արվում օժանդակ բայի ներկայի ձևերով, ուստի և ավելացող բառ-մասնիկին փնում է միայն ցույց տալու անցյալի գաղափարը:

Ագուլիսի բարբառն անցյալ ժամանակ կազմելու համար ներկայի և ավելացնում է «նէլ» բառ-մասնիկը, որ «լինել» բառի հապավված ձևն է: Պոնարնումը կազմում է հետևյալ ձևով.

սըրըմ ըմ նէլ—սրում էի  
սըրըմ ըս նէլ—սրում էիր  
սըրըմ ա նէլ—սրում էր  
սըրըմ ըք նէլ—սրում էինք  
սըրըմ ըք նէլ—սրում էիք  
սըրըմ ըն նէլ—սրում էին

Կարճևանի բարբառը նույն անցյալի անկատար ժամանակը կազմում է նույնպես՝ ներկայի և ավելացնելով «լէ» բառ-մասնիկը, որ, հրեի, նույնպես «լինէլ» բայի հապավված ձևն է, որով ստացվում է.

գիրիյ յիմ լէ—գրում էի  
գիրիյ յիս լէ—գրում էիր  
գիրիյս օ լէ—գրում էր  
գիրիյ յիք՝ լէ—գրում էինք  
գիրիյ յիք՝ լէ—գրում էիք  
գիրիյ յին լէ—գրում էին

Մեղրու բարբառը այդ նույն ժամանակը կազմում է նույնպես ներկայի և ավելացնելով «լիմ» բառ-մասնիկը, որ երեի «լիմ» > լիալ > լինէլ բայի հապավված ձևն է, որով ստացվում է

գիլիս իմ լիմ—գրում էի  
գիլիս իս լիմ—գրում էիր  
գիլիս ի լիմ—գրում էր  
գիլիս իք՝ լիմ—գրում էինք  
գիլիս իք՝ լիմ—գրում էիք  
գիլիս ին լիմ—գրում էին

Շաղախ-Քեյվանի, Ղարաղաղի և Դգմարի բարբառները վարվում են բոլորովին նախորդ բարբառների նման, միայն ավելացնում են «լիմ» լրիվ ձևը, որով ստացվում է՝

Ղարաղաղ                      Դգմար                      Քեյվան—Շաղախ  
գիլիլիս ըմ լիմ    գիլիլիս ըմ լիմ    կըլիլիս ըմ լիմ—գրում էի  
գիլիլիս ըս լիմ    գիլիլիս ըս լիմ    կըլիլիս իս լիմ—գրում էիր

Գ՛րբիլիս ան լան Գ՛րբիլիս ան լան կ՛ըրբիս ան լան—գրում էր  
 Գ՛րբիլիս ընք լան Գ՛րբիլիս ըք լան կ՛ըրբիս ըք լան—գրում էինք  
 Գ՛րբիլիս էք՛ լան Գ՛րբիլիս ըք լան կ՛ըրբիս էք՛ լան—գրում էիք  
 Գ՛րբիլիս ըն լան Գ՛րբիլիս ըն լան կ՛ըրբիս ըն լան—գրում էին

Քեյվանի, Ղարազաղի և Դղմարի բարբառների «լան», «լէ» ձևերը առաջացել են այդ «լան» լրիվ ձևից, որը նույնպես առաջացել է «լեալ» կամ «լինել» ձևերից:

Հազրութի բարբառը անցյալի անկատարը կազմում է Քեյվան-Շաղախի բարբառի նման, միայն «լան» ձևը ավելացնում է իր ներկայի վրա. միաժամանակ նաև Հազրութի բարբառի անցյալի անկատարը կազմում է կամ «նիս» բառ-մասնիկով, կամ Ղարազաղի բարբառի նման.

կ՛ըրբէս ըմ նիս կամ՝ կ՛ըրբէս ըմ լան կամ՝ կ՛իրբիս ի—գրում էի  
 կ՛ըրբէս ըս նիս կամ՝ կ՛ըրբէս ըս լան կամ՝ կ՛իրբիս իր—գրում էիր  
 կ՛ըրբէս ան նիս կամ՝ կ՛ըրբէս ան լան կամ՝ կ՛ըրբիս ար—գրում էր  
 կ՛ըրբէս ընք նիս կամ՝ կ՛ըրբէս ընք լան կամ՝ կ՛իրբիս ինք—գրում էինք  
 կ՛ըրբէս ըք նիս կամ՝ կ՛ըրբէս ըք լան կամ՝ կ՛իրբիս ին—գրում էիք  
 կ՛ըրբէս ըն նիս կամ՝ կ՛ըրբէս ըն լան կամ՝ կ՛իրբիս ին—գրում էին

Ուրմիայի (նույնպես և Պոյի ու Մարաղայի) բարբառները, պահպանելով ընդհանուր սիստեմը, անցյալի անկատարը կազմելու համար ավելացնում են մի բոլորովին տարբեր մասնիկ, որ է «էր»:

Մեր կարծիքով այդ «էր» մասնիկը օժանդակ բայի երրորդ դեմքի «էր» ձևն է, որը դիմակազրկվելով ցույց է տալիս միայն անցյալի գաղափար

- կ՛իրբէս եմ էր—գրում էի
- » ես էր—գրում էիր
- » էր —գրում էր
- » ենք՛ էր—գրում էինք
- » էք՛ էր—գրում էիք
- » են էր—գրում էին

Երրորդ դեմքում ներկայի օժանդակ բայը գուրս է ընկնում, որովհետև «էր» մասնիկ բառը այստեղ վերականգնում է երրորդ դեմք ցույց տալու իր նշանակությունը:

Հայ բարբառագիտության մեջ նորություն է Սվեդիայի և Քեսարի բարբառների անցյալի բաղադրյալ ձևերի կազմությունը: «Է» ճյուղի «էր» մասնիկը այդ բարբառները ավելացնում են բայահիմքին և ստանում «իր» կամ «էր» վերջավորություն ունեցող դերբայ, ապա գրան ավելացնում օժանդակ բայի ձևերը՝ է(մ), իս, ինք, իք, ին: Երրորդ դեմքն օժանդակ բայ չի ունենում (նման Ուրմիայի, Պոյի և Մարաղայի բարբառներին), այլ լոկ «դերբայական» ձևը «իր» կամ «էր» վերջավորությամբ:

Օժանդակ բայի երկրորդ դեմքի վերջավորությունն է «ս»:

Խոնարհման պատկերը

Քեսարի բարբառ

Սվեդիայի բարբառ

Ներկա	Անցյալի անկատար	Ներկա	Անցյալ անկատար
հայ պանեմ	հա պաներ էմ	գու պանէմ	գու պանէր է
հայ պանես	հա պաներ էս	գու պանէս	գու պանէր իս
հայ պանան	հա պաներ	գու պանա	գու պանիր
հայ պանէնք՛	հա պաներ էնք	գու պանէնք	գու պանէր ինք
հայ պանանք	հա պաներ էք՛	գու պանաք	գու պանէր իք
հայ պանեն	հա պաներ էն	գու պանէն	գու պանէր ին

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ներկայի և անկատարի ձևերն ունեն նաև այսպես կոչված շարունակական ձևեր: Շարունակական ձևը սովորական ձևից տարբերվում է նրանով, որ ցույց է տալիս գործողությունից շարունակական, տևական լինելը, բնթացքի մեջ լինելը: Օրինակ՝ ձախարակը պտտվում է նախադասությունից երևում է, որ նախարակը պտտվելու գործողությունը կատարելու հատկություն ունի, մինչդեռ նախարակն այժմ պտտվում է նախադասությունը ցույց է տալիս, որ ձախարակի գործողությունը բնթացքի մեջ է այժմ, տևական գործողություն է կատարում:

Երկիրը պտտվում է արևի շուրջը—նախադասությամբ արտահայտվում է ոչ այնքան այն միտքը, թե երկիրը պտտվում է, որքան այն միտքը, թե երկիրը արևի շուրջը պտտվելու մշտական հատկություն ունի: Ենթադրվում է մեկին հարց ենք տալիս փողոցում.

—Ի՞նչ ես անում: Նա պատասխանում է.

—Գրում եմ:

Բնական է, որ փողոցում այդ մտքը չի գրում, այլ գրոսնում է, բայց նրա միտքն այն է, որ ասի՝ թե ինքը գրող է և զբաղված է երկեր գրելով, Իսկ եթե նա նստած գրում է, ապա նրա գործողությունն բնթացքի մեջ է արդեն: Ահա այդ վերջին գործողությունն արտահայտող ձևը կոչվում է «շարունակական»:

Շարունակական ձևերով հարուստ է անգլերեն լեզուն.

օր. I am having, I was having, I have been having, I had been having, I shall be having, I should be having, I shall have been having, I should have been having.

Հայերենի բարբառներից շարունակական ձևեր ունեն Տիգրանակերտի, Տրապիզոնի, Արարիկի, Սեբաստիայի, Եվգոսիայի, Նիկոմիդիայի, Պոլսի Թոգոսթոսի, Մալաթիայի, Ղարաբաղի, Համշենի և Հավարիքի բարբառները:

Ղարաբաղի բարբառը շարունակական ձևը կազմում է մի առանձին դերբայով, որ վերջավորվում է անվով՝ օրինակ՝ կիրբէլանվ կիրբէլանվ. Հսա երևութին այդ ձևը կազմված է անորոշ դերբայի գործիական հոլովից, որովհետև Ղարաբաղի բարբառի գործիական հոլովն ունի ավ վերջավորություն: Դերբայի հոլովումն ունի հետևյալ պատկերը.

Ուղ.	կ'իբիլ	Բաց.	կ'իբէլան <sup>1</sup>
Սեռ.	կ'րէլու (ն)	Գործ.	կ'իբէլավ
Տը.	կ'իբէլու (ն)	Ներգ.	կ'իբէլու
Հայց.	կ'իբիլ		

Այս հոլովված ձևերից վերջված է գործիականի ձևը և առնված իբրև մի առանձին գերբայ, որով և կազմվում են շարունակական ժամանակները այնպես, ինչպես ներգոյական հոլովի կազմութամբ առնված է անկատար գերբայը, և կազմվում է ներկայի սովորական ձևերը (կ'իբըմ, կ'արթըմ):

Ղարաբաղի բարբառի ներկա շարունակականը կազմվում է օժանդակ բայի ներկայի ձևերով, իսկ անցյալը՝ օժանդակ բայի անցյալի ձևերով: Ընդհանուր պատկերը կլինի հետևյալը:

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի անկատար
կ'իբէլու ևմ	կ'իբէլու ի
» ըս	» իբ
» ա	» ար
» ընք	» ինք
» ըք	» իք
» ըն	» ին

Այս գերբայով շարունակական ձև են կազմում Մշո և Երևանի բարբառի խոսվածքները: օրինակ՝ գրելով եմ=գրելու վրա եմ:

Ղարաբաղի բարբառի նման, բայց բոլոր գերբայներով կազմում է շարունակական ձևերը նաև Հաղբութի բարբառը, սակայն այն տարբերությամբ, որ Հաղբութի բարբառում շարունակական անցյալը կազմվում է լու անփոփոխ բառ-մասնիկով: Հաղբութի բարբառը շարունակական կազմում է նաև «նիս» մասնիկ բառով: Ինքում ենք շարունակականի ընդհանուր պատկերը Հաղբութի բարբառում:

Շարունակական ներկա

խըմէս	ըմ	նիս	խըմէլու	ըմ
»	ըս	»	»	ըս
»	ա	»	»	ա
»	ընք	»	»	ընք
»	ըք	»	»	ըք
»	ըն	»	»	ըն

<sup>1</sup> Մի շարք բարբառներում (կարին և այլն) անորոշ գերբայի բացառական հոլովը գործածվում է գործիականի իմաստով, օրինակ՝ գլգլալէն > գլգլալով: լալէն > լալով և այլն:

Անցյալի անկատար

խըմէս ի	նիս	խըմէս ի	լու	խըմէլու ի	նիս	խըմէլու ի	լու
» իբ	»	» իբ	»	» իբ	»	» իբ	»
» ար	»	» ար	»	» ար	»	» ար	»
» ինք	»	» ինք	»	» ինք	»	» ինք	»
» իք	»	» իք	»	» իք	»	» իք	»
» ին	»	» ին	»	» ին	»	» ին	»

Ապառնի շարունակական

Ապառնի	Անցյալի ապառնի				
խըմըլական ըմ	նիս	խըմըլական ի	նիս	խըմըլական ի	լու
» ըս	»	» իբ	»	» իբ	»
» ա	»	» ար	»	» ար	»
» ընք	»	» ինք	»	» ինք	»
» ըք	»	» իք	»	» իք	»
» ըն	»	» ին	»	» ին	»

Վաղակատար շարունակական

Վաղակատար	Անցյալի վաղակատար				
խըմալ ըմ	նիս	խըմալ ի	նիս	խըմալ ի	լու
» ըս	»	» իբ	»	» իբ	»
» ա	»	» ար	»	» ար	»
» ընք	»	» ինք	»	» ինք	»
» ըք	»	» իք	»	» իք	»
» ըն	»	» ին	»	» ին	»

Հարակատար շարունակական

Հարակատար	Անցյալի հարակատար				
խըմած ըմ	նիս	խըմած ի	նիս	խըմած ի	լու
» ըս	»	» իբ	»	» իբ	»
» ա	»	» ար	»	» ար	»
» ընք	»	» ինք	»	» ինք	»
» ըք	»	» իք	»	» իք	»
» ըն	»	» ին	»	» ին	»

Արեշի (Հավարիքի) բարբառում շարունակականը կազմվում է «ալօ (ալօ)» և «օլօ» վերջավորութուն ունեցող գերբայով:

Ներկա

գընալօ յըմ	գ'իբօլօ յըմ	խիւգանլօ յըմ
» յըս	» յըս	» յըս
» յի	» յի	» յի
» յանք	» յանք	» յանք

գընալօ յաք	գ'իբօլօ յաք	խընդօլօ յաք
» յան	» յան	» յան

Գընալօ, խընդալօ, գ'իբօլօ, ջննօլօ և նման ձևերը անորոշ գերբայի գործիական հոլովածներն են, որովհետև Արեշ-Հավարիքի բարբառում գործիականն ունի «օ» կամ «օ» վերջավորութունը, որ ստացվել է գրաբարի «աւ» գործիական ձևից: Արաբադի բարբառում «աւ» երկբարբառը վերածվել է «ավ» կապակցութեան, ինչպես տեղի է ունեցել ժամանակակից հարերենի մեջ բառավերջում և կամ ձայնավորից առաջ: Մինչդեռ հայտնի է, որ փակ վանկում «աւ» երկբարբառը վերածվել է պարզ «օ» ձայնավորի: Արեշի-Հավարիքի բարբառում այդ տեղի է ունեցել նաև բառավերջում:

Շարունակական անցյալի անկատար

գընալօ էյի	գ'իբօլօ էյի	խընդօլօ էյի
» էյիբ	» էյիբ	» էյիբ
» էր	» էր	» էր
» էինք	» էինք	» էինք
» էիք	» էիք	» էիք
» էին	» էին	» էին

Ձայնավորների փակակցումը բացատրվում է Արեշ-Հավարիքի բարբառի մեջ գործող ներդաշնակութեան օրենքով:

«Կը» ճյուղի բարբառների շարունակական ձևերը Արաբադի նման հատուկ գերբայով չեն կազմվում, այլ մի առաձին մասնիկ ավելացնելով ներկայի խոնարհման ձևերի վրա՝ բաղադրում են շարունակական ձևերը: Շապին-Փարահիսարի բարբառը շարունակականը կազմում է «դար», «դէ» մասնիկներով, սակայն այդ մասնիկները դնում է բայից հետո, որի հետևանքով «գը» մասնիկը սկզբից պահպանվում է. օրինակ՝

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի ապառնի
գըսիմ դար	գըսէյի դար
գըսէս դար	գըսէյիբ դար
գըսէ դար	գըսէր դար
և այլն:	և այլն:

Տրապիզոնի բարբառը շարունակականը կազմում է բոլորովին տարբեր ձևով: Ներկայի համար օգտագործում է «էր» մասնիկ-բառը, իսկ անցյալ անկատարի համար «ունի» բառը: «էր» մասնիկը երևի «ել» էական բայի երրորդ դեմքի ձևն է, իսկ «ունի» բառը սովորական հայերեն ունենալ բառն է:

Շարունակական ներկան կազմելու համար Տրապիզոնի բարբառը սկզբի «գը» մասնիկը դուրս է գցում (գը գըրիմ, շարունակական՝ գըրիմ էր), երբ բայը սկսվում է բաղաձայնով, իսկ երբ բայն սկսվում է ձայնավորով, ապա «գը» մասնիկը պահպանվում է, օրինակ՝

Շարունակական ներկա			Շարունակական անցյալի անկատար		
գառնիմ	էր	սիրիմ	էր	գէրթայի	ունի բէրէի ունի
գառնիս	էր	սիրիս	էր	գէրթայիբ	ունի բէրէիբ ունի
գառնէ	էր	սիրէ	էր	գէրթար	ունի բէրէր ունի
գառնինք	էր	սիրինք	էր	գէրթայինք	ունի բէրէինք ունի
գառնիք	էր	սիրիք	էր	գէրթայիք	ունի բէրէիք ունի
գառնին	էր	սիրին	էր	գէրթային	ունի բէրէին ունի

Արաբադի բարբառը իր շարունակական ձևերը կազմում է «գօր» մասնիկով, որ դրվում է բայից հետո և ներկայի կամ անցյալի անկատարի ձևերի վրա: Սովորական ներկայի «գը» մասնիկը դուրս է բնկնում այն ժամանակ, երբ բայն սկսվում է բաղաձայնով, իսկ երբ բայն սկսվում է ձայնավորով, այդ դեպքում սկզբից «գը» մասնիկը պահպանվում է. օրինակ՝

Շարունակական ներկան	Շարունակական անցյալի անկատար
քընանամ	գօր գառնիմ գօր
քընանաս	գօր գառնիս գօր
քընանա	գօր և այլն:
քընանանք	գօր և այլն:
քընանաք	գօր
քընանան	գօր

Այդպես են նաև եվգոկիայի և Օրաուի բարբառները:

Նիկոմիդիայի բարբառը ավելացնում է մի բոլորովին ուրիշ վերջավորութուն՝ «հայէ», որ, մեր կարծիքով, կազմվել է «հա է» բառերի կապակցութունից, որ նշանակում է ահա է=կա (ծագել է «ահա» բառից): Այսպիսի դեպքում սովորական ներկայի «գը» մասնիկը ամենուրեք պահպանվում է, օրինակ՝

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի անկատար
գը քըրիմ	հայէ
գը քըրիս	հայէ
գը քըրէ	հայէ
գը քըրինք	հայէ
գը քըրիք	հայէ
գը քըրին	հայէ
գը քըրէյի	հայէ
գը քըրէյիբ	հայէ
գը քըրէր	հայէ
գը քըրէինք	հայէ
գը քըրէիք	հայէ
գը քըրէին	հայէ

Պոլսի, Օրաուի և եվգոկիայի բարբառները նույն նիկոմիդիայի նման, չփոխելով ներկայի և կամ անցյալի անկատարի կազմութեան ձևը, ուղղակի ավելացնում են «գօր» մասնիկ-բառը, որից ստացվում է հետևյալ պատկերը:

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի անկատար
գը գըրէմ	գօր
գը գըրէս	գօր
գը գըրէ	գօր
գը գըրէինք	գօր
գը գըրէիք	գօր
գը գըրէին	գօր

ԿՐ ԿՐԵՆՔ	ԿՕՐ	ԿՐ ԿՐԵՅԻՆՔ	ԿՕՐ
ԿՐ ԿՐԵՔ	ԿՕՐ	ԿՐ ԿՐԵՅԻՔ	ԿՕՐ
ԿՐ ԿՐԵՆ	ԿՕՐ	ԿՐ ԿՐԵՅԻՆ	ԿՕՐ

Ռոգոսթոյի բարբառը, լինելով բոլորովին նման Պոլսի բարբառին, ավելացնում է «գօ», «օր», «գօր մասնիկները, որից ստացվում է հետևյալ պատկերը.

Շարունակական ներկա		Շարունակական անցյալի անկատար	
ԿՐ ՔՐԵՐԻՄ	ԿՕ, ԿՕՐ, ՕՐ	ԿՐ ՔՐԵՐԵՅԻ	ԿՕ, ԿՕՐ, ՕՐ
ԿՐ ՔՐԵՐԷՍ	» » »	ԿՐ ՔՐԵՐԵՅԻՐ	— » —
ԿՐ ՔՐԵՐԷ	» » »	ԿՐ ՔՐԵՐԷՐ	— » —
ԿՐ ՔՐԵՐԻՆՔ	» » »	ԿՐ ՔՐԵՐԵՅԻՆՔ	— » —
ԿՐ ՔՐԵՐԷՔ	» » »	ԿՐ ՔՐԵՐԵՅԻՔ	— » —
ԿՐ ՔՐԵՐԻՆ	» » »	ԿՐ ՔՐԵՐԵՅԻՆ	— » —

Ռոգոսթոյի շարունակականն ապացույց է, որ գօր մասնիկը առաջացել է «կա որ» («կա որ» > «կա օր» > «գա» > «օր» > «գօր») կապակցութունից, Մալաթիայի բարբառը շարունակականը կազմում է «ա» մասնիկով, որ Բեսարի սովորական ներկայի «հա» մասնիկ-բառի կրճատ ձևն է.

Շարունակական	
Ներկա	անցյալ
քրէմ ա	քրէի ա
քրէս ա	քրէիր ա
քրէ ա	քրէր ա
քրէնք ա	քրէինք ա
քրէք ա	քրէիք ա
քրէն ա	քրէին ա

Ժխտական խոնարհման դեպքում բայի հիմքն ստանում է «էր» անփոփոխ վերջավորութունը և դառնում դերբայ. օժանդակ բայի ժխտական ձևը գրվում է սկզբից, իսկ վերջում ավելանում է «ա» > «հա շարունակական իմաստ ավող մասնիկը.

Ներկա		Անցյալի անկատարի	
իս չէմ քրէր ա	ես չէի քրէր ա		
թուն չէս քրէր ա	թուն չէր քրէր ա		
անիգա չի քրէր ա	անիգա չէր քրէր ա		
և այլն:	և այլն:		

Համշենի բարբառը շարունակականը կազմում է երկու տեսակ, դրանցից մեկը պատկանում է Մալայի խոսվածքին, իսկ մյուսը ձանիկի խոսվածքին. Մալայի խոսվածքը ներկայի և անցյալի անկատար ձևերի վրա ավելացնում է «ունի» ձայնավորով սկսվող բայերի համար և «գունի»

բաղաձայնով սկսվող բայերի համար. Չայնավորով սկսվող բայերն սկզբից ստանում են «գ» մասնիկը, բաղաձայնով սկսվողները չեն ստանում.

Ներկա		Անցյալի անկատար	
գուդիմ ունի բ'էրիմ գունի	գուդէյր ունի բ'էրէյր գունի		
գուդէս ունի բ'էրիս գունի	գուդէյր(ը) ունի բ'էրէյր գունի		
գուդիմ ունի բ'էրէ գունի	գուդէր ունի բ'էրէր գունի		
գուդինք ունի բ'էրինք գունի	գուդայքր ունի բ'էրէայքր գունի		
գուդէք ունի բ'էրէք գունի	գուդէքր ունի բ'էրէքր գունի		
գուդին ունի բ'էրին գունի	գուդէյնր ունի բ'էրէյնր գունի		

Ճանիկի խոսվածքում՝ շարունակականը կազմվում է մի նոր ձևով, որ երկու տեսակ է լինում. առաջին տեսակը կազմվում է անորոշ դերբայով, որին կցվում է «ա» ձայնավորը, ենթական լինում է ուղղական ձևով, երկրորդ տեսակը բայի նույն կառուցվածքով, բայց ենթական գրվում է սեռական շոյովով. առաջին տեսակը գտնվում է հին սերնդի մոտ, իսկ երկրորդ տեսակը՝ երիտասարդների մոտ. անցյալը կազմվում է «էր» բառ-մասնիկով.

Ներկա	
յէս էգուշ ան կամ՝ իմս էգուշ ան —ես գայիս եմ	
տուն էգուշ ան » քուգդ էգուշ ան —գու գայիս ես	
էն էգուշ ան » ընուրր էգուշ ան — և այլն:	
մէք էգուշ ան » միրր էգուշ ան	
տունք էգուշ ան » ծիրր էգուշ ան	
ընէր էգուշ ան » ընէցր էգուշ ան	

Անցյալի անկատար	
յես էգուշ էր կամ՝ իմս էգուշ էր	
տուն էգուշ էր » քուգդ էգուշ էր	
էն էգուշ էր » ընուրր էգուշ էր	
և այլն: և այլն:	

Շարունակական ձև ունեն Սոլեաական Հայաստանի Մարտունու շրջանի խոսվածքները (Մշո բարբառը) և Ադինի շրջանի Մառնադրյուր գյուղի խոսվածքը. ի պատասխան հարցին.

- Թնչ ես անում, — ասվում է.
- խաց ա կուտեմ, ջուր ա խմեմ, ձ'ուկ ա բրնեմ,
- խաց ա կուտես, ջո'ւր ա խմես, ձ'ուկ ա բրնես,
- խաց ա կուտա, ջուր ա խմա, ձո'ւկ ա բրնա.

Այստեղ ևս «ա»-ն «ահա» բառն է, որ կազմում է այդ խոսվածքների շարունակականը:

**Ապառնի ժամանակ**

Մահմանական ապառնի ժամանակի կազմութունը բարբառներում բավական տարբեր է: Մահմանական եղանակի ապառնին գրական լեզվի

<sup>1</sup> Հ. Աճառյան, Քննություն շամշենի բարբառի, Երևան 1947 թ.:



մեջ կազմվում է ապառնի գերբայից, որ անորոշ գերբայի սեռական հոլովածին է:

Անորոշ

գրել, կարգալ

Ապառնի

գրելու, կարգալու

Տարօրինակ կիվա առաջին հայացքից, թե ինչու է անորոշի սեռական հոլովը ապառնի գերբայի վերածվում, այսինքն՝ արտահայտում ապառնիի գաղափար, գործողութունը հետագայում կատարելու գաղափար: Այդ հափազանց հեշտ բացատրելի է: Ներկայի կազմութան ուսումնասիրությունից մենք տեսանք, որ հայերենի բոլոր բարբառները իրենց ներկայի կազմութամբ ասում են բառացի՝ գտնվում են գործողության մեջ, կամ (եմ) գործողության մեջ:

Կա գրեմ = ահա գրեմ = գրելս կա, կամ (եմ) գրելու գործողության մեջ: Գո գրեմ = գրելս գոյ, գում (կամ, եմ) գրելու գործողության մեջ: Հայ գրիմ = ահա գրում եմ = գործողությունս անա կատարվում է:

Գրում եմ բառացի՝ գրի մեջ եմ, կամ (եմ) գրի գործողության մեջ: Կրել եմ = բառացի՝ կամ ի գրել, գրելու գործողության մեջ եմ:

Գրելիս եմ = բառացի՝ գրողների շարքի մեջ եմ, կամ նրանց մեջ, որոնք գրում են:

Այսպիսով, ներկայի կազմութունը բառացի ամբողջ նախադասություն է, որով արտահայտվում է ժամանակի գաղափարը: Այդ ժամանակի գաղափարը արտահայտվում է եմ (լինեմ) բայով, որ էական բայն է, և ապա գերբայի այն հոլովներով (հայցական եզակի, հայցական հոգնակի և ներգոյական), որոնք ցույց են տալիս գործողության սեղը, այն առարկան, որի մեջ կատարվում է գործողությունը, իսկ եթե գործողությունը կատարվում է հենց իրեն՝ գործողության մեջ, ապա այդ կրկնակի գործողությունը արտահայտում է ներկա ժամանակի գաղափարը: Այդ է պատճառը, որ խոնարհումը մեր բարբառների մեծ մասում գերբայական է, որովհետև գերբայն արտահայտում է գործողության ընդհանուր գաղափարը, գերբայի ներգոյական հոլովը գործողությունը դարձնում է նաև սեղ, որի հետևանքով առաջանում է ներկայի ժամանակի գաղափարը, իսկ այդ գաղափարը ավելի ուժեղացնելու, ապա գործողության լինելությունը ցույց տալու համար գործածվում է էական բայի արմատը, իսկ ենթակայի գեմքը ցույց տալու համար օգտագործվում են էական բայի գեմքի վերջավորությունները, որի հետևանքով և էական բայը (եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիք, էր, էինք, էիք, էին) վերածվում է օժանդակ բայի: Երբ, սակայն, խոնարհումը չի կատարվում գերբայով, ինչպես է «Կը», «Կա» և «Հա» ճյուղերի բարբառներում, այդ գեղքում գեմքի վերջավորությունը և գործողության գաղափարը արտահայտվում են բայի խոնարհված ձևերով, իսկ գործողության մեջ լինելու գաղափարը արտահայտվում է գոյ (գո, գու, կու, կը), կա (գա, գու, գո) և հա, հայ (ահա, հայ) մասնիկներով: Իսկ շարունակականի համար օգտագործվում է նույն գոյ բառը որ շարկապի հետ, որից ստացվում է գոյ որ = գոր = գոր:

Այսպես են վարվում հայերենի բարբառները ներկայի գաղափարը

արտահայտելու համար: Այդ ցույց է տալիս, որ բոլոր լեզուները ժամանակներին գաղափարը սկզբից արտահայտել են առանձին բառերով, նույնպես և գեմքի գաղափարներն արտահայտել են առանձին բառերով կամ գերանուններով, որոնք հետագայում կորցնելով իրենց էական իմաստը, անկախ բառ լինելու հատկանիշը, վերածվել են ժամանակ և գեմք ցույց տվող ձևությունների: Հնչյունական փոքրիկ կամ ավելի մեծ փոփոխությունները կտրել են նրանց կապը, արտաքին նմանությունը իրենց նախորդ ձևերից և վերածել նախ օժանդակ բառերի, ապա վերջավորությունների: Այդ են ցույց տալիս հենց հայերեն լեզուն և նրա բարբառները:

Եթե անորոշ գերբայի հայցական և ներգոյական հոլովածները օգտագործվել են ներկայի գաղափար արտահայտելու համար, իսկ գործիական հոլովը օգտագործվել է շարունակական ժամանակներն արտահայտելու համար (Ղարաբաղի և Հագրութի բարբառներում), ապա սեռական հոլովը օգտագործվել է ապառնիի գաղափարն արտահայտելու համար: Ինչպես և ինչո՞ւ:

Մեզ հայանի է, որ համարյա բոլոր լեզուներում սեռական հոլովի հիմնական ֆունկցիան է, մասամբ նաև արական հոլովինը (մայրիկին եմ = պատկանում են մայրիկին) պատկանելությունը ցույց տալը, օրինակ՝ մարգու գլուխ, սեղանի ոտ, պատի գույն և այլն, այդ բոլոր կապակցությունների մեջ մարգու, սեղանի և պատի ձևերը ցույց են տալիս գլուխ, ոտ և գույն գոյականների պատկանելությունը: Նույն եղանակով էլ գրելու նամակ, ուտելու հաց, գնելու տետր կապակցությունների մեջ գրելու, ուտելու գնելու ձևերը սեռական են և ցույց են տալիս, որ նամակ, հաց և տետր առարկաները պատկանում են դրանց: Միայն՝ այստեղ սեռական ձևերը ոչ թե առարկա են ցույց տալիս, որոնց պատկանում են ուրիշ առարկաներ, այլ գործողություններ, որոնց պատկանում են ուրիշ առարկաներ, որ նշանակում է, թե այդ առարկաների վրա կկատարվեն կամ կատարվելու են սեռականով արտահայտված բայերի գործողությունը: Հետևաբար գործողության պատկանելը նշանակում է այդ գործողության ապագա կատարումը՝ պատկանող առարկաների նկատմամբ: Ուստի անորոշ գերբայի սեռական հոլովը, ցույց տալով պատկանելության գործողությունը՝ նշանակում է ապագայի գործողություն, այսինքն ապառնիի ժամանակ: Այսպես է առաջ եկել ապառնի ժամանակի գաղափարը հայերենի բայերում, նաև գրաբարում (գրելոց, գալոց և նման ձևերը հոգնակի սեռական են):

Գրական լեզվի նման ապառնի ժամանակ կազմում են հայ բարբառների զգալի մասը. ամենից առաջ Արարատյան, Թբիլիսիի, Աստրախանի, Ջուղայի, Պոլսի և այլ բարբառները: Յուրաքանչյուրը դրանցից կազմում է երկու տիպի ապառնի՝ բուն ապառնի և անցյալի ապառնի: Բուն ապառնին կազմվում է ապառնի գերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, իսկ անցյալի ապառնին կազմվում է նույն ապառնի գերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով: Այդ բարբառներում ապառնիի կազմության տարբերությունն այն է, որ յուրաքանչյուրը գործ է ածում օժանդակ բայի իր սովորական ձևերը զանազան արմատներով, կամ հնչյունափոխության

դանազան եղանակներով: Օրինակ՝ Արարատյան բարբառը օգտագործում է օժանդակ բայի «է» արմատը բոլոր դեմքերում, բացի երրորդ դեմքից, որտեղ օգտագործում է ա հնչյունը (գրելու յա), իսկ անցյալի անկատարում կորցնում է էական բայի արմատը բոլոր դեմքերում և պահպանում միայն երրորդ դեմքում (գրելու յի, գրելու յիր, գրելու յէր): Զուգայի բարբառը օգտագործում է օժանդակ բայի «ա» արմատը բոլոր դեմքերի համար ամ, աս, ա և այլն), իսկ անցյալի անկատարում օժանդակ բայի «է» արմատը:

Հիշյալ բարբառների ապառնի ժամանակի կազմության ընդհանուր պատկերը կլինի հետևյալը՝

Բ ա ր ք ա ո ճ Ե ր			
Արարատյան բ.	Թբիլիսիի բ.	Աստրախանի բ.	
գրբելու յէմ	գրբելու իմ	կրբելի յէմ	
» յէս	» իս	» յէս	
» յա	» է	» յե	
» յէնք	» ինք	» յէնք	
» յէք	» իք	» յէք	
» յէն	» ին	» յէն	

Զուգայի բարբառ	Պոլսի բարբառ
սիրելու յամ	սիրելու էմ
» յաս	» էս
» յա	» էս
» յանք	» էնք
» յաք	» էն
» յան	» էք

Ա ճ ց յ ա լ ի ա պ ա ո ճ Ի							
Արարատյան բբբ.	Թբիլիսի բբբ.	Աստրախանի բբբ.	Պոլսի բբբ.				
գրբելու յի	գրբելու էի	կրբելի իիմ	գրբելու էի				
» յիր	» էիր	» իիր	» էիր				
» յէր	» էր	» էր	» էր				
» յինք	» էինք	» իինք	» էինք				
» յիք	» էիք	» իիք	» էիք				
» յին	» էին	» իին	» էին				

Ղարաբաղի բարբառի Զանգեզուրի ենթաբարբառում ապառնի գերբայի «ու» վերջավորութունը շրթնայնանում և վերածվում է «վ»-ի, երբ օժանդակ բայն անմիջապես հաջորդում է-դերբային: Օրինակ՝ կրբելուն վէմ, կրբելուն վէս, կրբելուն վա և այլն: Գնդակագ գյուղի խոսվածքում ապառնին ունի կրբելո յեմ ձևը:

Ապառնի դերբայի գործածութունը իբրև ժամանակ կազմող ձև չենք գտնում մի շարք բարբառներում, օրինակ՝ Վանի, Կարնո, Տիգրանակերտի,

Սարբերդ-Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Համշենի և այլն: Այդ բարբառները, Վանի բացառությամբ, ապառնիի փոխարեն գործ են ածում հարկադրական եղանակի ձևերը բիզի, բեզը, բի, բը, զը, բեզը մասնիկներով և բառերով: Վանի բարբառը ներկայի և անցյալի անկատարի ձևերը գործ է ածում իբրև ապառնի, երևանի բարբառի Լոռու մի շարք գյուղական խոսվածքներում ապառնի դերբայի փոխարեն գործ է ածվում ենթականական դերբայն իբրև նպատակի պարագա. օրինակ՝

—Ուր ես գնում:  
 —Գրեմ էմ ջուր բերող (այսինքն ջուր բերելու):  
 Արախալի բարբառում ապառնի դերբայը գործածվում է բացառակա-  
 նի իմաստով. օրինակ՝ գրբելուն առաջ մթքէ—գրբելուց առաջ մտածիր  
 (Հ. Աճ., Արա. բարբ. էջ 177).

Համշենի բարբառում ենթականական դերբայը ապառնի կազմող հիմ-  
 նական դերբայն է. օրինակ՝

Ա պ ա ո ճ Ի			
էշտող իմ (գնալու եմ և այլն)	էշտող էյ	էյ	(գնալու էի և այլն)
» իս	» էյգը		
» ան	» էր		
» ինք	» այքը		
» իք	» էյքը		
» ին	» էնը		

Հավարիքի բարբառում ապառնի դերբայն արտասանվում է իբրև ֆիբելի, ֆիբրիանի. (ֆիբելի յըմ, յըս, յի, յանք, յաք, յան. ֆիբրիանի յըմ, յըս, յի, յանք, յաք, յան): Գծվար է որոշել՝ արդյոք դա հնչյունական փոփոխու-  
 թյուն է, թե մի ուրիշ բան: Հավանական է, որ Հավարիքի բարբառի բա-  
 յերի հոլովման ժամանակ սեռականն ստանում է «ա» վերջավորութուն, փոխանակ «ու» վերջավորության: «Ա» հոլովումը՝ կարելի է գտնել մեր մի քանի բարբառներում: Օրինակ Մեղրու բարբառում հատուկ անունները սեռականում ունենում են «ա» վերջավորութուն. օրինակ՝ ուղղական—Կա-  
 րապետ, սեռ.—Կարապետա:

Քեսաբի և Սվեդիայի բարբառներն այդ ձևը գործածում են իբրև ապառնի կազմելու միակ դերբայ: Այդ բարբառներում բառավերջի «ի»-ն վերածվում է «ան»-ի կամ «ա»-ի, ուստի, այս ձևն առաջացել է անորոշ դերբայի սեռականից, այսինքն՝ գրբելի<կրբելի, կարգալի<գարթիլա: Դրա-  
 նով էլ բացատրվում է Հավարիքի ֆիբելի ձևը (Նաև Աստրախա կրբելի ձևը):

Ապառնի		Աճցյալի ապառնի			
Քեսաբ	Սվեդիա	Քեսաբ	Սվեդիա		
կրբելի յիմ	կրբելի իմ	կրբելի եր էմ	կրբելի յէր	է	
» յիս	» իս	» էս	» յի	» իս	
» յի	» է	» էր	» յիր		
» յինք	» ինք	» էնք	» յիրք	» ինք	

կերելիս	յիք	կերելա	իք	կերելիս	եր էք՝	կերելա	յեր	իք
»	յին	»	ին	»	» էն	»	»	ին

Ունենք բարբառներ, որոնք ապառնի ժամանակը բաղադրում են այլ կազմութիւն ունեցող բայերով: Ղարաբաղի բարբառը ապառնին կազմում է ահան վերջավորութիւն ունեցող դերբայով: Այդ ահան վերջավորութիւնն ավելանում է անորոշ դերբայի վրա, որով և ստացվում է, օրինակ, կ'իրբլական, կրբրբլական ձևերը: Ահան վերջավորութիւնը ածական կազմող ածացն է: Ընկերական, բարեկամական, աշակերտական և այլն: Այդ ահան վերջավորութիւնը գրաբարում նաև հոգնակի կազմող վերջավորութիւն էր: Ահան ածանցը ածականներին տալիս է ստացական իմաստ, այսինքն՝ արտահայտում է պատկանելութիւն: օրինակ՝ աշակերտական նշանակում է աշակերտին պատկանող կամ աշակերտի պատկանող (աշակերտական տետր, աշակերտական նստարան), ընկերական նշանակում է ընկերին պատկանող, ընկերին վերաբերող (ընկերական խրատ, ընկերական խորհուրդ, ընկերների խորհուրդ, ընկերների խրատ):

Անորոշ դերբայի վրա դրվելով, ահան վերջավորութիւնը նշանակում է գործողութիւն պատկանել, գործողութիւն վերաբերել, ուստի կ'իրբլական և կրբրբլական նշանակում են գրելուն պատկանող և կարդալուն պատկանող: Մենք արդեն ասացինք, որ գործողութիւն պատկանելը հայերենում նշանակում է ապագայում գործել, ապագայում կատարել այդ գործողութիւնը, ճիշտ այնպես, ինչպես անորոշ դերբայի սեռական հոլովի արտահայտած իմաստն է: Այդ պատճառով էլ անորոշ դերբային ահան ավելացնելով ստացվում է ապառնի դերբայ: Հայտնի է, որ հայերեն լեզուն ստացակառուցութիւնը արտահայտում է սեռական հոլովով, որը հաճախ փոխարինվում է ածականով, որ ունի ահան վերջավորութիւն և կամ ընդհակառակն, այդ պատճառով էլ բնական է, որ անորոշ դերբայի վրա ահան վերջավորութիւն ավելացնելով պետք է այնպիսի մի գաղափար արտահայտել, ինչպիսին արտահայտում է անորոշ դերբայի սեռական հոլովը:

Նախորդ բարբառների նման Ղարաբաղի, Ղարադաղի նաև Հաղբութի բարբառները ահան վերջավորութիւն ունեցող ապառնի դերբային ավելացնում են օժանդակ բայի ձևերը և կազմում ապառնի ժամանակ:

Ապառնի	
Ղրբ. և Հաղբութ	Ղրբ. Հաղբ.
խըմբլական ըմ	խըմբլական ի
» ըս	» իբ
» ա	» աբ
Խըմբլական ընք	» ինք
» ըք	» իք
» ըն	» ին

Անցյալի ապառնի			
Հաղբութ		Ղարադաղ	
խըմբլական ըմ	լնլ	խըմբլական ըմ	լնլ
» ըս	»	» ըս	»
» ա	»	» ա	»
» ընք	»	խըմբլական ըք	»
» ըք	»	» էք	»
» ըն	»	» ըն	»

Քեյվանի բարբառը ապառնին կազմում է ահուն վերջավորութիւնով: օրինակ՝ կ'իրբլական ըմ, կ'իրբլական ըս և այլն:

Մեղրու և Կարճեանի բարբառները ապառնի ժամանակը կազմում են ահան վերջավորութիւն ունեցող դերբայով (գ'իրբլական, կ'րբրբլական):

Այս դերբայը ևս առաջանում է անորոշից, վրան ավելացրած ահան վերջավորութիւնը, որն առաջացել է աջակալ վերջավորութիւնից: Այդ վերջավորութիւնը կազմված է հայերեն բայի երկրորդ հիմքից (գնաց, մնաց) և ահան ածականական վերջավորութիւնից: Գրական լեզվի մեջ աջակալ ածանցը քիչ գործածութիւն ունի, բայց այնուամենայնիվ կա, օրինակ՝

Տերևներն են գնացական  
Արմատներն են մնացական

Այդ աջակալ վերջավորութիւնը ցույց է տալիս գործողութիւնը ապագայում կատարող, հետագայում կատարող: Մնացական բառը նշանակում է՝ նա որ ապագայում կմնա, որի պատճառով և այդ սովորական հայերեն բառը դարձել է հատուկ անուն: Երեխային կոչելով Մնացական, ցանկանում են դրանով ներշնչել նրան երկար կյանք, այսինքն՝ չի մեռնի, կմնա:

Մեղրու և Կարճեանի բարբառները աջակալ վերջավորութիւնը ավելացնում են անորոշ դերբային, որոնք արտահայտում են ապառնի գործողութիւն գաղափար, սակայն այդ աջակալ վերջավորութիւնը ձայնավորի սրղում է ունենում և ց աֆրիկատր թուլանում է, պարզանում, վերածվում բաղադրիչ «ս» նշյունի, որից ստացվում է ահան (գ'իրբլական, կ'րբրբլական):

Ապառնի ժամանակ կազմելու համար այդ դերբայներին ավելանում են օժանդակ բայի համապատասխան ձևերը, որից և ստացվում է խոնարհման հետևյալ պատկերը:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր			
Մեղրու		Կարճեանի	
կըրգըլնական ըմ	լն	կ'ըրգըլական ըմ	լն
» ըս	»	» ըս	»
» ա	»	» ա	»
» ըք	»	» ըք	»

կըրգըլնական	ըբ	կ'ըրգըլնական	ըբ
»	ըն	»	ըն

Անցյալի ապառնին այդ նույն բարբառները կազմում են անցյալի անկատարի նման, այսինքն իրենց ապառնի ձևին ավելացնում են համապատասխան մասնիկը: Մեղրու բարբառն ավելացնում է «լն» մասնիկը, իսկ Կարճևանի բարբառը ավելացնում է «լէ» մասնիկը, որից ստացվում է հետևյալ պատկերը:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Մեղրու	Կարճևանի	
կըրգըլնական	ըմ	լն
»	ըս	»
»	ա	»
»	ըբ	»
»	ըբ	»
»	ըն	»

Ազուլիսի բարբառը ապառնին կազմում է մի առանձին գերբայով, որ ունի «էլաց» (էլաց) վերջավորութունը (թրէլէլաց-թակելու, սայրէլաց-սիրելու):

Այդ դերբայը գտնում ենք նաև Զուղայի բարբառում «սիրէլէց» ձևով: Հասկանալի է այդ: Զուղայի և Ազուլիսի բարբառները եղել են միմյանց սահմանակից և, բնական է, կարող էին դործածել միևնույն դերբայը: Այս դերբայի կազմութունը հայտնի չէ, բայց կարելի է ենթադրել, որ գրաբարյան «գրելոց» ապառնի դերբայն է կամ նրա նման կազմված:

Գրաբարի ապառնի դերբայը սխտեմով նման է աշխարհաբարին, այսինքն անորոշ դերբայի հոլովված ձևն է և սեռական-տրական հոլովն է, սակայն ոչ թե եզակի, ինչպես աշխարհաբարում, այլ հոգնակի: Հետևաբար գրաբար լեզվի մտածողութան մեջ ևս ապառնի ժամանակի հասկացութունն առաջացել է կատարվող դործողութան, բայց ցույց տված գործողութան պատկանելու գաղափարից: Հոգնակին չի խանգարում այդ իմաստըն արտահայտելու, այլ միայն ուժեղացնում է պատկանելու գաղափարը:

Ազուլիսի և Զուղայի բարբառների ապառնի դերբայը կազմված է նույն անորոշ դերբայից, միայն Ազուլիսի բարբառում ավելանում է «աց» վերջավորութունը (գ'իրէլաց), իսկ Զուղայի բարբառում «էց» (գիրէլէց): Հավանական պետք է համարել, որ «աց», «էց» վերջավորութուններն ունեն միևնույն ծագումը, այն է՝ առաջացել են «եսաց» ձևից (գրելեսաց), որ Ազուլիսի բարբառում ստացվել է «աց», եաց երկբարբառի հնչյունափոխությամբ:

Ազուլիսի բարբառում «ես» երկբարբառը արտասանվել է «աս», իսկ Զուղայի բարբառում հայերեն լեզվի սովորական եղանակով վերածվել է «ես»=է-ի (հմմտ. Առաքեալ > Առաքել, մեռեալ > մեռել), այդ ձևերը նման են գրական լեզվի վաղակատար ժամանակի «ել» վերջավորության, որ առաջացել է «եսալ» ձևից (գրեալ > գրել, մնացեալ > մնացել):

Ազուլիսի և Զուղայի բարբառները սահմանական եղանակի ապառնի ժանամակը կազմելու համար իրենց դերբային ավելացնում են օժանդակ բայի համապատասխան ձևերը: Անցյալի ապառնին կազմելու համար Ազուլիսի բարբառը ապառնիին ավելացնում է անցյալ ժամանակի գաղափար ցույց տվող «նէլ» մասնիկը, իսկ Զուղայի բարբառը օժանդակ բայի ներկայի ձևերի փոխարեն գործածում է անցյալի անկատար ձևերը, որից ստացվում է հետևյալ պատկերը:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Ազուլիսի		Զուղայի	
Ապառնի	Անցյալ ապառնի	Ապառնի	Անցյալի ապառնի
գ'իրէլաց	ըմ	գիրէլէց	ամ
»	ըս	»	աս
»	ա	»	ա
»	ըբ	»	անք
»	ըբ	»	աք (էք)
»	ըն	»	ան

Շամախու բարբառը ապառնի կազմելու համար «ալու» (կըրթիլու) վերջավորութուն ունեցող դերբայից բացի գործ է ածում բոլորովին մի այլ վերջավորությամբ դերբայ: Շամախու բարբառում ապառնի դերբայը կազմում է անորոշ դերբային ավելացրած «ան» վերջավորութուն՝ կ'իրիլան, կըրթիլան: Կարելի է ենթադրել, որ Շամախու բարբառի դերբայի կազմութունը նման է գրելէն, գլլալէն դերբայական ձևին, ուստի կ'իրիլան ամ—նշանակում է գրողից եմ, կըրթիլան ամ—կարդացողից եմ, այսինքն՝ գրելու եմ, կարթալու եմ:

Շամախու բարբառը ևս մյուսների նման սահմանական եղանակի ապառնի ժամանակը կազմելու համար դերբայի վրա ավելացնում է օժանդակ բայի իրեն հատուկ ձևերը:

Անցյալի ապառնի կազմելու համար համապատասխանաբար ավելացնում է օժանդակ բայի անցյալի անկատար ձևերը:

Ղարաբաղի մարզի Մարգակերտի շրջանի մի քանի գյուղեր ապառնի ժամանակը կազմում են Շամախու բարբառի նման, միայն որոշ գյուղեր դերբայի վերջին ա-ն երկարացնում են, որից ստացվում է կիրլանան րմ, կիրլանան րս, կիրլանան րա:

Մարաղայի բարբառն իր ապառնին կազմում է «օլու» վերջավորությամբ, որի «օ» հնչյունն առաջանում է է-ին հաջորդող «ու»-ի ազդեցությամբ. օրինակ՝ կիրլու յիմ, կիրլու յիս, կիրլու յի և այլն:

Ապառնի ժամանակի կազմության մի առանձին ձև էլ նկատում ենք մենք Քրիլիսիի բարբառում: Սովորաբար Քրիլիսիի բարբառն իր ապառնի ժամանակը կազմում է Երևանի նման, այսինքն, գրելու, կարդալու ձևի դերբայներով և օժանդակ բայով. օրինակ՝

գրքելու իմ	գրքելու էի
» իս	» էիր
» է	» էր
և այլն.	և այլն:

Թրիլիսի բարբառը ապառնի գերբայ է կազմում նաև աջու վերջավորութեամբ՝ ալուցու, գրէլացու:

Այս վերջավորութիւնը գրական լեզվի մեջ մի ածանց է, որ նշանակում է ապագայում դարձող դառնալու համար, կամ դառնալու նախապատրաստվող: Օրինակ՝ վարպետացու—նշանակում է ապագայում վարպետ դարձող, կամ վարպետ դառնալու նախապատրաստվող, փեսացու—նշանակում է ապագայում փեսա դարձող—կամ փեսա դառնալու համար անձ և այլն:

Հասկանալի է, որ աջու վերջավորութիւնը արդեն ունի իր մեջ ապառնիի գաղափար, ուստի անորոշ դերբայի վրա ավելանալով՝ ցույց է տալիս գործողութեան ապառնի, ապագայի կատարումը, այդ պատճառով էլ գրէլացու, տալացու, կարբալացու կնշանակի ապագայում գրելու, ապագայում տալու, կարգալու գործողութիւն:

Այս ապառնի դերբայը Ղարաղաղի բարբառում գործածվում է «ք» ածանցով, որից ստացվում է կ'իբրլացուք՝ ձևը, որը հաճախ կրավորական իմաստ է արտահայտում:

Հավարիքի բարբառում ապառնիի համար իբրև դերբայ գործածվում է նույնը, միայն աջու վերջավորութեամբ: Մենք գիտենք, որ վարբարում ապառնի դերբայը կազմվում է հոգնակի ձևից, այն է՝ հոգնակի սեռականից: Հավանական է, որ այստեղ ևս մենք գործ ունենք նույն երևույթի հետ, որ սովորական է հայերենի մեջ: Փոխանակ գործողութեան գաղափարը ուղղակի կերպով արտահայտելու, ասվում է՝ գործողների շարքին պատկանել:

Մյուս դերբայների նման այս դերբայից ապառնի կազմելու համար օգտագործվում է օժանդակ բայի ձևերը:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Թրիլիսի	Ղարաղաղ	Արեշ-Հավարիք
տալացու իմ	սիրըլացուք ըմ	ջնէլացուկ ում
գրնալացու իմ	» ըս	գրնալացուկ ում
գրքէլացու իմ	» ա	խինգացուկ իմ

Այս բոլոր օրինակներից տեսնում ենք, որ ապառնի ժամանակը համարյա բոլոր բարբառներում կազմվում է դերբայական եղանակով, վերլուծական եղանակով, դերբայով և օժանդակ բայով:

Սովորական ապառնիի դերբայական բոլոր ձևերը կազմվում են երկու եղանակով՝ կամ սեռական հոլովով և կամ պատկանելութիւն ցույց տվող ածանցներով, որ ավելանում են անորոշ դերբայի վրա: Թե մեկ և թե մյուս դեպքում ապառնի դերբայի հիմնական իմաստը ստացականութիւնն է, գործողութեանը պատկանելը, գործողութեան վերաբերվելը:

«Կը» ճյուղի մի շարք բարբառներում ապառնին կազմվում է բոլորովին տարբեր եղանակով: Ավելի ճիշտ ասած՝ ապառնի ձև առանձին, անկախ գոյութեան շունի, ուղղակի ներկայի ձևը օգտագործվում է նաև ապառնի ժամանակ արտահայտելու համար:

Վանի բարբառում ներկայի և անցյալ անկատարի ձևերը օգտագործվում են իբրև ապառնի ժամանակ արտահայտելու ձևեր: Օրինակ՝ կըկ'իրի—նշանակում է՝ կ' գրում եմ, կ' գրելու եմ, կ' կգրեմ: կըկ'իրի նշանակում է՝ կ' գրում էի, կ' գրելու էի, կ' կգրեի:

Աշխարհաբար գրական լեզվի մեջ արդեն պայմանական եղանակի ձևերը օգտագործվում են նաև ապառնի ժամանակ արտահայտելու համար, միայն թե այդ ապառնին ենթադրական է. մինչդեռ ստույգ ապառնիի համար գործածվում է սահմանական եղանակի դերբայական ապառնին:

Հասկանալի է, որ «կը» մասնիկով խոնարհումը համարյա բոլոր բարբառներում արտահայտում է պայմանական ապառնիի գաղափար, միայն Վանի և մի երկու այլ բարբառներում արտահայտում է նաև սահմանական եղանակի ապառնի, այսինքն՝ ստույգ ապառնի, ստույգ գործողութիւն:

Կան բարբառներ, որոնք ապառնի ժամանակի համար օգտագործում են հարկադրական եղանակի ձևերը: Օրինակ Մոկաց, Պուսի, Տրապիզոնի և այլ բարբառները: Այսպես՝

Բիդի էրբամ, բի էրբամ, դի էրբամ, բիշոմ—գնալու եմ:

Վերջապես Տիգրանակերտի բարբառը ապառնին կազմում է սովորական ներկայից, վրան ավելացնելով սկզբից «մըն» անբացատրելի մասնիկը. իսկ անցյալի ապառնիի համար նույն մասնիկն ավելացնում է սովորական անցյալի անկատարի վրա, որից ստացվում է.

Ապառնի	Անցյալի ապառնի
մըն փէրիմ (բերելու եմ)	մըն փէրէյի (բերելու էի)
» փէրիր	» փէրէյիր
» փէրէ	» փէրէր
» փէրինք	» փէրէյինք
» փէրիք	» փէրէյիք
» փէրին	» փէրէյին

Ինչպես «Կը» ճյուղի շատ բարբառների մեջ, Տիգրանակերտի բարբառումն էլ ապառնի ձևը բուն հարկադրական ձև է, և առանձին ապառնի ձև չկա:

Ժխտական ձևը՝ կազմելիս ավելացնում է «չ» մասնիկը սկզբից, օրինակ՝

Ներկա	Անցյալի ապառնի
չըմըն փէրիմ	չըմըն փէրէի
չըմըն փէրիր	չըմըն փէրէյիր
և այլն:	և այլն:

«Մըն» մասնիկը ավելանալու դեպքում Տիգրանակերտի բարբառի ներկայի սովորական «գը» մասնիկը դուրս է բնկնում:

Վաղակատար ժամանակ

Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը գրական լեզվում կազմվում է երկու տեսակ՝ կամ «էլ», կամ «էր» վերջավորությամբ:

Արևմտահայ գրական լեզվի մեջ վաղակատարը կազմվում է «էր» վերջավորությամբ (գրէր եմ, կարդացէր եմ), որ բարբառային ձև է: Արդի ընդհանուր գրական լեզվի մեջ վաղակատար գերբայն ունի «էլ» վերջավորություն (գրել եմ, կարդացել եմ), որ հայերեն նին ընդհանուր լեզվի «եալ» վերջավորություն ունեցող անցյալ գերբայի ձևն է: Բարբառներում վաղակատար գերբայը նույնպես կազմվում է կամ «էլ» և կամ «էր» վերջավորությամբ: Կան, սակայն, բարբառներ, որտեղ վաղակատար գերբայը կազմվում է «իլ» վերջավորությամբ: այսպես է Թբիլիսիի բարբառում. օրինակ՝

տարիլ իմ	մնացիլ իմ
» իս	» իս
» է	» է
» ինք	» ինք
» իք	» իք
» ին	» ին

Արարատյան բարբառը կազմում է «էլ» վերջավորությամբ: Արարատյանի նման «էլ» վերջավորությամբ է կազմում Ղարաբաղի ենթարտերանի Գանձակի խոսվածքը: Գանձակի խոսվածքում վաղակատար ժամանակը գործ է ածվում պայմանական եղանակի իմաստով. օրինակ՝

—Դէ, ասէլ էիք էլի, այսինքն՝ դե՛հ, կասէիք էլի:

Ղարաբաղի բարբառում գրական լեզվի «ե» խոնարհման բայերն ունեն «ալ» վերջավորություն (կիրալ, նրստալ, խուսալ), իսկ «ա» խոնարհման որոշ բայեր ունենում են եցալ կամ ացալ վերջավորություն:

Ղարաբաղի բարբառի նման վաղակատար գերբայ են կազմում Ծամախու, Հաղբութի և Մեղրու բարբառները:

«Ս» ճյուղի բարբառներից Ուրմիայի բարբառը վաղակատար գերբայը կազմում է «իր» վերջավորությամբ (կիրիր, կ'իւրբացիր): Նույն ձևով էլ «լ» ճյուղի բարբառները կազմում են իրենց վաղակատար գերբայը:

Այդ ճյուղի բարբառների խոսվածքներում հաճախ վերջին ր-ն վերածվում է «յ» հնչյունի (Կոտայքի շրջանի Արամուս գյուղ (կիրիյ յեմ): Ղանի բարբառը, որը պատկանում է «Կը» ճյուղին, վաղակատար գերբայը կազմում է նույնպես, ինչպես և Ուրմիայի բարբառը: «Կը» ճյուղի մյուս բարբառները, ինչպիսին են Պոլսի, Կարնո, Համշենի, Մալաթիայի, Արաբկիրի և այլն, ունենում են կամ «իր» կամ «էր» վերջավորություն, նայած բային և նրա խոնարհմանը: Արևմտահայ գրական լեզուն ևս վաղակատար գերբայը կազմում է «էր» վերջավորությամբ:

Այս բոլոր բարբառները վաղակատար ժամանակը կազմելով նույն-

անուն գերբայից՝ վրան ավելացնում են օժանդակ բայի ներկայի ձևերը իրենց համապատասխան կամ սովորական սխառեմով: Անցյալի վաղակատարը նույնպես յուրաքանչյուրն իրեն հատուկ սխառեմով է կազմում, այսինքն՝ այն բարբառները, որոնք օժանդակ բայը օգտագործում են և՛ ներկայի, և՛ անցյալի համար, գործ են ածում նաև այդ բոլորը վաղակատար գերբայի հետ, իսկ այն բարբառները, որոնք անցյալ ժամանակները կազմում են առանձին բառամասնիկով, վաղակատար ժամանակները կազմելիս վաղվում են նույն եղանակով, ինչ որ անցյալի անկատարը կազմելիս, այսինքն՝ վաղակատարի վրա ավելացնում են ներկայի ձևերը, իսկ անցյալի վաղակատարի համար գործ են ածում իրենց հատուկ բառ-մասնիկը՝ Ուրմիայի բարբառը՝ «էր», Ղարաբաղի բարբառը՝ «լիւ» և այլն:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Վաղակատար

Արարատյան	Կարնո	Ուրմիայի	Արդվինի	Հաղբուրի
գ'ըրէլ էմ	գ'ըրէր էմ	կ'իրիր եմ	գըրիլ իմ	կիրալ ըմ
» ես	» էս	» ես	» իս	» ըս
» ա	» է	» ի	» է	» ա
» էնք	» էնք	» ենք	» ինք	» ընք
» էք	» էք	» էք՛	» իք	» ըք
» էն	» էն	» են	» ին	» ըն

Անցյալի վաղակատար

գ'ըրէլ ի	գ'ըրէր էյի	կ'իրիր եմ էր	գըրիլ էյի	կիրալ ըմ լիւ
» իր	» էյիր	» ես էր	» էյիր	» ըս »
» էր	» էր	» էր	» էր	» ա »
» ինք	» էյինք	» էնք էր	» էյինք	» ընք »
» իք	» էյիք	» էք էր	» էյիք	» ըք »
» ին	» էյին	» են էր	» էյին	» ըն »

Վաղակատար ժամանակի, ինչպես և բոլոր բաղադրյալ ժամանակների ժխտական ձևերը կազմվում են գանազան եղանակով. այսպես, օրինակ, Արարատյան բարբառում, ավելի ճիշտ՝ Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներում «չ» ժխտական մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա և օժանդակ բայը մնում է իր տեղում, մինչդեռ գրական լեզվի մեջ օժանդակ բայը տեղափոխվում է գերբայից առաջ, օրինակ.

Գրական լեզու	Արարատյան բարբառ
Գրել եմ, չեմ գրել	Գըրէլ եմ, գըրիլ չէմ
Գրել ես, չես գրել և այլն:	գըրէլ ես, գըրիլ չես և այլն:

Արարատյան բարբառում հաճախ գործ է ածվում նաև շեմ գրէ ձևը, այսինքն վերջին լ-ն դուրս է նետվում:

Ղարաբաղի բարբառում վաղակատարի, ինչպես և բոլոր բաղադրյալ

ձևերի ժխտականը նույնպես կազմվում է «չ» մասնիկով, որը դրվելով օժանդակ բայի վրա, թողնում է նրան իր տեղում (կ'իրալ չբմ, կըրթէցալ չբմ):

Ուրմիայի և «լ» ճյուղի բարբառներում ժխտականը կազմվում է «չ» մասնիկով, որն ավելանում է օժանդակ բայի վրա և նրան տեղափոխում դերբայից առաջ, իսկ դերբայը կորցնում է իր վերջին «բ» հնչյունը (չեմ կ'իրի, չեմ կ'արթացի): Այդ ձևով «ե» խոնարհման վաղակատարի ժամանակի ժխտականը նույնանում է պայմանական ժխտականի հետ:

Ուրմիայի, թոյի և Մարաղայի բարբառներում անցյալի վաղակատարի ժամանակը կազմելու համար «չ» մասնիկն ունեցող օժանդակ բայի և դերբայի միջև ընկնում է անփոփոխ «էր» մասնիկը:

Չեմ էր կ'իրի, չեա էր կ'իրի, չէր կ'իրի:  
Չենք' էր կ'իրի և այլն:

Թոյի խոսվածքներում, ինչպես և Վանի բարբառում, դերբայը հաճախ ունենում է «ե» վերջավորություն (չեմ կ'իրի), իսկ Մեղրու, Կարճեանի և Ագուլիսի բարբառներում «էլ» և «ալ» վերջավորություններ:

«Ս» ճյուղի մի շարք բարբառներում, ինչպես Շաղախ-Քեյվանի, Կարճեանի, Ղարադաղի, Դզմարի, Մեղրու նաև Ագուլիսի բարբառներում վաղակատար ժամանակի գաղափարը բացակայում է, թեև վաղակատար ժամանակի ձևերը կան: Այդ ձևերը գործ են ածվում անցյալ կատարյալի իմաստով: Օրինակ՝

Կըրթեցալ բմ—կարդացի (Շաղախ-Քեյվան), Գիրէլ բմ—գրեցի (Կարճեան):

Վարալ բմ—վարեցի (Ղարադաղ, Դզմար):

Գիրալ բմ—գրեցի (Մեղրի), Թակալ բմ—թակեցի (Ագուլիս):

Վաղակատարի ձևը իբրև անցյալ կատարյալ գործ է ածվում նաև Սուշավայի բարբառում:

Այսպիսով վաղակատարի ձևերը կան, բայց իմաստը չկա, մինչդեռ անցյալ կատարյալի ձևերը չկան, բայց իմաստը կա, որ արտահայտվում է վաղակատարի ձևով: Եթե նկատի չունենանք Սուշավայի բարբառը, ապա այդ հատկությունը կդառնա միայն «Ս» ճյուղի սեփականություն:

«Ս» ճյուղի հիշյալ բարբառներում անցյալի վաղակատար ձևերը չկան, որը ապացույց է, թե վաղակատար ժամանակը գործ է ածվում ոչ վաղակատար իմաստով, որովհետև ամեն մի բարբառում, որի մեջ գտնում ենք վաղակատարի ձևերն ու իմաստը, գտնում ենք նաև անցյալ վաղակատարի ձևերն ու իմաստը:

Բերում ենք անցյալ կատարյալի լրիվ աղյուսակը:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Շաղախ-Քեյվանի		Կարճեանի	
կ'ըրալ իմ—գրեցի		գ'իրէլ բմ—գրեցի	
» բս	և այլն:	» բս	և այլն:
» ս		» ս	

կ'ըրալ բբ	գ'իրէլ բբ
» բբ	» բբ
» բն	» բն

Մեղրու		Ագուլիսի		Սուշավա	
գ'իրալ բմ—գրեցի		թ'ակալ բմ—թակեցի		ս'իրէլ իմ—սիրեցի	
» բս	և այլն:	» բս	և այլն:	» իս	և այլն:
» ս		» ս		» է	
» բբ		» բբ		» ինք	
» բբ		» բբ		» իք	
» բն		» բն		» ին	

Արեշի-Հավարիքի բարբառում վաղակատար ձև բոլորովին չկա, փոխարինված է հարակատար ձևով:

Հարկատար ժամանակ

Հայերեն ընդհանուր գրական լեզվի մեջ հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ձևերով:

Օրինակ՝ Գտած եմ, Գտած ես, Գտած է և այլն, կամ՝ Գտած էի, Գտած էիր, Գտած էր և այլն:

Հայերենի բարբառներում ևս հարակատար ժամանակը գոյություն ունի և կազմվում է նույն եղանակով, միայն այն տարբերությամբ, որ յուրաքանչյուր բարբառ դերբային ավելացնում է օժանդակ բայի յուր ձևերը, իսկ դերբայը արտասանում է բոլոր հնչյունական կառուցվածքի: Մեծ մասամբ հարակատար դերբայն ունի «ած» վերջավորություն, բայց մի քանի բարբառներում, ինչպիսին են Մշո, Դիաղինի և Մոկաց բարբառները և Արարատյան բարբառի Նոր-Բայազետի ենթաբարբառը, հարակատար դերբայը կազմվում է «ուկ» վերջավորությամբ, օրինակ՝ Գտուկ քնուկ, խասուկ և այլն:

Դիաղինի բարբառը հարակատար դերբայը կազմում է կ' «ած», կ' «ուկ» վերջավորություններով: Իժվար է որոշել, թե դրանցից որն է իրենը—Դիաղինին, Կարծում ենք, որ «ուկ» վերջավորությունը պետք է ընդունել Մշո բարբառի սեփականություն, որը փոխանցվել է Դիաղինի բարբառին: Մյուս կողմից «ած» վերջավորությունն էլ նրանը չէ, որովհետև, եթե այդ դերբայն ունենար, կարիք չէր ունենա նույն դերբայի մի այլ տարբերակը գործածել: Ամենահավանականն այն է, որ Դիաղինի բարբառը հարակատար դերբայ չի ունեցել և այն յուրացրել է կ' արևմուտքից (Մշո բարբառից), կ' արևելքից (Վանի բարբառից):

Հարակատար ժամանակի կազմությունը բոլորովին նույնն է, ինչ որ վաղակատար ժամանակինը: յուրաքանչյուր բարբառ օժանդակ բայի իրեն հատուկ ձևերով է հարակատար ժամանակները կազմում: Հարակատար ժամանակը որոշ բարբառներում արտահայտում է կ' վաղակատարի իմաստը, կ' հարակատարի իմաստը: Այդ լինում է այն բարբառներում, որտեղ վաղակատարի իմաստը չկա, օրինակ՝ թակած բմ—թակել եմ, թակած եմ

(Ազուլիս). կ'ըրած ըմ—գրել եմ, գրած եմ (Շաղախ), գ'իրէծ ըմ—գրել եմ, գըրած եմ (Կարճևան), Գ'իրած ըմ—գրել եմ, գրած եմ (Մեղըր), հընձած ըմ—հնձել եմ, հնձած եմ (Իզմար, Ղարադաղ): Քեսարի բարբառում հարակատարն ունի «ու՛ձ» վերջավորութիւնն (կըրու՛ձ), Սվեգիայի բարբառում «ուձ» վերջավորութիւնն (կըրուձ), Հաճընը և Զեյթունն ունեն «օձ» վերջավորութիւնն (սիյօձ, կանօձ):

Որոշ բարբառներ հարակատար ժամանակը սիրում են հաճախ գործածել. օրինակ Ղարաբաղի և Պոլսի բարբառները: Այդ բարբառներում կարող է կազմվել հարակատար գերբայով բազմաթիվ երկբարդական բաղադրյալ ժամանակներ. օրինակ՝

գըրած էմ, գըրած էմ էղէր, գըրած գըլամ, գըրած գըլամ էղէր, գըրած գըլամ գօր, գըրած գըլամ էղէր, գըրած ըլլամ նէ, գրած ըլլամ նէ էղէր, գըրած էղա, գըրած բիգի ըլլամ, գրած բիգի ըլլամ էղէր և այլն (Պոլսի բարբառ):

Իրանից գուրս հենց հարակատար գերբայը ավելի է սիրված Պոլսի բարբառում, քան վաղակատարը:

Կան բարբառներ, որոնք արևելահայ գրական լեզվի նման չեն սիրում հարակատար գերբայը հաճախ գործածել. Ավելին՝ մի շարք բայերից այդպիսի գերբայ կազմելը նույնիսկ անհնար է:

Հետաքրքրական է Հաճընի բարբառի հարակատար ժխտական ձևը, որ լինում է «մօն» վերջավորութիւնով՝ վառմօն-վառված, նշանմօն-նշանված, պէյմօն-պայմված և այլն: Ըստ իս այս «մօն» վերջավորութիւնը «ուձն» ձևի սեռականն է, որ իբր հազվագյուտ ձև գործածվում է գրականում (հուր վառման—վառած հուր): Բեյլանի բարբառում հարակատար գերբայն ունենում է «մօն» վերջավորութիւն. օրինակ՝ ալմօն իմ—տված եմ:

Հարակատար ժամանակի խոնարհման աղյուսակ

Թրիլիսի	Ղարաբաղ	Նոր-Նախիջևան
էրած իմ	սիրած ըմ	բէրած իմ
» իս	» ըս	» իս
» է	» ա	» է
» ինք	» ընք	» ինք
» իք	» ըք	» իք
» ին	» ըն	» ին

Ազուլիս	Կարնևան	Մուշ
թակած ըմ	գ'իրէծ ըմ	գ'ըրուկ իմ
» ըս	» ըս	» իս
» ա	» ա	» է
» ըք	» ըք	» ինք
» ըք	» ըք	» իք
» ըն	» ըն	» ին

Անցյալի հարակատար

Թրիլիսի	Ղարաբաղ	Նոր-Նախիջևան
էրած էի	սիրած ի	բէրած էյի
» էյիք	» իք	» էյիք
» էր	» ար	» էր
» էյինք	» ինք	» էյինք
» էյիք	» իք	» էյիք
» էյին	» ին	» էյին

Ազուլիս	Կարնևան	Մուշ
թակած ըմ նէլ	գ'իրէծ ըմ լէ	գ'ըրուկ ինք
» ըն »	» ըս »	» իք
» ա »	» ա »	» էր
» ըք »	» ըք »	» ինք
» ըք »	» ըք »	» իք
» ըն »	» ըն »	» ին

Անցյալ կատարյալ ժամանակ

Գրական լեզվի և գրաբարի անցյալ կատարյալն ունի ցոյական հիմք (խոսքը կանոնավոր բայերի մասին է): Գրաբարում միայն «ու» խոնարհման բայերը անցյալ կատարյալը կազմում են անցոյական հիմքով: Օրինակ՝

Գրաբար		Գրական լեզու	
գրեցի	թողի	գրեցի	թողեցի
գրեցիր	թողեր	գրեցիր	թողեցիր
բրեաց	եթող	գրեց	թողեց
գրեցաք	թողաք	գրեցինք	թողեցինք
գրեցիք	թողիք	գրեցիք	թողեցիք
գրեցին	թողին	գրեցին	թողեցին

Հայերեն բարբառները մեծ մասի անցյալ կատարյալը նման է գրական լեզվին, տարբերութիւնն լինում է միայն ձայնավոր հնչույթների մեջ կամ մեկ երկու գեմքում. օրինակ՝

Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Հանրն	Թրիլիսի	Ղարաբաղ	Վան	Համզեն	Սվեդիա
սիյեցի	գըրեցի	կ'իրեցէ	կ'իրեցի	թափեցի	կըրեցա
սիյեցիյ	գըրեցիր	կ'իրեցէր	կ'իրեցիր	թափեցիր	էըրեցիր
սիյեց	գըրեց	կ'իրեց	կ'իրեց	թափեց	կըրեց
սիյեցօնք	գըրեցինք	կ'իրեցէնք՝	կ'իրեցինք՝	թափեցաք	կըրեցօնք
սիյեցիք	գըրեցիք	կ'իրեցէք՝	կ'իրեցիք՝	թափեցիք	կըրեցիք
սիյեցին	գըրեցին	կ'իրեցէն	կ'իրեցին	թափեցին	կըրեցէն

Ուրմիայի, Սոյի, Մարաղայի և Թավրիզ-Մոզգուի բարբառները անհան



կատարյալը կազմում են երկու ձևով՝ «ե» խոնարհման բայերինը՝ անցյալ-կան հիմքով, իսկ «ա» խոնարհման բայերինը՝ ցոյական հիմքով:

Միաժամանակ այդ բարբառների անցյալ կատարյալի առաջին գեմքն ունենում է «մ» վերջավորություն, օրինակ՝

Մարաղա	Ուրմիա	Մարաղա	Ուրմիա
չ օ ք՝ ու մ	կ՛ի բի մ	աղացը մ	աղացը մ
չ օ ք՝ ու ը	կ՛ի բի բ	աղացի բ	աղացը բ
չ օ ք՝ ու յ	կ՛ի բի յ	աղաց յ	աղաց յ
չ օ ք՝ ու ն ք՛	կ՛ի բի ն ք՛	աղացը ն ք	աղացը ն ք՛
չ օ ք՝ ու ն ք՛	կ՛ի բի բ ջ	աղացը բ ջ	աղացը բ ջ
չ օ ք՝ ու ն ը	կ՛ի բի ը	աղացը ը	աղացը ը

Աստրախանի բարբառը և Աստաբատ գյուղի խոսվածքը ևս անցյալ կատարյալի առաջին գեմքում ունենում են «մ» վերջավորություն. օրինակ՝

Աստրախանի բրբ.	Աստապատի խոսվ. (Երև. բրբ.)
կընացի մ	գընացի մ
կընացի բ	գընացի բ
կընաց յ	գընաց յ
կընացին ք	գընացին ք
կընացի բ ջ	գընացի բ ջ
կընացին ը	գընացին ը

Ասացինք արդեն, որ Քեյվան-Շաղախի, Մեղրու, Ղարաղաղի, Գոմարի և Կարճևանի բարբառները անցյալ կատարյալի հիմքը չունեն. այդ ժամանակի փոխարեն գործածում են վաղակատարի ձևերը:

Ազուլիսի բարբառը անցյալ կատարյալը կազմում է երկու ձևով. Առաջին ձևը սովորական վերջավորությունների միջոցով է կատարվում, որ շատ հիշեցնում է գրաբարի ներկային. Կարծում ենք, որ դա նույն բանն է, ինչ որ Ուրմիայի բարբառի «ե» խոնարհման բայերի անցյալ կատարյալը, որը չունի ցոյական հիմք. Երկրորդ ձևը բաղադրյալ ձևն է, որ հատուկ է Ազուլիսին և նրա նման բարբառներին:

Ազուլիսի բարբառ	
Անցյալ կատարյալ	
1-ին ձև	2-րդ ձև
թակամ	թակալ ը մ
թակաս	թակալ ը ս
—	թակալ ա
թակաք	թակալ ը ք
թակաբ	թակալ ը բ
թական	թակալ ը ն

Որոշ բարբառներ, ինչպես, օրինակ, Զուղայի կամ Աստրախանի բարբառը, անցյալ կատարյալում բայերի խոնարհումը փոխում են. օրինակ՝ սասամ, սասար, սասավ և այլն. տըվամ, տըվար, տըվավ և այլն. սսի, սսիր, սսավ, սսինք, սսիք, սսին:

Ըղձական եղանակ

Աշխարհաբար գրական լեզուների ըղձական եղանակի ձևերը բարբառային նույնն են գրաբարի ներկայի ձևերի հետ, տարբերությունը միայն իմաստի մեջ է:

Գրաբար

Աշխարհաբար

գրեմ—գրում եմ	գրեմ—ցանկալի է՝ գրեմ
գրես—գրում ես	գրես— » » գրես
գրէ—գրում է	գրե (գրի) — » » գրի

Բարբառներում անփոփոխ պահպանվում են ըղձական ապառնի ժամանակի ձևերը. տարբերություն լինում է միայն հնչյունների մեջ ըստ այն բարբառի հատկության, որը կազմում է իր ըղձականը:

Այսպես, օրինակ՝ Թբիլիսիի բարբառը արատասանում է գրիմ, գրիս, գրէ և այլն: Արարատյան բարբառում՝ գրէմ, գրէս, գրի: Ուրմիայի բարբառում՝ կ՛ի բեմ, կ՛ի բես կ՛ի բի և այլն:

Բարբառների մեջ տարբերություն կա միայն ըղձական անցյալի ապառնի կազմության մեջ:

Ըղձական անցյալի ապառնին գտնում ենք համարյա բոլոր բարբառներում:

Այդ ժամանակը բացակայում է միայն Շաղախ-Քեյվանի և Ղարաղաղի բարբառներում:

Ուրմիայի, Մարաղայի, Խոյի, Կարճևանի, Հաղբութի և Ազուլիսի բարբառները ըղձականի անցյալի ապառնին կազմում են անալիտիկ սիստեմով, ավելացնելով ապառնիի վրա յուրաքանչյուրն իրեն հատուկ բառաձևերով: Օրինակ՝

Ումիա	Կարճևան	Մեղրի	Ազուլիս	Մարաղա
		ն գ ա կ ի		
կիբեմ	գ՛իբիմ	գ՛իբիմ	թակիմ	կ՛իբիմ
կիբես	գ՛իբիս	գ՛իբիս	թակիս	կ՛իբիս
կիբի	գ՛իբի	գ՛իբի	թակի	կ՛իբի
կիբենք՛	գ՛իբիք՛	գ՛իբիք՛	թակիք	կ՛իբինք՛
կիբեք	գ՛իբիք՛	գ՛իբիք՛	թակիք	կ՛իբեք՛
կիբեն	գ՛իբին	գ՛իբին	թակին	կ՛իբին

Հ ո գ ն ա կ ի

կ՛իբեմ էր	գ՛իբիմ	լէ	գ՛իբիմ	լւ	թակիմ նէլ	կ՛իբիմ	էր
կ՛իբես էր	գ՛իբիս	լէ	գ՛իբիս	լւ	թակիս նէլ	կ՛իբիս	էր
կ՛իբեք	գ՛իբի	լէ	գ՛իբի	լւ	թակի նէլ	կ՛իբեք	

կ'իբենք' էր	գ'իբիք' լէ	գ'իբիք' լն	թակիք նէլ	կ'իբինք' էր
կ'իբէք' էր	գ'իբիք' լէ	գ'իբիք' լն	թակիք նէլ	կ'իբէք' էր
կ'իբին էր	գ'իբին լէ	գ'իբին լն	թակին նէլ	կ'իբին էր

Պայմանական եղանակ

Պայմանական եղանակը բարբառների մեծ մասում կազմված է գրականին նման, այսինքն ըղձականի վրա ավելացվում է «կը» եղանակիչ:

Մի շարք բարբառներ պայմանական եղանակը տարբեր ձևով են կազմում:

Կարճևանի և Մեղրու բարբառները պայմանական եղանակի ապառնին կազմում են անորոշ գերբայով և օժանդակ բայով: Նույնն է նաև Ագուլիսի և Արեշ-Հավարիքի բարբառներում:

Պայմանական եղանակ

Ա պ ա ո ն ի

Ագուլիս	Կարճևան	Մեղրի	Արեշ-Հավարիք
թակիլ ըմ—կթակեմ	գ'իբիլ իմ—կը	գրեմ գրիլ իմ	գ'իբէլ ըմ—կգրեմ
» ըս	» իս	» իս	» ըս և այլն:
» ան	» ան	» ի	» է
» ըք	» իք	» իք	» անք
» ըք	» իք	» իք	» աք
» ըն	» ին	» ին	» ան

Կարճևանի, Մեղրու և Ագուլիսի բարբառները պայմանական եղանակի անցյալի ապառնին կազմում են իրենց հատուկ անալիտիկ սիստեմով:

Շաղախի, Ղարազաղի և Դգմարի բարբառները, որ պայմանական եղանակի ապառնին կազմում են սովորական «կը» մասնիկով, անցյալ ապառնին կազմում են անալիտիկ սիստեմով, օգտագործելով անորոշ գերբայը՝ օժանդակ բայի ներկայի ձևերը և «լն» կամ «լնլ» մասնիկ բառը:

Պայմանական անցյալի ապառնին

Ագուլիս	Կարճևան	Մեղրի
թակիլ ըմ նէլ (կթակէի)	գ'իբիլ իմ լէ	գրիլ իմ լն
» ըս »	» իս »	» իս »
» ա »	» ա »	» ի »
» ըք »	» իք »	» իք »
» ըք »	» իք »	» իք »
» ըն »	» ին »	» ին »

Շաղախ-Քեյվան

կ'իբիլ ըմ լնլ
» ըս »
» ա »

Արեշ-Հավարիք

գ'իբիլ էլ
» էլը
» էր

կ'իբիլ ըք լնլ	գ'իբիլ էյնք
էք »	» էյք
ըն »	» էյն

Հարկադրական եղանակ

Աշխարհաբար գրական լեզվի հարկադրական եղանակը կազմվում է ըղձական եղանակով և «պիտի» եղանակիչ բառով, որ գրվում է սովորաբար խոնարհվող բայից առաջ, օրինակ՝

Ըղձական եղանակ

Ապառնի	Անցյալի ապառնի	Հարկատար եղանակ	Անցյալի ապառնի
գրեմ	գրեի	պիտի գրեմ	պիտի գրեի
գրես	գրեիր	պիտի գրես	պիտի գրեիր
գրի	գրեր	պիտի գրի	պիտի գրեր

Հայերենի բարբառներում հարկադրական եղանակը կազմելու սկզբունքը գրական լեզվի նման է, տարբերությունն այն է, որ խոնարհվող բայը ենթարկվում է հնչյունական փոփոխության և կամ տարբեր է լինում եղանակիչը:

Երևանի և Թբիլիսիի բարբառը, սակայն, մի որոշ տարբերություններ կայացնում են: Երևանի բարբառը հարկադրական եղանակը կազմում է երկու ձևով՝ մեկ՝ գրական լեզվի նման (պլտի գ'ընմ, պլտի գ'ըրէս, պլտի գ'ըրի և այլն, պլտի գըրէի, պլտի գըրէիր պլտի գ'ըրեր և այլն), մեկ էլ յուրօրինակ ձևով՝ խոնարհվող բայը մնում է անորոշ գերբայի անփոփոխ ձևով, իսկ եղանակակիչն ստանում է դեմքի վերջավորություններ, այսինքն՝ խոնարհվում է. այդ դեպքում եղանակիչն ընկնում է խոնարհվող բայից հետո, օրինակ՝

Ապառնի

գ'ըրիլ պլտէմ	>	պիտի գրեմ
գ'ըրիլ պլտէս	>	պիտի գրես
գ'ըրիլ պլտի	>	պիտի գրի
գ'ըրիլ պլտենք	>	պիտի գրենք
գ'ըրիլ պլտէք	>	պիտի գրեք
գ'ըրիլ պլտէն	>	պիտի գրեն

Անցյալի ապառնի

գ'ըրիլ պլտէյի	>	պիտի գրեի
գ'ըրիլ պլտէյիր	>	պիտի գրեիր
գ'ըրիլ պլտեր	>	պիտի գրեր
գ'ըրիլ պլտէյենք	>	պիտի գրենք
գ'ըրիլ պլտէյեք	>	պիտի գրեք
գ'ըրիլ պլտէյեն	>	պիտի գրեն

Թբիլիսիի բարբառը ևս հարկադրական եղանակը կազմում է մեկ՝ գրական լեզվի նման, մեկ էլ՝ յուրօրինակ ձևով: Այդ բարբառի հարկադրական եղանակի կազմության յուրօրինակությունն այն է, որ եղանակիչը ստանում է բայական վերջավորություններ, խոնարհվում է՝ մնալով խոնարհվող բայից առաջագաս:

Հարկադրական անցյալի ապառնին լինում է երեք ձևով, մեկ՝ գրականին նման, մեկ՝ Երևանի բարբառին նման, մեկ էլ՝ բաղադրված ձևով, երբ եղանակիչն ու խոնարհվող բայը մնում են անփոփոխ, վերջում

ալեկանում են օժանդակ բայի անցյալի անկատար ձևերը, որոնք ծառայում են գեմք ցույց տալու համար (պիտի գրել էի):

Հարկադրական եղանակ

Թրիլիսի բարբառ

Ապառնի		Անցյալի ապառնի		
պիտիմ	գրել	պիտէյի գրել կամ	պիտի	գրել էի
պիտիս	»	պիտէյիբ	»	» էիբ
պիտէ	»	պիտէբ	»	» էբ
պիտինք	»	պիտէյինք	»	» էյինք
պիտիք	»	պիտէյիք	»	» էյիք
պիտին	»	պիտէյին	»	» էյին

Ղարաբաղի բարբառը հարկադրական եղանակը կազմում է գրականի նման. օրինակ՝ պիտի կիրիմ կամ պէտմա կիրիմ, սակայն Ղարաբաղի ենթաբարբառներում, հատկապես Շամշադինի, Ղազախի, Դիլիջանի խոսվածքներում հարկադրական եղանակի կազմութունը տարբեր է. Այդ խոսվածքներում հարկադրական եղանակը կազմում է խոնարհվող բայի անորոշ գերբայից, հարկադրական եղանակիչի մնացորդ «ա» — «դ» հնչյունից և օժանդակ բայից. օրինակ՝

Ապառնի	Անցյալի ապառնի
կըրել գէմ	կըրել գի (դէյի)
» գէս	» գիբ (դէյիբ)
» դի	» դէբ (դէբ)
» դէնք	» դինք (դէյինք)
» դէք	» դիք (դէյիք)
» դէն	» դին (դէյին)

Հարկադրական եղանակը կազմելու համար «պիտի» եղանակիչը իր լրիվ ձևով օգտագործվում է բարբառների մեծ մասում:

Համշենի բարբառում «պիտի» եղանակիչը դրվում է ետագաս, բայց առաջին գեմքում կորցնում է իր սկզբի «բ» հնչյունը, որից ստացվում է հետակյալ պատկերը:

բէրիմ	իդի	բէրէյի	բիդի
բէրիս	բիդի	բէրէյիբ	բիդիբ
	և այլն:	բէրէբ	բիդի
			և այլն:

Չեյթունի բարբառում հարկադրական եղանակիչն է «բիդի», իսկ Մարաշի բարբառում հարկադրականի համար օգտագործվում է նաև «գիդի» ձևը, որ «կուզեմ» բայն է. այդ դեպքում խոնարհվող բայը մնում է անփոփոխ (գիդիմ բիրի, գիդիս բիրի և այլն):

Համշենի բարբառում «պիտի» եղանակիչը գործ է ածվում «բի» ձևով և դրվում է բայի հետ միացած (բիշդօմ > պիտի երթամ, բիզգօմ > պիտի դամ):

Կիլիկիայի բարբառներում հարկադրական եղանակի ընդհանուր պատկերը կլինի հետևյալը.

Չեյթուն	Մարաշ	Հանրն	
բիդի կըյիմ	գիդիմ կըյի <sup>1</sup>	բիշդօմ <sup>2</sup>	բիզգօմ պիտի դամ
» կըյիս	գիդիս կըյի	բիշդօս	բիզգօս
» կըյէ	գիդէ կըյի	բիշդօ	բիզգօ
» կըյինք	գիդինք կըյի	բիշդօնք	բիզգօնք
» կըյէք	գիդէք կըյի	բիշդէք	բիզգէք
» կըյին	գիդին կըյի	բիշդօն	բիզգօն

Ակնա և Արաբկիրի բարբառներում իբրև հարկադրական եղանակիչ օգտագործվում է «դի» բառը, որ «պիտի» բառի կեսն է, ձայնավորով սկսվող բայերից առաջ օգտագործվում է պարզ «դ» հնչյունը:

Ապառնի	Անցյալի ապառնի
դի գ'ըրիմ դոնդիմ	դի գ'ըրէյի դոնդէյի
» գ'ըրէս դոնդէս	դի գ'ըրէյիբ դոնդէյիբ
» գ'ըրէ դոնդէ	դի գ'ըրէբ դոնդէբ
» գ'ըրինք դոնդինք	դի գ'ըրէյանք դոնդէյանք
» գ'ըրէք դոնդէք	դի գ'ըրէյիք դոնդէյիք
» գ'ըրին դոնդին	դի գ'ըրէյին դոնդէյին

Աերաստիայի բարբառում օգտագործվում է «բիդի» լրիվ ձևը, իսկ ձայնավորներից առաջ նաև «բի» բառը, որ «պիտի» բառի մասն է. օրինակ

բիդի գըրիմ, բի ընիմ	բիդի գըրէի, բի ընէի
և այլն.	և այլն.

Եվդոկիայի բարբառում օգտագործվում է «բիդի» բառը, իսկ ձայնավորով սկսվող բայերից առաջ՝ այդ բառի «բիդ» ձևը, օրինակ՝

բիդի գըրիմ, բիդ ընիմ	բիդի գըրէյի, բիդ ընէյի
և այլն.	և այլն. և այլն.

Բողոստոյի բարբառը հարկադրական եղանակիչը գործ է ածում «բըզբը» ձևով (պիտի որ ձևից), ձայնավորով սկսվող բառերից առաջ «բըզ» ձևով, օրինակ՝ բըզբը քըրէմ, բըզ անէմ և այլն. բըզբը քըրէի և այլն.

Տրապիզոնի, Պոլսի և Նոր-Նախիջևանի բարբառները «բիդի» եղանակիչն օգտագործում են և՛ առաջագաս, և՛ հետագաս. Օրինակ՝ բիդի գըրէմ, բիդի գըրէս և այլն, կամ գըրէմ բիդի, գըրէս բիդի, գըրէ բիդի և այլն.

Խարբեր-Երզնկայի բարբառն օգտագործում է «դը» եղանակիչը, իսկ ժխտականի մեջ «չըվըզը», որ «չպիտի» բառն է. օրինակ՝

Ապառնի	Անցյալի ապառնի
դը սիրիմ	դը սիրէյի
դը սիրիս	դը սիրէյիբ
դէ սիրէ	և այլն:

<sup>1</sup> Պիտի գըրիմ: <sup>2</sup> Պիտի երթամ: Հայ բարբառագիտութուն—14

Մոկաց բարբառում հարկադրական եղանակիչն է «տը» օրինակ՝

Ապառնի

Անցյալ ապառնի

տը գ'իրեմ և այլն:

տը գ'իրի և այլն:

Օրտուի և Հաճընի բարբառներում հարկադրականը կազմվում է «բի», իսկ ձայնավորից առաջ «բ» մասնիկով (Օրտու՝ բի գրիմ, բերթամ, բէնեմ):

Ողմի բարբառում հարկադրական եղանակը կազմվում է կը+պն բաղադրությունից, այսինքն պայմանական և հարկադրական եղանակիչների միացմամբ (պն>պիտի եղանակիչի մի մասն է), իսկ «տը» մասնիկով կազմում է սահմանական ապառնին: Անցյալի համար «կըպէր» — կըպիտէր:

Հարկադրական եղանակ

Ապառնի

Անցյալի ապառնի

կըպն գ'նմ

կըպէր գ'է

» գ'նս

» գ'էր

» գ'ն

» գ'էր

» գ'ննք'

» գ'էնք'

» գ'աք'

» գ'էք'

» գ'նն

» գ'էն

Նոր Նախիջևանի բարբառում օգտագործվում են «բիդ, բիդ օր», «բիդուր» և «բիդըր» եղանակիչները: Վերջին երեքը առաջացել են «պիտի օր» կապակցությունից:

Սուշավայի բարբառում օգտագործվում է կամ «բիդուր» եղանակիչը, որ «պիտի օր» կապակցությունն է, կամ «բի» եղանակիչը, որ «պիտի» բառի առաջին կեսն է: Ընդհանուր պատկերը լինում է հետևյալը:

Ապառնի

Անցյալի ապառնի

բիդուր գըրիմ կամ բի գրիմ

բիդուր գըրէյի կամ բի գըրէյի

» գըրիս և այլն.

» գըրէյիբ » գըրէյիբ

» գըրէ

» գըրէր » գըրէր

» գըրինք

» և այլն. և այլն.

» գըրիք

» գըրին

Քեսաբի բարբառում «բըդըր» (պիտի օր) ձևը կորցնում է «դ»-ն և դառնում է «բըր», ապա բ-ն փոխարինվում է «մ»-ով, ստացվում է «մըր»:

Ապառնի

Անցյալ ապառնի

բըր պննէմ կամ՝ մըր պննեմ.

բըր պննէր է կամ՝ մըր պններ է

բըր պննես և այլն.

» » էս և այլն.

բըր պննա

» »

և այլն.

և այլն.

Սվեդիայի բարբառում լինում է միայն «բըր» մասնիկով:

Ամասիայի բարբառում լինում է՝ պուտու պակեմ, պուտու պակես<sup>1</sup> և այլն:

Ջուղայի բարբառում օգտագործվում է «պիտի» եղանակիչը, սակայն գործածվում է նաև «պիտլա» կամ ուղղակի «պլա» ձևը, հաճախ նաև «պլա-կա» ձևը, հետևաբար ստացվում է հարկադրական եղանակի կազմության հետևյալ պատկերը:

Ապառնի

պլա	պիտլա	պլա	պլակա	գ'ըրեմ
»	»	»	»	գ'ըրես
»	»	»	»	գ'ըրի
»	»	»	»	գ'ըրենք
»	»	»	»	գ'ըրէք
»	»	»	»	գ'ըրեն

Անցյալի ապառնի

պլա	պլա	պլա	պլակա	գ'ըրի
»	»	»	»	գ'ըրիբ
»	»	»	»	գ'ըրէր
»	»	»	»	գ'ըրինք
»	»	»	»	գ'ըրիք
»	»	»	»	գ'ըրեն

Մինչև այժմ եղած դիտողություններից կարելի է նկատել, որ հարկադրական եղանակ կազմելու համար բարբառները օգտագործում են «պիտի» եղանակիչը զանազան ձևափոխություններով, մերթ կրճատում են մինչև «պի», մերթ կրճատում են մինչև «տի», «տը», «դը», «բիդ» և այլն: Միայն մի բարբառ, որ է Մարաղայի բարբառը, հարկադրական եղանակը կազմում է մի առանձին բառով՝ «ուզել» բառով: Բացի այդ բարբառից հայերեն լեզվի մեջ կան մի շարք բարբառներ, որոնք հարկադրական եղանակը կազմում են տարբեր եղանակիչով կամ տարբեր ձևերով: Նախորդ ձևերին նման է կազմում Արդվինի բարբառը, որը «պիտի» բառը ուղիղ երկու կես է անում: Վերջին կեսը՝ «տի», օգտագործում է գրական խոնարհման համար (տի գրիմ), իսկ առաջին կեսը՝ (պի) օգտագործում է միտական խոնարհման համար, որից ստացվում է հետևյալը:

Դրական խոնարհում

տի գըրիմ, տի գըրէյի	կամ՝ տէյի	գըրի
տի գըրիս, տի գըրէյիբ	կամ՝ տէյիբ	գըրի
տի գըրէ, տի գըրէր	կամ՝ տէր	գըրի
	և այլն.	և այլն.

Ժխտական խոնարհում

չպի գըրիմ	չպի գըրէյի	չպէյի	գըրի
» գըրիս	» գըրէյիբ	չպէյիբ	»
» գըրէ	» գըրէր	չպէր	»
և այլն.	և այլն.		և այլն.

<sup>1</sup> Հ. Ա. Ն. Ո. Յ. Ն. Հայոց լեզվի պատմություն, 1951 թ.:

Ազուլիսի բարբառը հարկադրական եղանակը կազմում է «մնտնմ ն» կամ «մնտնն ն» եղանակիչներով, Կարելի է ենթադրել, որ «մնտնմ ն» եղանակիչը առաջացել է «պիտում ա» («պիտի» բառի խոնարհված ձևի երրորդ դեմքից՝ պիտում եմ, պիտում ես պիտում ա ձևից), որ առնչմանության օրենքով դարձել է «մնտնմն»: Ղարաբաղի բարբառում լինում է՝ բէդմ ա > պէտմա, կարող էր ստացվել «պիտումա»:

«Մնտնն ն» ձևը առաջացել է «պիտի լնն» ձևից, որ «մնտնմ ն» ձևի նմանությամբ դարձել է մնտնն ն: Յղնայի ենթաբարբառում հէնց լինում է «մէտում ա», որ «պէտումա» ձևից է, որից և Ազուլիսի բարբառի «մնտնմ ն» ձևը, իսկ նույն Յղնայի բարբառի «մէտիլ ն» եղանակիչից ստացված է «մնտնն ն» ձևը Ազուլիսի բարբառում: Հարկադրական եղանակի ընդհանուր պատկերը Ազուլիսի բարբառում կլինի հետևյալը.

Ապառնի		Անցյալի ապառնի	
մնտնմ ն	կամ մնտնն ն	թակիմ	նէլ
»	»	թակիս	»
»	»	թակի	»
»	»	թակիք՝	»
»	»	թակիք՝	»
»	»	թակին	»

Յղնայի ենթաբարբառում՝

Ապառնի	
մէտիլ ն	կամ մետում ա
»	»
»	»
	և այլն:

Մեղրու բարբառում օգտագործվում է «մէտիլ» եղանակիչը ի տարբերություն Յղնայի բարբառի «մէտիլ ն» ձևից: Հասկանալի է, որ այդ «մէտիլ» ձևը նույն ծագումն ունի, ինչ որ Յղնայի «մէտիլ ն» ձևը, սակայն «մէտիլ» ձևի գործածությունը հատուկ է միմիայն Մեղրու բարբառին:

Ապառնի		անցյալի ապառնի	
մէտիլ	գիրիմ	մէտիլ	գիրիմ լնն
»	գիրիս	»	գիրիս լնն
»	գիրի	»	գիրի լնն
	և այլն.		և այլն.

Կարճևանի բարբառում հարկադրական եղանակիչն է «մնլնն», որն առաջացել է «պիտի լինել»՝ համապատասխանաբար՝ «պիտի լնն» կապակցությունից, ըստ որում «պէտումա»-«մէտումա» ձևի նմանողությամբ ստացվել է «պէտի լնն» > «մէտի լնն» ձևը, որտեղ «է»-ի հնչյունափոխությունը «ա»-ի և «լ»-ի նախորդող «ի»-ի անկումը տվել է «մնտնն» ձևը, «տ»-ն ասիմիլացիայի ենթարկվելով «լ»-ին տվել է մնլնն:

Օրինակ՝

Իս մնլննցում — ես պիտի տեսնեմ:

Հազրութի բարբառում լինում է երկու ձևով. մեկ սովորական նախադաս «պիտի» եղանակիչով (բիդի կիրիմ, բիդի կարթիմ), մեկ էլ յուրօրինակ ձևով, ըստ որի գործածվում է անկատար գերբայի ձևը և «պիտի» եղանակիչի հետագաս խոնարհվող ձևերը. Պատկերը լինում է հետևյալը.

Ապառնի		Անցյալ ապառնի	
բիդի կիրիմ կամ կիրիս բիդիմ	բիդի կիրի կամ կիրիս բիդի	բիդի կիրի կամ կիրիս բիդի	բիդի կիրի կամ կիրիս բիդի
» կիրիս կիրիս բիդիս	» կիրիս կիրիս բիդիս	» կիրիս կիրիս բիդիս	» կիրիս կիրիս բիդիս
» կիրի կիրիս բիդի	» կիրի կիրիս բիդի	» կիրի կիրիս բիդի	» կիրի կիրիս բիդի
	և այլն.		և այլն.

Շաղախ-Քեյվանի, Ղարաբաղի, Իգմարի բարբառները հարկադրական ապառնին կազմում են սովորական ձևով (բիդի կիրիմ, գիրիմ), բայց անցյալի ապառնին կազմում են չորս տանձին բառերով, որոնցից առաջինն է «բիդի», երկրորդը՝ խոնարհվող բայի անորոշ գերբայը, երրորդը օժանդակ բայը և չորրորդը՝ անցյալ ժամանակ կազմող «լնն» անփոփոխ բառմասնիկը, որից ստացվում է հետևյալը.

Ապառնի		Անցյալի ապառնի	
բիդի կիրիմ,	բիդի կիրի (գիրի) ըմ լնն	բիդի կիրի (գիրի) ըմ լնն	բիդի կիրի (գիրի) ըմ լնն
» կիրիս	» » ըս »	» » ըս »	» » ըս »
» կիրի	» » ըս »	» » ըս »	» » ըս »
	և այլն.		և այլն.

Բուրբ բարբառները հարկադրական եղանակները կազմելու համար եղանակիչը ավելացնում են ըղձականին, միայն Շաղախի բարբառն է հարկադրականի անցյալի ապառնիում «պիտի» եղանակիչը ավելացնում պայմանական անցյալ ապառնին, որը Շաղախի բարբառում լինում է կիրիլ ըմ լնն—կգրէի: Շաղախի բարբառը ըղձական անցյալի ապառնի չունի:

Մարաղայի բարբառում՝ հարկադրական եղանակը կազմվում է բոլորովին տարբեր եղանակիչներով, որ է «կիպտնն» բառը: Անցյալը կազմում է իրան հատուկ «էր» մասնիկ-բառով.

Ապառնի		Անցյալի ապառնի	
կիպտնն կիրիմ	կիպտնն կիրիմ էր	կիպտնն կիրիմ էր	կիպտնն կիրիմ էր
» կիրիս	» կիրիս էր	» կիրիս էր	» կիրիս էր
» կիրի	» կիրի էր	» կիրի էր	» կիրի էր
	և այլն.		և այլն.

Մարաղայի բարբառն իրրև հարկադրական եղանակիչ օգտագործում է նաև ազրբեջանական գրանցի (գրանցի) բառը: Օրինակ՝ գրանցի էթնմ—պետք է գնամ, գրանցի կիրիմ—պետք է գրեմ:

Ն. Ա ճ ա յ ա ն, Քննություն Մարաղայի բարբառի, 1926 թ., երեսն:

Մարաղայի բարբառի «կիպան» եղանակիչը կազմված է «կը» և «պիտի» եղանակիչներից, որոնք միանալով և որոշ հնչյունական փոփոխութեան ենթարկվելով սովել են «կիպան» ձևը: Այս «կիպան» եղանակիչը միանգամայն բացատրում է և՛ Ողմիի «կըպան» եղանակիչը, և՛ Ուրմիայի բարբառի մեջ գործածվող «կըբար» կամ «տըկըբ» եղանակիչը, որ կազմված է «կը»-«պիտի» կամ «պիտի»-«կը» կրկնակի եղանակիչներից:

Ուրմիայի բարբառը հարկադրական եղանակը կազմում է ըզձականից և վերոհիշյալ «կըբար» կամ «տըկըբ» բաղադրյալ եղանակիչից: Հարկադրական անցյալի ապառնի եղանակը կազմվում է ըզձականի անցյալի ապառնի ձևերից:

Ապառնի				Անցյալի ապառնի			
կըբար	կամ	տըկըբ	կըբեմ	կըբար	կամ	տըկըբ	կըբեմ
»	»	»	կըբես	»	»	»	կըբես
»	»	»	կըբի	»	»	»	կըբի
			և այլն.				և այլն:

Ինչպես տեսանք բայական կառուցվածքի ամբողջ ուսուցանանքում, հայերեն բարբառների դիմավոր և անդեմ կառուցվածքը գրաբարի ձևերի զարգացումն է կամ այնպիսի նորագոյացություն, որ բխում է հայերենի ընդհանուր սխառնից: Տարբեր երևացող ձևերը միայն հայերեն լեզվի զանազան տարբերակներն են, որ վկայում են այն նշմարտության մասին, թե բարբառները ընդհանուր լեզվի նյութավորումներն են:

Ք. ՀԱՅ ԲԱՐՐԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅՅԵՐԵՆԻ «ՈՒՄ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐՐԱՌՆԵՐԸ

«Ում» ճյուղի բարբառների թիվը, ինչպես դեռ 1911 թվին որոշել է Հ. Աճառյանը, ընդամենը 7 է: Նրանից հետո, չնայած երկարատև որոնումներին, այդ ճյուղի որևէ նոր բարբառ չհայտնաբերվեց: Թավրիզի<sup>1</sup> բարբառը, որ որոշ տարբերություններ ունի երևանի բարբառից, զգալի չափով նման է Աստրախանի բարբառին և, հավանական է, նույնը լինի Մոզգոկի բարբառի հետ: Դժվար է այժմ վճռականապես անվանել այն բարբառ, սակայն նա որոշ հետաքրքրական առանձնահատկություններ ունի, որոնք իրավունք են տալիս որոշ վերազանություններ կոչել այն Թավրիզ-Մոզգոկյան բարբառ: Թավրիզ-Մոզգոկյան բարբառի առանձնահատկությունները երևում են հատկապես բայերի կառուցվածքի մեջ, որոնք հետևյալն են:

1. Անցյալ կատարյալում «ե» խոնարհման բայերն անցյալական են և կրավորակերպ վերջավորություն ունեն, օրինակ՝ խօսամ, խօսար, խօսավ, խօսանք, խօսաք, խօսան, կրամ, կրար, կրավ, կրանք, կրաք, կրան և այլն: Այսպես է Աստրախանի բարբառը: Օժանդակ բայի անցյալի ձևերը արմատական «է» ձայնավորը կորցնում են:

2. Բոլոր անցյալների առաջին դեմքն ունենում է «մ» վերջավորություն: Օրինակ՝ կրամ—գրեցի, խմամ—խմեցի, ասամ—ասեցի, կրիմ—գրեցի, կարդիմ—կարդայի, ես իմ—ես էի և այլն:

3. Վաղակատար դերբայն ունենում է «ր» վերջավորություն: Օրինակ՝ կրէր եմ, կրէր ես, կրէր ա և այլն, Կարդացէր եմ, կարդացէր ես, կարդացէր ա և այլն:

4. Ապառնի դերբայն ունենում է երբեմն «ացուք» վերջավորություն: Օրինակ՝ տալացուք եմ, տալացուք ես, տալացուք ա և այլն:

5. Հարկադրականը կազմում է «պետքա» եղանակիչով. օրինակ՝ պետքա կրեմ, պետքա կրես, պետքա կրի և այլն: Պետքա կրիմ, պետքա կրիր, պետքա կրէր և այլն: Բացի այդ ամենը, Թավրիզ-Մոզգոկի բարբառը բաղաձայնական սխառնում կատարում է առաջին անդաշարժը, որով արմատապես տարբերվում է Արարատյան բարբառից:

Այդ բոլորից հետո «Ում» ճյուղին պատկանող բարբառներն են հետևյալները՝ Արարատյան, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի, Նոր-Ջուղայի, Ազուլիսի և, վերապահություններով, Թավրիզ-Մոզգոկի ու Թբիլիսիի: Սակայն «Ում» ճյուղի ամենաբնորոշ բարբառը մնում է Արարատյան բարբառը:

<sup>1</sup> Բարբառի մասին այս նախնական ծանոթությունը բաղել ենք Օ. Եզանյանի մեզ սված նյութերից:

«Ում» ճյուղի բարբառներն ունեն հետևյալ ընդհանուր հատկանիշները:

1. Ներկան կազմում են «ոււմ» վերջավորութիւնն ունեցող անկատար դերբայով, որը հնչյունափոխութեան հետևանքով և կամ ներդաշնակութեան օրենքով հաճախ դառնում է իմ, ըմ, ամ, ում և այլն:

«Ոււմ» ճյուղի բոլոր բարբառներն ունեն ներգոյական հոլով, որի վերջավորութիւնն է «ոււմ»:

Բացի այս երկու հիմնական հատկանիշներից, «Ոււմ» ճյուղի բարբառները բացառականում ունեն «ից» վերջավորութիւնն: Սակայն այս հատկութիւնն ունեն միայն Երևանի, Աստրախանի, Ազուլիսի, Թավրիզ-Մոզդուկի և կիսով չափ Նոր-Ջուղայի բարբառները: Ղարաբաղն ու Շամախին ունենում են «ան» վերջավորութիւնն, իսկ Թբիլիսին՝ «էն» կամ «էմէն» վերջավորութիւնն: Այսպիսով, այս հատկութիւնը համընդհանուր հատկութիւն չէ:

4. «Ոււմ» ճյուղի բարբառներն ունեն օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերը, ըստ որում անցյալի ձևերի մեջ բարբառների մեծ մասում արմատական «է»-ն սղվում է և փոխանակ էի, էյիք, էք և այլն, լինում է ի, իք, էք և այլն:

Սակայն Ազուլիսի բարբառը այդ հատկութիւնը չունի, օժանդակ բայի անցյալի ձևերը այդ բարբառում բացակայում են, որով այդ բարբառը նման է «Ս» ճյուղի հիմնական բարբառներին:

5. «Ոււմ» ճյուղի բոլոր բարբառներն ունեն վաղակատար և հարակատար ձևերը, ըստ որում գործածութեան տեսակետից գերակշռութիւնը վաղակատարի կողմն է, այդ երկու ձևերը միմյանցից որոշակի տարբերակված են: Բացառութիւն է կազմում միմիայն Ազուլիսի բարբառը, որի հարակատար ձևն ունի և՛ հարակատար, և՛ վաղակատար իմաստ: Այդ հատկութեամբ այդ բարբառը նույնպես նման է «Ս» ճյուղի հիմնական բարբառներին:

6. «Ոււմ» ճյուղի բարբառներն ունեն անցյալ կատարյալի հատուկ ձևեր, բացառութիւն է կազմում Ազուլիսի բարբառը, որն իր այդ հատկութեամբ նման է «Ս» ճյուղի հիմնական բարբառներին:

Ինչպես տեսնում ենք, «Ոււմ» ճյուղի բարբառներն ունեն միայն երկու ընդհանուր հատկութիւն՝ «ոււմ» վերջավորութեամբ անկատար դերբայ և ներգոյական հոլովի «ոււմ» վերջավորութիւնը. մյուս հատկութիւնները այդ բարբառներում համընդհանուր չեն:

«Ոււմ» ճյուղի բարբառները բաղաձայնական սիստեմով նույնպես տարբեր են: Երևանի և Ջուղայի բարբառների բաղաձայնական սիստեմը քարաստիճան է, Ղարաբաղի, Շամախու, Թավրիզ-Մոզդուկի և Աստրախանի բարբառների բաղաձայնական սիստեմը երկաստիճան ձայնեղազուրկ է, Թբիլիսիի և Ազուլիսի բարբառների բաղաձայնական սիստեմը անտեղաշարժ եռաստիճան է:

Բացի այս, «Ոււմ» ճյուղի բարբառներից յուրաքանչյուրն ունի նաև սեփական առանձնահատկութիւններ:

Այդ առանձնահատկութիւնները երբեմն այնպիսին են, որ հակասում են ամբողջ ճյուղի ընդհանուր բնույթին:

Այսպես՝ Ազուլիսի բարբառի մի շարք գծեր (օժանդակ բայի անցյալի ձևերի բացակայութիւն, վաղակատարի գործածութիւնն անցյալ կատարյալի իմաստով և այլն) այդ բարբառը նման են դարձնում ավելի «Ս» ճյուղին, քան «Ոււմ» ճյուղին:

Թբիլիսիի բարբառը ներկայի ձևը կազմում է երկու տեսակ՝ և՛ «ոււմ» վերջավորութիւնն ունեցող դերբայով, և՛ «կու» մասնիկով: Օրինակ՝ կարդում իմ—կու կարդամ, ասում իմ—կոսիմ, առնում իմ—կոնիմ, ածում իմ—կոծիմ և այլն: Բացի այս, Թբիլիսիի բարբառը բացառականը կազմում է «էն» վերջավորութեամբ, հաճախ նաև՝ «էմէն» վերջավորութեամբ, իսկ գոյականների հոգնակին ենթարկվում է «ու» հոլովման, որով նա նմանվում է «Կը» ճյուղի բարբառներին: Կարելի է առանց կասկածի ասել, որ Թբիլիսիի բարբառը «Կը» և «Ոււմ» ճյուղերի միջնուղային բարբառ է:

Նոր Ջուղայի բարբառն աչքի է ընկնում մի հիմնական տարբերութեամբ. նրա բայերի մի զգալի մասի անկատար դերբայն ունենում է «ման» վերջավորութիւնն, այսինքն՝ նրսուման ամ—նստում եմ, գովման ամ—գալիս եմ և այլն:

Հավանական է, որ անկատար դերբայի «ոււմ» վերջավորութիւնն այս բարբառում գիտակցվել է որպես սկզբնական ձև, ապա ենթարկվել է հոլովման ու նրա տրական ձևն իր նախգիրով առնվել է իբրև ներգոյական ձև. այսպես՝ նրսուման > նստման > ի նստման > նստման ամ, գալ > գալում > գալման > ի գալման ամ > գովման ամ և այլն:

Ղարաբաղի բարբառը երկու հիմնական հատկութեամբ տարբերվում է «Ոււմ» ճյուղից. մեկ՝ որ նա բացառականը կազմում է «ան» վերջավորութեամբ և, երկրորդ, որ նա իր ապառնին կազմում է «ական» վերջավորութիւնն ունեցող դերբայով (կըրթըլական, կ'իքըլական):

Բացի այս, «Կը» ճյուղի բարբառներին նման Ղարաբաղի բարբառը սեռականում ստանում է հոգ:

Այսպես է նաև Շամախու բարբառը, բացի ապառնի ժամանակի ձևից:

Այսպիսով, առանց վերապահութեան կարելի է ասել, որ ճյուղերի բաժանումը վերջին հաշվով պայմանական է, ճյուղային հատկութիւնները երբեմն լինում են խիստ փոքրաթիվ, և միևնույն ճյուղի պատկանող բարբառները, բացի ճյուղի հիմնական գծերից, ֆնացած ամեն ինչով միմյանցից տարբերվում են. բացառութիւն է միայն «Ս» ճյուղը, որի ճյուղային ընդհանուր գծերը բազմաթիվ են և շատ ուժեղ արտահայտված. երբեմն մի ճյուղի բարբառը, բացի իր ճյուղային հատկութիւններից մնացած բաներով նմանվում է մի այլ ճյուղի, ինչպես, օրինակ, «Ոււմ» ճյուղին պատկանող Ազուլիսի բարբառը, որն իր շատ հատկութիւններով նման է «Ս» ճյուղի բարբառներին, իսկ «Ս» ճյուղին պատկանող Ուրմիայի բարբառը մի հատկութեամբ միայն նման լինելով «Ս» ճյուղին, այն է՝ անկատար դերբայի կազմութեամբ, մնացած բոլոր հատկութիւններով նման է «Է» ճյուղի բարբառներին և խիստ տարբեր «Ս» ճյուղի բարբառներից:

«Ոււմ» ճյուղի բարբառները տարբեր են միմյանցից նաև հնչյունական կազմութեամբ: Ինչպես տեսանք վերևում, բաղաձայնական սիստեմով դրանք լինում են քառաստիճան, եռաստիճան անտեղաշարժ և երկաստի-

ճան ձայնեղազուրկ: Առանձնապես մեծ է նրանց տարբերությունը ձայնավորների մեջ. ամենից շատ տարբերություն ունի Ազուլիսի բարբառը: Կարելի է ասել, որ Ազուլիսի բարբառը, որ բաղաձայնական սխառեմով հավատարիմ է ընդհանուր լեզվին, ձայնավորների գործածությունը համարյա նման ոչինչ չունի: Ազուլիսի բարբառի մեջ հին ընդհանուր լեզվի՝ գրաբարի, ձայնավորները ենթարկվել են ամեն տեսակ փոփոխության:

Այսպես, ասենք, ա-ն վերածվել է հետևյալ հնչյունների՝ օ, ու, օյ, օ, ր, է, ու, ալ. «ե»-ն վերածվել է հետևյալ հնչյունների՝ ի, ա, օ, ր, յը, ու, օ. «ի»-ն վերածվել է հետևյալ հնչյունների՝ ր, ու, ալ, է, ու, ուլ. ո-ն վերածվել է հետևյալ հնչյունների՝ է, օ, ու, ր, օ:

Այդ պատճառով էլ հայերեն բառերը Ազուլիսի բարբառում անձանաչելի են, ուստի և Ազուլիսի բարբառը համարյա անհասկանալի է մյուս բոլոր հայերի համար:

Ձայնավորի փոփոխության շատ դժերով Ազուլիսի բարբառը նման է կիլիկիայի Անտիոքի շրջանի բարբառներին:

Ավելի պակաս, բայց զգալի չափով փոփոխել է ընդհանուր հայերենի ձայնավորները Ղարաբաղի բարբառը:

Մի քիչ ավելի պակաս փոփոխության է ենթարկել Շամախու բարբառը: Փոփոխություններ ունի նաև Զուղայի բարբառը:

Թբիլիսիի բարբառը փոխել է ե և ո ձայնավորները (դեղ > դիղ, փոը > փուը):

Անփոփոխ պահպանված են ընդհանուր հայերենի ձայնավորները Արարատյան, Աստրախանի և Թավրիզ-Մոզգոկյան բարբառներում, դրա հետևանքով Արարատյան բարբառը բոլորին ավելի հասկանալի է, քան մյուսները:

Հինց դա էլ եղել է պատճառը, որ աշխարհաբար գրական լեզուն ավելի նման է դուրս եկել Արարատյան բարբառին, որն այդ լեզուն կազմելու մեջ նաև մեծ դեր է խաղացել:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԿԱՄ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐՔԱՌԱՐ

«Ում» նյութի քառաստիճան բաղաձայնական սխառեմի բարբառ

Արարատյան կամ Երևանի բարբառի հետքերը գտնում ենք հին գրականության, հին աղբյուրների մեջ սկսած V դարից: Առաջինը գրանցից Ղազար Փարպեցին է (V դար): Շատ ավելի ուշ, բայց որոշ աղբյուր է Վարդան Բարձրաբերդցին, որի մոտ գտնում ենք հետևյալ սճը. «Ամենու սիրան հետ քեզ լաւ են և քեզ աղօթք են առնում»:

Արարատյան բարբառից այստեղ նկատելի է անկատար գերբայը, գերբայական խոսարհումը և նախադասության կառուցվածքը, որտեղ օժանդակ բայն ընկնում է գերբայից առաջ:

Արարատյան բարբառի հետքերը երևում են նաև հաջորդ դարերի հեղինակների մոտ, բայց և ամենամեծը հետքերը գտնում ենք Զաքարիա Ազուլեցու «Օրադրի» լեզվի մեջ (1647—1681), Ինչպես իր անունն է ցույց տալիս՝ Զ. Ազուլեցին (ազուլիցի) պետք է գրեր Ազուլիսի բարբառով, եթե գրաբարը լավ չգիտեր, կամ գրաբարի հետ պիտի խառներ Ազուլիսի

բարբառի տարբերը: Սակայն նա գրել է մի լեզվով, որ բավական մոտ է Արարատյան բարբառին, չնայած այլ բարբառների խարնուրդներ էլ ունի: Դա նշանակում է, թե XV—XVIII դարի հայերեն կենդանի ընդհանուր լեզուն մշակվում է բարբառների և հատկապես Արարատյան բարբառի օգտագործումով: Հիմք չունենք չընդունելու, որ Ազուլեցու լեզուն ժամանակի ընդհանուր լեզուն էր, որովհետև ժամանակակից այլ հեղինակներ գրում են համարյա նույն լեզվով: Այդ լեզուն միջին հայերենի հաջորդ փուլն է, երբ գրաբարի սպեցիֆիկ տարրերը զգալի պակասում են, ուժեղանում են բարբառների սպեցիֆիկ տարրերը ընդհանուր լեզվի մեջ, որոնք այդ ընդհանուր լեզվին բարբառախառն ու գրաբառախառն լեզվի ընդհանուր երանգ են տալիս:

Իրրև օրինակ վերցնենք Ազուլեցու լեզվից մի նմուշ:

«Այս Ը տարի այ, օսմանցին Վենետիկին թուլին յետ Գրիտունն բ բէրթի վերայ կուիւ այ. Այս վեղիրս գնաց բ տարի նստաւ բ բերթն առաւ»:

Արարատյան բարբառով խոսում են Արարատյան գաշտում, Վայոց ձորում, Նոր Բայազեդի, Լոռու և Սպիտակի շրջաններում: Գրականությունից հայտնի է, որ Արարատյան բարբառով խոսում էին Սուրմարիի ու Կողզվանի շրջանները: Ինչպես տեսնում ենք, Արարատյան բարբառը խոսվել է ընդարձակ տարածության վրա (պատմական Այրարատում), սակայն այդ տարածության վրա այժմ բնակվող հայությունը խոսում է ոչ միայն Արարատյան բարբառով, Բագմաթիվ գաղթեր պատճառ են դարձել, որ Արարատյան բարբառով խոսողների կողքին կան այժմ հայերենի բազմաթիվ բարբառներ, օրինակ՝ էջմիածնի շրջանում 27 գյուղից 14 գյուղ խոսում է Արարատյան բարբառով, 8 գյուղ խոսում է Ուրմիայի բարբառով, 3 գյուղ խոսում է Մշո բարբառով, 2 գյուղ խոսող բարբառով և այլն:

Վայոց ձորի շրջանում Արարատյան բարբառով խոսողներին կոչում են «հին հայեր», իսկ Ուրմիայի, Սոյի և այլ բարբառով խոսողներին կոչում են «թագա հայեր», թեև այդ հայերը հարյուր տարուց ավելի է, որ գաղթել եկել են այստեղ:

Վերևը նշված տարածության վրա բնակվողների մեծագույն մասը խոսում է տարբեր բարբառներով, ուստի Արարատյան բարբառով խոսողները կղզիացած, հատ ու կենտ ընկած են տարբեր բարբառների մեջ: Արարատյան բարբառով խոսող քիչ թե շատ մեծ քանակությամբ գյուղեր գտնում ենք Երևանի, Կոտայքի, Վաղարշապատի և Աշտարակի շրջաններում: Արարատյան բարբառով խոսում են լոռեցիները. Լոռին է միակ վայրը, որտեղ Արարատյան բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն, սակայն լոռեցիների խոսվածքը, պատկանելով Արարատյան բարբառին, միաժամանակ և ունի իր մեջ թույլ տարրեր Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներից, այնպես որ այն կարելի է անվանել Արարատյան ենթաբարբառ:

Արարատյան բարբառը, խառնվելով Մշո բարբառի արևելյան և հյուսիս-արևելյան (Արճեղ) հատվածին, տվել է Նոր-Բայազեդի ենթաբարբառ-

<sup>1</sup> Զաքարիա Ազուլեցու օրագրությունը, էջ 88. ԽՍՀՄ ԳՍ Հայկ. ֆիլիալ. Երևան, 1938 թ.: («Այս 8 տարի է, օսմանցին Վենետիկի դոժի հետ կրեական 2 բերդի վրա կրուվում է: Այս վեղիրը գնաց 2 տարի նստավ, 2 բերդն առավ»):



որ, որին պատկանում են նաև Ախտայի շրջանի մի շարք գյուղերի խոսվածքները: Արարատյան բարբառի ենթաբարբառ է համարվում Աստարատ գյուղի խոսվածքը, որի մեջ կա խառնուրդ Ն.-Ջուղայի բարբառից:

Արարատյան բարբառով մաքուր խոսվածք կարելի է գտնել Փարպի գյուղում, Հոկտեմբերյանի շրջանի գյուղերում, որովհետև Երևանի խոսվածքը գրական լեզվի ազդեցությամբ ենթարկված է խիստ փոփոխության և մասնաճյուղ վրա է: Վաղարշապատի և Քանաքեռի խոսվածքները որոշ տարբերություն ունեն Երևանի բարբառից: Մի քիչ ավելի հարազատ է Երևանի բարբառին Նորքի խոսվածքը: Աշտարակի և Օշականի խոսվածքները միմյանց նման լինելով՝ որոշ տարբերություն ունեն Երևանից, որոշ տարբերություն են ներկայացնում նաև Ազիզբեկովի շրջանի գյուղերի խոսվածքը:

Արարատյան բարբառի մի հատված է նաև այժմյան Թբիլիսիի խոսվածքը, որը տեղափոխվել է այնտեղ Երևանից գնացած գաղթականության միջոցով:

Թբիլիսիի խոսվածքի մեջ (Հավարար թաղում) նկատվում է Թբիլիսիի բարբառի հետքերը, որի հետևանքով էլ այժմյան Թբիլիսիում գտնվող Արարատյան բարբառը որոշ թբիլիսյան երանգ է ստացել:

Արարատյան բարբառը Դիլիջանի և Ղազախի ու Շամշադինի շրջանում խառնվելով Ղարաբաղի բարբառի հետ կամ ազդելով այդտեղի Ղարաբաղի խոսվածքներին վրա՝ զգալի չափով փոփոխել է Ղարաբաղի բարբառի ընդհանուր պատկերը, որի հետևանքով դժվար է լինում որոշել, թե այդտեղի բարբառները Երևանի՞ն են պատկանում, թե Ղարաբաղին: Կարծում ենք, որ Գանձակի (Կիրովաբադի) ենթաբարբառի տարբերությունները Ղարաբաղի բարբառից նույնպես բխում են կամ բացատրվում են Արարատյան բարբառի ազդեցությամբ: Էջմիածնի շրջանի Ջեյվա գյուղի խոսվածքում նկատվում է մի արտակարգ երևույթ՝ օժանդակ բայի անցյալի ձևերը բացակայում են, փոխարինված են «էր» անփոփոխ բառ-մասնիկով, որ ավելանում է օժանդակ բայի ներկայի ձևերի վրա, ինչպես «է» ճյուղի բարբառներում: օրինակ գրքում էմ>գրքմ էմ էր (գրում էի), գրել էմ—գրել էմ էր (գրել էի), գրելու էմ—գրելու էմ էր (գրելու էի), գրեմ—գրեմ էր (գրեի), կգրեմ—կգրեմ էր (կգրեի) և այլն:

Արարատյան բարբառի հնչյունական կազմությունը

Արարատյան բարբառի շեշտը նախադերձին վանկի վրա է լինում:

Արարատյան բարբառն ունի վեց պարզ ձայնավորներ, որոնք են՝ ա, է, ի, բ, օ և ու: Բարբառումն չկան երկբարբառային արտասանությունն «ա» և «ե» հնչյունները: Միայն Աշտարակի խոսվածքում, ինչպես և Լոռու շրջանում լսվում է «ու», արտասանությունը: օրինակ՝

Փուէղ>փող, ֆուէչի>հոգի, վուէտ>ստն և այլն (Աշտարակ):

Երևանիցի վերին բարձրության ձայնավորները արտասանելու մեջ դժվարանում է: Երևանի բարբառի «ա» ձայնավորը ետին շարքի միջին բարձրության արտասանությունն ունի, «օ» ձայնավորը նույնպես, «ե» ձայնավորը նույնպես միջին բարձրության, բայց առաջին շարքի, «ու» ձայնա-

վորը միջին բարձրության և շրթնային արտասանությունն ունի: Մի խոսքով կարելի է ասել, որ Արարատյան բարբառի ձայնավորները բառացի գույազիպում են մեք ժամանակակից համազգային գրական լեզվի ձայնավորների արտասանությունը: Արարատյան բարբառի ձայնավորները, և հատկապես «ու» ձայնավորը, սղվում են շեշտվող վանկից թե առաջ և թե հետո (օրինակ՝ գրքմ էմ, գաշտմը):

Գրարարի համեմատությունները նկատում ենք հետևյալը:

- ե>յե, յես, եզն>յէզ
- >է, երազ>էրազ, երես>էրէս, բերք>բէրք
- >ի, երեք>իրեք, երեկո>իրեզուն.
- >վօ, որ>վօր, սրգի>վօրթի,
- >օ, կտոր>կտօր, ձոր>ձօր, ողորմի>օղօրմի:

Արարատյան բարբառի բաղաձայնական սխառմը քառաստիճան է, այսինքն՝ ենթարկված է երկրորդ աստիճանի լրիվ տեղաշարժին: Գրարարի համեմատությունները բառակցի ձայնեղները արտասանվում են շնչեղ ձայնեղ, բառամիջի խուլերը արտասանվում են ձայնեղ, բառակցի խուլերը մնում են խուլ, իսկ շնչեղները մնում են շնչեղ, որից ստացվում է հետևյալ պատկերը:

- բ' բ պ փ բերան>բ'էրան, Փարպի>Փարբի, պատ>պադ, փայտ>փէդ,
- գ' գ ա թ դուռն>գ'ուռ, Պետրոս>Պէդրօս, թուր>թուր.
- ձ' ձ ծ ց ձու>ձ'ու, ծիծաղել>ծիձաղել, ցորեն>ցօրէն.
- ջ' ջ ճ չ ջուր>ջ'ուր, պուճուր>պուջուր, չար>չար.
- գ' գ կ ք գառն>գ'առ, հակառակ>հագառագ, կատու>կադու, քաղաք>քաղաք.

Քանաքեռի բարբառում շնչեղ ձայնեղների փոխարեն արտասանվում են խուլ հնչյուններ:

կ, գ, ք հնչյունները ի, է ձայնավորներից առաջ քմայնանում են, օրինակ՝

գինի>գիինի, կին>կիին, քոյր>քիիր:

Աշտարակի խոսվածքում այդ քմայնացումն առաջ գնալով գ, կ, ք հնչյունները վեր է ածում ջ, ն, շ հնչյուններին: օրինակ՝

ջինի<գինի, ճէրա<կերա, չիր<քիր<քոյր:

Բաղաձայնների մասնակի փոփոխությունից նկատելի է հետևյալը:

1. «է» հնչյունը «ա»-ից առաջ արտասանվում է ֆ, օրինակ՝ ֆօտ<<հոտ, ֆօղ<հող, ֆօքի<հոգի, ֆօրթ<հորթ:

2. «Պ» հնչյունը վերածվում է «Ն» հնչյունի, եթե բառի մեջ հաջորդող բաղաձայնը «ղ» է, օրինակ՝ հաղալ<խաղալ, հէխդել<խեղդել, հավող<<խաղող, հեղճ<խեղճ:

3. «Ր» հնչյունը որոշ բառերի մեջ դուրս է բնկնում: օրինակ՝ դուս<<դուրս, նես<ներս, աժել<արժել:

4. «Ր» և «ղ» հնչյուններից հետո բառամիջում և վերջում ձայնեղ հնչյունները վերածվում են շնչեղ խուլերի, օրինակ՝ մարթ<մարդ, կարք<<կարգ, վօրփ<օրբ:

5. «Տն» կապակցութիւնը վերածվում է «նն»։ օրինակ՝ գետնին < գէննին, ոտներ < վոննէր։

6. «Ղ» հնչյունը խուլ հնչյուններից առաջ արտասանվում է «խ»։ օրինակ՝ կեխտոգ < կեղտոտ, մէխք < մեղք և այլն։

7. «Ր» հնչյունը խուլ պայթականներից առաջ արտասանվում է կոշտ «ր» կամ նույնիսկ «ռ», օրինակ՝ առտ < արտ, առծիվ < արծիվ։

8. Ռնգայիններից հետո, ինչպես և մյուս այլ դեպքերում ձայնավորներից հետո կամ առաջ խուլ հնչյուններն արտասանվում են ձայնեղ, օրինակ՝ աշագէրդ < աշակերտ, հարզ < հարկ, ճանջ < ճանճ, ընձա < ընձա և այլն։

9. Բառամիջում ձայնավորներից հետո բոլոր ձայնեղները արտասանվում են շնչեղ խուլ։ օրինակ՝ ֆօքի < հոգի, կարաք < կարագ, մարաք < մարագ, մարքարիտ < մարգարիտ և այլն։

Արարատյան բարբառը երկբարբառ չունի, գրաբարյան բոլոր երկբարբառների դիմաց այստեղ դառնում ենք պարզ հնչյուններ։ օրինակ՝

«Այ» երկբարբառի փոխարեն «ա» բառավերջում և «է» բառասկզբում և բառամիջում։ օրինակ՝ էս, էտ, էն < այս, այդ այն, էծ < այծ, էրէխա < երեխայ, փէսա < փեսայ։

Գրաբարյան «այ» երկբարբառը բառավերջում փակ վանկի մեջ ընկնելով՝ վերածվում է նույնպես «է»-ի, օրինակ՝ երեխայն < էրէխէն, «իւ» և «ոյ» երկբարբառների դիմաց երևանի բարբառն ունի «ի», օրինակ՝ քոյր < քիր, հարիւր < հարիր, արիւն < արին, լոյս < լիս։

Ձևարանություն

Արարատյան բարբառը շեշտը դնում է բառերի վերջընթեր վանկի վրա, որով տարբերվում է գրական լեզվից։

Արարատյան բարբառի սովորական հոգնակին է «էր» կամ «նէր» նույն օրինակով, ինչպես որ գրական լեզվում, այսինքն միավանկ բառերը ստանում են «էր», իսկ բազմավանկ բառերը «նէր» վերջավորութիւնն։ օրինակ՝ սիրդ—սըրդէր, ձի—ձիէր, կարբէդ—կարբէդներ։

Ձայնավորով վերջացող, հատկապես «ի» ձայնավորով վերջացող բառերը հաճախ ստանում են «ք» հոգնակի, օրինակ՝ գէղըցի—գէղըցիք, իքի (այգի)—իքիք։

Մի քանի բառեր կան, որ ունեն «արէնք» վերջավորութիւնն (գեղարէնք, աէղարէնք), «անիք» վերջավորութիւնն (կընանիք), «աինք» վերջավորութիւնն (ախպըրտինք—եղբայրներ)։

Հոլովումը Արարատյան բարբառում գրականին բավականին մոտ է, Հիմնական առանձնահատկութիւնն այն է, որ Արարատյան բարբառը բոլոր հոլովներում հոգ է ստանում<sup>1</sup> բացի սեռականից, մինչդեռ գրական

<sup>1</sup> Բացառական հոլովի հոգ ստանալու լավագույն վիայութիւնները կլինեն երևանցիների հին երգի հետևյալ տողերը։

Այ ախչիգ, բու գանդիցը,  
Ձան ախչիգ, բու գանդիցը,  
Ինձ կըբըցէմ բակոնիցը։

լեզուն ունի հոգ միայն ուղղականում, տրականում և հայցականում։  
Շնչավոր առարկաները Արարատյան բարբառը հաճախ անձնավորում է և այդ առարկաների անունները հոլովում է անձ ցույց տվող գոյականների նման։

ե գ ա կ ի

Ուղղ.	սար (ը)	տախտագ (ը)	հօտաղ (ը)
Սեռ.	սարի	տախտագի	հօտաղի
Տր.	սարի (ն)	տախտագին (ն)	հօտաղի (ն)
Հայց.	սար (ը)	տախտագ (ը)	հօտաղի (ն)
Բաց.	սարից (ը)	տախտագից (ը)	հօտաղից (ը)
Գործ.	սարով (ը)	տախտագով (ը)	հօտաղով (ը)
Ներգ.	սարբմ (ը)	տախտագբմ (ը)	հօտաղբմ (ը)

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	սարէր (ը)	տախտագնէր (ը)	հօտաղնէր (ը)
Սեռ.	սարէրի	տախտագնէրի	հօտաղնէրի
Տր.	սարէրի (ն)	տախտագնէրի (ն)	հօտաղնէրին (ն)
Հայց.	սարէրը	տախտագնէր	հօտաղնէր (ին)
Բաց.	սարէրից (ը)	տախտագնէրից (ը)	հօտաղնէրից (ը)
Գործ.	սարէրով (ը)	տախտագնէրով (ը)	հօտաղնէրով (ը)
Ներգ.	սարէրբմ (ը)	տախտագնէրբմ (ը)	հօտաղնէրբմ (ը)

Արարատյան բարբառը ներգոյական հոլով կազմում է և՛ անձ, և՛ առարկա ցույց տվող գոյականներից, մինչդեռ գրական լեզուն անձ ցույց տվող գոյականներից ներգոյական հոլով չի կազմում։

ք ի ր < ք ո յ ր

	եգակի	եգակի	Հոգնակի	Հոգնակի
Ուղղ.	քիր (ը)	ախպէր (ը)	քըվորդինք (ը)	ախպէրդինք (ը)
Սեռ.	քըվոր	ախպօր	քըվորդանց	ախպէրդանց
Տր.	քըվոր (ը)	ախպօր (ը)	քըվորդանց (ը)	» (ը)
Հայց.	քիր, քըվոր	ախպօր (ը)	»	» (ը)
Բաց.	քըվորից (ը)	ախպօրից (ը)	քըվորդանցից (ը)	ախպէրդանցից (ը)
Գործ.	քըվորով (ը)	ախպօրով (ը)	քըվորդանցով (ը)	ախպէրդանցով (ը)
Ներգ.	քըվորբմ (ը)	ախպօրբմ (ը)	քըվորդանցբմ (ը)	ախպէրդանցբմ (ը)

Հարադիր բարգորյունների հոլովում

ե գ ա կ ի

Ուղղ.	հէր ու տղա	մարթ ու կնիկ
Սեռ.	հօր ու տղի	մարթ ու կընգա
Տր.	հօր ու տղի (ն)	մարթ ու կընգա (ն)
Հայց.	հօր ու տղի (ն)	մարթ ու կընգա (ն)
Բաց.	հօր ու տղից (ը)	մարթ ու կընգանից (ը)
Գործ.	հօր ու տղով (ը)	մարթ ու կընգանով (ը)
Ներգ.	հօր ու տղբմ (ը)	մարթ ու կընգանբմ (ը)

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	հէր ու աղէրք (ը)	մարթ ու կընանիք (ը)
Սեռ.	հօր ու աղէրքանց (ը)	մարթ ու կընանըքօնց
Տր.	հօր ու աղէրքանց (ը)	մարթ ու կընանըքօնց (ը)
Հայց.	հօր ու աղէրքանց (ը)	մարթ ու կընանըքօնց (ը)
Բաց.	հօր ու աղէրքանցից (ը)	մարթ ու կընանըքօնցից (ը)
Գործ.	հօր ու աղէրքանցով (ը)	մարթ ու կընանըքօնցով (ը)
Ներգ.	հօր ու աղէրքանցըմ (ը)	մարթ ու կընանըքօնցըմ (ը)

Հարադիր բարդութեան հոլովման ժամանակ երբեմն առաջին բառը բոլորովին չի հոլովվում կամ հոլովվում է մինչև սեռական, իսկ երկրորդ բառը հոլովվում է մինչև վերջ:

«Տղերքանց» ձևը կարող է լինել «աղէրանց» (Կանգնեց վրդովված աղերանց միջին.— Ն. Թ.): «Կընանըքօնց»-ի փոխարեն կարող է լինել նաև «կընանքանց»:

Ա ծ ա կ ա ն ն ե ր

Արարատյան բարբառի ածականները առանձին նորութուններ չեն ներկայացնում, միայն մտքի ուժեղացման համար հաճախ ածականը կըրկընվում է. օրինակ՝ սիրուն-սիրուն ախչիգ, որ նշանակում է՝ բավական սիրուն աղջիկ, մե մեծ մարդ, որ նշանակում է՝ բավական խոշոր մարդ, սև-սև աչքեր, որ նշանակում է՝ բավական սև աչքեր:

Ածականների համեմատության աստիճանները նույնն են, ինչ որ գրական լեզվի մեջ, միայն համեմատական աստիճանի համար ավելացվում է «ավելի» բառը հազվագյուտ դեպքում, իսկ գերադրական աստիճանը կազմում է «ամենա» բառով: «Գույն» գերադրական կազմող ածանցը գործածական չէ Արարատյան բարբառում: Համեմատական աստիճանը կազմելու համար ավելի սովորական է բացառական հոլովի գործածությունը. օրինակ՝ խալիչէն կարբեղից սիրուն ա, էս ամենասիրուն խալիչէն ա:

Գրական լեզվի նման, ածականները հոլովվում են գոյականի նման այն ժամանակ, երբ գործ են ածվում իբրև գոյական, փոխարինելով իրենց և այլ գոյականին, որին վերաբերում են. օրինակ՝ Մէնձը պուշուրից լավ ա:

Բավական հետաքրքրական է գերանունների հոլովումը: Անձնական գերանունների հոլովումը բավական նման է գրական լեզվին:

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	յէս	դու	մէնք	դուք
Սեռ.	իմ	քու	մէր	ձէր
Տր.	ինձ	քէզ	մէզ	ձէզ
Հայց.		քէզ	մէզ	ձէզ
Բաց.	ինձանից	քէզանից	մէզանից	ձէզանից
Գործ.	ինձանով	քէզանով	մէզանով	ձէզանով
Ներգ.	ինձանում	քէզանում	մէզանում	ձէզանում

Ցուցական դերանուններ  
Եզակի

Ուղղ.	էս	էդ	էն
Սեռ.	ըստուր	ըդուր	ընդուր
Տր.	»	»	»
Հայց.	էս	էդ	էն
Բաց.	ըստուց	ըդուց	ընդուց
Գործ.	ըստով	ըդով	ընդով
Ներգ.	ըստում	ըդում	ընդում

Հոգնակի

Ուղղ.	ըստօնք	ըդօնք	ընդօնք
Սեռ.	ըստօնց	ըդօնց	ընդօնց
Տր.	»	»	»
Հայց.	նման է արականին կամ ուղղականին,		
Բաց.	ըստօնցից	ըդօնցին	ընդօնցից
Գործ.	ըստօնցով	ըդօնցով	ընդօնցով
Ներգ.	ըստօնցըմ	ըդօնցըմ	ընդօնցըմ

Մյուս գերանունները նման են գրական լեզվին:

Խոնարհում

Արարատյան բարբառն ունի երեք խոնարհում՝ «էլ», «իլ», «ալ». «իլ» խոնարհումը լինում է սովորաբար ժխտականի դեպքում: Բաղադրյալ ժամանակները կազմվում են գերբայով և օժանդակ բայով: Օժանդակ բայի անցյալի անկատարում «է՞» արմատը կորչում է, բացի երրորդ դեմքից (ի, իր, էր, ինք, իք, ին), ներկայի երրորդ դեմքը լինում է «ա»:

Ներկա

Անցյալ կատարյալ

գըրըմ էմ	կարթըմ էմ	գըրըմ ի	կարթըմ ի
գըրըմ էս	կարթըմ էս	գըրըմ իր	կարթըմ իր
գըրըմ ա	կարթըմ ա	գըրըմ էր	կարթըմ էր
գըրըմ էնք	կարթըմ էնք	գըրըմ ինք	կարթըմ ինք
գըրըմ էք	կարթըմ էք	գըրըմ իք	կարթըմ իք
գըրըմ էն	կարթըմ էն	գըրըմ ին	կարթըմ ին

Ապառնի

Անցյալի ապառնի

գըրէլու յէմ	կարթալու յէմ	գըրէլու յի	կարթալու յի
» յէս	» յէս	» յիր	» յիր
» յա	» յա	» յէր	» յէր
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Վաղակատար

Անցյալի վաղակատար

գըրէլ էմ	կարթացել էմ	գըրէլ ի	կարթացել ի
			և այլն.

Հարակատար

Անցյալի հարակատար

գրած էմ և այլն.	կարգացած էմ և այլն.	գրած ի և այլն.	կարթացած ի և այլն.
--------------------	------------------------	-------------------	-----------------------

Լոռու և մի շարք այլ խոսվածքներում օժանդակ բայի անցյալի ձևերը գործ է ածվում առանց սղվելու, գրականի նման (էի, էիր, էր, էինք, էիք, էին):

Անցյալ կատարյալ

գրեցի	կարթացի	գրեցինք	կարթացինք
գրեցիր	կարթացիր	գրեցիք	կարթացիք
գրեց	կարթաց	գրեցին	կարթացին

Ըղձական և պայմանական եղանակները բարձրովին նման են գրական լեզվին. այդ եղանակների անցյալի ապառնին տարբեր է, որ կլինի հետևյալ ձևով.

գրեի	կարթայի	կըգրեի	կըկարթայի
գրեիր	կարթայիր	կըգրեիր	կըկարթայիր
գրեեր	կարթար	կըգրեեր	կըկարթար
գրեինք	կարթայինք	կըգրեինք	կըկարթայինք
գրեիք	կարթայիք	կըգրեիք	կըկարթայիք
գրեին	կարթային	կըգրեին	կըկարթային

Հարկադրական եղանակ

Ապառնի

պրդի գրեէմ կամ գրեի պրդէմ	պրդի կարթամ կամ կարթալ պրդէմ
պրդի գրեէս կամ գրեի պրդէս և այլն.	պրդի կարթաս կամ կարթալ պրդէս և այլն.

Անցյալ ապառնի

պրդի գրեի կամ գրեի պրդի	պրդի կարթամ կամ կարթար պրդի և այլն:
պրդի գրեիր կամ գրեի պրդիր	
պրդի գրեեր կամ գրեի պրդեր և այլն:	

Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի մի շարք գյուղերում (Թումանյան, Շնոր) ենթակայական գերբայն օգտագործում են անորոշ գերբայի տրական հոլովի կամ ապառնի գերբայի փոխարեն. օրինակ՝

- Տղէքք, գրնանք կակալ (ընկույզ) քաղօղ (քաղելու)
- Ախչի Թամար, էդ վօ՞րդի:
- Ջուր բէրօղ էմ գնում:
- Ի՞նչ էղան Անդիկն ու Շուշանը:
- Գնացին ծընէփակ ու սինդրիկ քաղօղ:

Լոռու ենթաբարբառում կա մի հետաքրքրական երևույթ. անցյալի անկատարը կազմում է գրաբարի նման. օրինակ՝ յէս գրեի—ես գրում էի. յէս բէրէի—ես բերում էի, յէրէզ յէս գրեի՝ գէի—երեկ ես գնում գալիս էի. Նոյեմբերյանի և Ալավերդու շրջանում «ն» սոսկածանց ունեցող բա-

յերը պատկանում են «ու» խոնարհման, օրինակ՝ տեսնուլ—տեսնել, գտնուլ—գտնել և այլն:

Արարատյան բարբառի ենթաբարբառներն են Նոր-Բայազեդի և Աստարադի խոսվածքները:

Նոր-Բայազեդի ենթաբարբառի հիմնական հատկությունները հետևյալն են.

1. «օ և ա» ձայնավորների առկայությունը. օրինակ՝ Բնյաղէդ, Արամ.
2. «ե» և «ո» հնչյունների երկբարբառային արտասանությունը. օրինակ՝ գոր>գուէր, նոր>նուէր.
3. «ն» հնչյունի «խ»-ի վերածվելը. օրինակ՝ խէր, խաց, խով.
4. դալ, լալ, տալ բայերի «ում» վերջավորությունը գործածվելը (զալում էմ, լալում էմ, տալում էմ): Սա նշանակում է, թե Նոր-Բայազեդի ենթաբարբառը բնավ չունի «խ» վերջավորություն ունեցող գերբայ.
5. հարակատար գերբայը «ո:կ» վերջավորությամբ կազմվելը. օրինակ՝ քնուկ, պռուկ, խասուկ.
6. հարցականի ժամանակ օժանդակ բայը կրկնվելը. օրինակ՝ Ի՞նչ ես ասում ես:  
Աստարադի ենթաբարբառի մեջ նկատելի է.  
1. օժանդակ բայի այնպիսի ձևերի գործածությունը, որոնք նույնն են Ջուղայի բարբառի հետ (ամ, աս, ա, անք, աք, ան).  
2. բացառականը թե «ից», թե «է» վերջավորությամբ կազմվելը.  
3. անցյալ կատարյալի առաջին դեմքում «մ» վերջավորություն ստանալը (օրինակ՝ նստամ, տեսնամ, էկամ):

ՆՄՈՒՇՆԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐՐԱՌՈՒՆ

Առասրակի խոսվածքով

Մի մութ քըշեր ա, իբու հափուժը կանած ի. Մէջ էլ տէհա, թըմբիցը խըշխըշուէց էկավ: «Այ տա, էտ ինչ պըտը ըլի,—ասի,—գո՛ւէդ ա, խի՞ ա ձէն հանըմ, ջե՛լ ա... թըփէրի հետ Բնչ գուէրձ ունի, ծի՛տ ա... քըշերը խի՞ ա դէս ու դէն թըռչըմ...»: Ասէնք յէս վախըմ չի, համա սիրդըս վըրիցըս պուէճ էր գալի. Յէննա ասէցի. «Յավաշ տէնամ՝ գուէդ կըլի...»: Ուզըմ էմ մօղանամ, սիրդըս վըրիս բանդ չի ըլըմ: Ասէցի՝ «Այ սիրդ, վախի մի՛ ծիտ ա»:

էս շան տըղի մալը չի ըլնըմ, չիչ ա մընըմ բէրանօվս դ՛ուս գա: Ասի՝ «Այ սիրտ՝ վախի մի, ծիտ ա, հօ չէզ չի ուտի»... Ճար չէլավ. Մէջ է՛լ ասի, էլի չէլավ:

—Տօ, դ՛է,—ասի,—ջէլ ա, ճաքըմ էս, ճաչի, քու տիրուէնչ վար դան յօխը»...

- Մէջէլ տէնամ էն գըհիցը գ՛ոռացին՝ «Ավէ՛դ...»
- Ասի. «Հօ ի...», յէննա ասի. «Ադա Ջէղամ...»
- Ասէց. «Ի՞նչ ա»:
- Ասի... «Չօռ, քու հօր փուէչին... դէ թէզ ձէն հանա, յէ...»
- Մի չիչ էլ յէզ իր ձէն հանել՝ դափախուլուն բաց ի թուէղըմ»:

Փարպիի խոսվածքով

ՏԱՆՈՒՅԵՐ ԳՕՔՐԸ

Ասում էն մեր գեղը մի հազ գլխովին ա էլէ, անըմը Բօքօղ, էդ գլխովին Բօքօղին մի հազ տանուտէր ա ունենըմ, անըմը Գ'օքօր, Մի-իրիգուն գլխովին Բօքօղը սարմ ա.

—Գ'օքօր առավօղը թէգ կըգ'աս իմ կուշտը, վօր էքուց պըղի էթաս էշմիածին:

էդ Գ'օքօրը սարմ ա. «Լաւ»: Մըդհան արի, վօր ասէ՞մ՝ տանուդէր Գ'օքօրի տունը գ'էղի էս ծէրին ա ընըմ, իսկ գլխովին Բօքօղի տունը էն գ'ըլիին, իրարից անաք'ին հէոու:

էտ տանուդէր Գ'օքօրը իրիգունը մըտկով քընըմ ա, վօր առավօղը թէգ էշմիածին պըղի էթաւ. Առավօղը հլա լիսը չըբացված էտ Գ'օքօրը տէղիցը վէր ա կ'էնըմ, պաղբասովըմ ա էթալու. Իրանց տընիցը դուս ա գ'ալի, մըղիկ անըմ. «Մէկ էլ էս բեվախտին էթամ գլխովնու կուշտը՝ ինչ անէմ, էնա ասէց. «պըղի էթաս էշմիածին» էլի, մինչև էթամ գ'եղի գ'լուխը, անաք'ին ճամփա կըկըզըմ»: Տէնց սարմ ա ու ընդունում ա ճամփա: Դրուստ վօր անաք'ին ճամփա յա՞կըզըրըմ՝ արևը դուս չէգած Ուշագան անց ա կ'էնըմ. Յէղօլ էթըմ, էթըմ, արևը մի բարդաբոյ բ'անցրանըմ ա, հասնըմա էշմիածին, վըռագ վըռագ մընըմ ա բազարը, պըզըզվըմ ա ու էլի քըրդ-նամըխած յէգ ա գալի. Դու խաբար տու հըլա գլխովին Բօքօղիցը. Առէց թէգ կըգ'աս կուշտըս, օրը ճաշ ա գ'առէլ՝ հըլա չկա մէր Գ'օքօրը. 2—3 մարթ ա զըրզըմ Գ'օքօրի տունը, սարմ էն՝ տանը չի:

—Այ հայ, —սարմ էն, —էս մարթն ուր ա գ'ընացէլ բա... հենց էդ վախար մէր Գ'օքօրը քըրդնամըխած, վօննէրը թօգօտ մընըմ ա գլխովին Բօքօղի տունը: Օրը, էն ա, հալալ ճաշ ա:

Այ տղա, —սըր էս գ'ու առավօղվանից, —գ'օմշի նըման գ'օրըմ ա գլխովին Բօքօղը:

Գ'ընացի էշմիածին՝ էգա—հըպարդ հըպարդ պաղասխանըմ ա Գ'օքօրը:

Այ տա, ընչի՞ հըմա գ'նացիր:

—Բա գ'ու չասիր էքուց էշմիածին պըղի էթաս, սղա:

—Այ վօջխար, յես ասի բանի հըմար պղի էթաս, հօ չըպըղի գ'առ-դագ էթաս, գ'առդագ գ'աս:

—Իա, բա էրէկ խի չի միգըս քըցիր, վօր բ'անի հըմար էմ էթալու. Ի՞նչ բ'անի հըմար էմ էթալու, սղա:

—Շաքար ու սաքօն պըղի առնէլիր տան հըմար. Առավօղվանի աշկըս ջ'ուր գ'առավ, թէ Գ'օքօրը պըղի գ'ա էթա շաքար ու սաքօն բ'էրի: Դէ թէգ կանէս, կէթաս էս 5 մանէթին շաքար կառնէս, էս 5 մանէթին էլ սաքօն ու կըգ'աս, —բ'արգացած հըրամայըմ ա գլխովինը:

էդ հէղջ Գ'օքօրը էտ շօք կըբազին էլի ընգնըմ ա ճամփա դըբա էշմիածին: էթըմ ա հասնըմ ա բազարը, ջէքիցը փօղէրը հանըմ ա, թէ՛ գըլալինը վօ՞ր հընդանօցը ասեց կտաս շաքարի, վօ՞րը՝ սաքօնի: Շաղ ա մըղաձըմ, շաղ, չի կարըմ իմանա: Ինքն էլ վախըմ ա, թե, իրանու գ'լուխ առնի, վաջ թէ աղէն բ'արգանա:

—Ախար, ինքն ասեց. «էս 5 մանէթը կըտաս շաքարի, էս էլ սաքօնի», հը՛մի յէս ի՞մ՝ վօրն ա շաքարինը, վօ՞րը՝ սաքօնինը, —սարմ ա Գ'օքօրը ու յէդ ա գ'ալի գըլալնուց իմանա:

Հօկահմբերյաճ օրօանի Զաճարարագ գյօւղի խոսվածքով

Գ. ԻՔՈՐԸ<sup>1</sup>

Գ'էղացի Համբօյի տունը կոխվ էր հընգ'է:

Համբօն ուղու՞մ էր հիրա տասնէրգու տարէգան Գ'իքօրին տաներ քա-ղաք, մէ գ'ործի տար, մարթ գ'առնար, աշխաղանք աներ:

Կընիգը չէր ուղու՞մ էր:

—Ձէ՞մ ուղըմ, իմ քոռփա էրխին էն անիրավ աշխարքը մի քըցի, չէ՞մ ուղըմ, —լալըմ էր կընիգը:

Հըմա Համբօն չըլըսավ:

Մէ դինջ հառավոտ էր, մի անուբախ հ'առավոտ: Տընէցիքն ու հա-րևանները էգան մինչև գ'եղի կըրաղը, Գ'իքօրի հէրէսները (թշերը) պաչէցին ու ճամփու դ'ըրին:

Բուրը՝ Ջանին լալըմ էր, հըմա պըսղիկ Գ'ալօն մօր խըղըղիցը ձ'էն էր տալըմ:

—«Գ'իքօլ, էտ հնւ էս էթըմ, հէ՛ Գ'իքօլ»:

Գ'իքօրը թէգ-թէգ քամագն էր հիշըմ:

Տէնըմ էր՝ հլա գ'եղի կըրաղին կայնած էն ընդոնք ու մէրը միգա-րով սըրփըմ ա հաշկէրը:

էլի հօր կօղով վազըմ, յա հառաչըն էր հընգ'նում: Մէգ էլ քամագըն իշկոց. գ'եղը ծածկվէր էր սարի քամագը:

ՆՈՐ ԲԱՅԱՋԷԳԻ ԵՆԹԱՅԱՐՔԱՌԱՅԻՆՔ

—էտ ենչ ա, խարսէ, խպարտցեր ես, բ'արեվ էլ չես տալըմ ես յօլըս ծանդըրը:

—Վայ խոռէ, դ'ու ես. չըթայմընէցի:

—է, իմալ ես, գ'օր էս էթըմ ես, հնւստ ես գ'ալում ես

Գաճցերի խերանցըս տուն. ընդոնց կշտից եմ գ'ալում եմ:

—Լըսա՛ն ասին խէրըս խիվանդ ա, մըկա Բ'մալ ա:

—Քա էնի շուտուց խիվանդ ա, իօ թանն չէ իմ խէրը հանալ խէրվըն է խիվանդ ա, էնէնց պառկուկ ա:

—է, իսս (հաց) կէրէ՞ր ես, հէտա (անավասիկ) վոսկին էլ էկավ, հարի իրեքով էրթանք մէր տունը, իսց ուտենք:

—Ձէ, չեմ կանա, բան կա, պիտի էթամ Գ'իքօրին տէնամ:

1 Գրի առավ Աշոտ Մաղաթյան:  
2 է. Աճառյան, Հայ բարբառագիտություն:

2. ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՐԱՌՈՐ

«ՈՒՄ» նյութի երկաստիեան ձայնեղագուրկ բաղաձայնակամ սիստեմի բարբառ

Ղարաքաղի բարբառը մեր կենդանի բարբառներից ամենամեծն է: Այդ բարբառով (նաև ենթաբարբառներով) խոսողների թիվը կես միլիոնից ավելի է: Այդ բարբառով խոսում են Ղարաքաղի բնակչությունը և բոլոր այն Ղարաքաղցիները, որոնք գտնվում են Բաքվում, Հյուսիսային կովկասում, Շամախու շրջանում, Թուրքմենիստանում, Ուզբեկիստանում և Թաջիկիստանում, նաև՝ Ջանդեղուրի և Կապանի բնակիչները, Կիրովաբադի շրջանի բնակչությունը, Ղազախի, Շամշադինի, Դիլիջանի շրջանի բնակչությունը:

Պրոֆ. Հ. Աճառյանի վկայությամբ այդ բարբառով խոսող երկու գյուղեր են եղել Մարմար ծովի ափին (Բուրգսևր և Օդէմիշ):

Այդ մեծ տարածության վրա խոսողները որոշ տարբերություն ունեն իրենց լեզվի մեջ, թեև խոսվածքների ընդհանուր երանգը Ղարաքաղի բարբառինն է:

Նկատելի է, որ Ղարաքաղի բարբառը կլանել է մի շարք բարբառներ և ավելի կամ պակաս չափով անհետացրել այդ բարբառները: Ղարաքաղի բարբառը շրջապատող այլ բարբառներ, լինելով նրանից ավելի փոքր, մեծապես ազդվել են նրանից, որոշ տեղերում նույնիսկ վերափոխվել Ղարաքաղի բարբառի: Այժմ կարելի է մի շարք խոսվածքների մասին վիճել, թե այս կամ այն խոսվածքը Ղարաքաղինն է, թե մեկ ուրիշ բարբառի մնացորդ:

Հաղբութի ամբողջ շրջանը խոսում է մի առանձին բարբառով, ավելի ճիշտ երկու առանձին բարբառով, մեկը՝ Հաղբութի, մյուսը՝ Քեյվան-Շաղախի: Շատ շատերը Հաղբութի և Քեյվանի բարբառները նույնպես համարում են Ղարաքաղի բարբառ, կամ ամենաքիչը՝ Ղարաքաղի բարբառի ենթաբարբառներ: Ոչ մասնագետի համար դա բնական է ու հասկանալի, որովհետև Հաղբութի և Քեյվանի բարբառների լեզվական ընդհանուր երանգը դարաբաղական է կամ Ղարաքաղինն է, սակայն երբ մտախից ծանոթանում են այդ բարբառներին, զգացվում է նրանց և Ղարաքաղի բարբառների միջև խորը տարբերություն: Այսպես, օրինակ՝ այն հիմնական հատկանիշը, որով որոշվում է բարբառների ճյուղային տարբերությունները, այն է՝ ներկա ժամանակի կազմությունը, այս երկու բարբառում միանգամայն տարբեր է: Օրինակ՝ Ղարաքաղի բարբառում ասվում է «կիրբս րմ, կարթըմ րմ», իսկ այս բարբառներում ասվում է՝ «կիրբս րմ, կերթիս րմ»:

Տարբեր է նաև այս բարբառների բաղադրյալ անցյալ ժամանակների կազմությունը. օրինակ՝

Ղարաքաղի բարբառում ասվում է

կիրբմ ի	կերթլական ի
կիրբմ իր	կերթլական իր
կիրբմ ար	կերթլական ար
և այլն.	և այլն.

Հաղբութի բարբառում գործածվում է և՛ այս և և՛ նման մի և և՛ մեկ ուրիշ և ևս.

կիրբս ի	կիրբս րմ լմլ
կիրբս իր	կիրբս րս լմլ
կիրբս ար	կիրբս ս լմլ
և այլն.	և այլն.

Շաղախ-Քեյվանի բարբառում գործածվում է միմիայն հետևյալ ձևը:

կ'ըրբիս իմ	կ'ըրբիս րմ լմլ	կ'ըրբլակուն րմ լմլ
կ'ըրբիս րս	կ'ըրբիս րս լմլ	կ'ըրբլակուն րս լմլ
կ'ըրբիս ս	կ'ըրբիս ս լմլ	կ'ըրբլակուն ս լմլ
և այլն.	և այլն.	և այլն.

Այսպես է կազմվում ոչ միայն անցյալի անկատար ժամանակը, այլև անցյալի ապառնին, անցյալի հարակատարը, ըղձական և հարկադրական եղանակների անցյալի ապառնին:

Տարբերություն կա նաև հոլովման կազմության մեջ. Հաղբութի բարբառին հատկանշական է բացառականի կազմությունը «նընստա» բառի օժանդակությամբ ավելի, քան Ղարաքաղի սովորական բացառականի գործածությունը, իսկ Քեյվանի համար՝ «անա» բառով բացառական կազմվել օրինակ:

Ղարաքաղ	Հաղբութ	Քեյվան-Շաղախ
Բացառ. սարան	սարէն նընստա	սարէն անա

Դերանունների մեջ տարբերություն էլ ավելի մեծ է. Ղարաքաղի բարբառում դերանունները կազմվում են հետևյալ ձևով.

էս	էտ	էն
ըստրա	ըտրա	ընդրա
ըստրանա...	ընտրանա	ընդրանա
ըստրանավ...	ընտրանավ...	ընդրանավ...

Այդ նույն դերանունները Շաղախ-Քեյվանի բարբառում լինում են հետևյալ ձևով.

էս	էտ	էն
ստնր	սմր	սնդնր
ստնրանն	սմրանն	սնդնրանն
ստնրաննավ	սմրաննավ	սնդնրաննավ

Ինչպես ասացինք՝ Ղարաքաղն ընդարձակ երկիր է, ունի հարյուրավոր գյուղեր և ամեն մի գյուղում կարելի է նկատել տարբերություն մյուս գյուղերից, սակայն կարելի է մոտավորապես որոշել, թե բուն Ղարաքաղի հատկանիշները որոնք են, և լեզվական տեսակետից իսկապես որ շրջանն է ավելի Ղարաքաղինը, սրբ՝ քիչ:

Մեր հետազոտությունը նկատել է տալիս մեզ, որ Ղարաքաղի բարբառի հիմնական հատկանիշները կարելի է գտնել Մարդակերտում (Ջրա-

բերդի շրջանում)։ նույն հատկանիշները համեմատաբար ավելի լավ են պահպանված Ջանգեզուրի շրջանում։ Ստեփանակերտի, Շուշու և Մարտունու շրջաններում գտնում ենք զանազան տիպի խոսվածքներ։ Կան գյուղեր, որոնց խոսվածքը պահպանում է Մարդակերտի շրջանի խոսվածքի նորմաները, մինչդեռ կան գյուղեր, որոնք այդ նորմաները այս կամ այն չափով խախտում են և երբեմն բոլորովին տարբեր ձևեր են գործածում։ Օրինակ՝ Մարտունու շրջանի Դուզե-ձարտար և Շեխեր գյուղերը և մի շարք այլ գյուղեր ներկան կազմում են «ուժ» վերջավորություն ունեցող դերբայով (կ'իրբւմ ըմ՝ կ'ըրբւմ ըս կ'իրբւմ ա, կ'իրբւմ ընք, կ'իրբւմ ըք, կ'իրբւմ ըն), մինչդեռ անցյալի անկատարը կազմելիս գործածում են Բեյվան-Շաղախի բարբառի ձևերը (կ'իրբիս ըմ լւն, կ'իրբիս ըս լւն, կ'իրբիս ան լւն և այլն)։

Կան գյուղեր, օրինակ, Խանածախը (Ստեփանակերտի շրջան), որ գործածում է բոլոր ձևերն էլ, այսինքն՝ Թե Մարդակերտի խոսվածքի ձևերը և Թե Բեյվան-Հաղբութի բարբառների ձևերը։

Այդ շրջանում գտնում ենք նաև այնպիսի գյուղեր, որոնց խոսվածքը Հաղբութի բարբառին է պատկանում, օրինակ, Շուշու մոտ գտնվող Շուշի գյուղը, որ իր խոնարհումը կազմում է հետևյալ կերպ՝ կ'իրբիս ըմ, կ'իրբիս ըս և այլն։

Այդ ամենը ասում են մեզ, որ Դարբաղի տերիտորիայի վրա անցյալում եղել են երկու բարբառներ՝ Հյուսիսային՝ Դարբաղի, և Հարավային՝ Հաղբութի։ Այս երկուսը իրար հետ միախառնվել են, գերակշռություն ստացել է Դարբաղի բարբառը, որը «կլանել» է Հաղբութի բարբառի մեծ մասը, միաժամանակ նաև հաղորդելով մնացող մասին իր հիմնական գծերից շատ շատերը, և դրա հետևանքով ստացվել է այժմյան Հաղբութի բարբառը, որ շատ գծերով նման է Դարբաղի բարբառին, բայց պահպանում է նաև իր սեփական առանձնահատկությունները։ Այժմ էլ հենց Հաղբութում Դարբաղի բարբառով խոսելը համարվում է քաղաքավարի ձև։ Հաղբութի շրջանում տեղավորվել են Դարբաղից գաղթածները, օրինակ՝ Շաղախ, Խծաբերդ, Խարմանջուղ և այլն, որոնք այժմ ավելի շատ տարբերիչ գծեր ունեն Դարբաղի բարբառից, քան Հաղբութի բարբառը։ Դարբաղի բարբառը ևս, ազդելով Հաղբութի բարբառով խոսող հասարակության վրա, ինչպես նաև Դարբաղի բարբառով խոսող բնակչության լեզվի վրա, որոշ հետք է թողել, և այդ պատճառով էլ Դարբաղի բարբառով խոսող բնակչության հարավային հատվածում (օրինակ՝ Շեխեր գյուղում) նկատում ենք Դարբաղի բարբառի հետքեր։ Նշանակում է՝ Մարտունու, Շուշու և Ստեփանակերտի շրջանների որոշ գյուղերի խոսվածքները զարբաղեցված են, այսինքն՝ ենթարկված են Դարբաղի բարբառի ազդեցությանը և բոլորովին վերափոխել են իրենց խոսվածքը, պահպանելով միայն որոշ հետքեր, իսկ Հաղբութի և Բեյվան-Շաղախի խոսվածքները ազդվելով Դարբաղի բարբառից, յուրացրել են նրա շատ կողմերը, սակայն բոլորովին չեն անհետացել։

Ջանգեզուրի ենթաբարբառը համարում է մի կողմից Դարբաղի բարբառը, մյուս կողմից Արարատյան (Երևանի) բարբառը, բայց Դարբաղի բարբառի բացարձակ գերակշռությամբ։ Ջանգեզուրի ենթաբարբառ-

ուժ ձայնավորների սղուժներն ավելի քիչ են, բացակայում է դյուղերի մեծ մասի խոսվածքում ական վերջավորության դերբայով ապառնին կազմելու Դարբաղի եղանակը։ Հնչյունական փոփոխությունների մեջ կան որոշ տարբերություններ։ Այդ ամենը սակայն չեն վկայում այն մասին, որ այստեղ Դարբաղի բարբառը ևս նույնպիսի նվաճում է կատարել, ինչպես Լեռնային Դարբաղի Ինքնավար Մարզի շրջանում։ Այստեղ նկատվում է միայն, որ Երևանի բարբառը հանդիպել է Դարբաղի բարբառի հետ և որոշ հետք է թողել։

Կապանի և Մեղրու շրջանում պատկերը բոլորովին այլ է։ Կապանում կան գյուղեր, որոնք խոսում են Հաղբութի բարբառով. օրինակ՝ Եղվարդ, Ծավ և այլն։ Մի շարք ուրիշ գյուղերի խոսվածքները ցույց են տալիս, որ իրենք պատկանել են Հաղբութի խոսվածքին կամ Դարբաղի խոսվածքին, բայց ձուլվել են Դարբաղի բարբառի հետ, օրինակ՝ Ագարակ, Հանդ և այլ գյուղերի խոսվածքները։

Մեղրու շրջանում նկատելի է, որ Դարբաղի բարբառը հանդիպել է մի ուրիշ բարբառի և կլանելով այդ բարբառը՝ իր հերթին ենթարկվել է փոփոխության. օրինակ՝ Մեղրու շրջանի Ագարակ գյուղի խոսվածքի մեջ թեև խոնարհումը կազմում է «ուժ» վերջավորությամբ դերբայով, բայց հնչյունական փոփոխությունները և անցյալի կազմությունը հիշեցնում է Մեղրու և Կարճևանի բարբառները. օրինակ՝

կ'օյիս իմ, կ'օյիս իս, կ'օյիս ան և այլն,  
կ'իրիմ իմ, կ'իրիմ իս, կ'իրիմ ի և այլն։

Այդ նույն երևույթը կարելի է նկատել նաև հոլովման մեջ։

Այդ նույնը նկատելի է նաև Կապանում։

Կապանի շրջանի Բերդ(°) և Շիշկերտ գյուղերի խոսվածքը տարբերվում է «Ս» ճյուղի բարբառներից՝ միայն իր ներկայի կազմությունը և գործիական հոլովի վերջավորությամբ։ Քերականական շատ գծերով նման է «Ս» ճյուղի հիմնական բարբառներին, դրանց է նման նաև իր բաղաձայնական սիստեմով։ Դարբաղի բարբառին որոշ չափով նման է միայն իր ձայնավորներով։

Շիշկերտի խոսվածքն ունի անտեղաշարժ բաղաձայնական սիստեմ. օրինակ՝

բ>բ. բէրան, բէն (բան), բնըթ, բոցնը (բարձր) բէռնը.

գ>գ. գէնակ, գու, գուրք (գուռ), գինել (գնել).

ձ>ձ. ձու, ձուկնը, ձէոք, ձօր.

ջ>ջ. ջուր, ջօրի, ջէղաց (ջրաղաց).

զ>զ. զէլրունք (գարուն), զ'ամ, զ'նոյս, զ'նել (զայ), զ'իրիլ (զրել).

Հոլովման մեջ բացառականը կազմում է «նանի» մասնիկ-բառով.

Օրինակ՝ Սարին նանի զ'ամ ըմ (սարից եմ գալիս).

Արմէնը նանի նամակ ըմ ստացալ (Արմենից նամակ եմ ստացել).

Գէտին նանի դուրս յէլ (գետից դուրս եկ).

Հաճախ գործիականն էլ կազմում է վերլուծական ձևով (Ղարաբաղի բարբառի նման) և նաննով մասնիկ բառով. օրինակ՝

Գ՛էտէն նաննով անցի (զետով անցիր):

Բայերի խոնարհման մեջ անցյալի ձևերը կազմում է «լն» մասնիկով (Մեղրու նման). չունի անցյալ կատարյալի ձևեր, փոխարինված են վաղակատարի ձևերով («Ս» ճյուղի նման), հարակատար ձևերը գործածվում են վաղակատարի և հարակատարի համար.

Գ՛իրնւմ ւմ—գրում եմ, գ՛իրում ւմ ւմ—գրում էի, Գ՛իրնւնւ վըմ—գրելու եմ, գ՛իրնւնւվըմ ւմ—գրելու էի, գ՛իրնւմ ւմ—գրել եմ, գրած եմ, գ՛իրնւմ ւմ ւմ—գրել էի, գրած էի, գ՛իրնւ ւմ—գրեցի (անցյալ կատարյալի ձևերը չունի), Գ՛իրւմ—գրեմ, գ՛իրիւ ւմ ւմ—գրէի, կըգ՛իրւմ—կգրեմ, գ՛իրիւ ւմ ւմ—կգրէի, բէգ՛մա գ՛իրիւմ—պիտի գրեմ, բէգ՛մա գ՛իրիւ ւմ ւմ—պիտի գրեի՝

Ցուցական դերանունների հոլովումը

Ուղղ.	աս	ադ	ան
Սեռ.	ստոնր	տոնր	տնդոնր
Տը.	»	»	»
Հայց.	աս, ստոնր	ադ, տոնր	ան, տնդոնր
Բաց.	ստոնր նանի	տոնր նանի	տնդոնր նանի
Գործ	ստոնր նանով	տոնր նանով	տնդոնր նանով
Ներգ.	ստոնրանում	տոնրանում	տնդոնրանում

Այսպես նաև՝ Մեղրու շրջանի Շվանիձորի խոսվածքը ներկայի կազմությամբ նման է Ղարաբաղի բարբառին, բայց անցյալ անկատարի կազմությամբ հիշէցնում է Մեղրու բարբառը. օրինակ՝

Կ՛իրիւմ ւմ, կ՛իրիւմ ւս կ՛իրիւմ ւն և այլն,  
Կ՛իրիւմ ւմ ւնւ, կ՛իրիւմ ւս ւնւ, կ՛իրիւմ ւն ւնւ և այլն.

Այդ ամենից նկատելի է, որ Մեղրու բարբառը բուն էլ է ավելի ընդարձակ տարածություն, քան Մեղրի գյուղն է. Այդ Բարբառով խոսել են Մեղրու շրջանի բոլոր գյուղերը և կապանի հարավը, բայց ենթարկվելով Ղարաբաղի բարբառի ազդեցության՝ այդ շրջանի բոլոր գյուղերի խոսվածքները վերածվել են Ղարաբաղի բարբառի, պահելով իրենց մեջ մայրենի բարբառի մի շարք գծեր:

Նշանակում է՝ այն ամենը, ինչ որ մենք կոչել ենք կամ ընդունված է եղել Ղարաբաղի բարբառ կոչել, Ղարաբաղի բարբառը չէ, այլ նաև Ղարաբաղի բարբառի ուժեղ ազդեցություն ենթարկված այլ բարբառներ: Մեզ համար պարզ է դառնում, որ Ղարաբաղի և Սյունիքի հարավում գտնվող գոնե չորս բարբառները կլանվել են Ղարաբաղի բարբառի կողմից և մեր այսօրվա պատմությունը գտնում է նրանց մնացորդները կամ, որոշ գեպքում, հետքերը միայն: Ենթարկվելով Ղարաբաղի բարբառի ազդեցության, այս բարբառներն իրենց հերթին նույնպես ազդել են Ղարաբաղի բարբառի վրա, գոնե այն շրջաններում, որոնք ընկած են հարավին ավելի մոտ,

<sup>1</sup> Տեղեկություններն առնված են ուսուցիչներ՝ Վարդանյան Համբարձումի և Սեյրանյան Վահանի նյութերից:

և ահա այդ բոլորի հետևանքով է, որ Ղարաբաղի բարբառի մեջ մենք գտնում ենք միևնույն քերականական ձևերի բազմաթիվ տարբերակներ: Այդ ավելի բացատրելի է նաև նրանով, որ Ղարաբաղի և Զանգեզուրի մի շարք շրջաններում այժմ ապրող գյուղերի մի մասը գաղթել է հարավային շրջաններից և տեղավորվել Ղարաբաղի բարբառով խոսող գյուղերի միջավայրերում, ապա վերածվելով Ղարաբաղի բարբառի, պահպանել է իր մայրենի բարբառից տարբերակիչ գծեր: Դրա հետևանքով նույնպես առաջացել են այն տարբերությունները, որ այժմ կարելի է գտնել Ղարաբաղի բարբառով խոսող գյուղերից համարյա ամեն մեկում:

Մարդակերտի շրջանում կա մի ենթաշրջան, որ իր ապառնին կազմում է «ան» վերջավորություն ունեցող ապառնի դերբայով: Մեր կարծիքով այդ շրջանի խոսողների մի մասը պետք է որ լինեն Շամախուց գաղթածներ, քանի որ Շամախու բարբառում գտնում ենք մենք այդ դերբայը:

Կիրովաբաղի խոսվածքը նույնպես կազմում է Ղարաբաղի բարբառի ենթաբարբառը, սակայն նրա մեջ եղած բոլոր այն տարբերությունները, որ նկատելի են Ղարաբաղի բարբառի համեմատությամբ, մոտեցնում են այդ խոսվածքը Արարատյան բարբառին (ձայնավորների սղման և հնչյունափոխության նվազումը, ակամ վերջավորությամբ ապառնի դերբայ կազմելու բացակայությունը, օժանդակ բայերի նմանությունը Արարատյան բարբառին և այլն): Կիրովաբաղի շրջանի Գետաշեն և Բանանց գյուղերի խոսվածքները նման են Մարդակերտի շրջանի խոսվածքներին և վկայում են այնտեղից գաղթած լինելու մասին:

Կիրովաբաղից սկսած, գալով դեպի արևմուտք, Արարատյան բարբառի գծերն ուժեղանում են և Ղարաբաղի բարբառի գծերը թուլանում, Շամաշղիների և Դիլիջանի խոսվածքների մեջ գերակշիռ տեղ բռնում են Արարատյան բարբառի գծերը (ձևաբանությամբ դրանք նման են Երևանին, իսկ տեղաշարժով՝ Ղարաբաղին): Ղարաբաղի բարբառի թույլ ազդեցությունը նկատվում է նույնիսկ Լոռու խոսվածքի վրա:

Ղարաբաղի բարբառի հնչյունական կազմությունը

Ղարաբաղի բարբառն ունի գրական լեզվի բոլոր հնչյունները, բացի ֆ-ից, որի փոխարեն գործ է ածվում փ. օրինակ՝ փիզիկա > ֆիզիկա, փաննար > ֆանար և այլն:

- Բացի այս՝ Ղարաբաղի բարբառն ունի օ, օ, ու ձայնավորները նաև ք՛մային ք՛, կ՛, ք՛ բաղաձայնները, նկատելի է, որ՝
- ա > օ. գամ, գաս > կ՛ամ, կ՛աս, գարուն > կ՛արունք,
- > է. բան, բամբակ > պէն, պէմբակ, բարակ > պէրակ.
- > ի. աւել > իվիլ.
- և > յէ, է. ես > յէս, եզն > յէզնը, բերան > պէբան.
- > ի. թել > թիլ, աւել > իվիլ, ցերեկ > ցիրէկ.
- > ա. երկաթ > արկաթ, երազ > արազ.
- > ը. մեր > մըր, ձեր > ձըր, փեսայ > փըսա.



n > վրէ. ոտն > վրէննը, որ > վրէր, որձակ > վրէրցակ.  
 > ու. տորոն > տուրուն, կոտեմն > կուտեմնը.  
 > օ. գող > կ'օղ, ձոր > ծօր, գործ > կ'օրծ.  
 > րէ. սովորել > սրվրէրիլ.

ni > օ. տուն > տուն, թութ > թօթ, մուկն > մօկնը.  
 > ու. ձուկն > ծնիկնը, ձու > ծնի, ջուր > ճուր.  
 > օ. ուրիաթ > օրիսթ, գլուխ > կ'ըլօխ.

ի > է. քիթ > քէթ, տարի > տարէ, գարի > կ'օրէ.  
 > րէ. կոխիվ > կըռք վ, ամիս > ամրէս, միս > մրէս:

Երկարբառներից՝

այ > է. այծ > էծ, այս, այդ այն > էս, էտ, էն.

իւ > ու. ձիւն > ծնիւն, հարիւր > հարոնը.

ոյ > ու. բոյն > պոն, կապույտ > կ'ապոնու.

Ղարաբաղի բարբառի բաղաձայնական սիստեմը երկաստիճան ձայնեղազուրկ է, ձայնեղներ պատահում են ուղղակիներից հետո և կամ օտար բառերում. օրինակ՝ բամբակ > պէմբակ, բէգ, ամբար, բուսաթ և այլն.

Մասնակի երևույթներից կարելի է հիշել «ն» կապակցութեան «վր» դառնալը. հող > վրէղ, հոտ > վրէտ, հոր > վրէր:

Մի շարք բառերի սկզբին ավելացնում է ն. օրինակ՝ հօր > ուր, հինչ > ինչ, հինգէր > ընկեր, համօթ > ամօթ և այլն. Գրաբարյան բառավերջին ն-ն, որ գրական լեզվի մեջ ընկած է, այս բարբառում ոչ միայն պահպանվում է, այլև վրան ավելանում է մի «ը» ևս. օրինակ՝ մուկն > մօկնը, նուռն, նօռնը, ձուկն > ծնիկնը, մատն > մաննը և այլն.

«Տն» կապակցութեանը դառնում է «նն», օրինակ՝ մատն > մաննը, ոտն > վրէննը և այլն.

Ղարաբաղի բարբառում կարող են սղվել բոլոր ձայնավորները, եթե նրանք գտնվում են շեշտվող վանկից դուրս. օրինակ՝ կարճացրած > կըրճըցրած, արևիդ > րրէվրէտ և այլն:

Ձևաբանություն

Ղարաբաղի բարբառի շեշտը նախավերջին վանկի վրա է. օրինակ՝ քէկ'ցալ ըմ, գո'ւղում չըմ և այլն:

Ղարաբաղի բարբառն ունի էր, Աէր, Աէ, էնի և օտ հոգնակիներ. «էնի» հոգնակին գտնում ենք Շամշադինի խոսվածքում:

Հոլովում

Ղարաբաղի բարբառի հոլովումը գրականից տարբերվում է բացառականով և գործիականով և նրանով, որ սեռական հոլովը հող է ստանում. օրինակ՝ ծառին տակը:

Ուղղ.	սար	սարէր
Սեռ.	սարի(ն)	սարէրի(ն)
Տր.	սարի(ն)	սարէրի(ն)

Հայց.	սար	սարէր
Բաց.	սարան	սարէրան
Գործ.	սարավ	սարէրավ
Ներգ.	սարում	սարէրում

Ածականների մեջ նորութեանը չկան, թվականների դասականը կազմում են ազրբեջանական «ինջի» վերջավորութեամբ.

Անձնական դերանուններ

Ուղղ.	յէս	տոն	մունք	տոնք
Սեռ.	իմ	քու	մրէր	ծրէր
Տր.	ինձ	քրէդ	մրէդ	ծրէդ
Հայց.	»	»	»	»
Բաց.	ընձանա	քըզանա	մըզանա	ծըզանա
Գործ.	ընձանավ	քըզանավ	մըզանավ	ծըզանավ
Ներգ.	ընձանում	քըզանում	մըզանում	ծըզանում

Ցուցական դերանուններ

եզակի

Ուղղ.	էս	էտ	էն
Սեռ.	ըստրա	ըտրա	ընդրա
Տր.	ըստրա(ն)	ըտրա(ն)	ընդրա(ն)
Հայց.	էս, ըստրան	էտ, ըտրան	էն, ընդրան
Բաց.	ըստրանա	ըտրանա	ընդրանա
Գործ.	ըստրանավ	ըտրանավ	ընդրանավ
Ներգ.	ըստրանում	ըտրանում	ընդրանում

Հոգնակի

Ուղղ.	ըստրանք	ըստանանք,	ըտրանք,	ըտանանք,
		սըհանք		տըհանք
Սեռ.	ըստրանց	ըստանաց,	ըտրանց,	ըտանաց,
		սըհանց		տըհանց
Տր.	»	»	»	»
Հայց.	»	»	»	»
Բաց.	ըստրանցան	ըստանացան,	ըտրանցան,	ըտանացան
		սըհանցան		տըհանցան
Գործ.	ըստրանցավ	ըստանցավ,	ըտրանցավ,	ըտանցավ
		սըհանցավ		տըհանցավ
Ներգ.	ըստրանցում	ըստանցում,	ըտրանցում,	ըտանցում,
		սըհանցում		տըհանցում

Ուղղ.	ընդրանք,	ընդհանք, նըհանք
Սեռ.	ընդրանց,	ընդհանց, նըհանց

Տր.	ընդրանց,	ընդհանց, նըհանց
Հայց.	»	»
Բաց.	ընդրանցան,	ընդհանցան, նըհանցան
Գործ.	ընդրանցավ,	ընդհանցավ, նըհանցավ
Ներգ.	ընդրանցըմ,	ընդհանցըմ, նըհանցըմ

Խոնարհում

Ղարաբաղի բարբառը սամանական եղանակի ժամանակները (բացի կատարելից) կազմում է անալիտիկ սխեմով, որ բաղադրվում է դերբայից և օժանդակ բայից. օժանդակ բայի անցյալի ձևերը իրենց արմատը կորցնում են: Անկատար դերբայը կազմում է «ուժ» վերջավորութամբ, ապառնին՝ «ական» վերջավորութամբ. վաղակատարը՝ «ու» վերջավորութամբ. Օժանդակ բայի երրորդ դեմքը լինում է «ա» կամ «ան», օժանդակ բայի անցյալի ձևերը «է» արմատականը կորցնում են, երրորդ դեմքը լինում է «ար»:

Ներկա		Անցյալի անկատար	
Կ'իրբւմ ըմ	կարթբւմ ըմ	Կ'իրբւմ ի	կարթբւմ ի
» ըս	» ըս	» իր	» իր
» ս	» ս	» ար	» ար
» ընք	» ընք	» ինք	» ինք
» ըք	» ըք	» իք	» իք
» ըն	» ըն	» ին	» ին

Ապառնի

Կ'իրբւական ըմ	կըրթբւական ըմ
» ըս և այլն.	» ըս և այլն.

Անցյալի ապառնի

Կ'իրբւական ի	կըրթբւական ի
» իր	» իր
» ար և այլն.	» ար և այլն.

Վաղակատար

Անցյալի վաղակատարի

Կ'իրաւ ըմ	կըրթէցաւ ըմ	Կ'իրաւ ի	կըրթէցաւ ի
» ըս	» ըս	» իր	» իր
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Հարակատար

Կ'իրած. ըմ	կըրթէցած ըմ
» ըս	» ըս
» ս	» ս
և այլն.	և այլն.

Անցյալի հարակատար

Կ'իրած ի	կըրթէցած ի
» իր	» իր
» ար	» ար
և այլն.	և այլն.

Անցյալ կատարյալ

Կ'իրէցէր Կ'իրէց Կ'իրէցէնք Կ'իրէցէք Կ'իրէցէն

ձական և պայմանական եղանակները առանձին նորություն չունեն. կազմում են հետևյալ կերպ

Կ'իրէմ	կարթամ	Կ'իրի	կըրթի
Կ'իրէս	կարթաս	Կ'իրիր	կըրթիր
Կ'իրի	կարթա	Կ'իրար	կարթար
Կ'իրէնք	կարթանք	Կ'իրինք	կըրթինք
Կ'իրէք	կարթաք	Կ'իրիք	կըրթիք
Կ'իրէն	կարթան	Գ'իրին	կըրթին

անական եզանակը ավելացնում է «իք», իսկ հարկադրական եղանակը՝ «իք» կամ «պէզմա» եղանակիչները:

բաղի բարբառն ունի նաև շարունակականի ձևեր, որ կազմվում են «ն» վերջավորություն ունեցող դերբայով (Կ'իրէլծվ) և օժանդակ բայի վ. Շարունակական դերբայը կազմվել է անորոշ դերբայի գործիականից. օրինակ՝ կ'իրէլաւ, այսինքն՝ գրելով, Գրական լեզվի մեջ անորոշ բայի գործիականի նույնը (գրելով) օգտագործվում է նախագատարի վրա գործողության գույնը կատարվող երկրորդական սուբյան վրա գործողության նամար, ուստի «գրելով» նշանակում է «գրելու գործողության մեջ լինելով»: Ուստի Ղարաբաղի բարբառը «Կ'իրէլծվ ըմ» ասելից անցանկատար է, թե խոսողը շարունակաբար գործողության մեջ է խոսում մոմենտին:

Շարունակական ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալի անկատար:

Շարունակական

Ներկա		Անցյալի անկատար	
Կ'իրլծվ ըմ	Կ'իրլծվ ի	Կ'իրլծվ ըմ	Կ'իրլծվ ի
» ըս	» իր	» ըս	» իր
» ս	» ար	» ս	» ինք
» ընք	» ինք	» ըք	» իք
» ըք	» իք	» ըն	» ին

Ն Մ Ո Ւ Շ Ն Ե Ր

Ղարաբաղի բարբառով

Տընդըլբաղիս թըրբում ըմ մին խնամար ան կամ թա՝ նուրէրբում Լէմսըս-տանա՝ մին հայ կողէթըմ կիրան ըն, թա ընդէղ մի քօհնան կիրբըմ տան ան յէկալ, վըբ բավարարեցեք՝ հայէր ըն, ամմա ներանք թարսվալ ըն, վըզավ չըն օնըմ:

Տընդլազըս ասըմ ա՝ շատ դալաթ ըն անըմ. բավարացեք՝ հայէր ըն, էն էլ Ղըրբբաղան ք նէչըցրած. լընա բավար պառը ինքը նըշանց ա տամ, թա տընանք հինչ թայփա ըն, չնն Բավարը—բավարար պառի կըրըցրածն ա, բը յօռ օնիս՝ ավար—թալանչի տան կը կամ (իրեբմա՝ վըբ անաչ շատ թալանչի ըն ինն, բարա մհար էլ քօհնըցրալ ըն). բ-ին տեղը ծ տի-նիս, ծանվար կըտէնա (ծանվար օտող էլ ըն ինն. ծրվարա էջմիածին լանվ փըլավ ըն իփրմ, կողակն էլ յէրան), իս տինիս խավար անն կը կան, ա տի-նիս տավար կը տէնա: Մախլաս թարր վըբ յօռ տաս, հայավէտը նըստա շըռըռըմ ա: էար գօրա էլ հաստարըմ ընք՝ փօրը հացուտ ինն Բիսմար-կը, վըբ բավարացի ա, էլնա Ղըրբբաղան ա, բա վըբ Ղըրբբաղան չինանը, կըլիբըմ ինչը նըշաղան կինանը:

(Տմբլաչի թաշան. Ջուռնա-Տմբլա, գիրք Ա, էջ 121—2, 1907):

ԿՈՏՐԱԾ ՀԻԼԻ

(Ղարաբաղի անցյալից)

Շուշվըէցի Պըտին մի իշապէն տէրմանա տանում Ղալան. Տէրմանը ծըխէլան յետնը մի թափան ա իք՝ օնում, ճէլի յէտ տէնըմ տօն. Ղըլան տան կաման յետնը, հըրըցումը յէշում ա տէնըմ մին գատ փըլըստրատէ ա տամ, ասըմա.—հանլըթ անկին քար կինի, քինիմ յօր օնիմ. Յօրա օնըմ, յէշում, տէնըմ մին ջուվար մաչին, վըբ լանվ վիրնովնըրգ ա անում, էղ ջու-վարը նըմընցընըմա ներան ասօրը.—Իմ ասըբըն ա վըբ կա, աստված ա զըրկալ ինն մհար, վըբ ամըն օր տէնանամ. պչպչօրումա, լանց ինում, ըլ-լէխումը փըթաթում, տանում տօն: Ամըն ըռութանա սանդուղը պէց ա անում, յըլլէխան տան օնում, յէշում, պըչպչօրում, լանց ինում, յետնան քինում ներան պէնէն. Մին քանէ օրան յետնը կնըգը դոյմիշ ան ինում, տէնում ա, վըբ մարթը սընդուղան մին գատ տան կալանվ, պըչպըչօրից, լանց ինն, էլընա տրավ տըղը: Մարթը վըբ տանան քինում ա, քըմական ինքնա սանդուղը պէց օնում, յըլլէխում փըթաթածը տան օնըմ, յէշում, տեսնըմ մին կընէգ՝ մաչին:

—Վա՛յ, քուռանամ յէս, մարթըս սիրական ա պահում, էլ յէս նրա քըշտէն կընական չըմ. Մին խիլան լանց ա ինում, տըռանը նըստըում, մար-թու կանում յէշում. Մարթը վըբ հանդան կամ ա, կընէգը յըբրա ա պըրծ-նում:

—Ա՛ մարթ, տու սիրական ըս պահում, յէս էլ քըշտէտ կէնըմ չըմ, քինում ըմ իմ հանանցա տօն:

1 Լեմսըստան—Գերմանիա:

—Ա կնըգ՝, հօրա սիրականըս, պա տի խօսք կասին:  
—Հընկ սընդուղումը, ամըն օր տան ըս օնում, պըչպըչօրումըս:  
—Ա կնըգ՝, պա էն սիրական ա, էն իմ ասըբըն ա: —Քօհնա, յէր կալ տէս, սիրական ա, թա քու ասըբըն ա:

Սընդուղան տան ըն օնըմ, կնէգը յէշում ա, ասում՝ սիրականն ա. մարթը յէշում ա, ասում՝ իմ ասըբըն ա: Մին խիլան զըլմըղալ ընէլան յէանը, քինում ըն գէրին կօշտը, ներանց դավին կըտէ: Մարթը ներանն ա ասըմ, կընէգը ներանը: Ագէրը ինքն ա յօր օնըմ, յէշում, յէշում, յէտ-նան ասըմ:

—Ա՛յ գօհն, տու զըլմըղալ մըբ անէլ, էս քու ասըբըն չի. ա՛յ կընէգ՝, տու էլ լըչըսթուս մըբ անէլ, էս սիրական չի, էս ինն օտող քահանան ա:

Գրի առաջ՝ Ա. Ս. Բարայան

(Հեռակա մանկավարժական ինստիտուտի դասախոս):

Դեղը պատահել է այն ժամանակ, երբ հայելու գազափարը չի եղել գյուղերում, և ոչ-ոք իր դեմքը հայելու մեջ տեսած չի եղել:

ԿԷՌԹՆՈՒԿՆ ՈՒ ԿՕՎԸ

Մին օր կէսթնուկը  
Տընանըմ ա կօվին՝  
Խէ շատ տըկըզած,  
Փօրը լավ լըցված,  
Կըլօխը յօր չօնըմ,  
Օգըմ ա ինքն էլ  
Օռչի, տըկզի,  
Կօվի չանք տէնա,  
Հընգէրունց առաջ  
Վըբ միշտ պարծէնա,  
Օժ ա տամ, օժ տամ,  
Փըքըվըմ, տըռըղըմ,  
Ու կօղքին կաղնած  
նրան քըվօրը  
Շննչուն հըրընըմ.  
—Ա՛ քուր, քը մատաղ,  
Մին տէս հըսալ ըմ  
էս կօվին քօյին:

—Հինչ ըս տան տալիս,  
Հանն հըշտէ՛ղ ըս...  
Իսկի հըսալ չըս  
Դըռնաղին քըթին:  
Դէ, մընըգ՝ յէշի...  
—Չէ, իմ քուրիկ ջան,  
Հանն հեռու ըս,  
Տնի կօվին կըտին  
Ջատու նման չըս,  
էս մըբ կէսթնուկը  
Աղղան նըրէտ  
էնքան օժ տըվավ,  
Օռավ ու փըքվավ,  
Վըբ բիրդան բիրդ  
Ինքն էլ չիմացավ  
Վաքից, տըրաքից,  
Տըղը փօլ էկավ:

(Տմբլաչի թաշան. Ջուռնա-Տմբլա, գիրք Բ, էջ 114, 1908 թ.):

Տընդլբաղ—դհուլ, թմբուկ  
Կանն ա—գալիս է

Յէրա—վրա  
Հայավէտ—հայերեն

Լըհա—հենց  
 Չոն—որովհետև  
 Յոս օնիս—վերցնես  
 Մհար—համար

Թափան—տնասունի ստամոքս  
 Ճէլի—շտապ, արագ

Չուվար—մարդ  
 Յըլէխում—ազուլում  
 Դույմիշ ան ինում—զգում է, նկատում է  
 Խիլի—բավականին

Չինար—չիհներ  
 Ինար—իհներ  
 Կինար—կիհներ

Հըղըցումը—ճանապարհին  
 Փլըստրատէ—փայլ

Յէշում ա—նայում  
 Դէր—տերտեր  
 Դավի—վեճ

Կէնթնուկ—գորտ  
 Դոնադ—սմբակ, կճղակ, պճեղ  
 մընէպ—հիմա

Չանգեզուրի օրջանի Կորիս Բաղաթի խոսքածեօվ

ՇՆՇ ՄՈՒՐ

Կոնիլը հանդըմը մըն էշ արեւով, յիրան ինգ'անով թա օտի: Էշը ըզա-  
 չանք բրով: Վրէկըմ մըննէմ, քըջարէրա կ'ալ, մին ցավ օնիմ օրը-  
 արմըս, Էն տէն տար ինձանա, յեանը նանց վըէր ճըկըտապիրս ան, ինձ  
 կ'էր»:

- Ինչ ցավ ա, ասի արսնամ,—չըրցրէց կ'ոնիլը:
- Մըն մըէիս ա նի մըտալ դըրէտի վընդիս մէշը, շատ ա տանջըմ, յէր'  
 տուս կալ, վըէր սըէրտըս հովանա:
- Աչկիս յըրան, խնթիրքըտ մըէժ պան չի,—ասէց կ'ոնիլը. անց կըց-  
 ցավ իշին դըրէտի դօլը, վըէր նի մտած մըէխըվըռքընէրալը փըռնի, տուս  
 օնի, էշը հիշքան օժ օնէր, նընէնց քացի թըլտէց կ'ալի ըսիին, վըէր կըռ-  
 քընին փօրը նի տանով: Կ'ոնիլը կընձկընձալով յաց ինէլ ըսկըսէց, բ՛նէնց  
 բսէլով:
- Տըէն էր քըգ, շանջ կ'ալ, վըէր պէրանդ ըրընթաթա ըրին, ակը  
 տու էն կըլխան դասար իս իլան, մընէպ' քըգ հու ասէց, վըէր նալբանդ  
 տանաս...

Շամօագիթի նափուր գյուղի բարբառով

Հէրու ամառ յես ու մըրը ըՄտըփանանց Աքէլը վըէր կըցանք, վըէր  
 սար ք'անք, Միանը պըննէցինք ճըտըտօվէն, նըստէցինք ու ճամփա  
 ընգ'անք: Կըլէր հինգ վէրս, ք'նացէլ ինք, մըն էլ էս Աքէլը արզարած ծը-  
 յի կ'ըլուլը շուռ տըվուց դըքա տուն:

—Էտ ք'նչ ըլլավ Աքէլ:

Պան չասէց, արզարած ք'ընըմ ա. Մին ք'ըշէցի, յեղնէն հըսա ու մը-  
 հել հըրցըրի:

—Ա', դէ, հալբաթ մի պան կա, վըէր յէտ էմ տանըմ,—ասէց ու ծին  
 ք'ըշէց:

Անակիին տէղ ք'ըննց. մըրի վըէնչ յեղնէն կարամ հասնէմ, թէ յէտ  
 տանամ, վըէնչ էլ հընար ունէմ ծըյի պըուր վըէ տընէմ. Տէսա վըէր ճար  
 չի կա, ծին ք'ըշէցի, ք'ըննցի յեղնէն. Վըէր ք'ըննցինք տուն հասանք, էս  
 Աքէլը պանջի ծէրին կաղնէց ու կանչէց հարսին:

—Մանյակ, ա՛յ ախճի:  
 Հարսը տուս յէ'ավ: Աքէլը թէ՛  
 —Ախճի, մըրը սե վանէկն էրկու օր ա ծու յա ըլէլ, աչքօվ պանի ծուս  
 կուրցնի վըէլ: էս վըէր ասէց, յէտ տանով ու ասէց՝  
 —Դէ ք'ըննք, Կիկօլ:

3. ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐՔԱՌԱՅԻՆ

«Ում» ճյուղի անտեղաշարժ բաղաձայնակաճ սիստեմ ունեցող բարբառ

Ազուլիսի բարբառը հայերենի այնպիսի բարբառներից է, որոնք հա-  
 յերենի համար անգամ անհասկանալի են այն չափով, որ ոչ հայ լեզվա-  
 բաններն ուսումնասիրելիս գտնում են, որ դրանք կարող են համարվել  
 հայերենից տարբեր լեզուներ: Իրոք, եթե մենք հասկանալիություն աստի-  
 ճանը վերցնենք, ապա Ազուլիսի, Մեղրու, Կարճանի, Համշենի, Կիլիկիայի,  
 Սիրիայի, Հաճընի, Սվեդիայի, Քեսաբի, Տիգրանակերտի և ողմեցիների  
 բարբառները կարող ենք համարել տարբեր լեզուներ: Սակայն այդ բոլոր  
 բարբառների բառային հիմնական ֆոնդը և ամբողջ քերականությունը  
 ընդհանուր հայկական է, Բարբառի անհասկանալի լինելու պատճառը, մեր  
 կարծիքով, ձայնավորների մեծ տարբերություններն են. բաղաձայնների  
 տեղաշարժները երբեք չեն վնասում հասկանալուն, հասկանալուն չեն վը-  
 նասում նաև բաղաձայնների մասնակի տարբերությունները, բայց ձայ-  
 նավորների խիստ տարբերությունը բարբառը դարձնում է արդեն դժվար  
 հասկանալի: Հատկապես այն ժամանակ, երբ ձայնավորների տարբերու-  
 թյունը երևան է գալիս առանց օրենքի կամ առանց որոշակի օրինաչափու-  
 թյունների, այդ դեպքում բարբառները անհասկանալի են Ֆուժ, Չէ՞ որ  
 այս կամ այն ձայնավորը համարյա ամեն բառի մեջ կամ երկու-երեք  
 բառերից մեկի մեջ անպայման հանդիպում է, որովհետև ձայնավորները  
 փոքրաթիվ են և գործածվում են մի քանի անգամ մեծ թիվ կազմող բա-  
 ղաձայնների հետ: Ուստի, եթե նրանք խիստ փոխված են, օրինակ՝ գրաբարի  
 ա-ն վերածվել է կամ օ-ի, կամ է-ի, կամ ը-ի, է-ն վերածվել է ր-ի, ա-ի և այլն,  
 այդ դեպքում բարբառը դառնում է անհասկանալի: Բնական է, որ այս ե-  
 բևոյթին միանալով ուրիշ շատ երևույթներ, ինչպես, օրինակ, բառապաշա-  
 րի մասնակի տարբերությունը, բաղաձայնական սիստեմի տարբերությու-  
 նը, բաղաձայնների մասնակի տարբերությունները, հոլովման և խոնարհ-  
 ման տարբերությունը, ինտոնացիայի տարբերությունը և այլն,—այդ  
 ամենը բարբառը դարձնում են անձանաչելի, անհասկանալի: Իլյուստրա-  
 ցիայի համար վերցնենք օրինակ.

Ազուլիսի բարբառում ա ձայնավորի գիմաց մենք գանում ենք.  
Յ. օրինակ՝ օհ՝<ահ, օրտ՝<արտ, բօկ՝<բակ, թօս՝<թաս, խօզ՝<խազ, ծօն՝<ծառ, հօտտ՝<հաստ, տօկ՝<տակ, քօր՝<քար և այլն.

ու. օրինակ՝ քուղցր՝<քաղցր, թուհ՝<թան, ժում՝<ժամ, սունդ՝<սանդ, սունձ՝<սանձ.

նւ. օրինակ՝ բնն՝<բան, գ'նլ՝<գալ, ծննն՝<ծիրան.

օյ. օրինակ՝ սօյլ՝<սայլ, ծօյլ՝<ծալ, կօյլ՝<կալ.

օ. օրինակ՝ նօլ՝<գնալ, լօլ՝<լալ, բօնձ՝<բարձ, գ'օղ՝<գաղ, գ'օձ՝<գնջ:

է. օրինակ՝ վէղ՝<վաղ, շէհ՝<շահ, բէժինք՝<բաժինք.

ւն. օրինակ՝ հանդարտ՝<հանդարտ, շնբնթ՝<շարթ.

բ. օրինակ՝ խրդօլ՝<հաղալ, մրխօթ՝<մախաթ, կրթթօլ՝<կաթիլ, իր՝<հաղար.

ի. օրինակ՝ բիմբակ՝<բամբակ, բինջար՝<բանջար, դինգաթ՝<գանգատ.

այ. օրինակ՝ այսող՝<ասող, ծայլիլ՝<ծալիլ, հայլիլ՝<հալիլ.

Այսպիսով Ազուլիսի բարբառում ա ձայնավորը վերածվում է համարյա բոլոր տեսակի ձայնավորների և երկհնչյունների. Հասկանալի է, որ ա ձայնավոր ունեցող բառերը կգտնան անձանակների և անհասկանալի.

Համարյա նույնանման փոփոխություններ են կրում նաև մյուս ձայնավորները, երբեմն այնքան անսպասելի, որ հայոց լեզուն գիտցող, բայց բարբառներից անտեղյակ մարդը որևէ կերպ կուզեի չի կարող Օրինակ.

ծնրնն՝<ծիրան, սուպան՝<սապոն, թօփօր՝<թափօր,

տակ՝<տիկ, բրննն՝<արեգակ, գ'րլրնբօց՝<գլխաբաց և այլն.

Ձայնավորներին հակառակ՝ Ազուլիսի բարբառը բաղաձայնական սիստեմով գրաբարին նման է, նրա բաղաձայնները համարյա ամեն տեղ արտասանվում են իրենց հարադատ չընձամբ, այսինքն՝ տեղաշարժի ենթակա շեն, օրինակ.

Բնրնն՝<բերան, խնբէլ՝<խարէլ, էրբնթ՝<ուրբաթ, իբ՝<երբ, գ'ննն՝<գանակ, դանակ, մօրդ՝<մարդ, հէղդիլ՝<տեղդիլ, օռննն՝<երգում, բնրդ՝<բարդ, կ'ննդիլ՝<կարգալ, գ'րլնն՝<գլուխ, օրազ՝<ուրազ, գ'ննգ՝<գոգ, մրրգ'ննթթ՝<մարգարիտ, ձննր՝<ձոր, ձիգ՝<ձիգ, ջննր՝<ջուր, հաջիլ՝<հաչիլ, մաջ՝<մէջ և այլն.

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազուլիսի բարբառն ունի հետևյալ հոգնակի վերջավորությունները—բ, ար, նր, նր. օրինակ՝ կատու՝>կատուբ, չուխա՝>չուխաբ, իզնր՝>իզնուբ (եզներ), աօն՝>աօնար (աներ), բուխի՝>բուխիար (բողի), էխա՝>էխաար (աղա), դէղ՝>դէղար, մայր՝>մայրար, գ'ննլ՝>գ'ննլար (գայլեր), ձրմէռնր՝>ձմէռնրնէր, հրօտ՝>հրօտնէր (խրատներ) և այլն.

Կան նաև ածիք, նաթիք (նաթիք) հոգնակի վերջավորություններ, օրինակ. գ'օղնր՝>գ'օղնրնաթիք (գազարները), ուսուռ՝>ըսկըռաթիք (սուկորներ), շննն՝>շրլըհննաթիք, տափակ՝>տրփրկանիք, քուռակ՝>քըռրկանիք,

Բարբառումս կան նաև հոգնակիներ՝ արիք, գ'իք՝>գ'իք, ք'արիք՝>գ'իք, գ'իքնր՝>գ'իքնր, ջննր՝>ջրարիք:

Անք, ննք. ձիանք, լվննք (լվեր), գրբյանք.  
Արք՝>խասկարք (խոսքեր), տղարք՝>տղաներ.  
Արննք՝>սըրմնրննք (սերմեր).  
Օտիք՝>խընրմօտիք՝ (խնամիներ):

Ազուլիսի բարբառն ունի յոթ հոլով, բացառականի վերջավորությունն է «ից», երևանի բարբառի նման, գործիականի վերջավորությունն է «ավ» (նվ), Ղարաբաղի նման, ներգոյականի վերջավորությունն է «ամ» (նմ), որը հատուկ է նաև Մեղրու բարբառին միայն: Օրինակ՝

	եզակի	Հոգնակի
Ուղղ.	դէղ	դէղնր
Սեռ.	դէղի	դէղերի
Տր.	դէղի	դէղէրի
Հայց.	դէղ	դէղնր
Բաց.	դէղից	դէղէրից
Գործ.	դէղավ	դէղէրնվ
Ներգ.	դէղամ	դէղէրնմ

Հատուկ անունները սեռականում ունենում են ա կամ օ. օրինակ՝ Ավետիս—Ավետիսա, Խաչատուր—Խաչատրօ, Պետրոս—Պետրոսա կամ Պետրոսօ: Որոշ բառերի բացառականը, գործիականը և ներգոյականը ունենում են հանի կամ հանից, հանավ, հանամ. այս ձևերից հանից ձևի դուգահեռը կա Մեղրու բարբառում իբրև հլնից կամ Կարճևանի բարբառում՝ իբրև հլնի:

Ազուլիսի բարբառի թվականների դասականները կազմում են ազբր-բնջանական ինչի կամ միեջի ամանցով.

Հետաքրքրական են Ազուլիսի բարբառի դերանունները. Անձնական դերանունների հոլովման պատկերը հետևյալն է.

	եզակի		
Ուղղ.	իս		դու
Սեռ.	նմ		քու
Տր.	անձ		քէզ, քի
Հայց.	անձ		քէզ, քի
Բաց.	անձանից, ընձանից		քիզանից, քիզնանից
Գործ.	անձաննվ, ընձաննվ		քիզաննվ, քիզնաննվ
Ներգ.	անձանմ, ընձանմ		քիզանմ,

Հ ո գ ն ա կ ի

	մի ք՝	դննք
Ուղղ.	մի ք՝	դննք
Սեռ.	մի ք	ձիք
Տր.	մի գ	ձիգ
Հայց.	մի գ	ձիգ
Բաց.	մի գանից	ձիգանից
Գործ.	մի գաննվ	ձիգաննվ
Ներգ.	մի գանմ	ձիգանմ

Սա, դա, նա ցուցական դերանունները լինում են սօ, դօ, նօ ձևերով: Սօ ձևը լինում է՝ նաև զօ ձևով, եթե ցույց է տալիս անձ: Հոլովման պատկերը հետևյալն է.

Եզակի			
Ուղղ.	սօ	դօ	նօ
Սեռ.	սրօ	դրօ	նրօ
Տր.	սրօ	դրօ	նրօ
Հայց.	սրօ	դրօ	նրօ
Բաց.	սրանից, սրօանից, սրօանից,	դրանից, դրօանից	նրանից, նրօանից
Գործ.	սրանով, սրօանով, սրօանով	դրանով, դրօանով	նրանով, նրօանով
Ներգ.	սրանամ սրօանամ	դրանամ, դրօանամ	նրանամ, նրօանամ

Հ ո զ ն ա կ ի

Ուղղ.	սրուք	դրուք	նրուք
Սեռ.	սրուց	դրուց	նրուց
Տր.	սրուց	դրուց	նրուց
Հայց.	սրուց	դրուց	նրուց
Բաց.	սրուցանից, սրուցանից	դրուցանից, դրուցանից	նրուցանից
Գործ.	սրուցանով սրուցանով	դրուցանով դրուցանով	նրուցանով
Ներգ.	սրուցանամ դրուցանամ	դրուցանամ դրուցանամ	նրուցանամ

Այս, այդ, այն դերանունները գործածվում են սս, առ, ան ձևով և ունենում են հետևյալ պատկերը.

Եզակի			
Ուղղ.	սս	առ	ան
Սեռ.	սստուր	ատուր	անդուր
Տր.	սստուր	ատուր	անդուր
Հայց.	սս	առ	ան
Բաց.	սստուրանից սստրանից	ատուրանից, ատրանից	անդուրանից անդրանից
Գործ.	սստուրանով սսավ	ատուրանով ատավ	անդուրանով անավ
Ներգ.	սստուրանամ	ատուրանամ ատամ	անդուրանամ անդրանամ

Հոգնակի

Ուղղ.	սստուք	ատուք	անդուք
Սեռ.	սստուց	ատուց	անդուց
Տր.	սստուց	ատուց	անդուց
Հայց.	սստուք	ատուք	անդուք
Բաց.	սստուցուց ատուցանից	ատուցուց ատուցանից	անդուցուց անդուցանից
Գործ.	սստուցավ սստուցանավ	ատուցանավ ատուցավ	անդուցավ անդուցանավ
Ներգ.	սստուցամ սստուցանամ	ատուցամ ատուցանամ	անդուցամ անդուցանամ

Ազուլիսի բարբառը խոնարհումը կազմում է յուրահատուկ ձևով: «Ս» ճյուղի բարբառների լեզվական առանձնահատկությունների ամբողջ հանդուցը կարելի է գտնել Ազուլիսի բարբառում, հատկապես բայերի խոնարհման մեջ: Ազուլիսի բարբառը խոնարհման սիստեմով մտնում է ավելի շատ «Ս» ճյուղի, քան թէ «Ու» ճյուղի բարբառներին: Ազուլիսի բարբառում կան նույնքան եղանակներ, որքան գրական լեզվի մեջ և հետևյալ դերբայները. անորոշ՝ սըրիլ, թակիլ, անկատար՝ սըրում, թակամ. վաղակատար՝ սըրէլ, թակէլ, հարակատար՝ սըրած, թակած, ապառնի՝ սըրէլնց, թակէլնց:

Ազուլիսի բարբառն ունի օժանդակ բայի միայն ներկան. անցյալի ձևերը Ազուլիսի բարբառին անձանոթ են: Այդպես են նաև «Ս» ճյուղի բարբառների մեծ մասը (Կարճեանի, Մեղրու, Դարազաղի, Գլմարի, Քեյփանի, Շաղախի և Ուրմիայի բարբառները): Այս առանձնահատկություններից էլ բխում է Ազուլիսի բարբառի խոնարհման ամբողջ սիստեմը: Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ ըմ, ըս, ա, ըք, ըք, ըն, ըստ որում ներկայի առաջին և երկրորդ դեմքերը նույնն են (հոգնակի), անցյալի ձևերը կազմելու համար (բազազրյալ ժամանակների) Ազուլիսի բարբառը օգտագործում է «նէլ» բառամասնիկը, որ «լինել» բառի սղված ձևն է, որ «Ս» ճյուղի բարբառներում լինում է լնլ, լնն, լն: Անցյալ կատարյալի սովորական ձևը Ազուլիսի բարբառը չունի, այդպես են նաև «Ս» ճյուղի բարբառներից Կարճեանի, Մեղրու, Դարազաղի, Գլմարի և Շաղախի բարբառները: Փոխարենը գործ են անում կամ վաղակատարի ձևերը, կամ մի առանձին ձև, որն ունենում է կմ, էս, էք, էն, կամ ըմ, ըս, ա, ըք, ըն վերջավորություններ, ըստ որում բացակայում է հոգնակի առաջին դեմքի ձևը. խոնարհման ընդհանուր պատկերը հետևյալն է.

Ներկա			Անցյալի անկատար		
սըրում	ըմ	թակամ ըմ	սըրում	ըմ	թակամ ըմ
»	ըս	» ըս	»	ըս	»
»	ա	» ա	»	»	»

«ըրում	ըք	թակամ	ըք	«ըրում	ըք	նէլ	թակամ	ըք	նէլ
»	ըք	»	ըք	»	ըք	»	»	ըք	
»	ըն	»	ըն	»	ըն	»	»	ըն	

Ազուլիսի բարբառում բացակայում է վաղակատար ժամանակների սովորական գործածութիւնը: Վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևով կազմած խոնարհումը ցույց է տալիս անցյալ կատարյալի երկրորդական ձևերը, իսկ վաղակատարի գաղափարը արտահայտվում է հարակատար դերբայով կազմված բաղադրյալ ձևով: Այսպիսով՝ հարակատար և վաղակատար ժամանակների գաղափարները նույնացել են:

**Վաղակատար-հարակատար**

թակած	ըմ—թակել եմ	սըրէծ	ըմ—սըրել եմ
	և այլն.		և այլն.

**Անցյալի վաղակատար-հարակատար**

թակած	ըմ նէլ	թակել էի	և այլն.	սըրէծ	ըմ նէլ	սրել էի	և այլն.
»	ըս	»		»	ըս	»	
»	ս	»		»	ս	»	
թակած	ըք նէլ			սըրէծ	ըք նէլ		
»	ըք			»	ըք		
»	ըն			»	ըն		

Անցյալ կատարյալ ժամանակը Ազուլիսի բարբառում կազմվում է երկու ձևով՝ պարզ և բաղադրյալ: «Ե՛» խոնարհման բայերի պարզ ձևը կազմվում է Ուրմիայի, Պոյի և Մարաղայի բարբառների նման անցոյական (առանց «ց» ունենալու) հիմքով, իսկ «ա» խոնարհման բայերինը «ց» հիմքով, որ Ազուլիսի բարբառում վերածվում է «հ» հնչյունի: «Ե՛» խոնարհման բայերի անցյալ կատարյալի ձևը եզակի երկրորդ դեմք չունի: Այս ձևը քիչ գործածական է, ըստ երևույթի նոր է ձեռք բերված:

**Անցյալ կատարյալ (պարզ ձև)**

թակամ—թակեցի	սըրէմ—սրեցի	ըրվաննամ—երևացի	մոտանամ—մոռացա
թակաս	և այլն.	սըրէս	և այլն.
		ըրվաննս	և այլն.
		մոտանաս	և այլն:
—	—	—	—
թակաք	սըրէք	ըրվաննք	մոտանաք
թակաք	սըրէք	ըրվաննք	մոտանաք
թական	սըրէն	ըրվաննն	մոտանան

Ուրմիայի, Պոյի և Մարաղայի բարբառների նման Ազուլիսի բարբառը անցյալ կատարյալի առաջին դեմքում ունենում է «մ» վերջավորութիւն:

Ավելի գործածական է անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը, որ հարգատ է Ազուլիսի բարբառին:

Անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը կազմվում է «Ս» ճյուղի մի քանի բարբառների նման (Մեղրի, Կարճեան, Ղարաղաղ) վաղակատար դերբայով և օժանդակ բայով:

**Անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը**

թակալ	ըմ—թակեցի...	սըրէլ	ըմ—սըրեցի...
»	ըս	»	ըս
»	ն	»	ն
	և այլն.		և այլն:
ըրվաննլ	ըմ—երևացի	մոտանալ	ըմ—մոռացա
»	ըս	»	ըս
»	ն	»	ն
	և այլն.		և այլն:

Այսպիսով՝ անցյալ կատարյալի կազմութեամբ Ազուլիսի բարբառը մոտենում է «Ս» ճյուղի բարբառներին, հեռանալով «Ում» ճյուղից:

Սահմանական ապառնի ժամանակի ձևերը կազմում են «էլնց» կամ «ալնց» վերջավորութիւն ունեցող դերբայով, որ նույնանուն է գրաբարի ապառնի դերբայի հետ:

**Ա պ ա ռ ն ի**

թրկէլնց	ըմ—թակելու եմ	մըռընէլնց	ըմ—մոռանալու եմ
»	»	ըս	»
»	»	ն	»
	և այլն.		և այլն:

ըրվէլնց	ըմ—երևալու եմ
»	ըս
»	ն
	և այլն:

**Անցյալի ապառնի**

թրկէլնց	ըմ նէլ—թակելու էի	մըռընէլնց	ըմ նէլ—մոռանալու էի
»	ըս	»	ըս
»	ն	»	ն
	և այլն.		և այլն:
	ըրվէլնց	ըմ նէլ—երևալու էի	և այլն.
	»	ըս	
	»	ն	
		և այլն.	

**Ըղծական եղանակ**

Ապառնին կազմում է գրական լեզվի նման, անորոշ դերբայի «լ» վերջավորութեան փոխարեն ավելացնելով գեմքի վերջավորութիւնները, իսկ անցյալի ապառնին՝ ավելացնելով միայն «նէլ» մասնիկ-բառը:

Ա պ ա ո ն ի

թակիրմ—թակեմ	մըռանիրմ—մոռանամ	ըրվճմ—երեամ	և այլն.
թակիրս	մըռանիրս	ըրվճս	
թակիր	մըռանիր	ըրվճ	
թակիրք՝	մըռանիրք՝	ըրվճք՝	
թակիրք՝	մըռանիրք՝	ըրվճք	
թակիրն	մըռանիրն	ըրվճն	

«Երեւալ» բայը, ինչպես և «ալ» խոնարհման բոլոր բայերը անորոշ դերբայում ունենում են «օլ» կամ «օլ» վերջավորութիւն, ուստի ըղձական ապառնիւմ ունենում են «օմ» կամ «օմ» վերջավորութիւն:

Անցյալի ապառնին կազմվում է ապառնից, ավելացնելով սովորական «նէլ» բառ-մասնիկը:

Անցյալի ապառնի

թակիրմ նէլ—թակերի և այլն.	մըռանիրմ նէլ—մոռանայի և այլն.
թակիրս »	մըռանիրս »
թակիր »	մըռանիր »
և այլն.	և այլն:

ըրվճմ նէլ—երևայի և այլն.
ըրվճս »
ըրվճ »
և այլն.

Պայմանական եղանակի սովորական կազմութիւնը չկա, չկա ուրեմն և «կ» եղանակիչը, դրա փոխարեն պայմանականը կազմում է անորոշ դերբայով և օժանդակ բայով:

Պայմանական եղանակ

Ապառնի

թակիրլ ըմ—կթակեմ՝	ըրվճլ ըմ—կերեամ
» ըս	» ըս
» ա և այլն.	» ան և այլն.

Անցյալի ապառնի

թակիրլ ըմ նէլ—կթակերի	ըրվճլ ըմ նէլ—կերեայի
» ըս	» ըս
» ան և այլն.	» ա և այլն.

Հարկադրական եղանակը կազմում է «մնտնմ ան» կամ «մնտնմ ան» եղանակիչով, իսկ հարկադրական անցյալի ապառնին ստանում է սովորական «նէլ» մասնիկը. ընդհանուր պատկերը կլինի հետևյալը.

Ա պ ա ո ն ի

մնտնմ ան (մնտնմա)	թակիրմ—պիտի թակեմ և այլն:
» »	թակիրս
» »	թակիր
» »	թակիրք՝
» »	թակիրք՝
» »	թակիրն

Անցյալի ապառնի

մնտնմ ան (կամ՝ մնտնման)	թակիրմ նէլ
» »	թակիրս »
» »	թակիր »
» »	թակիրք՝ »
» »	թակիրք՝ »
» »	թակիրն »

Մնտնմ ան եղանակիչը Յղնայի խոսվածքում լինում է մէտիլ, վերջին ձևով գտնում ենք Մեղրու բարբառում, թե այս դեպքում և թե բազմաթիվ շատ երևույթներով Յղնայի խոսվածքն ավելի նման է Մեղրու բարբառին, քան Ազուլիսին:

Անհրաժեշտ է հիշատակել Ազուլիսի բարբառի մի կարևոր հատկանիշ ևս, դա այն է, որ ձայնավորներով սկսվող բայերն ստանում են սկզբից «ն» մասնիկ. օրինակ՝ առում են—նառում ըմ, ուտում են—նօտում ըմ, ուզում են—նիզում ըմ և այլն:

Ժխտականը կազմում է «չ» մասնիկով, որը գրվում է օժանդակ բայի վրա և ընկնում է բայից հետո. օրինակ.

բակամ չիմ—չեմ թակում, սբում չիմ—չեմ սբում  
 բակամ չիմ նէլ—չէի թակում, սբում չիմ նէլ—չէի սբում  
 բակամ չիմ չեմ թակել (թակած), սբեմ չիմ—չեմ սբել (սբած), բակալ չիմ—չթակեցի, սբեմ չիմ—չսբեցի և այլն:

Խոնարհման պարզ ձևերի վրա ավելանում է «ունչ»—ոչ բառ-օրինակ՝

բակիմ ունչ—չթակեմ, սբիմ ունչ—չսբեմ  
 բակիմ ունչ նէլ—չթակերի, սբիմ ունչ նէլ—չսբերի և այլն.

Ազուլիսի շրջանի համարյա բոլոր գյուղերի խոսվածքները նկատելի տարբերութիւններ ունեն Ազուլիսի բարբառից, առանձնապես նկատելի է Յղնայի և Ռամիսի խոսվածքների տարբերութիւնը, որ մոտեցնում է գրանք «Ս» ճյուղի բարբառներին:

ՆՄՈՒՇՆԵՐ ԱԳՈՒԻՍԻ ԲԱՐՐԱՌԱՌՎ

\* \*

Մուչն<sup>1</sup> ումանի քայնթ ամման գինի խմէլիս մա շնտ կըրմըրում ա նէլ, հինգ՝իւն ան նրօ միշտ տընօղ ան նէլ տալիս, նօ հինգ՝իւն տօսը կօ-

<sup>1</sup> Այս և հաջորդ 3 նմուշները վերցված են Ս. Սարգսյանցի «Ազուլիսի բարբառը» աշխատութիւնից:



պէկ ան տրվել, որ ան ծրծանդի ունչ: Հինգիւրը վեր ան կալալ փուղը: Իբր  
մույն անքամ ալ հացի վախտ նո մույն քանի թօս գինի ա խրմէլ, քայն-  
թը ալ կ'ըմբէլ ան, հինգիւրը յիտ ա տրվել նրբօ փուղը, ահալ:

— Ախպար, յինգօս քու անկու շօհա. քընթէա հալը հալ չի:

Մույն ուսմանի—մի ոմնի	Իբր—երբ որ
Քայնթ—քիթ	Նրբօ—նրա
Տնօղ—տնաղ	Ահալ—առէլ է
Տօսը—տասը	Յինգօս—ետ վերցրու:
Ուչ—ուչ	

\* \*

Մույն մօրդ գելիս ան աէրտէրին կէշար խընթըրում, որ մույն խըն-  
թիբ օնի՝ աէրտէրը գըրի: Տէրտէրը նահամ ա:

— Իս գ'անրի չիմ գըրի, առնարըս ցավամ ա:

— Դէ ունչ կօ, աէրտէր, առնէրավըս չիս գըրէլնց հօ:

— Իս ամպէս բմ գրում, — նահամ ա աէրտէրը, — որ ան գըրէթըս ունման  
չի գ'անրամ կարգի, ալ ան ան ըն կանչամ ան գըրէթըս կարգիմ, հըրգծ ան որ  
գըրիմ, ան մ'անիլ անն զանչին կարգիմ, համա իս գ'անրիլ չիմ ննի՝ առնա-  
րըս ցավամ ա:

նահամ ա—ասում է	ննի—գնալ
գ'անրիլ չիմ գըրիլ—չեմ կարող գրել	անպէս—այնպես
առնարս—առնելըս	ունման—ոմն, որնէ մեկը
չիս գըրէլնց—չես գրելու	անն—ինն
մ'անիլ—պիտի	հըրգծ—հիմա

\* \*

Մօրդ: Այ կնակ, ասար մույն ննի ըմ գըրէթ, սոննն պահա, յատավ  
իրիթ ննի ան մույն տէղից գըրանիլ ըք, մույն ձի ալ ճարիլ, վեր  
նէլիլ մույն տէղ Երուսաղէմ ննի:

Կնակը: Աղիկ, Երուսաղէմից որ գ'անք, ձիը տօլ ըս, որ էլիմ ննմ հայրացըս  
տիսնիմ:

Մօրդ: (Կըրնվէլ ա կընդուն վանն, ըսկէլ թակի). — Ձիը բըգանն, դու  
էլիս նն հայրանցը...

\* \*

Մույն մարդու շօս հուջնթ կնակ ան նէլնմ. Մույն որ ան մօրդ  
ընան ան կընակը գիտի զըրաղավ նէլիս ըն նէլ:

Մօրդը տիսնամ ա գիտին ան զըրաղին խուտը քաղած ըն, նահամ ա  
կընդուն:

- Այ կնակ, տիս, գիտին ան զըրաղին խուտը քաղած ըն:
- Քաղած չին՝ խէղած ըն:
- Այ կնակ, խուտը խէղիլ չին, քաղիլ ըն:
- Ձէ՛, քաղիլ չին՝ խէղիլ ըն:

— Այ կնակ, քաղած ըն՝ խէղած չին:

— Ձէ՛, խէղած ըն՝ քաղած չին:

— Քաղած ըն:

— Խէղած ըն:

Մօրդը բըրգվում ա, վիկալում կընդուն գըննմ գիտը:

Կընակը հէղգվում ա, ալմա հեղգվում ժամանակը ձէրքը ջըրցը հա-  
նամ ա՝ գ'ըրհին վանն մըրատի նմուն շունց տալիս, ահիլընան թն՝  
— Խէղած ըն, խէղած...

Յղևայի ենթարարբառով՝

Մուն օղծ էլնմ, էլաքը բալան էլնմ:

Մուն օր առ օղծը բալաքը հանում ա, օր շօս անի:

Մուն շօքան գօլիս ա բալաքը սպանում. մարը փխնաս ա՝ մտում  
պննը: Մինչև իրիք ամիս առ շօքանի փէյսարը պահում ա օր կծի, գրէս  
չի կծի:

Մուն օր յնրան պննին մէշիցը տըսնաս ա, թէ շօքանը օչխարը կթում ա,  
ըմանավը դրում ընդէղ, ինքը շօքանը ննիս ան, օր յիտ տօ փախած օչխարը:  
Օղծը պննիցը տուս ան գ'ան, ան բագին կախցին մէշին աղղու նածում:  
Մուն մէրուքը ձիկ էրքնջ գծիս խում կախցը, սըտըկէս ընդէղ-  
ղուչարը գ'ան ըն մէյսը նօտում. ննիս ըն ծոզը՝ ճոն խմին, սըտըկէս ըն-  
գընում ծօզը: Մալին մէշին ծըկնարը նօտում ըն կըտօրվում, ճանապար-  
հօթնէրն ալ նրոց բընում ըն նօտում, սըտը ալ կտօրվում:

Ռամիսի ենթարարբառով՝

Մուն օխցը ա ննի, օխտու բալան ան ննի: Մուն օր առ օխցու բա-  
լաքը հանում ա, էր շօս անի: Մուն շօքան ա գ'անիս, բալաքը սպանում.  
մարը փխնալիս ա՝ մտնում ա պննն: Մինչուք իրիք ամիս առ շօքանի  
բուխտու պահում ա էր կծի, գ'ըրնիս չի կծի: Մուն օր սրան պննին մէ-  
շիցը տըսնալիս ան, թէ շօքանը օխչարը կթում ա, ամանավը տընն ան ընտէղ,  
ինքը շօքանը ննիս ան էր հիտ տօ փախած օխչարը: Օխցու պննիցի տնս  
ան գ'անիս, ան փաթըլի կօննի մէշը աղու անում: Մուն միրուքը ձիկ էրքնջ  
գծիս ա խում կօննուց, բստըկէլիս ան ընդէղ. զուչարը գ'անիս ըն մէսը  
տում. ննիս ըն ծոզը՝ ճոն խմին. բստըկէլիս ըն ընգ'ան ըն ծոզու: Մօ-  
վին մէշին ծնիկորը տում ըն կըտօրվում, ճնափա նացուղ էկօղնին ալ նրոց  
բանում ըն օտում, սըտը ալ կըտօրվում:

Զ. ԶՈՒՂԱՅԻ ԲԱՐՔԱՌԱՎԵՐԸ

Ջուղայի բարբառը մեր այն բարբառներից է, որն ունի ամենահին  
տեքստեր, բայց և որը անհետանալու վրա է: Ջուղայի բարբառով խոսում  
են նոր-Ջուղա քաղաքի որոշ թաղերում, Երրաղի հայ բնակչության մեջ  
և Հնդկաստանի հայերը: Այս բնակչությունը տարված է Հայաստանից

Զ. Անուշան, Քննաթյուն Աղուլիսի բարբառի, Երևան, 1935 թ.:

1605—6 թվերին Շահ Աբասի ձեռքով: Հայ ժողովրդի սղբերգության էջերից մեկն է Արարատյան դաշտի և Զուղայի բնակչության այդ գաղթը, և դա գեղարվեստորեն վերարտադրված է Հովհաննես Թումանյանի «Թագավորն ու չարչին» պոեմի մեջ:

«... Եկավ վարար հեղեղի պես,	Արազը ծով, Արագն էլման,
Չարկեց մեր շեն, մեր լի Զուղան	Դուրս է եկել իր ափերից.
Ոչ ասարժուն նայեց, ոչ մեզ,	«Անցե՛ք», եկավ մեզ հրաման.
Սրբեց բերավ ողջ տեղահան:	Շահն էր հրաման տալիս վերից...
... Աղաչեցինք աղերսելով:	Ետևը սուր, առաջը ջուր,
Ետ շուռ եկանք ու անց կացանք,	Սուգ, վայնասուն, իրարանցում:
Մեծով, կոծով, հրով, սրով՝	Բառաչում են մեծ ու պուճուր
Մով Արազի ափը նստանք:	Իրար գրկած՝ գետը լցվում...»

Զուղայի (Զուլֆայի) այժմյան բնակչությունը իր բարբառով համարյա չի խոսում, նա ենթարկվել է Արարատյան բարբառի ազդեցություն և խոսում է համարյա Արարատյան բարբառով:

Զուղայի ամենահին տեքստն է «Աղերսագիր հայոց» 1658 թվից այդ թվից հետո Զուղայի բարբառով եղել են բավական քանակությամբ տեքստեր, բայց թե այդ հին տեքստը և թե հեռագայի տեքստերը չեն պահպանել բարբառագիտության կանոնները, ուստի ապագիր տեքստերով դժվար է ստույգ գողագիր կազմել Զուղայի բարբառի մասին: Բարբառատար Զուղայի բարբառը ուսումնասիրել է պրոֆեսոր Հ. Աճառյանը: Իրեն հատուկ խնամքով և գիտակցությամբ պրոֆեսոր Հ. Աճառյանը մանրագին քննության է ենթարկել Նոր-Զուղայի բարբառը, անձամբ լինելով Նոր-Զուղայում և լսելով Նոր-Զուղայի խոսվածքը: Աշխատությունը կրում է «Բննություն Նոր-Զուղայի բարբառի» վերնագիրը և հրատարակվել է Երևանում 1937 թվին:

Աշխատությունը բռնում է 401 ձևագիր էջ, ընդգրկում է Նոր-Զուղայի բարբառի պատմությունն ու վիճակագրությունը, հնչունաբանությունը, ձևաբանությունը, բառապաշարը, նմուշներ:

Համառոտ նկարագիր

Նոր Զուղայի բարբառում կան հետևյալ ձայնավորները՝ ա, է, ի, օ, ու, ք, նակ երկբարբառային արտասանություն ունեցող և և ո, օրինակ՝ եփել>եփիել, կերայ>կիրա, սոխ>սուէխ, խմոր>խըմուէր, «ն»-ն բառակցքին միավանկ բառերի մեջ ունի համապատասխանաբար «յե», բաղմավանկ բառերի մեջ՝ «է» կամ «հի», օրինակ՝ եղն>յեղ, ևս>յես, երես>հիրես, եղունգ>հեղունգ, Բառակցքին «ո» հնչյունի դիմաց գտնում ենք «փո» (փուէ), միավանկ բառերում և փակ վանկում «օ» կամ «ու», նաև՝ բաց վանկում: օրինակ՝ ոսպ>փուէսպ, օտն>փուէտ, սրդի>փուէշթի, սկիերիչ>փուէսկիրիչ, սրոճ>օրօճ, սլորել>հուլուէրել:

Վերին բարձրության կամ քմային ձայնավորներ բարբառում չկան,

երկբարբառներ ևս չկան, գրաբարի երկբարբառներից ոչ մի հեռք չկա Զուղայի բարբառում:

Բաղաձայնական սիստեմը ենթարկվում է երկբարբառացի փոփոխության, հատկապես ձայնեղների խումբը բառակցքին վերածվում է շնչեղ ձայնեղների, իսկ բառամիջում և բառավերջում ենթարկվում է առաջին տեղաշարժին, վերածվելով շնչեղ խուլերի: Խուլ բաղաձայնները անգայիններից հետո վերածվում են ձայնեղների: շնչեղ խուլերը խուլ բաղաձայններից հետո երբեմն վերածվում են խուլերի, օրինակ.

Բարձր>բ'անցրը, բայն>բ'ուն, շաբաթ>շաբ'աթ, երբ>յեթի, գարուն>գ'արունք, ազահ>ազ'ահ, գող>գ'ուէք, թանաք>թանակ, ճանկ>ճանգ, դեղին>գ'եղին, դու>դ'ու, գող>գ'ղաք, վարդ>վարթ, փեթակ>փետակ, սանր>սանդր, ձայն>ձ'էն, ձի>ձ'ի, սրձակ>զուէրցակ, վարձք>վարցք, մեծ>մենձ, վենձ, ջորի>ջուէրի, առաջին>առչի, առաջ>հ'առէչ, փուշքար>փուճկար, ճենձ>ճենչ:

2. հնչյունը վերածվում է իս հնչյունի՝ օրինակ.

Հայր>խէր, հայելի>խայլի, հաստ>խատ, հանի>խանիկ:

3. հնչյունը վերածվում է ձայնեղ և հնչյունի կամ դուրս է ընկնում: Իրանից դուրս կան բաղաձայնների մասնակի փոփոխություններ, որոնք առանձին օրենքներ չեն ցուցաբերում:

Կարելի է շիշտակել միայն.

1. «յ» բառակցքին՝ օրինակ. յաղթել>հ'աղթել, յարմար>հ'արմար:

2. «ն» հնչյունը, որը լինելով գրաբարում բառավերջում արմատական հնչյուն, աշխարհաբարում ընկած է, Զուղայի բարբառում պահպանվում է շատ տեղերում: օրինակ՝ կաթն>կաթն, ձուկն>ձուկն սուկն>սուկն, դոլդն>դուլդն, և այլն:

Որոշ դեպքերում «ն» հնչյունի դիմաց գտնում ենք «մ», օրինակ՝ Անուն>անում, կոկոս>կոկոմ, մրջիւն>մըջիւմ:

3. Մի շարք բառերի մեջ ավելանում են ր, ճ, ա, դ, հ՝ հնչյունները, վերջինս ձայնավորով սկզբող բառերում: օրինակ՝ համրել>խամբրել, ճրմուկ>ճմբուկ, քիթ>քիթթ, կարաս>կանքավ, շրիչ>շրիչու: պոզ>պոզդ, տերել>հ'ավիրել և այլն:

4. «ա» ձայնավորի դիմաց մի շարք բառերում գտնում ենք «ուէ», օրինակ՝ գալ>գուէլ, գառն>գուէռն, գարի>գուէրի:

5. «ե» ձայնավորի դիմաց մի շարք բառերում գտնում ենք «ա» ըստ ներդաշնակության օրենքի: օրինակ՝ երկաթ>արկաթ, երկանք>արկանք:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Զուղայի բարբառում կան էր, ներ և ք հոգնակի մասնիկներ: Միավանկ բառերի հոգնակին է էր, բաղմավանկ բառերի հոգնակին է ներ, իսկ ձայնավորով վերջացողների հոգնակին է ք: օրինակ.

Ձայն>ձ'էն, ձ'էներ, հայր>խէր, խէլէր, բերան>բ'էրան, բ'էրանէր, սկանջ>անգոճ, անգոճճէր, թշնամի>թըշնամի, թըշնամիք, գարի>գ'արի-գ'արիք:

Չայնավորով վերջավորվող որոշ բառեր սաանում են քնէր հոգնակի, օրինակ. մատանի—մատանըքնէր, ծառա-ծառէքնէր, քեռի-քեռիքնէր և այլն:

Իրանցից գուրս կան նաև հեռեյալ հոգնակիները.

անի. ամանանի—ամաններ, անրմանի—անուններ, վնասանի—վնասներ, վարպետանի—վարպետներ, առողանի—անողներ, գուրցողանի—եղողներ և այլն.

նի կամ նիք. սկիհնիք—սկիհներ, գ'ըրիչնի—գրիչներ, ախիհնի—աղիքներ և այլ.

արենք. կողմարենք—կողմեր, գ'եղարենք—գյուղեր,

արունք. սերմարունք—սերմեր, դեղարունք—գեղեր.

նէք. հարակունէք—երեկոներ.

էրք. ախշըկէրք>աղջիկներ, տարերք>տարիք, քիէրք>քույրեր:

Ջուղայի բարբառում հոլովները Երևանի բարբառից տարբեր չեն, միայն հոգնակի ք վերջավորութիւնն ունեցող բառերը ենթարկվում են ց հոլովման. օրինակ՝ կատուք, կառվարոնց, կառվարոնցից, կառվարոնցով, կառվարոնցում: Թեև գրանք լինում են նաև «ի» հոլովմամբ. օրինակ՝ նամփէք, նամփէքի, նամփէքից, նամփէքով, նամփէքում (նամփէք, նամփէքի, նամփէքից, նամփէքով, նամփէքում):

Ջուղայի բարբառում ց հոլը գրվում է ոչ միայն ձայնավորով վերջացող, այլև բաղաձայնով վերջացող բառերի վրա. օրինակ՝ Միսն լէվ ա—միսը լավ է:

Ջուղայի բարբառում գործածական են դասական թվականների առանձին ձևեր, որ մյուս բարբառներում սովորական չեն. Ընդհանրապես նկատելի է, որ շատ քիչ բարբառներ ունեն դասական թվականներ, իսկ ավելի քիչ՝ դասական թվականների հատուկ ձևեր: Ջուղայի բարբառն այդ հազվագյուտներից է. այդ բարբառում գործածական է դասական թվականների մի ձև—երոք վերջավորութիւնով. ինչպես, օրինակ՝ երկուերորդ, հիքերերորդ, չոքերորդ, հինգերորդ և այլն. կա և մի այլ ձև՝ ում վերջավորութիւնով. օրինակ՝ ավվալում, յերկրում, հիրքում, շոքում, խնգում և այլն: Դասական թվականների այդ ում վերջավորութիւնը նույնն է, ինչ որ ներգոյականի ում վերջավորութիւնը և կամ անկատար դերբայի ում վերջավորութիւնը. և իսկապես՝ այդ ձևի գործածութիւնը շատ տրամաբանական է, որովհետև, երբ ասվում է վեցում, դա նշանակում է՝ վեցերորդ կամ «վեց թվի մեջ»:

Այդ ձևը պետք է կազմված լինի այնպես, ինչպես ներգոյական հոլովը, նախդրիվ տրականով, որի մեջ «ի» նախդրի կորուստով մնում է ում վերջավորութիւնն ունեցող ներգոյական հոլովը:

Անձնական գերանունների մեջ, առանձին նորութիւնն չկա, հետաքրքրական է ցուցական գերանունների հոլովումը, որը հետևյալն է.

եղակի

Ուղղ.	էս	էդ	էն
Ս. Տ. Հ.	սուր	տուր	ընուր, նուր
Բ.	սուուց ստուցից	տուց, տուցից	ընդուցից, նուցից, ընդուց

Գ. սուուցով, ստով, սով	տուցով, տով	ընդուցով, նուցով, ընդով, նով
ն. ստում	տում	ընդում

Հոգնակի

Ուղղ.	ստոնք	տոնք	էնդոնք, ընդոնք, նոնք
Ս. Տ. Հ.	ստոնց	տոնց	էնդոնց, ընդոնց, նոնց
Բ.	ստոնցից	տոնցից	էնդոնցից, ընդոնցից, նոնցից
Գ.	ստոնցով	տոնցով	էնդոնցով, ընդոնցով, նոնցով

Բայերի խոնարհումը

Ջուղայի բարբառն ունի «ել» և «ալ» խոնարհում. ուրիշ նորութիւնն չունի: Ունի նույն ժամանակները և նույն եղանակները, ինչ որ գրական լեզուն:

Ջուղայի բարբառն ունի հետևյալ դերբայները.

Անորոշ դերբայ՝ «ալ» կամ «ել» վերջավորութիւնով. օրինակ՝ բախել խաղալ:

Անկատար՝ ում կամ ման վերջավորութիւնով. օրինակ. խաղում, տալման, ապրման, մեռման, մըմման, նեղման:

Ապառնի դերբայ՝ էց կամ լու վերջավորութիւնով, որ ավելանում են անորոշ դերբային. օրինակ՝ կատարելէց—կատարելու, թողուլէց—թողնելու, գոլէց—գալու, բըժշկիլէց—բժշկելու. կատարելու, խաղալու և այլն:

Վաղակատար դերբայ՝ էլ կամ ացել վերջավորութիւնով.

Հարակատար դերբայ՝ ած կամ ացած վերջավորութիւնով.

Օժանդակ բայը ներկայում խոնարհվում է ա արմատով՝ ամ, աւ, ա, անք, արք, անք. հոգնակի երկրորդ դեմքը լինում է նաև էք: Օժանդակ բայի անցյալը լինում է ի, իք, էք, ինք, էք, ինք:

Ներգործական բայերը անկատար դերբայում մեծ մասամբ ունենում են ում վերջավորութիւնն, իսկ չեզոք բայերը՝ ման վերջավորութիւնն. օրինակ՝ սիրում, խազում, զնաման, ապրման և այլն:

Ման վերջավորութիւնն ունեն նաև բոլոր կրավորական կերպի բայերը. օրինակ՝ մաշման ամ—մաշվում եմ, կապման ամ—կապվում եմ: Լալ, զալ, տալ, բայերի անկատարը կազմվում է անորոշ դերբայից, որի վրա ավելանում է ման վերջավորութիւնը. օրինակ՝ լավման, գոլման, տալման:

Ման մասնիկը Հանքնի և Բեյլանի բարբառներում կազմում է հարակատար դերբայ:

«ն» ածանց ունեցող բայերը ներկան կազմում են անկատար դերբայով, որի ման վերջավորութիւնը ավելանում է արմատի վրա, իսկ կրավորական կերպինը՝ ման վերջավորութիւնն ավելանում է կամ ց ածանց ունեցող հիմքի վրա և կամ անցյալ կատարյալի հիմքի վրա, եթե ունեցիլ է անալ վերջավորութիւնն. օրինակ.

Ներգործական	Կրավորական
Առման ամ—առնում եմ	առնրման ամ—առնրվում եմ
Գողման ամ—գողանում եմ	գողացման ամ—գողացվում եմ
Մոռաման ամ—մոռանում եմ	մոռացման ամ—մոռացվում եմ
Տեսման ամ—տեսնում եմ	տեսնրման ամ—տեսնվում եմ:

Սահմանական եղանակ—

Ներկա		Անցյալի անկատար	
խաղում ամ	վազման ամ	խաղում ի	վազման ի
» աս	» աս	» իր	» իր
» ա	» ա	» էր	» էր
» անք	» անք	» ինք	» ինք
» աք (էք)	» աք (էք)	» իք	» իք
» ան	» ան	» ին	» ին

Ապառնի

Պազալէց ամ կամ խաղալու ամ	խաղալէց ի կամ խաղալու ի
» աս	» իր
» ա	» էր
» անք	» ինք
» աք (էք)	» իք
» ան	» ին

Անցյալ կատարյալ

սիրեցի	սիրեցիք
սիրեցիր	սիրեցիք
սիրեց	սիրեցին

Ըղծական եղանակ

Ապառնի		Անցյալ ապառնի	
սիրեմ	սիրենք	սիրի	սիրինք
սիրես	սիրեք	սիրիր	սիրիք
սիրի	սիրեն	սիրէր	սիրին

Պայմանական եղանակ

Պայմանական եղանակին է «կը», որը լինում է «գը», երբ բայն սկսվում է ձայնեղով, լինում է «գ'ը», երբ բայն սկսվում է շնչեղ ձայնեղով, «քը», երբ բայն սկսվում է շնչեղ խուլով: Այդ եղանակինը ավելանում է պարզապես ըղծական ձևերի վրա՝ ենթարկվելով ասիմիլացիայի համաձայն այն բաղաձայնի, որով սկսվում է բայը. օրինակ՝

կըտամ	գ'ըբ'երեմ	զըլամ	քըցանեմ
կըտաս	գ'ըբ'երես	զըլաս	քըցանես
կըտա և այլն.	գ'ըբ'երի և այլն.	զըլա և այլն.	քըցանի և այլն:

«Կը» եղանակինը հնչվահայոց մոտ լինում է «կու» ձևով. օրինակ կուսվորեմ, կու սիրեմ և այլն:

Անցյալի ապառնի

կըտի	գ'ըբ'երի	զըլի	քըցանի
կըտիր	գ'ըբ'երիր	զըլիր	քըցանիր
կըտէր և այլն.	գ'ըբ'երէր և այլն.	զըլէր և այլն	քըցանէր և այլն:

Պայմանական կամ ենթադրական եղանակի մի ձևն էլ կազմվում է պըլա կամ պիտլա եղանակինով, որ նշանակում է՝ կարող է որ կատարեմ. օրինակ՝

Ապառնի

Ապառնի		Անցյալ ապառնի	
պիտլա կամ	պըլա տամ	պիտլա կամ	պըլա տի
»	» տաս	»	» տիր
»	» տա	»	» տէր
»	» տանք	»	» տիրք
»	» տաք	»	» տիրք
»	» տան	»	» տիրն

Հարկադրական եղանակը կազմվում է պըտկա, պըտի կամ պետիլ (պիտիլ ա) եղանակիններով:

ՆՄՈՒՇՆԵՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐՐԱՌՈՎ

- Բ'արօ՛վ, գա՛ռբաբի:
- Բ'արի աս էկէլ, վուէշթի (որդի):
- Որբար աս՝ ինչ ա. խանիկս ուզում ա քե տեսնի. Ձես գ'ըդէլ գ'ոս մեր տունը, սոր դ'ամզարակու:
- Բարի Նուսիկ, սոր գ'ընացել ի բաղը, միստիք ալուքըա բերի, յըլդա վաստակած ամ, չեմ գ'ըդելման լամբէրը դ'աբ վէր գ'ընամ, սաբայի գ'ըգ'ոմ:
- Պանիկ—հանի, տատ
- Գ'ըդէլ—կարող
- Գ'ըդէլման ամ—կարողամում եմ
- Սոր—այսօր
- Միստիք—մի պատիկ
- Ալուքըա—գետնախնձոր
- Սաբայի—վաղը
- Դ'ամզարակու—երեկոյան դեմ



Մին օր քեռուս յարախան սէկտենդ ունէր: Յետով ինձ ասա՛վ. —Վուէշթի, մին գ'ընա գ'ըրկըցենց տունը, մին քըսան կաթ բ'եր, դսկտօրն ասըմ ա՝ կաթը խիվանդի խըմարիկ լէվ ա: Յես գ'ընաման ամ կաբապետենց տունը, դ'ուրը թակում ամ, դ'ուրս ա գ'ոլման գ'ըթկըցի լակտը՝ ասըմ ամ. —Ա՛յ յարախա, միստիք կաթ տվէք մեր արախի խմարիկ. էն պատասխան ա տալման:

—Մէքը կօվ չի, եզ ա.

Յէս էլ ասըմ ամ:

—Այ խողը գ'ըլխիտ, էտ ինչ թնք յ'եզ ա, որ միտիկ կաթ էլ չի տալման:

ՇԱՄԱԽՈՒ ԲԱՐԲԱՌԸ

Շամախու բարբառով խոսում են միայն Շամախի քաղաքում. Այժմ արդեն այդ բարբառով խոսողներ կան Բաքվում և այլուր. քանի որ շամախեցիներից շատերը ցրվել են զանազան տեղեր և պանդանում են իրենց բարբառը, որտեղ էլ նրանք գտնվելիս լինեն. Շամախու բարբառը բնականոր առժամը Ղարաբաղին նման է, սակայն մի շարք առանձնահատկութուններ շատ որոշ կերպով անջատում են նրան Ղարաբաղի բարբառից: Շամախու բարբառի բաղաձայնական սիստեմը համապատասխանում է առաջին տեղաշարժին, այսինքն՝ երկատարածան ձայնեղանակի է արևելյան շատ բարբառների նման. բառամիջում և վերջում նկատվում է խուլերի ձայնեղանակ (օր. պաղիլ, տախապ): Ձայնավորները նույնն են Ղարաբաղի բարբառի հետ, միայն քմայնացումը մի փչ ալելի ուժեղ է: Շամախու բարբառում «թ» ձայնավորը հաճախ «բ» է արտասանվում նույնիսկ շեշտի տակ, որ շատ աչքի է դարկում. օրինակ, սը'րտ, մըտկ, յաշ'ըմը և այլն:

Այս երևույթը նկատում ենք Տիգրանակերտի, Քեսաբի, Ուրմիայի, Ղարաղաղի և այլ բարբառներում, ինչպես, օրինակ, սըսը'ռնը, (Տիգր.), նըստ (Ուրմ.):

Շամախու բարբառի շեշտը վերջին վանկի վրա է. Հոլովման մեջ Ղարաբաղից տարբերվում է նրանով, որ գործիականում ունենում է «օվ» վերջավորութուն:

Հոլովում

	նգակի		Հոգնակի	
Ուղղ.	սըրտ	տախապ	սըրտէր	տախապէնէր
Սեռ.	սը'րտի	տախապի	սըրտէրի	տախապէնէրի
Տր.	սը'րտի (ն)	տախապի(ն)	սըրտէրի (ն)	տախապէնէրի(ն)
Հայց.	սըրտ	տախապ	սըրտէր	տախապէնէր
Բաց.	սը'րտան	տախապան	սըրտէրան	տախապէնէրան
Գործ.	սը'րտօվ	տախապօվ	սըրտէրօվ	տախապէնէրօվ
Ներգ.	սը'րտըմ	տախապըմ	սըրտէրըմ	տախապէնէրըմ

Շամախու բարբառի դերանունները տարբեր են Ղարաբաղի բարբառից. Շամախին գործ է ածում՝ սա, տա, նա դերանունները, որ Ղարաբաղի բարբառը սովորութուն չունի գործածելու. Շամախին միաժամանակ և գործ է ածում սա, աա, ան դերանունները, որոնց հոլովումը նույնն է սա, աա, նա դերանունների հետ:

1 Գրի առավ' Հ. Ջեյթազյան:

նգակի

Ուղղ.	սա, ան	տա, ան	նա, ան
Սեռ.	սըրա	տըրա	նըրա
Տր.	սըրա	տըրա	նըրա
Հայց.	սըրա, ան	տըրան, ան	նըրա, ան
Բաց.	սըրանա	տըրանա	նըրանա
Գործ.	սըրանօվ	տըրանօվ	նըրանօվ
Ներգ.	սըրանըմ	տըրանըմ	նըրանըմ

Հոգնակի

Ուղղ.	սըրանք	տըրանք	նըրանք
Սեռ.	սըրանց	տըրանց	նըրանց
Տր.	»	»	»
Հայց.	»	»	»
Բաց.	սըրանցանա	տըրանցանա	նըրանցանա
Գործ.	սըրանցանօվ	տըրանցանօվ	նըրանցանօվ
Ներգ.	սըրանցանըմ	տըրանցանըմ	նըրանցանըմ

նգակի

Ուղղ.	յէս	տնէ	նօ'վ
Սեռ.	իմ	քու	ննւմ
Տր.	ինձ	քէզ	նո'ւմ
Հայց.	ինձ	քէզ	նո'ւմ
Բաց.	ինձանն	քէզանն	նումանն
Գործ.	ինձանօ'վ	քէզանօ'վ	նումանօ'վ
Ներգ.	ինձանըմ	քէզանըմ	նումանըմ

Հոգնակի

Ուղղ.	մէք	տանք
Սեռ.	մէր	ձէր
Տր.	մէզ	ձէզ
Հայց.	մէզ	ձէզ
Բաց.	մէզանն	ձէզանն
Գործ.	մէզանօ'վ	ձէզանօ'վ
Ներգ.	մէզանըմ	ձէզանըմ

Դերանունների մեջ «իկ» փոքրացուցիչ մասնիկը գրվում է համարյա բոլորի վրա, հաճախ նաև մի քանի անգամ կրկնվելով, օրինակ՝ տուկիտ, մէքնէրիկիկիտ, նսիկիկի և այլն. «իկ» >իկ մասնիկը գրվում է նաև գոյականների վրա:

խոնարհում

Շամախու բարբառի խոնարհումն զգալի տարբերութուն ունի Ղարաբաղի բարբառից. Հիմնական տարբերութունը օժանդակ բայի ձևերի և

բայի ըղձական եղանակի վերջավորութիւնների մեջ է. նկատելի է, որ  
ունգարիս վերջավորութիւններից առաջ երեւան է գալիս «ա» խոնարհիչը,  
իսկ մյուս դեպքերում «է» խոնարհիչը: Շամախու բարբառի ապառնի դեր-  
բայը ակամ վերջավորութիւնն չունի:

Սահմանական եղանակ

Ներկա	Անց. անկ.	Ապառնի	Անց. ապ.
սըրբմ ամ	սըրբմ ի	սըրբմն յամ	սըրբմն յի
» էս	» իր	» յէս	» յիր
» ա	» էր	» յա	» յեր
» անք	» ինք	» յանք	» յինք
» էք	» իք	» յէք	» յիք
» ան	» ին	» յան	» յին

Վաղակ.	Անց. վաղ.	Հարակատ.	Անց. հար.
սըրբալ ամ	սըրբալ ի	սըրբած ամ	սըրբած ի
» էս	» իր	» էս	» իր
» ա	» էր	» ա	» էր
» և այլն.	» և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալ կատարյալ

Ըղձական եղանակ

Անցյալ կատարյալ			Ապառնի		Անցյալ Ապառնի	
սըրէցի.	սըրէցիր.	սըրէց.	սըրած	սըրի	սըրի	սըրի
սըրէցինք	սըրէցիք.	սըրէցին	սըրէս	սըրիք	սըրիք	սըրիք
			սըրի	սըրէք	սըրիք	սըրիք
			սըրանք	սըրինք	սըրինք	սըրինք
			սըրէք	սըրիք	սըրիք	սըրիք
			սըրան	սըրին	սըրին	սըրին

Պայմանական եղանակը կազմվում է ըղձականից «կը» եղանակիչով,  
իսկ հարկադրականը նույնից՝ «բիդի» եղանակիչով:

Թ-ԲԱՆԻԻՍԻ ԲԱՐՔԱՌԱԳ

«Ում» ել «Կը» նյութերի անտեղաշարժ խմբի միջնյուղային բարբառ

Թբիլիսիի բարբառը մեր մեռած բարբառներից մեկն է, բայց նա ան-  
մասնացել է հայ գրականութիւնը երկու խոշոր ներկայացուցիչների գործե-  
րով՝ Սայաթ-Նովայի և Գ. Սունդուկյանի:

Թբիլիսի քաղաքում այժմ հայերը խոսում են Արարատյան բարբառով,  
որ որոշ երանգավորում է ստացել Թբիլիսիի բարբառի ազդեցութեան տակ:  
Արարատյան բարբառով խոսող այդ հայերը Թբիլիսի են գաղթել հատկապես  
18—19-րդ դարերում և նրանց լեզվի ազդեցութեան տակ, մասամբ նաև գրա-  
կան լեզվի ազդեցութեամբ, վերացվել է Թբիլիսիի բարբառը: Դառնալով

հայ կուլտուրայի կենտրոն 19-րդ դարում, Թբիլիսին դարձավ նաև հայ  
գրական լեզու մշակող, հայերեն գրական լեզվի կենտրոն: Ուստի և Թբիլի-  
սի քաղաքի բնակչութիւնն աստիճանաբար շուտ տալով իր խոսվածքը՝ մո-  
ռացայ Թբիլիսիի բարբառը: Բարեբախտաբար Թբիլիսիի բարբառով ու-  
նենք երկու հեղինակներ՝ Սայաթ-Նովայի և Սունդուկյանի երկերը: միա-  
ժամանակ և երկու ուսումնասիրութիւնն՝ մեկը բժիշկ Գևորգ Ախվերդյանի,  
Սայաթ-Նովայի առաջին չրատարակչի, որի ուսումնասիրութիւնը միա-  
ժամանակ նաև հայ բարբառագիտութեան առաջին գիտական ուսումնա-  
սիրութիւնն է և Ա. Տոմսոնի ուսումնասիրութիւնը, որը թեև չունի  
Ախվերդյանի աշխատութեան անմիջականութիւնն ու ճշտութիւնը, բայց  
կառարված է համեմատական լեզվաբանութեան տեսակետով:

Ակադ. Հ. Աճառյանը Թբիլիսիի բարբառը գետեղել է հայերենի բարբառ-  
ների «Ում» ճյուղի մեջ, այսինքն՝ այդ բարբառն իր ներկան և անցյալի  
անկատարը կազմում է «ում» վերջավորութիւնն ունեցող անկատար գեր-  
բայով և օժանդակ բայով. օրինակ՝

«Յա՛ր, մտիլ իս բաղչի մէջըն, աջայիր սեյրան իս անում:  
Շուղիղ արէգակի նման է՝ տեսնողին հէյրան իս անում.  
Ջիգարիս կըրակ իս աբվի, էրվում իմ՝ բիրյան իս անում,  
Վունց մէ գողալ չէ ունեցի էյ քու արած նազի նման»<sup>1</sup>  
(երգ 8)

«Օվ տէնում է, էս է ասում, «Վայ քու դարին Սայաթ-Նովա».  
Էնդուր աչքըս չէ ցամարում՝ սըրախ մէջըն արին մնաց».  
(երգ 33)

Այստեղ ամենուրեք ներկա ժամանակը կազմված է անկատար գերբայով:  
Երբ մոտիկից ուսումնասիրում ենք թե Սայաթ-Նովայի և թե Սուն-  
դուկյանի լեզուն, նկատում ենք, որ ներկայի գաղափարը արտահայտելու  
համար բավական հաճախ գործ է ածվում նաև «կու» մասնիկով ձև, որով  
Թբիլիսիի բարբառը նմանվում է «Կը» ճյուղի բարբառներին. օրինակ՝  
«Շաա տխուր սիրա կու խընդացնիս, կու կըրիս հիվընդի դուղըն».  
(երգ 1)

Այսինքն՝  
«Շաա տխուր սիրա իս խընդացնում, կըրում իս հիվանդի դուղըն».  
Առաջին առը «Կը» ճյուղի բարբառների ներկայի ձևն ունի՝ իսկ  
երկրորդ առը մենք ինքնուրու կառուցեցինք «Ում» ճյուղի բարբառների  
ներկայի ձևով:

Վերևի օրինակը կարող ենք բազմացնել այնքան, որ կիթվա, թե Թբի-  
լիսիի բարբառը պատկանում է «Կը» ճյուղին, օրինակ՝

«Առանց փիղ ինչ կօնիմ՝ սոյբաթն ու սազըն  
Ձէոնէմէս վը կօթիմ՝ շանգիրըն մէ-մէկ...»

<sup>1</sup> Սայաթ-Նովայի տեքստը վերջերի ենք Մ. Հատրաթյանի «Սայաթ-Նովա» գրքից  
1945 թ., երևան:  
<sup>2</sup> Ինչ եմ անում:  
<sup>3</sup> Վեր եմ ածում:

«Բըլբուլի պէս էնդուր կու լամ<sup>1</sup> վարթիս խարըն շատացիլ է...»  
«Յիփ կու հաքնիս<sup>2</sup> ալ ու աուլաս  
Տէսնողին կու շինիս<sup>3</sup> մաս-մաս...»

«Շատ մարթ էստունք կու իմանա<sup>4</sup>, կուէ<sup>5</sup> «Հայրաթ սու դանդին ա...»  
«Շատ մարդ քու էշխէմէն կու դառնա<sup>6</sup> էգիդ...»  
«Օվ կուէ, թէ յիս կու ապրիմ<sup>7</sup> առուտէմէն ինչրու մութրն...»

էրէսըզ նուր լուսնի նման<sup>8</sup> քանի կէհա<sup>9</sup> կու բոլբրվի...<sup>9</sup>  
Դաստա-մազըզ նամ չի ուզի, առանց հուսիլ կու օլբրվի<sup>10</sup>  
էսգու համա քու տէսնողըն իր ճամփէմէն կու մօլբրվի<sup>11</sup>  
Յիփ մըտնում իս մէջլիսումըն, շանգ շուխի շաքանգ իս  
անում...»

Եվ այսպես անվերջ:  
Օրինակները այնքան շատ են, որ կարելի է նույնիսկ ասել, թե «կու» մասնիկով կազմված ներկան շատ ավելի հաճախ է գործածվում, քան անկատար դերբայով, ուստի ամենայն իրավամբ Թբիլիսիի բարբառը կարելի է գեանգել նաև «կը» ճյուղի մեջ, այդ պատճառով մենք այն կոչում ենք միջճյուղային բարբառ:

Վերևում բերված օրինակներից վերջին տան մեջ առաջին երեք տողում ներկան կազմված է «կու» մասնիկով (կէհա, կու բոլբրվի, կու օլբրվի, կու մօլբրվի), իսկ չորրորդ տողում կազմված է անկատար դերբայով (մըտնում իս, անում իս):

Այդ նշանակում է, թե Թբիլիսիի բարբառի մեջ այս երկու ձևերը հավասար արժեք ունեն, այսինքն՝ դրանք հավասարազոր քերականական կատեգորիաներ են Թբիլիսիի բարբառում, Այդ միտքը հաստատելու համար բերենք օրինակ նաև Սուղուկյանի լեզվից:

Բարբառ.— Էլի ինչ-օր նուր փողբաթ է վիկալի... Մէկը տասը կու դատէ<sup>12</sup>, կուէ, ասում էր հիմի...»:

... «Մենակ շուքի բան չէ, Սալումէ ջան, աստուձ ում կու տա,<sup>13</sup> կու տա, ամա ինձ թէ կու հարցնիս,<sup>14</sup> օչօվի գօլլաթը աչքումըս չէ վալիս... («Էլի մեկ գոհ», արարված 1-ին, տեսիլ 4-րդ):

Կարապետ.— «Այլևտարանի խոսքը կատարեցի, վուր ասում է, թե «Եվ օվ որ իր անձը կու խօսարեցնէ»,<sup>15</sup> ասում է, նա բարձրացնում է իր հօգին», կուէ<sup>16</sup>: («Սաթարալա», արարված 2-րդ, տեսիլ 2.):

Քերեվան.— «Իսայուս կու ճանչնաս,<sup>17</sup> դու իս ասում, թե սուս խօսիլ չի գիգի ու»:

Պեպո.— «Ուրիշ ախչիկ գուգիս,<sup>18</sup> բաս Պէպօն մէռավ էլի... («Պեպո», արարված 1-ին, տեսիլ 6.):

<sup>1</sup> էնդուր եմ լալիս. <sup>2</sup> Հագնում ես. <sup>3</sup> Շինում ես. <sup>4</sup> Իմանում է. <sup>5</sup> Ասում է. <sup>6</sup> Դառնում է. <sup>7</sup> Ապրում է. <sup>8</sup> Գնում է. <sup>9</sup> Բոլորվում է. <sup>10</sup> Ոլորվում է. <sup>11</sup> Մոլորվում է. <sup>12</sup> Դատում է (վաստակում է), <sup>13</sup> տալիս է. <sup>14</sup> Ինձ ես հարցնում. <sup>15</sup> Քոնարհեցնում է. <sup>16</sup> ասում է. <sup>17</sup> ճանաչում էս. <sup>18</sup> Ուրիշ աղջիկ ես ուզում:

Ինչպես տեսնում ենք, այս օրինակներում ևս ներկան կազմվում է նաև «կու» մասնիկով:

Նկատելի է սակայն, որ Սայաթ-Նովայի երկերում «կու» ձևի գործածությունը որոշ չափով դերակշռություն ունի, մինչդեռ Սուղուկյանի լեզվի մեջ բացարձակ դերակշռողը «ու» ձևն է, դա նշան է, թե Թբիլիսիի բարբառը Սայաթ-Նովայից հետո երկար ժամանակ գտնվել է «Ու» ճյուղի ուժեղ լեզվական միջավայրում. Հայանի է, որ Թբիլիսիի բնակչությունը բազմացավ 19-րդ դարի սկզբներում «Ու» ճյուղի բարբառով խօսող գաղթականությամբ, իսկ 19-րդ դարի կեսերից սկսած Թբիլիսիում գերիշխողը դարձավ մեր գրական լեզուն: Այս երկուսը հանդիսացան Թբիլիսիի բարբառի լեզվական միջավայրը և պատճառ դարձան նրա մահացմանը:

Թբիլիսիի բարբառի մի աչքի բնկնող հատկությունն էլ բացառական «էմէն» ձևն է, որ պահպանում է Սայաթ-Նովան իր բանաստեղծությունների լեզվի մեջ համարյա ամենուրեք:

Օրինակ.

Թե մանուշակ ասիմ՝ սարէմէն կօսին  
Թէ ջափանիր ասիմ՝ քարէմէն կօսին,  
Թէ վուր լուսին ասիմ՝ տարրէմեն կօսին,  
Արէքակի նման փարա իս, գօղալ:  
(Երգ ԺԶ)

Սակայն, ըստ երևույթին, Արարատյան բարբառի միջավայրում սպրած լինելով, նա գիտակցում է նաև բացառական «ից» ձևի գործածությունը. Դա շատ հազվագյուտ դեպքերում է պատահում, բայց միայն մի սիրուն ոտանավորի մեջ ամբողջ հանգավորությունը կառուցված է այդ վերջավորությամբ:

Աջար քու սիրտըն օվ շինից խօնարից, հիգնից  
բէգամադ.  
Քանի գուզէ մարդ վուր հարփի, վուսնց կու լի վազնից  
բէգամադ.  
Յար, ես քիդ ինչ դէթ իմ արի, նըստած իս մէզնից  
բէգամադ.  
Քամէցիը էշխիդ մանգանօվ, յիս պիտիմ քիզնից  
բեգամադ: (Երգ ԻԸ)

Եվ այնուհետև մյուս աներում հանդիպում ենք՝ իջարից, մեզնից, Ուզնից և զէնից ձևերին: Այլ բանաստեղծությունների մեջ մենք համարյա չենք հանդիպում այսպիսի ձևերի, ուստի մնում է եզրակացնելու, որ հեղինակը պարզապես բանաստեղծական խաղ է արել, օգտագործելով այդ ձևը:

Սուղուկյանի մոտ, որքան կարողացել ենք նկատել, այդ ձևին չենք հանդիպում:

Թբիլիսիի բարբառի մեջ օժանդակ բայի երկրորդ գեմբը լինում է

միշտ «է»: Սայաթ-Նովայի երկերում օրինաչափ կերպով օժանդակ բայի ներկայի երրորդ գեմքն ունի նույնպես «է» ձևը. օրինակ.

«... Վունց օր վուր դարիբ բլրուլըն մէ տարով բաղին կարօտ է...»  
«Արնի պէս աչքբս է լալի...»  
«Օվ տէսնում է՝ էս է ասում...»

(Երգ ԺԳ)

«Գարունքվան վախտն բացվիլ է,—էրանի ձիգ ծաղկած վարթիր»:  
Բայց 6 երգերում մենք հանդիպում ենք էական բայի «ա» ձևին. այսպես է, օրինակ, ԺԱ (13-րդ) երգում.

«Համաշա իմ յարի ճամփին կանգնած իմ, տալիս իմ դովա:  
Աշխարքն աշխարքով կշտացավ, իմ սիրան քէզանից սով ա,  
Սըրէ, շաղ տու վուտիդ տակըն, էշխէզ դարա հավա-ջովա.  
Իսկի չիս գալիս, չիս ասում. «Խիտտ իս լալիս Սայաթ-Նովա»  
Զըլի միտքբզ մօլօրվիլ է, սըրտումբզ պըղտուր իս, սխպէր...»

Այստեղ կարելի է ենթադրել, որ «Սայաթ-Նովա» հանգին հարմարաց-նելու նպատակով հեղինակը օժանդակ բայի «ա» ձևն է պործածել. նաև 39-րդ երգի մեջ, որտեղ «Սայաթ-Նովա» հանգի համար պործածված են «խոսով ա», «էս օ՞վ ա» հանգերը.

«Յար քեզանից հեռանալըս մէնէլուս վրա դժար ա.  
Լիզուդ քաղցըր, խօսքբզ քաղցըր, ախքնէրբզ անգին քար ա,  
Իրիք քըսան ու տասըն խալըն էրէսիդ բօլօրքըն շար ա,  
Վունց վուր Սայաթ-Նովի լէզուն յօթանասուն բառ բաց արած»:

Սայաթ-Նովան ազատ կերպով կարող էր և «է» պործածել, բայց նախորդ բառերի արմատական ձայնավորները «ա» լինելու պատճա-ռով՝ հարմար է գալիս «ա» օժանդակ բայը (քար ա, շար ա, դըժար ա): Այդ նույն խաղն է կատարված ԻԶ բանաստեղծության մեջ (զանգին ա, անգին ա, ճանգին ա):

«Ա» օժանդակ բայը գտնում ենք նաև ԽԳ բանաստեղծության մէջ.

Դամու գավրան իս համաշա  
Դառտա գառտա մազըդ քաշ ա  
Հաքածրդ գառ ու դումաշ ա...  
Օվ քիզի գուքա թամաշա:

Այստեղ «ա» օժանդակ բայի պործածությունը առաջ է գալիս համա-շա և քամաշա բառերը հանգավորելու անհրաժեշտությունից.

Ախվերդյանը ենթադրություն է արել, թե Թբիլիսիի բարբառը անե-ցիկների բարբառն է և դրան իբրև հիմնավորում ասում է.

«Որոշ երկիրներու հայերից «ե» տառի տեղը «ի» տառը բանեցնելու սովորութիւն ունին ևս Ղրիմում, Աեհաստանի ու Մաջարստանու հայերն,

որոնք, ինչպես ցույց է տալիս նրանց գրավոր հիշատակարանները, անեցուց սերունդքն են»<sup>1</sup>.

Այդ վիպաությունը ճիշտ է միայն բայերի վերջավորության վերաբեր-յալ, որովհետև Սուչավայի բարբառի մեջ տեսնում ենք, որ բայական բո-լոր ձևերը վերջավորության մեջ «ե» խոնարհիչի դիմաց ունեն «ի» խո-նարհիչը: Բայց այդպես է նաև Ղրիմի, Պոլսի, Ռոդոստոյի, Նիկոմիդիայի, Ակնա և այլ շատ բարբառներում:

Թբիլիսիի բարբառի հնչյունական առանձնահատկությունը այդ չէ, այլ շեշտի տակ «ե» ձայնավորի դիմաց «ի» և «ո» ձայնավորի դիմաց «ու» ձայնավորներ ունենալն է, մի բան, որ գտնում ենք Անտիօքի շրջանի և Ալեյթունի բարբառների մեջ: Հետևաբար Թբիլիսիի բարբառը ուրիշ բար-բառների հետ կապելու համար պետք է վերցնել այլ հատկանիշներ: Թբի-լիսիի բարբառի «Ում» ճյուղի շերտը, մեր կարծիքով, Տայոց<sup>2</sup> բարբառի մնացուկն է: Դրա ամենալավ ապացույցն այն է, որ Թբիլիսիի բարբառի ամենաշատ նմանությունը այժմյան Արզվիների բարբառի հետ է. Վերջինս գալով արևելքից՝ ձուլվել է Տայոց բարբառի հետ և տվել այն պատկերը, որն այժմ ունի ինքը: Արզվիների և Թբիլիսիի բարբառների նմանությունը երևում է բաղաձայնական սխառմի մեջ, ձայնավորների նմանությունից և նյութման նույնությունից:

Անկասկած է, ուրեմն, որ Թբիլիսիի բարբառը բաղադրված է «Ում» ճյուղի մի բարբառից և «Կը» ճյուղի մի այլ բարբառից. Չենք ժխտում, որ «Կը» ճյուղի այդ համադրված բարբառը անեցիկների բարբառն է, բայց մենք ստույգ ավալներ չունենք, թե անեցիկների բարբառը պատկանում էր «Կը» ճյուղին: Մի թույլ փաստ կարող է մեզ կովան դառնալ ենթա-դրության համար, բայց միայն ենթադրության. Այդ այն է, որ Թբիլիսիի բարբառի մեջ կա ներկայի կազմություն «կու» մասնիկով: Այս մասնիկով ուրիշ բարբառներ չկան, կան ինարկե «գու», «գա», «գի», «գո», «կը» մաս-նիկներով, բայց «կու» մասնիկով չկան, միայն Վանի և Կարնո բարբառները միավանկ բառերի ներկան կազմում են «կու» մասնիկով, բայց որում Կար-նո բարբառը բայերից հետո կրկնում է այդ մասնիկը «կը» ձևով, այսպես.

Կու կ'ամ, կու տամ, կու լ'ամ (Վան),  
Դու քամ կը, կու տամ կը, կու լամ կը, (Կարնո բարբառ):

«Կու» մասնիկի պործածությունը մենք գտնում ենք նաև Արզ-վիների բարբառում, բայց պայմանական եղանակի ձևերի համար՝ կու բերին, կու տանին, կու կանչին և այլն:

Դրա հետևանքով է, որ Թբիլիսիի և Արզվիների բարբառների մեջ ստացվում են կուին, կոնին, կոծին<sup>3</sup> ձևերը:

Նշանակում է, թե Վանի, Արզվիների և Թբիլիսիի բարբառների հարևա-նություն մեջ կար մի բարբառ, որ իր բոլոր բայական ձևերի ներկա և

<sup>1</sup> Գ. Ախվերդեան, Սայաթ-Նովայ, Յառաջաբան, 1852 թ.:

<sup>2</sup> Այդ բարբառի մասին առաջին անգամ հիշատակում է Ստեփանոս Սյունեցին (18-րդ դար):

<sup>3</sup> «Կո» ստացվել է «կու» մասնիկից և հաջորդ «ա» ձայնավորից:



անցյալ ժամանակները կազմում էր հետևողականորեն «կու» մասնիկով, և դա կարող էր լինել Շիրակի կամ անեցիների բարբառը:

Հնչյունաբանություն

Թրիլիսիի բարբառն ունի ա, է, ի, օ, ու, ր ձայնավորները: Այդ ձայնավորները արտասանությունը նման են գրական լեզվին, այսինքն՝ չունեն արտասանության տեղի ոչ ցածրացում և ոչ էլ բարձրացում: Փրարար ձայնավորների համեմատությունը Թրիլիսիի բարբառը՝ ներկայացնում է հետևյալ տարբերակները:

- ե > յի. ես > յիս, երբ > յիբի (բառակցքին).
- > ի. տեղ > տիղ, դեղ > դիղ, մեղք > միխք (բառամիջում).
- ս > սիս. սոսն > սիսո, որդի > սիսըթի (բառակցքին).
- > ու. սիսը > սիսը, հող > հուղ (բառամիջին).
- > օ. «օսիկ ջրով վարաղնած»:

«Օսիկ փարչումըն լցուցած անմահական ջուր իս, անպէր»:

Երկրաբանները Թրիլիսիի բարբառում փոխարինված են պարզ հընչյուններով, օրինակ՝ ալ > ա կամ է. այս այդ, այն > էս, էտ, էն, հայր > նէր, մայր > մէր, վրան > վրէն, փեսայ > փէսա:

- ոյ > ու. քույր > քուր, լույս > լուս:
- իւ > ու. հարիւր > հարուր, արիւն > արուն.
- ես > է. սահես > օսիկ, արծաթես > էրծաթէ.

Թրիլիսիի բարբառը բառակցքին ունենում է եռաստիճան բաղաձայնական սխտեմ, այսինքն անտեղաշարժ. օրինակ՝

- |               |                 |
|---------------|-----------------|
| բերդ > բիրթ.  | բերան > բէրան   |
| գունն > գուս, | դու > դուն      |
| ձին > ձուն    | ձու > ձու       |
| ջուր > ջուր   | ջարդեմ > ջարթիմ |
| գովեմ > գովիմ | դրեմ > դրրիմ    |

Բառամիջում սովորաբար ձայնեղները ենթարկվում են առաջին տեղաշարժին, այսինքն՝ վերածվում են շնչեղ խուլերի: Օրինակ՝ վարդ > վարթ, գարդ > գարթ, մարդ > մարթ, թագավոր > թագավար, կարդա > կարթա:

«Ամեն մարթ չի կանա կարթա, իմ գիրըն ուրիշ գրրէն է»:

«Յիս բլբուլ իմ, վարթըս մընաց խորումըն»:

Ս. Ն.

Սույ բաղաձայններից հետո շնչեղ խուլերը հաճախ վերածվում են խուլերի, կորցնում են շնչեղությունը, օրինակ՝ խօսկն—խոսքն, ուշի—ուշք, աշի—աշք:

«Սէշիլը Չէրանի է, ոանգըդ շաքարի.

Փրոսանգըստանէն էկած խարա իս, գօզար»:

«Էնդուր աշիլըս չէ ցամաքում՝ սըրախ մէշըն արին մնաց»:  
Ս. Ն.

Որոշ դեպքերում նկատելի է նաև ձայնեղացում՝ կամ հաջորդող բաղաձայնի ազդեցությամբ, կամ նախորդող, օրինակ՝ գուզիմ > կուզեմ:

«Թեզուզ արէզուզ, լուսնիակ, թէզուզ հուրիզողա ըլի,  
էա քու ամեն մարիփաթօլ դիփունին կու անախս դօ՛զզալ»  
Ս. Ն.

Թրիլիսիի բարբառը հունի «ֆ» հնչյունը, որով նա նման է Ղարաբաղի և Աւրմիայի բարբառներին և գրաբարին: «ֆ» հնչյունի փոխարեն գործ էածվում «փ». օրինակ՝ փալադ—ֆալադ, փընջան—ֆինջան:

«Աշիլըրդ օսիկ փիալա չարխէմէն փընջան է քաշած.  
Թէրթէրուկըդ՝ նիս ու նաշտար, սուր զալամթըրաշ, նազանի»:  
Ս. Ն.

Թրիլիսիի բարբառը յուրացրել է վրացերեն դ հնչյունը, որ դործածական է մեծ մասամբ օտար բառերի մեջ. օրինակ՝ դուլ-սարուկ, վարսոդ—տերև, դամար—դամար (լուսին):

«Էրէսըդ, փարսէվար ասիմ, նըման է շամս ու դամարին»:  
Ս. Ն.

Ղ է լսվում նաև հայերեն «տղ» կապակցություն փոխարեն: Օրինակ՝ վուրդանց—տրտանց, որտեղից, էսղանց—էստեղից (էստանց):

«Ըն» կապակցությունը բառակցքին արտասանվում է «նըն»: Օրինակ՝ «Ինձ սիրեցիր, էշխըն նընզար, խաղի դավթար իմ քիզ ամա.  
Մի քաղի փըշի ծաղիկն՝ վարթ սուսանբար իմ քիզ ամա»:  
Ս. Ն.

«Ա» ձայնավորը ու-ից հետո մի երկու տեղ գառնում է «օ», օրինակ՝ կսսիմ, կօթիմ, կօծիմ. փոխ. կու ասիմ և այլն:

«Առանց քիզ ինչ կօնիմ սօյբաթն ու սագըն,  
Ձէնէմէս վէր կօծիմ չանդիրըն մէմէկ»:  
Ս. Ն.

Այս երևույթը ավելի հաճախակի է Արդվինի բարբառում. «Բ» հնչյունը դուրս է ընկնում «համար» բառի միջից. օրինակ՝

«Էնդու համա քու տեսնողըն իր ճսմփէմէն կու մուրըվի»:  
Ս. Ն.

«Ի» հնչյունը հաճախ արտասանվել է փափուկ, մի հատկություն, օր

մինչև հիմա մնում է թբիլիսեցիների խոսվածքում. օրինակ՝ «Մէմէկ» մէկմէկ էլ չի ասվի՝ թարիփը դարսով (դասով) քուլիչով»:

Ս. Ն.

Ձևարանություն

Թբիլիսի բարբառի շեշտը նախադերձին վանկի վրա է:

Թբիլիսի բարբառի հոգնակին է «իբ» կամ «նիբ», օրինակ՝ դաշտիբ, ծովիբ, յաղիբ, իմաստությունիբ և այլն:

Թբիլիսի բարբառն ունի յոթ հոլով. այսինքն՝ մեր ազգային գրական լեզվի բոլոր հոլովները, ուրեմն և ներգոյական հոլով, որ հատկանշական է «Ում» ճյուղի բոլոր բարբառների համար:

Բառերի մեծ մասը պատկանում է «ի» հոլովման:

Թբիլիսի բարբառի սեռականը հոգ չի ստանում, արականը ստանում է ուղղականի հոգը, որ մեծ մասամբ «ն» հոգն է. օրինակ՝

«Փանձէս կու հիռացնիմ հանգիլըն մէմէկ»:

Ս. Ն.

Հայցական հոլովը շնչավոր առարկա ցույց տվող գոյականի դեպքում նման է լինում արականին, իսկ անշնչինը՝ ուղղականին: Բացառական հոլովն ունենում է «է» կամ «էմէն» (ումէն) վերջավորություններ, Թբիլիսի բարբառի բուն վերջավորությունն է «էմէն», իսկ «է» վերջավորությունը Թբիլիսի բարբառի մեջ է մտած «Կը» ճյուղի մեր ենթադրյալ բարբառի ազդեցությամբ:

Գործիականի վերջավորությունն է «օվ», իսկ ներգոյականինը «ում»:

Թբիլիսի բարբառի հոգնակին ենթարկվում է «ու» հոլովման, որը նույնպես «Կը» ճյուղի մի բարբառի ազդեցության հետևանք է, օրինակ՝

Եզակի                      Հոգնակի

Ուղղ.	ծով	ծովիբ
Սեռ.	ծովի	ծովէրու
Տր.	ծովին	ծովէրու
Հայց.	ծով	ծովիբ
Բաց.	ծովէմէն	ծովէրումէն
Գործ.	ծովօվ	ծովէրօվ
Ներգ.	ծովում	ծովէրում

Դերանուններ

Թբիլիսի բարբառն ունի երկու անձնական դերանուն՝ «յիս» և «գու». երրորդ դեմքի համար գործ է անվում ցուցական «նա» դերանունը:

Անձնական դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

Ե զ ա կ ի

Ուղղ.	յիս	դուն
Սեռ.	իմ	քու
Տր.	ինձ, ինձի	քիզ, քիզի, քի
Հայց.	ինձ, ինձի	քիզ, քիզի, քի
Բաց.	ինձմէն	քիզմէն
Գործ.	ինձօվ	քիզօվ
Ներգ.	ինձնում, ինձանում	քիզնում, քիզանում

Բացառականը լինում է երբեմն՝ ինձանից, քիզանից, որ փոխ է անում արված Արարատյան բարբառից:

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	մինք	դուք
Սեռ.	միք	ձիք
Տր.	միզ, միզի	ձիզ, ձիզի
Հայց.	միզ, միզի	ձիզ, ձիզի
Բաց.	միզմէն	ձիզմէն
Գործ.	միզօվ	ձիզօվ
Ներգ.	միզնում, միզանում	ձիզնում, ձիզանում

Բացառականն լինում է նաև միզանից, միզանից, ձիզանից, ձիզանից, որ նույնպես Արարատյան բարբառից է:

Ցուցական դերանունների հոլովումը

Թբիլիսի բարբառում գործածական են սա, դա, նա դերանունները անձ ցույց տվող գոյականների համար, և էս, էդ, էն դերանունները իր ցույց տվող գոյականների համար:

Սա, դա, նա դերանունները հոլովվում են գրականի նման՝ բացի բացառականից:

Ե զ ա կ ի

Ուղղ.	նա	սա	դա
Սեռ.	նբրա	սբրա	դբրա
Տր.	նբրան	սբրան	դբրան
Հայց.	նբրան	սբրան	դբրան
Բաց.	նբրամէն	սբրամէն	դբրամէն
Գործ.	նբրանօվ	սբրանօվ	դբրանօվ
Ներգ.	նբրանում	սբրանում	դբրանում

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	նբրանք	սբրանք	դբրանք
Սեռ.	նբրանց	սբրանց	դբրանց

Տր.	նըրանց	սրանց	դրանց
Հայց.	նըրանց	»	»
Բաց.	նըրանցմէն	սըրանցմէն	դըրանցմէն
Գործ.	նըրանցով	սըրանցով	դըրանցով
Ներգ.	նըրանցում	սըրանցում	դըրանցում

Բացառականում լինում է նաև՝ նըրանից, նրանցից, սըրանից, սրանցից, դըրանից, դրանցից և այլն, որով Թբիլիսիի բարբառի հոլովման այս պատկերը բոլորովին նմանվում է գրական լեզվին:

Լա, էա, էն գերանունների հոլովումը բավական նման է Արարատյան բարբառին, միայն սեռականում և տրականում Թբիլիսիի բարբառը վերջին հոլովակազմիչը կորցնում է (արինակ՝ Երևանի՝ ըստուր, ընդուր, Թբիլիսիի՝ էստու, էնդու) և բացառականում ունենում է ումէն վերջավորութուն:

Ե զ ա կ ի

Ուղղ.	էս	էա	էն
Սեռ.	էստու	էտու	էնդու
Տր.	էստուն	էտուն	էնդուն
Հայց.	էս	էա	էն
Բաց.	էստումէն	էտումէն	էնդումէն
Գործ.	էստով	էտով	էնդով
Ներգ.	էստում	էտում	էնդում

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	էստունք	էտունք	էնդունք
Սեռ.	էստունց	էտունց	էնդունց
Տր.	էստունց	էտունց	էնդունց
Հայց.	էստունք	էտունք	էնդունք
Բաց.	էստունցմէն	էտունցմէն	էնդունցմէն
Գործ.	էստունցով	էտունցով	էնդունցով
Ներգ.	էստունցում	էտունցում	էնդունցում

Անդրադարձ գերանուն

(Գործածվում է անձնականի տեղ)

Ուղղ.	իրքը	իրանք	օ՞վ	ի՞նչ
Սեռ.	իր	իրանց	օ՞ւմ	ի՞նչու
Տր.	իրան	իրանց	օ՞ւմ	ի՞նչու
Հայց.	իրան	իրանց	օ՞ւմ	ի՞նչ
Բաց.	իրամէն	իրանցմէն	օւմէ՞մէն	ինչի՞մէն
Գործ.	իրմով	իրանցմով	օ՞ւմով	ի՞նչով
Ներգ.	իրանում	իրանցում	օ՞ւմ մէջ	ի՞նչու մեջ

Հարցական գերանուն է նաև վուրդի՞, արից և սոռջ է գալիս վուրդանց:

Բայի խոնարհումը

Թբիլիսիի բարբառն ունի երկու խոնարհում՝ «ի» և «ալ» (գրիլ, կարգալ), ունի նույնքան եղանակ, որքան և գրական լեզվի մեջ, Սնորոշ դերբայի վերջավորութիւնն է «ի»՝ գրականի բոլոր «ե» խոնարհման բայերի դիմաց, և «ալ» — գրականի՝ նույն խոնարհման բայերի դիմաց: Անկատար դերբայի վերջավորութիւնն է «ու», «իս»: Սովորական խոնարհվող բայն ունենում է միշտ «ու» վերջավորութիւն (գրում, կարգում), իսկ գալ, լալ և ալ բայերն ունենում են «իս» վերջավորութիւն (գալիս, լալիս, տալիս):

Յուրաքանչյուր բայի անկատար դերբայական երկրորդական ձևն ունի միշտ «իս» վերջավորութիւն, որը գործածվում է իբրև մակբայական դերբայ կրկրորդական գործողութիւն ժամանակ ցույց տալու համար:

Ազատնին ունի «էլու», «ալու» վերջավորութիւնները (գրէլու, կարթալու):

Վաղակատար դերբայի վերջավորութիւնն է «ի»՝ «ե» խոնարհման բայերի համար և «ացիլ»՝ «ա» խոնարհման բայերի համար:

Վաղակատար դերբայը գրականի հետ նույնն է, ենթակայականը նույնպես, ժխտման դերբայի վերջավորութիւնն է «ի» կամ «ա», Այդ ժխտման դերբայը օգտագործվում է թե՛ վաղակատար ժամանակների և թե՛ պայմանական եղանակի ժամանակների ժխտական կազմելու համար:

Բացի այս դերբայներից, Թբիլիսիի բարբառն ունի նաև «ացու» վերջավորութիւնն ապառնի դերբայի համար: Այդ «ացու» վերջավորութիւնը ավելանում է անորոշ դերբայի վրա՝ տալացու, գնալացու, գալացու և այլն:

Ներկա ժամանակը (սահմանական եղանակի) կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևով, ըստ որում օժանդակ բայի ձևերը լինում են՝ իմ, իս, է, ինք, իք, ին:

օրինակ՝

գրում իմ	գրում ինք	կարթում իմ	կարթում ինք
գրում իս	գրում իք	կարթում իս	կարթում իք
գրում է	գրում ին	կարթում է	կարթում ին

Ներկան կազմվում է նաև «կու» մասնիկով. կու գրիմ, կու գըրիս, կու գըրէ, կու գըրինք, կու գըրիք, կու գըրին — գրում եմ և այլն. կու կարթամ, կու կարթաս և այլն:

Շրջուն շարահասութիւն ժամանակ օժանդակ բայն ընկնում է դերբայից առաջ:

Լալ, գալ, տալ բայի խոնարհումը կատարվում է նույն ձևով, միայն դերբայն ունենում է իս վերջավորութիւնը:

լալիս իմ	գալիս իմ	տալիս իմ
լալիս իս	գալիս իս	տալիս իս
լալիս է	գալիս է	տալիս է
լալիս ինք	գալիս ինք	տալիս ինք
լալիս իք	գալիս իք	տալիս իք
լալիս ին	գալիս ին	տալիս ին

Շրջուն շարադասութեան ժամանակ այդ բայերը կորցնում են իրենց վերջին ա-ն. այս շրջուն շարադասութեանը ստեղծվում է այն ժամանակ, երբ որ տրամաբանական շեշտն ընկնում ոչ թե ստորագայի, այլ նախադասութեան մի այլ անդամի վրա և կամ թե՛ խոնարհումը լինում է ժըխասական բնույթի. Օրինակ՝ շիմ գալի, շիմ տալի, յիս իմ գալի.

«Ման իմ գալի դերարի հիդ»:  
(Ս. Ն.)

Անկատար դերբայի վերջին ա-ն երբեմն նաև պահպանվում է, օրինակ՝ շիմ գալիս, շիմ տալիս և այլն:

Կալ բայը խոնարհվում է նաև բաղադրյալ ձևով և լի բայի օժանդակութեամբ. օրինակ՝

լաց իմ ըլում	չիմ լաց ըլում	լաց չիմ ըլում
լաց իս ըլում	չիս լաց ըլում	լաց չիս ըլում
լաց է ըլում	չէ լաց ըլում	լաց չէ ըլում
լաց ինք ըլում	չինք լաց ըլում	լաց չինք ըլում
լաց իք ըլում	չիք լաց ըլում	լաց չիք ըլում
լաց ին ըլում	չին լաց ըլում	լաց չին ըլում

Ինչպես երևում է խոնարհումից, հարադիր բայերի ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայը կարող է ընկնել հարադրութեանից առաջ և կամ հարադրող բայերի միջև:

Անցյալի անկատարը կազմվում է նույն եղանակով, ինչ որ ներկան, միայն օգտագործվում են օժանդակ բայի անցյալի անկատար ձևերը, որով բոլորովին նման է դառնում գրական լեզվին:

գըրում էյի, կարթում էյի  
գըրում էյիր, կարթում էյիր և այլն:

Ժխտական բնույթի խոնարհումը կազմվում է գրականի ձևով, այսինքն՝ օժանդակ բայն ստանում է «չ» ժխտական մասնիկը և տեղափոխվում է դերբայից առաջ. օրինակ՝ շիմ գրում. շէյի գրում, շէյիր գրում, շէր գրում, շէյիք գրում շէյիք գրում, շէյին գրում:

Անցյալի անկատարը կազմվում է «կու» մասնիկով. օրինակ՝ կու գըրէյի—գրում էի, կու կարթէյի—կարթում էի:

Ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի ձևերով՝ գըրէլու իմ, գըրէլու իս և այլն. կարթալու իմ, կարթալու իս և այլն:

Ապառնի անցյալը կազմվում է նույն եղանակով. գըրէլու էյի, գըրէլու էյիր և այլն, կարթալու էյի, կարթալու էյիր և այլն:

Վաղակատար ժամանակները կազմվում են վաղակատար դերբայով և օժանդակ բայով. օրինակ՝

գըրիլ իմ	գըրիլ էի	կարթացիլ իմ	կարթացիլ էի
գըրիլ իս	» էիր	կարթացիլ իս	» էիր
գըրիլ է	» էր	կարթացիլ է	» էր
գըրիլ ինք	» էին	կարթացիլ ինք	» էինք
գըրիլ իք	» էիք	կարթացիլ իք	» էիք
գըրիլ ին	» էին	կարթացիլ ին	» էին

Վաղակատար ժամանակների ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայով ժխտական մասնիկի հետ միասին և վաղակատար դերբայով, սրբ կորցնում է իր վերջին «լ» հնչյունը:

չիմ գըրի	չէի գըրի	չիմ կարթացի	չէի կարթացի
չիս գըրի	չէիր գըրի	չիս կարթացի	չէր »
չէ գըրի	չէր գըրի	չէ կարթացի	չէր »
չինք գըրի	չէինք գըրի	և այլն.	և այլն.
և այլն.	և այլն.		

Հարակատար ժամանակները կազմութեանը բոլորովին նման է վաղակատար ժամանակներին, միայն այստեղ գործածվում է հարակատար դերբայը:

Օրինակ՝ գըրած իմ, կարթացած իմ և այլն:

Անցյալ կատարյալը կանոնավոր է կազմվում, միայն երկրորդ դեմքում ունենում է «ից» փոխանակ «էց» վերջավորութեան, համաձայն բարբառի հնչյունաբանական օրենքի:

Անցյալ կատարյալը լինում է նաև էցան վերջավորութեամբ. Այդ վերջավորութեան ստանում են սովորաբար կրավորական կերպի բայերը, թեև մի շարք չէզոք բայեր ևս ունեն նույն վերջավորութեանը. օրինակ՝

գըրէցի	մաշվէցա	ապրէցա
գըրէցիր	մաշվէցար	ապրէցար
գըրէցից	մաշվէցավ	ապրէցավ
գըրէցինք	մաշվէցանք	ապրէցանք
գըրէցիք	մաշվէցաք	ապրէցաք
գըրէցին	մաշվէցան	ապրէցան

Ըղձական եղանակը կազմվում է առանց մասնիկի և բոլորովին նման է գրական լեզվին, միայն այն տարբերութեամբ, որ թքիլիսի բարբառում ենթարկվում է նրան հատուկ հնչյունափոխութեան:

«Այ» երկհնչյունը վերածվում է «է»-ի (իմանէյի > իմանայի):

Ըղձական եղանակ

Ապառնի

գըրիմ	էրվիմ	իմանամ
գըրիս	էրվիս	իմանաս

գրբէ	էրվէ	իմանա
գրբինք	էրվինք	իմանանք
գրբիք	էրվիք	իմանաք
գրբին	էրվին	իմանան

Անցյալի ապառնի

գրէյի	էրվէյի	իմանէյի
գրէյիք	էրվէյիք	իմանէյիք
գրէր	էրվէր	իմանէր
գրէրինք	էրվէրինք	իմանէրինք
գրէրիք	էրվէրիք	իմանէրիք
գրէրին	էրվէրին	իմանէրին

Պայմանական եղանակը կազմվում է ըղձականից, վրան ավելացրած «կու» մասնիկը:

Ապառնի

կու գրբիմ	կու էրվիմ	կու իմանամ
կու գրբիս	կու էրվիս	կու իմանաս
կու գրբէ	կու էրվէ	կու իմանա
կու գրբինք	կու էրվինք	կու իմանանք
կու գրբիք	կու էրվիք	կու իմանաք
կու գրբին	կու էրվին	կու իմանան

Անցյալ ապառնի

կու գրբէյի	կու էրվէյի	կու իմանէյի
կու գրբէյիք	կու էրվէյիք	կու իմանէյիք
կու գրբէր	կու էրվէր	կու իմանէր
կու գրբէրինք	կու էրվէրինք	կու իմանէրինք
կու գրբէրիք	կու էրվէրիք	կու իմանէրիք
կու գրբէրին	կու էրվէրին	կու իմանէրին

Այս բոլոր ձևերը գործածվում են համապատասխանաբար օրպես ներկայի և անցյալի անկատարի ձևեր:

Գործածական են նաև կու իմանայի, կու իմանէյիք և այլ ձևերը:

Հետաքրքրական է «գալ» և «տալ» բայերի խոնարհման այս ձևը, որ լինում է՝ գու քէյի, գու քէյիք, գու քէր, գու քէյիք, գու քէյիք, գու քէյիք, ըստ որում «կու» մասնիկի խուլ հնչյունը ձայնեղանում է, իսկ «գալ» բայի ձայնեղ հնչյունը վերածվում է խուլ շնչեղի: Բաղաձայնների այս փոփոխութունը հիշեցնում է արևմտյան բարբառների բաղաձայնական տեղաշարժերը, որ երևի մի հետևանք է այդ շրջաններից թրիլիսի եկած գաղթականության լեզվի ազդեցության: Մյուս կողմից հետաքրքրական է նաև այն,

որ «այ» երկհնչյունը վերածվում է «է» հնչյունի, Այդպես է նաև կու տէյի, կու տէյիք, կու տէր և այլն—տալիս էի, տալիս էիր, տալիս էր և այլն:

Ձայնավորով սկսվող բայերը խոնարհվելիս՝ կամ կորչում է «ու» ձայնավորը, կամ կորչում է բայի սկզբի ձայնավորը, կամ միացման հետևանքով նոր ձայնավոր է առաջ գալիս և կամ պահպանվում է: Այսպես, օրինակ, իմանալ բայի խոնարհման ժամանակ տեսանք, որ պահպանվում է և՛ «կու» բառի «ու» ձայնավորը, և՛ իմանալ բայի «ի» ձայնավորը, մինչդեռ ամիմ, անիմ, ասիմ բայի խոնարհման ժամանակ «ու» և «ա»-ի միաձուլումը տալիս է «օ», որից ստացվում է կօծիմ, կօսիմ և կօնիմ ձևերը (կօսիմ, կօսիս, կօսէ, կօսինք, կօսիք, կօսին, նույնպես է և՛ կօծիմ և կօնիմ բայերի խոնարհումը):

«Աւ»-ով սկսվող բայերի խոնարհման ժամանակ «ու»-երից մեկն ընկնում է, հավանական է «կու» մասնիկի «ու»-ն և ստացվում է՝ գուղիմ, գուղիս, գուղէ և այլն, կունեմամ, կունեմաս, կունեմա և այլն:

Այդ բոլորին հակառակ ըլիլ բայի սկզբի ձայնավորն է դուրս ընկնում և ստացվում է կու լիմ, կու լիս, կու լի, կու լիք, կու լիք, կու լին:

Պայմանական եղանակի ժխտական ձևերը կազմվում են առանց կու մասնիկի, այլ «չ» մասնիկով օժանդակ բայի հետ և ըղձական դերբայով:

Պայմանական եղանակ

չիմ գրբի	չիմ էրվի	չիմ իմանա
չիս գրբի	չիս էրվի	չիս իմանա
չի գրբի	չի էրվի	չի իմանա
չինք գրբի	չինք էրվի	չինք իմանա
չիք գրբի	չիք էրվի	չիք իմանա
չին գրբի	չին էրվի	չին իմանա

«էլ» բայի խոնարհման պայմանական եղանակի ժխտական ապառնի երբորդ գեմքի ձևը տարբերվում է նույն բայի վաղակատար ժամանակի ժխտական երբորդ գեմքից նրանով, որ այնտեղ լինում է «չէ», իսկ այստեղ՝ «չի» (վաղակատար՝ չէ գրի, պայմանական՝ չի գրի):

«Ա» խոնարհման բայերի բայանիմքը միանգամայն տարբեր է լինում (պայմանական չիմ կարթա, չիս կարթա և այլն, սանմ. վաղակատար՝ չիմ կարթացի, չիս կարթացի և այլն):

Անցյալի վաղակատար

չէյի գրբի	չէյի էրվի	չէյի իմանա
չէյիք գրբի	չէյիք էրվի	չէյիք իմանա և այլն:

Պայմանական երկբարդական բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար դերբայով և «ըլիլ» բայի պայմանական ձևերով, օրինակ՝

գրբում կու լիմ	էրվում կու լիմ	իմանում կու լիմ
գրբում կու լիս	էրվում կու լիս	իմանում կու լիս
և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի ապառնի

զբըում կու լէյի էրվում կու լէյի իմանում կու լէյի  
և այլն. և այլն. և այլն.

Հարկադրական եղանակ

Հարկադրական եղանակի ապառնին կազմվում է Արարատյան բար-  
բառի նման՝ երկու ձևով, օրոնցից առաջինում խոնարհվում է բայը. իսկ  
երկրորդում պիտի եղանակիչը, միայն ի տարբերություն Արարատյան  
բարբառի՝ Թբիլիսիի բարբառում պիտի եղանակիչը մնում է բայից առաջ:

Ապառնի

1-ին ձև	2-րդ ձև
պիտի զբըում	պիտիմ զբըի
» զբըիս	պիտիս »
» զբըէ	պիտի »
» զբըինք	պիտինք »
» զբըիք	պիտիք »
» զբըին	պիտին »

Հարկադրական անցյալի ապառնին ունենում է երեք ձև, առաջին  
երկուսը նման են ապառնիին, իսկ երրորդ ձևում պիտի եղանակիչն ու  
բայը մնում են անփոփոխ, և խոնարհվում է օժանդակ բայը:

Անցյալի ապառնի

1-ին ձև	2-րդ ձև	3-րդ ձև
պիտի զբըէյի	պիտէյի զբըի	պիտի զբըիլ էյի
» զբըէյիք	պիտէյիք »	» » էյիք
» զբըէր	պիտէր »	» » էր
» զբըէյինք	պիտէյինք »	» » էյինք
» զբըէյիք	պիտէյիք »	» » էյիք
» զբըէյին	պիտէյին »	» » էյին

ՆՄՈՒՇՆԵՐ ԹԲԻԼԻՍԻԻ ԲԱՐՔԱՌՈՎ

Ա.

Ամէն սաղի մէջըն զօված դուն թամամ դասն իս, քամանչա.  
Նաքազ մարթ քիզ չի կնա տէսնի, դուն նըրա պասն իս, քամանչա.  
Ղաստ արա՝ էլ լալ օրէրուն էրիվըն հասնիս, քամանչա.  
Բիզ ինձնից օ՞վ կանա խըլի՝ աշուղի բասն իս, քամանչա.  
Անդաճըդ էրծաթէն պիտի, գըլուխըդ ջալանիք քարած,  
Կուխըդ շիրմայէմէն պիտի, փուրըդ սաղափօլ նախշ արած.  
Սիմըդ օսկէն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած.  
Օչ օվ դիմէթըդ չի գիդի՝ լալ ու ալմասն իս, քամանչա.

Ճիպուտըդ վարաղընած պիտի՝ թահր ունէնա հազար ռանգօվ.  
Չարըդ ռաշի կուգէն պիտի՝ վուր դուն խօսիս քաղցըր հանգօվ.  
Շատին գարթուն կու լուսացնիս, շատին կու քընէցիս բանգօվ.  
Անուշահամ գինով լիքըն դուն օսկէ թասն իս, քամանչա:

Ածօղիդ էրկու կու շինիս, առաջ չայի դափա գուզիս.  
Կու մէճըրվիս այլվընումըն, պարապ վախաի ռափա գուզիս.  
Յիփ վէր գու գաս մէջլիսումըն, քաղցըր զօղ ու սափա գուզիս,  
Բօլօրքըդ զօղալնիք շարած՝ մէջլիսի կէսն իս, քամանչա:

Շատ արխուր սիրտ կու խընգացնիս, կու կըտրիս հիվընդի գուզըն:  
Յիփ քաղցըր ձէնըդ վէր կօնիս՝ բաց կուլի հիդըդ խաղօղըն.  
Խալիին էս իլթիմազն արա՝ ասին. «Ապրի քու ածօղըն».  
Բանի սաղ է Սայաթ-Նօվէն՝ շատ բան կու տէսնիս, քամանչա:

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱՅ

Նաքազ—վատթար	Գօզալ—գեղեցկուհի, չքնադագեղ
Ղաստ արա—ջանք արա	Չօղ ու սափա—խրախճանք
Շիրմայի—փղօսկր	Իլթիմազ—աղաչանք, միջնորդութիւն
Ղիմէթ—գին	Փանջարա—շրջանակ
Վարաղնած—ոսկէզօծ	Թահր—տեսք, տեսակ
Կուդի—պոչ	Թաշ—հրեղեն ձի
Բանգ—քնեցնող դեղ	Ղափա—սուրճ
Այիվան—սրահ, հովանոց	Թափա—ապրուստի միջոց

Բ

Յիս մի դարիք բլբուլի պէս, դուն օսկէ դափազի նըման.  
Էրէսըս դի վուտիդ տակըն՝ անց կաց, փիանդագի նըման.  
Յանք, քիզիդ խօսիլ իմ ուզում՝ Շահի իլթիմագի նըման.  
Աջայիք սուրաթի տէր իս՝ ռանգըդ է գուլագազի նըման.  
Յանք, մըտիլ իս բախշի մեջըն, աջայիք սէյրան իս անում,  
Շուղկզ արէգակի նման է՝ տիսնողին հէյրան իս անում.  
Ջիգարիս կըրակ իս արվի, էրվում իմ՝ բերյան իս անում.  
Վճնց մէ գօզալ չէ ունէցի էտ քու արած հաղի նըման:  
Չէնց իմացի, յանք, քու դուլն իմ, թանգ հախօվ գընած չըրախ իմ.  
Յանք, գըրանըդ նընգած բլիմ, օվ տէսնէ, ասէ, տուսաղ իմ.  
Էշխէմէդ հիվանդացիլ իմ, վունց մէճնում իմ, վունց թե սաղ իմ.  
Ծօվի պես ուրդան իմ ապիս, գըմվիլ իմ Արագի նըման.  
Օվ կու տեսնէ, ջուսուն կուլի՝ բարգ էրէսիդ խալ իս անում.  
Էլ ջուքամըն դուն կու քաշիս, չուն մահիս խիալ իս անում.  
Յանք, յիս քիզ բարօվ իմ ապիս—շուռ իս գալիս՝ զալ իս անում.  
Չունքի խօսքդ անց է կէնում բէլլու շահանդագի նըման.

Սայաթ-Նովէն սասց կու լամ, չիմ լաց ըլի՝ թէ ճար ունէնամ.  
 էլ յիս կու քաշիմ էս զուտէն՝ թուղ լի ա՛ն ու զար ունէնամ.  
 Յար, քիզ վըրէն արք ունենամ, մէ լավ իխախար ունէնամ,  
 Առնում տանիմ մէջլիսնէրըն օսկէջըրամ՝ սազի նըման.

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱՅ

Փիանդազ—ոտքի տակը գցվող  
 խալիչա կամ դիպակ  
 Աջայիբ—չնաշխարհիկ, անաշխարհիկ  
 Գուլգազ—խաս, ալ ու վառ  
 Սէյրան—գրոսանք, ճեմելը  
 Հէյրան—հիացում, գյուլթանք  
 Տուսաղ—բանտարկված  
 Էշխ—սեր  
 Վուսց—ոնց

Ջուտուն կուլի—կիսելագարվի  
 Ջուքամ—նեղութուն, վտանգ  
 Դուսա—տրամաթյուն  
 Իխախար—իբավունք, իշխանութուն.  
 Էշխէմէզ—սիրուցող  
 Ուրղան—ծովի փոթորիկ  
 Դալ—վեճ, խոտովանութուն

Գ.

ՏԵՍԻԼ ԺԱ

ՊեՊՈ. Մեճակ. արխալուխի կոճակները մեր գցելով.—Գընա՛, Պեպո, գէ-  
 դինը լրգէ, խալիսի վուտնէրուն պաշ արա, նրանց վուտի ցէխը լրկէ... Օ՞վ  
 իս դուն, ի՞նչ իս դուն, ինչ մարթանիսմբունն իս դուն, ինչ անձմ ունիս  
 դուն... Յիփօք դուզին, վուտի տակ կու գըցին քիզ, վըրէտ կու ման գան,  
 գէդնի հիզ կու հավասըրին... Ինչ հաջաթ, ջիանճվէլի վրա ինչօ՞վ իս  
 ավէլ... Գուն խօ մարթ չիս, մարթկէրանց համա կէրակուր է ստէղծի քիզ  
 աստուծ... Քիշէր շարջըրվի, ցէրէկ շարջըրվի, յէրգընքի տակը լուսացրու,  
 անձըրվի ու քամու հիզ կոխի մու, ձմէոը ցըրտէմէն կօնկօրտա, ամառը  
 արեզակի շուքունն էրվի ու խօրօվի... գընա էնէնց մի թիքա հաց ճարէ  
 ու էն թիքա հացով գէդիդ ու քըվիբըդ պահէ... էս ի՞նչ, ի՞նչ մարթու-  
 թին... էսէնց շունն էլ է ճարում մէ թիքա, վուր տունը պահում է... մի-  
 թամ դուն էլ շուն իս... քանի աշխարքիս էրէսին մանի իս գալի, դուն  
 էլ շան պէս կէրակըրվի... էս ի՞նչ մարթութին է... (գապար): Մարթ էյիբ  
 ուզում դառնա, կէհէյիբ մարթիք կու թալնէյիբ, գուզութին կօնէյիբ, ինձ  
 նման խըղճէրուն կու գընէյիբ. քսանուհինգ հազար տիզ արին արաըսունք  
 կու թափիլ տէյիբ, էն արտասունքնիբը փուղ կու շինէյիբ ու էն փուղով  
 օսկէ արնիբ... մէջը փատավուր ման դու քէյիբ... գըօշկա, կալասկա, ձիա-  
 նիբ կու սարքէյիբ, քսանուհինգ ինձպէսին գլխիդ զարավաշ կու կանգ-  
 նէցնէյիբ... Ա՛յ, էն չախը կօսէյի քիզ՝ մարթ իս, Պէպօ, ինչ մարդուն պի-  
 տի... ինչ քէփզ գուզէր, էն սահաթին կու ճարէյիբ... էն չախը դիփունքը  
 քիզ գըլուխ կու տէյին, կու մէձրէյին, պատիվ կու տէյին ու մէկս մէկու  
 գըլուխ կու կօտրէյին, վուր քու աճկը նրանց վրա քաղցըր ըլի...

Գ. Սունդուկյան, «Պեպո»

3. «Ս» ՃՅՈՒՂԻ ԲԱՐՔԱՌԱՆԵՐԸ

«Ս» ճյուղի բարբառները հիմնականում գասավորված են Արաքսի  
 երկու ափին՝ սկսած Գողթանից մինչև Հագրութը ներառյալ, որ գտնվում  
 է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարավում:

1939 թ., երբ հայտնաբերվեցին «Ս» ճյուղի բարբառները, ուսում-  
 նասիրվեցին այն բարբառները, որոնք գտնվում էին Արաքսի սովետական  
 ափին: Այդ բարբառներից մեկը՝ Շաղախի բարբառը, ենթադրվում էր  
 որպես Ղարաղաղից գաղթած բարբառ, ուստի կոչվում էր նաև Ղարաղաղի  
 բարբառ: Այժմ արդեն հայտնի են այն հայ գյուղերի բարբառները, որոնք  
 գտնվում են Արաքս գետի մյուս ափին՝ Հարավային Ադրբեջանում կամ,  
 ինչպես այժմ ասում են, Իրանի հյուսիսում:

Արաքսի այն ափին, Մեղրուց մինչև Մինջևան, գետ մի քիչ էլ այն  
 կողմ, գտնվել են շուրջ 25 հայ գյուղեր, որոնք բաժանվել են հետևյալ շրջան-  
 ների.

1. Դգմար (Աղաղան, Ուրգութու, Ղշլաղ, Սաղբու):
2. Հասանավ, որ բաժանվում է նախորդից Դրոնու գետով (Պանագա, Դուլուզի, Շավլի, Նորաշեն, Օղան և Լուժա):
3. Մեշափարա, որ անջատվում է նախորդից Ըրղընան գետով (Բլա-լա, Գիրմընավ, Մգկիթ, Նեփեշա):
4. Մինջևան, որի գյուղերն են Վինան, Վարդանու, Քարադուլս, Ամ-բաղուր, Սևահող, (Սըվալըդ):
5. Քեյվան, որի գյուղերն են Սըղըն, Բարդ, Ղասաբ, Խուղաֆերին:

Առաջին խմբին պատկանում են Հասանավի շրջանի գյուղերի խոս-  
 վածքները: Այդ շրջանի խոսվածքների տիպիկ ներկայացուցիչը Պանագայի  
 խոսվածքն է, որը մի կատարյալ նորություն է հայ բարբառագիտության  
 մեջ: Այդ շրջանի խոսվածքը կոչում ենք Ղարաղաղի բարբառ, քանի որ  
 նրա հատկանիշները, ինչպես հետո կտեսնենք, լիակատար չափով համընկ-  
 նում են ամբողջ ճյուղի հատկանիշներին: Այդ պատճառով ուղղում ենք  
 նախորդ ուսումնասիրությունների ժամանակ տեղի ունեցած սխալը, քանի որ  
 Ղարաղաղի բարբառ՝ կոչել էինք Շաղախի բարբառը:

Պրոֆ. Ն. Աճառյանն իր «Հայ բարբառագիտություն» արժեքավոր աշխատության  
 մեջ ամբողջ Ղարաղաղի բնակչության խոսվածքներն ու բարբառները անվանել է Ղարա-  
 բաղի բարբառի Ղարաղաղի ենթաբարբառ (էջ 70—71), հաղորդելով իրառ սահմանափակ  
 անկեղություններ և մեկ նմուշ (72—73):

ԴՊՄԱՐԻ շՐՋԱՆԻ գյուղերի խոսվածքները հիմնական տարբերություն ունեն Ղարաղաղի բարբառից և հանդիսանում են անցման մի օղակ Ղարաղաղի բարբառից դեպի Մեղրու բարբառը: Այդ խոսվածքները միասին կոչում ենք ԴՊՄԱՐԻ բարբառ: Այդ բարբառի լավագույն ներկայացուցիչն են Ղալաղի և Ուրգուլի խոսվածքները:

Մյուս շրջաններում խոսվածքները խառն են, որոշ գյուղեր մոտենում են Ղարաղաղի բարբառին, որոշ գյուղեր ԴՊՄԱՐԻ բարբառին, սակայն այդ մնացած երեք շրջանների գյուղերի խոսվածքները շատ ավելի նման են Շաղախի բարբառին:

Այդ երրորդ տեսակի բարբառը, որ առաջներում կոչում էինք Շաղախի բարբառ, այժմ կոչում ենք Քեյվանի—Շաղախի բարբառ, նկատի ունենալով, որ Քեյվանի շրջանի գյուղերի խոսվածքը բնորոշ շատ զծեր ունի Շաղախին նման և ներկայացնում է ավելի մեծ տարբերություններ «Ս» ճյուղի մյուս բարբառներից, քան Շաղախի բարբառը:

Նկատի ունենալով, որ «Ս» ճյուղին պատկանում է Արգվինի բարբառը, որ գտնվել է Հյուսիս-Արևմտյան Հայաստանում, և Ուրմիայի բարբառը, որ գտնվել է Արևելյան Հայաստանում, մենք այժմ կարող ենք «Ս» ճյուղի բարբառներ համարել հետևյալները՝ Ղարաղաղի, Արգվինի, Մեղրու, Կարճևանի, Հազրութի, ԴՊՄԱՐԻ, Քեյվանի—Շաղախի և Ուրմիայի—ընդամենը 8 բարբառներ:

Ինչպես վերևում նշեցինք, «Ս» ճյուղի հիմնական զծերը լիակատար կերպով երևան են գալիս Ղարաղաղի բարբառի մեջ: Այդ պատճառով չենք սխալվի, եթե ասենք, որ դա ամբողջ ճյուղի «մայր» բարբառն է: Անցնենք այդ ճյուղի հիմնական զծերի վեր հանմանը:

1. «Ս» ճյուղի բարբառների ներկան կազմվում է «Ս» վերջավորություն ունեցող գերբայով և օժանդակ բայով: Այս հատկությունն ունեն բոլոր բարբառները, սակայն մի տարբերությամբ, որ Ղարաղաղի և Արգվինի բարբառները այդ գերբայը պահպանել են լրիվ վիճակով, մինչդեռ մյուսները այս կամ այն ձևով փոփոխության են ենթարկվել: Հայտնի է, որ այդ գերբայը առաջացել է անորոշ գերբայի հոգնակի հայցական ձևից, որ գրաբարում կլինեք գրելիս, կարգալիս<sup>1</sup>:

Բարբառներ			
Ղարաղաղ	Արգվին	ԴՊՄԱՐ	Քեյվան
մնալիս քմ	մնալիս իմ	մնայիս քմ	մնայիս քմ
գ'իրելիս քմ	գըրէլիս իմ	գ'իրելիս քմ	կ'իրելիս քմ
Կարճևան	Մեղրի	Հազրուր	Ուրմիա
մնայ (մնայս) իմ	մնաս իմ	մնաս քմ	մնաս եմ
գ'իրել (գիրելիս) իմ	գ'իրելիս իմ	կ'ըրէս քմ	կ'իրէս եմ

Ինչպես տեսնում ենք, Ղարաղաղի և Արգվինի բարբառներում առկա է գերբայի լրիվ ձևը՝ մնալիս, ԴՊՄԱՐԻ, Քեյվանի բարբառներում «լ» հըն-

<sup>1</sup> Տես՝ էջ 167—168:

չյունը թուլացած է, վերափոխված «լ» հնչյունի, բայց պահպանված է գերբայի լրիվ պատկերը՝ մնալիս, Կարճևանի բարբառում «խ»-ը դուրս է ընկած, լ-ն վերածված է յ-ի, սակայն եզակի երրորդ գեմքում վերականգնրված է այն միջին ձևը, որից ստացվել է անկատար գերբայը՝ մնայս: Մնացած բարբառներում դուրս է ընկած «լի»-ն, բայց պահպանվել է «ս» վերջավորությունը, քանի որ գերբայի գաղափար ավողը վերջավորությունն է: Այդ բոլոր փոփոխությունները կատարվել են շեշտը վերջին վանկից նախավերջինի վրա տեղափոխվելու հետևանքով: Դրա ամենալավ ապացույցն այն է, որ Արգվինի բարբառում շեշտը վերջին վանկի վրա մնալով՝ պահպանել է գերբայի պատկերն անվթար, օրինակ՝ մնալիս: Դերբայական այս ձևը մեր արդի ընդհանուր ազգային լեզվի անկատար գերբայի զուգահեռ ձևն է (մնում, մնալիս):

Կարծում ենք, որ այդ գերբայը նույն ծագումն ունի, ինչ որ գրաբարի հոգնակի հայցական հոլովը և կազմված է նրա անալոգիայով, ըստ որում բարբառներում այդ հայցականը վերցված է ներգոյական իմաստով, այսինքն՝ կազմվել են նույն ի գրելիս, ի մնալիս, ի կարգալիս ձևերը, ապա գրանց վրա ավելանալով օժանդակ բայը, կազմվել է «Ս» ճյուղի անալիտիկ խոնարհումը «Ում» և «Լ» ճյուղերի նմանությամբ:

Հետևաբար ի մնալիս եմ = մնաս եմ = մնաս եմ, նշանակում են «մնալու գործողությունը կատարողների մեջ եմ», «մնացողների մեջ եմ»<sup>1</sup>, իր այս իմաստով «Ս» ճյուղը համեմատաբար մոտ է «Լ» ճյուղին՝ մի խոշոր տարբերությամբ, որ վերջինս օգտագործում է անորոշ գերբայի եզակի հայցականը նախդիրով, «Ս» ճյուղը նույն գերբայի հոգնակի հայցականը նախդիրով: «Ի» նախդիրը ժողովրդական խոսվածքների մեջ, չնչին բացառությամբ, գոյություն չունի, հետևաբար բարբառների մեջ նախդիրով տրական ու հայցականը փոխարինվում են սոսկ հայցականով և նույն իմաստով: օրինակ՝

Երթամ ի տուն	Նստեմ ի տանն
Էրթամ տուն	Նստում եմ տանը

Այսպիսով, «Ս» ճյուղի բարբառները ներկա ժամանակը կազմում են անալիտիկ սխառեմով, օգտագործելով անորոշ գերբայի հոգնակի հայցական հոլովը ներգոյականի իմաստով:

Երևանի բարբառում, ինչպես և գրական լեզվի մեջ, «Ս» ճյուղի անկատար գերբայի այս ձևը պահպանվել է իբրև մակբայական գերբայ, հիմնականում ժամանակ ցույց տվող: օրինակ՝

Նամակը գրելիս հիշեցի ընկերոջս պատվերը:

Գրելիս նշանակում է «գրելու ժամանակ»:

Ղարաղաղի բարբառում այս ձևը կարող է փոխարինվել «զրում ժամանակ» ոճով:

«Ս» ճյուղի բարբառները, գտնվելով «Ում», «Լ» և «Կը» ճյուղերի բարբառների միջավայրում, խիստ ազդեցություն են կրել նրանցից, միաժամանակ և ազդել նրանց վրա:

<sup>1</sup> Փ. Բուզանդի մոտ՝ լալիս=լացողների մեջ:



Հազրութի, Ղարաբաղի և Քեյվանի բարբառները ուժեղ չափով ազդել են Ղարաբաղի բարբառից, Մեղրու և Կարճեանի բարբառները՝ քիչ չափով Ղարաբաղի բարբառից, Ուրմիայի բարբառը՝ Սոյի և Վանի բարբառներից և Արդվինի բարբառը՝ Թբիլիսիի, Կարնու և, քիչ չափով, Տրապիզոնի բարբառներից:

Այս բոլոր ազդեցութիւնները, սակայն, չեն փոխել ամենահիմնականը՝ անկատար դերբայի ձևը, որի հետևանքով բարբառները մնացել են իրենց պատկանած ճյուղի մեջ: «Ս» ճյուղի բարբառների մեջ խիստ ուժեղ են բայերի եղանակային ձևեր կազմելու անալիտիկ առանձնատկութիւնները:

2. Բոլոր բարբառները, բացի Արդվինի բարբառից, բազադրյալ ժամանակների անցյալը կազմում են առանձին մասնիկ բառով. Հազրութ՝ նիս, լնլ, Ղարաղաղ, Դզմար, Քեյվան՝ լնլ, Մեղրի՝ լն, Կարճեան՝ լն, Ուրմիա՝ էր, հետևաբար օժանդակ բայի անցյալի ձևերը չունեն. Այդ կողմով «Ս» ճյուղը կապվում է Ագուլիսի բարբառի հետ, որը գործ է ածում այդ նույն նպատակի համար «նէլ» բառ-մասնիկը: Այսպիսի հատկութիւնն չկա մեր ոչ մի այլ ճյուղի բարբառների մեջ (չհաշված Ագուլիսը, Սվեդիան, Քեսաբը և «Լ» ճյուղի երկու բարբառները):

Ներկա

Ղարաղաղ	Դզմար	Քեյվան	Կարճեան
Մնալիս ըմ	մնայիս ըմ	մնայիս ըմ	մնայ(ս) իմ
գլիբիլիս ըմ	գլիբիլիս ըմ	կըբիլիս ըմ	գլիբիլ(ս) իմ

Անցյալի անկատար

մնալիս ըմ լնլ	մնայիս ըմ լնլ	մնայիս ըմ լնլ	մնայ իմ լն
գլիբիլիս ըմ լնլ	գլիբիլիս ըմ լնլ	կըբիլիս ըմ լնլ	գլիբիլ իմ լն

Ներկա

Մեղրի	Հաղրուք	Ուրմիա
մնաս իմ	մնաս ըմ	մնաս եմ
գլիբիս իմ	կըբէս ըմ	կիբէս եմ

Անցյալի անկատար

մնաս իմ լն	մնաս ըմ նիս	մնաս եմ էր
գլիբիս իմ լն	կըբէս ըմ նիս	կիբէս եմ էր

Հարակատար

Ղարաղաղ	Դզմար	Քեյվան	Կարճեան
մնացած ըմ	մնացած ըմ	մընացած ըմ	մընացած ըմ
գլիբնծ ըմ	գլիբնծ ըմ	կըբրած ըմ	գլիբէծ ըմ

Անցյալի հարակատար

մնացած ըմ լնլ	մնացած ըմ լնլ	մընացած ըմ լնլ	մնաճած ըմ լն
գլիբնծ ըմ լնլ	գլըբած ըմ լսլ	կըբրած ըմ լնլ	գլիբէծ ըմ լն

Մեղրի			Հարակատար		
մընաճած ըմ	ըմ	մընացած ըմ	մընացած ըմ	նիս	մընացած եմ էր
գլիբնծ ըմ	ըմ	կըբրած ըմ	կըբրած ըմ	նիս	կըբրած եմ էր

Անցյալի հարակատար

մընաճած ըմ լն	մընացած ըմ նիս	մընացած եմ էր
գլիբրած ըմ լն	կըբրած ըմ նիս	կըբրած եմ էր

3. Ղարաղաղի, Դզմարի, Կարճեանի, Մեղրու և Քեյվան-Շաղախի բարբառները չունեն հայերենի աորիստը, անցյալ կատարյալը կազմում են անալիտիկ սիստեմով, որպիսի նպատակով օգտագործում են վաղակատար գերբայը և օժանդակ բայը:

Ղարաղաղ	Դզմար	Քեյվան
գլիբնլ ըմ	գլիբնլ ըմ	կըբնլ ըմ
կըբթէցալ ըմ	կըբթէցալ ըմ	կըբթէցալ ըմ

Մեղրի	Կարճեան	Գրական լեզու
գլիբիլ ըմ	գլիբէլ ըմ	գրեցի
կըբրգալ ըմ	կըբրգալ ըմ	կարգացի
(կըբիցալ ըմ)		

4. Ղարաղաղի և Հաղրուքի բարբառները ապառնին կազմում են ալկան ածանցով, Մեղրու և Կարճեանի բարբառները ալկան ածանցով, իսկ Քեյվանի բարբառը՝ ալուս ածանցով:

Ղարաղաղ	Հաղրուք	Մեղրի
գլիբիլական ըմ	կըբըլական ըմ	գլիբըլական ըմ
կըբթըլական ըմ	կըբթըլական ըմ	կըբրգըլական ըմ

Կարճեան	Քեյվան	Գրական լեզու
գլիբըլական ըմ	կըբըլական ըմ	գրելու եմ
կըբրգըլական ըմ	կըբթըլական ըմ	կարգալու եմ

Անցյալի ապառնի

Ղարաղաղ	Հաղրուք	Մեղրի
գլիբիլական ըմ լնլ	կըբըլական ըմ նիս	գլիբըլական ըմ լն
կըբթըլական ըմ լնլ	կըբթըլական ըմ նիս	կըբրգըլական ըմ լն

Հաղորութի, Ղարաբաղի և Քեյվանի բարբառները ուժեղ չափով ազդ-վել են Ղարաբաղի բարբառից, Մեղրու և Կարճևանի բարբառները՝ քիչ չափով Ղարաբաղի բարբառից, Ուրմիայի բարբառը՝ Խոյի և Վանի բարբառներից և Արդվինի բարբառը՝ Թբիլիսիի, Կարնո և, քիչ չափով, Տրապիզոնի բարբառներից:

Այս բոլոր ազդեցությունները, սակայն, չեն փոխել ամենահիմնականը՝ անկատար դերբայի ձևը, որի հետևանքով բարբառները մնացել են իրենց պատկանած ճյուղի մեջ, «Ս» ճյուղի բարբառների մեջ խիստ ուժեղ են բայերի եղանակային ձևեր կազմելու անալիտիկ առանձնահատկությունները:

2. Բոլոր բարբառները, բացի Արդվինի բարբառից, բաղադրյալ ժամանակների անցյալը կազմում են առանձին մասնիկ թառով, Հաղորութ՝ նիս, լնլ, Ղարաղաղ, Դզմար, Քեյվան՝ լնլ, Մեղրի՝ լն, Կարճևան՝ լն, Ուրմիա՝ էք, հետևաբար օժանդակ բայի անցյալի ձևերը չունեն, Այդ կողմով «Ս» ճյուղը կապվում է Ազուլիսի բարբառի հետ, որը գործ է ածում այդ նույն նպատակի համար Վնէլը բառ-մասնիկը: Այսպիսի հատկություն չկա մեր ոչ մի այլ ճյուղի բարբառների մեջ (չհաշված Ազուլիսը, Սվեգիան, Քեսաբը և Վն ճյուղի երկու բարբառները):

Ներկա			
Ղարաղաղ	Դզմար	Քեյվան	Կարճևան
Մնալիս ըմ	մնայիս ըմ	մնայիս ըմ	մնայ(ս) իմ
գիրիլիս ըմ	գիրիլիս ըմ	կըրիլիս ըմ	գիրիլ(ս) իմ

Անցյալի անկատար				
մնալիս ըմ լնլ	մնայիս ըմ լնլ	մնայիս ըմ լնլ	մնայ իմ լն	լն
գիրիլիս ըմ լնլ	գիրիլիս ըմ լնլ	կըրիլիս ըմ լնլ	գիրիլ իմ լն	լն

Ներկա		
Մեղրի	Հաղրուր	Ուրմիա
մնաս իմ	մնաս ըմ	մնաս եմ
գիրիս իմ	կըրէս ըմ	կիրէս եմ

Անցյալի անկատար		
մնաս իմ լն	մնաս ըմ նիս	մնաս եմ էք
գիրիս իմ լն	կըրէս ըմ նիս	կիրէս եմ էք

Հարակատար			
Ղարաղաղ	Դզմար	Քեյվան	Կարճևան
մնացած ըմ	մնացած ըմ	մընացած ըմ	մընացած ըմ
գիրնծ ըմ	գիրնծ ըմ	կըրած ըմ	գիրէծ ըմ

Անցյալի հարակատար				
մնացած ըմ լնլ	մնացած ըմ լնլ	մընացած ըմ լնլ	մնահած ըմ լն	լն
գիրնծ ըմ լնլ	գըրած ըմ լալ	կըրած ըմ լնլ	գիրէծ ըմ լն	լն

Հարակատար		
Մեղրի	Հաղրուր	Ուրմիա
մընահած ըմ	մընացած ըմ	մնացած եմ
գիրնծ ըմ	կիրած ըմ	կիրած եմ

Անցյալի հարակատար				
մընահած ըմ լն	մընացած ըմ նիս	մընացած եմ էք	լն	էք
գիրած ըմ լն	կիրած ըմ նիս	կիրած եմ էք	լն	էք

3. Ղարաղաղի, Դզմարի, Կարճևանի, Մեղրու և Քեյվան-Շաղախի բարբառները չունեն հայերենի առիստը, անցյալ կատարյալը կազմում են անալիտիկ սիստեմով, որպիսի նպատակով օգտագործում են վաղակատար դերբայը և օժանդակ բայը:

Ղարաղաղ	Դզմար	Քեյվան
գիրնլ ըմ	գիրնլ ըմ	կիրնլ ըմ
կըրթէցալ ըմ	կըրթէցալ ըմ	կըրթէցալ ըմ

Մեղրի	Կարճևան	Դրական լեզու
գիրիլ ըմ	գիրէլ ըմ	գրեցի
կըրդալ ըմ	կըրդալ ըմ	կարդացի
(կըրիցալ ըմ)		

4. Ղարաղաղի և Հաղրուրի բարբառները ապահովում են ական ածանցով, Մեղրու և Կարճևանի բարբառները ական ածանցով, իսկ Քեյվանի բարբառը՝ ակուն ածանցով:

Ղարաղաղ	Հաղրուր	Մեղրի
գիրիլական ըմ	կիրըլական ըմ	գիրըլական ըմ
կըրթըլական ըմ	կըրթըլական ըմ	կըրդըլական ըմ

Կարճևան	Քեյվան	Դրական լեզու
գիրըլական ըմ	կիրըլական ըմ	գրելու եմ
կըրդըլական ըմ	կըրթըլական ըմ	կարդալու եմ

Անցյալի ականի		
Ղարաղաղ	Հաղրուր	Մեղրի
գիրիլական ըմ լնլ	կիրըլական ըմ նիս	գիրըլական ըմ լն
կըրթըլական ըմ լնլ	կըրթըլական ըմ նիս	կըրդըլական ըմ լն

Կարճևան	Քեյվան	Գրական լեզու
Անցյալի ապառնի		
գ՛իրբլասկան	ըմ լէ	կ՛իրբլակուն
կ՛բրբլասկան	ըմ լէ	կ՛բրբլակուն

5. Ղարադաղի, Քեյվանի, Մեղրու, Կարճևանի և Դզմարի բարբառները չունեն վաղակատար ժամանակները. հարակատար ժամանակները գործ են անում նաև որպես վաղակատար:

Ղարադաղ	Քեյվան	Դզմար
Հարակատար-վաղակատար		
գ՛իրանծ	ըմ	կ՛իրանծ
կբրթէցած	ըմ	կբրթէցած

Մեղրի	Կարճևան	Գրական լեզու
գ՛իրած	ըմ	գրել
կբրբրհած	ըմ	կարթացել

Ղարադաղ	Քեյվան	Դզմար
Անցյալի վաղակատար-հարակատար		
գ՛իրանծ	ըմ	կ՛իրանծ
կբրթէցած	ըմ	կբրթէցած

Մեղրի	Կարճևան	Գրական լեզու
գ՛իրանծ	ըմ	գրել
կբրբրհած	ըմ	կարթացել

6. Ղարադաղի, Քեյվանի, Դզմարի, Մեղրու և Կարճևանի բարբառները պայմանական անցյալի ապառնի կազմում են անորոշ դերբայով:

Ղարադաղ	Քեյվան	Մեղրի
Պայմանական անցյալի ապառնի		
գ՛իրբի	ըմ	կ՛իրբի
կարթի	ըմ	կարթի

Կարճևան	Գրական լեզու
գ՛իրբի	իմ լէ
կ՛արթի	իմ լէ

7. Գոյականների հոլովման մեջ Ղարադաղի, Մեղրու, Կարճևանի, Հաղբուրի և Քեյվան-Շաղախի բարբառները բացառականը կազմում են վերլու-

ծական եղանակով, այսինքն՝ բացառական հոլովով և որևէ բառ-մասնիկով, բայտ որում Ղարադաղն օգտագործում է «անէ», Քեյվանը՝ «անա», Մեղրին՝ «հէնից», Կարճևանը՝ «հէնի» և Հաղբուրը՝ «նըստա»:

Ղարադաղ	Մեղրի	Կարճևան
Բացառական		
քարէն անէ	սարու հէնից	սարու հէնի

Քեյվան	Հաղբուր	Գրական լեզու
սարէն անա	սարէն նըստա	սարից, քարից

8. Դերանունների հոլովման մեջ «Ս» ճյուղի բոլոր բարբառները ներկայացնում են բաղմաթիվ յուրահատկություններ:

Ինչպես տեսանք՝ «Ս» ճյուղի բարբառներից յուրաքանչյուրն առանձնահատուկ գծերով լի է, թեև լի է և նմանություններով այլ բարբառների հետ: Այդ կարելի է տեսնել հնչյունական սիստեմի և բառապաշարի մեջ: Արդվինի բարբառը բաղաձայնական սիստեմով զգալիորեն նման է Թբիլիսիի բարբառին, բայց ձայնավորական սիստեմով այդ նմանությունն ավելի քիչ է: Թբիլիսիի բարբառի առանձնահատուկ գիծը «ե» ձայնավորի, «ի» և «ո» ձայնավորի «ու»-ի փոխելն է: Արդվինի բարբառում այդ նկատում ենք միայն օժանդակ բայի մեջ (իմ, իս, է, ինք, իք, ին) և մի քանի էպիդոզիկ գեպքերում: Ընդհակառակն՝ նկատելի է, որ Արդվինի բարբառը ձայնավորներով նման է Կարնո բարբառին, բառապաշարով խիստ հարուստ, օգտագործում է և՛ պարսկերեն, և՛ վրացերեն բառեր (փէնջարա, զօգօ, դէդա):

Հաղբուրի և Քեյվանի (Շաղախի) բարբառները հնչյունական սիստեմով խիստ նման են Ղարաբաղին, միայն տարբերվում են քմայնացման առարկյամբ: Քեյվանի (Շաղախի) բարբառն ունի կոշտ «ը», որ ավելի է գործածվում, քան մյուս բարբառների ը-ն: Բառային կազմում այս երկու բարբառները կրում են պարսկերեն և ադրբեջանական լեզվի ազդեցությունը:

Մեղրու և Կարճևանի բարբառների բաղաձայնական սիստեմը նմանվում է Ղարադաղի և Դզմարի բարբառներին, որոնց նման է Ազուլիսի բարբառը:

Մեղրու և Կարճևանի բարբառների բաղաձայնական սիստեմը նմանվում է Ազուլիսի բարբառին, իսկ ձայնավորական սիստեմը տարբերվում է նրանից և մտանում Ղարաբաղին: Բառապաշարով այս երկու բարբառները Հաղբուրի և Ղարադաղի նման կրում են պարսկերենի և ադրբեջաներենի ազդեցությունը, բայց ունեն նաև զրաբարի այնպիսի բառեր, որ ժամանակակից գրական լեզվի մեջ գործածական չեն (օրինակ, հաք-աք-ոտք, վըստակել-վաստակել՝ հոգնել, խնդիլ-խնդրել՝ ուզել, հուրմ-

<sup>1</sup> Տե՛ս՝ «Հայ բարբառների համեմատական ձևաբանություն» զուտը:

—որմն՝ պատ, սրկօն—զգոն՝ արթուն և այլն), Բացի այս՝ բարբառներումս կան բառեր, որ չկան հայերենում, կամ կան և գործ են ածվում այլ իմաստով (օրինակ՝ տատ-կարիճ, սեխ-ձմերուկ, օքուտ >լավ, թուռ >անձրև, ցաք >մացառ, լիծակ >կույտ, մատակ >առու, շարհամ >ռեհան, շօվվել >վազել, քաշ >ազոավ և այլն)։

Ամփոփելով ձևաբանական առանձնահատկությունները՝ կարելի է եզրակացնել, որ «Ս» ճյուղին ավելի հարազատ են Ղարազաղի, Մեղրու, Կարճևանի, Քեյվանի-Շաղախի և Դզմարի բարբառները։ Այդ բարբառներից ամենահարազատ ձևերը պահպանված են Ղարազաղի բարբառի մեջ։

Դզմարի բարբառը, պահպանելով բոլոր հատկանիշները, անկատար դերբայի «ալ» «էլ» ձևերը սղել է, նրանց մեջ չ-ն վերածել է յ-ի, սրով ստացվել «գիրիխ» և «մնայիտ» ձևերը։ Ըստ որում Դզմարի բարբառը պահպանել է բաղաձայնական եռաստիճան սխտեմը Ղարազաղի նման։ Սակայն Դզմարի բարբառում ապտոնի դերբայը նման է «Ու» ճյուղին (գիրէլու, մնալու)։

Քեյվան-Շաղախի բարբառը տարբերվում է Ղարազաղի բարբառից միայն իր բաղաձայնական սխտեմով, նա կատարում է առաջին տեղաշարժը միայն, ուրեմն պահպանել է համարյա Ղարազաղի բարբառի բոլոր հատկանիշները։ Այդ բարբառը ևս, Դզմարի նման, «լ»-ն վերածել է «յ»-ի (կիրիխ, մնայիտ), Մեղրու և Կարճևանի բարբառները, պահպանելով բաղաձայնական սխտեմի եռաստիճան կարգը, միանգամայն կորցրել են «լի» դերբայական մասնիկը և «ս» վերջավորությունը կցում են անմիջապես խոնարհիչներին (գիրի-ս, մնա-ս)։ Մնացած բոլոր հատկանիշներով այդ բարբառները հավատարիմ են մնում «Ս» ճյուղին։

Շատ հեռացած է «Ս» ճյուղից Հաղբութի բարբառը։ Նա պահպանել է ճյուղի երեք հիմնական զծերը՝ անկատարի «ս» վերջավորությունը, անցյալ ժամանակների կազմությունը և բացառական հոլովի անալիտիկ սխտեմը, բայց այդ բարբառը որդեգրել է նաև անցյալի կազմության այն ձևերը, որ ունի Ղարազաղի բարբառը, այսինքն՝ օժանդակ բայի անցյալի ձևերը, ինչպես և բացառական հոլովի օինթետիկ կառուցվածքը (կըրէս ի, կըրէս իր, կըրբս ար... բացառական՝ տաշտան, սարան)։

Մնացած բոլոր զծերով Հաղբութի բարբառը նման է Ղարազաղի բարբառին, այդ պատճառով էլ այդ բարբառը անցյալում նույնացվել է Ղարազաղի բարբառի հետ և հիմա էլ շատերը շարունակում են մնալ այդ թյուրիմացության մեջ։

Հավանական պետք է համարել, որ Հաղբութի բարբառը ենթարկվել է Ղարազաղի բարբառի ազդեցության և կորցրել է իր մի շարք հատկանիշները՝ պահպանելով դրանցից միայն երեքը, բայց որում երկուսը համատեղում է Ղարազաղի բարբառի նույն հատկանիշների հետ, որ հենց ապացույց է, որ Հաղբութի բարբառը, պատկանելով «Ս» ճյուղին, ենթարկվել է Ղարազաղի բարբառի ազդեցության ու փոխել իր մի շարք զծերը։

Արդվինի բարբառը, որ գտնվում է իր հայրենիքից՝ «Ս» ճյուղի հայրենիքից, չափ հեռու, պահպանել է միայն «Ս» ճյուղի հատկանիշներից

մեկը, բայց լրիվ կերպով, առանց որևէ փոփոխություն և ենթարկելու։ դա անկատար դերբայի կազմությունն է (գրելիս, կարդալիս)։

Մյուս բոլոր հատկանիշներով Արդվինի բարբառը նմանվում է «Ու» և մասամբ «Գ» ճյուղի բարբառներին, համեմատաբար ավելի մոտ լինելով Թրիխի բարբառին։

Մենք ենթադրել ենք և շարունակում ենք այդպես էլ կարծել, որ Արդվինի բարբառը միաձուլվել է Հին Տայքի բարբառի հետ, առնելով նրանից բոլոր հատկությունները և պահպանելով միայն իր սեփական մեկ հատկությունը՝ անկատար դերբայի հատկությունը։

Ուրմիայի բարբառը պահպանել է իր ճյուղի մեկ հատկությունը՝ անկատար դերբայի կազմությունը «ս» վերջավորությամբ, բայց խիստ փոխված կերպով, այդ բարբառը սղել է դերբայական վերջավորության «լի» մասնիկը (կիրիս, կմնթաս)։ Որ այդ բարբառը իսկապես պահել է իր ճյուղային այդ մեկ հատկությունը, երևում է նաև նրանից, որ ժխտական ձևերի մեջ ունենում է «էլի» կամ «ալի» վերջավորությունը, այսինքն՝ «էլիս», «ալիս» վերջավորություն ունեցող (գըրելիս, կարդալիս) ձևերից կրճատում է ա-ն, նշանակում է՝ բարբառի լրիվ ձևը եղել է «կիրէլիս», «կմնթալիս»։

Այդ հատկությունը Ուրմիայի բարբառից անցել է նաև Մարաղայի բարբառին, որ պատկանում է «Լ» ճյուղին և մնում է իբրև նրա մասնակի հատկանիշը։ Խոյի բարբառն այդ հատկությունը չունի (օրինակ՝ չեմ էթալ, չէս էթալ և այլն)։

Մնացած բոլոր հատկություններով Ուրմիայի բարբառը նման է «Լ» ճյուղի բարբառներին, նշանակում է՝ գտնվելով կամ ընկնելով այդ ճյուղի շրջապատի մեջ՝ «Ս» ճյուղին պատկանող Ուրմիայի բարբառը ենթարկվել է «Լ» ճյուղի ազդեցության, ընդունել է նրանից բոլոր հատկանիշները, բացի անկատար դերբայի կազմությունից, որտեղ ա-ն պահպանելով, մնացել է «Ս» ճյուղի մեջ, ել ընդհակառակն՝ «Լ» ճյուղի բարբառներից մեկը իր անկատար դերբայի ժխտական ձևը նմանեցրել է իրեն ենթարկվող «Ս» ճյուղի բարբառին։

Խոյի բարբառը անկատար դերբայի և՛ դրական, և՛ ժխտական ձևերի մեջ պահպանում է միատեսակությունը (էթալ եմ, չեմ էթալ, կըրել եմ, չեմ կըրել)։

Այսպիսով՝ կասկածից վեր է, որ Արդվինի և Ուրմիայի բարբառները հյուսիսային Իրանից կամ Մեղրի — Հաղբութ — Ղարազաղի շրջաններից գաղթած բարբառներ են, որ ընկնելով ուրիշ բարբառների միջավայրը, ենթարկվել են դրանց ազդեցության։

«Ս» ճյուղի բարբառներից Ղարազաղի, Դզմարի, Մեղրու, Կարճևանի և Արդվինի բարբառներն ունեն անտեղաշարժ բաղաձայնական սխտեմ։

Այդ նույն հատկությունն ունի նաև Արդլիսի բարբառը։ Նկատելի է, որ Արդլիսի բարբառի ձևաբանական բոլոր հատկանիշները, բացի անկատար դերբայի կազմությունից, նույնն են «Ս» ճյուղի բարբառների հետ և կատկապես Ղարազաղի բարբառի հետ։

Այսպես՝ Արդլիսի բարբառի բայական անցյալ ձևերը կազմվում են կայ բարբառագիտություն — 19

«նէլ» բառ-մասնիկով, որ ավելանում է ներկայի ձևերի վրա (սրբում բմ նէլ = սրում էի, թակամ բմ նէլ = թակում էի): Բոլոր «ա» խոնարհման բայերը Ազուլիսի բարբառում պատկանում են «Ս» ճյուղին, ուստի այս տեսակետից Ազուլիսի բարբառը մի իսկական միջճյուղային բարբառ է: Թեև Ազուլիսի բարբառն ունի անցյալ կատարյալի ձևեր, բայց ավելի գործածական են վաղակատարի ձևերն իրրև անցյալ կատարյալ:

Ազուլիսի բարբառում միայն «ե» խոնարհման բայերի ներկայի կազմութունը նման է «Ում» ճյուղին: Թեև բացառական հոլովը նույնպես նման է «Ում» ճյուղին, բայց բարբառում կան «Ս» ճյուղի նման անալիտիկ կազմութուններ: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ Ազուլիսի բարբառը պատկանել է «Ս» ճյուղին, բայց ընկնելով «Ում» ճյուղի կրկու բարբառների՝ Արարատյան և Զուղայի բարբառների, ազդեցության տակ՝ մասնակի կերպով կորցրել է իր ճյուղային հատկանիշը և անցել է «Ում» ճյուղի բարբառների շարքը, մյուս հատկութուններով մնալով «Ս» ճյուղի մեջ. կարելի է ենթադրել ընդհակառակն, այսինքն՝ Ազուլիսի բարբառը եղած լինի «Ում» ճյուղի հատկութուններով, բայց ենթարկված լինի «Ս» ճյուղի բարբառներին: Դրան հակառակ են խոսում Ազուլիսի բարբառի մոտ գտնվող խոսվածքները: Այսպես՝ Ցըղնայի և Ռամիսի խոսվածքները պատկանում են «Ս» ճյուղին, երբեմն միայն գործածելով «ոււմ» վերջավորութունն ունեցող անկատար դերբայ. Այդ խոսվածքների մեջ հանդիպում ենք «սըրըկէս ա» = սատկում է, «նալիս ա» = գնում է, «փըխնաս ա» = փախում է և նման ձևերի, նույնպես և Ռամիսի խոսվածքում հանդիպում ենք «փըխնալիս ա» = փախում է, «գըրալիս չի» = չի կարողանում, «արնալիս ա» = տեսնում է, «սըրուկէլիս ա» = սատկում է, և այլ ձևերի, որոնք ցույց են տալիս, որ այդ խոսվածքները «Ս» ճյուղին պատկանող խոսվածքներ են եղել. Ռամիսի խոսվածքը պահպանել է անկատար դերբայի լրիվ ձևը, որ «Ս» ճյուղի բարբառներից քչերն են պահպանել:

Նշանակում է, թե այդ խոսվածքները, ինչպես և Ազուլիսի բարբառը, պատկանել են «Ս» ճյուղին և աստիճանաբար ենթարկվելով «Ում» ճյուղի բարբառներին, ընդունել են և նրանց անկատար դերբայի կազմութունը:

Թե ինչպես է այդ պրոցեսը կատարվել, երևում է հենց նույն Ցըղնայի և Ռամիսի խոսվածքներից: Հ. Աճառյանի «Քննություն Ազուլիսի բարբառի» (1935 թ.) աշխատության մեջ բերված երկու տեքստերից երևում է, որ նույն Ցըղնայի բարբառում «ս» վերջավորութունն ունեցող դերբայի հետ միասին գործածվում են «ոււմ» վերջավորութունն ունեցող դերբայներ. Օրինակ՝ «Մարը փխնաս ամուում ա տունը», «Մինչև իրիք ամիս աթ չօպանի փուսունը պահրմ ա, օր կծի, գըրէս չի կծի»: Ինչպես տեսնում ենք, այս հատվածի մեջ «փըխնաս», «գըրէս» ձևերը «Ս» ճյուղի դերբայներն են, իսկ «ամոււմ», «պահրմ» ձևերը «Ում» ճյուղի դերբայներն են:

Նույն բանն էլ նկատում ենք Ռամիսի ենթաբարբառում. Օրինակ «Մարը փխնալիս ա, մտնում ա բունը, մինչուկ իրէք ամիս ադ չօբանի բուխուն պահում ա, էր կծի, գըրալիս չի կծի»: Այս հատվածի մեջ փխնալիս և «գըրալիս» «Ս» ճյուղի դերբայներն են, իսկ «մտնում», «պահում»

«Ում» ճյուղի դերբայներն են: Նշանակում է՝ այս խոսվածքները, պատկանելով «Ս» ճյուղին, ընդունել են «Ում» ճյուղի դերբայը ևս և գործածում են հավասար կերպով իրենց սեփական դերբայի հետ միասին. Երկարատև ազդեցության հետևանքով, ինչպես երևում է ընթացքից, այդ խոսվածքները գերակշռութուն կտան իրենց շրջապատի խոսողների ձևերին, սրովհետև այդ ձևերն էլ իրենց համար հարազատ են և հեշտացնում են շրջապատին հասկանալը, կմտնան իրենց ձևերը կամ կտան նրանց երկրորդական ֆունկցիա և կանցնեն նոր ճյուղի մեջ՝ «Ում» ճյուղի մեջ, Հենց այդպիսի պրոցես ապրել է Ազուլիսի բարբառը, որն այժմ մասնում է «Ում» ճյուղի մեջ:

Եթե Ազուլիսի բարբառը, մեր ենթադրությամբ, պատկանել է «Ս» ճյուղին, ուրեմն «Ս» ճյուղն ունեցել է 9 բարբառ, որոնցից 6 բարբառներ պահպանել են զրաբարի կամ մեր ժամանակակից ընդհանուր հայերեն գրական լեզվի բաղաձայնական սխեման:

Մյուս բարբառներից այդպես է միայն Թբիլիսիի բարբառը, որ մի բացառություն է և, հավանական է, իր այդ հատկութունների պահպանմամբ պարտական է Արզվիսի բարբառի և վրացերեն լեզվի ազդեցության, քանի որ պայթականների այդ նույն եռաստիճան սխեման ունի վրացերեն լեզուն:

Նշանակում է՝ «Ս» ճյուղի բարբառներից Արզվիսի, Ղարադաղի, կարճևանի, Մեղրու, Ազուլիսի (երբեմնի «Ս» ճյուղի բարբառը) և Դոմարի բարբառները պահպանել են հայերեն ընդհանուր լեզվի եռաստիճան բաղաձայնական սխեման, մինչդեռ մյուս բոլոր ճյուղերի բոլոր բարբառները այդ սխեման ենթարկել են փոփոխության<sup>1</sup>. Իսկ որովհետև այդ բարբառները կազմում են «Ս» ճյուղի բարբառների ճնշող մեծամասնությունը, ուրեմն կարելի է ասել, որ անտեղաշարժ բաղաձայնական սխեմա (զրաբար ընդհանուր լեզվի նման) ունեցել է ամբողջ «Ս» ճյուղը, որ և դառնում է «Ս» ճյուղի հիմնական հատկութուններից մեկը:

Այսպիսով՝ այժմ շատ ավելի պարզությամբ գծազրվեցին «Ս» ճյուղի հատկանիշները. Երևում է, որ «Ս» ճյուղը հայերենի կարևոր և ուժեղ բարբառաբաններից մեկն է եղել, ուստի սխալ է եղել անցյալում արտահայտած իմ սպավորությունը, թե այդ բարբառախումբը մահացման պրոցես ապրող բարբառախումբ է:

Ավելին, մեր նոր փաստերը վկայում են, որ «Ս» ճյուղը ամենամոտեկ արտահայտված հատկութուններով է օժտված՝ համեմատած մյուս ճյուղերին:

Մյուս կողմից՝ այսպես ուժեղ արտահայտված հատկութունները վկայում են, որ հայ բարբառների այս ճյուղը շատ հնուց եկող բարբառախումբ է և այն տեղը, որտեղ խոսում են «Ս» ճյուղի բարբառներով, հայ բնակչությունը զբաղեցված է եղել շատ հին ժամանակներից:

«Ս» ճյուղի ամենաբնորոշ ներկայացուցիչը հանդիսանում է Ղարապաղի բարբառը. Թվում է, թե նա մի տեսակ «մայր» բարբառ է, մյուս-

<sup>1</sup> Անորոշ է մնում Դիազինի բարբառի հարցը:

ները այս կամ այն չափով փոփոխություններ կրել են, գուցե և անկախ որևէ աղբյուրությունից, ինչպես կարճևաճի, Մեղրու և Գզմարի բարբառները, դառնալով հիմնական բարբառի մի տեսակ ճյուղավորումներ, Մյուս բարբառները, աղբյուրություններ կրելով «Ում» կամ «Է» ճյուղից, համատեղում են իրենց մեջ իրենց ճյուղի և այլ ճյուղի հատկությունները:

«Ս» ճյուղի բարբառները վկայում են այն մասին, որ միևնույն լեզվի բարբառների մեջ, դոնե հայ լեզվի բարբառների մեջ, նկատվում է համաձուլման պրոցես, որ տանում է դեպի ընդհանուր լեզվին նմանվելու և նրա մեջ աղագվելու պրոցեսը:

Նկատվում է, որ բարբառները կարող են համատեղել տարբեր ճյուղերի հատկություններ, ինչպես այդ պարզ երևում է «Ս» ճյուղի բարբառների օրինակներից:

1. Գ.Ս.ՐԱ.Գ.Ս.Գ.Ի ԲԱՐՔԱՍԵՆՍՈՒՆՆԵՐԸ:

Նուստիճան անտեղաշարժ բաղաձայնական սխտեմի

Ղարաղաղի բարբառը գտնվում է Հյուսիսային Իրանում՝ Արաքս գետի ափին ընկած գյուղերի խոսվածքներում, Ղարաղաղի բարբառով խոսում են Մանազա, Նորաշեն, Օղա և այլ գյուղերը:

Ղարաղաղի բարբառը ամենալրիվ կերպով ցուցահանում է «Ս» ճյուղի հիմնական հատկանիշները:

Ղարաղաղի բարբառը պատկանում է «Ս» ճյուղին, ունի անտեղաշարժ բաղաձայնական սխտեմ: Ղարաղաղի բարբառի ձայնավորները նման են Ղարաղաղի բարբառին, թեև միևնույն բառի մեջ միևնույն ձևով չեն հնչեցվում: Բացի վրական լեզվի սովորական ձայնավորներից, Ղարաղաղի բարբառն ունի ու, ծ, օ վերին բարձրություն ձայնավորներ, նաև մի տեսակ ը, որ պատկանում է միջին շարքի վերին բարձրության օրինակ՝ մըր վըր, վընը և այլն:

Ղարաղաղի բարբառում շեշտվում է բառի նախավերջին վանկը:

Ղարաղաղի բարբառում կան հետևյալ հնչյունական օրինաչափությունները:

Ա > է. միավանկ բառերի մեջ կամ նախավերջին շեշտվող վանկում, օրինակ՝ բէն > բան, բէրց > բարձ, բէց > բաց, ձէք՝ > ձագ, ձէխ > ձախ, բէմբակ > բամբակ, բէնջար > բանջար, բէրակ > բարակ, գէզար > գազար, գէրունք > գարուն, գէնակ > գանակ, գէոնը > գառն, գէստակ > գաստակ, գէրտակ > գատարկ, կէնէփ > կանեփ, գէրման > գարման, ճըբէգ՝ > ճրագ, ջէղաց > ջրաղաց, շէլակ > շալակ, կըշէղակ > կաշաղակ և այլն:

> ա. շեշտին հաջորդող վանկում. օրինակ՝ բէմբակ > բամբակ, բէնջար, բէրակ և այլն:

> օ. ծանփ > ծափ, բէրան > բերան, ժանգ՝ > ժանգ, կալ > կալ, ճաշ >

՝ Ուսումնասիրությունը կատարված է Մինասյան Սուրենի և Եզանյան Օնիկի օժանդակությամբ:

> ճաշ, կ՛արմաշ > կարմիր, ճանգ՝ > ճանկ, անիբ > ալիբ, անթար > արդար և այլն:

> օ. դ՛ոնը > գառն, դ՛որէ > գարի բառերում:

> օ. քողցած > քաղցած բառում:

> հա. համօթ > ամօթ, հանէր > աներ բառերում:

> ի. հիլիվուր > ալևուր, իծիլի > անիլի, անհիշտ > անհաշտ, իվիլ > անվիլ:

> ը. բուր նախաշեշտ վանկերում. օրինակ՝ հըմանչիլ > ամաչել, պըրվիլիս > պառավելիս, ըսպըսիլիս > սպասելիս, պըտըհիլիս > պատահելիս, պըլըսէթուն > պակասություն. և այլն:

> ու. ասիմելիացիայի հետևանքով ուլուզնալիս > ալուզանալիս (հիվանդանալիս) բառում:

ե > ը. ետնաշեշտ վանկում. օրինակ՝ ասըղ > ասեղ, տաշըղ > տաշեղ, արըվ > արև, իրըս > երես, իրըք > երեք և այլն:

> ը. նաև միավանկ բառերում. օրինակ՝ մըր > մեր, մըղ > մեղ, մըծ > մեծ և այլն, նաև՝ փըսէ > փեսայ:

> ի. միավանկ բառերում կամ նախավերջին շեշտվող վանկում. Օրինակ՝ թիլ > թել, հիշտ > հեշտ, իրըք > երեք, իրըս > երես, հրիշտակ > հրեշտակ, տիրըվ > տերև, ցիրէկ > ցերեկ:

ա > բառասկզբին նախավերջին շեշտյալ վանկում. օրինակ՝ ախպեր > եղբայր, արաղ > երագ, Արախս > Երասխ և այլն:

> ի. հի. միավանկ բառերի սկզբին. օրինակ՝ իս > ես, իփ > եփ, հիր > երբ:

> յէ կամ է. յէրգ՛իր > երկիր, յէրգ՛ինք > երկինք, յէղունգ > եղունգ, կրկանք > երկանք և այլն:

Երկոյ բառը լինում է արթու, մէջ բառը լինում է «մաշ», երկնջ բառը լինում է հերկնջ, մեղր լինում է մր՛ղր:

> ը. նախաշեշտ վանկերում. օրինակ՝ ըրվալիս > երևալիս, նըղէթուն > նեղություն, հըրընալիս > հետանալիս, մըրնիլիս > մեռնելիս և այլն:

ի > է. բառավերջի քաց վանկում, ետնաշեշտ վանկում, միավանկ բառերում կամ նախավերջին շեշտվող վանկում. օրինակ՝ ցէց > ցեց, վեկ > վիզ, թէ > թի, հէնգ՝ > հինգ, քամէ > քամի, մըտանէ > մատանի, կըրէվ > կուրվ, ծաղէղ՝ > ծաղիկ, կացէն > կացին, կաղէն > կաղնի, ծէրան > ծիրան, կընէգ՝ > կնիկ, դէղէն > դեղին, կէստ > կիստ, ջօրէ > ջօրի, տարէ > տարի և այլն:

> ը. միանվանկ բառերի մեջ. օրինակ՝ ծըծ > ծիծ, մըս > միս, քըթ >

> քիթ, պընգ > պինգ, մըք > միտք, սըրս > սիրտ և այլն:

Կարմիր բառը լինում է կ՛արմաշ, մոխիր բառը լինում է մօխար և ի՛նջ բառը լինում է հի՛նջ:

Ո > ու. շեշտի տակ նախավերջին վանկում և շեշտից հետո վերջին վանկում և մի քանի միավանկ բառերում. օրինակ՝ ախու > ախոտ, քու-

Արզվինի բարբառ՝ վաղուց), բայց կա Թբիլիսիի բարբառում բացակայող «ֆ» հնչյունը: Արզվինի բարբառի ձայնավորական սխեմները ավելի քիչ է ենթարկվել Տայք բարբառի ազդեցության: Զայնավորները համապատասխան են գրական լեզվի ձայնավորներին, միայն օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերի մեջ «է» ձայնավորը վերածվում է «ի»-ի՝ իմ, իս, է, ինք, իք, ին: Արզվինի բարբառի շեշտը վերջին վանկի վրա է դրվում, դրա հետևանքով միջին վանկերի ձայնավորները սղվում են, օրինակ՝ էրթլիս (երթալիս), կարթլիս (կարդալիս), հավար (հավասար) և այլն: Թբիլիսիի բարբառի նման, Արզվինի բարբառում երկբարբառներ չկան, երկբարբառների դիմաց ամենուրեք գտնում ենք պարզ հընչյուններ, օրինակ՝ քոյր>քուր, այս>է, գողութիւն>գողութէն, ուրախութիւն>ուրախութէն. «ո» հնչյունը բառակազմի արտասանվում է «օ», օրինակ՝ սրդի>օրթի, բառավերջի մի շարք հնչյուններ դուրս են բնկած, օրինակ էս>յէ, այս>է, ինչպես>ինչպէ, համար>համա:

Կառնեմ, կասեմ, կանեմ և կերքամ բառերը արտասանվում են կոննիմ, կոսիմ, կոնիմ, կօքքամ:

Վրա բառը արտասանվում է բա. օրինակ՝ ձերի բա>ծայրի վրա, լերբի բա>լարդի վրա (գրկում), մէջքի բա: Համար բառը արտասանվում է մա, օրինակ՝ Զանիի մա կամ Զանիի համա: Վերջինը Թբիլիսիի բարբառի ձևն է,

Որ հարաբերական գերանունը արտասանվում է օրէ, օրէ գործ է ածվում նաև «որպեսզի» իմաստով:

Հարցական նախադասության մեջ ավելացնում են մի մասնիկ բառը, օրինակ՝

- Բարա, սանք օջախ չունի՞ն մի:
- Կե՛լ էլ մի չունին:

Այդ մի ձևի գործածությունը հիշեցնում է արևմտահայ բարբառները, Արզվինի բարբառում հաճախ ներդոյական հոլովը գործ է ածվում ժամանակ ցույց տալու համար, օրինակ՝ էնումը—այն ժամանակ, անցնելու ժամանակ:

Արզվինի բարբառի այդ հատկությունը, առանձնապես անորոշ գերբայի ներդոյական հոլովով ժամանակ ցույց տալը, հիշեցնում է գրաբարը, Դրարարի մեջ անորոշ գերբայի նախդիրով հայցականը ներդոյական իմաստով նշանակում է բայի ցույց տված գործողության ժամանակ, օրինակ՝

«...Բազումք ի ձէնց ի խորշակէ յերթալն սատակիցին...» (Եղիշէ), «Յեւանելն մեր հանդէպ ամբօթին Բելայ՝ դիպել ջանասցուք տեղոյն, ուր անցեալ կայցէ ի մէջ խոան քաջացն Բէլ» (Մ. Սորենացի), Դրական լեզվի մեջ այս հատկությունը մնացել է անկատար գերբայի երկրորդական ձևն իբրև մակբայ գործածելու մեջ, օրինակ՝

— Փողոցով անցնելիս հանդիպեցի ծանոթիս, այսինքն՝ փողոցով ի անցնելիս... Այս դեպքում արդեն վերցված է անորոշ գերբայի հոգնակի հայցականը, մինչդեռ գրաբարում սովորաբար վերցվում է եզակի հայցականը: Հենց այս հիմունքով էլ կազմված է Արզվինի բարբառի ներկայի

խոնարհումը. ի երթալիս > երթիլիս, > երթիլիս եմ, այսինքն՝ գնում եմ, ի գրելիս եմ > գրելիս եմ, այսինքն՝ գրում եմ:

Իր խոնարհումն այսպես է կազմվել ամբողջ «Ս» ճյուղը: Արդվինի բարբառը յուրացնելով «Ռեմ» ճյուղի ներգոյական ձևը, իր լեզվական մասձողությամբ մնացել է իրեն հավատարիմ, միայն իր հայցական-ներգոյական ձևի փոխարեն գործ է ածել հատուկ ներգոյական ձև (անցնելումը, կապելումը, կարթլումը):

«Ռեմ» ճյուղի բարբառները ներգոյական հոլով կազմում են բայի արմատից և ոչ անորոշ դերբայից, սրից և ստացվում է «Ռեմ» ճյուղի անկատար դերբայը (գրում, կարդում): Անորոշ դերբայից ներգոյական հոլով է կազմում Արդվինի նման և Հավարիկի բարբառը, որը և դարձնում է այդ անկատար դերբայ բոլոր դեմքերի համար, բացի եզակի առաջինից, որ վերցրել է Ղարաբաղի բարբառից (օրինակ՝ գիրելիս ըմ, գիրելում ըս, գիրելում ի, գիրելում անք, գիրելում ար, գիրելում ան):

Ձեկարանություն

Արդվինի բարբառում կան հետևյալ հոգնակիները. էր (աչքէր), ներ (դուքաններ), էրօտ (թշէրօտ), ստան (սրէստան—շարքեր, գոգօստան—աղջիկներ), անէք (իշանէք), դանք (ընգէրգանք):

Վերջին հոգնակին դանում ենք Կարնո բարբառի մեջ (Ախալիքալաքի, Ախալցխիսա) միայն, հետևաբար այդ հոգնակին անցել է Արդվինի բարբառին Կարնո բարբառից: «Օտ» հոգնակին դանում ենք Ղարաբաղի բարբառում, հետևաբար այդ հոգնակիով Արդվինի բարբառը կապվում է Ղարաբաղի բարբառի հետ, որ նշանակում է, թե երբեմնի Արդվինի և Ղարաբաղի բարբառները միմյանց հարևան են եղել կամ գոնե ավելի մոտ հարևան, քան հիմա են նրանք:

Ստան հոգնակին կա Կարնո բարբառի մեջ ևս. այդ հոգնակին կազմված է ս-տ-ան հոգնակիներից: Այս ստան հոգնակին դրվում է ձայնավորով վերջացող բառերի վրա (սրա—սրէստան, գօգօ—գօգօստան): Մեր արած ենթադրությունն այն մասին, որ դա ոչ մի կապ չունի ստան—տեղ նշանակող մասնիկի հետ, միանգամայն ճշտվեց:

Ձայնավորով վերջացող բառերը դրաբարում ունենում են ուղղակա՛նում՝ ք հոգնակի, հայցականում՝ ա, որ ժողովրդական լեզուների մեջ ըմբռնվում է իբրև եզակի. օրինակ՝ բաղնիք—բաղնիս, կողպեք—կողպէս, հարսնիք—հարսնիս. Դրա վրա ավելանալով տան հոգնակին՝ տալիս է ստան ամբողջական հոգնակի. բաղնէստան, հարսնէստան, գօգօստան: Դրանից հետո այդ ստան հոգնակին, դառնալով օրինաչափություն, կարող է ավելանալ նաև ոչ ձայնավորով վերջացող գոյականների վրա:

Հոլովում

Արդվինի բարբառն ունի 7 հոլով, սրոնք նման են Թրիլիսի բարբառին. Բացառական հոլովն ունի «իմէն», «ումէն» վերջավորություն, ներգոյական հոլովը «ում», «ըմը» վերջավորություն. Սեռական հոլովը հոգ չի ստանում:

Ե գ ա կ ի

Ուղղ.	պաա (ը)	դէդա (ն)	կամ	դէդա
Սեռ.	պատի	դէդայի	»	դէդի
Տր.	պատին	դէդայի (ն)	»	դէդի (ն)
Հայց.	պաա (ը)	դէդայի (ն)	»	դէդի (ն)
Բաց.	պատիմէն	դէդիմէն	»	դէդիմէն
Գործ.	պատով	դէդայով	»	դէդով
Ներգ.	պատում (ը)	դէդի մէջ	»	դէդի մեջ

Հոլովման ընթացքում շեշտի տեղափոխության հետևանքով Արդվինի բարբառում տեղի է ունենում հնչյունափոխություն, որին ենթարկվում են համարյա բոլոր ձայնավորները.

Ե գ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	դուքան	պառավ	պատէր (ը)	դէդէստան (ը)
Սեռ.	դըքնի	պառվի	պատէրի	դէդէստանու
Տր.	դըքնի (ն)	պառվի (ն)	պատէրի (ն)	դէդէստանու (ն)
Հայց.	դուքան	պառվի (ն)	պատէր (ը)	դէդէստան (ը)
Բաց.	դըքնիմէն	պառվիմէն	պատէրիմէն	դէդէստանումէն
Գործ.	դըքնով	պառվով	պատէրով	դէդէստանէրով
Ներգ.	դըքնում (ը)	պառվի մեջ	պատէրում (ը)	դէդէստանու մեջ

Ուղղ.	դըքըններ (ը)	պառվըներ (ը)
Սեռ.	դըքընների	պառվըների
Տր.	դըքընների (ն)	պառվըների (ն)
Հայց.	դըքըններ (ը)	պառվըների (ն)
Բաց.	դըքըններիմէն	պառվըներիմէն
Գործ.	դըքըններով	պառվըներով
Ներգ.	դըքըններում (ը)	պառվըների մեջ

Արդվինի բարբառի գոյականները ենթարկվում են մեծ մասամբ «ի» հոլովման. բայց «ի»-ով վերջավորվող գոյականները ենթարկվում են «ու» հոլովման (օրթի. օրթուն): Հոգնակիում գոյականները ենթարկվում են կամ «ի», կամ «ու» հոլովման (պառվըներ—պառվըների, դըլքըներ—դըլքըներ):

Դերանունների հոլովումը

Արդվինի բարբառի անձնական դերանունները երեք են՝ 1, 2, 3 4-իմքի. վերջինըս նույնացած է ցուցական դերանվան հետ. «ես ինքս» դերանունն ունի «յէ իրենս» ձևը. Անձնական դերանունների արականն ու հայցականը ունենում են «ի», բացառականը. «իմէն» վերջավորություն. «ես» բառն ունի յէ ձևը:

Ե զ ա կ ի

Ուղղ.	յէ, իրէնս	դու, ինքդ
Սեռ.	իմ	քու
Տր.	ինձի	քեզի
Հայց.	ինձի	քեզի
Բաց.	ինձիմէն, ինձնիմէն	քեզիմէն, քեզնիմէն
Գործ.	ինձնօվ, ինձօվ	քեզնօվ
Ներդ.	իմ մեջ, ինձի մեջ	քու մեջ, քեզի մեջ

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	մէնք	դուք
Սեռ.	մէր	ձէր
Տր.	մէզի	ձէզի
Հայց.	մէզի	ձէզի
Բաց.	մէզիմէն, մէզնիմէն	ձէզիմէն, ձէզնիմէն
Գործ.	մէզնօվ	ձէզնօվ
Ներդ.	մէզի մեջ, մէր մեջ	ձէզի մեջ, ձէր մեջ

Չափազանց հետաքրքրական է ցուցական դերանունների հոլովումը: Բոլոր բարբառներում ցուցական դերանունների հոլովման մեջ պահպանվում է գրաբարի սեռականի «ը» հոլովակազմիչը:

Գրաբ. նորա, գրակ. լեզ. նրա, բարբառներ՝ ըստրա, ստրա, ըստուր, իստր, աւօր, ստօր, ստօր, տօր և այլն: Միմիայն Արդվինի բարբառում ցուցական դերանունների հոլովման հիմք է դառնում տրական ձևը «մ» հոլովակազմիչով, մի երևույթ, որ ոչ մի այլ բարբառում չկա:

Ե զ ա կ ի

Ուղղ.	սա	դա	նա
Սեռ.	ամա	դմա	նմա
Տր.	սման	դման	նման
Հայց.	սման	դման	նման
Բաց.	սմամէն	դմամէն	նմանէն
Գործ.	սմանօվ	դմանօվ	նմանօվ
Ներդ.	սմա մեջ	դմա մեջ	նմա մեջ

Հ ո գ ն ա կ ի

Հոգնակի ուղղականում «մ» չկա, հոգնակիի նշանն է «նք», որ ավելանում է եզակի ուղղականի վրա. հոլովման հիմք է ծառայում եզակի տրական հոլովը (աման), ինչպես գրական լեզվում:

Ուղղ.	սանք	դանք	նանք
Սեռ.	ամանց	դմանց	նմանց
Տր.	սմանց	դմանց	նմանց
Հայց.	սմանց	դմանց	նմանց

Բաց.	սմանցմէն	դմանցմէն	նմանցմէն
Գործ.	սմանցօվ	դմանցօվ	նմանցօվ
Ներդ.	սմանց մեջ	դմանց մեջ	նմանց մեջ

Ինչպես սովորական է այս բարբառի համար՝ «էս» դերանունը կորցնում է «ն», և ստացվում է «է», «է», «է», «է» դերանունները նույն ձևով են հոլովվում, ինչպես որ սա, դա, նա:

Ինքն և վօվ դերանունները հոլովվում են հետևյալ կերպ՝

Ե զ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	ինքը	վօվ	իրէնք	վօվք
Սեռ.	իրէն	ումի	իրէնց	ումինց
Տր.	իրէն	ումին	իրէնց	ումինց
Հայց.	իրէն	ումին	իրէնց	ումինց
Բաց.	իրէմէն	ումիմէն	իրէնցմէն	ումինցմէն
Գործ.	իրէնօվ	ումինօվ	իրէնցօվ	ումինցօվ
Ներդ.	իրէն մեջ	ում մեջ	իրէնց մեջ	ումինց մեջ

Արդվինի բարբառի մեջ «ով» դերանունը հոլովվում է նաև հոգնակի:

Խոնարհում

Արդվինի բարբառի խոնարհումը կազմվում է անալիտիկ սխառնով դերբայով և օժանդակ բայով: Ժամանակների թիվը նույնքան է, որքան և գրական լեզվի մեջ և նույն իմաստով, ինչ որ գրական լեզվի մեջ: Անորոշ դերբայն ունի «էլ» կամ «ալ» վերջավորություն՝ գրբի, կարդալ:

Անկատար դերբայն ունի «էլիս», «ալիս» վերջավորություն. երբ օժանդակ բայն ընկնում է դերբայից առաջ, այդ դեպքում անկատար դերբայն ունենում է «էլի», «ալի» վերջավորություն՝ գրբիլ, կարթիլ (տես Ուրմիայի բարբառը):

Ապառնի դերբայն ունի նույն վերջավորությունը, ինչպես որ գրական լեզվի մեջ՝ գրբու, կարթու:

Վաղակատար դերբայն ունի «իլ» վերջավորություն. գրբիլ, կարթցիլ, Հարակատար դերբայն ունի աժ, ցաժ՝ գրբաժ, կարթցաժ:

Ենթակայական դերբայն ունի օղ, ցող՝ գրբօղ, կարթցօղ:

Հղձական դերբայն ունի ի, ա՝ գրբի, կարթա:

Օժանդակ բայն ունի ներկայի հետևյալ ձևերը՝ իմ, իս, է, ինք, իք, ին (թբիլիսիի նման), իսկ անցյալ կատարյալն ունի գրականի նման ձևեր՝ էյի, էյիք, էր, էյիք, էյիք, էյիք:

Կանոնավոր բայերը անցյալ կատարյալում ունեն ցո. ական հիմք, «ե» խոնարհման բայերը անցյալ կատարյալում ունենում են ի, իք, էր, ինք, իք, ին վերջավորություն. հիմքի եց ածանցը 3-րդ դեմքում փոխվում է ից (գրբից):

«Ա» խոնարհման բայերն ունեն ա, ար, ավ, անք, ար, ան:

Հղձական եղանակի ապառնի ժամանակում «ե» խոնարհման բայերը

խոնարհիչը փոխում են ի. Ըղձական անցյալի ապառնին նման է գրական լեզվին: Պայմանական եղանակը կազմվում է ըղձականից, ավելացրած «կու» եղանակիչը, որով այդ բարբառի պայմանականը միանգամայն նմանվում է թբխիսի բարբառին: Հարկագրական եղանակը կազմվում է ըղձականից, ավելացրած «տի» եղանակիչը: Ժխտական խոնարհման դեպքում ավելացվում է «պի» եղանակիչը «չ» մասնիկով՝ չպի (չպի գրբիմ): Այսպիսով ստացվում է մի սրամիտ արարք. մեր սովորական պիտի եղանակիչը Արգվիների բարբառը բաժանում է երկու հավասար մասերի՝ պի-տի, որոնցից վերջինը օգտագործվում է գրական խոնարհման ժամանակ (տի գրբիմ), իսկ առաջինը՝ ժխտական խոնարհման ժամանակ (չըպի գրբիմ):

Ժխտական խոնարհում

Ժխտական խոնարհումը կազմվում է սովորական «չ» բառամասնիկով, որ բաղադրյալ ժամանակներում միանում է օժանդակ բային և նրան առաջ գցում: Այդ դեպքում օժանդակ բայը ունենում է թե «է» և թե «ի» արմատ, բացի եզակի երրորդ դեմքից (չիմ, չիս, չի), որ միշտ «ի» արմատ ունի: Անկատար դերբայը կորցնում է իր վերջին ա-ն և ունենում է «էլի», «լի» վերջավորություն (միանգամայն նման Ուրմիայի բարբառին):

Ժխտական խոնարհման պարզ ժամանակներում (անցյալ կատարյալ, ըղձական ապառնի և անցյալի ապառնի) գրական խոնարհման վրա ավելացնում է «չի» մասնիկը (չի գրբեցի, չի գրբիմ, չի գրբէի). պայմանական եղանակի ժխտական խոնարհումը միանգամայն նման է գրականին: Հարկագրականի մասին խոսեցինք վերևում:

Բ ա յ

Գերբայական ձևեր

Անորոշ դերբայ՝	գրբէլ	կարթալ
Անկատար դերբայ՝	գրբէլիս	կարթլիս
Ապառնի դերբայ	գրբէլու	կարթլու
Վաղակատար դերբայ՝	գրբի	կարթցի
Հարակատար դերբայ՝	գրբած	կարթցած
Եննակայական դերբայ՝	գրբօղ	կարթցօղ
Ըղձական դերբայ՝	(չիմ) գրբի	(չիս) կարթա

Խոնարհման աղյուսակ

Հաստատական կամ դրական խոնարհում

Սահմանական եղանակ

Ներկա անկատար

գրբէլիս իմ	կարթլիս իմ
գրբէլիս իս	կարթլիս իս

գրբէլիս է	կարթլիս է
գրբէլիս ինք	կարթլիս ինք
գրբէլիս իք	կարթլիս իք
գրբէլիս ին	կարթլիս ին

Անցյալի անկատար

գրբէլիս էյի	գրբէլիս էյինք	կարթլիս էյի	կարթլիս էյինք
գրբէլիս էյիք	գրբէլիս էյին	կարթլիս էյիք	կարթլիս էյինք
գրբէլիս էք	գրբէլիս էյին	կարթլիս էք	կարթլիս էյին

Ա պ ա ո ն ի

գրբէլու յիմ	կարթլու յիմ
գրբէլու յիս և այլն.	կարթլու յիս և այլն.

Անցյալի ապառնի

գրբէլու էյի	կարթլու էյի
գրբէլու էյիք և այլն.	կարթլու էյիք և այլն.

Վաղակատար

գրբի իմ	գրբի ինք	կարթցի իմ	կարթցի ինք
գրբի իս	գրբի իք	կարթցի իս	կարթցի իք
գրբի է	գրբի ին	կարթցի է	կարթցի ին

Անցյալի վաղակատար

գրբի էյի	կարթցի էյի
գրբի էյիք և այլն.	կարթցի էյիք և այլն.

Հարակատար

գրբած իմ	կարթցած իմ	գրբած էյի	կարթցած էյի
գրբած իս և այլն.	կարթցած իս և այլն.	գրբած էյիք և այլն.	կարթցած էյիք և այլն.

Անցյալի հարակատար

Անցյալ կատարյալ

գրբեցի	գրբեցինք	կարթցա	կարթցանք
գրբեցիք	գրբեցիք	կարթցար	կարթցաք
գրբեց	գրբեցին	կարթցավ	կարթցան

2. Հրամայական եղանակ

գրէ՛	գրէ՛ք	կարթա՛	կարթցէ՛ք
------	-------	--------	----------

3. Ըղձական եղանակ

Ապառնի

գրբիմ	գրբինք	կարթամ	կարթանք
գրբիս	գրբիք	կարթաս	կարթաք
գրբի է	գրբին	կարթա	կարթան

Անցյալի ապառնի

զբրէյի	զբրէյինք	կարթայի	կարթայինք
զբրէյիք	զբրէյիք	կարթայիք	կարթայիք
զբրէր	զբրէրն	կարթար	կարթային

4. Պայմանական եղանակ

Ապառնի

Անցյալի ապառնի

կու զբրիմ	կու կարթամ	կու զբրէյի	կու կարթայի
կու զբրիս և այլն.	կու կարթաս և այլն.	կու զբրէյիք և այլն.	կու կարթայիք և այլն.

5. Հարկադրական եղանակ

Ապառնի

տի զբրիմ	տի զբրինք	տի կարթամ	տի կարթանք
տի զբրիս	տի զբրիք	տի կարթաս	տի կարթաք
տի զբրի	տի զբրին	տի կարթա	տի կարթան

Անցյալի ապառնի

տի զբրէյի, տէյի զբրի	տի կարթայի, տէյի կարթա
տի զբրէյիք, տէյիք զբրի	տի կարթայիք, տէյիք կարթա
տի զբրէր, տէր զբրի	տի կարթար, տէր կարթա
տի զբրէյինք, տէյինք զբրի	տի կարթայինք, տէյինք կարթա
տի զբրէյիք, տէյիք զբրի	տի կարթայիք, տէյիք կարթա
տի զբրէյին, տէյին զբրի	տի կարթային, տէյին կարթա

Առանձնապէս հետաքրքրական է Արթվիսի բարբառի հրամայականի ձևերը, այն է՝ զբրիս ա, խօսիս ա և այլն<sup>1</sup>։

Ժխտական խոնարհում

1. Սահմանական եղանակ

Ներկա

չիմ զբրէլի	չինք զբրէլի	չիմ կարթլի	չինք կարթլի
չիս զբրէլի	չիք զբրէլի	չիս կարթլի	չիք կարթլի
չի զբրէլի	չին զբրէլի	չի կարթլի	չին կարթլի

Անցյալի անկատար

չէյի զբրէլի	չէյինք զբրէլի	չէյի կարթլի	չէյինք կարթլի
չէյիք զբրէլի	չէյիք զբրէլի	չէյիք կարթլի	չէյիք կարթլի
չէր զբրէլի	չէրն զբրէլի	չէր կարթլի	չէրն կարթլի

<sup>1</sup> Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմութիւն», հ. 3, էջ 368։

Ապառնի

Անցյալ ապառնի

չիմ զբրէլու և այլն. չիմ կարթլու և այլն. չէյի զբրէլու և այլն. չէյի կարթլու և այլն։

Վարակատար

չիմ զբրի	չինք զբրի	չիմ կարթցի	չինք կարթցի
չիս զբրի	չիք զբրի	չիս կարթցի	չիք կարթցի
չի զբրի	չին զբրի	չի կարթցի	չին կարթցի

Անցյալ վարակատար

չէյի զբրի	չէյինք զբրի	չէյի կարթցի	չէյինք կարթցի
չէյիք զբրի	չէյիք զբրի	չէյիք կարթցի	չէյիք կարթցի
չէր զբրի	չէրն զբրի	չէր կարթցի	չէրն կարթցի

Հարակատար

Անցյալ հարակատար

չիմ զբրած և այլն. չիմ կարթցած և այլն. չէյի զբրած չէյի կարթցած չէյիք զբրած և այլն. չէյիք կարթցած և այլն.

Անցյալ կատարյալ

չի զբրէցի	չի զբրէցինք	չի կարթցա	չի կարթցանք
չի զբրէցիք	չի զբրէցիք	չի կարթցար	չի կարթցաք
չի զբրէց	չի զբրէցին	չի կարթցա	չի կարթցան

2. Հարակատար եղանակ

ժի զբրի	ժի զբրիք	ժի կարթա	ժի կարթցիք
---------	----------	----------	------------

3. Ըղծական եղանակ

Ապառնի

չի զբրիմ	չի զբրինք	չի կարթամ	չի կարթանք
չի զբրիս	չի զբրիք	չի կարթաս	չի կարթաք
չի զբրի	չի զբրին	չի կարթա	չի կարթան

Անցյալի ապառնի

չի զբրէյի	չի զբրէյինք	չի կարթայի	չի կարթայինք
չի զբրէյիք	չի զբրէյիք	չի կարթայիք	չի կարթայիք
չի զբրէր	չի զբրէրն	չի կարթար	չի կարթային

4. Պայմանական եղանակ

Ապառնի

չիմ զբրի	չինք զբրի	չիմ կարթա	չինք կարթա
չիս զբրի	չիք զբրի	չիս կարթա	չիք կարթա
չի զբրի	չին զբրի	չի կարթա	չին կարթա

Անցյալի ապառնի

չէյի գրբի և այլն. չէյի կարթա և այլն:

5. Հարկադրական եղանակ

Ապառնի

չիպի գրբիմ	չիպի գրբինք	չիպի կարթամ	չիպի կարթանք
չիպի գրբիս	չիպի գրբիք	չիպի կարթաս	չիպի կարթաք
չիպի գրբի	չիպի գրբին	չիպի կարթա	չիպի կարթան

Անցյալի ապառնի

չիպի գրբէյի	չիպի գրբէյինք	չիպի կարթայի	չիպի կարթայինք
չիպի գրբէյիք	չիպի գրբէյիք	չիպի կարթայիք	չիպի կարթայիք
չիպի գրբէր	չիպի գրբէրն	չիպի կարթար	չիպի կարթարն

Նախուցներ Արդիիցի բարբառով

«Գիտոր»-ից

Բարա ու օրթի նստած էյին բազազ Արտէմի խօսանցումը:

—Դէ հիմի դուն գիտիս, Գիբօրը ջան, տէսնիմ քէզի՛ ինչ տեսակ մանչ տի դառնաս...: Էնէնց տի անիս, օրէ... յէ լինչ գիդիմ...օ, տէք ասա-ված... պըտպըտաց Համբօն ու մըշտուկը լցից:

Համա Գիբօրը չօրս թէրէգիին էր աշէլի:

—Բարա, սանք օշախ չունին մի:

—Չէ, սանք էստի սոփա ունին:

—Կալ էլ մի չունին:

—Սանք քաղցիմէն ին, գէղացի խօ չին, օրէ կալ կալսէն:

—Աքա վօրգացէն ին հաց ուտէլի:

—Փարօվ գընէլիս ուտէլիս ին, հացն էլ ին փարօվ գընէլի, յէզն էլ, կաթն էլ, մածունն էլ, փէտն էլ, ջուրն էլ...:

—Վայ...:

—Հա բա, սման թիֆլիս կօսին, Դու հալա յէգին կէցի, հալա շատ բան կու իմանաս:

—Բարա, սանք յամ ունին:

Ունին, հէլթէթ, սանք էլ մէզի պէ հայ քրիստօնյա ին: Լալ աշէ հա, — գօղութէն չի անիս: Վօլ գիդի, քէզի փօրցէլու համա փարա կու գըցին, չըզնի թէ մօղիկանաս: Թէ կուվէրկալիս, տար ասա. «Սանսում, էս ինչ փարա յէ, էստի գէրընգած էր. աղա, էս բանը էստի գըզա», թէ չէ...:

—Էստի յէլ մի պըրիտալ կիմ...:

—Կա, հէլթէթ...: Վախտ է վախտէտուզ էստի-էնգի չի գերընգնիս, ձևը ու մտ մնցած փարէն քօս ու փոչ չի անիս, հաղար ու մէ տէսակ պակասութէն ունինք: Քէզի էլ լալ մնջուկ արա, գիշերօվ չի բացվիս մի, մըրսիս...: Բազի-բազի էկօղնէրու հէա գիբ գըէ...: —մէկ-մէկ մըշտուկը բէրնիմէն հանէլօվ օրթուն խրատէլիս էր Համբօն Համա Գիբօրը քընէ-լիս էր:

—Հացի մանդրուսն ու քարթուն կուտան, կէրակրին էլ ավէլցուկնէ-րը, շատ վախտի յէլ իրէնք կուտէն, քէզի չէն տա, խըղմէթկըրի աղէթը էտէնց է... օրէր ին, կու մըթնին, կու անցնին...: —տոաջ էր տանէլի բա-րան իրէն խրատը: Համա Գիբօրը մէչքը գէմ տուված քընած էր:

Էն էրկու օրվա մէչք էնքան բան էր տէսի, օրէ գաթըրլ էր ալալմա-լայ: Մըրքէրօվ իբըր գուքաննէրը, սըրէտնօվ շարած ունգ-ուէնգ կալա-թէղէնք, տէսակ-տէսակ խաղանէլիքնէրը, գըբրատուն էրթօղ էկօղ խըմբէ-րը, մէկ մէկէլու էրնէվան էրթցօղ ֆայտօննէրը, կանաչէղէն բարցած էշա-նէրը, թարախնէրը գըլիսնէրու բա կիստօնէր, ուխտէրու սըրէտանք... էս թօմարու ճուվայն ու գըրղըրալը, շամաթէն ու գօտալը մէկ մէկէլու ճէա խառնված՝ մըմնալիս էր նման գըլիմըր: Նա գաթըրլ էր, բարայի բա յան էկած քընիլ էր:

Է վախտը բաղաղն ու իրէն կնիկը խօսք-խօսքի մէչն էյին: Կնիկը մըրթմըրթալիս էր, օրէ խղմէթկըրը խամ է, նօր սարիմէն էկած, համա էրիկը խընդիս էր, օրէ մէքանի տարօվ տոանց փարի խըղմէթկըր է գըզի:

—Կուսօրվի, խօ էտէնց չի մնա, —տսէլիս էր նա կընկան:

—Կուսօրվի, օրթի, սիբարդ շուռ մի տա, —աղաչէլիս էր բաղաղի պտտով գէզին:

Համա նստուն չէր սագի բզնէլի: Նա լալօվ անիծէլիս էր իրէն բախար:

Բառեր

Սօփա—վառարան	Այախկարիք—տանամաններ,
Կօսին—կասեն	կոչիկներ
Յամ—եկեղեցի, ժամ	Ինչու քի—մինչև
Աղէթ—կարգ	Վէրէթթա—բարձրանա
Դաթըրլ էր—հոգնել էր	Վօրգացէն—օրտեղից
Ալալմալայ—բուրբուլիս	Մէրաղըս—գարգս
Ունգ-ուէնգ—գույնզգույն	Շամաթէն—աղմուկը
Կալաթէղէն—չթեղեն, չթերը	Ժըժընալիս—գվժում
Թօմարու—բուրբի	Յան էկած—թիկն տված
Գըրղըրալը—գնդոցը, գողոցը	Էրիկը—մարգը, ամուսինը
	Խընդիս էր—ուրախանում էր

ՕՐՓԵՎԵՐԻ ԿԸՆԻԿՆ ՈՒ ԳՕՂ ՕՐԹԻՆ

Մէ օրփէվէրի կընիկ ունէնալիս է մի հատիկ օրթի: Օրթին պըստիկ վախթվամէն ըսկսէլիս է գօղութէն անէլ: Դէզէն օրթուն չի խըրատէլի, հէզէվ օրթին ըսկըսէլիս է գօղանալ յէզ ու գահա մէծ ապրանքնէր: Մէյէզ էլ գօղութէն անէլու վախտի գըման բըննէլիս ին ու ուզէլիս ին կախաղան հանէլ: Դա ուզէլիս է վէրչին էզ գէզին պաչէլ: Դէզէն գալիս է ու օրթին գէզի քիթն է կըրծէլի: Կանչէլիս է թաղալօրը մանչուն ու հարցնէլիս է, թէ՛ ինչի կըծիր գէզի քընթի բա: Մանչը տսէլիս է, թէ մէղալօրը գէզէն է, օրէ իրէն պըստի վախտի չի խրատի:

էնումը թագավորը հրամայելիս է, օրէ օրթու տէղի բա գէղին կախին:

ՄԻԱՄԻՏ ԳՕՂԲ

Մարթն ու կրնիկը պտուկած էյին յաթխումը, համա հէլէ չէյին քընած: Սաշխի բան մօթքազված էյին էա գիշերը գողէրի որէն: Մէնէլ դանք պտուկած տէղումը իմացան, օրէ գողէր ին էկած, էլ շի քընէցան: Էրիկը կասուդ կընգան ըսկըսէլիս է պատմէլ, թէ ինչպէս իրէնը գէնջ վախտը էրթլիս էր ուրիշնէրու սաշխի բան վէրէրթլի:

—Յէփօր օփալլօյի շօղերը գէրընգնէլիս էր սաշխիմէն նէքսնէ, էնումը օփալլօյի շօղերը խուտարած նէրքսնէ էյինք գէրէրթլի,—պատմէլիս էր էրիկը կընգան:

Գողերը էա իմանալով, նանք էլ մնացին, օրէ յէփ օփալլօյի շօղերը գէրընգնին սաշխիմէն նէքսնէ, էնումը նանք էլ տի գէրգային: Էտէնց էլ էղավ: շօղերը գէրընգան նէքսնէ, նանք էլ մէ մէկ գէրէկան, համա գէրգայումը թօմարի գէրընգան ու մէռան:

Բառեր

- Յաթխումը—անկողնում
- Սաշխի բան—տանիքի վրա, կտուրին
- Մօթքազված—համաքված
- Սըրէն—շարք
- Դանք—դրանք
- Կասուդ—գիտմամբ
- Օփալլօյի—լուսնյակի:
- էնումը—այն ժամանակ:
- Պուտարած—գրկած:
- Դէրէրթլի—իջնում (գէրէրթլիս էյինք—իջնում էինք):
- Թօմարի—բոլոր:

4. ՈՒՐԲԱՆՆԵՐ ԲԱՐՔԱՌ

«Ա» Ճյուղի երկաստիեան ձայնեղագուրկ

Արևելախայ բարբառներն իրենց հնչական և ձևաբանական վիճակով մի առանձին երանգ ունեն, որ առիթ է տալիս այդ բարբառները կոչելու Պոյի բարբառ: Այս, սակայն, ճիշտ չէ: Արևելախայ բոլոր բարբառները Պոյի բարբառը չեն, այլ և Պոյի բարբառի ճյուղին անդամ չեն պատկանում: Այդ բարբառների մեջ Ուրմիայի և Սալմաստի բարբառը պատկանում է ոչ թե «էլ» ճյուղին, ինչպէս ընդունված է մինչև հիմա կոչել այն, այլ «Ա» ճյուղին: Այդ բարբառով խոսողներն անգամ սխալմամբ իրենց խոյցիներ են կոչում: Ուրմիայի բարբառին պատկանում են Ուրմիայից, Սալմաստից, Բարանգուղից գաղթածների խոսվածքները: Սովետական Հայաստանում նրանք ապրում են գյուղերով: Այդ բարբառով խոսողների հիմնական մասը կազմում է Արտաշատի շրջանի գյուղերի (Արտաշատավանի, Յուվայի, Անաստասավանի, Վերին Արտաշատի, Մասիսի, Բարաստանի, Մրգավանի, Այգեստանի, Դվինի, Կանաչուտի և այլն) ընակչութիւնը:

Այդ բարբառով խոսում են Ազիզբեկովի շրջանի գյուղերի մեծ մասը («Թագա հայեր» կոչվածները):

Այդ բարբառով խոսողներ կան Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Արթի-

կի և Կոտայքի շրջաններում, Բնդահանուր առմամբ Ուրմիայի բարբառը, գտնվելով մի կողմից Պոյի բարբառի, մյուս կողմից Վանի բարբառի շրջապատում, իր լեզվական վիճակով ցուցահանում է իր կրած ազդեցութիւնները այդ երկու բարբառներից: Իր հնչյունական սիստեմով նա ավելի մոտ է Պոյի բարբառին. նրա բառապաշարն հիմնականում ամփոփում է իր մեջ և՛ Վանի, և՛ Պոյի բարբառների բառապաշարի հիմնական մասը:

Հնչյունաբանություն

Ուրմիայի բարբառն իր հնչյունական բնդահանուր վիճակով նման է Արևելյան բարբառներին (Ղարբաղ, Հաղբութ, Պոյ, Վան), սակայն հնչյունական սիստեմի մասնավոր գործածութիւնները յուրահատուկ է: Բարբառուների հետևյալ ձայնավորները՝ ա, ան, ե, է, ո, օ, օ, ու, ան, ը, ը, ի, ու, օ, օ, օ: Հետևաբար Ուրմիայի բարբառում, բացի գրական հայերենի սովորական ձայնավորներից, կան նաև հետևյալ ձայնավորները՝ ան, ան, օ, ե, ո, ը, նաև ու, օ, օ, օ է երկբարբառները:

Նկատելի է, որ «վ» հնչյունից հետո Վանի բարբառի նման Ուրմիայի բարբառը ևս ունի վերին բարձրութիւն «ա» (ան), օրինակ՝ վանլ, վանգնի, վանի, վանթ և այլն: Ուրմիայի բարբառի բաղաձայնական սիստեմը կրում է բաղաձայնների առաջին տեղաշարժի լրիվ պատկերը, ուստի Ուրմիայի բարբառի բաղաձայնները երկաստիճան ձայնեղագուրկ են, այսինքն՝ գրարարի եռաստիճան բաղաձայնների փոխարեն բարբառուների երկաստիճան բաղաձայններ: Բառակազմի գրարարի ձայնեղ հնչյունների դիմաց այս բարբառում գտնում ենք միշտ խուլ հնչյուն. օրինակ՝

- բերան > պէրան
- գատ > ամտ
- ձու > ձն
- ջուր > ճնր
- գարուն > կմրան
- բուրդ > պանթ
- դաշ > ամշտ
- ձիւն > ձնն
- ջրագոց > ճնդնջ
- Գրիգոր > Կիկոր
- բան > պան
- գու > ան
- ձէթ > ձէթ
- ջարդել > ճնրթել
- գող > կող

Ուրմիայի բարբառում կան գ, կ, ք՝ քմայնացած հնչյունները. օրինակ՝

Գալուստ > Կանուստ, կամ > կմմ, գարուն > կմրանն, քո > քո:

Ձայնեղ բաղաձայններ այդ բարբառում հանդիպում ենք անգայիններից հետո և նոր փոխ տոնված օտար բառերում: Ռեզայիններից հետո խուլ հնչյունները նույնպէս գառնում են ձայնեղ, օրինակ՝ բամբակ—պանթմկ, ընկեր—ինգէր:

Ուրմիայի բարբառում կա «հ» հնչյունը, որ ստացվում է կամ «ք» հնչյունի փոխարեն, կամ «նք» երկհնչյունի փոխարեն. օրինակ՝

անլը > անլոր, էթան՝ տուն > երթանք տուն,

անլըթըրուէցին > անլորականչին:

«Ֆ» հնչյունի փոխարեն գործ է ածվում «փ». օրինակ՝ ֆայտոն > փայտոն, ֆանար > փանար, ֆուրգոն > փըրգոն: Ուրմիայի բարբառում կա նաև ղ հնչյունը. օրինակ՝ ղուշ > թռչուն, ղանր > ագռավ:

Ուրմիայի բարբառում աֆրիկատով վերջավորվող բառերին բաղա-  
ձայնով սկսվող բառ հաջորդելիս տեղի է ունենում աֆրիկատների ան-  
կում. ձ, ծ, ց, ջ, ն, շ հնչյունների փոխարեն ստացվում են ս, գ, շ, ժ,  
օրինակ՝

Մշնէր > միջնակ, տասկել > ծածկել, խասկան > հացական (տաշտաքեր):

Պաս կա > հաց կա            խիս կա > սինձ կա  
խըրանէր > խուրձեր

Ուրմիայի բարբառում «հ» հնչյունի փոխարեն նկատում ենք «խ»,  
վանի նման, օրինակ՝ խաց > հաց, խավ > հավ, խարնիս > հարսանիք, խաղ >  
> հաղ և այլն:

Եթե բարբառը վերջանում է «կ» հնչյունով և հաջորդ բառը սկսվում  
է բաղաձայնով, ապա այս կ-ն վերածվում է «յ» հնչյունի. օրինակ՝

Տախտայ կա > տախտակ կա:

Եթե բարբառը վերջավորվում է «ք» հնչյունով կամ «նք» հընչյուն-  
ներիով և հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով, ապա այդ հնչյունները վե-  
րածվում են «հ» հնչյունի. օրինակ՝

Թանանձ տու > Թանաք տուր, մնացի՞ մէնակ > մնացինք մենակ.

Մյուս բոլոր բարբառների նման «բ», «ո» և «ղ» բաղաձայններից  
հետո, ինչպես և ձայնավորներից հետո, ձայնեղ հնչյուններն արտասան-  
վում են շնչեղ խուլ. օրինակ՝

Պնրթ > բուրդ, վնրթ > վարդ, խօքի > հողի, ախչիկ > աղջիկ, խուրց >  
> խուրձ, պնոց > բարձ:

Բառասկզբին ձայնեղ հնչյուններ պատահում են օտար բառերի մեջ,  
այսինքն՝ այն բառերի, որ փոխ են առնված մեր թվականությունների  
հազարամյակում, օրինակ՝ բնրան > առու, գնրան > ձոր և այլն:

«Այ» երկբարբառը վերածվում է պարզ «է» ձայնավորի, «ոյ» երկ-  
բարբառը «ու» կամ «ուե» «օէ», «ու» երկբարբառը՝ ու և ու. օրինակ՝  
այգ > էտ, այն > էն, հայր > խէր, քոյր > քուր, բոյն > պուէն, լոյս > լօէս,  
արիւն > էրան, սիւն > սոււն, ձիւն > ձոււն և այլն.

Ձևաբանություն

Ուրմիայի բարբառն ունի երեք տեսակ հոգնակի՝ «էր», «նէր» «քէր».  
«էր» հոգնակին ավելանում է միավանկ բառերի վրա, օրինակ՝ պատէր,  
քարէր, փէտէր և այլն:

Նէր հոգնակին ավելանում է ձայնավորով վերջավորվող բազմավանկ  
բառերի վրա. օրինակ՝ առու > առունէր, կատու > կատունէր. քէր հոգնակին  
ավելանում է բաղաձայնով վերջացող բառերի վրա. օրինակ՝ ձամբախ-  
քէր > ձանապարհներ, կարասքէր > կարասներ և այլն:

Կան նաև ստանք, վրէքք, ստանքէր, բրնէր և այլ հոգնակիների դեպ-  
քեր (արնըստանք, արովէրք, էքըստար, կընթընէր > կանայք և այլն. ը  
հողք բարբառումս արտասանվում է ա կամ ան, օրինակ՝ պտուղա > պտու-  
ղը, ամշամ > գաշար:

Ուրմիայի բարբառի հոլովումը մեծ մասամբ լինում է «ի» ձայնա-

վորով, այսինքն՝ Ուրմիայի բարբառում գերակշռում է «ի» հոլովումը.  
Նույնիսկ այնպիսի բառեր, որոնք ուղղականում վերջավորվում է ի-ով,  
նույնպես ենթարկվում են «ի» հոլովման, օրինակ՝ կիսիի, կիւրիի (գինու,  
գարու): «Յան» հոլովման պատկանող բառերն անգամ ենթարկվում են  
«ի» հոլովման. օրինակ՝ պարէկամըթոն — պարէկամըթոնի, Սեռականի «ի»-ն  
արտասանվում է քը. օրինակ՝ ձեռը տակա > ձեռքի տակ:

Ուրմիայի բարբառն ունի 6 հոլով, բացառյալում է ներգոյական հո-  
լովը:

Բացառականի հոլովը վերջավորվում է «է», «էն», երբեմն նաև «մէն»  
մասնիկներով: Հոլովման մեջ գիտակցվում է շնչավոր և անշունչ առար-  
կաների տարբերությունը. Կենդանիների անունները հոլովվում են ան-  
ձանց անունների պես:

Ուրմիայի բարբառի շեշտը վերջին վանկի վրա է:

Հ ո լ ո Վ ու մ

Եզակի

Ուղղ. սար (ա)	տըրկեց (ա)	խավ (ա)	տղա,
Սեռ. սարի (ը)	տըրկեցի (ը)	խավի (ը)	տղայը
Տր. սարի (ն)	տըրկեցի (ն)	խավի (ն)	տղային
Հայց. սար (ա)	տըրկեցին	խավ (ին)	տղային
Բաց. սարէն	տըրկեցէն	խավէն	տղայէն
Գործ. սարով	տըրկեցով	խավով	տղայով

Հոգնակի

Ուղղ. սարէր (ան)	տըրկեսքէր (ա)	տըղնէր (ան)
Սեռ. սարէրի (ը)	տըրկեսքէրի (ը)	տըղնէր (ը)
Տր. սարէրին (ն)	տըրկեսքէրի (ն)	տըղնէրի (ն)
Հայց. սարէր (ան)	տըրկեսքէրի (ն)	տըղնէրի (ն)
Բաց. սարէրէն	տըրկեսքէրէն	տըղնէրէն
Գործ. սարէրով	տըրկեսքէրով	տըղնէրով

«ան» հոլովում

«ոջ» հոլովում

Ուղղ. տուռ (ա)	քիւնէր (ա)
Սեռ. տըռան	քիւրոջ
Տր. տըռան	քիւրոջ
Հայց. տուռ (ա)	քիւրոջ
Բաց. տըռնէն	քիւրոջէն
Գործ. տըռնով	քիւրոջով, քիւրոջով

Եզակի

Հոգնակի

«օր» հոլովում	«վա» հոլովում	Հոգնակի	
Ուղղ. խէր	տարի (ն)	խէրէր (ա)	տարինէր (ան)
Սեռ. խօր	տարվա	խէրէրի	տարինէրի
Տր. »	տարվան	խէրերին	տարինէրի (ն)



Հայց.	խօր	տարի (ն)	խէրէրին	տարինէր (ն)
Բաց.	խօրմէն	տարվընէն	խէրէրօվ	տարինէրէն
Գործ.	խօրօվ	տարօվ	խէրէրօվ	տարինէրօվ

Ածականները մի տոանձին նսրութուն չեն ներկայացնում, միայն հատկութունն ուժեղացնելու նպատակով որակական ածականները կրկնված են գործածվում. օրինակ՝ մէ խօրօտ-խէրօտ ախշիկ՝ մի բավական սիրուն աղջիկ:

Թվականները հետևյալ ձևով են արտասանվում՝ մէկը, էրկու, իրէք, չուէրս, խինգ, վեց, օխտ, ութ, իննս, տասս, տասնըմէկ, տասնէրկու, տանիրէք, տասնըչուէրս, տասնխինգ, տասնըվեց, տասնօխտ, տասնութ, տասնիննս, քրսան, յեռեսուն, քսոտուն, իցցուն, վացցուն, օխտանասուն, ութանասուն, իննանասուն, խսնիր, խնգար:

Որոշյալ թվականներն ունենում են ա (ն) սրօշող հոգը, օրինակ՝ քսանա, խնգարն: Ութսուն, իննսուն թվականները յոթանասունի նմանությունով ստանում են «ան» մասնիկը (ութանասուն):

Դասական թվականները բոլորովին բացակայում են այդ բարբառում և միայն սովետական իշխանության շնորհիվ գերօրոշների բազմանալու և մասսայականալու կապակցություններ սկսվում են գործածվել՝ առաջին, երկրորդ, ինչորդ և նման բառեր: Առաջին բառը գործածվում է անշին անբավ կապակցություն մեջ:

Գերանունների հոլովում

Անձնական գերանուններն են յես, տնի, զինքիմ, Յուցական գերանուններն են էա, էն, բացակայում են սա, զա, նա և այս գերանունները: Այդպես, այնպես, այսպես, այդպիսի, այնպիսի, այսպիսի գերանունների փոխարեն գործ են ածում էտեց, էնեց բառերը: «Այսքան» բառը չկա, կան՝ էտքան, էնքան: Այսչափ, այնչափ բառերի փոխարեն գործ են ածվում էտը զըզն, էնը զըզն գերանունները:

Փոխադարձ գերանունն է միայն «մէյ-մեկնի»: Հարցական գերանուններն են՝ վնի (ով), ինչ, վնը (որ), էշթնը (ինչպես), իշթնը (ինչքան):

Որոշյալ գերանուններն են՝ սաղ (բոլորը), զըմուէն (ամենայն), ըմնանքրս (բոլորը):

Անորոշ գերանուններն են՝ հնր մէկը (յուրաքանչյուրը):

Անձնական գերանունների հոլովումը

	Նգակի		
Ուղղ.	յես	տնի	զինքիմ
Սեռ.	իմ	ք'օ	նէր
Տր.	ընձիքի(ը)	ք'էզի	նրն
Հայց.	ընձիքի(ը)	ք'էզի	նրն
Բաց.	ընձմէն	ք'էզմէն	նրմէն կամ մէնէն
Գործ.	ընձմօվ	ք'էզմօվ	նրմօվ

	Հոգնակի		
Ուղղ.	մէնք'	տնիք	զինքիքն
Սեռ.	մէր	ծէր	նէրենց (նրէս)
Տր.	մէզի(ը)	ծէզի(ը)	նրէնցն(ը)
Հայց.	մէզի(ը)	ծէզի(ը)	նրէնցն(ը)
Բաց.	մէզմէն	ծէզմէն	նրէնցէն (նրմմէն)
Գործ.	մէզմօվ	ծէզմօվ	նրէնցօվ (նրմմօվ)

Նկատելի է, որ անձնական գերանունների մեջ բացառականն ունենում է «մէն» վերջավորությունը, որ հիշեցնում է Արթիկի բարբառի «մէն» վերջավորությունը, կամ այլիքի ճիշտ նույնն է այդ վերջավորության հետ նշանակում է, թե այդ բարբառներն իրար հետ երբեմնի առնչվել են: «Ինքը» բառի հոգնակի հոլովումը հիշեցնում է «ինքը, իւրեանց» ձևերը:

Յուցական գերանունների հոլովումը

	Նգակի		Հոգնակի	
Ուղղ.	էս	էն	տննք'	դննք'
Սեռ.	տնր	դնր	տննց	դննց
Տր.	տնրն(ն)	դնրն(ն)	տննցն(ն)	դննցն(ն)
Հայց.	տնրն(ն), էս	դնրն(ն), էն	տննցն(ն)(տննք')	դննցն(ն)(դննք')
Բաց.	տնրմէն	դնրմէն	տննմէն	դննմէն
Գործ.	տնրմօվ	դնրմօվ	տննմօվ (տննցօվ)	դննմօվ (դննցօվ)

Բարբառի կանոնի համաձայն «այդ» բառը պետք է որ այս բարբառում լիներ «էս», «այն» բառը լիներ «էն»: «Այս» գերանունը բացակայում է:

Հոլովման ժամանակ «էն» բառը դառնում է «դնր», այսինքն՝ իր արմատը կորցնում է, սեռական հոլովի վերջավորությունը դառնում է ամբողջ գերանուն՝ «էնդնր»>«դնր»: Ըստ երևույթին «դնր» ձևը կազմվել է «էնդնր» ձևից, որտեղ ն-ից հետո առաջանում է ձայնեղ դ, քանի որ անդամներից հետո այս բարբառում խուլերը վերածվում են ձայնեղների, այսպես բառակազմի չէր կարող լինել ձայնեղ (դնր): Հետագայում ձայնեղացումը պահպանվել է, որովհետև հիմնավորվել է իմաստի տարբերությունով (տնր > սրա, դրա, դնր > նրա). այսինքն՝ նմանահունչ բառերի տարբերակման հատկանիշը դառնում է միայն ձայնեղացման երևույթը:

Բացառական հոլովում ց-ն վերածվում է ս-ի (աֆրիկատի անկում), որովհետև նրան հաջորդում է բաղաձայն, որ միանգամայն օրինաչափ երևույթ է այս բարբառի համար:

Այստեղ և այնտեղ բառերը դարձել են տնղ և դնղ. Այստեղից և այնտեղից ձևերը դարձել են «տէտան», «դէնան», օրինակ՝ տէտան էկամ, դէնան ընցամ (այստեղից եկա, այնտեղից (ով) անցա):

Հարցական և հարաբերական գերանունների հոլովումը

Ուղղ.	վնի	ինչ (ն)	վնրն (որը)
Սեռ.	վիր	ինչի	վնրի (ը)

Տր.	վիրան	ինչին	վարին
Հայց.	վիրան	ինչ (ան)	վարին (վարան)
Բաց.	վիրամէն	ինչէն	վարամէն
Գործ.	վիրամով	ինչով	վարամով (վարով)

Խոնարհում

Ուրմիայի բարբառն ունի երկու խոնարհում՝ ալ և էլ, ունի նույն-րան ժամանակ, որքան և գրական լեզուն. գերբայները հետևյալներն են՝

Անորոշ՝	կիրէլ	կանթալ
Անկատար՝	կիրէս	կանթաս
Ապանի՝	կիրէլմ	կանթալու
Վաղակատար՝	կիրիր	կանթացիր
Հարակատար՝	կիրած	կանթացած
Ենթակայական	կիրող	կանթացող
Ըղձական՝	կիրի	կանթա

Անկատար գերբայը ցույց է տալիս, որ այս բարբառը պատկանում է «Ս» ճյուղին: «Ս» ճյուղի բարբառների մեծ մասի նման (Մեղրի, Կարճեան, Քեյվան՝ Շաղախ, Ղարաղաղ), այս բարբառը ևս գործ է ածում օժանդակ բայի ներկայի ձևերը միայն: «Լ» ճյուղի բարբառների նման Անցյալի գաղափարն արտահայտելու համար գործ է ածվում «էր» մասնիկ-բառը, որը օժանդակ բայի անցյալ անկատար ժամանակի երրորդ դեմքն է: Այդ «էր» մասնիկ-բառը կորցրել է դեմքի նշանակութունը և արտահայտում է միմիայն անցյալի գաղափարը, ուստի և գրվում է բոլոր դեմքերի վրա: Յուրաքանչյուր բաղադրյալ ժամանակի անցյալը կազմվում է ներկայի ձևերի վրա «էր» բառամասնիկն աղելացնելու միջոցով: Միայն 3-րդ դեմքում «էր» բառ-մասնիկը գործ է ածվում և՛ իբրև դեմք ցույց տվող, և՛ իբրև ժամանակ-ցույց տվող բառ-մասնիկ: Օժանդակ բայի ներկա ձևը 3-րդ դեմքում գուրա է ընկնում, եթե նրա վրա աղելանում է «էր» բառ-մասնիկը: Այդ ապացույց է, թե այդ «էր» բառ-մասնիկը նենց ինքը անցյալ անկատարի օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքն է (կիրած եմ «էր», կիրած ես «էր», կիրած «էր»):

Ներկայի խոնարհումը կազմելիս բոլոր դեմքերի համար գործ է ածվում «կիրէս», «կանթաս» գերբայները, միայն եզակի 3-րդ դեմքում է գործածվում «կիրէլ» գերբայը: «Կիրէս», «կանթաս» ձևերը կազմվել են «կիրէլիս», «կանթալիս» ձևերից, քանի որ միտական խոնարհման ժամանակ գործ է ածվում ոչ թե «կիրէս», «կանթաս» ձևերը, այլ «կիրէլի», «կանթալի» ձևերը (կիրէլի-ս, կանթալի-ս ձևերից առաջացած):

«Կիրէլ» ձևն առնված է «Լ» ճյուղի բարբառներից:

Ներկա		Անցյալի անկատար	
կիրէս եմ	կանթաս եմ	կիրէս եմ էր	կանթաս եմ էր
» ես	» ես	» էս »	» ես »

կիրէլ ի	կանթալ ի	կիրէս էր	կանթաս էր
կիրէս ենք՝	կանթաս ենք՝	» էք էր	» ենք »
» էք՝	» էք՝	» էք »	» էք »
» են	» են	» էն »	» են »

Ապանի

Անցյալի ապանի

կիրէլմ յեմ	կանթալու յեմ	կիրէլմ էր	կանթալու էր
» յես	» յես	» յես »	» յես »
» ի	» ի	» էր »	» էր »
» էք՝	» ենք՝	» էք »	» ենք »
» յենք՝	» յենք՝	» էք »	» էք »
» յեն	» յեն	» յեն »	» յեն »

Վաղակատար

Անցյալի վաղակատար

կիրիր եմ	կանթացիր եմ	կիրիր եմ էր	կանթացիր եմ էր
» ես	» ես	» ես »	» ես »
» ի	» ի	» էր »	» էր »
» ենք՝	» ենք՝	» ենք »	» ենք »
» էք՝	» էք՝	» էք »	» էք »
» են	» են	» են »	» են »

Վաղակատարի «ը» վերջավորութունն Ուրմիայի բարբառը յուրացրել է Վանի բարբառից, իսկ անցյալ նշանակող անփոփոխ «էր» մասնիկը, հավանական է, խոյի բարբառից:

Հարակատար

Անցյալի հարակատար

կիրած եմ	կանթացած եմ	կիրած եմ էր	կանթացած եմ էր
» ես	» ես	» ես »	» ես »
» ի	» ի	» էր »	» էր »
» ենք՝	» ենք՝	» ենք »	» ենք »
» էք՝	» էք՝	» էք »	» էք »
» են	» են	» են »	» են »

Անցյալ կատարյալ

Ուրմիայի բարբառը անցյալ կատարյալի առաջին դեմքում ունենում է «մ» վերջավորութուն: «Ե» խոնարհման կանոնավոր բայերը անցյալ կատարյալի հիմքում «ց» չունեն, բացի երրորդ դեմքից, վերջավորութունն աղելանում է ուղղակի արմատի վրա: «ա» խոնարհման կանոնավոր բայերը «ց» ունեն:

կիրիմ	կանթացիմ
կիրիր	կանթացիր
կիրեց	կանթաց
կիրինք՝	կանթացինք՝

Կ'իբիք' կ'անթացիք'  
Կ'իբին կ'անթացին

Ըղձական եղանակ

Ըղձականի ապառնի ժամանակի ձևերը նման են ժամանակակից գրական լեզվին:  
Անցյալի ապառնին ստանում է սովորական «էր» բառամասնիկը:

Ապառնի Անցյալի ապառնի

սըրեմ	մընամ	սըրեմ էր	մընամ էր
սըրես	մընաս	սըրես »	մընաս »
սըրի	մընա	սըրէր	մընար
սըրէնք'	մընանք	սըրէնք' »	մընանք »
սըրէք'	մընաք	սըրէք' »	մընաք »
սըրեն	մընան	սըրեն »	մընան »

Պայմանական եղանակ

Պայմանական եղանակը կազմվում է ըղձական եղանակի ձևերից ավելացրած «կը» եղանակիչը:

Ապառնի

կը սըրեմ	կը մընամ
կը սըրես	կը մընաս
կը սըրի	կը մընա
կը սըրէնք'	կը մընանք
կը սըրէք'	կը մընաք
կը սըրեն	կը մընան

Անցյալ ապառնի

կը սըրեմ էր	կը մընամ էր
կը սըրես »	կը մընաս »
կը սըրէր	կը մընար
կը սըրենք' էր	կը մընանք էր
կը սըրէք' »	կը մընաք »
կը սըրեն »	կը մընան »

Հարկադրական եղանակ

Հարկադրական եղանակը կազմում է սլայմանական եղանակից, ավելացրած «ար» մասնիկը, որ հավանական է «պիտի» եղանակիչի մնացորդն  
Այսպիսով, Ուրմիայի բարբառի հարկադրական եղանակիչը կազմված է սլայմանական և հարկադրական եղանակիչներից՝ «սըրէր»:

Ապառնի

սըրէր սըրեմ	սըրէր մընամ
» սըրես	» մընաս
» սըրի	» մընա
» սըրէնք'	» մընանք
» սըրէք'	» մընաք
» սըրեն	» մընան

Անցյալի ապառնի

սըրէր սըրեմ էր	սըրէր մընամ էր
» սըրես էր	» մընաս էր
» սըրէր	» մընար
» սըրենք' էր	» մընանք էր
» սըրէք' էր	» մընաք էր
» սըրեն էր	» մընան էր

Ուրմիայի բարբառի որոշ խոսվածքներում «ար» եղանակիչը միացվում է «կը» եղանակիչին ոչ թե առաջից, այլ հետևից (կ'ըսը կամ կըսը):

Հրամայական եղանակ

Հրամայական եղանակում նույնպես «ե» խոնարհման բայերը հիմքում «ց» չդնեն:

սըրի	մընա
սըրէք'	մընացէք'

Ժխտական խոնարհում

Ուրմիայի բարբառի ժխտական խոնարհումը կազմված է սովորական «չ» մասնիկով: Բաղադրյալ ժամանակներում այդ «չ» մասնիկը ավելանում է օժանդակ բայի վրա և օժանդակ բայի հետ ընկնում դերբայից առաջ. օրինակ՝

սըրէս եմ էր — չեմ էր սըրէլի:

Ժխտական խոնարհման ժամանակ գործածվում է «էլի» և «ալի» վերջավորությունն ունեցող դերբայ, որ «ելիս» և «ալիս» (սըրէլիս, մընալիս) լրիվ ձևերից է ստացվել՝ ս-ի կորստի սլատճառով:

սըրէլիս > սըրէլի մընալիս > մընալի

Այսպես է նաև «լ» ճյուղի բարբառների ժխտականը (Մարաղա, Ազա), որով գրանք նմանվում են Ուրմիայի բարբառին: Սակայն ընդհանուր սխտեմին նայելով, այդ ձևը «Ս» ճյուղին է և ոչ «Լ» ճյուղին: «Լ» ճյուղի «կըրել» և «կարթալ» անորոշ դերբայից չէին կարող ստացվել «կըրէլի» և «կարթալի» ձևերը, որովհետև ածման համար պատճառներ չկան: «Լ» ճյուղի ժխտականը պետք է լինէր «չեմ կարթալ», ինչպես որ գտնում ենք Սոյի բարբառում (Բազարչայ գյուղ): «Չեմ կարթալի, չեմ կըրէլի» ստացվել են

«կարթալիս», «կրրելիս» ձևերից. Այդ ձևերի մեջ «ս» հնչյունի թուլացումը տալիս է «յ» Արեշ—Հավարիքի բարբառում (Հավարիքի բարբառ՝ գյորգալիյ յեմ, չէմ գյարգալիս), որպիսի երևույթ տեղի է ունեցել նաև Ուրմիայի բարբառում, իսկ հետագայում յ հնչյունի անկումը բառավերջի ձայնավորից հետո շատ օրինաչափական է (հմմտ. տղայ—տղա, փեսայ—փեսա):

Հետևաբար «Լ» ճյուղի մեջ եղած «կրելի», «կարթալի» ձևերը վերցված են «Ս» ճյուղից, հատկապես Ուրմիայի բարբառից:

Սահմանական եղանակ

Ն ե ր կ ա

չեմ կ'իլելի	չեմ մընալի
չես »	չես »
չի »	չի »
չենք' »	չենք' »
չէք' »	չէք' »
չեն »	չեն »

Անցյալի անկատար

չեմ էր սրբելի	չեմ էր մընալի
չես » »	չես » »
չէր » »	չէր » »
չենք' » »	չենք' » »
չէք' » »	չէք' » »
չեն » »	չեն » »

Ապառնի

Անցյալի ապառնի

չեմ սրբելու	չեմ մընալու	չեմ էր սրբելու	չեմ էր մընալու
չես »	չես »	չես » »	չես » »
չի »	չի »	չէր » »	չէր » »
չենք' »	չենք' »	չենք' » »	չենք' » »
չէք' »	չէք' »	չէք' » »	չէք' » »
չեն »	չեն »	չեն » »	չեն » »

Ապառնի ժամանակի մի քանի գործածություն ժամանակ օժանդակ բայը գրվում է գերբայից հետո, այսինքն, գրական խոնարհման շարադասությունը պահպանելով նույնությունը՝ օժանդակ բային սկզբից կցվում է «չ» ժխտականը, օրինակ՝

Ինչի՞ չէկար, խօ ք'էզը ուսելու չեմ էր:  
Տուն էթալու չես:

Վաղակատար

Ժխտական խոնարհման ժամանակ «ե» խոնարհման բայերի վաղակատար գերբայը կորցնում է վերջին ն-ն, որով նմանվում է ժխտական

խոնարհման պայմանական եղանակին: Այս նույն երևույթը տեղի է ունենում նաև Արգվինի բարբառում. օրինակ՝

Ուրմիայի բարբառ՝	կ'իլիլ եմ—չեմ կ'իլի (վաղակատար)
	կը կ'իլիմ—չեմ կ'իլի (պայմանական)
Արթվինի բարբառ՝	գըրիլիմ—չիմ գըրի (վաղակատար)
	կու գըրիմ—չիմ գըրի (պայմանական)

«Ա» խոնարհման բայերի վաղակատարը տարբեր է պայմանականից:

Անցյալի վաղակատար

չեմ սըրի	չեմ մընացի	չեմ էր սըրի	չեմ էր մընացի
չես »	չես »	չես » »	չես » »
չի »	չի »	չէր » »	չէր » »
չենք' »	չենք' »	չենք' » »	չենք' » »
չէք' »	չէք' »	չէք' » »	չէք' » »
չեն »	չեն »	չեն » »	չեն » »

Հարակատար

չեմ սըրած	չեմ մընացած
չես »	չես »
չի »	չի »
չենք' »	չենք' »
չէք' »	չէք' »
չեն »	չեն »

Անցյալի հարակատար

Անցյալ կատարյալ

չեմ էր սըրած	չեմ էր մընացած	չը սըրիմ	չը մընացիմ
չես » »	չես » »	չը սըրիլ	չը մընացիլ
չի » »	չի » »	չը սըրեց	չը մընաց
չենք' » »	չենք' » »	չը սըրինք'	չը մընացինք'
չէք' » »	չէք' » »	չը սըրիք'	չը մընացիք'
չեն » »	չեն » »	չը սըրին	չը մընացին

Ըղծական եղանակ

Ապառնի

Անցյալի ապառնի

չը սըրեմ	չը մընամ	չը սըրեմ էր	չը մընամ էր
չը սըրես	չը մընաս	չը սըրէս »	չը մընաս »
չը սըրի	չը մընա	չը սըրել »	չը մընար »
չը սըրենք'	չը մընանք	չը սըրէք' »	չը մընանք »
չը սըրէք'	չը մընաք	չը սըրէք' »	չը մընաք »
չը սըրեն	չը մընան	չը սըրին »	չը մընան »

(ա) բարբառագիտություն—28

Պայմանական եղանակ

Ապառնի			Անցիալի ապառնի					
չեմ	սըբի	մընա	չեմ	էր	սըբի	չեմ	էր	մընա
չես	»	»	չես	»	»	չես	»	»
չի	»	»	չէր	»	»	չէր	»	»
չենք՝	»	»	չենք՝	»	»	չենք՝	»	»
չէք՝	»	»	չէք՝	»	»	չէք՝	»	»
չեն	»	»	չեն	»	»	չեն	»	»

«Գնալ» բայի փոխարեն Ուրմիայի բարբառը դործ է ածուծ էր ան> երբամ բայի ձևերը սահմանականի ներկա, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի ժամանակներում և ըզնական, պայմանական և հարկադրական եղանակների ժամանակներում, Անցյալ կատարյալ ժամանակը, վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայներ կազմվում են գնալ բայի ձևերով՝ Հրամայական եղանակի համար դործածվում է «քայլել» բայի ձևը (ք՛էլ, ք՛էլէք՛)։ Այսպիսով գնալ գաղափարը բոլոր ժամանակներով արտահայտելու համար բարբառս գործ է ածուծ էրեք բայեր՝ գնալ, երբալ և քայլել։

«Գալ» բայը բոլոր ժամանակներում ստացած ունի սկզբի ի աճականը, որ փոխարինում է գրաբարյան և աճականին։ (իկ՛նս եմ, իկ՛նս եմ, էկ՛իր եմ, էկ՛ած եմ, էկ՛ամ, իկ՛ամ և այլն)։ Գրաբարյան բայը «ե» ստանում է անցյալ կատարյալի միավանկ ձևերի մեջ, Ուրմիայի բարբառի անցյալ կատարյալում ի աճականի փոխարեն լինում է և (էկամ)։ Հրամայականի համար գործ է ածվում միանգամայն ուրիշ արմատ, որ է «յար»։ Այդ արմատը գրաբարի յառնեմ-յարի բայն է, որ գրական լեզվի մեջ գործ է ածվում արի ձևով։

Ուրմիայի բարբառը պահպանել է այդ բայի բառակզբի կիսաձայն յ-ն (յառնեմ-յար)։

Լինել բայը այս բարբառում կանոնավոր բայ է, մինչդեռ գրաբարում և գրական լեզվի մեջ անկանոն է։

Հասանեմ-խասնեմ բայը գրաբարի օրինաչափությամբ է խոնարհվում իբրև սոսկածանցավոր բայ։

Հրամայական եղանակ

	գնալ	գալ	լինել	հասնել
ե գ ա կ ի	ք՛էլ	յար	լլը՛	խասը՛
	մի ք՛էլ	մի յար	մի լլը	մի խասը
Հոգնակի	ք՛էլէք՛	յարէք՛	լլըէք՛	խասէք՛
	մի ք՛էլէք՛	մի յարէք՛	մի լլըէք՛	մի խասէք՛

Պատճառական կերպի բայերի խոնարհումը

Պատճառական կերպի բայերը ստանում են ացուց կամ էցուց կերպածանցը, իսկ եթե սոսկածանցավոր են, ստանում են ուց կերպածանցը (նստեցուցեմ, գուռացուցեմ, խասուցեմ)։

Հրամայականում ածանցի վերջին ց-ն ընկնում է (նստեցուցի, գուռ-

1 կընացիմ, կընացիր, կընացած, կընացող։

ցացու, խասու), ըստ որում հրամայական եղանակն ունենում է ու (ու) վերջավորություն (հմմտ. գրաբար՝ ո), Բոլոր ժամանակներում պատճառական կերպի բայերը ենթարկվում են «է» խոնարհման։

Ներկա

նրստեցուցէս եմ	գուռացուցէս եմ	խասուցէս եմ
և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի անկատար

նրստեցուցէս եմ էր	գուռացուցէս եմ էր	խասուցէս եմ էր
և այլն.	և այլն.	և այլն.

Ապառնի

նստեցուցէլու յեմ	գուռացուցէլու յեմ	խասուցէլու յեմ
և այլն	և այլն.	և այլն.

Անցյալի ապառնի

նրստեցուցէլու յեմ էր	գուռացուցէլու յեմ էր	խասուցէլու յեմ էր
և այլն.	և այլն.	և այլն.

Վաղակատար

նստեցուցիր եմ	գուռացուցիր եմ	խասուցիր եմ
և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի վաղակատար

նստեցուցիր եմ էր	գուռացուցիր եմ էր	խասուցիր եմ էր
և այլն.	և այլն.	և այլն.

Հարակատար

նրստեցուցած եմ	(կամ) գուռացուցած եմ	(կամ) խասուցած եմ
և այլն.	և այլն.	և այլն.

Հարակատարում ավելի հարմար է իբրև օժանդակ բայ գործածել կամ, կաս և այլն, քան եմ, ես և այլն։

Անցյալի հարակատար

նրստեցուցած եմ էր (կամ էր), գուռացուցած եմ էր (կամ էր) խասուցած եմ էր (կամ էր) և այլն.

Անցյալ կատարյալ

նրստեցուցիմ	գուռացուցիմ	խասուցիմ
նրստեցուցիր	գուռացուցիր	խասուցիր
նրստեցուց	գուռացուց	խասուց
նրստեցուցինք՝	գուռացուցինք՝	խասուցինք՝
նրստեցուցիք՝	գուռացուցիք՝	խասուցիք՝
նրստեցուցին	գուռացուցին	խասուցին

Ուրմիայի բարբառի անցյալ կատարյալի խոնարհումը նման է գրաբարին, միայն Ուրմիայի բարբառը իբրև հիմք վերցնում է պարզ բայերի անցյալ կատարյալի հիմքը, իսկ գրաբարը՝ անորոշ դերբայի հիմքը (գրաբար՝ նստուցի՝ Ուրմիայի բարբառ՝ նստեցնիմ, գրաբար՝ նստուցի, Ուրմիայի բարբառ՝ խասուցիմ)։

Հրամայականը կազմելու համար թե՛ գրաբարը և թե՛ Ուրմիայի բարբառը վերցնում են անցյալ կատարյալ ժամանակի երրորդ դեմքը և ջնջում ց վերջավորութունը (գրաբար՝ նստեցուցեմ > նստեցուցեմ, Ուրմիայի բարբառ՝ նստեցնիմ > նստեցնիմ)։ Գրաբարի հրամայականի բառավերջի յ-ն միշտ գուրբ է ընկնում։

Հրամայական եղանակ

նստեցնիմ	գուռցացու	խասու
մի նստեցնիմ	մի գուռցացու	մի խասու
նստեցնիցեք՝	գուռցացուցեք՝	խասուցեք՝
մի նստեցնիցեք՝	մի գուռցացուցեք՝	մի խասուցեք՝

Ընդական եղանակ

նստեցնիցեմ	գուռցացուցեմ	խասուցեմ
և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի ապառնի

նստեցնիցեմ էր	գուռցացուցեմ էր	խասուցեմ էր
և այլն.	և այլն.	և այլն.

Պայմանական և հարկադրական եղանակները կազմվում են սովորական ձևով՝ կը և տրվել եղանակիչներով։

Ուրմիայի բարբառի մեջ մի հատկանշական գիծն էլ այն է, որ հոգերը գրվում են բայի վրա և փոխարինում են անձնական գերանունների հայցական հոլովին. օրինակ՝ նրստեցուցիր եմ > ես քեզ նրստցելի եմ, կանչիմդ-ես քեզ կանչեցի։ Գրաբարում նույնպես հոգը գրվում է բայի վրա, բայց նշանակում է անձնական գերանվան ուղղական հոլով. օրինակ՝ գոր ասացերդ—որ դու ասացիր։ Ուրմիայի բարբառի սրողյալ հոգն է «ա» կամ «ն», օրինակ՝ տունա > տունը, ամշտն > գաշտը։

Ուրմիայի բարբառով

ՔՅՕԻ-ՕՂԻՆ ԻՆՍՆ ԹՎԱՆԳՅՍՆ՝

Մէկ օր Քյօր-Օղլին, ծին խէծած,  
 Ծիք՝արէն յեա էր տանալի.  
 Մէնակ էր, մարթ չըկար խէտն,  
 Թեխ Զամլի-բէլ էր էթալի:  
 Ճամխը յերգն մէ խատ չօբան,  
 Տըսով, վուէխար ի պախէլի,

3 Գ. Թարգմարյան, ԵՔյոս-Օղլի, 1941 թ.:

Թեէն էլ մէ պան ի կախի,  
 Մէ զարբան, անծանօթ պան.  
 Վանն վնէրգ անեց Քյօր-Օղլին,  
 Կրլի չինգ՝ավ, թէ իշ պան ի.  
 Տանցնի, թե՛ «Այ չօբան ախպըր  
 էա ինչ ի՛ կախիր ես թեէտ».  
 — Էտիկ՛, աղա ջան, թըվանգ՛ ի.  
 — Թըվանգ՛ն իշ պան ի, այ տըղա:  
 — Թըվանգ՛ն, աղա ջան, ինչ տեսմ,  
 Զատէն-գատ գարկ՛օղ սիլան ի.  
 Յեա մէ փաշայի չօբան եմ.  
 Կ՛ընանցիր էր Փըռանգ՛ըստան.  
 էա սիլանը դէն ի պէրի.  
 Տըվըր ի՛ վուէխարը պախեմ.  
 Տանգ՛ վուէր ու դէն գատէն-գատ  
 Կըղանգ՛են, մարթու կըսպանեն,  
 Նուէր ի ախար էկի, աղա,  
 Շատ թանը-թանջիբաթ պան ի.  
 Քյօր-Օղլին մընաց գանձացած  
 — Այ տըղա, ի՛շթան թե գատէն.  
 էա իշ ջուսն պուէչօղ սութի.  
 Ասածըս գ՛ինան հաստադել.  
 — Այ տղա ջան. կուգես, այ էն  
 Ուլիս կ՛ինը տու, անբընալ  
 Թըվանգ՛օլ տամ, քարի կըլիսէն  
 Քաննայ վըրան կ՛էտին պէրեմ.  
 Քյօր-Օղլին խանեց մէ վուսկի,  
 — Դը զարկ՛, այ չօբան, մէ տըսնամ  
 Խանիր գանգ էն ուլը գատ ի,  
 Ի՛շթան տըրի գարկես, ախըր.  
 Զօբանը էչոց թըվանգ՛ն  
 Վուէր ք՛անջեց, նըշան պըռնեց,  
 Վուէր կըրակեց, ուլը քարէն  
 Զարկ՛ըվով, ինգ՛ավ կ՛էտինն.  
 Էսխէտ Քյօր-Օղլին ավատաց.  
 Առեց թըվանգ՛ն, սըռձ-մըռձեց,  
 Տակէն-կլիսէն թանձնոգ անեց.  
 Խարցուց, թէ՛ «Տան իշկիլն ի՛նչ ի».  
 Զօբանը մէյ-մէկ շաշ տըվեց,  
 — Այ, էա բարու թ ի, լըցես են,  
 Վրանէն գ՛ննան ք՛ըցես են,  
 Դը էա չախմախ ի, էա էլ քար,  
 էտես ք՛անջես են, չըռթես են,  
 Զըռթելուն կըրակ ի տալի,

Բիրդան բարութը վրոթալի,  
 էն կըրակի թաբէն գ'աւան.  
 Թըռած լուլայէն էթալ ի,  
 էն էթանն թափը խէտան  
 Իշթանր պանը վուէր կըպնէլ ի,  
 Տալը՛ զայ-զանբար անէլի,  
 Ըսպանէլի, դանդ ք'ըցէլի:

\*  
\*\*

Ըշկաց, ըշկաց զօշ-Ք'օր-Օղլին,  
 Զանրկեց ծընգանը, ան թ'աննեց.  
 —Վերչացանվ,—ասաց,—տանրէն յետ  
 Մանդ իգ'իդի պանը բօշ ի.  
 Թըվանգը վուէր իջաթ էլավ,  
 էլ մանդըթուէնը փօղմիշավ:  
 էտ վուէր թըվանգը տանն էկավ,  
 նամանդ մուխաննանթը կ'առնի,  
 կը մընի մէ պատի դալդա,  
 կըզանրկի մանդին կը ք'ըցի:  
 Մանշնը չ'անի, վան ի մանդը,  
 Վան ի նամանդը մուխաննանթ:  
 Թըվանգը էլավ, խավսըըվավ  
 Մանդը-նամանդ, քաջը-վանխուէտ.  
 էլ ապրել չ'անի տանրէն յետ.  
 Մարթ մեռնի, մէխէտ ազաղվի,  
 Վուէր պանց աշկէրօլ չըտըսնի  
 նամանդին՝ թըվանգը ծեռան.  
 Ասաց՝ թըվանգը ցած թալեց,  
 Թըք'եց վրան զօշ Ք'օր-Օղլին,  
 Սըրտէն իշօ մէ թել կըռեն,  
 Ք'օրը փճման քըշեց ուր ծին,  
 Սասավ տուներ, մանուլ բէք'էփ,  
 Իրեսը կախ, ք'էփը խարաբ...  
 (Ք'յօռ-Օղլին դրանից հետո մեռնում է վշտից)

իգ'իդ—քաջ  
 շաշ տալ—ցույց տալ  
 անդանթ—արգարազատ  
 կ'անի — ժամանակ  
 շիք'ար—որսորդություն  
 թըվանգը — հրացան  
 սիլան — զենք  
 զատէն-զատ — հեռվից հեռու

անվանը իկ'անլ — աճել, առաջանալ  
 թաշիբաթ — զարմանք  
 թանմանդ աննել — գիտել, նայել  
 իշկ'իլ — գաղտնիք  
 մանշնը — հայտնի  
 մանուլ — տխուր  
 բէք'էփ — հիվանդ

### 4. ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ „Լ“ ՃՅՈՒՂԸ

Հայերեն բարբառների «Լ» ճյուղին պատկանում են առայժմ հայտնի երկու բարբառներ՝ Մարաղայի և Սոյի: Մարաղայի բարբառը ներկայանում է խոսողների համեմատաբար քիչ թվով, մինչդեռ Սոյի բարբառով խոսողներ շատ կան. դրանք ցրված են զանազան տեղեր: Այդ բարբառով խոսողներ կան՝ Սիսիանում, Ազիզբեկովի շրջանում, որտեղ հայտնի են էրզափին, Քարազլուխ, Թառաթումբ գյուղերը, Արտաշատի շրջանում՝ Մրգավան, Վարդաշեն, Գետազատ և Մարմարան գյուղերը, Կոտայքի շրջանում՝ Արամուս և Թագազյուղ անունով գյուղերը և Ապարանում՝ Զովունի (Մուլակասում) գյուղը:

Սոյի բարբառով խոսողներ կան շատ տեղերում, առանձին գյուղերում փոքրիկ խմբերով, որ աստիճանաբար ձուլվում են «Ս» ճյուղի Ուրմիայի բարբառի հետ, ինչպես, օրինակ, Արտաշատի շրջանի նախկին Ղարզովան գյուղում:

«Լ» ճյուղի բարբառների ընդհանուր հատկությունները.

1. Ներկան կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայով, օրինակ. սըրել եմ—սրում եմ, մընալ եմ—մնում եմ, կարբալ եմ—կարգում եմ, ազատել եմ—ազատում եմ (Սոյ). սըրիլ իմ—սրում եմ, մընալ իմ—մնում եմ, կ'անրբալ իմ—կարգում եմ, ազատիլ իմ—ազատում եմ (Մարաղայի բարբառ):

2. Բաղադրյալ անցյալ ժամանակները կազմում են ներկայի ձևով՝ ավելացրած անփոփոխ «էր» մասնիկը. օրինակ՝ սըրել եմ էր—սրում էի, կարբալ եմ էր—կարգում էի (Սոյ). սըրիլ իմ էր—սրում էի, կ'անրբալ իմ էր կարթում էի (Մարաղա):

3. Ըղծականի, ուրեմն և պայմանականի ու հարկադրականի անցյալի ապառնի ձևերը կազմում են ապառնիից՝ ավելացրած «էր» անփոփոխ մասնիկը. օրինակ, սըրիմ—սրեմ, սըրիմ էր—սրեի (Մարաղա). սըրեմ—սրեմ, սըրեմ էր—սրեի (Սոյ):

4. Անցյալ կատարյալի առաջին դեմքն ունի «մ» վերջավորությունը. «ե» խոնարհման բայերի հիմքում «ց» չկա. օրինակ՝ սըրբմ—սրեցի, կ'անրբալբմ—կարգացի (Մարաղա). սըրիմ—սրեցի, կարբալբիմ—կարգացի (Սոյ):

5. Վազակատար դերբայն ունենում է «ր» վերջավորություն. օրինակ. կըրիբ եմ—գրել եմ, կարբացիբ եմ—կարգացել եմ (Սոյ).

կ'իբիբ իմ—գրել եմ, կ'անրբացիբ իմ—կարգացել եմ (Մարաղա):

6. Ներգոյական հոլովը բացակայում է:

7. Բացառականն ունենում է «էն» վերջավորություն. օրինակ՝ խուտէն—խոտից, խուտերէն—խոտերից (Մարաղա):

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐՔԱՌԱՐ:

Մարաղայի բարբառի հայրենիքն է Ուրմիայի լճի հարավ-արևելյան կողմը: Այդ բարբառը խոսվում է այժմ Մարաղա գյուղում:

Մարաղայի բարբառով խոսում են Ղարաբաղի Մարաղա գյուղը, որը գաղթել է Մարաղայից, Ազուխի շրջանի Ազա գյուղը և Երևանի շրջանի Ավան գյուղը: Պետք է ենթադրել, որ խոսողների փոքր թիվը բացառելով է նրանով, որ Մարաղայի շրջանի բնակչության զգալի մասը ցրվել է հայկական զանազան գյուղեր Սովետական Հայաստանում, Ղարաբաղում, Հյուսիսային Կովկասում և այլն և ձուլվել թոյի և Ուրմիայի բարբառով խոսող բնակչությանը:

Մարաղայի բարբառը իր լեզվական վիճակով գտնվում է Վանի, Ուրմիայի, թոյի և Ղարաբաղի բարբառների միջև: Այդուհանդերձ նա ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք նրան խիստ տարբերում են մյուս բարբառներից:

Հնչյունաբանություն

Մարաղայի բարբառը հարուստ է ձայնավորներով և հատկապես երկբարբառներով: Դա միակ բարբառն է, որ ունի շուրջ 6 երկբարբառ: Դրանք են՝ բե, բե, ուե, ուե, օւ, օւ. օրինակներ՝

Ամբես > ամիս, խարիբել > հարբել, սաղմուես > սաղմոս, կախուէղ > կակուղ, կոտրովբել - կտրովել:

Մարաղայի բարբառի ձայնավորներն են՝ ա, ան, է, ի, ը, օ, օ, ու, ու. Այդ բարբառում կա մի տեսակ «ի» (բի), որ խիստ նման է ուսուհան «Ի» ձայնավորին: օրինակներ՝ արլբվ > արև, թաքավբել > թաղաւոր՝ ճրելաիկ > ճկոյթ, ծրծրեւ > ձմեռն:

Մարաղայի բարբառի ձայնավորները ենթարկվում են բավական զգալի փոփոխությունների, այսպես օրինակ՝

- Ա > ա. խասնել > հասնել, պէրան > բերան, խալիւէլ > հաւանել.
- > ան. պանին > բաժին, խարիբ > հարիւր, ամարել > գազարել.
- > ը. ըսնել > անցնել, մբխաթ > մախաթ, խըմար > համար.
- > է. տէնակ > դանակ, վէխէնալ > վախենալ, քիթել > գզալ.
- > ի. շիլակ > շալակ, ախիս > տանիք:
- Ե > յէ. յէզ > եզն, յէրզ > եզր, յէրք > երգ.
- > յի. յիս > ես, յիփ > երբ.
- > է. էրազ > երազ, էրիէն > երկայն, կէտին > գետին.
- > բե (բ, պ, փ, մ, ն հնչյուններից հետո). խափել > խաբել, կապել > կապել.
- > բե (վ-ից հետո). ալբել > ալել, ալբել > աւերել.
- > օ. անգօլն > ազգու, պաննի > բանելու, նրսոյննի > նստեցնել.
- Ը > ու. պուուսնի > պուսնի, ճուսնի > ճնշողի.
- > ու. օ. թնթն > թթու, ամտոն > գուռ, կմլօրէլ > գլօրել.
- > ի. պիբին > բրինձ, քիդան > գդակ, քիթել > գզալ, միմիկ > միմիկ.

1 Հ. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1936 թ.:

- > ու. պուխտեր > պղտոր, սուղրեց > սղոց.
- > բե. ուե. (խ. ից հետո, ը, մ, ն, բաղաձայններից առաջ). խրծրել > խմբել, խուեննի > խնձոր, ծրծրեւ > ձմեռ.

Ո ձայնավորի դիմաց բարբառում գտնում ենք՝ վբ, վու, օ (բառակցում), բե, ուե, ու, ուե, օ, օ (բառամիջում):

Երկբարբառներից

- Իւ > իվ. հաշիվ > հաշիւ, պատիվ > պատիւ.
- > նի. աննի > ալիւր, անպար > աղբիւր, ծան > ձիւն.
- > ի. ու. խարիբ > հարիւր, իբ > իւր, սուս > սիւն.
- > է. կէէ > գիւղ, յէէ > իւղ.
- Ոյ > վբ, ու. վբեւ > ոյմ, պաուբ > պաարոյգ, կապուս > կապոյս.
- > ու. լուս > լոյս, կուբ > կոյր.

Ու-ի դիմաց գտնում ենք՝ ու, ու. օ, ը, ուե, ուե:

Մարաղայի բարբառի հիմնական հատկանիշներից է ձայնավորների բաղաձայնաբանությունը, ըստ որի բառակցքի կամ վերջավանկի ձայնավորների ազդեցությամբ մյուս վանկերի ձայնավորները համապատասխանաբար փոխվում են կամ վերին, կամ ստորին, կամ էլ միջին բարձրության ձայնավորների. օրինակ՝ անպար, անպար, անպար, անպար > դարման, վաստակ > վաստակ և այլն:

Մարաղայի բարբառի պայթական բաղաձայնների սխտեմը ենթարկվում է առաջին տեղաշարժին, այսինքն՝ ձայնեղների դիմաց կան շնչեղ խույեր բառամիջում և խույեր՝ բառակցում:

Օրինակներ. պաննի > բարակ պանց > բարձ, պարթ > բուրդ, կէէ > > գետ, կմբի > գարի, կիբել > գրել, ամից > դարձ, տուս > գուսն, յէբ > երգ և այլն:

Մարաղայի բարբառում, այնուամենայնիվ, ձայնեղներ կան, այդ ձայնեղները պատահում են օտարներից փոխ առնված բառերում և ունակին հնչյուններից հետո, օրինակ՝ գին > գինձ, պիբին > բրինձ, գանդանուր > գանդատուել, գանգ > գանգ, բաղար > շուկա, բարբ > արդյոք, գանդան > բողբ, գանգ > վիշտ և այլն:

Մարաղայի բարբառում կան քմայնացված գ, կ, ք, մի հատկություն, որ գտնվում է Ղարաբաղի, Ուրմիայի և Վանի ու ընդհանրապես բոլոր արևելյան բարբառներում. օրինակներ՝ վբսիլ > սիկի, իբբ > > երեք, գիդիբ > գզիբ և այլն:

Որոշ խոսվածքներում (օրինակ, Ազա գյուղի) գ, կ, ք հնչյուններն արտասանվում են ջ, և, չ:

Մարաղայի բարբառում քմային ետնալեզվային հնչյունները վերածվում են յ և ն հնչյունների, ըստ որում կ հնչյունը վերածվում է յ-ի, իսկ ք և ևք հնչյունները վերածվում են հ-ի, օրինակ. Արիվնննի էր փրսալի վերստի մըննէր: անն (աննք-նրանք) պըրձան:

Այդ երևույթը տեղի է ունենում հատկապես բաղաձայնից առաջ գտնվելու դեպքում և այն դեպքում, երբ հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով, իսկ նախորդը վերջանում է ետնալեզվային գ, կ, ք հնչյուններով: Աֆրիկատներն այդ բարբառում վերածվում են պարզ հնչյունների,



այսինքն՝ տարրալուծվելով իրենց բաղադրիչ մասերի, կորցնում են պայթական մասը, պահպանելով շփական ս, շ և զ, ժ հնչյունները. օրինակ՝ նսնամէն > նրանցմէն, աշկ > աչք, պնսվէլ իմ > բացվում եմ:

Այս հատկությունը գտնում ենք Ուրմիայի և Վանի բարբառներում և Սալմաստի խոսվածքներում, ինչպես և Ասլանբեկի ու Պոլսի խոսվածքներում:

Մարաղայի բարբառը «ֆ» հնչյունը չունի, դրա փոխարեն գործ է անվում «փ» հնչյունը. օրինակ՝ փնս > ֆէս, — գլխարկ, քէփ > քէֆ, փայտոն > ֆայտոն և այլն:

«Հ» հնչյունը Մարաղայի բարբառում վերածվում է «խ» հնչյունի. օրինակ՝ խաց > հաց, խէր > հայր, խառնիս > հարառնիք, պնխ > բան, շունախավըր > շնորհավոր և այլն:

«Տն» հնչյունները վերածվում են «նն» կամ միայն «ն» հնչյունի. օրինակ՝ խաննել > հատնել, — հատանել, «սատակել», մըննէլ > մտնել — մտանել, գլինէլ > գտանել, մանըկ > մատնիք — մատանիք:

«Ր» հնչյունը շատ բառերի միջից գուրս է ընկնում. օրինակ՝ յիփ > յերբ, նիս > ներս, մըսըլ > մըսել, խամա > համար:

«Բ» հնչյունը շփոթվում է «ռ» հնչյունի հետ. օրինակ՝ թուէր > թոռն, մըբնէլ > մեռնել, պնոց > բորձ, խոշտակ > հրեշտակ, առածակ > արածել, խըռնել > խրտնել, խառնիս > հարառնիք, շառէլ > շարել, տավառ > տավար, տնոման > դարման, կառ > կար և այլն:

Մարաղայի բարբառը բազմաթիվ բառերի մեջ ավելացնում է այս կամ այն հնչյունը, օրինակ՝ խուէտխուէտալ > հոտոտալ, խալվիր > հալևոր, ճանանչ > ճանաչ, լինքն > լիքը, ցանձըր > ցածր, ձիյանվըր > ձիավոր, ծանգըր > ծանր, թոնդնըր > թոնիր, շիրէշտ > շրէշ և այլն:

Մարաղայի բարբառը սիրում է կրկնել հնչյունները, մի երևույթ, որ խիստ զարգացած է Տիգրանակերտի բարբառում, տալով նրան լեզվի քաղցրահնչյունություն, օրինակ՝ վիցց > վեց, տասսա > տասն, իսսուն > հիսուն, խննգնըր > հազար, աննոշ > անուշ, փրոռէլ > փոռել, կրիննաց > գնաց, շննպպնթ > շարաթ, և այլն:

Հետաքրքրական են նաև Մարաղայի բարբառի հապավումները, օրինակ՝ մէշ > մի քիշ, սնննն > նս ինչ իմանամ, սկո > անավասիկ, ծըռնիկ > ծիծեռնակ և այլն:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարաղայի բարբառի հոգնակներն են «իր», «նիր» և «քիր», որոնցից՝ «իր» ունենում են միավանկ բառերը, «նիր»՝ ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը և «քիր»՝ բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը, օրինակ՝ էծ — էծիր, առչ — առչիր, թիվ — թիվիր, կատու — կատունիր, կրնրի — կրնրիր, էրագ — էրագքիր, սուղըր — սուղիսքիր և այլն:

Մարաղայի բարբառն ունի 6 հոլով, ներգոյական հոլով չունի, բառերի մեծ մասը պատկանում է «ի» հոլովման, բայց մի շարք բառեր ենթարկվում են «ու» հոլովման, հատկապես անորոշ գերբայները. Մարաղայի բարբառում բացառական հոլովն ունենում է «էն» վերջավորություն.

Կան բառեր, որոնք ենթարկվում են ա, վա, օշ, օր հոլովումներին.

Ե Ղ Ա Կ Ի

Ուղղ.	էքի	խուխտ	պըտիկ	աշուն
Սեռ.	էքիլի	խուխտու	պըտկա	աշունվա
Տր.	էքիլին	խուխտուն	պըտկան	աշունվան
Հայց.	էքի	խուխտ	պըտիկ	աշուն
Բաց.	էքիլին	խուխտէն	պըտկէն	աշունվանէն
Գործ.	էքիլիով	խուխտով	պըտկով	աշունվանով

Հ Ո Ղ Ն Ա Կ Ի

Ուղղ.	էքինիր	խուխտիր	պըտինիր	աշունքիր
Սեռ.	էքինիրի	խուխտիրի	պըտինիրի	աշունքիրի
Տր.	էքինիրին	խուխտիրին	պըտինիրին	աշունքիրին
Հայց.	էքինիր	խուխտիր	պըտինիր	աշունքիր
Բաց.	էքինիրէն	խուխտիրէն	պըտինիրէն	աշունքիրէն
Գործ.	էքինիրով	խուխտիրով	պըտինիրով	աշունքիրով

Ածականների մեջ գործածական է «ալըն» ածանցը, որ առանձին համեմատական աստիճան է կազմում, օրինակ՝ սիվավըն > սևավուն, նեղավըն > նեղավուն. Գերադրական աստիճանը կազմում է «լափ» > խիստ բառով, օրինակ՝ լափ նուշ > ամենամեծ, լափ աղէկ > ամենալավ: Քանակական թվականներից հետաքրքրական են՝ իցցուն > խուռն, օխտանացցուն > յսթանասուն, վացցուն > վաթսուն, ութանացցուն > ութսուն, իննանացցուն > իննսուն:

Դասական թվականները կազմում են ադրբեջանական «իմջի» > ըմջի» վերջավորությամբ. «տաջին» բառը հենց ադրբեջաներենով է. օրինակ՝ անվանիլիմջի > առաջին, էրկուսըմջի > երկրորդ, իրիթիլիմջի > երրորդ, շուրսըմջի > չորրորդ և այլն:

Մարաղայի բարբառի դերանունների հոլովումը բավական նման է Ուրմիայի բարբառին, մասամբ էլ Վանի բարբառին: Ավանի խոսվածքում հոլովումը բավական մոտեցել է Ուրմիայի բարբառին:

ԱՅՏՆԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՎՈՒՄ

Ե Ղ Ա Կ Ի

Ուղղ.	յիս	տնն	գինքն
Սեռ.	իմ	քյու	նը
Տր.	ինձի	քէզի, քիզի	նըն, նընն
Հայց.	»	»	»
Բաց.	ինձիմէն, ինձմէն	քէզիմէն, քիզիմէն, քիզմէն	նըմէն, նընն
Գործ.	ինձիմով, ինձմով	քէզիմով, քիզիմով, քիզմով	նըմով, նըննով

Հ ո զ ճ ա կ ի

Ուղ.	մինք՝	տուք	զինք՝իրան
Սեռ.	միր	ծիր	անունց, անունս
Տր.	մէզի, միզի	ծիզի, ծէզի	անունցան
Հայց.	» »	» »	»
Բաց.	մէզիմէն, միզիմէն	ծիզիմէն, ծէզիմէն	անունցէն, ուրումէն
	մէզմէն, միզմէն	ծիզմէն, ծէզմէն	անունցմէն
Գործ.	մէզիմով, միզիմով	ծիզիմով, ծէզիմով	անունցմով, անունմով
	մէզմով միզմով	ծիզմով, ծէզմով	

«Զինք՝ան բառը ստացական հոգով գործածվելով՝ հոգնակիրում ստանում է «իք՝ մասնիկը. օրինակ՝ զինք՝իս, զինք՝իրիս, զինք՝իք՝իրիս:

ՅՈՒՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

	եզակի	Հոգնակի
Ուղղ.	էս (էտա)	աննք՝, անք՝անն անն՝,
Սեռ.	անր, անրան	աննց, աննցան, անս
Տր.	անրան, անրան	աննցան, աննցան
Հայց.	» »	» »
Բաց.	անրմէն	աննցէն, աննցէն
Գործ.	անրմով	աննցմով, աննցմով

եզակի

Ուղղ.	էն
Սեռ.	անր, անրան, ինդանր, ինդանրան
Տր.	անրան, անրան, ինդանրան, ինդանրան
Հայց.	» » » »
Բաց.	անրմէն, ինդանրմէն
Գործ.	անրմով, ինդանրմով

Հոգնակի

Ուղղ.	աննք՝, աննք՝անն, անն՝ ինդանք՝ ինդանն՝
Սեռ.	աննց, աննցան, անս, ինդանց, ինդանցան, ինդանս
Տր.	աննցան, աննցան, ինդանցան, ինդանցան
Հայց.	» » » »
Բաց.	աննցմէն, աննցմէն, ինդանցմէն, ինդանցմէն
Գործ.	աննցմով, աննցմով, ինդանցմով, ինդանցմով

Մարաղայի բարբառում «էս» — այս գերանունը բացակայում է այնպես, ինչպես Ուրմիայի բարբառում:

ՀԱՐՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄ

եզակի

Ուղղ.	վանվ—ով	վանր—որը
Սեռ.	վանրի	վերի
Տր.	վանրին	վերին
Հայց.	վանրին	վերին
Բաց.	վանրմէն	վերմէն
Գործ.	վանրմով	վերմով

Հոգնակի

Ուղղ.	վանվեր	վանրի, վանրան
Սեռ.	վանրինց	վերինց
Տր.	վանրինցան,	վանրին, վերին,
Հայց.	»	»
Բաց.	վանրմէն,	վերիմէն, վանրմէն,
		վերիմէն, վանրիմէն, վերիմէն,
Գործ.	վանրմով, վանրմով,	վերիմով, վերինցմով,
	վանրիմով, վանրիմով	վերիմով

Մարաղայի բարբառն այն հազվագյուտ բարբառներից է, որի «ով» հարցական դերանունն ունի հոգնակիի ձևեր բոլոր հոլովումներում:

խոնարհում

Մարաղայի բարբառն ունի «ի» (է) և «ա» խոնարհում: Մանանական եզանակի ներկան կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի ներկայով, իսկ անցյալի անկատարը, ինչպես և բոլոր բաղադրյալ ժամանակների անցյալը, կազմվում է «էր» անփոփոխ մասնիկով, որն ընդհանուր է Ուրմիայի, Մարաղայի և Պոլի բարբառներում:

ն ե բ կ ա

սըրէլ իմ—սրում եմ	տողալ ըմ—դողում եմ
» իս	» ըս
» ի	» ը
» ինք՝	» ընք՝
» էք՝	» էք՝
» ին	» ըն

Անցյալի անկատար

սըրէլ իմ էր—սրում էի	տողալ ըմ էր—դողում էի
» իս էր	» ըս էր
» էր	» էր
» ինք՝ էր	» ընք՝ էր
» էք՝ էր	» էք՝ էր
» ին էր	» ըն էր

Մարաղայի բարբառում ներկան կազմվում է նաև «ի» (ը) վերջավորությունն ունեցող դերբայով, այսինքն լինում է՝ սրբէլի յիմ, սրբէլի յիս և այլն:

Ապառնին կազմվում է ապառնի դերբայով, որի հիմքի «է» ձայնավորը բարենչյունություն ունեցող վերածվում է օ-ի—սրբօլու, ապաօլու:

Ա պ ա ո ն ի		Անցյալի ապառնի	
սրբօլու յիմ	սողալու յիմ	սրբօլու յիմ էր	սողալու յիմ էր
» յիս	» յիս	» յիս էր	» յիս էր
» յի	» յի	» յէր	» յէր
» յինք՝	» յինք՝	» յինք՝ էր	» յինք՝ էր
» յէք՝	» յէք՝	» յէք՝ էր	» յէք՝ էր
» յին	» յին	» յին էր	» յէն էր

Վաղակատար դերբայը կազմվում է «իբ», իսկ որոշ խոսվածքներում «ըբ» վերջավորությամբ՝ սըբիբ, սըբբ՛բ: Պոյի բարբառի որոշ խոսվածքներում (ինչպես, օրինակ՝ Կոտայքի շրջանի Արամուս գյուղի) լինում է նաև «իյ» վերջավորությամբ՝ սըբիյ (էմ, էս, ի):

Վաղակատար

սըբիբ իմ	սողացիբ իմ
» իս	» իս
» ի	» ի
» ինք՝	» ինք՝
» էք՝	» էք՝
» ին	» ին

Անցյալի վաղակատար

սըբիբ իմ էր	սողացիբ իմ էր
» իս էր	» իս էր
» — էր	» — էր
» ինք՝ էր	» ինք՝ էր
» էք՝ էր	» էք՝ էր
» ին էր	» ին էր

Նույնպես է կազմվում հարակատարը, միայն «ած» վերջավորությունն ունեցող հարակատար դերբայով:

Անցյալ կատարյալը առաջին դեմքում ունենում է «մ» վերջավորություն, ինչպես Ուրմիայի և Պոյի բարբառներում, ըստ որում «է» խոնարհման բայերը ցոյական են, իսկ «ա» խոնարհման բայերը՝ անցոյական:

Անցյալ կատարյալ

սըբմ	սողացմ	մընացմ
սըբիբ	սողացբբ	մընացբբ

սըբից	սողաց	մընաց
սըբբնք	սողացբնք	մընացբնք
սըբբք	սողացբք	մընացբք
սըբբն	սողացբն	մընացբն

Ներդաշնակության օրենքով անցյալ կատարյալի վերջավորության ձայնավորը համաձայնում է արմատում եղած ձայնավորներին, որով և տարբերվում է ընդհանուր կանոնից, օրինակ՝ ունծում, ունծիք, ունծից, ունծուցք, ունծուք, ունծուց, խարփամ, խարփար, խարփավ, խարփանք, խարփար, խարփան:

Ըղձական եղանակում «է» խոնարհման ձևերը ունենում են հիմքում «ի» ձայնավոր, բացի երրորդ գեմքից, որտեղ լինում է «ը», և հոգնակի երկրորդ գեմքից, որտեղ լինում է «է», որով և տարբերվում է անցյալ կատարյալից. օրինակ՝

Սըբիմ—սրեմ, սըբբմ—սրեցի:

Ըղձական անցյալի ապառնին կազմվում է նույն անփոփոխ «էբ» մասնիկով:

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի		Անցյալի ապառնի	
սըբիմ	սողամ	սըբիմ էր	սողամ էր
սըբիս	սողաս	սըբիս էր	սողաս էր
սըբբ	սողա	սըբբ	սողար
սըբինք՝	սողանք	սըբինք՝ էր	սողանք էր
սըբէք՝	սողաք	սըբէք՝ էր	սողաք էր
սըբին	սողան	սըբին էր	սողան էր

Պայմանական և հարկողական եղանակները կազմվում են ըղձական ձևերից, ավելացրած՝ պայմանականի համար «կ» կամ «կը» եղանակիչը, իսկ հարկադրականի համար կամ «կիպտան», կամ աղբբեջանական «գ՛ման» եղանակիչը:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի		Անցյալի ապառնի	
կըսըբիմ—կսրեմ	կիկ՛մմ—կգամ	կըսըբիմ էր—կսրեի	կիկ՛մմ էր
կըսըբիս	կիկ՛մս	կըսըբիս էր	կիկ՛մս էր
կըսըբբ	կիկ՛մ	կըսըբբ	կիկ՛մբ
կըսըբինք՝	կիկ՛մնք՝	կըսըբինք՝ էր	կիկ՛մնք՝ էր
կըսըբէք՝	կիկ՛մնք՝	կըսըբէք՝ էր	կիկ՛մնք՝ էր
կըսըբին	կիկ՛մն	կըսըբին էր	կիկ՛մն էր

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի	Անցյալի ապառնի
կիպան կամ քանոն՝ սըրիմ	կիպան կամ քանոն՝ սըրիմ էր
» » սըրիս	» » սըրիս էր
» » սըրը	» » սըրը
կիպան կամ քանոն՝ սըրինք՝	» » սըրինք էր
» » սըրէք՝	» » սըրէք էր
» » սըրին	» » սըրին էր

ՆՄՈՒՇՆԵՐ «Լ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐՐԱՌԱԳԻՏՈՒՆԵՐՈՎ

Մարաղայի բարբառով

Իմ նիշանբազուրինն\*

Ախպը՛ր, խօսիլը՛ դուստր. մըկա թարգմտիչն պանիլը իմ տըսնէլի, մըկա իմ իննիլի, քի միւր անգամ իշ կէդա կուր էր: Գնդան միւր անգամին էտես պանդանիլի քի չըկար. էն քի օտոր յիս իմ տըսնէլի, լափ մնալը՛մ շուար:

Դէյա-բարաս (հայրս-մայրս) վանդան ինքիւր ին էր քամըկոյլըս, ինձի նիշան ախիլն էր. ամմա յիս շատ էլ վիզի տէ՛մ չիմ էր տալը: Ախպը՛ր, ախրա՛ էրկու շանպանի կըլը՛ր, էլ միւր տունա ուրու խօսի չըկար. Մարաղայը քանոն ախիլի քի իննիլի անունա տուրուն. ամմա, էտ էլ ասիմ, ինձի մէն իսկի խանքը տունոյ չկար, քի վանիլն իմ ուզիլի, յա վանիլն իմ խալ-նէլի, յա իսկի չիմ ուզիլի Մանիլն. մէ քի չէր մըտանք տէղիքիլի քի իննիլն: Կասիս ճէնց ինձի անցն էլալ. օյ ինքալ վիլնն. կատարու կուր-րանի քի իննիլն չըտարալ, գըրթնն իմ էր. մէք էլ տըսամ նաննա սասց. «Քի չէր խէտ իմ, օ՛յ, ախ էն քանոն քի իննիլն, յա գըրթնն»: Յէս էլ, քու անիլն, ինձի ճէս թանքիլն տուրուն, իսկի նաննա էլ չիմ քանիլ-լի. նաննա կատան թիլիլըս էլ խանիլ իմ ասիս. Դարաշա էկալ, թիլիլ-րիս ժողից, յորդանա քանից վիլնն, ամնցալ նաննիլիս սասց. «Գուրաքիլիլ ախիլի, քանոն վանդան ի քի իննիլն»:

Դէ բույսլ տանք՝ բաշլամըլըն նառին նառին քանիլն տէղիլի մէշա, նաննա սասց. «Մանիլ, իննիլ իս իշ կա. օտոր վանքիլն իննիլն խէտն կի-նացընք Կըրթանը լաճ Գանքըլիս տունա նաննա մէ խէրօտիլ ախիլն ու-նն, էրկէն ծամերէլ, թանքիլն - մանքիլն, պանդան պէս իրիսօլ. Դնիլն, մանքիլ, իմ սիրտիս շատ կըպտալ. իս էն ախիլն ծէնէս չիմ խանքիլն: Ամմա, էտ էլ ասըմ. ուղոխքիլ էլ շատ ունն: Ի՞նչ մանալա՛նք իս իննիլի, մանքիլ»:

Դարաշա էլ ամնցալ սասց. «Իլամ, Գուրաքիլիլ ախիլի՛ էտ կընգա պանն ի. գիլնքիլ կի իննիլն, ան մանալա՛նք իս իննիլն՝ առ»:

\* Բերված է Հ. Աճառյանի «Գնդանի Մարաղայի բարբառի» աշխատությունից: էջ 326—336:

էտ էլալ անն մանալա՛նք:

Մանիլն, տարան միւր մանիլն ան տուրուն. վիցց ամըս ընցը՛ր էր միւր նիշան ախիլն, ամմա նանն էն խօրօտիլ պանդանիլ իրիսին նաննա թ մընացըմ:

Ախպը՛ր միւր էտ յօլգաշքիլն միլի ճամբըլաս խանըն. ճէս վանիլն էլալ, սասց:

— «Գնդան, տունն իշ բէկիլն իս. վիցց ամըս ի, տունն մէ չիմա-ցար նիշանա՛ծիս աըսնէլն»:

Յիս էլ ախու. ծէնիս լափ կըրիլ իմ էր. էլ ինչ անիլմ. աըսնէլն հա-սանդ չի՞ քիլ:

Մանիլն, միւր խէլքիլն մըտալ, ախպը՛ր, ամմա, ինչօ՛խ տըսնիլմ. ճէնց էն ի չանիլն, դան. Ասէլ իմ «Ասիլաճ, բա էտէնց էլ կըրայ կըրը. յիս բէյանալա, անունս ըլը նիշանա՛ծ, քի իշ մնաս տառը ըլը, իմ տըսամա, իմ իմացամա անջալ էն ի՛ իննիլ իմ նիշանա՛ծիս անունա Մարա՛նքիլն ու: Աղ-վիլիլն խօրօտիլ ի, իրիսն պանդան պէս ի, էն էլ նաննա կի իննիլ, ասէլ ինն»:

Մանիլն անէրիս կի իննիլն, Լէյլին, միլի մէ կօլայ ումուղ տուրից, սասց:

— «Փէսն, վանդան քի իշիլ յան, Մարա՛նքիլն նիշան կըտամ»: Միլնքէլ լէլա՛ն կի իննիլն, մէ օնդըրթ շանը տուրուն՝ թարգմտիլ նօղուլու, մօնդըրթ շանի տուրուն՝ խուրմայը, մօնդըրթ շանը էլ տուրուն՝ էրկու գանն աղէյ սալա նառը, տանք տիրը՛մ մէ քանիլն լալալն ըլը ըլը մէջ:

Քի իշիլն մէ էրկու սանաթ կըլը՛ր ընցիլ էր. ինձի տուրուն Գի-լասըլն (փողոցի անունն է): Ամմա ծէն-վըտըս ճէս տօղալը, ասէլ իմ՝ բառըմ սալաճ անէր տանք գըրթնն չըլըն էր. իլանըմ անէրըս՝ կըլըն-դիլն (Ղանդ), չննիլն էն գըմմընէն շունն ու:

Պասամ տուրա. շանքիլն Լէյլին իննիլ էր. ինձի պաննի ախիլն ճէս գիլն էր, տուրա թամամ չէր սօղնըկաճ. պանքըմ, մըտամնիս՝ պանքըմ... Տըսամ ճրանք-գաղ չկա... գըմմըն քի իննիլն ին կի իննիլն: տուրուն էլ կի ճէս պանն ի, չանքիլն շատ էլ նաննա ճալանիլն չը յուռալը: Սօլիլիս խանըմ, տուրուն կօլթուրու, ընցամ նիս. Ավանիլ մէ աղէյ անքա՛շ տիրըմ, տըս-սամ՝ իշիլը, գըմմըն քի իննիլն. ամմա ճէս սիրտիս թըփթըփալը քի ա-սէլ իմ՝ յարաբ էտ Լէյլին էլ քի իննիլն չըլը. բառըմ գըրթնն ըլը՛ր, մէ թանքիլն անքա՛նիս ասէր մէ պանն, յա ծէնէս գըմմընէր տանէր լափ ճէս Մարա՛նքիլն կըշտա: Ճէնց էտ ջուս խիլալալքիլն վըրցիլ էր իննիլն մուլ տէղն պըտընալալ մէքիլն առաջ կի իննիլն, մէքիլն տըսամ՝ բիր-գանն թառալ... ինքան թօնդանն: Աղիլ էր քի թօնդանն պաղ էր: Դէ բույսլ իմ թառալալու ծէնէն գըմմըն գըրթնն, Ավանիլ մէ չալըմըլ լէլամ, ուզանն տուն կիմ, տըսամ հասալթուրուն չըլըլու: Ծիլը անիլն, նօղուլ-մօղուլ, խուրմա-մուրմա, նառ-մառ, գըմմըն գիլիլալ թօնդանն:

Իմ իս թըրըպալըն գըմմըն գըրթնն. էլ հարա սանն, յէլան սաղ. կի իննիլն քի իննիլն: Անէրըս սասց «Նոյ հման, կի իննիլն», կըլընդիլն ծէն տուրից. «Շուրիս մէ ճըրաք անքէք. Լէյլի, անցամարթ, փշտօլա գանիլ ի», Լէյլին խասկըցալ. ճրանք չանք, խուրա տիրից թօնդանն պէրանա, մար-թուն սասց. «Պան չըկա, կատու էր թըրըպալը»: Մանիլն. տանք ճրանք-ն-չայ բարբառալու լուրն—24

արքն, հորն մէ դաննանց առքն, ինքն սաղ տունա շուռ էկան. մէ զազ չիգրկան. ախրբա քիթած՝ (հոգնած) ինքն գէնն քիտան.

Դէ բույոյ յար իմ հանէս խնորր առ. շունն էլ իմ հալիս չընէր. խնորր խիյալ ընցազ միաքէս, յարաբ Ասված, յիս ունչուն յիփ իմ մնալու թծնդնրն, ա՛յս կուզիմ մէ թանրով անն իկնամ թծնդնրէն, գէնն կիւզնրին տանք, ամ մնալ էլ չըրիւր. մէ քիչ էլ բանը, նանիս բույոյ լուսա կի պասովի, դէ բույոյ իշ քար քիցիմ կըլտիս. յիս կիսիմ էտ անիբազ-քիբի ծէնն. Ախ իրիսըտ սիվ ը՛լը, Լէյի խարս, էտ իշ կրակա քիցիբ ինձի: Չանաննամ, ունչուն մըկա Սարահգոմնն իրիսա չիմ էր արսը, գէնն չուգում, բանն դան... էն կէգա ը՛լը մէ տէտ իրիսի արուսով ուզդ ըլլամ. կանթ իմ արի, մէկէլ ամ կիկնամ... Բարս, վախտին Սարահգոմնն զինքն կիկնամ՝ դան, էլ ի՛նչ անիմ. սիբալ ըմ, աղվիթ ի, կրպալիմ սիբալս. էլ տա ինչ ուննամ, քի կնամ ինիմ կրակը մէչ:

էտ ջուսն խիյալաթքիբ վերցիբ էր ինձի, բերդան տըսամ թանն-դաննն խուփա վերցըն. Լէյի խարսա յազջա տասց. «Փէսն, յիլ քէլ, մէ ունն շիբ կիկնամ, էստիբ իմացանն»: Ծէնէս պըննից, ամն էկամ, թծն-դանն կննչովին, ինձի մէ թանրով քիցըմ ամն, թիքըմ դարանըս. քնն-չանցի տուռին ըռոցըմ, տըսամ պիթ շինածը, ախու կըփըլըր ին էր: Աղեկ էր՝ պատա պանցիբ չէր. շատ ցանձը էր. մէ թանրով ինձի քիցըմ քննչան. էլ ունչուն միբ տուռա քամակ էլ չըռոցըմ: էտ էլ սարիմ, պատէն թըրբպալուն փիս իմ էր ինքի, մէ յանիս վիբան. էկան՝ տուն, մէ քանի շանգանթ էլ ծամըն քիցից նաննն կարընկայիս. ախու կըլ-խիս կադան նմ դադաշիս ասըմ, նմ էլ նաննիս:

Մէ ութթ մմըս էլ ընցազ, միգի փըսակըն, Ամմա մէ տիբ Սարահ-գոմնին թանրիփ անըմ, նէն կէգո՞ ծըղգաց քի՞ տըմ. «Իրիսիս սիվ ըլլը, մըկա բույոյ կըծըղգաս, բան»:

Ախպըր. էտ ի յէլի իմ նիշանբազութինն. Դէ բույոյ յարէք, արս-նինք, մինք ինք, էր արուս հանցով, յն ան՞ քի:

ԽՈՅԻ ԲԱՐՔԱՌԱՎ (ԲԱՋԱՐՉԱՅ ԳՅՈՒՂ)

Ըլլէլ, չիլլէլ՝ մէ տուն ըլլէլ էտ տունը ապրէլ ինն օխտ ախչիկ. էտ ախչիկերին ըլլէլ մէ մէր, մէկ էլ մէ խէր, ըստանց խէրը մէննէլ, կընիկը ուրիշ մարթ ի առնէլ. Մտոթը կընգան ասէլ, «Օխտը խատ կըլո՞ծ թըլի՞ էթալ իննք ցախի»: էտ կընիկը հար ախչիկան մէ կըլո՞ծ ի թըլի, մարթի խըմայ էլ մէ կնամն. յետով վերցէլ ինն, էթան ինն ցախի. էտ մարթը ուր խետ վերցէլ մէ փէտ, մէկ էլ մէ խատ շըլէլ էթան ինն խատնէլ ինն ցախի տեղը: Ախչիկերէն մէկն ասէլ՝ «Մարավ ինն»: Խէրը վերցէլ մէ կըլո՞ծ ի կըլտօրէլ, յետով ախչիկան ասէլ, «Բամկէն կըլնա, վարդե կայնի, ընդո՞ ի կըլտօրէլ, յետով ախչիկան ասէլ, «Մարավ ինն»: Խէրը վերցէլ մէ կըլո՞ծ էլ ճուր կա, կըխըմըս: էտ լսէլ խօրը, էթան ի Ախչիկերը չըմմենով էլ էթան ինն ընդո՞ ճուր ինն խըմէլ, յետով նստէլ ինն գինջանալ ինն: Խէրը մընալ մէնակ, փետը տընգէլ, շըլէլ էլ քըցէլ վըրան, յետով էթան թիս տուն: Ախչիկերը կնն ինն, տըսնալ ինն խէրն ընդո՞ չի, ասէլ ինն.

— «Կոռը կա, կօպալը կա, դանգէն չըկա»:

\* Գրի առավ Գեղանուշ Գրեգորյանը:

Յետով էտ ախչիկերը ինն ինն սարը չ՛ծլ, շատ ինն ման կնն, վերճը խատնէլ ինն մէ կէղի, նստէլ ինն մէքն գինջանալ ինն, Յետով ախչիկերը ասէլ ինն. «Բաղցած իննք», ճու՞ չքննրն ասէլ. «Վանգիբ փըստիկ ի, անէք ընդանրն ուտէնք»: Փըստիկ քննը կըլտը տընէլ ճու՞ չքննը կուջաղը, յետօ փըստիկ քննը կննիկը քանգէլ, անն ի կնն մէ չանիչ, տալ ճու՞ չքննը, էն էլ ուտէլ, մէկ էլ ի քննգէլ, խատնէլ անն մէ աղունջ, մէկ էլ ի քննգէլ, էրէվալ մէ փանն. էդ փանն ի մէկ կապած ի ըլլէլ թաքա-վուրի ծիանքը: շար օր էդ ախչիկան էչցել ինն՝ մէ վիզրն չամիչ ի խա-նէլ, վերճը ախչիկը մէկ էլ մըննէլնն՝ պըննըլէլ. Թաքավուր ի տըղան խարցցէլ. «Ախչի տնը վանգ էք, նէրի էք էթի ստան»: Ախչիյն ասէլ. «Յեթիմ ենք, պախօզ չաննք»: Թաքավուրի տըղան զըմընըն պըննէլ տանէլ իրանց տուն, յետով խարցցէլ ասէլ. «Ախչի ծէնէտ ինչ ի կնն»: Փըստիկն ասէլ. «Յես կըպէրիմ մէ ջուխտ վուսկի-քննը վուր տըղա», Խարցցէլ ճու՞ չքննը վուր. էն էլ ասէլ. «Յէտ մէ խանն չըկուրիմ, վուր թաքավուրի կօռուք նըստի, կէսն էլ կըծալին»: Մըննէլն ասէլ. Յես էլ մէ ծըվի կըծեփի մէկ էնէնց խօռնոց կէփիմ, վուր թաքավուրի կօռուք ուտի, կէսն էլ անվընա: Փըստիկ ախչիկան էտ տըղան ասնէլ. կընիկը ճըծօլ ի մընալ. Թաքա-վուրի տըղան էթան կըրբի, Ըստան կընիկը պէրէլ մէ ջուխտ վուսկի քննը վուր տըղա. ճու՞ չքննը կննիկի կննիկնալ տանէլ մէ յաշիկի մէջ, քըցել ճու՞ չի ճըստունը, բնդանց անվաղը մէ շան ջուխտ թուլա յի տանէլ արնէլ տեղը:

Տըղայի խէրը նամակ ի կըրէլ, վուր՝ կընիկն մէ ջուխտ շան թու-լայի պէրի. Տղան կըրէլ, վուր՝ շար ինչ ի, պախէք միչնչե յես կնն: Նա-մակը իննէլ ճու՞ չքննը ճեռը, նամակը վուսկի, կըրէլ վուր՝ Այ խէր. կընգանըս տընէն անն կանիս. Խէրը խարսին տուս ի անն. կընիկը ըլլէլ անով իննէլ ճամբախ, էթան պատանի ճաղըպանի. ասէլ. «Այ կընիկ, նէր իես լան». ասէլ «Բն ինչ աննամ՝ չըլլամ, ճըմէրս վերցիբ ինն, տարիբ ինն թանիբ ինն, մէ ջուխտ շան թուլա ինն պէրի տըրի տեղը»:

Ճանդպանի խեթը կնն, ասէլ. «Ճըմէրից յես ինն պըննի, ընդօ մէր տունը»: էդ կընգան վերցէլ, տանէլ իրանց տունը, պախէլ ուրանց խըմար խարս: Ճըմերը ճու՞ չանալ ինն: Թաքավուրի տըղան կընգէլ կնն, տըս-նալ կընիկը տունը չի, ասէլ, «Այ խէր, բն կընիկն հուր ի»: Խէրն ասէլ. «Տն կըրբիբ իր, վուր կընգանս խան տնն, յես էլ խանիբ ինն»: էտ տը-ղան նըստէլ ծիս՝ իննէլ սարը-չ՛ծլ ի ման կնն, վերճը կընգան էլ, ճեթրին էլ ճարէլ. վերցէլ տանէլ իրանց տունը. յետով իմանալ, վուր կընգա ճու՞ չքննը ի սատանութուն անրի. ճու՞ չքննը մագէրը կապէլ կաթրի պու՞չէն, տանէլ սարէն, քարէն քըցէլ:

Ստանըն յետ թաքավուրի տըղան ուր կընգա խէտ ապրէլ ինն շատ աղէկ:

Պիյան մըկան պայմանա՛

Մէ գէթանն գէթ, կատըվի ախէն փախած մուկ յիլէլ նըստէլ կննն կարասի պընկին, խոտ առնէլ, պիյաննալ իննէլ մէչը:

Մուկը խեթաբվիլով աննէլ սսծուն.— Ասված ջան, էտ իշ կըրակի

՝ Տիրոսը ցույց է տալիս «Ա» և «Է» ճյուղերի խանութը:

մէջ ք'ըցիր իմը: Յէս տիկ'ն կ'իհնէ կարասը մէջը խելատըվէմ էր: Մ'ազնայ մէ կատուի պնծին էլ չէմ էր անձի: Հնր էր իմը կատուն ուտէր, քան թէ բէբաշ-բէբաբաթը կ'անրազիմ կ'իհնէ ձօվի մէջ:

էս ասէլու վնխտը գորէնդոր մէ չալ կատու կարասի պըռկէն ծէն տըվեց.— Մըկը վուէր ք'ոնը խանէմ, կըթօղնէս ք'ոնը ստեմ:

— Մէնակ մէ էտէնց լավըթուէն ան: Իմը էս զնորբբալայէն փրկի, գէն յետ իշթան կ'անգես, էնէնց էլ ան: Մէրէն ծէրը շատ վնխտ ի օքութ յըլի: Կատուն թնթը ք'ըցեց, մըկանը կարասէն խանէց, թօղէց վուէր մէ քիչ սարավուտաի (չորանա):

Մուկ ան մուկ, ըլէս, փախնես մըննես ծակը, կատուն վիզը ծուռ ըշկաց—ըշկաց, սասց.— Բը ինչ է լավ քօ սուրփ պայմանը.— Տն էլ պան ասիբ, վըրը պէրէց մուկը, — պիտան վնխտս մէ պան էր ասիմ, կըրայն ինք'ամ:

Գրեց՝ Ասլանյան Ջանիկ

Ազիզբեկովի շրջան Ազիզբեկով (նախկին Փաշայու) գյուղ

ԱՐԵՇ-ՀԱՎԱՐԻՔԻ ԲԱՐՐԱՌԸ՛

Միջնուդային բարբառ.

Արեշ-Հավարիքի բարբառով խոսել են Ազրբեջանական ՄՍՍ Արեշի շրջանի (այժմ՝ Սալզան) վեց գյուղեր, որոնք են՝ Գյանդակ, Հավարիք, Մազրդա, Սանազադ, Մամեղթավա և Արեշ գյուղերը: Այժմ այդ բարբառով խոսում են Երևանի արվարձանի Նոր-Արեշ ավանում և Ազրբեջանի սոսուլուրիկայի Սալզանի շրջանի Նոր-Նամեղթաբադ գյուղում:

Բարբառի համառոտ ուսումնասիրությունը տպագրել է հավարիքի Գ. Տեր-Պողոսյանը (Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա. և Բ. էջ 160—175) «Հավարիքի բարբառը» վերնագրով: Ավելի հարմար է կոչել այդ բարբառը «Արեշ-Հավարիքի բարբառ», որովհետև այդ բարբառով խոսող շրջանը կոչվել է Արեշի շրջան:

Արեշի կամ Հավարիքի բարբառը մի շարք հատկություններով հիշեցնում է Ղարաբաղի բարբառը, բայց ավելի շատ հատկություններով Ղարաբաղի բարբառը:

Արեշ-Հավարիքի բարբառը մեծ հեռաքրքրություն է ներկայացնում նրանով, որ իր սկզբունքային փերականական ձևի՝ ներկայի կազմության մեջ ունի խոշոր նորություն. «Ում» ճյուղի բոլոր բարբառների խոնարհման մեջ «ում» վերջավորությունը գրվում է բայանիմքի վրա, իսկ Արեշ-Հավարիքի բարբառում ներկայի առաջին գեմքը կազմվում է ընդհանուր լեզվի անկատար գերբայի երկրորդական ձևով և օժանդակ բայով՝ փրկելիս ըմ, մյուս բոլոր գեմքերում «ում» գերբայական վերջավորությունը գրվում է անորոշ գերբայի վրա (փրկելում ըս, գրելում ա), Ուրեմն Արեշ-Հավարիքի բարբառը «փրկելում» ներգոյական ձևին հավասարեցնում է «փրկելիս» ձևը, որով հաստատում է այս ձևի ներգոյական լինելը: Արեշ-Հավարիքի բարբառի բաղաձայնական սիստեմը եռասարձան է, անտեղաշարժ է, այսինքն՝ «Ս» ճյուղի բարբառների մեծ մասի նման է և նույն է մեր ժամանակակից

՝ Ուսումնասիրությունը կատարված է Ստեփանյան Փասանձեմի (հավարիքի) օգնությամբ:

գրական ընդհանուր լեզվի հետ: Բարբառում կա գրական լեզվի բոլոր ձայնավորները, այլև «ն», «ծ», «ն» վերին բարձրության ձայնավորներ, սակայն գրանք պատահում են շատ քիչ գեպքերում. օրինակ՝ ձնի>ձու, ջնր>ջուր, բնրդ>բուրդ, գծք>գուք, գննակ>գանակ:

Մի շարք բառերում «ա»-ն վերածվում է օ-ի. գարի>գ'օրի, գամ>գ'օմ և այլն:

Բարբառն ունի ը կոշտ ձայնավորը՝ նման Ղարաբաղի բարբառին: Բարբառում կա փ, կ, ք՝ քմային բաղաձայնները, օրինակ՝ կ'անրմ>

>կարողանում, կ'անպիտ>կապույտ, փ'ամ>գամ և այլն:

Պ հնչյունը արտասանվում է «փ», օրինակ՝ փանար>փաննու:

Երկբարբառները վերածվել են պարզ հնչյունների, օրինակ՝ էստէ>

>այստեղ, էնդէ>այնտեղ:

«Ոյ» երկբարբառը վերածվել է «ի» հնչյունի. քոյր>քեր, լոյս>լիս: Հեռաքրքրական է ձիւն, արիւն և սիւն բառերի փոփոխությունը. ձիւն լի-նում է ձիվ, որ գրաբարյան «իւ» երկբարբառն է, պահպանվել է վերջին ն-ի կորուստով: Արիւն լինում է յէորն, իսկ՝ սիւն>սնթնն:

Պարանոթյուն

Արեշի բարբառի հոգնակին է «էր», իսկ ձայնավորով վերջացող բառերի համար՝ «էք»: Բարբառում չկան հոգնակի «ներ» վերջավորություն ունեցող բառեր: Բազմազանի բառերն էլ ստանում են «էր» հոգնակի. օրինակ՝ քաղաք—քաղաքէր, հայաթ—հայաթէր:

Արեշ-Հավարիքի բարբառն ունի 7 հարվ. Բացառական հոլովն ունի «ան» կամ «յան», իսկ գործիական հոլովը՝ «օ» վերջավորություն: Վերջինս գրաբարի «աւ» երկբարբառից առաջացած հայերենի սովորական «օ» հընչյունն է: Գոյականների մեծ մասը պատկանում է «ի» հոլովման: Սեռականն ստանում է «ն» հոգը:

Եզակի

Ուղղ.	պատ (ը)	տարի(ն)
Սեռ.	պատի (ն),	տարիի(ն)
Տր.	պատի (ն),	տարիի(ն),
Հայց.	պատ(ը)	տարի (ն)
Բաց.	պատան,	տարիյան
Գործ.	պատօ,	տարիյօ
Ներգ.	պատրմ կամ պատի մծջնմբ	տարիյիմբ կամ՝ տարիի մծջննմբ

Հոգնակի

Ուղղ.	պատէր (ը)	տարիէր(ը)
Սեռ.	պատէրի (ն)	տարիէրի (ն)
Տր.	պատէրի(ն)	տարիէրի (ն)
Հայց.	պատէր(ը)	տարիէր(ը)

Բաց.	պատէրան	տարիյէրան
Գործ.	պատերօ	տարիյէրօ
Ներգ.	պատէրըմ(ը) կամ՝ պատէրին մ՛ջնմը	տարիյէրըմ(ը) կամ՝ տարիյէրին մ՛ջնմը

ԹՎԱԿԱՆՆԵՐ

Մին, յարկու, հիրէք, չօրս կամ չօրք, հինգ, վէց, յօթ, կամ յէխար կամ օխտը, ութ, իննը, տասը, տասնըմէկ, տասնյարկու և այլն: Քսան, յառսուն, քառասուն, իծծուն, վաճճուն, օխտանասուն, ութասուն, իննասուն, հարսը, յարկունարսը, հիրէք հարսը և այլն:

Դասական թվականները կազմվում են քանակականների վրա աղբյուրական «ինջի» անանցն ավելացնելով՝ յարկուինջի, հիրէքինջի և այլն:

ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ուղղ.	յէս,	դս
Սեռ.	իմ	քու
Տը.	ինձի	քէզ (քէ)
Հայց.	ինձի	քէզ (քէ)
Բաց.	ինձիհն	քէզանն (քէնն)
Գործ.	ինձիհնօ (ինձանօ)	քէզննօ (քէննօ)
Ներգ.	ինձանըմը	քէզննըմը (քէննըմը)

Ուղղ.	մէք	դսք, դօք՛
Սեռ.	մէր	ձէր
Տրակ.	մէզ	ձէզ
Հայց.	մէզ	ձէզ
Բաց.	մէզանն	ձէզանն (ձէզնն)
Գործ.	մէզաննօ	ձէզննօ (ձիզնօ)
Ներգ.	մէզաննըմը	ձէզաննըմը

Յուցական դերանուններ

Եզակի

Ուղղ.	սա, էսա	տա, էտա	հա, էհա
Սեռ.	սարա	տարա	հարա
Տը.	սարա	տարա	հարա
Հայց.	սարա	տարա	հարա
Բաց.	սառնա, սարանա	տառնա, տարանա,	հառնա, հարանա
Գործ.	սառնօ, սարանօ	տառնօ, տարանօ	հառնօ, հարանօ
Ներգ.	սառնըմը, սարանըմը	տառնըմը, տարանըմը	հառնըմը, հարանըմը

Հոգնակի

Ուղղ.	էսանք, սըհանք	էտանք, տըհանք	էհանք, հըհանք
Սեռ.	սըհանց	տըհանց	հըհանց
Տը.	սըհանց	տըհանց	հըհանց

Հայց.	սըհանց	տըհանց	հըհանց
Բաց.	սըհանցա	տըհանցա	հըհանցա
Գործ.	սըհանցնօ	տըհանցնօ	հըհանցնօ
Ներ.	սըհանցնըմը	տըհանցնըմը	հըհանցնըմը

Հարցական դերանուններ

Ուղղ.	հօ՞վ,	հի՞նչ
Սեռ.	հո՞ւր	հի՞նչի (ն)
Տը.	»	»
Հայց.	հո՞ւր	հի՞նչ
Բաց.	հո՞ւրնն,	հի՞նչնն
Գործ.	հո՞ւրննօ,	հի՞նչննօ
Ներգ.	հո՞ւրննըմը,	հի՞նչննըմը

Հոգնակի

Ուղղ.	հօվքէր, հի՞նչէր
Սեռ.	չունի հինչէ՞րի և այլն:

Խոնարհում

Արեշ-Հավարիքի բարբառն ունի երկու խոնարհում՝ էլ և ալ, ունի սահմանական եղանակի բոլոր ժամանակները, բացի վաղակատար ժամանակներից: Բարբառումս հարակատար ժամանակները գործ են անվում և՛ վաղակատարի, և՛ հարակատարի փոխարեն:

Սահմանական եղանակ

Ներկա

Կիրելիս ըմ	գ՛նրգանիս ըմ	Հարվագյուտ հասե՛
Գ՛իրէլըմ ըս	գ՛նրգանլըմ ըս	Գ՛իրէլի յիմ, գ՛նրգանլի յիմ
Գ՛իրէլըմ ի	գ՛նրգանլըմ ի	Գ՛իրէլըմ ըս, գ՛նրգանլըմ ըս
Գ՛իրէլըմ անք	գ՛նրգանլըմ անք	» ի, » ի
Գ՛իրէլըմ աք	գ՛նրգանլըմ աք	և այլն, և այլն:
Գ՛իրէլըմ ան	գ՛նրգանլըմ ան	

Անցյալի անկատար ձևերի մեջ օժանդակ բայի «ի»-ն կորչում է և մնում է ձայնակապ «յ»-ն:

Գ՛իրէլըմ էյ	գ՛նրգանլըմ էյ
Գ՛իրէլըմ էյր	գ՛նրգանլըմ էյր
Գ՛իրէլըմ էր	գ՛նրգանլըմ էր
Գ՛իրէլըմ էյնք	գ՛նրգանլըմ էյնք

գ'իրէլըմ	էյք	գ'անրգանլըմ	էյք
գ'իրէլըմ	էյն	գ'անրգանլըմ	էյն

Ապառնի

Ապառնին բաղադրվում է օժանդակ բայով և մի գերբայով, որ կազմվում է անորոշ գերբայից՝ վրան ավելացնելով ա (ան) վերջավորությունը (գ'իրէլան, գ'անրգանլան):

Ապառնի է կազմվում նաև աջուկ վերջավորություն ունեցող գերբայով

գ'իրէլան յըմ	գ'անրգանլան յըմ	գ'իրէլանցուկ ում	գ'անրգանլանցուկ ում
գ'իրէլան յըս	գ'անրգանլան յըս	» ըս	» ըս
գ'իրէլան յի	գ'անրգանլան յի	» ի	» ի
գ'իրէլան յանք	գ'անրգանլան յանք	» անք	» անք
» յաք	» յանք	» աք	» աք
» յան	» յան	» ան	» ան

Անցյալի ապառնի

գ'իրէլան	յէյ	գ'անրգանլան	յէյ	գ'իրէլանցուկ էյ
»	յէյր	»	յէյր	» էյր
»	յէր	»	յէր և այլն	» էր
	և այլն.			և այլն.

գ'անրգանլանցուկ էյ
» էյր
էր
և այլն

Սանավազն ու Մամէգթավան սպառնին կազմում են ախան վերջավորություն ունեցող գերբայով:

Վաղակատար-հարակատար

գ'իրանն ըմ—գրել եմ, գրած եմ և այլն
» ըս
» ի
» անք
» աք
» ան

Վաղակատար-հարակատար

գ'անրգանլանն ըմ—կարգացել էի, կարգացած էի և այլն:
» ըս
» ի
» անք

գ'անրգանլանն աք
» ան

Անցյալի վաղակատար և հարակատար

գ'իրած էյ	գ'անրգանլանն էյ
գ'իրանն էյր	» էյր
գ'իրանն էր	» էր
և այլն	և այլն.

Վաղակատար ժամանակները խոսքառ բացակայում են:

Շրջուն շարադասության ժամանակ, երբ օժանդակ բայն բնկնում է գերբայից առաջ, հարակատար գերբայը կորցնում է իր վերջավորության «ծ» հնչյունը. օրինակ՝ Դուռն ան կուտրա—դուռն են կուտրած:

Անցյալ կատարյալ ժամանակը նման է գրականին, նշանակում է թե գրական լեզվից էլ յուրացրել է:

գ'իրէցի	գ'անրգանլի	գ'իրէցինք	գ'անրգանլինք
գ'իրէցիր	գ'անրգանլիր	գ'իրէցիք	գ'անրգանլիք
գ'իրէց	գ'անրգանլ	գ'իրէցին	գ'անրգանլին

Ըղծական եղանակ

Ապառնի

Անցյալ ապառնի

գ'իրիմ	գ'անրգանլիմ	գ'իրէյի	գ'անրգանլիի
գ'իրիս	գ'անրգանլիս	գ'իրէյիք	գ'անրգանլիիք
գ'իրի	գ'անրգանլի	գ'իրէր	գ'անրգանլի
գ'իրանք	գ'անրգանլանք	գ'իրէինք	գ'անրգանլիինք
գ'իրանք	գ'անրգանլանք	գ'իրէյիք	գ'անրգանլիիք
գ'իրանն	գ'անրգանլանն	գ'իրէին	գ'անրգանլիին

Պայմանական եղանակը կազմում է բոլորովին նման Դարագաղի և Ազուլիսի բարբառին. «կը» եղանակիչը բոլորովին բացակայում է և ըղծականի ձևերը չեն օգտագործվում:

Պայմանական եղանակը կազմելու համար անվում է անորոշ գերբայը և վրան ավելացվում է համապատասխան օժանդակ բայի ձևերը:

Ապառնի

գ'իրէլ ըմ—կգրեմ	գ'անրգանլ ըմ—կկարդամ և այլն
» ըմ	» ըմ
» ի	» ի
» անք	» անք
» աք	» անք
» ան	» ան

Հարկադրական եղանակը կազմում է ըղծական եղանակից՝ ավելացնելով պիտէլիմի կամ պիտի եղանակիչը. օրինակ՝ պիտի գ'իրիմ, պիտի



գանձում: Պիտի գիրքիս, պիտի գանձումս և այլն, կամ՝ պիտեղիմ ի գիրքիմ, պիտեղիմ ի գիրքիս, պիտեղիմ ի գիրքի և այլն: Պիտեղիմ ի ի գանձումս, պիտեղիմ ի գանձումս, պիտեղիմ ի գանձումս և այլն:

Անցյալի ապառնի

պիտեղիմ ի կամ՝ պիտի գիրքէյի, պիտեղիմի կամ՝ պիտի գանձումի  
» » պիտի գիրքէյի, պիտեղիմ ի կամ՝ պիտի գանձումի և այլն:  
Թվում է, թե ըղձականի անցյալի ապառնին, ինչպես և հարկադրա-  
կանի անցյալի ապառնին նորութունն է այդ բարբառի մեջ, որովհետե  
օժանդակ բայի «ի» վերջավորութունը չի ենթարկվում բնականոր  
օրենքին: Համարականն է՝ անցյալ կատարյալի նման առնված է բնականոր  
լեզվից:

Հրամայական

Գիրքի՛ գանձում  
գիրքէյէք՝ գանձումէք

Արեշ-Հավարիքի բարբառն ունի նաև շարունակական, որ կազմվում է  
է հարաբարդի բարբառի նման անորոշ գերբայի գործիական հարվածակով,  
բայց իրեն հատուկ օրենքի համապատասխան գործիականի «աւ» վերջա-  
վորութունը դառնում է «օ»:

Ապառնի

Անցյալի ապառնի

Գիրքի՛մ յըմ	գանձումի յըմ	գիրքի՛մ յէյ	գանձումի յէյ
» յըս	» յըս	» յէյր	» յէյր
» յի	» յի	» յէր	» յէր
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Ժխտական խոնարհում

Ժխտական խոնարհումը կազմում է կամ «չ» կամ «վօչ» մասնիկով,  
«Չ» մասնիկը գրվում է բազմաբայի ձևերի մեջ օժանդակ բայի վրա,  
իսկ «վօչ» մասնիկը գրվում է պարզ ձևերի վրա՝ միայն հետադաս:

Սահմանական եղանակ

Ներկա

գիրքէլիս չըմ—չեմ գրում	գանձումիս չըմ—չեմ կարգում
գիրքէլըմ չըս—չես գրում	գանձումիլըմ չըս և այլն.
գիրքէլըմ չի և այլն.	գանձումիլըմ չի
գիրքէլըմ չանք	գանձումիլըմ չանք
գիրքէլէմ չաք	գանձումիլըմ չաք
գիրքէլէմ չան	գանձումիլըմ չան

Ապառնի

Անցյալ ապառնի

գիրքէլի՛մ չըմ գանձումի՛մ չըմ գիրքէլի՛մ չըս գանձումի՛մ չըս և այլն.

Անցյալ ապառնի

գիրքէլի՛մ չէյ գանձումի՛մ չէյ գիրքէլի՛մ էյր գանձումի՛մ չէյր  
և այլն. և այլն. և այլն.  
Այսպես և մյուս ժամանակները:

Անցյալ կատարյալ

գիրքէցի վօչ գանձացի վօչ  
գիրքէցիլը վօչ և այլն. գանձացիլը վօչ և այլն.

Ըղձական եղանակ

Ապառնի՛ գիրքիմ վօչ գանձում վօչ  
գիրքիս վօչ և այլն գանձումս վօչ և այլն.

Պայմանական եղանակ

Ապառնին ստանում է «չ» մասնիկը օժանդակ բայի վրա.  
Ապառնի՛ գիրքէլ չըմ—չեմ գրի և այլն. գանձում չըմ—չես կարդա և այլն:  
գիրքէլ չըս գանձում չըս  
» չի և այլն.

Հարկադրական եղանակը ստանում է վօչ մասնիկը հետագաս.

պիտի գիրքիմ վօչ պիտի գանձում վօչ  
պիտի գիրքիս վօչ պիտի գանձումս վօչ և այլն.  
և այլն.

Անցյալի ապառնի

պիտի գիրքէի վօչ պիտի գանձումի վօչ  
պիտի գիրքէիլը վօչ պիտի գանձումիլը վօչ և այլն.

Հրամայական եղանակ

գիրքէլ մի գանձում մի  
գիրքէլ մեք գանձում մեք

Պատճառական բայեր

Պատճառական բայերն ստանում են ա՛ցուր կամ ցուր կերպածանցը:  
Հրամայականը լինում է կամ ացուրով կամ ացուր վերջավորությամբ

Սահմանական եղանակ

Ներկա

նստացուրէլիս ըմ նստացուրէլըմ ըս նստացուրէլ ըմ ի և այլն.

Անցյալի անկատար

նստացուրէլըմ էյ նստացուրէլըմ էյր և այլն.

Ապառնի՛ նստացուրէլա յըմ և այլն.

Վաղակատար-հարակատար՝ նստացուրած ըմ և այլն.

Անցյալ կատարյալ՝ նստացուրէցի, նստացուրէցիլը, նստացուրէց և այլն.

Ըղձական ապառնի՝ նստացուրում, նստացուրիս, նստացուրի, նստացուրանք, նստացուրաք, նստացուրան:

Պայմանական ապառնի՝ նստացուրել ըմ նստացուրելըս և այլն:

Հարկադրական ապառնի՝ պիտի նստացուրում և այլն:

Հարկադրական անցյալի ապառնի՝ պիտի նստացուրէի և այլն:

Հրամայական եղանակ՝ նստացուրու կամ նստացուր:

Նստացուրէք կամ նստացուրէ՛ցէք:

Ժխտական՝ նստացնէլ մօք, նստացունէլ մօք:

Ինչպես երևում է Արեշ-Հավարիքի բարբառի ամբողջ նկարագրությունից, այս բարբառը իր մի շարք հատկանիշներով հիշեցնում է «Ս» ճյուղը:

1. «Ս» ճյուղի բարբառների նման այդ բարբառն ունի եռաստիճան անտեղաշարժ սխեմա:

2. «Ս» ճյուղի բարբառների նման կորցրել է վաղակատար ժամանակների ձևը և հարակատարն օգտագործում է վաղակատարի և հարակատարի տեղը:

«Ս» ճյուղի բարբառների նման «կը» եղանակիչով պայմանական չի կազմում, այլ անորոշ դերբայի օգնությամբ:

Նշանակում է այս բարբառը զաղթել է Ղարաղաղից և ապա ընկել Ղարաբաղի և մասամբ Արարատյան բարբառի ազդեցության ներքո, ընդունել է «ու» վերջավորությամբ անկատար դերբայը կազմելու հատկությունը բոլոր դեմքերում, բացի առաջին դեմքից, որտեղ պահպանել է իր մայր բարբառի հատկությունը: Գիրքչիս ըմ, գիրքչիս ըմ և այլն):

Այս ձևով Արեշ-Հավարիքի բարբառը դարձել է միջճյուղային բարբառ:

**Նմուշ Արեւ-Հավարիքի բարբառով՝**

Մին օր մին անթախտեցի, ձի նընդնած, դ'օրում ի Յըզնա: Չին քիշելըմ դոնդ քօրփիլըմք բիս կանալըմ: Տիսանէլիմ ի էստէ իսկի մէծ մարդիք չըկան: Մինջմ մին քանի տրախէք ան թօփ իլա, հաղ ան անլիմ: Աքանէցին ձիլին վիրանկը հըմպարդ-հըմպարդ նըստած՝ ձէքէրն էլ չանանին տակին դայաղ առվամ հարցունէլիմ ի թա՝

- Ա՛յ արդէրք, բն ձէր աղսախկալիլըր հօ րտէ յան:
- Տըզնքըր ջուղաբ ան տալըմ թա՝
- Յերթած ան բաղը փայա բէրան չանանիդ տակին դայաղ տան:
- Աքանիսէցին մառվէլիմ ի, ամմա դէ իսկէ էլ ինքն ի ուզելըմ տընաղ տա ցըզնացօց, սակիլմ ի:
- Օղօ՛րթ ի, վօր էստէ մէշկ ան մառելըմ:
- Ակննէրըդ էլ չան հանէլըմ:
- Աքուլէցին մըթկ ի յանլըմ, թա էստէ արախէքը վօր իստան բնզղանթ ան, բաս սըհանց մէծէրը հինչար ան ինէլ, — քիշէլիմ ի ձին, հընցանէլըմ գՕլում:

<sup>1</sup> Գ. Տ. Պօղոսեան, Հավարիքի բարբառը, Բանբեր Հայաստանի գիտական-ինստիտուտի Գիրք Ա. և Բ., էջ 160:

**6. «Կը» ճՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ**

«Կը» ճյուղին պատկանող բարբառների թիվը բավական մեծ է՝ համեմատած մյուս ճյուղի բարբառների հետ: Հ. Աճառյանի դասակարգումով դրանց թիվը 24 է: Այդպես է նաև մեր եզրակացությունը, միայն սրտ բարբառների աարբերությամբ: «Կը» ճյուղի բարբառների մեծ մասը քիչ է ուսումնասիրված կամ բնավ չի ուսումնասիրված, ինչպես օրինակ՝ Տիգրանակերտի, Շապին-Պարահիսարի, Տրապիզոնի, Այուրիայի, Զմյուռնիայի, Նիկոմիդիայի և Ռոդոսոսի բարբառները:

Հայտնի բարբառներից ուսումնասիրության ենթակա են եղել հետեվյալները: Սուչավայի, Նոր Նախիջևանի, Պոլսի, Համշենի, Վանի<sup>1</sup> (Հ. Աճառյան), Եվդոկիայի (Յ. Գաղանճեան), Ակնա (Մաքսուդյան), Կարնո (Հ. Մկրտչյան) և Արարիքի (Մելիք Ս. Դավիթ Բեկ): Այս ուսումնասիրված բարբառներից բացի «Կը» ճյուղի մնացած բարբառների մանրամասն նկարագրություն տալը առավել հնարավոր չէ: «Կը» ճյուղի բարբառներից ամենահին ուսումնասիրությունը պետք է համարել Պոլսի բարբառի ուսումնասիրությունը, որ կատարել է Միթթար Աբբան, որը նպատակ է ունեցել տալու Պոլսի բարբառի քերականությունը. այդ ուսումնասիրությունը կատարված է տաճկերեն լեզվով և չի կրում լեզվաբանական ուսումնասիրություն բնույթ, ուստի այդ գործով Պոլսի բարբառի մասին շատ մեծ գաղափար կազմել չի կարելի:

Միջին հայերենի աշխարհաբար տարրը պետք է համարել «Կը» ճյուղի բարբառներին պատկանող, սակայն նկատի ունենալով եղած ուսումնասիրությունների անկատարությունը, դժվար է ամեն դեպքում սրտել, թե միջին հայերենով գրողները «Կը» ճյուղի որ բարբառն են օգտագործել իրենց գրվածքների մեջ, Շատ սրտ հայտնի է միայն, որ Կիլիկիայի միջին հայերենը հենվել է Կիլիկիայի բարբառների վրա:

«Կը» ճյուղի բարբառներով տեքստեր շատ կան, առանձնապես դրանք շատ են 19-րդ դարի սկզբներից սկսած:

«Կը» ճյուղի բարբառները, մեծ տարբերություններ ներկայացնելով, ունեն հետևյալ հիմնական ընդհանուր գծերը:

1. Ներկայի և անցյալի անկատար ժամանակները կազմում են «Կը» ճյուղի մասնիկով, որ ունենում է կը, գու, գը, գի, գո, կու և նման ձևեր. օրինակ՝ կը սիրէմ, գը սիրէմ, գի սիրիմ և այլն:
2. Սեռական հարվը ստանում է ճ հոլը, բացի մի երկու բարբառից (Վան և այլն):
3. Հոգնակին ենթարկվում է «ու» հարվման (բացի Վանի և Մոկաց բարբառներից):

<sup>1</sup> Հ. Աճառյան, Բնություն Վանի բարբառի, 1953 թ., Երևան:

4. Բացառական հոլովն ունենում է «է» վերջավորութիւնը, բացի Վանի և Մոկաց բարբառներից:

5. Վաղակառար դերբայը կազմվում է «ը» վերջավորութիւնով: Այդ բոլոր նմանութիւնների մեջ, սակայն, ամենակարևորը և վճարահանը ներկայի կազմութիւնն է, որ աչքի է ընկնում և անմիջապէս գատում «Կը» ճյուղի բարբառը մյուսներից:

«Կը» ճյուղի բարբառներն ունեն միմյանցից բավական մեծ տարբերութիւններ, առանձնապէս դերանունների հոլովման, մասամբ և գոյականների հոլովման, իսկ հատկապէս հնչյունական սիստեմի մեջ:

Կան բարբառներ, որոնց հիմնական տարբերութիւնը միայն հնչյունական սիստեմի մեջ է և եթէ հոլովման կամ խոնարհման մեջ էլ կան տարբերութիւններ, ապա այդ առաջ է գալիս հնչյունական տարբերութիւնների հետեանքով:

«Կը» ճյուղի բարբառները հնչյունական սիստեմով ներկայացնում են բազմաթիւ այլազանութիւններ: Բաղաձայնական սիստեմի բոլոր տեղաշարժերը կարելի է գտնել «Կը» ճյուղի բարբառների մեջ, Առաջին տեղաշարժին ենթարկվում է Վանի բարբառը, երկրորդ տեղաշարժին ենթարկվում են մնացած բոլոր բարբառները, բացի Կիլիկիայի և Անտիոքի շրջանի բարբառներից, որոնք ենթարկվում են տեղաշարժ-տեղափոխութիւն:

Երկրորդ տեղաշարժի հետեանքով առաջացած երկաստիճան խլազուրկ սիստեմ ունեն տասը բարբառ, որոնք մինչև առաջին համաշխարհային պատերազմը աշխարհագրորեն դասավորված էին Փոքր Ասիայի հարավում և հյուսիսում, ըստ որում հյուսիսի խումբը ձայնեղները թողնում է անշարժ, խուլերը վերածում ձայնեղների, իսկ հարավի խումբը ձայնեղները ենթարկում է առաջին տեղաշարժին, վերածելով նրանց շնչեղ խուլերի, իսկ խուլերը վերածում է ձայնեղների: Այդ երկու խմբի բարբառները քերականութիւնով միմյանց բավական նման են, երկաստիճան խլազուրկ բարբառների հյուսիսային խմբին պատկանում են Տրապիզոնի, Եվդոկիայի, Ղրիմի (Նոր Նախիջևանի), Մարաշի և Պոլսի բարբառները, իսկ երկաստիճան խլազուրկ սիստեմի հարավային խմբին պատկանում են Տիգրանականերտի, Մայաթիայի, Ռոզոստայի, Օրգուի և Նիկոմիդիայի բարբառները: Ըստ այսմ Նիկոմիդիայի բարբառը թեև Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքումն է, բայց ընկնում է հարավային խմբի մեջ: Իր քերականութիւնն արևմտյան գրական լեզուն վերցրել է հիմնականում հյուսիսային խմբի բարբառներից, իսկ հարավային խմբի բարբառներից վերցրել է իր արտասանութիւնը կամ հնչյունական սիստեմը, այդ պատճառով էլ արևմտյան գրական լեզուն պատկանում է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմի հարավային խմբին, օրինակ՝ Գաղուն փերանք փաց արավ, Կարաբեղը գուգէ իր քիքքը: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Փոքր Ասիայի արևելյան նահանգներում էր դասավորված հայերեն բարբառների այն խումբը, որ բաղաձայնական սիստեմը ենթարկում է երկրորդ տեղաշարժին: Այդ բարբառների ձայնեղները վերածվում են շնչեղ ձայնեղների, իսկ խուլերը ձայնեղների, որի հետեանքով ստացվում է եռաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ:

բ'—բ—փ	ձ'—ձ—ց
գ'—գ—թ	ջ'—ջ—չ
զ'—զ—ը	

Այսպիսի բաղաձայնական սիստեմ ունեն Ակնա, Խոտբուրի, Արարկի-րի, Սերաստիայի, Խարբերդ-Երզնկայի, Շապին-Գարահիսարի և Համշենի բարբառները: Վերջինս գտնվել է Փոքր Ասիայի հյուսիսում: Գրանից բացի այդ խմբին են պատկանում Հայաստանից և Փոքր Ասիայից գուրս գտնուված Մյուրիայի և Սուշավայի (Արտիալի) բարբառները, որով կարելի է ենթադրել, թե այդ բարբառները տեղափոխվել են իրենց սիստեմակից բարբառների միջավայրից՝ հիմնականում Արևելյան Փոքր Ասիայի միջին նահանգներից:

Այսպիսով, «Կը» ճյուղի բարբառների մեծ մասն ունի բաղաձայնական խլազուրկ սիստեմ. դա այնքան շատ բարբառների հատկութիւնն է, որ առաջին հայացքից թվում է, թե «Կը» ճյուղի բարբառների ընդհանուր հատկանիշն է: Բայց «Կը» ճյուղի բարբառներից երեքը պատկանում են քառաստիճան սիստեմին, այսինքն դրանց բաղաձայնական սիստեմը ենթարկվում է երկրորդ լրիւ տեղաշարժի: Այդ բարբառներն են Մշո, Կարնո և Ոգմի բարբառները: Բաղաձայնական սիստեմով դրանք նմանվում են «Ում» ճյուղի երկու հիմնական բարբառներին՝ Արտրատայան և Նոր-Ջուղայի: Այսպիսով, Կենտրոնական Հայաստանի հիմնական բարբառները պատկանում են բաղաձայնների քառաստիճան խմբին: Այս վերլուծութիւնից կարող ենք մի եզրակացութիւն անել, դա այն է, որ բաղաձայնական սիստեմով նման բարբառները միմյանց հարևան են եղել, աշխարհագրորեն մոտիկ դասավորված, ուստի եթէ դրանցից մեկը կամ երկուսը գտնուում ենք այժմ ավելի հեռու և կամ շատ հեռու, պետք է ենթադրել, որ գաղթած են այդ միջավայրից: Բաղաձայնական սիստեմի ճյուղավորումներն առաջացել են պատմականորեն, այդպէս է եղել նաև ձևաբանութիւնը, սակայն, ըստ երևույթի, բաղաձայնական սիստեմի ճյուղավորումներն ստեղծվել են ավելի հին ժամանակներից քան ձևաբանական տարբերակումները:

Բաղաձայնական սիստեմի մեծ տարբերութիւնները, մեր կարծիքով, հայերենի կողմից հաղթված նախկին տոնական լեզուների վերապրուկ են, որ գեոչեն անհայտացել, և դրա հետեանքով էլ պահպանվել է բարբառայնութիւնն ընդհանրապէս: Չի կարելի ժխտել, որ ձևաբանական կատեգորիան ևս ինչպէս և բառապաշարային տարբերութիւնները բարբառայնութիւնը պահպանելու հիմնական պատճառներից են: «Կը» ճյուղի բարբառների մեջ կան այնպիսիները, որոնց բաղաձայնական սիստեմը որևէ տեղաշարժի չի ենթարկվում, այսինքն՝ ունեն այնպիսի սիստեմ, ինչպիսին Թբիլիսիի, Ղարաբաղի, Արզնի-նի, Ազուլիսի, Մեղրու և Կարճևանի բարբառներն են, որոնց բաղաձայնական սիստեմը գրաբարանման է: Այդ բարբառներն են՝ Դիպլինի, Ամասիայի և Մոկաց:

1. ՎԱՆԻ ԲԱՐՔԱՌԵ

«Կը» նյութի երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սխառն ունեցող Հնչյունաբանություն

Վանի բարբառը պատկանում է «Կը» ճյուղի երկաստիճան ձայնեղազուրկ խմբին:

Վանի բարբառը ձայնավորով հարուստ բարբառներից է, ունի՝ ա, օ, է, ե, ի, ս, օ, օ, օ, ու, օ:

Գործ.	միզնուով	ծինուով	անձնցմուով

Այսպէս, այդպէս, այնպէս դերանունները լինում են տրրգաս, տրրգատ, տրրգան (երևի՛ «դիր գայս», «դիր գայն» իմաստով). հոգնակի՛ տրրգանունք, տրրգադունք, տրրգանունք. Այսքան, այդքան, այնքան դերանունները լինում են՝ քանգաս, քանգատ, քանգան (քան գայս, քան գայդ քան գայն): Հարցական՝ ուվ, օ՞մ, ումձէնէ. չո՞ (ինչ), չո՞նց (ինչպիսի):

Թվականներ

Մեկ, ըրկօք (նաև ըրկը), ըրք, չուրս (նաև՝ չուք), իէնգ, վից, յութը, օթը, էննը, դուսը, դըսնըմէկ, դըսվըրգօք, դըսվըրք, դըսնըչուրս, դըսնը՝ իէնգ, դըսնըվից, դըսնըյութը, դըսնըվօթը, դըսնըվէննը, քսուն, յարսօն, քսոսօն, յիսօն, վանցօն, մյուս տասնյակները թուրքերեն են, և հարէր. 11—20 թվականների մեջ «ասար» բառից հետո «վ» է լինում այնտեղ, որտեղ միավորն սկսվում է ձայնավորով, ճիշտ ինչպէս միջին հայերենում. Նշանակում է տասնավորը միավորին միացել է «ու» շարկապով. օրինակ՝ տասն ու մեկ>դըսնըմէկ, տասն ու երեք—դըսնըվըրք:

Խ ո ն ա ր հ ու մ

Բարբառում բարբառային բառերը անորոշ դերբայում ունենում են միևնույն «ի» վերջավորությունը. օրինակ՝ եփել > իփիլ, կարթալ > գարթիլ, մնալ > մնիլ, խաղալ > խաղիլ և այլն:

Միավանկ բայերն սկզբից ստանում են «ու». ուզիլ > գալ, ուլիլ > ւալ. առաջին բայը լինում է գլխի:

Բարբառը պատկանում է «կա» ճյուղին, «կա» մասնիկն ունի «գու» ձևը, որ առաջացած պիտի լինի՝ գա > գու:

Խ ո ն ա ր հ ու մ

Սահմանական եղանակ

Ն ե ր կ ա

գու կըրիմ (գրում եմ)	գու գարթում (կարդում եմ)	գու նսգէմ (նստում եմ)
գու կրիս	գու գարթուս	գու նսգէս
գու կրիի	գու գարթօ	գու նսգա
գու կրինք	գու գարթունք	գու նսգէնք
գու կրիք	գու գարթաք	գու նսգաք
գու կրին	գու գարթուն	գու նսգէն

գուլում (լալիս եմ)	գուկում (գալիս եմ)
գուլուս	գուկուս
գուլօ	գուկօ
գուլունք	գուկունք
գուլաք	գուկաք
գուլուն	գուկուն

Անցյալի ձևերը կազմվում են Գեսաբի բարբառի նման, այսինքն «էր» մասնիկն ավելանում է խոնարհվող բայի հիմքին և կազմում դերբայ, որի հետ խոնարհվում է օժանդակ բայն «ի» արմատով:

Անցյալի անկատար

գու կրէր է (գրում էի)	գու գարթէր է (կարթում էի)	գու նսգէր է (նստում էի)
գու կրէր իս	գու գարթէր իս	գու նսգէր իս
գու կրիբ	գու գարթիբ	գու նսգիբ
գու կրէր ինք	գու գարթէր ինք	գու նսգէր ինք
գու կրէր իք	գու գարթէր իք	գու նսգէր իք
գու կրէր ին	գու գարթէր ին	գու նսգէր ին

գուլէր է (լալիս էի)	գուկէր է (գալիս էի)
գուլէր իս	գուկէր իս
գուլիբ	գուկիբ

գուլէր ինք	գուկէր ինք
գուլէր իք	գուկէր իք
գուլէր ին	գուկէր ին

Բարբառի օրենքի համաձայն ապառնի դերբայի վերջին «ի»-ն վերածվում է «ա»-ի (կըրիլւմ > գրեի), նման Գեսաբի բարբառին:

Ա պ ա ն ն ի

կըրիլւմ իմ (գրելու եմ)	գարթիլւմ իմ (կարդալում եմ)	նսգիլւմ իմ (նստելու եմ)
» իս	» իս	» իս
» է	» է	» է
» ինք	» ինք	» ինք
» իք	» իք	» իք
» ին	» ին	» ին
լալիլւմ իմ (լալու եմ)	ուկիլւմ իմ (գալու եմ)	
» իս	» իս	
» է	» է	
» ինք	» ինք	
» իք	» իք	
» ին	» ին	

Ապառնի և հարակատար ժամանակներում «էր» մասնիկն ավելանում է ուղղակի դերբայների վրա (կրիլւմ էր, կրուծ էր) և ապա գրվում է խոնարհվող օժանդակ բայը:

Անցյալի ապառնի

կրիլւմ էր է (գրելու էի)	գարթիլւմ էր է	նսգիլւմ էր է
» էր իս	» էր իս	» էր իս
» իբ	» իբ	» իբ
» էր ինք	» էր ինք	» էր ինք
» էր իք	» էր իք	» էր իք
» էր ին	» էր ին	» էր ին

լալիլւմ էր է	ուկիլւմ էր է
» էր իս	» էր իս
» իբ	» իբ
» էր ինք	» էր ինք
» էր իք	» էր իք
» էր ին	» էր իք

Վ ա դ ա կ ա տ ա ր

կրիբ իմ (գրել եմ)	գարթիբ իմ	նսգիբ իմ	լալիբ իմ	իվիբ իմ
» իս	» իս	» իս	» իս	» իս
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի վաղակատարը գործածականն չէ:

Հ ա ր ա կ ա տ ա ր

կրուձ իմ	գարթացուձ իմ	նսդուձ իմ	լացուձ իմ	իզուձ իմ
» իս	» իս	» իս	» իս	» իս
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի հարակատար

կրուձ էր է	գարթացուձ էր է	նսդուձ էր է	լացուձ էր է	իզուձ էր է
» էր իս	» էր իս	» էր իս	» էր իս	» էր իս
» իր	» իր	» իր	» իր	» իր
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի կատարյալ

կրեցա	գարթացա	նսդո (նակ՝ նստիցօ)	լացա	իզա
կրեցիր	գարթացիր	նսդուր	լացիր	իզիր
կրեցից	գարթացից	նսդուվ	լացից	իզիք
կրեցունք	գարթացունք	նսդունք	լացունք	իզունք
կրեցանք	գարթացանք	նսդանք	լացանք	իզեք
կրեցէն	գարթացէն	նսդուն	լացէն	իզէն

Հ ր ա մ ա յ ա կ ա ն

կրէ՛ (զրի)	գարթօ՛	նէստ	լուց	արի
մը՛ կրի	մը՛ գարթօ	մը՛ նսդէ	մնու լօ	մնու կօ
կրեցի՛ք	գարթացի՛ք	նսդիցի՛ք	լացի՛ք	արի՛ք, արկի՛ք
մը՛ կրեիք	մը՛ գարթուք	մը՛ նսդանք	մնու լանք	մնու կաք

Ը ղ ձ ա կ ա ն

Ապառնի

կրեիմ	գարթում	նսդէմ	ուլում	ուկում
կրեիս	գարթուս	նսդէս	ուլուս	ուկուս
կրեի	գարթօ	նսդան	ուլօ	ուկօ
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալի ապառնի

կրեի է	գարթեի է	նսդէի է	ուլեի է	ուկեի է
կրեի իս	գարթեի իս	նսդէի իս	ուլեի իս	ուկեի իս
կրեիր	գարթիր	նսդիր	ուլիր	ուկիր
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Պայմանական եղանակի ձևերը կազմվում են «իը» մասնիկով (զրկը-րիմ, զը գարթում), Հարկադրական ձևերը կազմվում են «բըր» մասնիկով,

որոնք ավերանում են ըղձականի վրա: Այդ «բըր» մասնիկը ստացվում է հայերեն «պիտի որ» կապակցություներից,

Հարկադրական եղանակ

Ա պ ա ո ն ի

բըր կըրիմ—պիտի գրեմ՝ բըր գարթում բըր նսդիմ բըր ուլում բըր ուկում  
և այլն.

» կըրիս	» գարթուս	» նսդիս	» ուլուս	» ուկուս
» կըրի	» գարթօ	» նսդան	» ուլօ	» ուկօ
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.	և այլն.

Հարկադրական եղանակ

Ա պ ա ո ն ի

բըր կըրէր է (պիտի գրէի)	բըր գարթէր է	բըր նսդէր է
» » իս	» » իս	» » իս
» կըրիք	» գարթիր	» նսդիր
և այլն.	և այլն.	և այլն.

բըր ուլէր է	բըր ուկէր է
» » իս	» » իս
» ուլիր	» ուկիր
և այլն.	և այլն.

Ժխտական խոնարհում

Ժխտականը կազմված է «չ» մասնիկով, որ ներկայի և անցյալի անկատարի վրա գրվելիս գտնվում է «չու», «իը» մասնիկը գուրս է ընկնում: Բաղադրյալ ձևերի մեջ «չ» մասնիկը գրվում է կամ բայի սկզբին, կամ օժանդակ բայի վրա: Անցյալի ձևերի մեջ «չ» մասնիկը գրվում է «իը» մասնիկի վրա: Հարկադրական եղանակում «չ» մասնիկը գրվում է «բըր» եղանակիցի վրա:

Սահմանական

Ներկա.	չու կըրիմ ...	չու գարթում...
Անց. անկ.	չու կրէր է...	չու գարթէր է,
Ապառնի.	կրիւմ չիմ...	գարթիւմ չիմ,
Անց. ապ.	կրիւմ չէր է,	գարթիւմ չէր է և այլն.
	չէր իս, չիր, չէր ինք,	
	չէր իք, չէր ին	

Ներկա	չու նսդիմ...	չու լում ...	չու կում...
Անց. անկ.	չու նսդէր է,	չու ուլէր է,	չու ուկէր է
Ապառնի	նսդիւմ չիմ,	ուլիւմ չիմ,	ուկիւմ չիմ
Անց. ապ.	նսդիւմ չէր է,	ուլիւմ չէր է,	ուկիւմ չէր է
	չէր իս, չիր, չէր ինք,	և այլն.	և այլն.
	չէր իք, չէր ին		

Վաղակատար

չը կըրիր իմ... չը գարթացիր իմ... չը նսգիր իմ... չը լացիր իմ... չի գիր իմ...

Հարակատար

չը կրուձ իմ... չը գարթացուձ իմ... չը նսղուձ իմ... չը լացուձ իմ... չի գուձ իմ կրուձ չիմ... գարթացուձ չիմ... նսղուձ չիմ... լացուձ չիմ... իգուձ չիմ...

Անցյալի հարակատար

չը գրուձ էր է, չը գարթացուձ էր է, չը նսղուձ էր է, չը լացուձ էր է, չի գուձ էր է

կամ

գրուձ չէր ի, չէր իր, չիր, չէր ինք, չէր իք, չէր ին. գարթացուձ չէր ի և այլն. նսղուձ չէր ի և այլն. լացուձ չէր ի և այլն. իգուձ չէր ի և այլն.

Անցյալ կատարյալ

Ձկրիցա, չկրիցիր, չկրից և այլն.

Ըղծական ապառնի

չը կրիմ... չը գարթում... չը նսղեմ... չը ուլում... չը ուկում:

Ըղծական անցյալի ապառնի

չը կրէր է, իս, — ինք, իք, ին. չը գարթէր է... չը նսղէր է... չը ուլէր է... չը ուկէր է...

Պայմանական ապառնի

չըմ կրի... չըմ գարթո... չըմ նսղի... չըմ ուլո... չըմ ուկո.

Հարկադրական ապառնի

չըբըբ կրիմ... չըբըբ գարթում... չըբըբ նսղեմ... չըբըբ ուլում... չըբըբ ուկում

Հարկադրական անցյալի ապառնի

չըբըբ կրէր է... չըբըբ գարթէր է... չըբըբ նսղէր է... չըբըբ ուլէր է... չըբըբ ուկէր է...

Ներկա

Անցյալ

իս իմ մինք իք / իս էր է մինք էր ինք / տօն իս տօք իք / տօն էր իս տօք էր իք / ան ի անունք ին / ան իր անունք էր ին

կամ բայը

Ներկա

անցյալի անկատար

գում գունք / գէր է գէր ինք / գուս գօք / գէր իս գէր իք / գօ գուն / գար գէր ին

Նմուօճեր Սվեդիայի բարբառով

ԳՈՒՐԹՈՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ

— Աշկէն խնթօն, լըսըցիր չն իգուձ է, խըրվուն կաղիթան չն կըրուձ է. կըրուձ է, յէ ոււսիրը մըխնարբան զազամըջ իղուձ էն:

Մայրնիմ քնիօյը քէֆ իլն ասուց.

— Խնթօն քնիօյը, տօն հիչ պուն մալէ լըսունձ չիս գա: Միր տըրասնինց գղան իրըղվուն կաղէթան գարտացուձ վախարը Մօսկվան խնթուր գըվուձ է, քէ Մասիին բնթօյը անըր գըվիր է, բըտըն ախշարէն էրմանիքը Հայաստան բըբ մուղվրվէն:

Խնթօն քնիօյը ծափկըտվիլում գօսէ.

— Աշկէն Մայրնիմ, արի պիրունիգ բնքնիմ. անջնրն ըսսնիս (ուգուրթ) է, յիփ բըբ ուգօ ըտկաա ուրը:

Աշկէն—աղչիկ

ըսսնիս—ծիշա

մուխնարբան—պատերազմ

անըր—հրաման

զազամըջ—չաճել

բըտըն—բոլորը

իրըղվուն—երեկվան

ըտկաա—այդ

բնթօյը—մեծ հայրը

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Գանրմէր ֆըստան հակուձ է / հալա-հալա նինա է.

կարմիր գգեստ հազած է.

Ձնց ան աղվուր վիլուձ է,

ինչքան էլ լավ սազած է.

հալա-հալա նինա է.

Ծիթիր է լուսնը լայսը,

Ծաղեղ է լուսնի լույսը.

Մերիմ գիչուցիդ լայսը:

Մփրեմ աչքերիդ լույսը:

Ձուրը չն յէ, բըգօղը չն յէ,

Ծառն ինչ է, պատուղն ինչ է,

էշկէն անունիդ չն յէ.

Աղջիկ անունիդ ինչ է.

Իս գուկէր է անվուցը,

ես գալիս էի պարտեղից,

Ըրգը նօս գար էր ձուցը

երկու նուռ կար իր ձուցը:

Իգօր ընձէ, չառա դէ,

Տվեց ինձ, ես չառա այն.

Քըշթից բըսում գըրձուցը:

Բոսով գարկեց իր կըծքին:

Դամը կըննինք կը թընդօ

կըտուր կելնենք՝ կիթնդա,

Մանթուր գառնինք գը խընդօ:

Նամակ կառնենք՝ կիթնդա.

էշկէն ուգուղէն գըվիր

Աղջկան ուգուղին ավեք.

Սաղգաա ուրթօ գը խընդօ

մեռնի գնա՝ կիթնդա.

Գրի առավ՝ Փաշայան Ալեքսանդր



ԿՈՒՔՈՒՄ

Կլիզմայի համաժողովն զօնը կաղվօ իր ինգիր: Համաժողովն զուզիլ էր զբարկր զանրէ Կոնստանդնուպոլսէն: Կոնստանդնուպոլսէն մը ուզօ, պուսն մը ինէ: Կոնստանդնուպոլսէն ըստ չիլ:

— Զբարկր, էմ բարկր չուզօսը ան անիրաւ անարար մի իսկէ, չբարկր, — գուրիլ զբարկր:

Ամա Համաժողովն չբարկր:

Հանգիստ առկր զմի իր: Կոնստանդնուպոլսէն զէ արացնիր իզէն նըկըր կիզէն ձարբը, Կոնստանդնուպոլսէն իրիսը բանքէն զէ ջամփուսը տըրէն զբ: Բայրը, Զանէն, գուրիլ: Բարկրի կալօն մուրը կըրգի ծան գուրիլ:

— Կիբօ, աա յօ գուրիլ, չէյ կիբօ:

Կոնստանդնուպոլսէն ուզէր-ուզէր երգ գուրիլ: գուրիլ զանա կիզէն ձարբը կայնիւն ին անանք, զէ մարը օնկըրիւմ գուրիլ սըրփի զիզէն: Կոնստանդնուպոլսէն զուրիլն գուրիլ զաղիլ, քիմի յառանջ գոնցնիր: Աղըր մէլ երգ իշից-կիզը ձազըրիւմ իր սըրփէն երգը տէն: Անուր սուրա Կոնստանդնուպոլսէն կիզ գուրիլ:

Գրեց՝ Փաշայան Ալեքսանդր:

Տ. ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ «ՀԱ» ձՅՈՒՂԸ

Այս ճյուղը միանգամայն նորութուն է հայ բարբառագիտութեան մեջ: Այդ ճյուղից հայտնի է միայն Քեսաբի բարբառը. որոշ վերապահութեամբ այս ճյուղին է միացվում նաև Արարիկի բարբառը:

«Հա» մասնիկ-բառը հայերենի «հա» բառն է, որ նշանակութեամբ համասար է «կայ» և «գոյ» բառերին:

Հին ընդհանուր լեզվի ներկայի և անցյալի անկատարի ձևերը սոնկու իբրև ըզձական ձևեր՝ մեր բարբառները ներկան կազմելու համար երկու ճանապարհ են ընտրել: Բարբառների մի զգալի մասը ընդհանուր հայերենի մատերիակց կազմել են ներկայի նոր ձևեր, ինչպես դերբայավոր խմբի «Աւմ», «Ս» և «Լ» ճյուղի բարբառները, իսկ մյուս մասը ըզձական ձևերին ներկայի և անցյալի անկատարի իմաստ ապու համար գործածել է «ներկա», «այժմ» ցույց տվող հայերեն բառերից մեկը:

Վերահիշյալ իմաստն արտահայտելու համար մասնիկավոր խմբի որոշ բարբառները առել են «կայ» («գոյութուն ունի») բառը, որից կազմվել են «կա», «գա», «գա», «գու», «գո» մասնիկները, որոնք կորցնելով «կայ» բառի բուն իմաստը, վերածվել են վերացական մասնիկների և ցույց են տալիս ներկայի գաղափար. այդպիսով առաջացել է «կա» ճյուղը. նույն նպատակով որոշ բարբառներ ընտրել են «գոյ» («գոյութուն ունի», «կա») բառը, որից կազմվել են «գո», «գը», «կը», «կու» մասնիկները, որոնք նույնպես կորցրել են «գոյ» բառի սկզբնական իմաստը և վերացական մասնիկ դառնալով արտահայտում են միայն ներկայի գաղափար: Այդպիսով կազմվել է «կը» ճյուղը:

Որոշ բարբառներ էլ նույն նպատակով առել են հայերենի «հա» («չիմա կա», «գոյութուն ունի») բառը, որից կազմվել են «հա», «հայ», «ա», «ը» մասնիկները, որոնք, նույնպես, վերածվելով վերացական մասնիկների՝ արտահայտել են ներկայի գաղափար: Այդպիսով կազմվել է «Հա» ճյուղը:

«Ահա» «Հա» ճյուղի բարբառները թույլ են եղել և ենթարկվել են «կը» ճյուղի բարբառների ազդեցութեան, կամ բարբառին ձուլվել են նրա մեջ ու դարձել «կը» ճյուղի բարբառներ, կամ սովորական ներկան կազմելու համար ընդունել են «կը» մասնիկը, իսկ «հա» «հա» մասնիկները թողել են շարունակական ձևեր արտահայտելու համար, ինչպիսին են Մալաթիայի և Համշենի բարբառները: Օրինակ՝ քրիւ ա, քրիւ ա, քրիւ ա... գրում եմ, գրում ես, գրում է... բառացի՝ գրեմ անա, գրես անա, գրէ անա... (Մալաթիա). իմըս էշթուշ ա, բուկըգ էշթուշ ա, էնուրը էշթուշ ա — ես գնում եմ, դու գնում ես, նա գնում է... բառացի՝ ես երթալ անա, դու երթալ անա, նա երթալ անա (Համշեն):

Արարիկի բարբառը գտնվում է հենց այս ճամփին. նա ձայնավորով

սկսվող բայերը խոնարհում է «Կը» ճյուղի նման, երբեմն նույնիսկ բաղա-  
ձայնով սկսվող բայերն էլ այդպես է խոնարհում, բայց հաճախ բաղաձայնով  
սկսվող բայերի խոնարհումը լինում է ոչ թե «կը» մասնիկով, այլ «ա»  
«ը» մականիկով. օրինակ՝ բ'անիմ ք, բ'անիս ք, բ'անիմ նը...<sup>1</sup> բանում եմ, բա-  
նում ես, բանում է... բառացի՝ բանեմ ահա, բանես ահա, բանի ահա...

«Հա» ճյուղի բարբառներից անվթար պահպանված է միայն Բեսաբի  
բարբառը, որը ներկայի համար «կը» մասնիկը չի ճանաչում, այլ միայն  
«հա» կամ «հայ»։ Բեսաբից դուրս՝ շրջանի Ղալաղուրան և այլ գյուղե-  
րում նկատվում է հաճախ «կը» մասնիկի թափանցումը ներկայի ձևերի  
մեջ. Ղալաղուրանում թեև «հա» մասնիկը գերակշռություն ունի, բայց  
երբեմն գործածվում է նաև՝ «կը» մասնիկը։

Գաղթից հետո, ըստ երևույթին, գրան նպաստել է «Կը» ճյուղի  
բարբառների ազդեցությունը, ինչպես և արևմտահայ գրական բարբառը՝  
Հավանական է, որ «Հա» ճյուղին պատկանող բարբառներ էլի գտնվեն<sup>2</sup>,  
որովհետև, ինչպես ցույց են տալիս մեր առաջարկած երեք նոր ճյուղերը՝  
մեզ անհայտ գեղ շատ բարբառներ և բարբառային փաստեր կան, և նույն-  
իսկ՝ ճյուղեր։

Առանձնապես հետաքրքրական է հայ բարբառների գրաբարակերպ  
ճյուղը (Ստաուրջուրի բարբառ), որով հատկապես պետք է դրադվեն՝ հայ  
բարբառագետները։

ՔԵՍԱՐԻ ԲԱՐՔԱՌԸ

Տեղաշարժ տեղափոխության սխեման

Հայերեն բարբառների մեջ առանձին տեղ է գրավում Բեսաբի բար-  
բառը։ Բեսաբի շրջանը գտնվում է պատմական Անտիոքի մոտերքը, Սվե-  
դիային հարևան։ Բեսաբի շրջանի մեջ մտնում էին հետևյալ գյուղերը՝  
Բեսաբ, Կալաղուրան, Զինար, Քյոռքյունա, Իկիդ-օլուկ, Սևաղբուր, Էս-  
գյուրե, Դյուզ-Աղաջ, Բաղջաղազ, Բարբառի տիպիկ ներկայացուցիչը Բե-  
սաբի խոսվածքն է, որը բոլորովին չի ճանաչում «կը» մասնիկը. եթե այդ  
մասնիկը գործ է ածում, ապա պայմանական եղանակը կազմելու համար,  
այն էլ գրական լեզվի ազդեցությամբ. Բեսաբի բարբառը ներկա և անց-  
յալ անկատար մամանակ կազմելու համար օգտագործում է «հայ» կամ «հա»  
մասնիկը, որ ավերացնում է գրաբարի ներկայի և անցյալ անկատար ձե-  
վերի վրա։ Հետևաբար այս բարբառը, ըստ այժմ գոյություն ունեցող  
ձևաբանական դասակարգման, չի պատկանում ոչ մի ճյուղի. Այդ պատ-  
ճառով էլ դա առանձնացնում ենք որպես մի առանձին, վեցերորդ նյուդ,  
կոչելով այն «Հա» ճյուղ. Այդ «հա» մասնիկ-բառը հայերեն «ահա» բառն  
է, որ իմաստով համապատասխան է «գոյ», «կա» բառերին։ Ինչպես «գոյ»  
և «կա» բառերը մի շարք բարբառներում, այնպես էլ այդ «հա—ահա» բա-  
ռը Բեսաբի շրջանի որոշ գյուղերում գործածվում է շարունակական կազ-  
մելու համար. Կալաղուրան գյուղի խոսվածքում «հա» մասնիկ-բառը հա-

<sup>1</sup> Նկատվում է, որ երրորդ դեմքի «ն»-ն ավերանում է այն մամանակ, երբ բայը  
վերջագործվում է ձայնավորով կամ ն-ով։  
<sup>2</sup> Վերջերս գտնվեց Ուրֆայի (Եդեսիայի) բարբառը։

վասաբաչափ գործածվում է թե իբրև շարունակական, թե իբրև սովորա-  
կան ներկա կազմելու համար. Սակայն երբեմն օգտագործվում է նաև «կը»  
մասնիկը։ «Հա» մասնիկը կրճատվելով մինչև «ա» գործածվում է որպես շա-  
րունակականի մասնիկ Մալաթիայի բարբառում, իսկ Արաբկիրի բարբա-  
ռում սղվելով մինչև «ը»՝ հնչյունը, գործածվում է որպես ներկա կազմե-  
լու միջոց, բայց բայերին հետագաս (գրբիմ ք>գրիմ ա>գրիմ ահա—գր-  
բում եմ)։

Բեսաբի բարբառի հնչյունական և քերականական մի շարք այլ երե-  
վույթներ ևս նրան առանձնացնում են որպես անկախ բարբառ. Սակայն  
նրա ընդհանուր երանգը մտ է Սվեդիայի, Զեյթունի և Հաճընի բարբառ-  
ներին։

Բեսաբի բարբառի մեջ, ինչպես Զեյթունի, Սվեդիայի և Հաճընի բար-  
բառներում, նկատելի են որոշ նման գծեր միջին հայերենին։

Բեսաբի բարբառն ունի ան, օ, օն, օն ձայնավորներ, օտու, (օւ), ու, էյ,  
իև երկբարբառներ։ Հնչյունական փոփոխությունների մեջ նկատելի է օրի-  
նաչափությունների հետևողականություն։

Բեսաբի բարբառում նկատելի են հետևյալ օրինաչափ փոփոխու-  
թյունները գրաբարի համեմատությամբ.

- Ա>ու. շեշտի տակ կամ միավանկ բառերի սկզբին. օրինակ՝ աղքատ>  
>ախքուէզ, աստառ>ասգուէռ, արգար>արաուէր, արջ>ուէրջ, ափ>  
>ուէփ, դմակ>գրմուէզ, թաս>թուէս, թաց>թուէց, ծառ>ծուէռ,  
տափակ>գափուէզ, դանակ>գանուէզ, մարթ>մուէրթ, բարակ>պե-  
րուէզ, բարձ>պուէրց, ամառն>ամուէռն և այլն։
- >ու. նույնպես շեշտի տակ, բայց միայն ոնգայիններից առաջ, ինչպես  
և բառավերջի բաց վանկում, օրինակ աման-էմուն, ամպ>ումբ, բա-  
նամ>հայ պանում, բարձր>պունցր, բէրան>պիրուն, համ>հում,  
տանձ>դունձ, չկայ>չիգու, տղայ>գըղու, փեսայ>փիսու։
- >ա. ան յախաշեշտը վանկերում, օրինակ՝ աղաչել>աղչիլ, անուն>ա-  
նոն, կանաչ>գանաչ, պարան>բարոն, ծարաւ>ծարուէզ, անցնել>  
ասնիլ, աչք>աչի, բամբակ>պամբուէկ և այլն։
- >է. նույնպես նախաշեշտ վանկերում, մեծ մասամբ ոնգայիններից ա-  
ռաջ, օրինակ՝ աման>էմուն, ամիս>էմէս, ամաչել>էմընչիլ, անի-  
ծել>էնիձիլ, մանդաղ>մէնդուէղ, պանիր>բէնէր, կարաս>գէր-  
րուէս, կարկուտ>գէրգուտ ափսոս>էփսուս։
- >ը. նախաշեշտ վանկում. դատել>աըղիլ, ասեղ>ըսեղ, ծալել>ծըլլիլ,  
հարիւր>հըրէր։

«Ա» ձայնավորը անօրի բառի մեջ լինում է օ (օնոթան), արիւն բա-  
ռի մեջ լինում է «վի» (վիրէն), կաթ բառի մեջ լինում է «էյ» (գէյթ),  
և>ի շեշտյալ և նախաշեշտ վանկերում. օրինակ՝ բէրան>պիրուն, եզր>

- >իզիր, երազ>իրուէզ, երես>իրիս, երեկ>իրիպ, ցերեկ>ցիրիպ, թել>  
>թիլ, թև>թիվ, թեփ>թիփ, երկոյ>իրիգուն և այլն։
- >ա. սովորաբար նախաշեշտ վանկում. գեղնուց>աաղնուց, մեռնեմ>հա  
մառնեմ, քերթեմ>հա քարթեմ, նակ՝ ձեռք>ծառ։

>ե. (իե) մեղը > մեղը (միեղը), մեղք > մեղք (միեղք), տեղ > գեղ (գիեղ), տեղ > քեղ > (քսեղ).

>բ. Բառասկզբին, սովորաբար երկու բաղաձայնից առաջ գտնվելու դեպքում. օրինակ՝ երկաթ > քրքուէթ, երկայն > քրքան, երկանք > քրքանք, երկինք > քրքէյնք, նաև՝ երեք > քրք.

եղբայր և եղջիւր բառերի մեջ «ե»-ն լինում է «ա» և «օ» (ախպար, օխճար):

>է. շեշտի տակ փակ վանկում. օրինակ երկինք > քրքէյնք, հին > հէյն զիղ > զէյղ, միս > մէյս, միաք > մէյք, գետին > գէյն, գեղին > գիէյն, գրային > քրքէյն և այլն:

>զ. նույնպես շեշտի տակ, փակ վանկում. օրինակ՝ գիրկ > կէրգ, երինջ > իրէնջ, կարմիր > քէրմէր, շապիկ > շաքէգ, տիկ > գէգ, քիթ > քէթ, իննք > էննք, իր > էր և այլն:

Իջնել բառը լինում է իջնել (իջնիել):

>ա. օ. նույնպես շեշտի տակ, բառավերջի բաց վանկում. օրինակ՝ գարի > կիար, եկեղեցի > քէկէցի, հոգի > հիկի, տարի > դար, գին > կին, և այլն: Այստեղից էլ՝ սիրելի > սիրիլի, բանելի > քանիլի և այլն:

Սիրա բառը լինում է սերգ (սիրեղ):

Ու կամ ու, թե շեշտի տակ և թե նախաշեշտ վանկում. գող > կուղ, գովել > կուվել, դող > դուղ, փող > փուղ, խող > խուղ, խոփ > խուփ, լակոս > լակուղ, ժողովել > ժուղվել, ջորի > ճուրի, խնձոր > խընճուր, խոտ > խուտ, ծոց > ճուց, փորել > փուրել և այլն:

Գորք բառն արտասանվում է «կորք»:  
>Ուէ, «վ» նշչունից առաջ շեշտի տակ. օրինակ՝ կով > գուվ, ծով > ճուվ:

>վ. բառասկզբին միավանկ բառերում. օրինակ՝ սպա > վսպ, սրբ > վսրբ, սրգ > վսրգ, սրձ > վսրձ:  
Ուն բառը արտասանվում է «վիգ»:

>ի. նախաշեշտ վանկում, եթե հաջորդ վանկում «ի» կա, կամ բառասկզբին. օրինակ՝ թոնիր > թիւնիր, հոգի > հիկի, սկի > իսկի, սկը > իսկը:

Ու օու, շեշտի տակ բաց կամ փակ վանկում. օրինակ՝ անուն > անօուն, արմուկ > էրմօուկ, գու > անու, դուն > անու, խուփ > խօուփ, դուք > անուք, թուք > թօուք, թութ > թօութ, թուշ > թօուշ, լուծ > լօուծ, ծուռ > ճօուռ, ծուխ > ճօուխ, լուրջ > լօուրջ (կապույտ), կատու > կափօու և այլն:

>օ. ուլ > օնլ, ութ > օնթ, ուս > օնս.  
>ու. լու > լու. ուրբաթ > ուրփուէթ.  
Ոյ > ուէ «կամ» «ուէյն». բայն > պուէն, լոյս > լուէյս, մօրաբույր > մուրաբուէյր:

>օյ. քնկոյգ > քնգօյգ, կոյր > կօյր:

>ու. այսօր > իսուր, խելօք > խիուլք. մօտ > մուտ, օր > ուր, է > ե (իե). կէս > գիէս, ձէթ > ծիէթ. մէջ > միեջ, մէջք > միէք, տէր > գիէր:

Այ > ա կամ օ. այծ > օծ, գայլ > կիլ, գարի > կար, երկայն > քրքան, լայն > քան, ծայր > ճար, մայր > մար, փայտ > փուղ.

>ի. այսօր > իսուէր, կայծակ > գիճուէգ.  
Բաղաձայնական սխառեմով Բեսարի բարբառը պատկանում է տեղաշարժ տեղափոխութեան երկրորդ ենթախմբին, այսինքն՝ ձայնեղ բաղաձայնները վերածվում են խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների. օրինակ՝

ր > պ. բան > պուէն	պ > բ. պապ > բուէր
գ > ա. գու > աու	ա > դ. տանձ > դուէնձ
ձ > ծ. ձուկն > ծօուկ	ց > ճ. ճարու > ճարուէլ
ջ > ճ. ջուր > ճուր	ճ > ջ. ճեղք > ջիէլք
գ > կ. գող > կուղ	կ > գ. կող > գիղ

ՉԵՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Բեսարի բարբառի հոգնակին կազմվում է հետևյալ մասնիկներով՝ սղուն (ստուն), աղէ > (աղի) էղըսղուն, հիկի (այգի) > հիկըսղուն, գիշա (կաշի) > գիշըսղուն, դէգ (տիկ) > դըգըսղուն, էմէնու (կոշիկ) > իմէնըսղուն, հիլա (հայելի) > հիլըսղուն:

Նա. արգու (ակոս) > արքընա, էնձրիվ (անձրի) > էնձրիվնա, կինա (գինի) > կինինա, հիլա (հայելի) > հիլինա:

Նիբ. իշկէն (աղջիկ) > իշկընիբ, անձր (եղջուր) > անձրընիբ, Դուն. թիւնէր (թոնիր) > թիւնըսղուն, խընճուր (խնձոր) > խընճըսղուն: Օնք. լեռ (լեռան) > լըոսք, Բ. լու > լուք:

Նէք. գլին (կին) > գըննէք, Իր. գիւղ (կող) > գիւղիր, վունք. դընէք (տանիք) > դընըսղունք:

Բեսարի բարբառն ունի վեց հոլով. հուսի ներգոյական հոլովը, հաճախ չի գործածվում նաև գործիական հոլովը, որը փոխարինվում է սեռականով և հետ կապով: Հայցական հոլովը սրտշաղ առման դեպքում ունենում է «ղ» նախդիրը. օրինակ՝ Մարք ումիգուէն գիշկէն (աչքերը) հայ սրփեր (մայրը գողնացով աչքերն էր սրբում):

Հոլովում

Ուղղ.	լուէյս (լոյս)	դօուն (տուն)	ծօուգ (ձուկն)	ձմէվ (ծով)
Սեռ.	լուէն	դօընը	ծըգուն	ձըվէն կամ ձըվօու
Տր.	»	»	»	»
Հայց.	դլուէյս	դդօուն	դձօյը	դձմէվ
Բաց.	լուէն	դընէն	ծըգէն	ձըվէն
Գործ.	լուըսուէն	դընուէն	ծուգուէն	ձմվուէն

	Հոգնակի			
Ուղղ.	լուսիր	դուսովն	ծըյնիր	ձուզիր
Սեռ.	լուսիրէն	դուսովին	ծըյնիրէն	ձուզիրէն
Տր.	»	»	»	»
Հայց.	դուսիր	դուսովէյն	զծըյնիրը	զձուզիրը
Բաց.	լուսիրէն	դուսովէյն	ծըյնիրէն	ձուզիրէն
Գործ.	լուսիրուէն	դուսովուէն	ծըյնիրուէն	ձուզիրուէն

Թ՛վականները մեծ փոփոխություն չունեն, 70-ից վեր համըում են թուրքերեն:

Մեզ, բրգ՛օք, բրք, չն՛ք, հէնգ՛, վից, յուէթը, օութ, էննը՛ դուէսը, դըսնըմեգ՛, դըսվէրգ՛օուք, դըսվըք, դըսնըչուք, դըսնըհէնգ՛, դըսնըվից, դըսնըյուէթ, դըսնըփուէթ, դըսնըվէննը, քուէն, յարսօուն, քառսօուն, յիսսօուն, վըցցօուն, յէթմիշ, սայգ՛սան, դոթսան, հըրէր:

Անձնական դերանուններ

	եզակի		Հոգնակի	
Ուղղ.	իս	սօու	մինք	սօուք
Սեռ.	իմ	քու	միր	ծիր
Տր.	ընձի	քի	մի	ծի
Հայց.	դէս	զքի	զմի	զծի
Բաց.	յիմմինէն	քու՛մինէն	միրմինէն	ծիրմինէն
Գործ.	իմ հեզ	քու հեզ	միր հէզ	ծիր հեզ

Անձնական դերանունների բացառականը կազմվում է սեռականով և «մինէն» բառով, ուստի վերլուծական է, ինչպես գործիականը:

Տուգական դերանուններ

	եզակի		
Ուղղ.	ան, իսու	ան, իսու	ան ինու
Սեռ.	ըսուր	ինուոր	ընուր
Տր.	»	»	»
Հայց.	զան, զըսուր	զան, զինուր	զան զընուր, զը
Բաց.	իսուր մինն	ինուրմինէն	ինուր մինէն
Գործ.	իսուր հեզ	ինուր հէզ	ինուր հեզ

Հոգնակի

Ուղղ.	ըսունք	ըսունք	ընունք
Սեռ.	ըսուց	ըսուց	ընուց
Տր.	»	»	»
Հայց.	զըսունք	զըսունք	զընունք
Բաց.	անուց մինէն	անուց մինէն	անուց մինէն
Գործ.	անուց հեզ	անուց հեզ	անուց հեզ

Քեսաբի բարբառը փաստորեն չունի դերանունների գործիական հոլով, որ փոխարինվում է սեռականով և հետ կապով:

Այսբան, այդբան և այնբան դերանունները լինում են քանգան, քանգան, քանգան (քան գայս, քան գայդ, քան գայն), այսպէս, այդպէս և այնպէս դերանունները լինում են՝ ընձան, ընձան, ընձան (ընդ գայս, ընդ գայդ, ընդ գայն), որտեղ զ(ընդ) և զ (գայս, գայդ, գայն) հնչյունների հանդիպումից առաջանում է «ձ» աֆրիկատը:

Հարցական դերանունները լինում են՝

Ուղղ.	ս՛ւզ-ով	չէ-ինչ
Սեռ.	ս՛ւզ-ում	չն՛զն-ինչի
Տր.	» » և այլն.	» » և այլն.
Հայց.	զուզ	չէ
Բաց.	յումմէնէ	չուզէն
Գործ.	յում հեզ	չուզէն հէզ

Խոնարհում

Քեսաբի բարբառի խոնարհումը կազմվում է «հայ» (հայ) մասնիկ-բառով, որ Ղալա-Դուրանում լինում է «հա»: Այստեղ միայն ձայնավորով սկզբող բայերն են ստանում «հայ» մասնիկը:

Բայերն ունեն «ե», «ա» և «ի» խոնարհում. «ե» խոնարհման բայերն ըստ հնչյունական օրենքի եզակի երրորդ դեմքում ունենում են «ան» վերջավորությունը, նույն «ան»-ն գտնում ենք նաև հոգնակի երկրորդ դեմքում: Մյուս խոնարհումների մեջ նկատվում են հնչյունական օրինաչափությունների հետեանքով առաջացող փոփոխություններ և շեղումներ:

Քեսաբի բարբառը անցյալ ժամանակները կազմում է միանդամայն օրիգինալ կերպով: Քեսաբի բարբառը չունի օժանդակ բայի անցյալի ձև-վերը և դրա հետեանքով նաև խոնարհվող բայերի անցյալի ձևերը: զրա փոխարեն գործ է ածում «է» հյուղին հատուկ «էր» բառ-մասնիկը, բայց այդ մասնիկն ավելացնում է խոնարհվող բայի ներկայի հիմքին, կազմելով մի յուրահատուկ դերբայ և անջատելով նրանից դիմավոր վերջավորությունները: Այս դիմավոր վերջավորությունները խոնարհվում են անկախ, որպես օժանդակ բայ, իսկ դերբայը թողնվում է անփոփոխ: Երրորդ դեմքում այդ օժանդակ բայը դուրս է ընկնում: Օրինակ՝ ներկա՛ հայ պաննեմ, հայ պաննեա, հայ պաննա, հայ պաննեք, հայ պաննաք, հայ պաննեն:

Աննելով «պանն» հիմքը, ավելացվում է «եր» մասնիկն ու ստացվում «պաններ» դերբայը, դրան այնուհետև ավելացվում են օժանդակ բայի ներկայի ձևերը, ստացվում է՝ հայ պաններ էմ, հայ պաններ էս, հայ պաններ, հայ պաններ ենք, հայ պաններ էք, հայ պաններ են:

Ապառնի և հարակատար ժամանակների անցյալ ձևերը կազմվում են այդ դերբայներին ուղղակի «էր» մասնիկը կցելով, ապա օժանդակ բայն ավելացնելով:

*Handwritten notes in Armenian script at the bottom of the page.*

Սահմանական եղանակ

ներկա

«ե» խոնարհում	«ա» խոնարհում
Հայ պաննեմ—գործում եմ և այլն.	հայ դարաում—կարգում եմ
Հայ պանես	հայ դարաուես
Հայ պանն	հայ դարաու
Հայ պանենք՝	հայ դարաունք
Հայ պաննք	հայ դարաանք
Հայ պանեն	հայ դարաուն

ներկա

«ի» խոնարհում	«ե» խոնարհում անցյալիս
հայ կրիմ	հայ նստեմ <sup>1)</sup>
հայ կրիս	հայ նստես
հայ կրի	հայ նքսամ
հայ կրինք	հայ նստենք
հայ կրիք	հայ նստանք
հայ կրին	հայ նստեն

Անցյալի անկատար

Հայ պաներ էմ—գործում էի	հայ գարտեր էմ—կարգում էի
» » էս և այլն.	» » էս և այլն.
» պաներ	» »
» » էնք	» » էնք
» » էք՝	» » էք՝
» » էն	» » էն

հայ կրեր էմ—գործում էի	հայ նստեր եմ
հայ կրեր էս և այլն.	» » ես
հայ կրեր	հայ նստեր
հայ կրեր ենք	հայ նստեր ենք
հայ կրեր էք՝	» » էք՝
հայ կրեր են	» » են

Ապառնի

Ապառնին կազմվում է «իլն» վերջավորութուն ունեցող գերբայով, որ քնդհանուր լինովի «ելի» և «ալի» վերջավորութունն է (պանիլն—բանելի, դարտիլն՝ կարգալի):

պանիլն իմ—գործելու եմ	դարտիլն իմ— կարգալու եմ
պանիլն իս և այլն.	» իս և այլն:
» ի	» ի
» ինք	» ինք
» իք՝	» իք՝
» ին	» ին

1) «տ» նշանակ էի չափազանց, ըստ տեսչի, նախքան չափ թաղ «ն»-ի պարտաւոր:

կրիլն իմ—գրելու եմ և այլն.	նստիլն իմ
» իս	» իս
» ի	» ի
» ինք	» ինք
» իք՝	» իք՝
» ին	» ին

Անցյալի ապառնի

Պանիլն յէր էմ—գործելու	դարտիլն յէր էմ—կարգալու էի
» յէր էս և այլն.	» յէս էս և այլն.
» յեր	» յեր
» յէր էնք	» յէր էնք
» յէր էք՝	» յէր էք՝
» յէր էն	» յէր էն

կրիլա յէր էմ	նստիլն յէր էմ
» յէր էս	և այլն.
» յեր	
» յէր էնք	
» յէր էք՝	
» յէր էն	

Վաղակատար

Պանիլ իմ—գործել եմ	դարտացիլ իմ—կարգացել եմ
» իս և այլն.	» իս և այլն.
» ի	» ի
» ինք	» ինք
» իք՝	» իք՝
» ին	» ին

կրիլ իմ—գրել եմ	նստիլ իմ
կրիլ իս և այլն.	նստիլ իս և այլն.
» ի	
» ինք	
» իք՝	
» ին	

Անցյալի վաղակատարը գործածական չէ:

Հարակատար

պանու՛ձ իմ—գործած եմ	դարտըցու՛ձ իմ—կարգացած եմ
» իս և այլն.	» իս և այլն:
» ի	» ի
և այլն.	և այլն.

կրու՛ձ իմ	նստու՛ձ իմ
» իս	» իս
» ի	» ի
և այլն.	և այլն.

Անցյալի հարակատար

պանու՛ձ էր էմ—գործած էի	գարաբցու՛ձ էր էմ—կարգացած էի
» էր էս և այլն.	» էր էս և այլն:
» էր	» էր
» էր էնք	» էր էնք
» էր էք՛	» էր էք՛
» էր էն	» էր էն

կրու՛ձ էր էմ	նստու՛ձ էր էմ
» էր էս	» էր էս
» էր	» էր
և այլն.	և այլն:

Անցյալ կատարյալ

Պանիցն—գործեցի	գարաացն—կարգացի	կըրիցն—գրեցի
պանիցիր և այլն.	գարաացիր և այլն.	կըրիցիր և այլն.
պանից	գարաուէց	կըրից
պանիցունք	գարաացունք	կըրիցունք
պանիցէք՛	գարաացէք՛	կըրիցէք՛
պանիցէյն	գարաացէյն	կըրիցէն

նստու—նստա  
 նստուէր—նստար  
 նստուէլ—նստալ  
 նստունք  
 նստաք՛  
 նստուն

Ըղծական ապառնի

պանեմ—գործեմ	գարաում—կարգամ	կըրիմ—գրեմ և այլն.	նստիմ
պանես և այլն.	գարաուէս և այլն.	կըրիս	նստիս
պանն	գարաու	կըրա	և այլն.
պանենք	գարաունք	կըրինք	
պանէք՛	գարաաք	կըրիք	
պանեն	գարաուն	կըրին	

Անցյալի ապառնի

պանէր էմ—գործէի	գարաէր էմ—կարգայի	կըրէր էմ—գրէի	նստէր էմ
» էս և այլն.	գարաէր էս և այլն.	կըրէր էս և այլն.	նստէր էս
պաներ	գարաեր	կըրեր	նստեր
պանէր էնք	և այլն.	և այլն.	և այլն:
պանէր էք՛			
պանէր էն			

Պայմանական

Ապառնի

գը պանեմ—կգործեմ	գը գարաում	գը կըրիմ	գը նստեմ
գը պանես և այլն.	գը գարաուէս	գը կըրիս	գը նստես
գը պանն	գը կարաու	գը կըրի	գը նստն
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն:

Անցյալի ապառնի

գը պաներ էմ	գը գարաէր էմ	գը կըրէր էմ	գը նստէր էմ
գը պանէր էս	գը գարաէր էս	գը կըրեր էս	գը նստէր էս
գը պանէր	գը գարաեր	գը կըրեր	գը նստէր
և այլն.	և այլն.	և այլն.	և այլն:

Հարկադրական ապառնի

Հարկադրական եղանակը կազմվում է «մըր» կամ «բըր» եղանակիչով, որ առաջացել է՝ պիտի որ >բիգոր>բըգոր>բըր>մըր.

մըր (բըր) պանեմ—պիտի գործեմ, մըր (բըր) գարաում—պիտի կարգամ, մըր (բըր) կըրիմ—պիտի գրեմ և այլն.  
 մըր (բըր) պանես և այլն. մըր (բըր) գարաուէս մըր (բըր) կըրիս և այլն.  
 մըր (բըր) պանն մըր (բըր) կարաու մըր (բըր) կըրի և այլն.

Անցյալի ապառնի

մըր (բըր) պանէր էմ—պիտի գործէի  
 մըր (բըր) պանէր էս և այլն.  
 մըր (բըր) գարաէր էմ—պիտի կարգայի  
 մըր (բըր) գարաէր էս և այլն.

Ժխտական խոնարհում

Ներկա

չի պանեմ—չեմ գործում	չի գարաում—չեմ կարգում
չի պանես և այլն.	չի գարաուէս և այլն:
չի պանն	չի գարաու
և այլն.	և այլն:

չի կըրիմ—չեմ գրում  
 չի կըրիս և այլն.  
 չի կըրի  
 և այլն:

Անցյալի անկատար

չի պանէր եմ—չէի գործում	չի գարաէր եմ—չէի կարգում
չի պանէր էս և այլն.	և այլն. և այլն:
չի պանէր	
և այլն.	

չի կրէր էմ—չէի գրում  
և այլն.

Ապառնի

Պանիւն չիմ—չեմ գործելու գարտիւն չիմ—չեմ կարգալու  
և այլն. և այլն.

կրիւն չիմ—չեմ գրելու  
և այլն.

Անցյալի ապառնի

պանիւն չէր էմ—չէի գործելու գարտիւն չէր էմ կրիւն չէր էմ  
պանիւն չէր էս և այլն. և այլն. և այլն.

Հարկադրական

Ապառնի

չըմըր կարտում  
չըմըր կարտուէս  
չըմըր կարտու  
չըմըր կարտունք  
չըմըր կարտոնք  
չըմըր կարտուն

Անցյալի ապառնի

չըմըր գարտէր էմ  
չըմըր գարտէր էս  
չըմըր գարտեր  
չըմըր գարտեր ենք  
չըմըր գարտեր էք  
չըմըր գարտեր էն

Հրամայական

կրի, կըրիցէք, գարտու, գարտացիէք, էրրի էրրիցէք  
մը կրի, մը կըրէք, մը գարդու, մը գարդացիէք, մէրրի, մէրրիցէք

Հետքըքրական է միավանկ լալ, տալ բայերի խոնարհումը. Այս բայերն սկզբից ստանում են «ու» ածանցը և «ա» խոնարհիչը, ինչպէս բնականված է այս և Սվեդիայի բարբառում, վերածվում են «ի» ձայնավորի, որից ստացվում է «ուիլ»—լալ, «ուկիլ»—գալ, ուղիւս—տալ: Խոնարհումն ունի հետևյալ պատկերը.

Սահմանական

հայ ուլում—լալիս եմ հայ ուկում—գալիս եմ հայ ուզում—տալիս եմ  
հայ ուլուէս և այլն. հայ ուկուէս և այլն. հայ ուզուէս և այլն.  
հայ ուլու հայ ուկու հայ ուզու  
հայ ուլունք հայ ուկունք հայ ուզունք  
հայ ուլոնք հայ ուկոնք հայ ուզոնք  
հայուլուն հայուկուն հայուզուն

Անցյալի անկատար

հայ ուլէր էմ—լալիս էի հայ ուկէր եմ—գալիս էի  
հայ ուլէր էս և այլն. հայ ուկէր էս և այլն.  
հայ ուլեր (ուլիէր) հայ ուկեր (ուկիէր)  
հայ ուլեր էնք հայ ուկեր էնք

հայ ուլէր էք  
հայ ուլէր էն

հայ ուկէր էք  
հայ ուկէր էն

հայ ուղէր էմ—ուտում էի  
հայ ուղէր էս և այլն.  
հայ ուղէր  
հայ ուղէր էնք  
հայ ուղէր էք  
հայ ուղէր էն

Ապառնի

լէիւն իմ—լալու եմ ուկիւն իմ—գալու եմ դըվիւն իմ  
« իս և այլն. » իս » իս  
» ի » ի » ի  
» ինք » ինք » ինք  
» իք » իք » իք  
» ին » ին » ին

Անցյալի ապառնի

լէիւն էր էմ—լալու էի ուկիւն էր էմ—գալու էի դըվիւն էր էմ  
» էր էս և այլն. » » էս » » էս  
» էր » էր » էր  
» էր էնք » էր էնք » էր էնք  
» էր էք » էր էք » էր էք  
» էր էն » էր էն » էր էն

Վաղակատար

լէցիր իմ... ՚իցիր իմ... դըվիր իմ...

Անցյալի վաղակատար

—Չկա—

Հարակատար

լէցուէձ իմ... իզուէձ իմ... դըվուէձ իմ...—տված եմ

Անցյալի հարակատար

լէցուէձ էր էմ և այլն. իզուէձ էր էմ... դըվուէձ էր էմ և այլն.

Անցյալ կատարյալ

լնցն լնցի իլուէց իքն իքի իքիք դըվն  
լացունք, լնցնք, լնցուն իզունք իզէք իզէն դըվիր  
լուէց իզուէց դըվուէց  
լնցնք դըվնք  
լզէնք դըվէնք

Ըղծական

Ապառնի		Անցյալի ապառնի	
ուլում—լամ	ուկում—գամ	ուղում—տամ	և ալլն.
ուլում	ուկում	ուղում	ուկում
ուլու	ուկու	ուղու	ուկու
ուլունք	ուկունք	ուղունք	ուկունք
ուլմք	ուկմք	ուղմք	ուկմք
ուլուն	ուկուն	ուղուն	ուկուն

Հարկադրականը կազմվում է կամ «բըբ» կամ «մըբ» մասնիկով:

Նմուցներ Գեարքի բարբառով

ԿԻՐԻԿՈՒՐԸ

Կիզոսցա Համփարցումէն դուսնը հայ ձիճկէր են: Համփարցումը հայ ուղեր դէր գըսվըրգը գանթու գըղան գանա մալմամքմթ, պընէյ մը տընն գը, քի մուէրթ տանու:

Գընէյը սազա չի ըննէր:

—Չի ուղիմ, էմ բըզգէկի դղան ան չաղուր յըխշուէրը մէ նէգէ, չի ուղիմ, — հայ ուղէր գընէյը:

Ամա համփոն չի լսից:

Ըրխմթ ուէր մէր, Գէնըցէքը իլան տըրըցնիը իգէն տըկըր կիդէյն իղիւրը, Կըրկիւրէյն գըրըսնէն բմքէյն, Չամփօք տըրէյն գը:

Կալօյը՝ Չանին հայ ուղեր, բըզգէյկի կալօն մուրըր կըրգէն ծան հայ ուղեր: — Կի իրիկուր, յօ՞ հայուրթուէս, Կի իրիկուր:

Կի իրիկուրը ուշէր ուշէր յիգ հայ իշեր, հայգըսնէր՝ գէնուէր կըրգէյն իղիւրը գէնուէր ին, մանըր ումիլիգուէր իշիկն հայ սըրփեր: Կի իրիկուրը գանգան կօլթօխը հայ վանգան, յառանչ հայ ուղիւր: Մեմի լի յիգ տանցուէր իշից, կիկըր մընուէր լեռուն յիտը տէյը:

Պատմեց՝ Պարուեյան Հովհաննես Ամվելի, քեսարցի:

\* \* \*

Ուրը մը խօջայէն աշգը ցէվէ իլմջ ուղիցէյն:

Պօջան էսուէց:

— Անուրըր սագուէս շուէր հայ ցէվեր, գըզը չըհանիցա, իս չըհան՝ գիտցանցու:

Գրի առավ՝ Մարգարյան Պետրոս

\* \* \*

Ուրը մը խօջան հայ ուղիւրը բաղար: Չամպօյէ լըզըզուէնը հայ խաղեր ին: Յի ի խօջան իրիս քանկէն հայ սաներ, լըզըզուէնը ուղիցէյն խօջանէն կըլօխը խուէր մը խանդուն:

Լըզըզուէնէն մէյը հայ տսի:

— Պօջան չըզառնու ըննի:

Միյալը հայ տսի:

— Գառնու ըննի ձուէր:

«Չըզառնու, — գառնու. չըզառնու, — գառնու», — հայ բիշլմային ձիճկիւր: Պօջան իկիք իրի քուէլը, հարցուց իրիցն ձիճկիւրէն հէմուէր:

— Չըզմայն հէմուէր ձիճկիցանք:

Լըզըզուէնէն մէյը էսուէց:

— Քի հէմուէր ձիճկիցունք:

— Չըզմայն իմ հէմուէր ձիճկիցանք:

— Հայ ձիճկիւր էնք քի հէմուէր՝ տուսն գառնուէն ձուէրը ըննի:

— Չըզմայն չըզ գառնու ըննի:

— Գի ի՛ր:

Լըզըզուէնը իրիցն մէյտըր տըրուճ էր էն՝ խօջան ըննի ձուէրը, իրին էմէնէն տանին ու խաղուն: Պօջան գնա հասարցուէր, ծան չըհանից, խիլուրք—խիլուրք հէնից գիմէնէն, իտէց ձուցը, գմմուէր—գմմուէր իլուէր ձուէրը:

Լըզըզուէնը շաշմըշ ըղուն: Էնուէր չըհասարցուն քի իմէնէյն մըր տընն ձուցը: Ալէք լըզըզուէնը գիշիցէյն:

— Չըզուէր, խօջա, չիզուէր:

Պօջան էսուէց:

— Չըզմայն չիզուէր:

— Չըզուէր, խօջա, չիզուէր, իմէնէյա ի վան տէյ, սօրա իլ:

Պօջան հասարցուէր, էսուէր էսուէր:

— Չըզմայն հէմուէր, բայքի ձառէյն խա Չամփուէր գու:

Լըզըզուէնը մէյը մէյ իշիցան, փուշմանիցէյն ու քանցէյն:

Գրի առավ՝ Մարգարյան Պետրոս

Բառեր

մալմամքմթ—քաղաք

չաղուր—վատ, անղուրթ

լմթը—քուրը

ուշէր—ուշտ—չուտ—չուտ

իլաջ—գեղ, միջոց

լըզըզուէն—տղաները

չըզառնու ըննի—չի կարող էլնել

հայ բիշլմային—սկսում են

չըզմայն—ինչի

իմէնէյն—կոշիկները, ստանամանները


շաշմըշ ըղուն—գարմացան

ալէք—բոլոր

իլա—հետ



ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ԳՍԱՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՈՆԵՄԱ. (մինչև 1915 թվականը)



**ԱԶՏԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

«ՈՒՄ»	ՃՅՈՒՂԻ	ԲԱՐՔԱՌՆԵՐ
«Ա»	ՃՅՈՒՂԻ	ԲԱՐՔԱՌՆԵՐ
«Լ»	ՃՅՈՒՂԻ	ԲԱՐՔԱՌՆԵՐ

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
4	17 ներքին	և Բերդի	Շիշկերտի և Բերդի
38	11 ներքին	սանվում է	սանվում են
42	15 վերին	Crokowie	Crakowie
48	12 վերին	դասավորում են	դասավորում է
60	14, 13, 16, 17, 18 վ.	բերան, դուռ, ձուռ, ջուր, գինի	բ' էրան, գ' ուռ, ձ' ուռ, ջ' ուռ, գ' ինի
74	19 վերին	հայերենից առաջ	հայերենից առաջ
95	13 վերին	է, էք, էք	է, էք, էք
95	4 ներքին	նարունք	նանունք
101	7 »	արիել	այիել
167	15 »	Արարայան, Մեղրու	Արարայան, Մշո
111, 119,	1, 13, 8		
143	ներքին	Ղարադաղ	Ղարադաղ
117	22 »	«>ը սան	«>ը. վը. սան
124	1 »	Ղարա	Ղարա
128	3 »	յուրացրել են նրա	յուրացրել է իր
132	2 »	Գ. քիզմով	Գ. քիզմով
132	2 »	Ն. քեզմով	քեզմով
132	9 վերին	բարանն	բարանք
158	13 »	մեծ մասն ունեն	մեծ մասն ունի
162	14 »	չին հասկանա... ոչ մեկը	չի հասկանա... ոչ մեկը
162	2-1 ներքին	զբաղան	զբաղան
167	10 վերին		
170, 248,	2, 14, 20		
275	ներքին	երկրորդ	երրորդ
221	11 վերին	>վօ, որ—վօր	«>վօ, որ>վօր
254	4 ներքին	«օ» կամ «ու»	«օ» կամ ուէ»
282	1 »	լայիս	ի լայիս
283	13 »	փոփոխության են ենթարկվել	փոփոխության են ենթարկվել
284	2-5-8 »	մնացած, մնացած, մրնացած, մրնացած	մանցած, մանցած, մրնացած, մրնացած
357	23 ներքին	տղա ցան	տղա
436	2, 1 »	զբերիմ, զբ գարթում	զբ կրիմ, կբ գարթում
441	4, 3, 1, »	զբ թընդո, զբ իընդօ	զբ թընդօ, կբ իընդօ

Խմբագիր՝ Ս. ՂԱԶԱՐՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝ Ս. ԲԱՂՆԱՍՍՅԱՆ  
Կոնսուլ սրբագրիչ՝ Է. ԽՈՆԴԻՍՅԱՆ

ՎՋ 05273

Պատվեր 285

Տիրամ 20

Հանձնված է արտադրության 1953 թ. մայիսի 5-ին:  
Ստորագրված է տպագրության 1953 թ. նոյեմբերի 30-ին:  
Տպագրական 29 մամուլ, Հեղինակային 30,3:

Հայկական ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի տպարան  
Երևան, Տեքյան փ. № 127